



ჰრარის ბაირამიანი

**ქართული ლიტერატურა
V-XIX სს.**

სახელმძღვანელო უმაღლესი სასწავლებლების
ჰუმანიტარული ფაკულტეტების
სტუდენტებისათვის

წიგნი I

ერევნის სახელმწიფო უნივერსიტეტის გამომცემლობა

ერევნა – 2007

ՀՐԱՉԻԿ ԲԱՅՐԱՄՅԱՆ

**ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
V-XIX դդ.**

Ձեռնարկ բարձրագույն ուսումնական հաստատությունների
հումանիտար ֆակուլտետների
ուսանողների համար

Գ Ի Ր Ք Ա

Հրատարակության են ներկայացրել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
խորհուրդը և վրացագիտության կենտրոնը

ՀՏԴ 894.631.0
ԳՄԴ 83.3 Կր
Բ 269

Բայրամյան Հր. Ս.

Բ 269 Վրաց գրականությունը V-XIX դդ., Երևան: Երևանի համալս.
հրատ., 2007, 324 էջ:

Ձեռնարկը ունի տեսական և կիրառական նշանակություն: Նախատես-
վում է հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար: Կարող է օգ-
տակար լինել նաև վրաց գրականությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

4603010000
Բ $\frac{4603010000}{704(02)07}$ 2007 թ.

ԳՄԴ 83.3 Կր

ISBN 978-5-8084-0877-7

© Բայրամյան Հր. Ս., 2007 թ.
© Երևանի համալս. հրատ., 2007 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Վրաց գրականության հայերեն ձեռնարկի հրատարակումը ժամանակի պահանջ է. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի, Հայաստանի և Արցախի մանկավարժական բուհերի, Թբիլիսիի Սուլխան - Սաբա Օրբելիանի անվան մանկավարժական համալսարանի (այժմ՝ Իլիա ճավաճավաճեի անվան պետական ինստիտուտ) հայոց լեզվի և գրականության բաժիններում դասավանդվում է վրաց գրականություն, սակայն հայոց լեզվով որևէ դասագիրք չկա՝ ո՛չ թարգմանական, ո՛չ ինքնուրույն: Մինչդեռ ուսանողները, ընթերցող լայն շրջանները և վրաց գրականության հարցերով հետաքրքրվողներն զգում են դրա անհրաժեշտությունը: Այդ բացը մասնակիորեն լրացնելու նպատակ ունի սույն աշխատանքը:

Շուրջ երեսուն տարի, վրաց գրականության ուսումնասիրությանը զուգահեռ, զբաղվել ենք նաև դասախոսական աշխատանքով և վրացերենից գեղարվեստական ու գիտահանրամատչելի երկերի թարգմանությամբ:

1983 թ. լույս ենք ընծայել «Ակնարկներ վրաց նոր գրականության պատմության (1800-1890)» ուսումնասովորական ձեռնարկը: Կազմել, առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակել ենք «Վրացական պոեզիա» («Ուսանողի գրադարան» մատենաշար. 1983), «Հայ գրողները վրաց գրականության մասին» (նյութերի ժողովածու. 1986), «Վրաց երկինք» («Համաշխարհային գրականություն պատանիների համար» մատենաշար. 1990) հատորները, որոնք ըստ արժանվույն գնահատվել են հայ և վրաց մասնագետների կողմից: Քանի որ դրանցում պահպանված են գրականության պարբերացման, հեղինակների ժամանակագրական դասակարգման, երկերի ընտրության ու բուհերում վրաց գրականության դասավանդման գիտական սկզբունքները, ինչպես նաև հեղինակների մասին կենսագրական ու մատենագիտական տեղեկություններ ու բնութագրումներ, մշված գործերը, իրենց հերթին, կարող են ծառայել իբրև օժանդակ ձեռնարկներ:

Ձեռնարկը գրված է բուհական ուսումնական ծրագրերին համապատասխան: Դարաշրջանները և հեղինակները ներկայացվում են ժամանակագրական կարգով. նույն սկզբունքով են լուսաբանվում նաև

գրողների երկերը: Նշանավոր հեղինակներից բացի, անդրադառնում ենք նաև քիչ հայտնի գրողներին՝ նպատակ ունենալով գրականությունը ներկայացնել բնականոն ընթացքի մեջ:

Ձեռնարկը չենք ծանրաբեռնել վրաց գրականագետների երկերի (որոնցից անշուշտ օգտվել ենք հավուր պատշաճի) հղումներով, վեճերի տեղիք տվող խնդիրներով ու դրանց մեկնաբանություններով:

Հայ ընթերցողին անմատչելի բնագրերի վերաբերյալ որոշակի պատկերացում տալու նպատակով գիտակցաբար մեջբերել ենք ծավալուն հատվածներ: Անդրադարձել ենք նաև առանձին հեղինակների և նրանց երկերի մասին հայ գրականագիտական մտքի և մամուլի արձագանքներին: Հուսով ենք, որ այս ձեռնարկը կարող է նպաստել հայ իրականության մեջ վրաց գրականության տարածմանը, հայ-վրաց գրական կապերի զարգացմանը, խորացնել հետաքրքրությունը վրաց գրականության նկատմամբ և խթանել հետազայում ավելի ամբողջական դասագրքեր գրելուն:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ: Վրաց ժողովուրդը կազմավորվել է պատմական երկարատև ժամանակի ընթացքում ներկայիս Վրաստանի տարածքում: Հիմնական միջուկը քարթվելական ցեղերն են թեև, բայց նրա կազմում քիչ չեն էթնիկական այլ միավորներ, այդ թվում՝ հնդեվրոպական:

Գիտականորեն հիմնավորված է նաև իբերակովկասյան լեզվաընտանիքի մասին տեսակետը, այսինքն՝ աբխազա-ադիգեական, դաղստանյան, նախյան և քարթվելական լեզուների հարազատությունը: Քարթվելական խումբն իր մեջ ընդգրկում է վրացերենը, մեգրելերենը, լազերենը և սվաներենը: Ըստ վրաց լեզվաբանների՝ մ. թ. ա. II հազարամյակի սկզբում գոյություն է ունեցել մեկ լեզու՝ քարթվելական կամ նախաքարթվելական: Պատմական և աշխարհագրական պայմանների բերումով այդ լեզվի ոլորտում կազմավորվել են երկու տարածաշրջաններ՝ արևելյան և արևմտյան, իրենց բարբառներով: Արևմտյան հատվածի բարբառի հիման վրա առաջացել են սվանական և կոխական լեզուները (որոշ ժամանակ անց կոխականն իր հերթին տրոհվել է մեգրելականի և զանականի), իսկ արևելյան հատվածի բարբառի հիման վրա՝ վրացերենը:

Վրացերենն այժմ Վրաստանի Հանրապետության պետական լեզուն է: Վերջին մարդահամարի տվյալների համաձայն այն մայրենի լեզու է համարում ավելի քան երեքուկես միլիոն մարդ՝ հիմնականում Վրաստանի մարզերի (Քարթլի, Կախեթ, Իմերեթ, Գուրիա, Սամեգրելո, Սվանեթիա, Ռաճա, Մեսխեթ, Խևսուրեթ, Փշավի, Թուշեթ, Խևի և այլն) բնակիչները, ինչպես նաև այդ երկրում ապրող զգալի թվով այլազգիներ՝ աբխազներ, աջարներ, ասորիներ, հայեր, իրեաներ, հույներ, քրդեր, կովկասյան թաթարներ, օսեր... Վրացիներ կան նաև Իրանում և Թուրքիայում, բայց նրանք գրեթե չեն պահպանել մայրենին:

Վրացիներն իրենց անվանում են քարթվելի, երկիրը՝ Սաքարթվելո, լեզուն՝ քարթուլի:

Ժամանակակից գրական վրացերենի հիմքում ընկած են Քարթլիի և Կախեթի բարբառները:

Վրաց լեզվի քերականությունը գիտականորեն համակարգված է՝ ներառելով հին վրացերենի, բարբառների, խոսակցական լեզվի և դպրության բազմադարյա ավանդույթները. այդ կապն օրգանական է այնքանով, որ ժամանակակից լեզուն իմացողը առանց հատուկ պատրաստության կարդում և հասկանում է V-XVIII դարերի գրվածքները:

շարժ միջ.	Հին		նյութի անվանում	նյութի արժեք	շարժ միջ.	Հին		նյութի անվանում	նյութի արժեք
	միջ.	կոթի.				միջ.	կոթի.		

1	Շ	Շ	յ	աւ	1	20	Լ	Լ	Ն	սան	200
2	Կ	Կ	ծ	բան	2	21	Ք	Ք	Փ	փար	300
3	Ղ	Ղ	ծ	գան	3	22	Վ	Վ	Յ	ուիտ	400
4	Ծ	Ծ	Ձ	դոն	4	23	Օ	Վ	Յ	ոււն	-
5	Դ	Դ	յ	եւ	5	24	Փ	Փ	Յ	փար	500
6	Դ	Դ	յ	վին	6	25	Ժ	Ժ	Յ	բան	600
7	Ն	Ն	Ֆ	զեւ	7	26	Ո	Ո	Լ	դան	700
8	Ի	Ի	Ս	հե	8	27	Վ	Վ	Յ	զար	800
9	Թ	Թ	տ	թան	9	28	Կ	Կ	Յ	շին	900
10	Դ	Դ	ո	ին	10	29	Ի	Ի	Զ	շին	1000
11	Գ	Գ	յ	կան	20	30	Շ	Շ	Յ	ցան	2000
12	Ն	Թ	Լ	լաս	30	31	Ժ	Ժ	Յ	ձիւ	3000
13	Ժ	Ժ	Ձ	ման	40	32	Բ	Բ	Յ	ձիւ	4000
14	Ի	Ի	Ն	նար	50	33	Տ	Տ	Յ	ճար	5000
15	Ն	Ն	Ձ	յե	60	34	Ք	Ք	Ն	խան	6000
16	Օ	Ա	Ո	օն	70	35	Վ	Վ	Յ	խար	7000
17	Ս	Ն	Յ	պար	80	36	Ճ	Ճ	Յ	լան	8000
18	Վ	Վ	Յ	ժան	90	37	Ն	Խ	Յ	հան	9000
19	Ժ	Ժ	Ձ	րան	100	38	Ք	Բ	Յ	ոհ(ոն)	10000

Վրաց այբուբենը աշխարհի 14 ամենաինքնատիպ գրերից մեկն է՝ բաղաձայնների և ձայնավորների համակարգով, գործում է գրության աջընթաց և մեկ հնչյունին մեկ տառ սկզբունքը: Նրա ծագումը, սակայն, առայժմ լուսաբանված չէ: XI դարի պատմիչ Լեոնտի Մրովելին, հիմնվելով ժամանակի ավանդությունների վրա, «Արքաների կյանքը» երկում նշում է, թե մ. թ. ա. III դարում, երբ Փարնավազ արքան ստեղծեց միաց-

յալ պետություն, վրացիներն արդեն իսկ ունեին գիր և դպրություն:

Ակադ. Իվանե Ջավախիշվիլին ազգային այբուբենի ստեղծման ժամանակը համարում է մ. թ. ա. VII դարը, այլ հետազոտողներ՝ մ. թ. ա. V-IV դդ., նաև IV դարի վերջ - III դարի սկիզբ մ. թ. ա.: Ակադ. Կոռնելի Կեկելիձեն գրում է, որ այբուբենը կարող էր ծագել քրիստոնեությունը Վրաստանում պետական կրոն ընդունելուց հետո միայն՝ մ. թ. V դարում:

V դարի հայ պատմիչների և Մաշտոցի կենսագիր Կորյունի վկայությամբ վրացական գրերի հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է: «...Քրիստոսի սիրելին,- գրում է Կորյունը,- սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրաց լեզվի համար: Գրեց, դասավորեց և օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ, գնաց, իջավ վրաց կողմերը: Եվ գնաց ներկայացավ թագավորին, որի անունը Բակուր էր, և աշխարհի եպիսկոպոսին, անունը՝ Մովսես: Եվ թագավորն ու ազնվականները... շատ անսացին նրան ըստ աստվածային օրենքի: ...Իսկ երբ Վրաստանի բոլոր կողմերում կարգի դրեց աստվածապաշտության գործը, այնուհետև բաժանվելով նրանցից՝ վերադարձավ հայոց երկիրը»:

Մովսես Խորենացին հաղորդում է հետևյալը. «Մեսրոպը, վրաց աշխարհը գնալով, նրանց համար էլ, իրեն տրված երկնային շնորհով, մի ոմն Ջաղայի հետ, որ հունարեն և հայոց լեզուների թարգմանիչ էր, ստեղծում է նշանագիրներ, օժանդակություն գտնելով նրանց Բակուր թագավորից և Մովսես եպիսկոպոսից: Ընտրում է երեխաներ, բաժանում երկու դասի և նրանց համար ուսուցիչներ թողնում իր աշակերտներից Տեր Խործենացուն և Մուշե Տարոնացուն»:

Վրաց հետազոտողները հայկական աղբյուրների վկայությունները համարում են լեզենդ կամ հետագա ընդմիջարկում:

Այսպես թե այնպես, քրիստոնեական հավատի տարածումը, ապա և պետական կրոն հռչակելը հսկայական դեր խաղացին Վրաստանի կյանքում. դա մեծապես նպաստեց թե՛ երկրի ազգաբնակչության մերձեցմանը, թե՛ պետության կազմում անջատողական տրամադրություն ունեցող փոքր ու մեծ իշխանների սանձահարմանն ու կենտրոնացմանը, իսկ քրիստոնեական աշխարհայացքի յուրացումը կանխորոշեց վրաց մշակույթի բնույթն ու բովանդակությունը, վրաց ժողովրդի ազգային ինքնագիտակցության ձևավորումը: Իր հերթին, սեփական գրերի ու դպրության արարումից հետո վրաց լեզուն բարձրացավ գեղարվեստական մակարդակի, ստանձնեց մայրենիի սուրբ առաքելությունը, դարձավ եկեղեցու, պետության և մշակույթի լեզու, սուր ու վահան՝ ժո-

ղովրդի գոյապահպանության համար, խոշոր դեր կատարեց երկրի մշակութային, քաղաքական ու պատմական զարգացման գործում:

Վրաց լեզուն բաժանվում է երկու շրջանի՝ հին վրացերեն (ընդգրկում է V-XI դարերը) և նոր վրացերեն (XII դարից մինչև մեր օրերը): Հնագույն այբուբենը՝ խուցուրին, ունեցել է 38 տառ և գրության երկու տեսակ՝ ասոմթավրուլի (երկաթագիր. եղել է միայն մեծատառ, գործածվել V-VII դարերում) և նուսխա-խուցուրի (բոլորագիր), որ ունեցել է միայն փոքրատառեր, գրությունը թեև եղել է ձախից աջ, բայց տառերը թեքվել են աջից ձախ: Սա նախկինի համեմատ արագագիր էր, տառերն էլ կարող էին կցվել, բայց և այնպես դժվարանում էր գրողի աշխատանքը, ուստի XII դարից շրջանառության մեջ է դրվում նույն այբուբենի մի նոր տարբերակ՝ մխեդրուլին (աշխարհական գիր):

Մխեդրուլին, որը գործածվում է նաև հիմա, ունի 33 տառ, սկզբնական շրջանում բաղկացած է եղել 40 տառից: Պարբերաբար ենթարկվելով փոփոխությունների՝ վերջնական տեսք է ստացել XIX դ. 60-ական թվականներին, երբ նրա կազմից հանվել է յոթ տառ: Սրանով են տպագրվել վրաց գրականության հին, նոր և նորագույն շրջանի բոլոր երկերը: Տպագիր գրության մեջ մեծատառ չկա: Խուցուրի և ասոմթավրուլի գրատեսակները գործածվել են հոգևորականների, իսկ մխեդրուլին՝ աշխարհականների կողմից: Մեզ հասած վրաց դպրության գրավոր հուշարձանները վերաբերում են V-VI դարերին: Հնագույնը 1937 թ. Բոլնիսում հայտնաբերված արձանագրությունն է՝ փորագրված քարի վրա 492-493 թթ.:

Հետագա դարերից պահպանված վրացերեն ձեռագրեր կան Թբիլիսիի, Օքսֆորդի, Քենբրիջի, Գրացի (Ավստրիա), Սանկտ-Պետերբուրգի գրապահոցներում և Երևանի Սատենադարանում:

Վրացական գրերի ստեղծումից հետո երևան են գալիս բազմաթիվ եկեղեցական գրքեր՝ թարգմանված հայերենից, հունարենից, ասորերենից: Հետագայում գրվում են վարքեր և վկայաբանություններ: Վրաց գրականության հուշարձաններն ստեղծվել են գիտագրական բազմաթիվ կենտրոններում՝ թե՛ Վրաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս՝ Սիրիայում, Պաղեստինում, Հունաստանում, Բուլղարիայում:

X-XI դարերում գործել են Գելաթի (Արևմտյան Վրաստան) և Իդալթոյի (Արևելյան Վրաստան) ակադեմիաները: Ուսումնագիտական այդ կենտրոններում թարգմանված և գրված փիլիսոփայական, պատմական և գրական երկերը վկայում են, որ նրանց հեղինակները ստացել են հրաշալի կրթություն, ինացել են բազմաթիվ լեզուներ, սերտ կապեր են ունեցել տարբեր երկրների խոշորագույն մտածողների հետ:

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴՂԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԳՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Վրաց ժողովրդի հոգևոր մշակույթի գանձարանում հատուկ տեղ է գրավում բանահյուսությունը, որի ակունքներն հասնում են դարերի խորքերը: Այն առանձնանում է ժանրերի ու ձևերի տարատեսակությամբ և մոտիվների հարստությամբ՝ էպոս, ասք, հեքիաթ, զրույց, առած, հանելուկ, աշխատանքային, կենցաղային, սիրային, ընտանեկան, օրորոցային երգեր, որոնց մեջ արտահայտություն են գտել տարբեր խավերի հակամարտությունները, տրամադրությունները, կրոնական, իմացաբանական, զեղազիտական հայացքները, տիեզերքի ու բնության վերաբերյալ պատկերացումները, առտնին հոգսերն ու մտածումները: Վրաց բանահյուսական թեմաներն ու մոտիվները՝ աշխարհիկ թե կրոնական, անսպառ աղբյուր են եղել շատ ու շատ գրողների ու բանաստեղծների համար:

«ԱՄԻՐԱՆԻԱՆԻ»: Ամիրանի մասին ավանդությունը ժողովրդական բանահյուսության ամենանշանավոր հուշարձանն է: Սկզբնավորվել է մայրիշխանությունից հայրիշխանություն անցման շրջանում, հետագա դարերի ընթացքում էական փոփոխությունների է ենթարկվել, իսկ Վրաստանում քրիստոնեություն տարածվելուց հետո հագեցվել է այդ կրոնին բնորոշ գաղափարախոսությամբ ու դրվագներով:

Գլխավոր հերոսը՝ Ամիրանը, սերուն է որսորդության աստվածուհի Դալից և պատահական մի որսորդից, անունը՝ Ցանցումի: Ամիրանը աստվածորդի է, օրեցօր մեծանալով ու հզորանալով՝ դառնում է հսկա: Նրա առջևի ատամներից մեկը ոսկյա է, աչքերը՝ մաղի մեծության, օժտված է տասներկու զույգ գոմշացուլի ուժով, արագոտն է, ինչպես գայլը: Ջայրանալիս նմանվում է փոթորկաբեր ամպի: Գետինը հազիվ է դիմանում մարմնի ծանրությանը: Ձենքերը միանգամայն պատշաճ են իրեն. ոչ ոք չի կարողանում բարձրացնել նրա սուրը:

**Երբ իմ սուրն էին կռում-կոփում,
Երկինքը բռնկվել էր բոցերով,
Գետինը շշում էր, դարբնոցը՝ դղրդում,
Եվ դարբիններն էին իրար խողխողում:**

Ամիրանի հավատարիմ շունը՝ Ղուրշան, արտասովոր է, ինչպես իր տերը. արծվազարմ ու արծվաթև Ղուրշան երկու ցատկով կարող է հասնել քարայծին:

Ամիրանը Գիլգամեշի, Պրոմեթևսի և Մեծ Սիերի նման համամարդկային գաղափարների կրող է. նա սանձահարում է տարերքները, վերացնում չարիքները, ծագում է կյանքը վերափոխել այնպես, որ մարդկանց «հացն արյան մեջ թրջված չլինի»: Մարդկության թշնամիների և չար ոգիների, սև վիշապի դեմ է պայքարում. վերջինս ժամանակ առ ժամանակ կուլ է տալիս արեգակը և խավարեցնում աշխարհը: Վիշապը կլանում է Ամիրանին, բայց նա, ավաստե դաշույնով պատռելով կենդանու որովայնը, դուրս է գալիս: Կռիվ է մղում նաև ամպերի տիրակալի դեմ, որը երկնակամարից շղթաներով կախ ապարանք ունի: Այնտեղ է ապրում նրա դուստրը՝ Կամարը: Ամիրանին հաջողվում է ապարանքը ցած նետել և առևանգել դիցուհուն:

Դրանից հետո, աջակից ունենալով իր ավագ եղբայրներ Բադրիին, Ուսուպին, ինչպես և Կամարին, շարունակում է իր անհաշտ պայքարը դևերի, վիշապների, հրեշների դեմ, ցեղակիցներին սովորեցնում է դարբնություն, երկնքից առևանգում է կրակը: Նա ձեռնոց է նետում բարձրագույն աստվածությանը՝ իր կնքահորը, որի դեմ մենամարտում պիտի պարտվի հետագայում: Աստված չի հանդուրժում սանի հանդուգն արարքները և դատապարտում է դաժանագույն պատժի. շղթայում է Կովկասյան լեռներից մեկի մեջ խրված երկաթյա սյունից և ծածկում ձյան հաստ շերտով: Ամիրանին հաջողվում է երկու անգամ կտրել շղթաները, բայց անողոք է Աստվածը. նա ավելի է ամրացնում շղթաները: Տարվա ընթացքում Ամիրանը հավատարիմ շան հետ ջանում է հողից դուրս քաշել երկաթե սյունը, և երբ թվում է, թե մոտ է հաջողությունը, թշնամի ուժերը, սյան գլխին հարվածելով, այն կրկին խրում են գետնի մեջ:

Ավանդության պատումներից մեկի համաձայն՝ Աստված Ամիրանին նետում է խորխորատ և ծածկում ժայռով. յոթ տարին մեկ վիհը բացվում է, որ մարդիկ տեսնեն դատապարտյալին: Ըստ այլ պատումի՝ Ամիրանը փակված է Կովկասի ժայռերից մեկի խորշում: Մեկ ուրիշում շունը՝ Ղուրշան, տարին բոլոր կրծում է շղթան, բայց կտրվելու պահին,

իսկ դա պետք է տեղի ունենար ավագ հինգշաբթի առավոտյան, դարբինները մուրճը զարկում են սալին: Շղթան ամրանում է՝ ի դերև հանելով հերոսի ազատվելու հույսը:

Ժողովրդի ազատության ու բարօրության համար է պայքարում Ամիրանը, և ժողովուրդն էլ, հավատալով նրա գոյությանը, ցույց է տալիս այն քարայրը, որտեղ նա փակված է, և այն շղթան, որով իբր նա գամված է ժայռին. մարդիկ հաճախ նույնիսկ նետահարում են արծիվներին, որովհետև նրանք են կտցահարում հերոսի՝ գիշերվա ընթացքում ապաքինված սիրտը: Ժողովուրդը նաև համոզված է, որ, կապանքներից ազատվելով, Ամիրանը պիտի ավերի աշխարհը և դատաստան տեսնի նախ և առաջ դարբինների հետ:

Ջրույցն առաջին անգամ գրառվել է XIX դ. 10-ական թվականներին, հասարակության ուշադրությանն է արժանացել 1840-ականներին, որից հետո աշխատանքներ են կատարվել նորանոր պատումներ հայտնաբերելու. բանահավաքները գրի են առել մի քանի տասնյակ պատում:

Վրաց գիտնականների հավաստմամբ՝ Ամիրանի պաշտամունքն արտահայտություն է գտել հարևանների՝ հայերի, օսերի, արխազների բանահյուսության մեջ:

«ԷԹԵՐԻԱՆԻ»: Այս երկը վրաց ազգային վիպերգության մեջ երկրորդն է գաղափարական և գեղագիտական առումով: Սա փոքրածավալ ասք է՝ նվիրված մարդկային սրբազան զգացմունքներից մեկին՝ սիրուն: Հուսվել է X-XI դարերում. լայն տարածում ունի Վրաստանի՝ առանց բացառության բոլոր անկյուններում՝ Քարթլի, Մեգրելիա, Սվանեթիա, Կախեթ, Գուրիա, Իմերեթ, Ռաճա, Լազիստան և այլն: Հիմնականում ավանդված է արծակ, բայց կան և՛ չափածո, և՛ արծակախառն չափածո շուրջ յոթ տասնյակ տարբերակներ: Առաջին անգամ տպագրվել է 1875 թ.:

Հերոսներից առանձնանում են արքայազն Աբեսալունը, գեղջկուհի էթերին և չար ոգին՝ Մուրմանը:

* Հետաքրքիր է, որ հազարամյակների խորքից սկիզբ առնող ասքի պատումներից մեկում Ամիրանը ներկայանում է հայ (տե՛ս «Վրաց ժողովրդական բանահյուսություն. քրեստոմատիա, Թբիլիսի, 1970, էջ 103):

**Հայ եմ ես, անունս՝ Տանտրե,
Փնտրում եմ գրաստն իմ կորած,
Էսօր կորցրել եմ, էգուց գտնեմ պիտի.
Իմ ճակատին էդպես է գրած:**

Տողացի թարգմ.

Սկզբունքներով և բովանդակությամբ իսկապես ժողովրդական այս սիրավեպում բանասացներն արտահայտել են մարդկությանը հուզող սոցիալական խնդիրների, չարի և բարու ոգորումի, գեղագիտական իդեալի, հավերժական սիրո մասին իրենց տեսակետները՝ հանգելով մի հետևության՝ սերը, անկեղծ և սրտաբուխ սերը, հավերժական է. այն կարող է հաղթահարել մինչև իսկ արքայական ապարանքի և գեղջկական հյուղի միջև ընկած տարածությունն ու բարձրաբերձ պատմեշները: Բնականաբար նման խոչընդոտ կարող է հաղթահարել միայն արքայազնը: Եվ արքայորդի Աբեսալունը, անտեսելով թագավորների ամուսնությանը վերաբերող օրենքներն ու ավանդույթները, հարսնացու է ընտրում գյուղացի մի աղջկա՝ Էթերիին:

Աբեսալունը բարձրագույն հասարակության ներկայացուցիչ է, թագաժառանգ, իսկական ասպետ և, ինչպես ասում են՝ ընտրյալն ընտրյալներից: Չնայած չարական Մուրմանի՝ նրա սրտում էթերիի հանդեպ հակակրանք սերմանելու ջանքերին, այնուամենայնիվ տղան անկոտրում է. նա տոգորված է հավերժական սիրո զգացումով:

Էթերին իդեալական կնոջ կերպար է՝ ժողովրդի բանաստեղծական երևակայության արդյունք: Նա երկրային էակի ամենագեղեցիկ հատկանիշներն է կրում իր մեջ. երկրային են նրա դաստիարակությունը, հասունացումը, հովվությունը, սիրահարվելը, բարոյական վսեմ հատկանիշները, թագաժառանգին տված խելամիտ պատասխանները, նվիրվածությունը և այլն: Քիչ չեն և անիրական գծերը:

Երբ ամուսինը՝ Մուրմանը, տնից բացակայում է, էթերին այցի է գնում սիրած տղային և տեսնելով նրա վախճանը՝ պառկում է նույն մահիճում ու ավանդում հոգին:

Աբեսալունին և էթերիին թաղում են նույն գերեզմանում: Շիրիմից վարդ և մանուշակ են բուսնում, խոնարհվում իրար վրա: Բայց չար ոգին՝ Մուրմանը, հանգիստ չի տալիս դժբախտ սիրահարներին. շիրիմը բացում է, պառկում զույգի արանքում: Նրա մարմնից տատասկափուշ է աճում, ելնում դուրս և ցցվում վարդի ու մանուշակի միջև ճիշտ այնպես, ինչպես ինքը՝ գերեզմանում:

Բանասացները գույներ չեն խնայել՝ իրենց գաղափարակիրներին երկրային ու վերերկրային արժանիքներով օժտելու համար: Ահա ինչու, եթե դրական հերոսները բարեգութ են, հմայիչ, մարմնավորում են մարդկային լավագույն հատկանիշները, աչքի են ընկնում հոգեկան ու ֆիզիկական կատարելությամբ, ապա Մուրմանը՝ Աբեսալունի ճորտը, որ ապրում է փառահեղ պայմաններում, չար է, դաժան, արատավոր վարք ու բարքով: Նա դաշն է կնքում սատանայի հետ, որ վերջինս Աբեսալունի

սրտում աղջկա հանդեպ հակակրանք առաջացնելու հնարք սովորեցնի, որ ինքը դառնա այն էակի ամուսինը: Դա նրան հաջողվում է: Սակայն բանասացները չեն հանդուրժում չարի հաղթանակը, ուստի պատումներից մեկում կա հետևյալ հավելվածը. «Հաջորդ օրը նախրապանները տեսնում են, որ Աբեսալոմի և Էթերիի շիրիմի վրա տատասկափուշ է աճել: Պոկում են, բայց այն նորից ու նորից է հառնում: Հայտնում են տեղի բնակիչներին... Մարդիկ արմատախիլ են անում տատասկափուշը, բացում գերեզմանը, կտոր-կտոր անում Մուրմանին և նետում շներին: Աբեսալոմի և Էթերիի գերեզմանը մաքրվում է, դառնում վարդ-մանուշակով փթթուն»:

Այս է ժողովրդի իղձը, կարծիքը և գնահատականը. չարը պետք է պարտվի, բարին՝ հաղթի:

Ասքը հետաքրքրել է շատ ստեղծագործողների, որոնք և դարձրել են պոեմի (Վաժա Փշավելա), օպերայի (Զաքարիա Փալիաշվիլի), կինոնկարի, գեղանկարչության և արվեստի ու գրականության այլ ժանրերի նյութ:

* * *

Քրիստոնեությունը Վրաստանում պետական կրոն ընդունելուց (337 թ.) և վրացական գրերի ստեղծումից հետո երկրում սկիզբ է առնում դպրությունը: Ինչպես արևելաքրիստոնեական երկրներում, այնպես էլ Վրաստանում, ժամանակի պահանջներին համապատասխան, ծավալվում է թարգմանական շարժումը. ուշադրություն է դարձվում Աստվածաշնչին և եկեղեցական գրականությանը. հաջորդում են երևելի այրերի (Գրիգոր Նազիանզացի, Եփրեմ Ասորի, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Ալեքսանդրացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի) վարքերի, վկայաբանությունների ու գիտական աշխատությունների թարգմանությունները: Դրանք այնպես են տեղայնացվում ու հարմարեցվում երկրի պահանջմունքներին, որ «ջնջվում են օտարի ու յուրայինի սահմանները»: Դավանաբանական այդ երկերը որոշակի պատկերացում են տալիս նաև ժամանակի հասարակական խավերի կացության և պատմական որոշ իրողությունների մասին:



ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ V-X ԴԱՐԵՐՈՒՄ

Վրաց գրականության պատմությունը բաժանվում է երեք հիմնական շրջանների. հին (V-XVIII դդ.), նոր (1800-1910-ական թթ.) և նորագույն (1918 թվականից մինչև մեր օրերը):

Հին շրջանը բաժանվում է ենթափուլերի:

V-X դդ. առաջին ենթափուլն է:

Վաղ շրջանի վրաց գրականությունն ունի զուտ սրբախոսական և վկայաբանական բնույթ ու բովանդակություն: Այդ գործերն առնչվում են նախ պարսկական՝ V-VI դդ., և ապա՝ VII դ. կեսերից արաբական գերիշխանության ժամանակներին: Մինչև XII դ. կեսը աշխարհիկ բովանդակությամբ երկեր՝ պատմական թե գեղարվեստական չեն պահպանվել:

Մ. թ. 368 թվականին Վրաստանը բաժանվում է երկու մասի, արևմտյան հատվածը գտնվում էր հռոմեական կայսրության քաղաքական ազդեցության ոլորտում, իսկ արևելյանը՝ պարսկական: 532 թ. պարսից շահը Արևելյան Վրաստանում թագավորությունը վերածում է մարզպետական իշխանության:

Պարսկական տիրապետության ժամանակներից մեզ հասած հնագույն երկը Իսկոբ Ցուրտավելուն վերագրվող «Շուշանիկ թագուհու նահատակությունը» վկայաբանության վրացերեն տարբերակն է («Շուշանիկ Վարդենին» զուգահեռաբար գոյություն ունի նաև վրաց գրականությունում, բայց դրանցից հայերենն է սկզբնաղբյուրը, թե վրացերենը, հայ և վրաց բանասերները ընդհանուր եզրակացության չեն հանգում: Եականը երկի՝ նաև վրաց գրականությունում առկայության փաստն է):

Շուշանիկը հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրն է՝ Սահակ Պարթևի թոռը, որ ամուսնանում է վրաց Վազգեն բղեշխի (վրացերեն՝ Վարսքեն պիտիախշ) հետ: Վերջինս ներկայանում է պարսից արքունիք, հեռահար նպատակներ հետապնդելով ընդունում զրադաշտականություն և խոստանում քրիստոնյա կնոջն ու երեխաներին նույնպես «բերել մոգության օրենքի»:

Պարսկաստանից վերադառնալուց հետո ամուսինների միջև սկիզբ է առնում պայքար, որ գնալով դառնում է անզիջում և տևում ավելի քան վեց տարի:

Բարեպաշտ տիկինը երկար ժամանակ ընդդիմանում է ամուսնուն. «Լաց է լինում իր ամբարիշտ և ուրացող, անբժշկելի ամուսնու համար», ջանք է գործադրում, որ դարձի բերի «հոգին ու մարմինը գեհենի մատնած» ուրացողին: Բղեշխը ոչ միայն չի զիջում, այլև կնոջը նետում է խավար ու խոնավ բանտախուց, ենթարկում կտտանքների՝ տեղյակ պահելով պարսից շահին, թե Վարդանի դուստրն է, ընդդիմանում է կրոնը փոխելու իր կամքին, այդ պատճառով կտանջի նրան մինչև մահ, եթե չհամաձայնի պաշտել ատրուշանը:

Ենթադրվում է, որ հեղինակը Շուշանիկի դաստիարակն է և բղեշխի պալատի քահանան: Իբրև հոգևոր հայր՝ չարչարանաց ամբողջ ընթացքում եղել է սանուհու կողքին, սատարել խորհուրդներով և չնայած բղեշխի սպառնալիքներին՝ զաղտնի սնունդ, Աստվածաշունչ ու սրբախոսական գրքեր է մատակարարել, ուստի բնական է, որ երկը գրել է առաջին դեմքով՝ որպես ականատես ու մասնակից. «...Եվ ամբարիշտը, ինչպես չար և վայրենի գազան, ցասունից չէր ներում, այլ վեր կենալով և ծառաներից շատերին իր հետ վերցնելով՝ ինքն էր գնում և նրան գտնում եկեղեցում ու սաստիկ հարվածում էր նրան գավազաններով, բռնում էր մազերից և քաշում եկեղեցուց դուրս: Եվ երանելուն քարշ էր տալիս գետնով, փշերի ու քարերի միջով և ապա հրամայում էր ապարանք տանել: Եվ հասնելով ապարանք՝ նորից էր հարվածներ հասցնում՝ առավել քան առաջին անգամ»:

Ինչպես նկատել են մասնագետները, Շուշանիկի և Վազգենի հակամարտությունը սոսկ անձնական-ընտանեկան չէր, ոչ էլ կրոնական պարզ խնդիր էր. այդ բախումն ուներ ընդգծված գաղափարական բնույթ: Հավատուրաց Վազգենի կողմից դա քաղաքական պայքար էր, հետագայում իշխանություն ձեռք բերելու նախադրյալ: Պատահական չէ, որ Վախթանգ Գորգասալը արժանին է հատուցում դավաճանին՝ սպանել տալով իբրև ընդդիմադիր ֆեոդալների և կենտրոնախույս ուժերի պարագլխի (որոշ ժամանակ անց վրաց պարսկամետ ուժերը պարսիկների դեմ պատերազմում՝ մարտի պահին, թիկունքից նետահարում են իրենց արքային):

Հավատարիմ նախնիներից ժառանգած սուրբ ավանդույթներին՝ հերոսուհին հետամուտ է նաև համազգային ու համաքրիստոնեական շահերի: Բազում հորդորներին՝ համակերպել կացությանը և միանալ թեկուզև անօրեն ամուսնուն, որ ավելի ծանր տանջանքների չեն-

թարկվի, Շուշանիկը պատասխանում է. «...Ես չեմ թողնի իմ լուսավորիչ հայրերի ավանդությունը, ես անդրդվելի և հաստատուն կմնամ և ուրացողի հետ չեմ միավորվի և չեմ պղծվի»: Հատկանշական է, որ նա հանդիմանում է ամուսնու հետ հաշտվելու խորհուրդ տվող եպիսկոպոսին. «Եվ այդ դո՞ւ ես հրամայում միաբանել ամբարիշտ և Աստծուն ուրացող մարդու հետ և այսպիսի բաներին թելադիր ես լինում և մտախաբ»:

Նա՝ «Երանելին կանանց մեջ, բարի արմատի բարի շառավիղը», որ մանկութ ղաստիարակվել էր վարդանանց գաղափարներով, ընդդիմանում է պարսկամուլ բղեշխին և սպանվում նրա կողմից: Իբրև բարոյական վսեմ հատկանիշների կրող, նա նաև հեղինակի գաղափարակիրն է, ուստի ներկայացվում է այնպես, որ սերունդները հետևեն հերոսուհու քայլերին, հարկ եղած դեպքում էլ ընդօրինակեն նրան: Հերոսուհին դեռ կենդանի էր, և «նրա առաքինության համբավից շատերը՝ տղամարդիկ, կանայք և աշխարհական ուխտավորներ, գալիս էին տեսնելու, նրանից լսելու պարկեշտ և արդար վարքի մասին»:

Վկայաբանության դասական սկզբունքները պահպանելով հանդերձ՝ երկը բավարարում է գեղարվեստական ընդհանրացման պահանջները. դրական և բացասական հերոսներից յուրաքանչյուրն իր վարքագծի ընդգծված դրսևորումներով, իբրև անհատ, խտացնում է իր տեսակի (հայրենասերի և դավաճանի) բնավորության գծերը: Բնականաբար առաջին պլան է մղված Շուշանիկը, որին հեղինակը ներկայացնում է աստվածավախ և բարեպաշտ էակ, որ առաջացնում է պատկառանք ու պաշտամունք, մամանավանդ, որ նրա լավագույն գծերն ի հայտ են գալիս դեպքերի զարգացմանը զուգընթաց, և ընթերցողը քայլ առ քայլ հետևում է, թե այդ փխրուն կինն ինչպիսի կամք է դրսևորում, ինչպես է դիմակայում անմարդկային տանջանքներին:

«Շուշանիկ թագուհու նահատակությունը» նաև գեղարվեստական երկ է. առկա են բնության տեսարանների հաջողված պատկերներ, հոգեբանական նրբին դիտարկումներ: Լեզուն ևս պարզ է, թեև դարերի ընթացքում գրիչները կատարել են զգալի փոփոխություններ՝ ըստ ժամանակի պահանջի ու նորմերի (երկի վրացերեն ձեռագիրը մեզ է հասել XVIII դարից): Շուշանիկը լիարյուն կերպար է վաղ միջնադարի հայոց և վրաց հոգևոր մշակույթների պատմության մեջ:

Շուշանիկի տանջանքները տևում են վեց տարի. նա վախճանվում է 475 թվականի հոկտեմբերի 15-ին:

Հայոց և վրաց եկեղեցիները նահատակին դասում են սրբերի շարքը՝ տարվա որոշակի օր նշելով նրա հիշատակը: «Եվ կարգ հաստատեցին ամեն տարի բազմամբոխ ժողովրդով սրբի հիշատակը կա-

տարել ամենասուրբ երրորդության փառքի և փառաբանության համար»:

Վկայաբանությունը գրվել է նրա մահից անմիջապես հետո, հավանաբար 476-482 թվականների ընթացքում: Յեղիմակը, որ Վազգենին բնորոշում է անօրեն, ամբարիշտ, վայրենացած բառերով, ակնարկ չի անում այդ անձնավորության վախճանի (482 թ.) մասին:

Շուշանիկի գերեզմանը, ըստ ավանդության, գտնվում է Թբիլիսիում՝ Կուր գետի ափին վաղ միջնադարում կառուցված Մետեխի բերդամրոցին կից արքունական եկեղեցու սրահում:

* * *

VI դարի կեսերին Վրաստանը կորցնում է իր անկախությունը:

Պարսիկները վերացնում են թագավորական իշխանությունը և դարձնում հպատակ երկիր: Մարզպանական գերիշխանության ժամանակ էլ գրվում են սրբագրական մի շարք երկեր, որոնցից հնագույնը «Էվստաթի Մցխեթելու վկայաբանությունն» է: Երեսնամյա մի պարսիկ, որ մոգի զավակ էր և հոր մոտ հոգևոր կրթություն էր ստանում, կասկածի տակ է առնում զրադաշտական կրոնի ուսմունքը և ճշմարտությանն ու արդարությանը հետամուտ՝ սկսում է ուսումնասիրել քրիստոնեական գաղափարախոսությունը: Իրեն հուզող հարցերի պատասխանն ստանալու նպատակով նա մեկնում է Քարթլի և բնակություն հաստատում Մցխեթում: Գվիրոբանդակը յուրացնում է կոշկակարի արհեստը, ապա ամուսնանում քրիստոնեուհու հետ: Ակտիվորեն մասնակցելով եկեղեցական արարողություններին՝ հրապուրվում և ուսումնասիրում է այդ կրոնի ուսմունքը, ապա և հավատափոխ լինում: Կնքվում է Մցխեթի կաթողիկոս Սամուելի ձեռամբ և անվանակոչվում Էվստաթի: Արարքը համարելով դավաճանություն՝ հայրենակիցները նրան հանձնում են Տփղիսում նստող պարսիկ մարզպանին: Վերջինս ուրացյալին բանտարկում է, բայց ամիսներ անց, անսալով կաթողիկոսի հորդորներին, իր պաշտոնաթողությունից առաջ հրահանգում է ազատ արձակել: Երեք տարի անց տեղաբնակ պարսիկները նորից են բողոքում Էվստաթիի դեմ, և նորընտիր մարզպան Վեժան Բուզմիրը, չկարողանալով դարձի բերել «անօրենին», մահապատժի հրաման է տալիս: Էվստաթիին գլխատում են: Դեպքը տեղի է ունենում VI դարի 40-50-ական թվականներին:

Գրեթե նույն բովանդակությունն ունի նաև «Աբիբոս Նեկրեսելու վկայաբանությունը»: Աբիբոսը VI դարի վերջերին մեկնում է Քարթլի և

բացահայտ մարտնչում զրադաշտականության դեմ: Մի անգամ նա հրապարակավ ջուր է լցնում պարսկական ատրուշանի վրա և հանգցնում: Նրան կալանում ու տանում են մարզպանի մոտ: Վերջինս ցանկանում է «իր կողմը քաշել», բայց տեսնելով՝ ջանքերը զուր են, հրամայում է քարկոծել: Աբիբուսի դին նետում են գազաններին:

Մեկ այլ՝ «Ռաժդեն նախավկայի վկայաբանությունը» երկում, գլխավոր հերոսը՝ ազգությամբ պարսիկ, Վախթանգ Գորգասալի տիրակալության ժամանակ գալիս է Քարթլի, ժանոթանում քրիստոնեության հիմունքներին, մասնակցում եկեղեցական ծեսերին և փոխում դավանանքը, ինչի համար էլ ենթարկում են մահապատժի:

Այս երկերից տեղեկանում ենք, որ Քարթլիում գերագույն կառավարիչ եղել է պարսիկ մարզպանը (նստավայրը՝ Տփղիս), իսկ Մցխեթում՝ բերդակալը: Չնայած պարսիկների տիրապետությանը՝ ներքին գործերը վարել են պարսիկ պաշտոնյաների կողմից նշանակված վրացի կամակատար իշխանները: Իմանում ենք նաև, որ քրիստոնեությունը ընդունելը կամ տարածելը խստագույնս արգելված լինելով հանդերձ, շատ պարսիկներ ընդունել են այդ կրոնը: Էվստաթիից առաջ, օրինակ, դավանափոխ լինելու պատճառով մահապատժի է ենթարկվել ևս յոթ պարսիկ:

* * *

643-645 թթ. պարսկական տիրապետությունը փոխարինվում է արաբականով, մարզպանությունը՝ ամիրայությամբ:

Ամիրայության ժամանակներին են վերաբերում մի շարք վկայաբանություններ, որոնցից ամենահետաքրքիրը, անշուշտ, «Աբո Տփիլելու վկայաբանությունն» է:

Աբոն արաբ է: 775 թ. Բաղդադից գալիս է Տփղիս, հաղորդակցվում քրիստոնեական կրոնին և դավանափոխ լինում: Դավանակիցները էմիրին հայտնում են ուրացության մասին: Վերջինս նրան նետում է զնդան, կտտանքների ենթարկում, որ նախկին հավատին վերադառնա, բայց նպատակին չի հասնում: 776 թ. քաղաքի կենտրոնական հրապարակում Աբոյին գլխատում են, դին այրում և մոխիրը թափում Կուր գետը: Վրացական եկեղեցին քրիստոնեական կրոնի համար նահատակված արաբին իր սրբերի շարքն է դասում:

Չեղինակը եղել է Աբոյի մտերիմը. այս հանգամանքը երկին հաղորդում է պատմական հավաստիություն: Վկայաբանությունը բաժանված է չորս մասի: Առաջինում խոսվում է երկրի կացության և քրիստոնեության՝ իբրև միակ և ճշմարիտ կրոնի առավելությունների մասին:

Երկրորդում նկարագրվում է Աբոյի՝ Տփղիս գալու և կնքվելու պատմությունը: Երրորդում՝ չարչարանքներն ու մահապատիժը: Չորրորդ մասը նվիրված է գլխավոր հերոսի պանծացմանը: Տեղեկություններ կան և արաբների տիրապետության, հոգևորականության գործունեության մասին:

Արաբական ժամանակների երկերից են նաև Դավթի և Կոնստանտինի, Արշիլ թագավորի, Միքել Գոբրոնի վկայաբանությունները: Վերջինիս հեղինակը պատմում է, թե ինչպես արաբ զորավար Աբուլ Կասիմը, 914 թ. հարձակվելով Չայաստանի վրա, հրի ու սրի է մատնում երկիրը, ապա ցից է հանում հայոց արքա Սմբատին: Դրանից հետո նա պաշարում է վրացական Դվելի ամրոցը, որտեղ ապաստանել էին մեծատունները ոմն Միքել Գոբրոնի գլխավորությամբ: Դավաճանները Միքելին հանձնում են Աբուլ Կասիմին: Բռնակալը իշխանից պահանջում է մահմեդականություն ընդունել: Գոբրոնը մերժում է, և նրան գլխատում են:

Կարճառոտ այս վկայաբանությունը գրվել է X դարի 10-ական թվականներին և ունի ընդգծված միտումնավորություն: Չայաստանին հասած դժբախտությունների պատճառը հեղինակը համարում է Աստծու ցասում և արդար վրեժ. իբրև թե հայոց հողն անհծված է, ժողովուրդը փառատենչ է, չարական... Նկատի ունենալով այս միտումը՝ ակադ. Կոռնելի Կեկելիձեն գրում է. «Սույն երկը բնորոշ օրինակն է գրական այն ստեղծագործությունների, որ մեզանում ի հայտ եկան X դարից, և որոնք ազգային դավանաբանական տեսակետից հայ միաբնակների հանդեպ հանդուրժողականություն և տակտ չէին ցուցաբերում»:

Նշված դարերի վրաց սրբախոսական երկերը կրկնում են սյուժեներն ու գաղափարները (և դա բնական է), բայց մի քանիսը պատկերացում են տալիս Քարթլիի քաղաքական, եկեղեցական և մշակութային կյանքի մասին՝ ձեռք բերելով նաև պատմաճանաչողական արժեք: Այսպես՝ «Աբո Տփիլելու» հեղինակը նշում է, որ Քարթլիում (Արևելյան Վրաստան) իշխում է արաբ ամիրան, որին անձամբ նշանակում է խալիֆը և տալիս անսահմանափակ իրավունքներ, որ հավատի և ըմբոստության համար հետապնդվողները փախչում են Աբխազիա, որտեղ քրիստոնյաները հալածանքների չեն ենթարկվում:

* * *

X դարից երևան է գալիս նոր ժանր՝ վարքագրությունը (վրացերեն՝ ցխովրեբա): Հետաքրքիր են Սուրբ Նինոյի, Սերապիոն Ջարգնելու, Գրիգուլ Խանձթելու, Էքվթիմե Մթածմիղելու, Իոաննի և

Էքվթիմեի վարքերը: Վերջինիս ներհյուսված է հրաշապատում-տեսիլք մայրենի լեզվի մասին:

Կոստանդնուպոլսում ստանալով հունական կրթություն՝ էքվթիմենն մոռանում է մայրենին: Խոր ծերության մեջ նա ծանր հիվանդանում է, գամվում մահճին: Մի գիշեր հոգեվարքի մեջ գտնվող գործչին այցելում է ոմն գեղամի տիկին, հարցուփորձ անում, ապա ձեռքն առնում ծերունու դաստակը, չափում զարկերակը, ոգևորում, հանգստացնում և պատվիրում հետևյալը. «Վե՛ր կաց, քայլի՛ր և խոսի՛ր վրացերեն»:

Էքվթիմեն, որ խորունկ վիշտ էր ապրում մայրենիով հաղորդակցվել չկարողանալու պատճառով, կամքի գերագույն լարումով սկսում է հիշել ու խոսել: Այդպես մահամերձ գործիչը մայրենի լեզվի շնորհիվ փրկվում է մահից:

Վերոհիշյալ երկերում ներթողվում են Վրաստանում և նրա սահմաններից դուրս ապրող այն այրերը, ովքեր աչքի են ընկել իրենց ազգաշահ գործունեությամբ: Դրանք մատենագիրներ են, մեկնիչներ, թարգմանիչներ, գրիչներ, ծաղկողներ, կենսագիրներ, փիլիսոփաներ, կրթական-լուսավորական գործի նվիրյալներ, հանուն հավատի և ազգային ինքնության նահատակված անհատներ:

X-XI դդ. կրոնական՝ ինքնուրույն թե թարգմանական գրականությամբ պայմանավորվեց վրաց մշակույթի աշխարհիկ բովանդակությունը, կամ, ինչպես ընդունված է ասել, աշխարհականացումը:



XI-XIII ԴԱՐԵՐ

Ռազմաքաղաքական, տնտեսական և հոգևոր բնագավառներում Վրաստանը վերելք է ապրում Դավիթ Շինարարի (1089-1125), Գեորգի Երրորդի (1156-1184) և հատկապես Թամարի (1184-1207/1210) գահակալության տարիներին: Նրանք վարում են հեռատես քաղաքականություն, ազատվում են կախյալ վիճակից և վերականգնում ազգային պետականությունը: Անկախություն ձեռք բերելուց հետո ձևավորվում է Վրաստանի հասարակական կարգն ու կառուցվածքը. հողագործության, անասնապահության, արհեստների, առևտրի, քաղաքային կյանքի համեմատաբար բարձր զարգացումը, վանքերի, եկեղեցիների շինարարությունը, պատմագրության, մանրանկարչության, գրչության, արձաթագործության ու ոսկերչության վերելքը նպաստում է երկրի հոգևոր ու նյութական ոլորտների առաջընթացին: Բարգավաճում են փոքր ու մեծ քաղաքները, բացվում են գիտակրթական կենտրոններ, ուսումնական ծրագրերի մեջ մտցվում են իմաստասիրություն, իրավաբանություն, քերականություն, բժշկություն, տրամագիտություն, մաթեմատիկա, աստղաբաշխություն և այլ առարկաներ:

Վրացական մշակույթը ներառում է նաև պատմագրությունն ու գեղարվեստական գրականությունը: Անմիջական տպավորությունների ներքո գրառվում են երկրում տեղի ունեցող իրադարձությունները: Այդ շրջանում են գրվել Դավիթ Շինարարի, Գեորգի Երրորդի, Թամարի, Գեորգի Լաշայի կյանքն ու գործունեությունն արտացոլող էջերը:

Առաջին վրաց պատմիչը, որ երկրի կենսագրությունն սկսել է նախապատմական ժամանակներից՝ հիմք ընդունելով աստվածաշնչյան լեգենդը, **Լեոնտի Սրովելին է՝** «Քարթլիս ցխովրեբա»-յի հեղինակը:

Շարադրանքն սկսվում է հետևյալ խոսքերով. «Նախապես հիշատակենք այսպես, քանզի հայոց և վրաց... և կովկասցոց հայրը մեկն էր՝ Թարգանոս անվամբ... Նրա որդիներից ութ մարդ հայտնի դարձան որպես հզոր ու անվանի հսկաներ... Առաջինը կոչվում էր Յայոս, երկրորդը՝ Քարթլոս, երրորդը՝ Բարդոս, չորրորդը՝ Սովական, հինգերորդը՝ Լեկան, վեցերորդը՝ Յերոս, յոթերորդը՝ Կավկաս, ութերորդը՝ Էգրոս: Այս ութ եղբայրները հսկաներ էին, սակայն Յայոսը ամենքից առավել հսկա էր, քանզի նրա նմանը երբեք չի եղել ոչ Ջրհեղեղից առաջ, ոչ էլ հետո՝

մարմնով, ուժով ու քաջությամբ: Բայց Արարադի և Մասիսի երկիրն այլևս չէր կարողանում տեղավորել նրանց, ուստի Թարգամոսը բաժանեց իր երկիրը այս ութ հսկաների միջև. երկրի լավագույն կեսը տվեց Հայոսին, իսկ այս յոթին տվեց իրենց բաժինը ըստ նրանց արժանիքների: Եվ այս յոթ հսկաների կառավարիչն ու տերը Հայոսն էր: Եվ այս բոլորը հպատակ էին Հայոսին»:

Լեոնտի Մրովելին իր երկրի պատմությունը զուգակցում է հարևան երկրների պատմությանը՝ կարևոր տեղեկություններ հաղորդելով Հայաստանի, Աղվանքի, Պարսկաստանի, Աբխազիայի, Օսեթիայի, արաբների, թուրք-սելջուկների, մոնղոլների վերաբերյալ:

Սկզբնավորվում է գեղարվեստական գրականությունը: Չնայած նախնական փուլում այն հիմնականում պարսկալեզու երկերի թարգմանություն էր, փոխադրություն կամ վերամշակում, այդուհանդերձ ընթացում էր երկու ուղղությամբ՝ պալատական ներքողագրություն և սիրային-արկածային արձակ:

Ձարգանում էր գրական լեզուն, որ նույնպես երկրում տեղի ունեցող փոփոխությունների հետևանք էր: Թմոզվելին, Շավթելին, Չախրուխածեն և հատկապես Ռուսթավելին, տեղ տալով կենդանի մարդկանց, նրանց հարաբերություններին ու հուզական դրսևորումներին, լեզվի մեջ ներառեցին խոսակցական բառ ու բանը, այլ տարրեր, բազում արտահայտություններ ու ոճեր: Լինելով շնորհալի ստեղծագործողներ՝ երկրի ու պետականության նվիրյալներ, նրանք զգացին, որ նոր կյանքը պահանջում է նոր գաղափարներ՝ տիրասիրություն, հավատարմություն արքային, երկրին ու ժողովրդին, ուժի, գեղեցկության ու առաքինության գովերգում:

XII դարից, որ վրաց գրականության պատմության մեջ համարվում է Ոսկեդար, աշխարհիկ վրացերենով մեզ են հասել հինգ հուշարձաններ՝ «Ամիրանդարեջանիանի», «Վիսռամիանի», «Թամարիանի», «Աբդուլմենսիանի» և «Ընծենավորը»:

«ԱՄԻՐԱՆՊԱՐԵՋԱՆԻԱՆԻ»: Երկի հեղինակը՝ Մոսե Խոնելին, ի մի բերելով ժողովրդի մեջ տարածում գտած գրույցները, ստեղծել է ավատատիրական գաղափարախոսության պահանջներից բխող երկ:

Այն բաղկացած է տասներկու գլուխներից.

1. Հնդկաստանի թագավոր Աբեսալոմի պատմությունը
2. Նոսար Նիսրելիի պատմությունը
3. Բադրի Յամանիձեի պատմությունը
4. Ամիրան Դարեջանիձեի պատմությունը
5. Ամբրի Արաբի պատմությունը

6. Ինդո ճաբուկի պատմությունը
7. Լուսատուների պատմությունը
8. Կախարդների պատմությունը
9. Սեփեդավլե Դարիսպանիձեի պատմությունը
10. Մզեճաբուկի պատմությունը
11. Վրիժառուների պատմությունը
12. Բալխեթ ներխուժելու պատմությունը

Տասներկու գլուխներից ամեն մեկն ամբողջական զրույց է, թեև գործողությունները զարգանում են հաջորդականության սկզբունքով, և հիմքում էլ Ամիրանի արկածներն են:

Առաջին գլխում, որ ավելի ներածություն է հիշեցնում, նկարագրվում է Յնդկաստանի Աբեսալոմ արքայի առօրյան. նա երկուշաբթի, երեքշաբթի և չորեքշաբթի պալատականների հետ խրախճանք է անում, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ՝ որս, և միայն կիրակի է զբաղվում տերունական գործերով:

Չերթական որսի ժամանակ արքան նկատում է «սև աչքերով ու սև կճղակներով, կարմիր մեջքով, սպիտակ փորով ու ոսկե եղջյուրներով մի վիթ»: Երկու ուղեկիցներով յոթ օր ու յոթ գիշեր հետամուտ է լինում հրաշագեղ կենդանուն. յոթերորդ օրը վիթը մտնում է մի քարայր և անհետանում հետապնդողների տեսադաշտից: Արքան և ուղեկիցները հայտնաբերում են կացարան՝ պատերին վեց երիտասարդ տղամարդու և մի չնաշխարհիկ աղջկա դիմանկար: Նկարի տակ մակագրություն է. «Ես եմ՝ Ամիրան Դարեջանիձեն և իմ ծառա Սավարսամիձեն, Բադրի Յամանիձեն և իր ծառա Ինդո ճաբուկը, Նոսար Նիսրելին և իր ծառա Ալի Դիլամը»: Պատերի տակ ժանգոտ թրեր են, նիզակներ, դաշույններ, վահաններ: Մեծ է արքայի զարմանքը, ուստի կարգադրում է գտնել ու պարզել, թե ովքեր են: Երկար փնտրտուքից հետո բանագնացները Բալխում հանդիպում են զառամյալ Սավարսամիձեին: Թագավորի կարգադրությամբ նա գալիս է Յնդկաստան և պատմում Ամիրանի ու մյուս փահլևանների արկածների մասին:

Երկրորդ գլխում («Բադրի Յամանիձեի պատմությունը») նա հայտնում է, որ իր տերը՝ Ամիրանը, որսի ժամանակ հանդիպում է աղեկտուր լաց լինող սևազգեստ մի երիտասարդի և հարցուփորձով իմանում, որ նրա տերը՝ Բադրի Յամանիձեն, մեկնել է օտար աշխարհ՝ նպատակ ունենալով «քաջագործություններով փառաբանվել և Ծովերի արքայի գեղանի դստերը կնության առնել»: Ցամաքում ու ծովերում բազում հեներ, զազաններ ու հարամիներ ոչնչացնելուց, անթիվ-անհամար խոչընդոտներ հաղթահարելուց հետո Բադրին հասնում է Ծովերի

արքայություն, պարտության մատնում հակառակորդ երեք հսկաներին և ամուսնանում արքայադստեր հետ: Վերադարձին Բադրիին առևանգում է Բադբաղ դևը: Ծովերի արքայի խնդրանքով իր ծառայի՝ Ալի Դիլամի ուղեկցությամբ նրան ազատելու է գնում Նոսար Նիսրելին:

Երրորդ գլուխը կրում է «Նոսար Նիսրելիի պատմությունը» վերնագիրը: Հազար ու մի չարչարանք կրելով, հազար ու մի արգելք հաղթահարելով՝ նրան հաջողվում է մտնել դևերի ամրոց:

Չորրորդ գլխից («Ամիրան Դարեջանիձեի պատմությունը») պատմողը հանդես է գալիս իբրև դեպքերի մասնակից: Նա ասում է, որ Ամիրանն իր հավատարիմ ծառայի և ոմն սևազգեստ երիտասարդի ուղեկցությամբ ճամփա է ընկնում՝ փրկելու Բադրի Յամանիձեին և Նոսար Նիսրելիին: Նա նախ ազատում է Ինդո ճաբուկին և Ալի Դիլամին, ապա Բադրիին ու Նոսարին, ինչպես միշտ, չտեսնված ու չլսված սխրանքներ կատարելով, ճանապարհին հանդիպած տասնյակ հրեշներ ու դևեր ոչնչացնելով: Վերադարձին սպանում է նաև ամրոցի տիրակալ Բադբաղ դևին:

Հաջորդ գլուխներից իմանում ենք, որ այս ըմբիշները եղբայրանում են և գործում միասին: Գլխավոր դեմքն ամենուր Ամիրանն է:

Ամիրանը բաղդադցի պատանի էր. ապրում էր տիրոջ՝ Ամիր Մուսլիի արքունիքում. մասնակցում էր պատերազմների, որսորդության, խնջույքների, մենամարտերի: Մի անգամ էլ Ամիր Մուսլին նրան հանձնարարում է մեկնել լուսատուների երկիր, ոչնչացնել այլ վայրերից Ասխան թագավորի դուստրերի ձեռքը խնդրելու եկած փեսացուներին և աղջիկներին բերել Մուսլիի տղաների համար: Այդ հանձնարարությունն իրականացնելուց հետո նա ուղևորվում է կախարդների երկիր, կոտորում անթիվ-անհամար ջադուների, ավազակների, հաղթանակ տոնում առանց բացառության բոլոր հսկաների դեմ մարտերում, ամուսնանում Խորեջանի հետ և վերադառնում Բաղդադ:

Իններորդ գլխում Ամիրանը մենամարտում է Սեփեդավլեի հետ, բայց զգալով, որ չի կարող հաղթել, առաջարկում է եղբայրանալ: Արդեն իբրև դաշնակիցներ՝ նրանք հանդես են գալիս միասնաբար. հարձակվում են Ղազնա քաղաքի վրա, սրի քաշում բոլոր բնակիչներին՝ վրեժխնդիր լինելով մեծահամբավ ըմբիշ Մզեճաբուկին դավադրաբար սպանելու համար: Ի վերջո իր փառքի գագաթնակետին հասած Ամիրանը մեկնում է Բալխ, խավարեցնում նաև թագավորի դեմ ապստամբած Բալխամի աստղը, կրկին ամուսնանում, այս անգամ էլ արքայադստեր հետ և տուն դառնում իբրև հռչակավոր փահլևան: Այսպես էլ ավարտվում է երկը:

Ամիրանը պարտադրված մարտնչում է նախ Չինաստանի ու Խորեզմի արքայորդիների, ապա չար ուժերի, ավարառուների, սև, սպիտակ ու կարմիր դևերի, վիշապների, յոթ-իննգլխանի հրեշների, քաջքերի ու հարամիների դեմ: Առանց երկմտելու ոչնչացնում է հատկապես կողոպուտով զբաղվող ավազակներին, այն հսկաներին, ովքեր, չարաշահելով իրենց վիթխարի ուժը, հարձակվում են կալվածքների, առևտրական նավերի ու քարավանների վրա, սպանում ու կողոպտում: Իհարկե, Ամիրանը և իր քաջազուն ընկերները ծառայում են արքաներին, իշխաններին, վաճառականներին, ազնվականներին, հոգևոր բարձր դասին, պաշտպանում են նրանց կայքն ու կյանքը: Բայց նրանք զորավիգ են նաև թույլերին, տնանկներին ու խեղճերին. համարյա միշտ գործում են արդարության ու ասպետության սկզբունքներով: Ի վերջո ակնհայտ է դառնում բարու հաղթանակը չարի, օրինությանը՝ ապօրինությունների, լույսինը՝ խավարի դեմ:

Հեղինակը իդեալականացնում է բոլոր մենամարտերը, ըմբշամարտը, քաջությունը, անձնվիրությունը: Կարևորը, էականը ֆիզիկական ուժի ցուցադրությունն է: Գրողը փառաբանում է տիրոջ հանդեպ հավատարմությունը: Երկի գլխավոր հերոսները միմյանց նկատմամբ տիրոջ և ճորտի հարաբերությունների մեջ են: Ամիրանը Բաղդադի խալիֆի ճորտն է. իր խոսքի հանդեպ վստահություն ներշնչելու համար նա հաճախ երդվում է այսպես. «Երդվում եմ Աստուծով և իմ տիրոջ՝ Ամիր Մուսլիմի արևով»: ճորտի կարգավիճակում գտնվող Ամիրանը, իր հերթին, Բաղդադի մեծատուններից է. ճորտեր ունի, ամրոցներ, զինված ջոկատներ: Նրա փահլևան ճորտերից է Սավարսամիձեն, որն էլ ունկնդիրներին հաղորդում է Ամիրանի, նրա ընկերների և Յնդկաստանի արքայի կյանքի ու գործունեության հետաքրքիր դրվագները. պատմելու ընթացքում հաճախ է գործածում «Իսկ ես՝ Ամիրանի ճորտս», «Մենք՝ Ամիրանի ճորտերս», «Նա՝ իմ տերը» խոսքերը:

Հատկանշական է, որ տարբեր երկրներում սխրանքներ կատարելուց և հռչակվելուց հետո Ամիրանը վերադառնում է տիրոջ մոտ և շարունակում ճորտական ծառայությունը:

Ամիրանը դրական հերոս է, նա ներկայացվում է «սրտով բարի, իմաստուն և գիտուն», բայց զերծ չէ նաև բացասական հատկանիշներից. նախանձ է, փառասեր, եսամուլ. հանդուրժել չի կարող, երբ իր ներկայությամբ գովաբանում են այլ ըմբիշի: Նա կարող է առանց պատճառի մարտնչել նույնիսկ ազնիվ ու բարի ասպետների դեմ. միայն թե ինքը լինի առաջինը, միայն թե ինքը մեծարվի հանրության կողմից: Նախանձի որդն է կրճում նրա սիրտը, երբ մենամարտի է հրավիրում ժողովրդի

մեջ սեր ու հարգանք վայելող Սեփեդավելին և, ինչպես նշվեց վերը, չկարողանալով հասնել առավելության, առաջարկում է եղբայրանալ: Ոչ էլ համեստությունն է զարդարում նրան, քանզի հաճախ է ասում. «Աշխարհիս երեսին ինձ նման փահլևան չկա»: Նրան խորթ է նույնիսկ մարդկային զգացմունքներից վեհագույնը՝ սերը: Ավելին՝ երկի հերոսների համար բազմակնությունը սովորական երևույթ է: Օրինակ՝ Ամիրանն ուներ երեք կին (մեկ այլ տարբերակում՝ վաթսուն): Ինչպե՞ս է նա ամուսնանում Խորեշանի հետ. երազում նրան այցի է գալիս մի կին և հանձնում օտար աղջկա դիմանկար: Ամիրանը գտնում է դիմանկարի տիրոջ մորը և պայմանավորվում ամուսնանալ նրա դստեր հետ, առանց, սակայն, հարսնացուին գեթ մեկ անգամ տեսնելու: Նույն կերպ է վարվում երկրորդ ու երրորդ ամուսնությունների ժամանակ. հերթական անգամ ոմն ըմբիշի հաղթելուց հետո տեսնում է Յնդկաստանի արքայադուստրերից մեկին և իսկույն կնության վերցնում: Ամիրանին հետևում են մյուսները, որ նույնպես հեռու են հույզերից ու ապրումներից:

Թեև գործողությունները տեղի են ունենում Վրաստանից դուրս, հերոսներն էլ օտարներ են, այդուհանդերձ այն ազգային երկ է. նրանում արտացոլված են XII դարի ֆեոդալական Վրաստանի կացությունն ու բարոյահոգեբանական իրավիճակը:

* * *

«ՎԻՍՈՒՄԻԱՆԻ»: Նշված ժամանակաշրջանի գրական հայտնի դեմքերից է բանաստեղծ, թարգմանիչ, քաղաքական և ռազմական գործիչ Սարգիս Թմոզվելին: Սարգիսը Ջաքարյան-Երկայնաբազուկ (վրացական աղբյուրներում՝ Մխարգրծելի) տոհմի (Վահրամյան ճյուղ) վրացիացած շառավիղներից է:

1187 թ. Սարգիսը մասնակցում է Դվինի ամիրայության դեմ արշավանքին, աչքի ընկնում խիզախությամբ և ռազմավարական հմտությամբ: Իսկ երբ Գեորգի Ռուսը (Բոգոլյուբսկի) գահին տիրանալու համար ապստամբում է Թամարի դեմ, ապստամբությունը ճնշելու գործում վճռորոշ դեր է կատարում Սարգիսը և իբրև վարձատրություն ստանում Ջավախքի Թմուկ բերդը (Թմոզվի): Ամրոցին տեր դառնալուց հետո նրա շառավիղները սերնդեսերունդ հորջորջվում են Թմոզվելի (հայկական աղբյուրներում՝ Թմոզվեցի): Սարգիս Թմոզվելին հետագայում էլ վարել է բարձր պաշտոններ, բազմաթիվ մարտեր մղել հատկապես թուրք-սելջուկների դեմ և ավելի փառավորել տոհմի անունը: Այդուհանդերձ

վրաց իրականության մեջ առավել հայտնի է իբրև բանաստեղծ և թարգմանիչ: Շոթա Ռուսթավելու վկայությամբ Սարգիսը եղել է «ճարտար ու սեգ» երգիչ, գրել է «Դիլարգեթ» պոեմը:

*Դարեջանյան Ամիրանին խոնելին է գովել, Մոսեն,
Արդուլմեսիային՝ Շավթելին, որի երգը բարձր է, վսեմ.
Դիլարգեթին՝ Թմոզվելի Սարգիսը՝ երգիչ ճարտար ու սեգ.
Տարիելին՝ Ռուսթավելին, աչքին արցունք բորբ ու վսեմ:*

Թարգմ.՝ Յուլիա Կարայան

Պոեմը չի պահպանվել: Նրա գրչին է պատկանում նաև պարսիկ մեծ բանաստեղծ Ֆահրեդդին Ասադ Գուրգանիի «Վիս և Ռամին» պոեմի վրացերեն արձակ թարգմանությունը (XII դարի առաջին կես):

Սյուժեն հետևյալն է. Պարսկաստանի հզոր շահերից մեկը՝ ժերու-նի Մոաբադը, Ամանորն անցկացնելու համար խնջույքի է հրավիրում երկրի մեծատուններին, ավագանուն և տարբեր գավառների ու մարզերի կառավարիչների: Կերուխունի ամենաթեժ պահին նա պարտավորեցնում է տարիքն առած, բայց «վարդի պես բուրոդ, գեղեցկությունն ու թարմությունն անխաթար պահպանած» իշխանուհի Շահրոյին, որ եթե նա երբևէ աղջիկ ունենա, հասունանալուն պես իրեն կնության տա: Անցնում են տարիներ, մոռացվում են թե՛ Ամանորի խնջույքը, թե՛ երկու հզոր մարդկանց պայմանը: Սակայն կատարվում է անսպասելին, որ նման է հրաշքի. կյանքի յոթերորդ տասնամյակում Շահրոն հղիանում է և աղջիկ ունենում, որ դառնում է երկրում նմանը չունեցող գեղուհի: Մայրը դստերը՝ Վիսին, ամուսնացնում է ավագ որդու՝ Վիրոյի հետ: Լուրն առնելուն պես Մոաբադը Շահրոյից պահանջում է կատարել խոստումը: Վիրոն համառորեն դիմադրում է ժերունի հակառակորդին, բայց վերջինիս հաջողվում է ոսկով ու արծաթով կաշառել ապագա զոքանչին և կրտսեր եղբոր՝ Ռամինի օգնությամբ առևանգել հարսնացուին:

Վիսը և Ռամինը ծնվել են նույն տարվա նույն օրն ու նույն ժամին, մանկութեղել են միասին, նրանց կերակրել է նույն ստնտուն: Ռամինը մինչև ուղևորվելու ծուծը սիրահարված է աղջկան, բայց թաքցնում է զգացումը: Եվ ահա ճանապարհին, երբ Վիսին ուղեկցում էր շահի մոտ, առաջին իսկ նպաստավոր պահին նրանք նետվում են միմյանց գիրկը: Սերը փոխադարձ է, հիվանդագին և ծայրաստիճան կրքահարույց:

Երկի հիմքում ընկած է այդ սիրո պատմությունը: Հեղինակի հավաստումով՝ սերը, միայն սերն է գեղեցկացնում մարդու կյանքը և արդարացնում նրա երկրային գոյությունը: Իր միտքը նա ձևակերպել է

այնպես, որ դարձել է ասույթ. «Ով սիրահար չէ, մարդ չէ»: Ռամինի և Վիսի հանդիպումների մասին իմացվում է ոչ միայն արքունիքում, այլև նրա պատերից դուրս: Մոաբադը մեղսագործներին սպառնում է խստագույնս պատժել, բայց նրանք նախ ժխտում են, ապա մեղայականով ներկայանում ու երդվում վերջ տալ իրենց տեսակցություններին: Դա կրկնվում է բազմիցս: Հաճախ նրանք փախչում են արքունիքից, շաբաթներով ապրում միասին, հետո, անսալով թուլական արքայի հորդորներին, վերադառնում են, կրկին երդումներով միամտացնում շահին ու մերձավորներին և շարունակում գաղտնի հանդիպումները: Մեկ էլ, արդեն որերորդ անգամ, երբ փորձում են արքային համոզել իրենց «անմեղության» մեջ, վերջինս պահանջում է անցնել խարույկի միջով: Սիրահարները ստնտուի օգնությամբ կարողանում են խուսափել մահաբեր վտանգից:

Երբեմն Ռամինն ըմբոստանում է եղբոր դեմ և խորհուրդ տալիս ամուսնանալ իրեն համապատասխան մեկ ուրիշի հետ: «Քո և Վիսի գործի մեջ վատն այն է,- ասում է Ռամինը,- որ դու ծեր ես, իսկ նա՝ ջահել... ջահելի համար ջահել է նախատեսված, տարեցի համար՝ տարեց»: Երբեմն էլ Մոաբադին ու Վիսին համեմատում է աշնան ու գարնան հետ և աններելի համարում նրանց համատեղ կյանքը:

Հեղինակը Ռամինի բարեմասնությունները նկարագրելու մեջ գույներ չի խնայում, բայց երբ մարմնակուլ կիրքը գլուխ է բարձրացնում, նա դառնում է անբան, խորամանկ, խարդախ ու ստոր: Հաճախ հրաժարվում է պարտականություններից, լքում է ընկերներին, խուսափում է մարզումներից, ռազմերթերից, զորավարություններից, թշնամու դեմ մարտերից: Հիվանդ ձևանալով՝ մնում է պալատում և օգտվելով եղբոր բացակայությունից՝ շարունակում է հանդիպումները հոմանուհու հետ: Ռամինի համար սուրբ ու պարտավորեցնող ոչինչ չկա. նա շատ անգամ է դավաճանում Վիսին, ավելին՝ սիրուհու ննջարան սողուկելու համար հաճախ կենակցում է նրա գառամյալ դայակի հետ:

Վիսը բարոյական հատկանիշներով անհամեմատ բարձր է երկրպագուից. նա հմայիչ է, արարքների մեջ անկեղծ: Անապական է նրա սերը. նա զոհաբերում է իր պատիվը, փառքը, պատրաստ է զոհաբերելու նաև ծաղկուն կյանքը: Ռամինին հանդիպելուց ի վեր նա աշխարհում ոչ ոքի չի ուզում ճանաչել: Անտեսում է հասարակական կարծիքը, ընտանիքի շահը, իր կոչումը, պարտականությունները, անգամ կանացի արժանապատվությունը: Նա դիմում է խորամանկության, կեղծիքի, երդվում է և երդմնազանց լինում: Երբեմն չի ժխտում սիրային կապը և հանդես է գալիս ինքնարդարացման համարձակ խոսքերով:

Սերը նրան դարձնում է աներկյուղ, հանդուգն: Որքան խորշում է սմբած ալևորից, նույնքան տենչում ու մղվում է դեպի երիտասարդ երկրպագուն: Նա սիրում էր Վիրոյին, որ եղբայրն էր ու ամուսինը, բայց Ռամինի հետ սիրային կապերից հետո մոռացության է տալիս, ատում է նրան, թեև դա չի խանգարում, որ սիրելեկանի հետ հերթական անգամ փախչելուց հետո իբրև ապահով ապաստարան ընտրի հենց Վիրոյի ընտանեկան հարկը:

Հերոսների սերը հեռու է մարդու հոգին վեհացնող անապական զգացմունքից. իշխողն զգայականն է: Սիրահարներն իրար են մղվում մարմինները լափող կրքերին հագուրդ տալու համար:

Վիսի և Ռամինի սիրո բնույթը նկատի ունենալով հանդերձ՝ ընթերցողն առնվազն չի մեղադրում նրանց, քանզի ծերունի Մոաբադը, անտեսելով բնության կողմից սահմանված տարրական կանոնները, ամուսնանում է դեռափոփ էակի հետ, այն էլ՝ բռնությամբ: Արդարացման եզրեր ենք տեսնում նաև հեղինակի դիրքորոշման մեջ. Գուրգամին վկայում է, թե սերը սոսկ զգայական է, կիրք: Թերևս այդ է պատճառը, որ երկի մասին հայտնվել են բացասական կարծիքներ, իբր պարսկական դասական գրականության մեջ դա ամենամաքարո ստեղծագործությունն է, կամ Վիսի և Ռամինի պատմությունը կարդացող կնոջից խոհեմություն մի՛ սպասեք:

Սարգիս Թմոզվելին երկին հագցրել է վրացական տարազ և այնպես, որ մինչև XIX դարը նրա ծագումը մասնագետների մեջ կասկած չի հարուցել: Նման հաջողությանը նպաստել է թարգմանչի վարպետությունը: Վրաց գրական անդաստանում այն մնում է թարգմանչական արվեստի և իբրև դասական վրացերենով գեղարվեստական արձակի կատարելության մեռուշ, որովհետև թարգմանիչը հանդես է եկել ստեղծագործաբար, միջամտել է բնագրին, խորացրել որոշ մտքեր, հավելել դարձվածքներ, մեկնաբանել վեճերի տեղիք տվող շատ հարցեր՝ դառնալով գրեթե համահեղինակ:

Փոփոխությունները պայմանավորված են նրանով, որ Թմոզվելին ջանացել է մեղմել հատկապես հեթանոսական կյանքին գուցե թե հարիր, բայց քրիստոնեական վարդապետությանն անհարիր պատկերներն ու նկարագրությունները և հարմարեցրել ֆեոդալական հասարակության բարոյականությանն ու գաղափարախոսությանը: Նպատակին հասնելու համար ներմուծել է աստվածաշնչյան խրատներ ու պատվիրաններ, թեև նշում է, որ դեպքերը տեղի են ունեցել Քրիստոսի ծննդից դարեր առաջ: Նկարագրվում են նաև պարսկական արքունիքի բարքերը, կենցաղն ու սովորույթները, պատմական ու քաղաքական անցքերը:

«Վիսուամիանիի» վրացերեն տեքստը առաջին անգամ լույս է տեսել 1884 թ., թարգմանվել է անգլերեն (1910) և ռուսերեն (1949):

* * *

Թամարի ժամանակ ձևավորվում է ավատական Վրաստանի հասարակական կարգն ու սոցիալ-տնտեսական կառուցվածքը, ստեղծվում է ռազմական տեսակետից հզոր ու միաձույլ պետություն: Երկիրը թևակոխում է իր ոսկեդարը: Ժամանակի գրիչները բացառիկ են համարում հատկապես թագուհու ծառայությունները, որ մեծ դեր խաղաց Վրաստանի պատմության մեջ: Գաղափարախոսները նրան ներկայացնում են Աստծու փոխանորդ, Չորրորդ սրբություն, համարվում է «Աստծուն հավասար»: Ազգային բանահյուսության մեջ Թամարն առաքինի է, իմաստուն, աստվածատուր, աղքատների ու ճնշվածների հովանավոր, անպարտելի հերոս: Դարեր շարունակ ժողովուրդը նրան մեծարում է «Վրաստանի մայր» արտահայտությամբ, վերագրում գահակալությանը նախորդած ու հաջորդած մարտեր ու հաղթանակներ, կառույցներ ու սխրանքներ:

Թագուհին հայրենաշեն գործունեությամբ ստվերեց նախորդներին ու հետնորդներին: Չպետք է մոռանալ, որ նրա մահից ընդամենը մեկ տասնամյակ անց երկիրն ենթարկվեց թաթար-մոնղոլական հորդանների արշավանքներին՝ ապրելով իր պատմության թերևս ամենաողբերգական շրջանը. պետականորեն միավորված և կյանքի բոլոր բնագավառներում վերելք ապրող Վրաստանը մասնատվեց, հիմնովին խորտակվեց երկրի տնտեսությունը, կասեցվեց մշակույթի, գիտության ու գրականության առաջընթացը: Ժողովուրդը կրեց անլուր տառապանքներ. հալածվեց, զերեվարվեց, ուստի բնական է, որ երանությամբ պիտի հիշեր Թամարին ու թամարյան տարիները:

Պատմիչները, գրիչներն ու գրողները՝ մեծից փոքր, թագուհուն ձոնում են բանաստեղծություններ, պոեմներ ու արձակ էջեր:

Նշված շրջանում զարգանում է ներբողական ժանրը, որի ներկայացուցիչներն են Չախրուխաձեն, Իոանե Շավթելին և Շոթա Ռուսթավելին:

ՉԱԽՐՈՒԽԱՁԵՆ ավանդաբար համարվում է «Թամարիանիի» հեղինակը: Դա գովաբանական ոտանավորների շարք է. սկսվում է փիլիսոփաներին ուղղված խնդրանքով՝ փառաբանել Թամար թագուհուն, և իսկույն էլ վկայում է, որ ո՛չ Արիստոտելի, ո՛չ Պլատոնի, ո՛չ էլ Յոնեթոսի գրիչն ի գորու չեն ըստ արժանվույն գովերգելու Թամարի գեղեցկու-

թյունն ու հմայքը, մեծությունն ու փառքը: Սքանչելի թագուհու հետ չեն կարող համեմատվել ո՛չ Աթիլեսն ու Խոսրովը, ո՛չ Դարեհն ու Դեբորան: Թամարի շքեղ փայլից խամրում են անգամ ամենապայծառ լուսատուները. նա գիտուն է ավելի, քան էնեոսն ու Զոմերոսը: Թագուհուն երկրի վրա ընտրյալ է կարգել Աստվածն ինքը.

*Օ՛, դու՛, մաքուր կույս, քեզ միայն օծյալ
եվ ընտրյալ է կարգել ինքն Աստված:*



Աստվածային Թամարը մարդու տեսքով է լույս աշխարհ եկել, որ մահմեդական չարիքից ազատի քրիստոնյաներին ու համայն մարդկությանը: Նա երկրորդ Զիսուսն է, որ առաքելությունն ավարտելուց հետո կրկին պետք է վերադառնա երկնային կացարան:

Մեծադորդ խոսքերով Չախրուխաձեն պանծացնում է նաև Թամարի ամուսնուն՝ Դավիթ Սոսլանին, և նրանց որդուն՝ Գեորգի Լաշային:

Ենթադրվում է, որ շարքը գրվել է Բասենի ճակատամարտից (1202) հետո, մոտավորապես 1203-1207 թթ.: Այն բաղկացած է քսանվանկանի տողերից, հանգավորումն իզական է. ամեն կիսատող

ունի ներքին հանգ: Տվյալ վանկաչափը վրաց տաղաչափության պատմության մեջ հայտնի է **չախրուխաուլի** անունով: Լայնորեն կիռավել է միջնադարի և նոր շրջանի բանաստեղծների կողմից:

ԻՈՍՆԵ ՇԱՎԹԵԼՈՒ «Աբդուլմեսիանի» («Մեսիայի՝ Զիսուսի ծանա») ժողովածուն, գրված չախրուխաուլի վանկաչափով, ի տարբերություն նախորդի, հստակ սյուժե չունի: Չափազանց թանձր է նաև կրոնական քողը: Այս ստեղծագործությունը նույնպես նվիրված է Թամար թագուհուն և Դավիթ Սոսլանին: Վրաց մասնագետները նշում են, թե այս պոեմը ևս գրվել է Բասենի նշանավոր ճակատամարտում վրացական զորքերի հաղթանակի տպավորության տակ.

*Երկյուղածորեն երգում են նորեն
Դավիթ արքային՝ խոսքիս սպասող.
Առույզ է, բարի, հմուտ և արի
Մեր աշխարհակալն ամուր, մեծագոր.
Նա թշնամուն մութ նետում է անդունդ,
Հաղթական արքան պսակված լույսով,
Ծագումով արքա, փառքով բարձրագահ
Եվ անմրցակից, մարտերում՝ հզոր:*

Թարգմ.՝ Վաղարշակ Նորենց

Իբրև արքունի բանաստեղծներ՝ Չախրուխաձեն և Շավթելին, բնականաբար, արդարացնում են այն սկզբունքներն ու մեթոդները, որոնցով առաջնորդվում էր Թամարը պետության կառավարման ժամանակ: Նրանք պաշտպանում են նաև արքունիքի, ֆեոդալների, ավագանու շահերն ու իրավունքները:

Եթե հիշյալ երկերը գնահատենք պատմականության սկզբունքից ելնելով և չմոռանանք հեղինակների ապրած դարաշրջանը, ժամանակի ու ժամանակակիցների հոգևոր պահանջներն ու ճաշակը, ապա իբրև ներբողներ թե՛ «Թամարիանին» և թե՛ «Աբդուլմեսիանին» լիովին արդարացնում են իրենց գոյությունն ու ժանրի պահանջները (թագուհու և արքայի գովք, վերամբարձ ոճ, քաղցրախոսություն, պաթետիկա, չափազանցություն և այլն) և պատվավոր տեղ զբաղեցնում ազգային գրականության պատմության մեջ:

Չնայած և՛ «Թամարիանին», և՛ «Աբդուլմեսիանին» մեզ են հասել աղճատված վիճակում XVIII դ. գրչությամբ, այդուհանդերձ «նորություն էին վրաց գրականության մեջ, գրական նոր տեսակներ՝ նոր ձևով և նոր բովանդակությամբ»:



ՇՈՔԱ ՌՈՒՍՅԱՎԵԼԻ



Վրաց ժողովրդի հոգևոր զարգացման բարձրագույն արտահայտությունը եղել և մնում է Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը», որը նաև համաշխարհային գեղարվեստական խոսքի արժեքներից է:

Բանաստեղծի գործունեության վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Գիտնականներին դեռևս չի հաջողվել վերականգնել նրա՝ թեկուզև փոքր-ինչ հավաստի կենսագրությունը: Պատճառն այն է, որ միջնադարի խավարամիտ հոգևորականները գրողին հռչակել են հերձվածող, հիշատակն առմիշտ

մոռացության տալու նպատակով աղբյուրներից ջնջել են անունը, իսկ պոեմի ձեռագրերն այրել կամ Կուր գետն են թափել: Այդուհանդերձ ժողովուրդը նրա անվան և ստեղծագործության շուրջ հյուսել է լեգենդներ, որոնց տվյալներն եթե զուգահեռ ենք պոեմում առկա պատմական իրողությունների հետ, թերևս կարելի լինի ուրվագծել բանաստեղծի կյանքի մոտավոր ուղին:

Պոեմի հնագույն ձեռագիր ընթերցանությունը մեզ է հասել XVII դարի գրավոր աղբյուրներից: Շոթա անունը և Ռուսթավելի ձևը (բնագրում՝ **Ռուսթվելի**) հեղինակին վերագրվել է ավելի ուշ՝ XVIII դարում: Ռուսթավելու ծննդավայրը նույնպես հատմի չէ, չնայած որոշ հետազոտողներ գրում են, թե նա ծագումով մեսխ է, ծնվել է XII դարի երկրորդ կեսին Ռուսթավի ավանում, որից էլ ստացել է գրական անունը՝ Ռուսթավելի, այսինքն՝ Ռուսթավցի կամ Ռուսթավեցի: Պարզ չէ նաև նրա սոցիալական ծագումը:

Շոթայի հայրը օժտված է եղել ստեղծագործելու ձիրքով, գրել է ոտանավորներ, եղել է ամբարիշտ, երգիծել մարդկանց: Դա էլ առթել է, որ խնջույքներից մեկի ժամանակ թույն լցնեն գինով լի նրա գավաթի մեջ և վերջ տան կյանքին:

Շոթայի դաստիարակությունն ստանձնում է հորեղբայրը: Զգալով

զարմիկի արտասովոր ընդունակությունները՝ նրան հանձնում է ժամանակի հայտնի կրթօջախներից Իդալթոյի ակադեմիա. տղան աչքի է ընկնում գերազանց առաջադիմությամբ՝ զարմանք ու հիացմունք պատճառելով թե՛ իբրև բանաստեղծ, թե՛ իբրև գիտնական: Համբավը տարածվում է Վրաստանում, և թագուհին հովանավորում ու գործուղում է Հունաստան՝ գիտությունների մեջ խորանալու: Վեց տարի անց Շոթան վերադառնում է և նվիրվում գրական գործունեության: Շուտով պալատական երգչի կարգավիճակով հրավիրվում է արքունիք:

Շոթայի ավագ եղբայրը՝ Ավթանդիլը, իբրև թե սիրահարվում է թագուհուն, բայց մերժվելով՝ վերցնում է պանդուխտի ցուպը, դեգերում երկրեերկիր և մահկանացուն կնքում օտարության մեջ: Եղբոր ողբերգական վախճանն էլ տեղիք է տալիս գրելու «Ընծենավորը»:

Շոթան պոեմը կարդում է ազնվականության և ֆեոդալական ընտրանու ներկայությամբ, ապա նվիրում թագուհուն: Վարձատրվում է և նշանակվում արքունի գանձարանապետ: Հետագայում ինչ-ինչ պատճառով վտարվում է արքունիքից:

Պանդուխտ հանձարը նախ հանգրվանում է Հունաստանում, ապա տեղափոխվում Երուսաղեմ և ձեռնադրվում քահանա: Այնտեղ էլ վախճանվում է: Նման ենթադրության հիմք տալիս է Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքում պատկերված անձնավորության՝ գանձարանապետի դիմանկարը, որ մասնագետները վերագրում են Ռուսթավելուն: Ենթադրվում է, որ նա գումար է հատկացրել վանքը վերանորոգելու համար, և շինարարները, ի նշան երախտագիտության, բարերարի դիմանկարը պատկերել են սյան վրա:

Ինչ վերաբերում է հավաստի կենսագրությանը, ապա պետք է ասել, որ ռուսթավելագիտությունն առայժմ անզոր է նոր տարբերակ առաջադրել, քանզի, ինչպես նշեցինք, գրավոր աղբյուրներում նրա վերաբերյալ տեղեկություն չի պահպանվել, բացի այն, որ «Ընծենավորի» նախերգանքի յոթերորդ և ութերորդ քառատողերում հիշատակվում է հեղինակի անունը.

VII տող.

Կնստեմ ես՝ Ռուսթվելիս, երգ կդարձնեմ իմ վերքը արդ:

VIII տող.

Ռուսթվելիս իմ արվեստով պիտի տքնեմ, ծգնեմ, ամդուլ:

Նույնը կրկնվում է վերջերգի առաջին և հինգերորդ քառատողերում.

I քառատող.

Գրում եմ, արդ, զուսան մի մեսխ՝ Ռուսթավելի անունն առած:

V քառատող.

**Դարեջանյան Ամիրանին խոնելին է գովել՝ Սոսեն,
Տարիելին՝ Ռուսթավելին, աչքին արցունք բորբ ու լուսե:**

Որքան անթափանց է բանաստեղծի կենսագրության քողը, նույնքան որոշակի է նրա՝ որպես գրողի մեծությունը:

Ռուսթավելին՝ իբրև պալատական բանաստեղծ, թերևս պոեմը գրել է Թամարի և նրա ամուսնու՝ Դավիթ Սոսլանի հորդորներով և նրանց գահակալության տարիներին (1189-1207 թթ.), որ իր ուժերի ծաղկման շրջանն էր:

**Պատվիրեցին գովել նրան երգով վսեմ ու քաղցրաձայն,
Հոնքերը կեն, թարթիչն ու վարսն ու լալ շուրթերն անզուգական...**

Ինչո՞ւ նշված տարիներին: 1188 թ. Թամարին ամուսնացնում են օս Դավիթ Սոսլանի հետ, որը իր մահկանացուն կնքում է 1205 թ., մինչդեռ պոեմում խոսք չկա այդ մասին: Ամենայն հավանականությամբ իր գործը հեղինակը վերջացրել է մինչ Սոսլանի մահը, այլապես անարձագանք չէր թողնի նշանակալից դեպքը:

Պոեմի գործողությունները տեղի են ունենում Վրաստանին աշխարհագրորեն մերձ և հեռու երկրներում (Հարավային և Հյուսիսային Չինաստան, Հնդկաստան, արաբական երկրներ, Իտալիա, Իսպանիա, նաև մտացածին երկրներ ու քաղաքներ՝ Քաջեթ, Գուլամշարո): «Ռուսթավելին կարող էր դիմել այդ ձևին, - գրում է ակադ. Հովսեփ Օրբելին, - որպեսզի, չմտցնելով վրացական անուններ, չգործածելով աշխարհագրական անուններ, ազատ ու անկաշկանդ տար իշխանների, ասպետների ու արքաների իդեալականացված պատկերներ»: Գործող բոլոր անձինք մահմեդականներ են, հերոսների անունները նույնպես օտարահունչ են, հիմնականում՝ պարսկական: «Հենց դա էլ հիմք է տալիս պնդելու, որ Ռուսթավելին վրաց լեզվով գրել է վրացական պոեմ, որտեղ պատկերել է վրացիների, բայց ոչ բոլորովին այնպես, ինչպես կային նրանք, այլ ինչպես ինքը կուզեմար տեսնել նրանց»: Նույն երևույթի առթիվ ակադ. Իվանե Ջավախիշվիլին ասում է, թե, այդուհանդերձ, նրանց կրծքում վրացական սիրտ է բաբախում:

Սակայն պոեմի նախերգանքում կա մի հատված, որը պոեմի ֆաբուլայի հանդեպ կասկած է հարուցել մասնագետների մեջ.

*Այս պարսկական ասքը հնուց, վրաց լեզվով վերապատմած,
Որը ձեռքից ձեռք էր անցել հանց մարգարիտ լուսաճաճանչ՝
Գտա, չափի վերածեցի, կատարեցի գործ սրտահաճ,
Թող անմնանն ինձ խենթացնող՝ տա վճիռն իր խիստ ու անդարձ:*

Դեռևս 1712 թ. «Ընծենավորի» առաջին հրատարակիչ և մեկնաբան Վախթանգ Վեցերորդն է վեր հանել այս տողերի գրական հնարանք լինելը: Վախթանգը, որ երկար տարիներ ապրել է պարսից արքունիքում և իբրև բանաստեղծ ու գիտուն մտավորական քաջատեղյակ էր այդ ժողովրդի գրականությանն ու բանահյուսությանը, գրել է, որ պարսիկների մեջ նման պատմություն չկա:

«Ընծենավորը», այո՛, XII դարի վրաց իրականության գեղարվեստական արձագանքն է. նրանում արտացոլված է այդ պետության սոցիալ-քաղաքական կացությունը: Ակներև է, որ պոեմի անցքերը պատվում են Գեորգի Երրորդի արքունիքի շուրջ. մարդիկ իրական են, իրադարձությունները՝ որոշակի: Ինչպես Գեորգի Երրորդը արու գավակ չունենալու պատճառով գահ է բարձրացնում դստերը՝ Թամարին, այնպես էլ պոեմում արաբների Ռոստևան թագավորը թագը հանձնում է միակ ժառանգին՝ Թինաթինին, հանձին որի փառաբանվում է Թամար թագուհին:

Բանաստեղծը հմայվել է այդ կնոջ գեղեցկությամբ, տաղանդով ու գործունեությամբ: Նա ժամանակակիցն ու ակնառեսն էր այն հաջողությունների, որ երկիրը հասել էր թագուհու կառավարման տարիներին: Ահա ինչու, հետևելով Չախրուխաձեին և Շավթելուն, նույնպես պոեմը նվիրել է «Արև - արքա» թագուհուն:

*Առյուծին է վայել վահան, միզակ ու սուր, ահա, արքադ,
Թամար-արև արքայուհի, ում այտն է լալ, ում վարսն ազաթ.
Կրհանդգնեմ արդյոք գովել քեզ իմ երգով, արևի հատ,
Քե՛զ, ում մայրդն, արդարապես, վայելում է շաքար ու կաթ:*

Եվ որպեսզի «հանդգնի գովել» և գովերգել ըստ արժանվույն, դիմում է Աստծուն՝ աղերսելով զորություն տալ իր գրչին.

*Ինձ պետք են արդ վառ ու ճարտար խոսք ու արվեստ, սիրտ ու լեզու.
Ուժ տուր, Աստվա՛ծ, որ իմ երգին տամ միտքս, որ տվել ես դու...*

Երկի սյուժեն. Արաբիայի՝ խոր ծերության հասած Ռոստևան

թագավորը նախապատրաստվում է գահը հանձնել միակ ժառանգին՝ չնաշխարհիկ Թինաթինին: Արքայադուստրը և երկրի սպարապետ Ավթանդիլը սիրում են մեկմեկու: Ռոստևանը նրանց ամուսնությանը դեմ է, բայց հայրական իր օրհնանքը կտա, եթե որևէ մրցամարտում սպարապետը գերազանցի ալևոր տիրակալին: Հենց այդ նպատակով էլ կազմակերպվում է խրախճանք-որսորդություն: Ռոստևանը և Ավթանդիլը, մեկը մյուսին գերազանցելով, ինքնամոռաց որս են անում: Ամենաթեժ պահին հանկարծ նրանք տեսնում են, որ ընծենու հագուստով մի երիտասարդ գետափին մտած արցունք է հեղում:

*Տեսան մտած զով գետեզրին անհույս լացող մի սեզ կտրիճ.
Առյուծածին կտրիճը այդ բռնել է սև ձիու սանձից.
Շողում էին լալ-մարգարիտ սանձ-գրահից, թամբ ու սարքից,
Այրվող սիրտը վարդի բոցին շաղ էր ցողել հստակ ու ցինջ:*

Նրանք ցանկանում են ծանոթանալ, բայց օտարականը կոպտորեն մերժում է: Թագավորը կարգադրում է՝ թեկուզ կամքին հակառակ, իր մոտ բերեն հանդուգն արարածին: Խորհրդավոր անձը սրի է քաշում իր դեմ բռնություն գործադրել պատրաստվող զինվորներին և քամու արագությանը անհետանում: Ռոստևանը շանթահար է: Վերադառնալով արքունիք՝ նա կորցնում է քուն ու հանգիստ, օրեցօր դալկանում է, թռչնում: Տեսնելով հոր դառնադետ վիճակը՝ Թինաթինը հորդորում է Ավթանդիլին անպայման գտնել անծանոթին և առաջնորդել պալատ: Վերջինս անմռունչ մեկնում է՝ կատարելու սիրած էակի խնդրանքը:

*Եվ ակոսեց աշխարհին ամբողջ ու ծայրից ծայր
անցավ անկանգ,
էլ չթողեց եզերք ու ակի, տեղ չթողեց երկնքի տակ...*

Երեք տարի զօր ու գիշեր «աշխարհն ակոսելուց» հետո նա պատահաբար հանդիպում է հեծյալների մի խմբի, որոնցից մեկը՝ կարեվեր: Խոցողը անհայտ և տարօրինակ մի դյուցազն է եղել՝ սևաթույր նժույգով և ընծու մորթե հագուստով: Եվ Ավթանդիլին ցույց են տալիս հորիզոնում շարժվող մի սև կետ: Նա սրարշավ սլանում է դեպի հեծյալը և աննկատ հետևում: Երկու օր անց հեծյալը կանգ է առնում մի քարայրի մուտքի առաջ: Նրան դիմավորում է մի կին. նրանք գրկախառնվում են ու սկսում աղիողորմ հեկեկալ: Հաջորդ առավոտյան, երբ ընծենավորը հեռանում է թաքստոցից, Ավթանդիլը մտնում է քարայր և կնոջը հար-

կադրում պատմել նրա մասին: Կինն համառում է, բայց համոզվելով, որ Ավթանդիլը ուզում է օգտակար լինել, խոստանում է նրանց ներկայացնել մեկմեկու: Երեկոյան դյուցազնը վերադառնում է, և կինը պատմում է հյուրի մասին, ապա և ծանոթացնում միմյանց: Դրանից հետո երեքով բոլորում են խարույկի շուրջը, և Ավթանդիլն ուշադիր ու կարեկից եղբոր նման ունկնդրում է խոսակցին, որ պատմում է իր մեմուքյան, թափառումների, «տարօրինակ պահվածքի», դառն ճակատագրի ու ողբերգական սիրո մասին:

Տարիելը (նույն ինքը՝ ընծենավորը) Հնդկաստանի «յոթ վեհաշուք արքաներից» մեկի՝ Սարիդարի որդին է: Արքայից արքա Փարսադանը զավակ չունենալու պատճառով մանուկ Տարիելին որդեգրում է, բայց երբ տղան դառնում է հինգ տարեկան, ծնվում է «երկվորյակն արեգակի»՝ Նեստանը: Մեծանալով միասին և նույն հարկի տակ՝ Նեստան-Դարեջանն ու Տարիելը «կամքով անդարձ» սիրում են իրար:

*Վաղուց եմ ես ինձ ամուսին լուկ քեզ ընտրել կամքով անդարձ,
Բայց չի եղել պատեհ առիթ, որ քեզ ասեմ բացեհրաց:
Երեկ ես իմ ամպհովանուց տեսա քեզ խենթ, ուշքդ թռած.
Ապա, ավա՛ղ, տեղեկացա տառապանքին սրտիդ կրած:*

Աղջկա ծնողները, ելնելով երկրի շահերից, բայց անգիտակ այդ սիրուն, որոշում են իրենց դստերն ամուսնացնել Խորեզմշահի որդու հետ: Այդ առթիվ նրանք խորհրդակցում են Տարիելի հետ, որ հոր մահից հետո ստանձնել էր երկրի սպարապետի պաշտոնը, և ստանալով համաձայնություն՝ թագաժառանգին հրավիրում են Հնդկաստան: Նեստանը, իմանալով այդ մասին, խստորեն այպանում է երկրպագուին՝ թուլամորթության և ծնողների հետ լուռումուռը համաձայնելու համար, և ապա հորդորում անձամբ ոչնչացնել օտար փեսացուին: Տարիելը գիշերը սողոսկում է Հնդկաստանի մատույցներում հանգրվանած թագաժառանգի վրանը, սրախողխող անում նրան և ապա փակվում իր անրոցում:

Փարսադանը, տեղեկանալով, որ դուստրն է Տարիելին սպանության մղել, հրամայում է մահապատժի ենթարկել նրա դաստիարակին՝ իր հարազատ քրոջը՝ Դավար-քաջքին, «որ երկինքն էլ կկախարդեր»: Այդ աստվածուրաց կինը նախ դաժանորեն գանահարում է սանուհուն, ապա «քաջքանման ժանտ դեմքերով երկու ծառայի» կարգադրում, որ Նեստանին նետեն անմարդաբնակ, անառիկ ու անջուր որևէ վայր:

Սիրած աղջկան գտնելու հույսով Տարիելը հավատարիմ ծառա-

ների, ռազմիկների ու Նեստանի աղախին Ասմաթի հետ ճանապարհ է ընկնում դեպի անհայտություն: Տարիներ շարունակ դեգերում է աշխարհով մեկ: Ի վերջո, կորցնելով բոլոր ռազմիկներին ու ծառաներին, ասի է դուրս գալիս ինչ-որ քաղաքի մոտ, որտեղ հանդիպում է ծովափնյա տարածքի տիրակալ Փրիդոնին: Սա ծանոթանում է Տարիելի հետ, հրավիրում իր ապարանքը, ապա առաջարկում որսի գնալ: Հենց այդ միջոցին էլ պատմում է իրեն զարմանք պատճառած մի դեպքի մասին:

Ծովի վրա անհավանական արագությամբ սուրում է մի նավակ և կանգ առնում քաղաքամերձ ասիին: Նավակից ցատկում են երկու սևամորթ ստրուկներ՝ քարշ տալով չափազանց գեղեցիկ մի էակի: Եվ չնայած ինքը՝ Փրիդոնը, իր կայծակնասույր մեույզով հետապնդում է նրանց, բայց սևամորթներին հաջողվում է ճանկել աղջկան և սլանալ ծովի խորքը:

Տարիելը ողբում է, դա հենց այն էակն է, որին անդուլ ու անդադար փնտրում է ինքը: Փրիդոնը սուրհանդակներ և զինված ջոկատներ է ուղարկում տերության չորսբուրդը, բայց նրանք վերադառնում են ձեռնունայն: Տարիելը, ընդունելով Փրիդոնի նվերը՝ ազնվագարմ մեույզ, հրաժեշտ է տալիս տանտիրոջը և Ասմաթի հետ շարունակում դեգերումները: Նա հավատակորույս է, հուսաբեկ, մեկուսանում է, տրվում կարոտի ու վշտի կորստաբեր հորձանքին:

Այդ սրտահույզ խոստովանությունից հետո Ավթանդիլը խոսում է իր անձի մասին՝ ով է ինքը, ով է իրեն ուղարկել և ինչու: Նա նաև վստահեցնում է, որ շուտով կվերադառնա, և մեկնում է հայրենիք:

Ռոստևանը, զորքն ու ժողովուրդը ճոխ հանդիսություններ են կազմակերպում Ավթանդիլի գալստյան առիթով: Նա պատմում է իր բազում արկածների և ընձենավորին հանդիպելու մասին, միաժամանակ սիրած էակին հայտնում է Նեստան-Դարեջանի և Տարիելի ողբերգական սիրո պատմությունը: Հատկանշական է, որ թինաթինը, իր հերթին, ցուցաբերելով մարդասիրության բացառիկ օրինակ, փեսացուին գրեթե պարտադրում է անհապաղ գնալ, պատժել չար ուժերին, հուսալքության խորխորատից դուրս բերել տառապյալներին, երջանկացնել նրանց և հետո միայն մտածել սեփական նպատակների մասին:

Ավթանդիլը ներկայանում է Տարիելին, հայտնում իր ծրագրերը և նորից ճանապարհ ընկնում՝ Նեստանին գտնելու հույսով: Ճանապարհին ծովահեններից ազատում է մի առևտրական քարավան, միանում դրան և իբրև քարավանապետ առաջնորդում Ծովային թագավորության մայրաքաղաք: Ավթանդիլը իջևանում է մեծահարուստ վաճառականի

հարկի տակ: Տանտիրուհին՝ Ֆաթմա խանումը, առաջին իսկ հայացքից սիրահարվում է հյուրին և նախահարձակ լինում: Արդեն մտերմիկ զրույցի պահին նա պատմում է, որ մի անգամ իրենց ծովափնյա այգուն մոտենում է մի նավակ, միջից դուրս են գալիս երկու սևամորթ տղամարդ և արևատես մի աղջիկ: Իր ստրուկների միջոցով կարողանում է առևանգել գեղեցկուհուն և պահել տանը: Երկրի տիրակալը, լսելով անսովոր հմայքի տեր էակի մասին, տանում է պալատ: Աղջիկը Ֆաթմանից



ստացած նվերներով կաշառում է պահապաններին ու փախչում: Նա այժմ գերության մեջ է. փակված է Քաջեթի՝ քաջքերի անառիկ բերդամրոցում՝ իբրև ապագա հարսնացու տեղի անչափահաս գահաժառանգի:

Համոզվելով, որ ճիշտ ուղու վրա է, Ավթանդիլը բացահայտում է իր անձն ու նպատակները: Ֆաթման կախարդ ստրուկի միջոցով ավետում է Նեստանին և լուր ստանում նրանից:

Ավթանդիլը վերցնում է Նեստանի նամակն առ Տարիել և շտապում հայտնելու երանելի լուրը: Ճանապարհին Փրիդոնին հաղորդակից է դարձնում ընդհանուր ուրախությանն ու իր հաջողությանը:

Ավթանդիլը Տարիելին գտնում է դաշտում՝ սպանված առյուծի կողքին: Բացելով ծրարը՝ նա տեսնում է իր՝ Նեստանին նվիրած շալիկտորը և ուշաթափվում: Ջուր չճարելով՝ Ավթանդիլը առյուծի արյունով ուշքի է բերում: Նրանք մեկնում են Փրիդոնի մոտ, քանզի միայն նա գիտեր Քաջեթի ճանապարհը: Բազում չարչարանքներից հետո երեք դուրսագունները՝ Ավթանդիլը, Տարիելը և Փրիդոնը, ուղեկցությամբ վերջինիս երեք հարյուր քաջարի մարտիկների, շարժվում են դեպի նպատակակետ: Առումը դժվար էր, մարտը՝ դաժան, բայց ի վերջո բերդն ընկնում է, պաշտպանները ոչնչացվում են, իսկ Նեստան-Դարեջանն ազատվում է երկարատև ու հոգեմաշ գերությունից: Ուրախ ու երջանիկ՝ վերադառնում են Փրիդոնի տիրույթները, որտեղ կատարում են Տարիելի ու Նեստան-Դարեջանի հարսանյաց հանդեսը: Այնուհետև մեկնում են

Արաբիա, նույնպիսի արարողությամբ միացնում Ավթանդիլի ու Թինաթինի՝ վաղուց սպասված ճակատագրերը:

Այդտեղից արաբական ութսունհազարանոց զորաբանակով նրանք շարժվում են դեպի հեռավոր Հնդկաստան, որտեղ տեր ու տնօրեն էր դարձել երկրի թշնամին՝ Ռամազ արքան: Հերոսները պարտության են մատնում նրան և ժողովրդի ցնծության ներքո գահ բարձրացնում Նեստան-Դարեջանին ու Տարիելին՝ իբրև Փարսադանի արժանավոր հետնորդների:

Դժվարությունների մեջ միշտ միասին, բազում հաղթանակներ տոնած և եղբայրության ու համերաշխության դաշինք կնքած ոյուցազունները վերադառնում են իրենց երկրները, և ամեն մեկը երկար տարիներ խաղաղ ու երջանիկ վարում է իր տերության ղեկը:

Երկի հյուսվածքը պարզ է, ավարտուն, թեև կան սյուժետային երկրորդական գծեր ևս, ինչպես՝ Ռոստևանի և Ավթանդիլի որսորդություն-մրցույթը, Ավթանդիլի ճամփորդությունն ու արկածները, Գուլամշարո քաղաքի նկարագրությունն ու անցուղարձերը, Նուրադին-Փրիդոն թագավորին առնչվող պատմությունը:

Պոեմը բաղկացած է նախերգանքից, բուն սյուժեից և վերջերգից: Յուրահատուկ բնույթ կրող նախերգում հեղինակը չի անդրադառնում այն նախադրյալներին, որ պետք է հիմք դառնան գործողությունների ծավալման համար, ոչ էլ ընթերցողին նախապատրաստում է որևէ պատմության գեղարվեստական շարադրանք ընթերցելու, այլ ներկայացնում է հետաքրքիր դրույթներ չափածոյի և սիրո մասին:

Հետևելով ավանդույթին՝ Ռուսթավելին իր խոսքն սկսում է Աստծուն հղված աղերսով.

*Նա, որ ուրույն ուժով ամհուն կերտեց հավերժ երկինքն անձիր,
Վերուստ սփռեց իր շունչն անշեջ ու շունչ տվեց ամեն շնչի,
Մեզ պարզեց աշխարհն այս մեծ՝ օվկիան գույնի ու ճաճանչի՝
Նա էլ կարգեց դասն արքայոց՝ ըստ իր տեսքի ու իր անձի:*

Հենց սկզբից Ռուսթավելին որոշակիացնում է չափածոյի դերը ընդհանրապես և նրա յուրահատուկ բնույթը՝ մասնավորապես: Ընդգծում է, որ պոեզիան «աստվածային» երևույթ է, երկնային է. միևնույն ժամանակ այն ունի երկրային, չափազանց էական նշանակություն, հասարակական, կիրառական, ասել է թե՛ ընդհանրական, դաստիարակչական դեր. այն «լսողաց հույժ օգտակար է»: Փիլիսոփայական մտածողության ճյուղ է չափածոն, ճշմարտությունը ճանաչելու միջոց: Ելնե-

լով դրանից՝ հեղինակը ձգտում է որոշել քերթողական արվեստի բարդությունը, բնույթն ու տեղը:

*Բանաստեղծն, ի սկզբանե, իմաստության մի ճյուղն է վառ,
Աստվածային, երկնին վայել, և լտղաց հույժ օգտակար,
Յնայիչ է նա, պիտանի և բանհմաց մարդու համար.
Գովելի է տաղը, քանզի կարծ է ասում խոսքը երկար:*

Կարևոր է համարում բառի տնտեսումը, ճկունությունը, իմաստալից և բարեհունչ լինելը, իմաստը հակիրճ արտահայտելու հմտությունը:

Բառն ունի դրսևորման երկու կողմ՝ արտասանական և բովանդակային: Չափածոյի մեջ դրանք պետք է հանդես գան միաձույլ: Բանաստեղծելը չափազանց դժվար արվեստ է, հերոսական գործ, որ պահանջում է երկնատուր շնորհ, զգացմունքների և ուժերի գերագույն լարում, հզոր բանականություն, բառազանձի հարուստ շտեմարան, խոսքը տեղին ու դիպուկ գործածելու կարողություն և այլն: Քերթող չէ նա, ով երկարաբանում է, շատախոսում, դանդաղում կամ թափը թուլացնում ընթացքի պահին:

*Վա՛յ այն տհաս բանաստեղծին և երգերին նրա անդուր,
Երբ չի տիրում լեզվի գանձին, պակասում են բառերը կուռ,
Երբ չի սեղմում լեզուն ճկուն, չի կրճատում խոսքերը զուր.
Չի զարկում իր չոգանն անշեղ, դառնում հերոս արշավասույր:*

Ռուսթավելին բանաստեղծներին բաժանում է երեք կարգի. լավագույնը նա է, ում խոսքը վերքի սպեղանի է, սիրտն ամրացնող բալասան: Իսկական բանաստեղծը պետք է լինի քաջ ասպետի կամ հմուտ որսորդի նման, որովհետև խիզախ ասպետին փորձում են մարտադաշտում, հմուտ որսորդին՝ վտանգավոր որսավայրում. նա միայն խոշոր գազաններ պետք է խոցի: Բայց սա դեռ բոլորը չէ. ինչպես փորձում են մժուլգի արագությունը երկար վազքուղում, մարզիկին՝ ասպարեզում լայնարձակ և զարկով անշեղ, այդպես էլ իսկական բանաստեղծի շնորհքն ի հայտ պետք է գա մեծածավալ կտավի առաջ, ընդարձակ թեմա մշակելիս:

*Ինչպես ծիւն փորձում է միշտ վարզը արագ, երկար ուղին,
Գունդ նետողին՝ լայն ասպարեզն ու զարկն անշեղ, թափը ուժգին,
Այդպես, ահա, երկարաշունչ տաղն է փորձում բանաստեղծին,
Երբ զրույցն է դժվարանում, պակասում է հանգը բնածին...*

Ռուսթավելին հայտարարում է, թե հանգաստեղծներից բոլորը չէ, որ կարող են բանաստեղծ կոչվել: Նրանցից շատերը կան ներդրում չունեն, կան էլ եթե ունեն, ապա շատ աննշան:

***Նա չէ քերթող, ով պատահմամբ մի երկու տաղ բանաստեղծի,
Ո՛չ, ամեն ոք իրեն վսեմ բանաստեղծ թող չկարծի,
Չեռու մոտիկ բառերն իրար մի կերպ կցի կցմցի,
Ջորու պես համառ ասի՝ իմն է լավը, ու չամաչի:***

Նա ասում է, որ «Ընձենավորը» կատարելության հասցնելու համար անհրաժեշտ են ճոխ լեզու, խոր զգացմունք, վարպետություն և հզոր բանականություն:

Մեծ տեղ տալով էպիկական ժանրին՝ ժխտում է քնարականը.

***Երգեր կան այլ, որ լավ են լոկ զարդարելու քեֆ ու հանդես,
Որպես հաճո սիրազրույց, ընկերական կատակ որպես,
Եթե պարզ են ու սրամիտ՝ հաճելի են դրանք էլ մեզ,
Բայց ով երկար տաղ չի ասում՝ նա բանաստեղծ չէ իսկապես:***

Բանաստեղծության տեսակները սերտորեն կապում է սիրո տեսությանը և, ինչպես չափածոյի պարագայում, սիրո մեջ ևս երեք կարգ է ընդունում:

Մի տեսակը միստիկականն է, անգոն, անմարմինը: Չեղինակը ոչ միայն չի ջատագովում երկնային քողով շղարշված, ինչ-որ տեղ մաև անմատչելի սերը, այլև կտրականապես մերժում է դա: Երկրորդը նույնպես բացասում է, ավելին՝ ատում, որովհետև դա էլ մղում է զգայականին, մարմնականին, հանգեցնում տարփանքի. «Ատում եմ գգվանք, գրկանք, համբույր, երբ չկա սեր, սիրտ մտերիմ»:

Այս երկուսից էապես տարբերակում է երրորդ տեսակը՝ իսկականը, որ վերուստ է տրվում առանձին ընտրյալների և Աստծու պարզ և, շենշող, խորախորհուրդ, վեհացնող, անընդգրկելի, խռովահույզ, ոգևորության ու ներշնչանքի անսպառ աղբյուր (իհարկե, բանաստեղծական), մաև անասելի տվայտանքներ պատճառող: Չեղինակի հերոսների համար սիրուց տառապելու նպատակը ամուսնությունն է: Օրինակ, երբ Թինաթինը Ավթանդիլին ուղարկում է ընձենավորին փնտրելու, իր խնդրանքը հիմնավորում է այսպես.

***Թող խորանա և ամրանա այդ սխրանքով սերդ իմ մեջ,
Թող իմ սրտից սատանայի փուշը հանի քո ուժը մեծ,
Ջրի՛ր հույսիս մանուշակը ուրախության ցողով քո պերճ,
Վերադարձի՛ր որպես առյուծ, տես ու տիրիր սիրուդ անշեջ:***

Սակայն հարկավոր է առանձնացնել իսկական սիրողին և սեր խաղացողին, քանզի «անժայր օվկիան» է նրանց միջև եղած տարբերությունը: Իսկական սիրահարը միշտ և ամենուր, զօր ու գիշեր, քուն թե արթուն, սիրածին մոտ թե նրանից հեռու, խուսափում է մարդկանցից, ձգտում մեռնության, թափառում անտառներում ու լեռներում, գիշերում գազանների հետ, ամփոփվում իր վշտի ծովում: Անցնելով բազմաթիվ փորձությունների բովով՝ հանուն սիրած էակի սխրանքներ է կատարում, հաղթանակներ տոնում, որից հետո միայն արժանանում իր երագների դիցուհու աստվածային տեսությանը: Գրողն ազնվացնում, բյուրեղացնում է թե՛ այդ զգացմունքը, թե՛ այն կրողին: Սիրահարը՝ աղջիկ թե տղա, հոգով ու մարմնով անթերի պետք է լինի: Հատկապես տղամարդը, այդ շնորհներից զատ, պետք է լինի ազնիվ, ֆիզիկապես ուժեղ, իմաստուն, հարուստ, արդարամիտ, առատածեռն, ճարտարախոս, բարյացակամ:

***Սիրահարը պիտի լինի արևի պես չքմաղ ու վառ,
Առատածեռն և ունևոր, ազատ դյուցազն ու զորավար,
Կռվում հաղթող, համբերատար, մտքով հարուստ,
Լեզվով ճարտար,
Ում լիովին չի տված այս - չի կարող լինել սիրահար:***
Թարգմ.՝ Վահան Տերյան

Ահա ինչու իսկական ստեղծագործողի վսեմ պարտականությունը սիրո և սիրող անձանց գովասանքը պետք է լինի:

***Գովերգել եմ ես սերն անկեղծ և սիրողաց ցեղը վերին,
Դժվար է այդ, լեզուն մարդու հեշտ չի գովում վեհն, անթերին,
Դա երկնային գործ է վսեմ, թռիչք տվող հոգու թևին,
Ջրկանք ու ցավ շատ կկրի, դժվար գործին ով հետևի:***

Դա այդպես է, այո՛, բայց կնոջ հանդեպ սերը չպետք է գերադասել բարեկամի սիրուց. վերջինս շատ ավելի վեհ է: Իրոք, պոեմում կարևոր տեղ է հատկացված բարեկամությանը. երբեմն այն առաջին տեղ է մղվում. «Ո՛վ բարեկամ չի որոնում, նա՛ ինքն է հենց իր թշնամին»:

Անկաշառ, անդավաճան, հուզիչ ու անխախտ է երեք ասպետի բարեկամությունը: Բարեկամին պետք է նվիրվել, հանուն նրա պետք է հրաժարվել թեկուզև անձնական երջանկությունից: Փառքի ու հարստության գագաթնակետին գտնվող Ավթանդիլը թողնում է թագ ու գահ, զորք ու հայրենիք, սիրած էակին և սար ու ձոր ընկնում՝ Տարիելին գտնելու: Տարիելը, մոռանալով անձնական վիշտը, վտանգելով կյանքը, օգնում է իրեն անժանոթ Նուրադին-Փրիդոնին՝ հետ առնելով նրա՝ թշնամու կողմից գրավված քաղաքը: Անձնագոհաբար փորձանքից ազատում է մեկ ուրիշ անժանոթի ևս:

Ռուսթավելու հերոսները տարբեր ազգության ու տարբեր դավանանքի ներկայացուցիչներ են. Տարիելը և Նեստան-Դարեջանը հնդիկ են, Ավթանդիլը և Թինաթինը՝ արաբ, Նուրադին-Փրիդոնը՝ մուլղազան-զարցի, Փատմանը՝ Գուլանշարո քաղաքից, բայց դա չի խանգարում, որ նրանք անձնվեր բարեկամներ լինեն:

Միջնադարի կրոնական խտրականության պայմաններում Ռուսթավելին երգել է եղբայրության ու բարեկամության գաղափարը.

***Պիտի եղբայրը եղբոր համար չխնայի ո՛չ կյանք, ո՛չ շունչ,
Սիրտը սրտին ընծա բերի, սերը դնի որպես կամուրջ:***

Ավթանդիլը, Տարիելը և Փրիդոնը միացյալ ուժերով գրավում են Քաջեթը, ազատում Նեստան-Դարեջանին:

Նեստան-Դարեջանի ազատությունը խորինաստ է. Քաջեթը խորհրդանիշն է խավարի, ստրկության ու բռնության, Նեստանը՝ գեղեցկության, սիրո, արդարության ու ազատաբաղձ ոգու: Նրանց պայքարը վսեմ գաղափարների համար է, ուստի մահվան սարսափը չի կարող սասանել հերոսների կամքն ու կորովը: Ավթանդիլը Ռոստևանին հղած նամակում գրում է.

***Չեն կասեցնի վազքը մահի ո՛չ մեղ ուղին, ո՛չ քար ու լեռ.
Չավասար են նրա առաջ թե՛ թուլամորթ, թե՛ անվեհեր:
Չավաքում է հողն անխտիր վերջն իրար մոտ ջահել ու ծեր,
Անփառունակ, անարգ կյանքից լավ է փառքով մահ ընդունել:***

«Ընձենավորի» հերոսների համար ապրել նշանակում է փորձության ենթարկել մարդու բարոյական, ֆիզիկական ու կամային հատկությունները: Ով չի կարող դիմանալ փորձությանը, նա չի ճաշակի հաղթանակի քաղցրությունը.

***Տգեղ է խիստ, երբ որ մարտում քաջն երկնչում է, սարսափում,
Ահաբեկված ու տենդահար դողդողում է մահվան ավում:
Վախկոտն, իրոք, լավ չէ՞ լինել մի թել մանող կնոջ դերում.
Ամեն շահից վեր է, անշուշտ, երբ լավ անուն են ձեռք բերում:***

Այսպիսի նշանաբանով են առաջնորդվում պոեմի դրական կերպարները: Ծիշտ է՝ նրանց գործունեության մեջ հեքիաթայնությունն ակնհայտ է, բայց, ինչպես ակադ. Կոնրադն է վկայում՝ դա թվացող, պայմանական հեքիաթայնություն է: Ռուսավելին, տպավորությունն ու ներգործությունն ավելի ցայտուն դարձնելու նպատակով, հերոսներին իդեալականացրել է, բայց բավական է կարդալ միմյանց հղած ուղերձները, որպեսզի համոզվենք, թե որքան իրական են մարդիկ ու նրանց հարաբերությունները:

«Ընծենավորում» հայրենիքի շահն ամեն ինչից վեր են դասում: Վարպետությամբ է նկարագրված Տարիելի արշավանքն ընդդեմ ուխտադրուժ Ռամազ թագավորի: Հայրենասիրական ջերմ զգացումներով են տոգորված հնդիկները, որ ջանում են իրենց թագավորին ու ամիրքարին հետ պահել եղբայրասպան ընդհարումից: Տարիելն ու Նեստանը պայքարում են, որ հայրենիքի կառավարման ղեկն օտարի ձեռքը չընկնի: Երբ Փարսադանը որոշում է դստերն ամուսնացնել Խորեզմշահի որդու հետ, Նեստանը համակվում է խռովարարի ոգով՝ ի պաշտպանություն երկրի շահերի և իր պատվի ու իրավունքների: Նա ծառայում է ծնողների վճռի դեմ, սիրած տղայից պահանջում, որ նա կանխի դիվանագիտական ստորագուցիչ առևտուրը:

***Իսկ թե գալուն չխանգարես, ամուսնացնեն հետս նրան.
Ու բաժանվենք մենք իրարից, մեր խաս շորերը սևանան.
Նրանք փառքով գան ու տիրեն, մեր ցավերը հարյուրաման...
Դա լինելու բան չէ բնավ, որ պարսիկը մեզ տիրանա:***

Նեստանն ու Տարիելն ընդվզում են հանուն անաղարտ սիրո, հանուն հայրենիքի, բայց հեզահամբույր աղջիկը դառնում է արյունահեղ իրադարձությունների զոհ: Փակված խավարչտին գնդանում՝ նրա հոգին ոչ միայն սիրուց է կեղեքվում, այլև մայր ոստանի ճակատագրի անորոշությունից ու ծնողների կարոտից:

Պոեմի հիմնական մոտիվը սերն է թեև, բայց հերոսները պարփակված չեն այդ աշխարհում. նրանք ունեն հետաքրքրությունների լայն շրջանակ, ապրում են բովանդակալից կյանքով. որսորդ են, զին-

վոր, մարզիկ, պաշտոնյա: Արքայադուստրերն իրենց երկրպագուներին տալիս են դժվարին հանձնարարություններ, ենթարկում անկանխատեսելի փորձությունների: Եվ երբ նրանք հաղթում են թշնամիներին, լուծում իրենց առջև դրված խնդիրները, այդ ամենից հետո միայն համաձայնում են ամուսնանալ նրանց հետ:

Բարեկամության, հայրենասիրության, հավատարմության ու սիրո ծիրերն այնպես են ձուլված և ընդհանրացված, որ դժվար է կռահել՝ որտեղ է սկսվում մեկը, որտեղ՝ վերջանում մյուսը: Համադրելով այդ թեմաներն ու մոտիվները՝ Ռուսթավելին դրանք հասցրել է ժամանակի համար անսովոր բարձրության:

Ի հակակշիռ շատ հեղինակների՝ Ռուսթավելին երկը վերջացնում է լավատեսորեն՝ չարի դեմ բարու, խավարի դեմ լույսի, բռնության դեմ ընդվզման գաղափարների հաղթանակով. կենաց և մահու պայքարում ևս գրեթե միշտ հաղթանակը տոնում է կյանքը: Դրական հերոսները, մարտնչելով չար ուժերի դեմ, հաղթահարելով բոլոր խոչընդոտները, իրենց երկրներում ապահովում են արդար և գրեթե անհոգ կյանք. երջանկանում են մակ իրենք՝ հասնելով նվիրական բաղձանքներին: Պոեմի հանգուցալուծումը կենսահաստատ է և լուսավոր:

Յուրացնելով ժամանակի քաղաքակրթության նվաճումները՝ Ռուսթավելին միջնադարյան ֆանատիզմի ու խավարամտության պայմաններում արժարժում է համամարդկային իդեալներ: Պոեմի ընթերցումը հուշում է, որ բանաստեղծը քաջ ծանոթ է եղել ժամանակի աստվածաբանական գրականությանն ու պարսկա-արաբական արկածային երկերին, նեոպլատոնականների փիլիսոփայությանն ու սիրային-ասպետական քնարերգությանը:

Ռուսթավելին, անշուշտ, հետևում է փիլիսոփայական այս կամ այն ուղղությանը, բայց դրանց կուրադավան հետևորդը չէ: Վրաց մասնագետների վկայությամբ նա միջնադարի փիլիսոփայական մտքի համադրական ուղղության ներկայացուցիչն է՝ հեռու դոգմատիզմի ամեն մի արտահայտությունից, հատկապես այդ դարերում պարսկա-արաբական քնարերգության մեջ լայն տարածում գտած սուֆիզմի ազդեցությունից:

Ռուսթավելին ելնում է նյութական ու հոգևոր սկիզբների սինթեզից, երկրի ու երկնքի միասնության գաղափարից: Այդ միասնության հիմքը Աստվածն է:

Բանաստեղծն զգում է բնությունը, այն պատկերում շարժման ու փոփոխման մեջ, հանգում է բնությունն աստվածացնելու, Աստված ճանաչելու գաղափարին: Կենարար ակունք և սկզբնապատճառ համարում է հավերժող և անվախճան Արեգակը: Նյութական աշխարհի բանա-

ստեղծական արտացոլման ժամանակ ևս հանգում է ավանդական կարծիքի՝ աշխարհն ստեղծվել է Աստու կողմից: Բայց նրա համար Աստվածը տիեզերքի միասնությունն է, իսկ նախախնամությունը՝ բնության օրինաչափությունը: Տիեզերքն անստեղծ է, հարատև. այն պատճառ է բոլոր իրերի ու երևույթների, սկզբնաղբյուր կենսական ուժի: Առանձին երևույթների առաջացումն ու անհետացումն արդյունք են նյութական չորս տարրերի՝ հողի, ջրի, օդի և կրակի միացում-անջատումի: Նեստան-Դարեջանը Տարիելին գրում է.

*Խնդրիր Աստու՛մ՝ ինձ ազատի կյանքի հոգսից անպատմելի.
Չրին, ջրին, հող ու օդին էլ չմնամ այսպես գերի.
Թևեր տա ինձ, թռչեմ թեթև, հասնեմ բարձունքին իմ տենչերի,
Գիշեր ու զօր նայեմ արփու. ջերմ շողերին անհանգչելի:*

Աշխարհում օրինաչափությունն ու մարդու գործունեությունը բնությանը ներդաշնակ են, միաձույլ. ոչ ոք չի կարող վերացնել բնության օրենքները, նախախնամություն-ճակատագրի անխուսափելիությունը, քանզի մարդն իր էությանը ու գործունեությանը ենթակա է այդ օրենքին՝ ծնունդը եղել է, կլինի նաև վախճանը:

«Ընձենավորը» մարդու ակտիվ գործունեության ներքող է: Դատապարտելով ճակատագրին ենթարկվելու ստրկամտությունը՝ նա անդուլ պայքարի է կոչում ընդդեմ աղետի, թշվառության, չարի ու բռնության: Ժխտում է չարի բնածին լինելը և այն համարում հաղթահարելի, միայն թե հետևողական պայքարի գնով:

Ընդհանրապես աշխարհը չարի և բարու գոտեմարտ է, և միշտ բարին է հաղթում, որովհետև Աստված բարուն է օգնում. բարին ինքնին աստվածություն է: «Բարին հաղթեց չարին, քանզի նրա կյանքն է երկար»: Բարու հաղթանակի հավատը հերոսներին դյուցազնական գործերի է մղում, որովհետև նրանք պայքարում են ոչ թե երկնային դրախտի, այլ երկրային իղձերի իրականացման համար:

Ի դեպ, ըստ վերնագրի գլխավոր հերոսը Տարիելը պետք է լիներ, որովհետև ընձենավորը նա է, և դեպքերն էլ ծավալվում են նրա շուրջ, բայց առաջնայինը Ավթանդիլի կերպարն է: Տարիելը սպարապետ է, զորահրամանատար, անպարտելի է, գիտուն, բայց ծայրաստիճան հուսաբեկ. կորցրել է հավատը. անզոր գտնվելով կամայականության դեմ որևէ բան ձեռնարկել՝ ընկճված ու դառնացած հեռանում է հասարակությունից: Այդ ճակատագրական պահին նրան հանդիպում է երկրորդ ես-ը՝ գործունյա, քաջակորով ու անկոտրում կամքի տեր Ավթանդիլը:

Նա Տարիելին վստահություն ու հավատ է ներշնչում:

Ռուսթավելու գեղագիտական հայացքներն առաջադիմական են: Ըստ նրա գեղարվեստական արտացոլման առարկան աշխարհն է, երկրային իրականությունը: Կյանքն է գեղեցիկ: Գեղեցիկ է մարդը, որովհետև նա է տիեզերքի մեծագույն արժեքը, ընդ որում մարդը անթերի պետք է լինի թե՛ հոգով, թե՛ մարմնով. արտաքին տվյալներն ու ներքնաաշխարհով պայմանավորված գործունեությունը ներդաշն պետք է լինեն. կարևոր է, որ տեսականն ու գործնականը լրացնեն մեկմեկու: Գիտելիքները սնանկ են ու անօգուտ, եթե դուրս են գործունեությունից, չեն կիրառվում, նման են հորած գանձի:

Իբրև ավատական հասարակարգի ծնունդ՝ Ռուսթավելին երկրպագում է կառավարման միապետական ձևը: Հնդկաստանի օրինակով նա ցույց է տալիս միասնական պետության կենսունակությունը: Ինչպես շատ տերություններ, Հնդկաստանը ևս բաժան-բաժան է: Սարիդոնը՝ Տարիելի հայրը, նույնպես մասնատված իշխանապետության կառավարիչ է: Բայց հաշվի առնելով երկրի շահերը՝ նա հրաժարվում է իր բաժին թագավորությունից և միանում առավել հզոր՝ իրական թագավորին՝ Փարսադանին: Վերջինս զրկաբաց ընդունում է իր վասալին և նշանակում բարձր ու պատասխանատու պաշտոնի՝ դարձնելով առաջին վեզիր՝ երկրի սպարապետ:

Սարիդոնի ողջամիտ քայլով երկիրը միավորվում է մեկ միասնական պետության մեջ, հնարավորություն է ստեղծվում ուշադրությունը սևեռել տնտեսական, ռազմական ու մշակութային կյանքի զարգացման վրա: Ահա թե ինչու Ռուսթավելին գովերգում է միավորված պետության և հարևան ու հեռավոր երկրների համերաշխության գաղափարը: Այս առումով չափազանց հետաքրքիր է պոեմի վերջնամասը: Երեք դյուցազունները միանում են, ոչնչացնում արտաքին թշնամիներին, կարգ ու կանոն հաստատում սեփական երկրի ներսում, վերացնում հասարակական անարդար կարգերը, հաստատում Աստծու պարզևած բարիքներից օգտվելու իրավական հավասարություն:

*Բաշխո՛ւմ էին բերքն ու բարին նրանք ծյունի պես հավասար.
Հարստացրին որրին, այրում, էլ չմնաց խեղճ ու ամճար:
Գառն էր մորը ծծում հանգիստ, պատժվում էր զռփողը չար,
Մեկտեղ էին նրանց հողում հաշտ արածում և՛ գայլ, և՛ գառ...*

Սա, անշուշտ, գեղեցիկ ուտոպիա է: Նկարագրելով ավատական հասարակությունը՝ հեղինակն արտացոլում է հատկապես թագավորների, իշխանների, ազնվականների ու մեծատունների կյանքը: Արքայա-

կան տան ներկայացուցիչները բարի են, առատաձեռն, մեծահոգի, ուստի շենքերով ու ավաններով անցնելիս ժողովուրդը նրանց դիմավորում է երախտագիտության անենավառ ցույցերով: Հավերժացնելով իրավակարգն իր բազիսով ու վերնաշենքով՝ բանաստեղծն այն համարում է վերուստ տրված, անփոխարինելի, իդեալական, միայն թե ձգտում է ավատատերերի ու ճորտերի հարաբերությունները դնել փոխադարձ սիրո հիմքերի վրա: Իսկական է այն սերը, երբ սիրահարված են ճորտն ու տերը: Միայն թե տերերը պետք է լինեն բարի, առատաձեռն, օրինապաշտ, առաքինի, լուսավորյալ, վեհանձն ու ներողամիտ, ինչպես Ռոստևանը, Ավթանդիլը և Տարիելը: Իսկ ստորինները պետք է հարգեն ու ենթարկվեն տիրողներին. Աստված այդպես է սահմանել. «Ինչը կարող է լինել ավելի լավ, քան ճորտությունը»:

Չնայած ճորտերին ազատելու գաղափարը ողորմություն է հիշեցնում, արվում է բարի հիշվելու, գուցե և հոգու փրկության նպատակով, բայց հեղինակի վերաբերմունքը ճորտի, տնանկի ու չքավորի հանդեպ մարդասիրական է:

Ռուսթավելին մարդուն զարդարող հատկանիշներից է համարում նաև առատաձեռնությունը. այդպիսիք են արքաները, արքայադուստրերը, սրանց փեսացուները, բոլոր մեծատոհմիկներն ու իշխանավորները: Ավթանդիլը կտակի միջոցով ցույց է տալիս ոչ միայն առատաձեռնության սքանչելի օրինակ, այլև առաջ է քաշում ճորտերին ազատելու գաղափար.

*Ունեն անբավ, անկշռելի հարստություն ու գանձ անթիվ,
Բաշխիր գանձերն աղքատներին ու ճորտերին դու ազատիր,
Հարստացրու որբին, այրուն, խեղճ-տնանկին դու անխտիր,
Թող ինձ օրհնեն նրանք սրտանց և միշտ հիշեն խոսքով ընտիր:*

Իսկ Թինաթինը գահ բարձրանալուն պես, առանց ժամանակ վատնելու, բացում է իր գանձարանը և գրեթե ամբողջությամբ բաժանում չունևոր մարդկանց: Այդ առթիվ բանաստեղծն անում է մի շատ կարևոր հետևություն, որ հնչում է իբրև ասույթ. «Ինչ որ բաշխես՝ հենց այդ է քոնը, ինչ խնայես՝ կորած է հար»:

Հատկանշական է, որ թագաժառանգներին համարում է «Արևին հավասար», «Արևի հատ», արքաներին՝ «Աստծուն հավասար». Ավթանդիլն այսպես է բնութագրում Ռոստևանին.

*Փախա թաքուն և Աստծուն հավասարին թողի դժգոհ,
Ի հատուցումն շնորհների՝ վշտացրի նրան հոգով:*

Ով անճանաչորդ նվիրված է արքային, նրան երկնային կյանք է սպասում. «Ով արքայի համար մեռնի, հոգին երկինք է սավառնում»:

Ավելի քան խոսուն է կնոջ իրավահավասարության՝ կախյալ վիճակից ազատագրելու հարցը: Ինչպես «Սասունցի Դավիթ» էպոսում, այնպես էլ «Ընձենավորում» կանայք հանդես են գալիս տղամարդկանց հավասար իրավունքներով: Թինաթինը և Նեստան-Դարեջանը օժտված են բարոյական բարձր հատկանիշներով: Կնոջ հանդեպ պատվի զգացումը ներկայացվում է որպես հավասարի զգացումը հավասարի հանդեպ, քանզի նա նույնպես տղամարդու նման վսեմ գործեր է կատարում.

*Աղջիկ է նա, բայց արքա է ծնվել Աստծու կամքով անրեկ.
Շատ անգամ է նավել, և նա գիտե վարել տերության դեկ.
Նրա գործն էլ իր լույսի պես մեզ կարևի ամենուրեք.
Առյուծ է միշտ ծագն առյուծի, միևնույն է՝ արու թե էգ:*

Ռուսթավելին ամեն ինչ բյուրեղացնում է. վեհ են բառն ու բանը, հույզն ու ապրումը, կյանքն ու աշխարհը: Պոեմը ներարկված է ժողովրդական իմաստությամբ, զունագեղ մակդիրներով, պատկերավոր համեմատություններով, ընդգրկուն ասույթներով, թևավոր խոսքերով: Թեև ասույթների թարգմանությունները հեռու են բնագրի սահունությունից ու կառուցվածքային ինքնատիպությունից, այդուհանդերձ բերում ենք մի քանի օրինակ՝ հավաստելու հեղինակի մտքի լայնքն ու խորքը.

*-Անվառունակ, անարգ կյանքից լավ է պատվով մահ ընդունել:
-Գովելի է տաղը այն ժամ, երբ կարճ ասի խոսքը երկար:
-Երբ ազոավը վարդ է գտնում, սոխակ է նա կարծում իրեն:
-Թե մոտիկդ է քո թշնամին, թշնամի է նա առավել:
-Ինչ է ամում, տեսնք, ոսկին՝ գավազանը, չարյաց ցեղի:
-Ինչ որ պահես՝ կորած է հար, ինչ որ տվիր, քոնն այդ է հենց:
-Լավ է գործից ելք որոնել, քան թե վշտին դառնալ գերի:
-Կանգնելն ընկնելն է ճամփորդի:
-Մարդը մարդուն հավասար չէ. մեծ է ճամփան մարդուց մինչ մարդ:
-Սերժելի է վճիռն արագ, հախումն ընթացքը խոհերի:
-Ով բարեկամ չի որոնում, նա ինքն է հենց իր թշնամին:*

Սրանցից շատերը հանդիպում են գրական հուշարձաններում ու տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ, բայց և այնպես իբրև փոխառություն չեն կարող ընկալվել, քանզի թե՛ բանահյուսության և թե՛

գրականության մեջ դարավոր կենսափորձի արդյունք են, այս դեպքում՝ բանաստեղծի մտքի արգասիքը՝ արտահայտված չափազանց սեղմ ու խորհմաստ ձևով:

«Ընձենավորի» հեղինակի* գործունեության ժամանակ Վրաստանը շարունակում էր քաղաքական ու տարածքային միավորման բուռն շրջան ապրել, իշխանությունը պայքարում էր կենտրոնախույս ուժերի և արտաքին թշնամիների դեմ. ուրեմն, ելնելով այս ամենից, բանաստեղծի քաղաքական հայացքները ևս առաջադիմական պետք է համարել:

Ռուսթավելին ստեղծել է բաղաձայնների և ձայնավորների հարուստ ռիթմիկա, որի շնորհիվ ընթերցումը դառնում է սահուն ու դյուրին: Իսկ բնությունը նկարագրող շատ հատվածներ ստեղծում են տեսանելի պատկերներ. վարպետի վրձնահարվածներ են հովիտների ու լեռների, կիրճերի ու ձորերի, ծովերի ու գետերի համայնապատկերները:

Գեղարվեստական կատարելությամբ ու համամարդկային բովանդակությամբ պոեմը մնայուն արժեքներից է, իսկ դավանած բարոյական բարձր սկզբունքներով հակադրվում է արևելքում և արևմուտքում համանման թեմաներով գրված որոշ երկերի. մասնավորապես տարածված է այն կարծիքը, թե վրաց ֆեոդալական վերնախավի մեջ պարսիկ բանաստեղծ Ֆահրեդդին Ասադ Գուրգանու «Վիսը և Ռամինը» պոեմի տարածումը կանխելու նպատակով է գրվել «Ընձենավորը»:

Վրաց գրականության մեջ երկը մնում է անհասանելի: Դարերի ընթացքում Ռուսթավելու ավանդները շարունակելու կամ զարգացնելու փորձ շատ շատերն են արել, բայց մնացել են կրկնողի կամ մանակողի դերում: Գրողն այնպես է սրբացվել, որ նրա բանաստեղծական չափից ու մոտիվներից փոքր-ինչ շեղումն անգամ ընկալվել է սրբապղծություն: Թերևս պատճառներից մեկն էլ այդ է, որ կես հազարամյակից ավելի վրաց քերթողները պատվել են «Ընձենավորի» մոտիվների ու բովանդակության շուրջ: Գեղարվեստական գրականության զարգացումը կաշ-

* Վրաց գրականագետ Պ. Ինգորովան, գրում է, թե ո՛չ Բյուզանդիայում, ո՛չ էլ Մերձավոր Արևելքի քրիստոնյա երկրներում միջին դարերում չի եղել աշխարհիկ բնույթի և մասշտաբի այն գրականությունը, որպիսին տեսնում ենք վրաց գրականության մեջ: Ընդ որում Մերձավոր Արևելքի քրիստոնեական երկրներ ասելով՝ նա նկատի ունի Գայաստանը և Սիրիան: «Ո՛չ սիրիացիները, ո՛չ էլ հայերը միջին դարերի ընթացքում չեն ունեցել աշխարհիկ գրականություն այս բառի իսկական իմաստով»:

Վրաց ժողովրդի՝ նման «բնույթի և մասշտաբի» աշխարհիկ գրականություն ունենալու առանձնաշնորհը Ինգորովան համարում է «ապշեցուցիչ բացառություն, որ հետևանք է վրաց նախաքրիստոնեական շրջանի գրական հզոր ավանդույթի»:

կանդելով հանդերձ՝ այս փաստը լավագույնս վկայում է գրողի մեծության մասին:

Դարեր շարունակ «Ընծենավորի» ընթերցումը դիտվել է կուլտուրայի չափանիշ, իբրև մասունք օժիտ է տրվել աղջիկներին, որպես սպեղանի դրվել է հիվանդի բարձի տակ: Ահա ժողովրդական բանավոր խոսքից մի նմուշ.

*Ես ունեի մի բարեկիրթ
Ու ոսկեծամ, սիրուն աղջիկ.
Ամուսնացրի, օժիտ տվի
«Ընծենավորն» իմ գեղեցիկ:
Կարդացել ու չէիմ ըմբռնել,
Այ քեզ հիմար, անգետ մարդիկ,
Ես էլ կրկին հետ վերցրի
«Ընծենավորն» իմ գեղեցիկ:*

ՎՐԱՅ ՀԱՆՏԱՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բազում դարեր ապրելով վրաց ժողովրդի հարևանությամբ, մի հատվածում էլ նրա հետ մեկտեղ ու նույն հողի վրա՝ հայ գրասերները երախտահարույց դեր են կատարել վրաց հանճարի երկը պահպանելու, բազմացնելու, թարգմանելու և քննախոսելու առումով: Հայազգի գրիչները, օրինակ, դարերին են կտակել «Ընծենավորի» (հայ իրականության մեջ թարգմանվել և հայտնի է նաև «Վագրենավորը» վերնագրով) ավելի քան տասնհինգ բարձրորակ ձեռագիր. դրանցից առաջինը և լավագույնը Վրաստանի Հանրապետության ԳԱԱ Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի թիվ 757 ձեռագիրն է՝ արտագրված 1671 թ. Աղմուրանց Բաղդասարի որդի Գասպարի ձեռքով, որը պոեմի հնագույն և ամբողջական օրինակն է. ներառում է 2126 տուն (համահավաք տեքստը 1587 քառատող է), այսինքն՝ երկն իր նախնական տեսքով ու հավելումներով: Իբրև գիտական հրատարակությունների հիմք ձեռագրի՝ սրա հետ են բաղդատվում եղած բոլոր գրչագրերը:

Հայերեն առաջին թարգմանությունը՝ «Ընծու մորթի հագած մարդը» վերնագրով և Սարգիս Ժածկանունով, տպագրվել է «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 1860 թվականի թիվ 6-ում, ապա 1861 և 1862 թթ. մի շարք համարներում: Նախաձեռնողը անվանի բժիշկ, բանահավաք, գրականագետ Ստեփան Բաստամյանն էր (1815-1872)՝ բարձրագույն

կրթությամբ, ժամանակի զարգացած մարդկանցից մեկը: Նա թարգմանությունն իրականացրել է Թիֆլիսի հայ բարբառի և գրական հայերենի խառնուրդով՝ ձգտելով պահպանել բնագրի տաղաչափական սկզբունքները: Թարգմանության մասին դրվատանքի խոսքեր շատ են ասվել, որին, անշուշտ, արժանի էր նախ և առաջ իբրև առաջին փորձ: Այն հետագայում արտատպվել է տարբեր առիթներով, մասնավորապես վրացերեն, ռուսերեն և գերմաներեն հատվածների հետ տեղ է գտել Ե. Ս. Ստավինսկու՝ Թիֆլիսում հրատարակված (1888 թ.) «Ընծենավորը» ժողովածուում, իսկ Յովհ. Թումանյանը, վերածելով գրական հայերենի, գետեղել է «Լուսաբեր» դասագրքի մեջ:

«Ընծենավորը» սիրվել ու գնահատվել է վրացահայերի կողմից: Այս մասին վկայում է Ստ. Բաստամյանը՝ ամսագրի խմբագրությանն ուղղած իր նամակում. «Էս թղթի հետ կուբերեն մէ կտոր բան, որը որ թարգմանած է վրացերենից: Գիրը, որտեղից վեր է առած էս կտոր բանը, ասում է «Վեփիստողաոսանի», այսինքն՝ «Մարդ՝ ընծու մորթի հագած»: Սրա գրողն է Շոթա Ռուսթավելը: Էս մարդը էնքան հարգևոր է էլի վրացիներու մեջը, որ վեց հարյուր տարի է սրա շինած բանը էստեղ կարդվում է, ինչպես Յոնեբոսի շինածները կարդում են ուրիշ ազգերի մեջ: Թիֆլիսեցի հայքը միշտ սիրել են Ռուսթավելու գրածները, ուրեմն հույս ունեն, թե չեն սխալվում, որ թարգմանածս էլ բավական հավնեն»:

Հատված Բաստամյանի թարգմանությունից.

*Արարստան Ռոստևանը թագավոր էր շատ բաղդավոր,
Արդարադատ, խոնարհ, առատ ու չափիցը դուս փառավոր.
Ինչքան ասես ուներ ճորտեր, դոշումը հո հեսաթից դուս,
Հալալ-մալալ ամեն մարդու գանգատանքն ականջ կոմեր.
Գոված էր իրա վարվելով, ողորմած ու ամենի հետ,
Պստիկ, մեծի նեղությունը՝ սիրտ ցավելով կփարատեր.
Կռվի մեջը անօրինակ թշնամու հետ կռիվ կաներ,
Սիրտ դոշումին տալու համար ճարտար լեզու կուբանեցներ:*

Ընթերցողների հարաճուն հետաքրքրասիրությանը բավարարություն տալու նպատակով հայ-վրաց գրական կապերի երախտավոր մշակներից մեկը՝ գրող, թարգմանիչ Հարություն Միրիմանյանը (1870-1952), 1896 թ. «Մուրճ» ամսագրի համարներում հոդվածաշար է տպագրում «Վրաց գրականության լուսատու աստղի» կյանքի ու գործունեության վերաբերյալ, ապա հրատարակում է պոեմի արձակ թարգմանու-

թյունը: Այնուհետև ուսումնասիրությունը և թարգմանությունը լույս է ընծայում առանձին գրքով¹:

Խորամուխ լինելով երկի գաղափարական բովանդակության մեջ՝ Միրիմանյանը շեշտել է իդեալները՝ սիրո հավատարմություն, կնոջ պաշտամունք, հայրենասիրություն, անխախտ բարեկամություն, անձնագոհություն, առատաձեռնություն, ազնվություն մարդկանց հետ հարբերություններում:

1910 թ. Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը որոշում է մայրենի լեզվով լույս ընծայել համաշխարհային գրականության գլուխգործոցներից մի քանիսը, դրանց թվում և «Ընձենավորը»: Պոեմի թարգմանությունը իրականացնելու խնդրանքով ընկերության վարչությունը դիմում է Դովհաննես Թումանյանին: Ահա բանաստեղծի համաձայնությունը հավաստող երկտողը. «Ի պատասխան հարգելի վարչությանդ և խմբագրական մասնաժողովի խառն ժողովի թիվ 56 գրությամբ ինձ արած առաջարկին, թե քանի ժամանակում և ինչ պայմաններով հայերենի կթարգմանեմ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» հռչակավոր վիպերգությունը, պատիվ ունիմ հայտնելու, որ թարգմանությունը կանեմ հինգ տարվա ընթացքում, յուրաքանչյուր տողին կառնեմ մի ռուբլի, գործը կմնա սեփականություն ընկերությանը»²:

Հասարակական գործունեությամբ զբաղված լինելու, առողջական վիճակի թե ընկերության վարչության կողմից պայմանները չընդունվելու պատճառով չի իրականացել այդ հանրաշահ գործը: Այդուհանդերձ նա ուսումնասիրել է պոեմը, նրա տաղաչափությունը, գնահատել ըստ արժանվույն, և որ շատ կարևոր էր ժամանակի համար, այն դիտել է իբրև վրաց ժողովրդի բանաստեղծական հանճարի դրսևորում. «Վրացու անմիջական և սրտաբաց բնավորությունը, նրա սրտի ազնվությունը, բնական մաքրությունն ու անարատությունը, ազատության և գեղեցկության սերը, այս բոլորը ամեն կողմից լուսավորված կյանքի սիրով և նուրբ վշտով, առհավատչյա են այն բանի, որ վրաց բանաստեղծությանն սպասում է մեծ ապագա: Այդ հատկությունները զարմանալիորեն երևան են եկել Շոթա Ռուսթավելու մեջ, և նա իր ամբողջ էությամբ վրացի բանաստեղծ է»:

Թումանյանը քննադատել է Ռուսթավելու երկի բալնոնոյան թարգմանությունը. «Շոթա Ռուսթավելին մեծ գրող է. նրա գրվածքը շատ է գեղեցիկ, պատկերներով լիքը, սահուն հոսում է մեծ ու խաղաղ գետի նման, բայց Բալնոնոնը հաջող չի թարգմանել, թեև նա վիրտուոզ

¹ **Հարություն Միրիմանյան**, Շոթա Ռուսթավելի և նրա պոեման, Թիֆլիս, 1896:

² **Դովհաննես Թումանյան**, ԵԼԺ 10 հատորով, հ. X, Երևան, 1999, էջ 108-109:

է, խոսքի վարպետ... կարողանում է հանգեր սարքել, իրար զցել, բայց հոգին, շունչը չի տվել, չկա, մեռցրել է»¹ :

Հետաքրքիր է, որ մեծ բանաստեղծը անձնական գրադարանում ունեցել է «Ընձենավորի» լավագույն ձեռագրերից մեկը՝ արտագրված 1839 թվականին (գրիչ՝ Ավետիք Գորգիջանով) :

1913 թ. հունվարին վրաց ականավոր բանաստեղծ Ակակի Ծերեթելին մեկնում է Սոսկվա, որտեղ համերկրացի ուսանողները իրենց ազգային գործչին դիմավորում են այնպիսի ջերմությամբ, հարգանքի, երախտիքի ու սիրո այնպիսի ցույցերով, որ տեղացիները ապշահար հարցուփորձ են անում, թե ո՞վ է և ինչո՞վ է բացատրվում այդ մարդու նմանօրինակ մեծարումը: Նույն հարցով ռուս լրագրողներից մեկը դիմում է Վահան Տերյանին: «Չգիտեմ: Ասացի ու առաջին անգամ կյանքումս ինձ շատ վատ զգացի՝ վրացերեն չիմանալուս համար, որովհետև ես չգիտեի անգամ, թե ի՞նչ է գրել Ծերեթելին: Ի՞նչ կարող էի պատասխանել հարցասեր ռուսին,- շարունակում է Տերյանը,- որը գիտեր, որ ես հայ եմ, բայց հավատացած էր, որ ես պիտի լավ ճանաչեմ վրացիներին: Եվ իրավացի էր, իհարկե, իմ ծանոթ ռուսը՝ սպասելով, որ ես ավելի տեղյակ կլինեմ մեր դարավոր հարևան ժողովրդի կյանքին ու գրականությանը»² :

Ուսու ընկերոջ հարցը և Տերյանի պատասխանը, ամենայն հավանականությամբ, աստեղային պահերից են, քանզի դրանից անմիջապես հետո բանաստեղծն սկսում է ուսումնասիրել վրաց լեզու և գրականություն, հատկապես «Ընձենավորն» ու ռուսթավելյան դարաշրջանը: Նրա հոգին տոգորված էր վեհ ցանկությամբ՝ ինչ-որ չափով վերացնել հայ և վրաց իրականության մեջ առաջացած ճեղքը և հայ ընթերցողի սեղանին դնել հարևան ժողովրդի անխամրելի փառքը համարվող երկի թարգմանությունը: Իր իղձն իրականացնելու նպատակով նա դառնում է «Բժախնդրության չափ բարեխիղճ մշակ ու համառությամբ կատարում սկզբնական գիտելիքները յուրացնելու տաղտկալի սև աշխատանքը, որ անհրաժեշտ էր գիտական ավելի բարձր նվաճումների» և բարձրորակ թարգմանություններ կատարելու համար: Շատ շուտով նա յուրացնում է վրաց լեզվի հիմունքներն ու ձեռնամուխ լինում պոեմի թարգմանությանը:

Պոեմի նախերգանքից Տերյանի թարգմանությունը հավասարազոր է բնագրին: Դա վկայում է վրացերենի նրա ուսուցիչը՝ Նիկողայոս Մառը. «Կարելի է կարծել, որ Տերյանը չէ հայերեն բանաստեղծում, այլ

¹ **Նվարդ Թումանյան**, Գուշեր և գրույցներ, Երևան, 1987, էջ 200-201:

² **Վահան Տերյան**, Եժ երեք հատորով, հ. II, Երևան, 1961, էջ 327:

ինքը՝ Շոթան»։ «Ինչպես է ծագել ռուսթավցի Շոթայի «Ընծենավորի» թարգմանության միտքը Վահան Տերյանի մեջ» հոդվածում Պ. Մակինցյանը գրում է. «Վ. Տերյանը մի քանի տարի տքնելով կավարտեր վրաց գրականության հոյակապ երկի հավասարաթեք թարգմանության գործը», բայց նրա վաղաժամ մահը զրկեց մեզ «մեր հարևանների պոեզիայի թագն ու պարծանքը»¹ համարվող երկը բնագրին համազոր թարգմանությամբ ունենալու հարստությունից։

1937 թ. պոեմի գրչության 750-ամյակի առթիվ Պետհրատը լույս է ընծայում առաջին ամբողջական թարգմանությունը, որ բնագրից իրականացրել էր բանասեր Գևորգ Ասատուրը (1868-1937)։ Նույնը «Գրական հուշարձաններ» մատենաշարով վերահրատարակվում է 1966-ին։ 1983 թ. Թբիլիսիի «Մերանի» հրատարակչությունը տպագրում է ևս մեկ ամբողջական թարգմանություն, որ իրականացրել է թբիլիսահայ բանաստեղծ և վրաց պոեզիայի վաստակաշատ թարգմանիչ Յովի. Կարայանը (1915-1985)։

Ռուսթավելուն ու պոեմին անդրադարձել են նաև հայ նկարիչներն ու քանդակագործները։ XIX դարի վերջերին Գևորգ Բաշինջադյանը «Ընծենավորի» մոտիվներով ստեղծել է նկարներ, որ, ցավոք, առայժմ չեն հայտնաբերվել։ Ռուսթավելու դիմանկարն ստեղծել են Ռուբեն Շահվերդյանը, Ջոտտոն (Գևորգ Գրիգորյան) և ուրիշներ։

Ռուսթավելագիտության մեջ իր լուծման ունի հայ բանասիրական միտքը. գրականության ու գիտության երախտավորներից Ալ. Շիրվանզադեն, Յովի. Թումանյանը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Ավ. Իսահակյանը, Յովսեփ Օրբելին, Լևոն Մելիքսեթ-Բեկը, Գուրգեն Սևակը և ուրիշներ բանիմացությամբ են արտահայտվել վրաց գրողի մասին. նրա երկը դիտել են վրաց գրականության զարգացման օրինաչափ արդյունք, վրացական միջավայրի ու մտածելակերպի արտահայտություն։ Պոեմի գրչության 750-ամյակին նվիրված հանդիսությունների ժամանակ Ավ. Իսահակյանն ասել է. «Շոթա Ռուսթավելին համաշխարհային այն եզակի հանճարներից է, որոնց մեջ ամփոփվում են ու բյուրեղանում մարդկության լավագույն իղձերը, մաքառումները, երազները, իդեալները, որոնց մեջ մարդկությունը հասնում է իր արշալույսին, կատարելությանը»²։

Բերված փաստերով իհարկե չի սպառվում Շոթա Ռուսթավելու և նրա պոեմի նկատմամբ հայ ժողովրդի, հայ գրիչների, բանաստեղծների, նկարիչների, գրականագետների ու թարգմանիչների ցուցաբերած հետաքրքրությունը։ Նշենք նաև, որ Ռուսթավելուն պոեմներ ու

¹ Տե՛ս «Նորք», թիվ 1, Երևան, 1922, էջ 117-119։

² Ավ. Իսահակյան, Եժ չորս հատորով, հ. IV, Երևան, 1959, էջ 185։

բանաստեղծություններ են նվիրել Հովհաննես Թումանյանը, Հովհաննես Շիրազը, Սարմենը, Աշոտ Գրաշին, Սուրեն Վահունին, Գուրգեն Բոբոյանը, Հռիփսիմե Պողոսյանը, շատերը: Ինչ խոսք, դրանց մեջ իր վեհությամբ և բովանդակության հագեցածությամբ շահեկանորեն առանձնանում է Հովհ. Թումանյանի «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» ձոնը.

*Չէ՛, չի լռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոզին,
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին:
Թընդում է դեռ նոր ձեռքերում
էն քնարը գովանի,
Խընդում է դեռ նոր երգերում
Վըրաստանը գեղանի:*

Հայ իրականության մեջ ռուսթավելագիտությունն ունի և՛ ավանդույթներ, և՛ ձեռքբերումներ, որոնց վրա հիմնվելով, գրվում են հոդվածներ և ուսումնասիրություններ, պաշտպանվում են ատենախոսություններ, կատարվում թարգմանչական նորանոր փորձեր:



XVI-XVIII դվեր

Երբեմնի ուժեղագույն պետություններից մեկը մեկ տասնամյակի ընթացքում կորցնում է ոչ վաղ անցյալի ռազմատնտեսական փառքն ու հզորությունը: Նախ թաթար-մոնղոլական հորդանների ու միջինասիական վաչկատուն ցեղերի, ապա խորեզմցիների ու սելջուկների, այնուհետև թուրքերի ու պարսիկների փոխմիփոխ կործանարար արշավանքների հետևանքով ամայանում են վրացական բարգավաճ քաղաքներն ու շեները: Օսմանյան Թուրքիայի ու Սեֆյան Պարսկաստանի միջև պատերազմների հետևանքով, որ տևում էին տասնյակ տարիներ, Վրաստանն էլ, ինչպես և Հայաստանը, ձեռքից ձեռք էր անցնում, հրի ու սրի մատնվում, կողոպտվում, իսկ ժողովրդի զգալի մասը կամ ոչնչանում էր, կամ գերեվարվում: Այդչափ դառնադետ վիճակին նպաստում էին նաև խոշոր ավատատերերի կենտրոնախույս ձգտումներն ու երկպառակությունները, ինչպես նաև միջէթնիկական բախումները: Ճիշտ է, այդ շրջանում Վրաստանն ուներ իր պետականությունն ու թագավորները, բայց նրանց վարած հեղինդուկ քաղաքականության պատճառով երկրի դրությունը մնում էր աղետալի:

Այսպիսով, XIII-XV դդ. Վրաստանն ապրում է իր պատմության ծանր շրջաններից մեկը. անընդմեջ հարձակումների, գերեվարությունների, կոտորածների, կողոպուտների ու հալածանքների պայմաններում դժվար էր վառ պահել գիտության ու կրթության օջախները, անգամ վանական դպրոցները չէին գործում, փակվել էին գրչության ու մանրանկարչության կենտրոնները: Խորտակվում է տնտեսական հիմքը, կասեցվում մշակույթի, գիտության ու գրականության առաջընթացը: Այդ դարերից գրական հուշարձաններ չեն պահպանվել, հիշատակարաններում էլ խոսք չկա ինքնուրույն կամ թարգմանական որևէ արժեք ստեղծելու մասին:

* * *

Հաջորդ ենթափուլը ներառում է XVI-XVIII դդ. և վրաց հին գրականության պատմության մեջ համարվում է վերականգնման շրջան:

XVI դարի սկզբից տեղաշարժ է նկատվում երկրի քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքում: Երկարամյա միրհից արթնանում է

հատկապես գրականությունը: Թարգմանիչներն օտար երկերը փոխադրում-տեղայնացնում էին՝ հարմարեցնելով իրենց նպատակներին ու ցանկություններին, որ արդյունքում պիտի նպաստեր ինքնուրույն գրականության երևան գալուն:

XVI-XVIII դդ. պարսկերենից վրացերենի են փոխադրվում «Շահնամե», «Լեյլի և Մեջնուն», «Բահրամ և Գուր», «Խոսրով և Շիրին», «Յովսեփ և Ջոլեյխա», «Քիլիլա և Դամանա» երկերը, հարյուրավոր ոտանավորներ, իսկ հայերենից՝ «Աղվեսագիրքը» (թարգմանիչ՝ Իովանե Պենտելաշվիլի, նույն ինքը՝ Յովհան Պենտելենց), որոնց մոտիվներով բանաստեղծները, որ թագավորներ էին, ավատատերեր, առհասարակ բարձր խավի ներկայացուցիչներ, գրում էին հեքիաթ հիշեցնող երկեր՝ «Լեյլնեջնունիանի», «Խոսրովշիրինիանի», «Իոսեբզուլեյխանիանի», «Ռոստոմիանի», «Բահրամգուրիանի»:

Առավել հարգի էր քնարական ժանրը: Այնքան հարգի, որ չափածոյի են վերածվում մինչև անգամ վաղ միջնադարի արձակ երկերից մի քանիսը («Ամիրանդարեջանիանի», «Վիսռամիանի»): Այս պարագայում էլ վրաց գրականությունը զրեթե միատարր էր. թեմաներն ու մոտիվները բազմազան չէին: Յիմնականն անձնականն էր՝ արևելյան ոգով, կյանքից կտրված երևույթների ու անիրական, ծով արցունքներ հեղեղող հերոսների կերպավորմամբ:

Իհարկե, քիչ չէին նաև ռուսթավելյան թեմատիկայի ջատագովներն ու տաղաչափության հետևորդները: Ոմանք «լրացնում և շարունակում էին» ազգային կուռքի հերոսների կյանքը. արդեն հանդես են գալիս Ավթանդիլի ու Թինաթինի, Տարիելի ու Նեստամ-Դարեջանի ոչ միայն զավակները, այլև թոռները. հասունանալով՝ նրանք շարունակում են իրենց ապուպապերի սխրանքները («Խորեզմցիների պատմությունը», «Օմանիանի», «Յերոսների մահվան պատմությունը»):

Այդուհանդերձ դրանցում էլ արտացոլվում էր երկրի անցուդարձը, (Իոսեբ Տփիլելի, «Դիդոնուրավիանի», Թեյնուրազ Առաջին, «Քեթևան թագուհու նահատակությունը», Արչիլ Երկրորդ, «Ռուսթավելու և Թեյնուրազի վեճը», Բեսիկի, «Ասպինձայի համար»): Անձնական մոտիվներ պարունակող ոտանավորներում հռեթետական տրամադրություններ էին անկատար իղծերի, ճակատագրի հարվածների, անցավոր կյանքի ու խաբուսիկ իրականության մասին:

ԻՈՍԵԲ ՏՓԻԼԵԼԻՆ (ՍԱՍԿԱՁԵ) ստեղծագործել է XVII դարում: Կենսագրական տեղեկությունները կցկտուր են և ոչ հավաստի:

Ծնվել է 1620 թ.: Եղել է եկեղեցական գործիչ, Տփղիսի միտրոպոլիտ: Ֆեոդալական երկպառակությունների ժամանակ մարտնչել է

Գեորգի XI-ի բանակում: Ձոհվել է 1688 թվականին:

Տփիլեւիւն վկայում է, թէ ինքը ժողովրդական հերոս Գեորգի Սաակաձեի եղբորորդին է:

Իոսեփ Տփիլեւիւն «Դիմումուրավիանի» պոեմի հեղինակն է, որտեղ, գույներ չխնայելով, փառաբանում է անվանի զորապետին, արդարացնում նրա բոլոր քայլերը՝ ճիշտ թէ խոտոր, և հակահարված տալիս իր մեծ նախորդի գաղափարական հակառակորդներին: Հեղինակել է նաև կրոնական բնույթի երկեր: Շոթա Ռուսթավելու «Ընծենավորը» «լրացրել» է՝ հավելելով 260 տող:

ԹԵՅՄՈՒՐԱԶ ԱՌԱՋԻՆ

Ծնվել է 1589 թվականին. նա զարմն էր Քարթլիի տիրակալ Դավթի և Քեթևան թագուհու: Ընտանիքում ստանալով նախնական գիտելիքներ՝ 1602-1605 թթ. դաստիարակվում է պարսից արքունիքում: Նրա հոգևոր հայրը (հետագայում՝ ոխերին թշնամին) Շահ-Աբաս Առաջինն էր:

Թեյմուրազը թագավորել է 16 տարեկանից: Փոքրահասակ լինելու պատճառով երկրի ղեկը վարել է մայրը:

Շահ-Աբասը 1614 թ. հարձակվում է Քարթլիի և Կախեթի վրա, հրի ճարակ դարձնում երկրամասը և հազարավոր քրիստոնյաների քշում Պարսկաստանի խորքերը: Թեյմուրազը հեռանում է Իմերեթ: Մեկ տարի անց նա ղեկավարում է Վրաստանում բռնկված ապստամբությունը, որը, սակայն, դաժանորեն ճնշվում է: Թեյմուրազը վերստին ապաստանում է Իմերեթում: 1625 թ. Քարթլ-Կախեթի ժողովուրդը Գեորգի Սաակաձեի զլխավորությամբ երկրորդ անգամ է ոտքի ելնում պարսկական տիրապետության դեմ: Թեյմուրազը դարձյալ միանում է ապստամբներին: Շահը զիջումներ անում է, բայց երկիրը չի ազատում կախյալ վիճակից:

Թեյմուրազը վարում է անկախ, բայց հեղհեղուկ քաղաքականություն: Նրա գործունեությունը ճիշտ է գնահատել բանաստեղծ Ակակի Ծերեթելին. «Քաղաքականության մեջ Թեյմուրազը մնաց պոետ, պոեզիայի մեջ՝ քաղաքագետ, և իր թագավորության համար նախապատրաստեց մռայլ ապագա»: Պարսկական լուծը թոթափելու նպատակով Թեյմուրազը դիմում է Թուրքիային, որ Պարսկաստանի թշնամին էր, և եվրոպական երկրներին: Ոչ մեկից օժանդակություն չստանալով՝ հայացքը հառում է հյուսիս և դեսպաններ գործուղում ցարական

արքունիք՝ բանակցություններ վարելու, բայց ռուսներն էլ ի վիճակի չէին օգնելու: 1658-ին ռազմական օգնության հայցով այցելում է Ալեքսեյ Միխայլովիչին. դարձյալ ապարդյուն: 1661 թ. հիասթափություն ապրող արքան դառնում է ճգնաժողով: Շուտով ստիպված է լինում մեկնել Պարսկաստան, որտեղ հավատափոխ լինելու պայմանով խոստանում են վերադարձնել Կախեթի գահը: Նա մերժում է, և շահը ծերունագարդ արքային նետում է Աստրաբադի բանտը, որտեղ վախճանվում է (1663 թ.): Ողբերգական ճակատագիր են ունեցել նաև Թեյմուրազի ընտանիքի անդամները՝ մայրը, քույրը, զավակները: Իբրև հավատարմության երաշխիք, արյունարբու շահը 1614 թ. պատանդ էր վերցրել Թեյմուրազի մորը՝ Քեթևան թագուհուն, և անչափահաս որդիներին՝ Լևանին ու Ալեքսանդրին, տարել Շիրազ, որտեղ 1620 թ. խոշտանգում է մանկահասակ արքայորդիներին, իսկ 1624 թ. սեպտեմբերի 12-ին դավանափոխ չլինելու պատճառով մահապատժի է ենթարկում նաև Քեթևան թագուհուն: Շահի զոհն են դառնում նաև Թեյմուրազի դուստրը և երրորդ որդին:

Պետական, հասարակական-քաղաքական աննպաստ պայմանները և ընտանեկան ողբերգական անցքերը բնականաբար իրենց ազդեցությունը պիտի թողնեին Թեյմուրազի ստեղծագործության վրա: Իսկ գրական գործունեություն նա ծավալել է Իմերեթում գտնվելու տարիներին (1629-1633 և 1649-1655):

Պարսից լեզվի և գրականության քաջագիտակ արքան վրացերենի է փոխադրել պարսկալեզու աշխարհում լայն տարածում գտած «Լեյլի և Մեջնուն», «Յովսեփ և Ջուլեյխա», «Մոնը և թիթեռը», «Վարդ և սոխակ» երկերը: Ինքնուրույն են նրա «Քեթևանիանի» պոեմը և քնարական ոտանավորների «Մաջանա» ժողովածուն:

Պոեմում հեղինակը նկարագրում է Շահ-Աբասի արշավանքը Կախեթ և այն վայրագությունները, որ Վրաստանի բնակիչների հանդեպ կատարել են պարսիկ ելուզակները: Այնուհետև սրտի անհուն կսկիծով ողբում է մոր չարչարանքներն ու նահատակությունը: Թեյմուրազը թագուհու սխրանքը գնահատում է ըստ արժանվույն և նշում, որ նա կյանքը զոհաբերել է հանուն վրաց ժողովրդի ու քրիստոնեական հավատի:

Երկխոսության սկզբունքով գրված «Գարնան և աշնան զրույցը» ստեղծագործության մեջ նկարագրում է տարվա եղանակներից յուրաքանչյուրի հմայքը և ցանկանում պարզել, թե դրանցից որ մեկն է գերապատվելի:

«Բողոք առ կյանքը» ոտանավորում բանաստեղծը տրտմջում է կյանքի անագորույն հարվածներից, վեր է հանում ապօրինություններն

ու խարդավանքները, անիծում իր դառն ճակատագիրը և երանությամբ սպասում այն պահին, երբ մահը այցի կգա: Մեռնելն անցանկալի չէ, որովհետև հողի ու հուղարկավորության մասին ինքը չի հոգալու. «Մեռնեմ, հող էլ չեմ ուզում, թող զազաններն այցի գան ինձ»:

Կյանքի հանդեպ հոռետեսորեն տրամադրված բանաստեղծը, սակայն, քնարական երգերում ներկայանում է խնջույքների, սեփեթող կանանց, կարմիր շրթունքների ու կարմիր գինու ջատագով:

Գեղարվեստական կատարելությամբ առանձնանում են «Գովք Նեստան-Դարեջանին» (Նեստան-Դարեջանը Թեյմուրազի դուստրն էր) և «Գինու և շրթունքների վեճը» երկերը: Այստեղ արդեն առանց վարանելու հեղինակը առավելությունը տալիս է շրթունքներին.

*Սպիտակ թասում կարմիր գինին գեղեցիկ է, շատ ճշմարիտ,
Բայց չքնաղ է լալ հակինթը, տակն երբ դրված է մարգարիտ,
Երբ ժպիտը բացում է մեզ, կղիմանա՞ էլ մարդու սիրտ,
Ամբողջ հոգով մեզ կծգտի նա՝ մռռացած կյանք ու հանգիստ:*

Թեյմուրազի ստեղծագործությունը կարելի է բաժանել երկու մասի՝ աշխարհիկ և կրոնական (հեղինակի բնորոշումով՝ մարդկային և աստվածային). աշխարհիկը՝ պայմանականորեն, որովհետև այդ երգերում էլ անկումային տրամադրությունն է իշխում. անցողիկ կյանքը նրան բաժին է հանել միայն դառնություն, տագնապ, կսկիծ, հոգս, խորունկ ցավ, անդարմանելի վերքեր: «Չիանալի ես գեղեցկությամբ» հիփոպի հաջողված բանաստեղծությունն անգամ, որ նվիրված է սիրած էակի բարենասնություններին, ավարտվում է շատ տխուր ակորդով.

*Թռչնեց վարդը, խամրեց իսպառ, բայց անարև, անջուր մնաց,
Չեղեղվում են արցունքներս, կուրանում են աչքերս թաց,
Չոգիս արդեն բերանս եկավ, քարասիրտը ինձ չգթաց,
Չիմա վիշտն է սոսկ բաժինս, երջանկությունս անդարձ գնաց:*
Թարգմ.՝ Վաղարշակ Նորենց

Ինքնուրույն համարվող նրա քերթվածքների սյուժեները նույնպես վերցված են արաբա-պարսկական քնարերգությունից, կրում են դրանց ազդեցությունը, բայց գեղարվեստորեն նա հասել է այնպիսի մշակույթի, որ ժամանակակիցները համեմատել են Ռուսթավելու հետ:

Թեյմուրազը վրաց պոեզիա է բերել մաջամայի և երկխոսության ժանրերը: Գրել է շաիրի և չախրուխաուլի չափերով:

ԱՐՉԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Արչիլն ունեցել է բուռն կյանք, եղել է վտարանդի, երկար տարիներ ապրել է Օսեթիայում, Աստրախանում, Մոսկվայում:

Ծնվել է 1647 թ., Վախթանգ Հինգերորդի ընտանիքում: Հայրը, որ կրում էր Շահնավազ մականունը, մահմեդականություն էր ընդունել և կարողանում էր երկրում ապահովել համեմատաբար խաղաղ պայմաններ (թագավորել է 1658-1675 թթ.): Արչիլը, իր հերթին, թագավորել է Իմերեթում և Կախեթում:

Վախթանգ Հինգերորդը վրացական միացյալ թագավորություն ստեղծելու նպատակով 1661 թ. զորքով մտնում է Իմերեթ, գահը հանձնում 14-ամյա որդուն: Պատանու գահակալությունը կարճ է տևում, որովհետև 1639 թ. կնքված թուրք-պարսկական դաշինքով Վրաստանը բաժանված էր երկու հատվածի. Արևելյան Վրաստանը Իրանի վասալն էր, Արևմտյան Վրաստանը՝ Թուրքիայի: Շահը Արչիլին հրամայում է գնալ Պարսկաստան, որտեղ նրան դավանափոխ են անում և Շահնագար խան անունով նշանակում Կախեթի գահակալ (1664):

Երիտասարդ արքան մի շարք բարենորոգումներ է կատարում: Այդ քայլերն առաջացնում են խնամակալ շահի դժգոհությունը: Միայն մեկ տարվա ընթացքում՝ 1675 թ., Արչիլը չորս անգամ տիրանում է գահին, բայց թավադներն ու ավատատերերը պարսից ջոկատների աջակցությամբ ամեն անգամ գահընկեց են անում: 1682-ին ընտանիքի հետ մեկնում է Ռուսաստան, շուրջ երեք տարի մնում Աստրախանում և միայն 1685-ին Մոսկվա մտնելու իրավունք ստանում: Նա օգնություն է խնդրում ցարից, բայց վերջինս չի կարողանում զորավիճ կանգնել հավատակից թագավորին: Մի քանի տարի անց վերադառնում է Վրաստան և Ղրիմի խանի միջնորդությամբ Թուրքիայի սուլթանից Իմերեթում գահակալելու իրավունք ստանում: Մեկ տարի հետո կրկին գահընկեց է արվում: 1693 թ. գերվում է չերքեզների կողմից: Փրկագնվում և վերադառնում է Քարթլի: 1695 թ. Գեորգի XI-ի գործուն միջնորդությամբ տիրանում է Իմերեթի գահին, վերստին մեկ տարով: Այնուհետև գահ է բարձրանում հինգերորդ անգամ (1698 թ.), բայց դա էլ տևում է վեց ամիս: Անզոր և հուսախաբ՝ նա 1699 թ. տեղափոխվում է Մոսկվա: Պետրոս Առաջինը նրան կալվածք է նվիրում: Արչիլը թողնում է քաղաքական ասպարեզը և նվիրվում գրական գործունեության:

Վախճանվել է 1713 թ. ապրիլի 16-ին, Մոսկվայում:

Արչիլը գրել է ակրոստիքոսներ («Գովք այբուբենին»), մաջամա, պատմական պոեմ («Ռուսթավելու և Թեյմուրազի վեճը»), դժգոհել է

կյանքի անցողիկությունից ու ճակատագրի հարվածներից և փրկությունը տեսել քրիստոնեական կրոնի մեջ. այդ ամենը՝ շահրի և չախրուխաուլի վանկաչափերով: Եթե Թեյմուրազը ներկայացնում է ռուսթավելյան դպրոցը և կրում թե՛ հանճարեղ նախորդի և թե՛ պարսկական քնարերգության ազդեցությունը, ապա Արչիլի վրա այդ ազդեցությունները միջնորդավորված են, ուստի և թույլ: Բայց Արչիլը քննադատում է և՛ Ռուսթավելուն, և՛ Թեյմուրազին, քանզի իսկական բանաստեղծը չպետք է տուրք տա մտացածին սյուժեների, ինչպես վարվել է Ռուսթավելին, ոչ էլ լեզուն խճողի օտար խոսքերով, ինչն ավելի քան առատ է Թեյմուրազի քերթվածքներում: Ստեղծագործողը պետք է գրի իրական դեպքերի ու թեմաների մասին և լեզուն զերծ պահի օտարամուտ, անհասկանալի տարրերից: «Մարդը շատ ու շատ բաներ պետք է իմանա», դրանց թվում՝ և լեզուներ. պետք է կարդա այնպիսի գրքեր, որ արժանի են գովասանքի: Ինքն էլ լեզուներ գիտե, շատ գրքեր է կարդացել, բայց օտար բառեր չի գործածում իր տաղերում: Տաղաչափական բազում համակարգերի է ծանոթ, բայց տուրք չի տալիս դրանց:

Բանաստեղծի հարուստ և բազմաբնույթ գրական արտադրանքն ամփոփված է երկհատոր «Արչիլիանի» («Արչիլական») ժողովածուի մեջ (1936-1937): Հետաքրքիր են «Թեյմուրազի և Ռուսթավելու վեճը», «Վրաստանի բարքերը», «Գովք այբուբենին» գրվածքները, սիրային, ուսուցողական և կրոնախրատական մի շարք ոտանավորներ:

«Վեճը» բաժանվում է գլուխների ու ենթագլուխների, գրվել է 1681-1683 թվականներին: Ինչպես հուշում է վերնագիրը, այն պետք է պատասխան տար, թե այդ երկու բանաստեղծներից ով է ավելի մեծ, ով է արժանի դափնեպսակի: Վեճն ընթանում է Ռուսթավելու և Թեյմուրազի միջև՝ երկխոսության սկզբունքով: Սկսում է արքան. «Ո՛վ Ռուսթավելի, ունկն դիր խոսքերիս. ոմանք համեմատում են մեզ և ասում, թե դու գերազանցում ես ինձ»: Եվ որպեսզի ընթերցողը ճիշտ կողմնորոշվի, հեղինակն իր հերոսներին դարձնում է խոսափող, նկարագրում պատմական այն իրադարձությունները, որոնք նպաստել կամ խանգարել են: Քանի որ Ռուսթավելին ապրել ու ստեղծագործել է Թամարի գահակալության տարիներին, նրա արքունիքում, Արչիլը վերարտադրում է Թամարի և Թեյմուրազի գործունեությունը, հիշատակում վրաց հայրենասեր իշխանների, զորավարների ու ֆեոդալների գործերը, ընդգծում պետականության ու միաբանության կարևորությունը, դավաճանության ու երկպառակության ծանրագույն հետևանքները:

Բանաստեղծը հավաստում է, որ ինքը չի կեղծում, չի հնարում. ո՛չ

անհիմն ներբողում է, ո՛չ անտեղի այպանում, այլ գրում է ճշմարտությունը: Բայց և այնպես չի պատասխանում հարուցած հարցին՝ վճիռը թողնելով ընթերցողի հայեցողությանը:

«Վրաստանի բարքերը» հասցեագրված է ազնվականությանը, իշխանավորներին, պալատականներին ու հարուստներին: Հեղինակը խոսում է լուսավորության, կրթության, արհեստների ու մարզախաղերի անհրաժեշտության մասին: Անհատը պետք է լինի ազնիվ, արդարադատ, կատակասեր, մարդահաճ, հյուրասեր, երդմնապահ, ներողամիտ, լավ հեծյալ, անվրեպ նետածիգ, հմուտ լողորդ, լեզուներ իմացող («եթե ցանկություն ունի իմաստության օվկիանոսից խմել մի կուշտ»), գիտելիքներն ուրիշներին հաղորդող («համեստորեն, բայց ոչ կանչով աքաղաղի»), խոհարարական արվեստներին քաջատեղյակ, աշխատասեր (որովհետև «աշխատանքն էլ լավագույն բարքերից է»), հարգալից, կշռադատված, քաղաքական հարցերում արագ կողմնորոշվող, բարեկամներին, ընկերներին, մտերիմներին նվիրված: Նա պարտավոր է իմանալ Վրաստանում գործող ավելի քան երեք հարյուր վաթսուն խրատ ու խորհուրդ և հետևել դրանց պահանջներին: Բայց եթե հնարավոր չէ ուսուցիչ վարձել կամ խորհրդատու ունենալ որևէ իմաստունի, չպիտի ընկճվել:

*Թե չգտնես հարմար վարպետ, գտի՛ր մի գիրք կրոնական,
Հաճախակի այն կարդալով, բաց քեզ մտքի մի մեծ օվկիան.
Ինչ դժվար է, կրկին կարդա, քննի՛ր այնքան, որ ըմբռնես,
Այն ժամանակ իմաստության պայծառ ուղին շուտ կգտնես:*

«Վրաստանի բարքերում» և խրատական ոտանավորներում ազգային վերածննդի կարևորագույն գործոններից Արչիլը համարում է կրթությունն ու լուսավորությունը:

Պոետն անդրադարձել է նաև սոցիալական անհավասարության երևույթին՝ այն բացատրելով քրիստոնեական խրատաբանության դիրքերից: Եվ քանի որ դա բնական է, կանխորոշված վերուստ, ուրեմն ազնավորներն ու մեծատունները պետք է ներողամիտ լինեն ընչազուրկների ու անտերունջների նկատմամբ:

Հետաքրքիր են նաև «Մարդու և կյանքի վեճը», «Մարդու մարմնի ութ անդամները» և «Արքաների գովքն ու պարսավանքը», որտեղ դատապարտում է Շահ-Աբասին և դրվատում Պետրոս Մեծին:



ՍՈՒԼԽԱՆ - ՍԱՔԱ ՕՐԲԵԼԻԱՆԻ

Վրաց հին գրականության ակնառու ներկայացուցիչներից է առակագիր, բանասեր, գիտնական, բառարանագիր, ճանապարհորդ, պետական-հասարակական գործիչ Սուլխան - Սաքա Օրբելիանին:

Ծնվել է 1658 թ., Ներքին Քարթլիի Տանծիա գյուղում: Հայրը՝ Վախթանգ Օրբելիանին, խոշոր ավատատեր էր, արքունի ատենապետ: Մայրը՝ Թամարը, նույնպես սերում էր ազնվական ընտանիքից: Հոր կողմից գրողն ազգական էր Քարթլիի արքայական տոհմին. նրա հորաքրոջ որդիներն էին Արչիլ Երկրորդը, Գեորգի XI-ը և Լևանը՝ Վախթանգ Վեցերորդի հայրը: Ստացել է կրոնական և աշխարհիկ կրթություն, սովորել արևելյան և եվրոպական լեզուներ:



Օրբելիանին քաղաքական գործունեությունն սկսել է Գեորգի XI-ի պալատում. խորհուրդներով ու իր գործով օգնել Քարթլիի օրինական տիրակալին, որի դեմ ապստամբել էր հավատուրաց Նազար Ալի խանը (Հերակլ Առաջին): Գեորգին պարտվում է և փախչում Իմերեթ, իսկ Օրբելիանին ապաստանում է Ախալցխայի աթաբազի մոտ: Նազար Ալի խանը ներում է շնորհում իր դեմ մարտնչած իշխաններին, պաշտոնյաներին, հրամանատարներին ու մարտիկներին: Օրբելիանին վերադառնում է կալվածք, բայց համակրանք չտածելով պարսկասեր արքայի հանդեպ՝ հեռանում է աշխարհիկ գործերից և 1698 թ. ձեռնադրվում քահանա (այստեղից էլ սաքա հոգևոր կոչումը): Բայց շուտով նա հրաժարվում է հոգևոր կյանքից և Վախթանգի (որի դաստիարակն ու խորհրդատուն էր) թագավորության առաջին շրջանում (1703-1712 թթ.) ծավալում քաղաքական, գրական-հասարակական և կրթական-մշակութային գործունեություն: Նրա երազանքն էր Վրաստանն ազատագրված տեսնել թուրք-պարսկական լծից:

1713 թ. դիվանագիտական հատուկ առաքելությամբ Օրբելիանին

մեկնում է Վատիկան, ապա Ֆրանսիա, հանդիպում Յոննիս պապին և Լյուդովիկոս XIV-ին: Չնայած նրան ընդունում են պատվով և օգնության հույսեր ներշնչում, բայց գործնականում որևէ քայլ չեն կատարում: Օրբելիանին զգում է, որ եվրոպական տիրակալները պարզապես չեն ցանկանում Վրաստանի պատճառով հարաբերությունները սրել այլ երկրների հետ:

Դիվանագիտության մեջ անհաջողության մատնված գործիչը հայրենիք վերադառնալուն պես հայտարարվում է դավաճան, ուրացող, ենթարկվում հալածանքների: Ուղղափառ Օրբելիանին Եվրոպա գործուղվելուց առաջ քաղաքական նկատառումներով կաթոլիկություն էր ընդունել, միևնույն ժամանակ Յոննիս պապին խոստացել, որ նրանից օգնություն ստանալու դեպքում Վրաստանում կաթոլիկություն կտարածի, և իր երկիրը կլինի Վատիկանի ու Ֆրանսիայի միակ հենարանը տարածաշրջանում: 1724 թ. զաղթում է Ռուսաստան, միանում իր սանի՝ վտարանդի Վախթանգ Վեցերորդի շքախմբին: Վերջինս նրան հանձնարարում է մեկնել Պետերբուրգ և հանդիպել Պետրոս Մեծին, բայց 1725 թ. հունվարի 26-ին Օրբելիանին հանկարծամահ է լինում:

Սուլխան - Սաբա Օրբելիանիի գրչին է պատկանում «Յնարանքի իմաստություն» առակների ժողովածուն, «Ճամփորդություն Եվրոպայում» նոթագրությունը, «Վրաց լեզվի ծաղկեփունջ» բացատրական բառարանը, կրոնական բնույթի աշխատություններ, խրատներ, քարոզներ: Վախթանգ Վեցերորդի խորհրդով թարգմանել է «Քիլիա և Դամանա» ժողովածուն, նախապատրաստել և վրացերեն լույս է ընծայել Աստվածաշունչը:

«Յնարանքի իմաստությունը» Օրբելիանին գրել է այն տարիներին, երբ դաստիարակում էր ապագա արքային՝ Վախթանգին: Ըստ էության լինելով բարոյախրատական ինքնուրույն գործ՝ այն նաև քաղաքական սուր երգիծանք է: Նրանում ամփոփված են ավելի քան 150 առակ, հեքիաթ, զրույց ու զվարճալի պատմություն: Բնականաբար հանդես են գալիս մարդիկ, կենդանիներ, բույսեր ու բնության երևույթներ, դրանց հատկանիշներն ու հարաբերությունները:

Գրողը դատապարտում է աշխարհիկ ու հոգևոր կյանքի հոռի երևույթները, ժլատ ու թերուս եկեղեցականներին, քծնող ու քինախնդիր իշխաններին, պալատականներին, կաշառակեր դատավորներին, չարչի վաճառականներին, տգետ ու հավակնոտ ուսումնականներին: Արժանին է հատուցում մեծամիտներին, երկչոտներին, ստորաքարշներին, կեղծ վկայություն տվողներին, տմարդի չինովնիկներին: Պատահական չէ, որ գիրքը լույս տեսնելուց հետո հասարակության վե-

րին խավերն սկսեցին հալածել հեղինակին: Դա, ի դեպ, նպաստում էր գրողի ու երկի հռչակին: Նրա խրատներն ուղղված են նաև դավաճանության, խարդավանքների, գողության, հարբեցողության, արբշիռության և մարդկային այլ արատների դեմ: Քիչ չեն այն առակները, որոնցում քարոզում է համերաշխություն, աշխատասիրություն, համբերություն, ապաշավանք: Գրողն առաջ է քաշում լուսավորյալ միապետի գաղափար և պախարակում այն տիրակալներին, ովքեր անարդար են մարդկանց ճակատագրերը տնօրինելու գործում: Երկրի ծանր կացության պատճառ է համարում երկպառակությունները, անմիաբանությունը: «Ուժը միասնության մեջ է», - հիշեցնում է Օրբելիանին՝ հորդորելով հնազանդ լինել արքային, միաբանվել նրա շուրջը: Դաստիարակության մասին արտահայտում է ժողովրդի ընդերքում ամբարված փորձն ու իմաստությունը, իր հայացքներն ու սկզբունքները: Նա պատանիներից ու երիտասարդներից պահանջում է մտային և ֆիզիկական բազմակողմանի զարգացում՝ հետագայում բարօրություն սերմանելու համար:

«Հնարանքի իմաստությունը» գրելիս Օրբելիանին օգտվել է թե՛ թարգմանական գրականությունից, թե՛ «թափառող» սյուժեներից և թե՛ բանահյուսական թեմաներից ու մոտիվներից, այդուհանդերձ նրա ժողովածուն ժանրի լավագույն նմուշներից է, և թարգմանվել է առակագրության մեջ բարձունքների հասած հանրահայտ երկրների լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն:

Վրաց գրականագետները հավաստում են, որ գրողը հակադրվել է միջնադարի սխոլաստիկ լեզվին և առակները գրել խոսակցական լեզվով, որով ազգային «զեղարվեստական արձակուն հաստատել է վրաց նոր գրական լեզուն» (ակադ. Ալ. Բարամիձե):

Սուլխան-Սաբա Օրբելիանին նաև հմուտ բառարանագիր է: Նրա վրաց լեզվի բացատրական բառարանն այսօր էլ ունի տեսական ու կիրառական նշանակություն: Աշխատության հիշատակարանում կարդում ենք. «Քանի որ վրաց լեզվի բառարան չկար հրապարակում, և քանի որ վրաց լեզուն թողնվել էր իր քմահաճույքին, ես հանեցի, ինչ որ գտա գրքերի մեջ, որ սովորեն վրաց լեզուն լրացված և ճոխացած: Ինչ գիտեի ինքս, գրեցի, իսկ ինչ դժվար բառ որ չգիտեի, գրքերի մեջ որոնեցի. մի մասը օտար լեզուներով ստուգեցի... Որքան ուժ ունեի, ջանք թափեցի հելլենական, լատինական, հայկական, ռուսական և արաբական գրքերից հանելու»:

Սաբան օգտվել է նաև հայոց լեզվով աղբյուրներից. ենթադրվում է, որ ձեռքի տակ ունեցել է Ոսկան Երևանցու՝ 1766 թ. Ամստերդամում

հրատարակված Աստվածաշնչի հավելված բառարանը և Երեմիա Մեղրեցու «Բառգիրքը», որոնց հետևողությամբ էլ ձեռնարկել է իր աշխատանքը: «Անդերձնամակ» («Կտակ-նամակ») հիշատակարանում կարդում ենք. «Ես հայերեն մի համառոտ բառարան տեսա, որ նրանց լեզվով «Բառգիրք» է կոչվում, և ես էլ նրա նմանողությամբ ձեռնարկեցի և որքան կարողություն ունեի, գլուխ բերեցի այս գործը»:

Բառարանը մեծ արժեք է ոչ միայն վրացագիտության, այլև հայոց լեզվի պատմության ու հնչյունաբանության, հայ բարբառագիտության ու բառային կազմի ուսումնասիրության համար:

«Ճանապարհորդություն Եվրոպայում» մեմուարային երկը գրված է պարզ, հակիրճ և պատկերավոր: Այն արժևորվում է, որովհետև վրաց իրականության մեջ մինչ Օրբելիանին նման գիրք չէր գրվել, նաև այն բանի համար, որ նրանում ներկայացված են վանքերի ու եկեղեցիների կառուցվածքները, արևմտաեվրոպական մի քանի երկրի կացությունը, ժողովուրդների ապրելակերպը, կենցաղը, սովորույթները, բարքերը:

Հեղինակը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև եվրոպաբնակ հայերի մասին:



ՎԱԽՅԱՆԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Ինքնատիպ ստեղծագործողներից է Վախթանգ Վեցերորդը: Ծնվել է 1675 թ.: Մանկուց ստացել է լիարժեք կրթություն: Նրա խնամատարն էր Սուլխան-Սաբա Օրբելիանին: Վախթանգը եղել է Քարթլիի փոխարքա (1703-1714), ապա՝ թագավոր (1716-1724): 1712 թ. պարսից շահը հրավիրում է իր մոտ և պահանջում մահմեդականություն ընդունել: Մերժում ստանալով՝ շահը նրան արքայություն է քիչուման, իսկ զահակալ է դարձնում Վախթանգի մահմեդականացած եղբորը: Վախթանգը և համախոհները ռազմական օգնություն ստանալու ակնկալիքով դիմում են եվրոպական երկրներին: Այդ նպատակով նախ Իտալիա, ապա Ֆրանսիա է ուղարկում Սուլխան Օրբելիանին, որը, սակայն, ինչպես վերը նշեցինք, արդյունքի չի հասնում: 1716 թ. Վախթանգն ստիպված մահմեդականություն է ընդունում: Շահը նրան նշանակում է Քարթլիի թագավոր, բայց ամժամանակ պահում է իր մոտ: 1719 թ. Վախթանգը վերադառնում է Քարթլի և երկրամասի ղեկը վերցնում ձեռքը: Նախորդների նման նա նույնպես «անուղղելի» ռուսամետ էր: Այդ հանգամանքը նկա-

տի ունենալով՝ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանը 1722 թ. բանակցություններ է վարում նրա հետ. ստեղծվում է հայ-վրացական ռազմական դաշինք: Նույն թվականի սեպտեմբերին հայկական և վրացական զինյալ ուժերը կաթողիկոսի և վրաց արքայի զխավորությամբ համախմբվում են Գանձակի մոտ, որտեղ պետք է դիմավորեին ռուսական զորքին և փորձեին միացյալ ուժերով երկու քրիստոնյա երկրներն ազատագրել պարսկական բռնապետությունից: Սակայն ձախողվում են նրանց ծրագրերը, որովհետև Պետրոս Մեծը ընդհատում է արշավանքը և հետ դառնում: Ի դեպ հայ ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկը բարձր է գնահատել վրաց գործչին՝ բնութագրելով նրան որպես «Այր բարեսէր, երկիւղած յԱստուծոյ և քրիստոնէասէր և անյիշաչար»: Կաթողիկոսի վկայությամբ վրաց արքան «Բնական սէր ուներ ընդ ազգիս Հայոց»:

Շահը, տեղեկանալով այդ ամենի մասին, Վախթանգին մեղադրում է դավաճանության մեջ և զրկում գահից:

1723 թ. թուրք սուլթանը հարձակվում է Քարթլիի վրա և ավերում երկրամասը: Չկարողանալով միավորել ներքին ուժերը և հերթական անգամ պարտություն կրելով թշնամիներից՝ Վախթանգն ընտանիքի և շուրջ մեկուկեսհազարանոց շքախմբի հետ մեկնում է Մոսկվա: Նա համոզված էր, որ եթե անձամբ ներկայանար և բանակցեր Պետրոս Մեծի հետ, ապա անպայման ռազմական օգնություն կստանար, և Վրաստանը վերջնականապես կազատագրվեր թուրքերից ու պարսիկներից, կվերականգնվեր պետականությունը, բայց հերթական անգամ բախտը երես է թեքում նրանից, քանզի հենց այդ օրերին վախճանվում է ռուսաց արքան:

Վախթանգ Վեցերորդի թեկուզև կարճատև իշխանության տարիներին զգալի առաջընթաց է ապրում երկրի մշակութային կյանքը: 1709 թ. Թիֆլիսում հիմնադրում է վրացական առաջին տպարանը, որտեղ տպագրում է Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» իր խմբագրությամբ ու ծանոթագրություններով: Դա պոեմի առաջին հրատարակությունն էր: Տպագրում է նաև հնդկական «Քիլիլա և Դամամա» առակների ժողովածուն՝ իր թարգմանությամբ:

Քարթլիում օրենսդրական կանոնները կարգավորելու նպատակով Վախթանգի ամենագործուն ղեկավարությամբ թարգմանում են Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» և Ներսես Լամբրոնացու խմբագրած «Ասորա-հռոմեական օրենսգիրքը», որոնց հիման վրա շնորհաշատ գործիչը կազմում է համայն Վրաստանի համար ընդունելի օրենսգիրք: Դա «Վախթանգի օրենքներ» ժողովածուն է:

Վախճանվել է 1737 թ., Աստրախանում:

Վախժանգ Վեցերորդը որքան ծախողակ էր քաղաքականության և դիվանագիտության մեջ, որ անշուշտ պայմանավորված էր նաև քաղաքական բավականին աննպաստ իրավիճակով, նույնքան շնորհալի էր ու բեղմնավոր իբրև բանաստեղծ, թարգմանիչ, հրատարակիչ, խմբագիր ու մեկնիչ: Նրա բանաստեղծությունների մեջ առանձնանում է «Սրտի սպեղանին» ինքնակենսագրական երկը, որտեղ պատկերված է ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական կացությունը: Թեյնուրագի և Արչիլի նման նա նույնպես ողբում է իր դառնադետ բախտը, անիծում խարդավանքներով լի կյանքը: Փոփոխական, անկայուն է աշխարհը՝ նման բարետես ու պճնված, բայց խորամանկ ու տռփասեր կնոջ, որ նախ «մի տղամարդու մահիճում է պառկում, մեկ էլ մտնում է մեկ ուրիշ տղամարդու անկողին»: Բանաստեղծը համոզված է, որ աշխարհն իր հանդեպ անգութ է վարվել, դժոխք է դարձրել վերուստ շնորհված խաղաղ ու երջանիկ կյանքը: Մինչդեռ եղել է թագավոր, ճաշակել կյանքի քաղցրությունը, իսկ հիմա «զրկված է գահից, իշխանությունից, հայրենիքից, տնից ու տեղից, և թագավորելու փոխարեն զբաղված է ոտանավորներ գրելով»:

Ավելի քան հարյուր քառատողից բաղկացած երկի շարունակության մեջ կյանքի «անմարդկային վերաբերմունքն ու փոփոխականությունը» պոետը համարում է մշտաբնույթ, սովորական երևույթ, որի համար չպետք է զարմանալ կամ գայրանալ, իսկ վերջին քառատողում մեղավոր է համարում նաև իրեն՝ ասես հաշտվելով ճակատագրի հետ:

Չետևելով Արչիլին՝ Վախժանգը նույնպես գրել է կրոնական, սիրային, ուսուցողական, խրատական, հայրենասիրական ոտանավորներ, ակրոստիքոսներ («Գովք այբուբենին»), մաջամա և այլն: Աշխարհիկ մոտիվներ պարունակող մի շարք գործերում արտացոլված են իրական զգացումներ, ապրումներ, խոհեր, առկա են բնության հաջողված նկարագրություններ ու պատկերներ:

Վախժանգ Վեցերորդին է վերագրվում եղերերգության մեծաշնորհը: Օգտվելով շաիրի և չախրուխաուլի վանկաչափերից՝ նա փոփոխություն է մտցրել դրանց կառուցվածքի մեջ:

Վախժանգի քնարերգությունը ևս զերծ չէ պարսկական պոեզիայի ազդեցությունից, թերևս այն պարզ պատճառով, որ նա այդ լեզվից կատարել է թարգմանություններ ու փոխադրություններ: Նա զրեթե նմանակել է հատկապես իր ճակատագիրն ունեցող մախորդին՝ Արչիլ Երկրորդին. հարազատորեն նույնն են նրանց ոտանավորների թեմաները, մոտիվները, տրամադրությունն ու բառազանձը:



ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ

Վրաց հին գրականության մեջ Դավիթ Գուրամիշվիլին երկրորդ խոշոր բանաստեղծն է Շոթա Ռուսթավելուց հետո:

Ծնվել է 1705 թվականին, Սագուրամո գավառի Գորիսուբանի գյուղում, մեծահարուստ ավատատիրոջ ընտանիքում: Ընդունված կարգի համաձայն նորածին մանկանը հանձնում են գեղջուկ ստնտուի: Նրա հասունացման շրջանը հանընկնում է այն ճակատագրական ժամանակաշրջանին, երբ վտանգի տակ էր ոչ միայն երկրի քաղաքական ինքնուրույնությունը, այլև ազգային մշակույթն ու գրականությունը, երբ Վախթանգ Վեցերորդը ճարահատ լքում է գահն ու երկիրը և ապաստան գտնում ռուսաց արքունիքում: Երկրի քաղաքական կացության պատճառով պատանին չի կարողանում ազնվականին վայել կրթություն ստանալ: Այդ տարիներին ժողովուրդը հեծում էր պարսիկների ու թուրքերի լծի տակ: Վրաստանը գրեթե ամայացել էր: Գերեվարությունից ու ոչնչացումից խուսափելու համար բնակչությունը քաշվել էր լեռները, ապաստանել քարանձավներում, անրոցներում, բերդերում, բայց մարդիկ այդտեղ էլ ապահով չէին. ենթարկվում էին լեռնականների ու թափառող ավազակախմբերի ասպատակություններին:

Որպեսզի աղետից զերծ մնան, Գուրամիշվիլիները 1727 թ. սեփական կալվածքից փոխադրվում են Քսանի կիրճում ծվարած Լոմիսդանա գյուղը (Դավիթ Գուրամիշվիլին՝ դեռևս 16-ամյա պատանի, ամուսնացել էր այդ գյուղի աղջիկներից մեկի հետ), բայց դարանակալ լեզգիները մեծ փրկագին ստանալու ակնկալիքով առևանգում են 22-ամյա Դավթին: Նա փախչում է, բայց հետապնդում են, հայտնաբերում և ենթարկում սոսկալի տանջանքների: Երկրորդ փորձը (1729) հաջողում է: Ինչպես ինքն է նկարագրում՝ 18 օր սոված-ծարավ դեգերելուց հետո



հասնում է կազակական գյուղ, որտեղ նրան ընդունում են, կերակրում և ապաստան տրամադրում: Շուտով վերցնում է աստանդակամի ցուպը, հասնում Մոսկվա և միանում Վախթանգի շքախմբին՝ դառնալով պալատական բանաստեղծ: Ռուսական կառավարությունը վրաց վտարանդիներին առաջարկում է կամ քաղաքացիություն ընդունել և մտնել զինվորական ծառայության, կամ հեռանալ երկրից: Գուրամիշվիլին 1736 թ. ընդունում է ռուսական հպատակություն, իսկ երբ զինվորագրվում է այդ երկրի բանակին, ցարը նրան կալվածք է նվիրում Ուկրաինայի Միրգորոդ քաղաքում: 1738 թ. Գուրամիշվիլին մտնում է վրաց հուսարական գունդ և մասնակցում է ռուս-թուրքական, ռուս-շվեդական, ռուս-պրուսական պատերազմներին:

Պրուսիայի դեմ ճակատամարտերից մեկի ժամանակ՝ 1758 թ., գերվում է և նետվում Մագդեբուրգի բանտը: Լեռնականների դժոխային գերությունը ցմրուր ճաշակած բանաստեղծը մաշկի վրա զգում է նաև «քաղաքակիրթ» գերության սարսափները: Մեկ տարի անց՝ 1759 թ. դեկտեմբերին, փրկագնվում է և վերադառնում Միրգորոդ: Այստեղ նա ամուսնանում է վտարանդի ազնվական Ավալիշվիլու դստեր հետ:

Նրան անասելի վիշտ է պատճառում զավակ չունենալու իրողությունը. որդեգրում է մի աղջիկ, բայց անողոք ճակատագիրը զրկում է և այդ մխիթարանքից: Բախտը շարունակում է հարվածներ տեղալ. շուտով կուրանում է մեկ աչքից, իսկ դրանից հետո չարագործները հրդեհում են նրա տունն ու կալվածքը:

*Ես ողբում եմ, լալիս, սիրտս փուլ է գալիս,
Օ՛, հանցավոր աշխարհ, սուտ, անցավոր աշխարհ,
Սգում եմ բախտն իմ սև, տառապանքն իմ նսեմ,
Օ՛, հանցավոր աշխարհ, սուտ, անցավոր աշխարհ,
Յոգիս ցավից կքում, իմ մարմինն է կքում,
Օ՛, հանցավոր աշխարհ, սուտ, անցավոր աշխարհ,
Մայրս ինչո՞ւ ծնել, ինչո՞ւ է ինձ սնել,
Օ՛, հանցավոր աշխարհ, սուտ, անցավոր աշխարհ:*

Թարգմ.՝ Վահագն Դավթյան

Թվում էր՝ այդքանից հետո նա կհուսալքվեր, կհեռանար աշխարհիկ կյանքից, կդառնար ճգնավոր կամ անձնատուր կլիներ վշտի մորմոքին, բայց դիմանում է, կամք ու ավյուն դրսևորում, մասնակցում զավառի հասարակական կյանքին, ավելին՝ սկսում է ստեղծագործել: Ասես ցանկանում էր վրեժ առնել և վերադարձնել թագավորներին «անվերջ

ծառայելով» վատնած անպտուղ տարիները, նոր ուժով նվիրվել իր կոչմանը: «Եթե սիրտդ կոտրված չէ, նա դեռ կերգի. կուրությունն անժամանակ չի կարող ծերացնել մարդուն», - հայտարարում է Գուրամիշվիլին և երգում՝ ձեռնոց նետելով իր դաժան բախտին:

Նրա երգն ընդհատվեց 1792 թ. հուլիսի 21-ին, Միրզորոդում: Բանաստեղծը 87 տարեկան էր:

Դավիթ Գուրամիշվիլին ստեղծագործել է XVIII դարի 70-80-ական թթ., գրածները ամփոփել է մի սովոր ժողովածուի մեջ և վերնագրել «Դավիթիանի» («Դավիթական», 1787թ.):

Գուրամիշվիլին այսպես կոչված, պատմահայրենասիրական ուղղության ներկայացուցիչներից է: Նրա գլուխգործոցը՝ «Քարթլիի վերքը» պոեմն է:

Այն սկսվում է նախաբան հիշեցնող ընդարձակ բանաստեղծությամբ: Հեղինակը հայտարարում է, որ նպատակ ունի բացահայտել հասարակական կյանքում բուն դրած արատներն ու խոցերը, քանզի վատը քողարկելը երկրին օգուտ չի տա, և հետևելով ճշմարտությունն ասելու իր սկզբունքին՝ խստորեն դատապարտում է արքաներին, իշխաններին, հոգևորականներին՝ գեխության, բարոյական անկման համար: Նա համոզված է, որ ժողովրդին հասած արհավիրքների պատճառը թշնամիների ասպատակություններն են, ներքին անմիաբանությունը, երկպառակությունները, եղբայրասպան կռիվները և հատկապես Աստուծու պատվիրանների ուրացումը. մարդիկ դարձել են ամբարիշտ, նախանձ, երդմնազանց, բամբասկոտ. սովորական են գողությունը, թշնամանքը, ավազակությունը, կանանց, աղջիկների, որբ երեխաների, տնանկների առևանգումը, գերեվաճառությունը:

Գուրամիշվիլին այդ ամենին անդրադառնում է իբրև հայրենասեր, իբրև ծնողապաշտ զավակ և որդեսեր ծնող: Ուստի զարմանալի չէ, որ հայրենի երկրի շահերից ելնելով, չի խնայում անգամ իր պաշտելի արքային՝ Վախթանգին, քանզի նա «չկարողացավ վարել խելամիտ և ազգաշահ քաղաքականություն»: Սոսկալի են միջհամայնքային կռիվները. վրացիները մի՞թե չեն հասկանում, որ, միմյանց դեմ սուր մերկացնելով, նպաստում են թշնամու հաղթանակին: Ծանր է խոսել նման երևույթների մասին, բայց ինքը լավին լավ է ասում, վատին՝ վատ: Հայրենիքի քաղաքական ու պատմական անցքերին զուգահեռ՝ Գուրամիշվիլին նկարագրում է նաև անձնական կյանքի տխուր դրվագները: Էպիկականն ու քնարականը հաջորդում են մեկմեկու, և երկը դառնում է ավելի հետաքրքիր ու բովանդակալից:

Հեղինակը չի վերնագրել պոեմը: «Քարթլիի վերքը» պայմանա-

կան է, հետագա ընդմիջարկում: Կառուցվածքով ևս յուրօրինակ է. սկսվում է ընդհանուր սյուժեին չառնչվող «Այս գիրքը գրողի անուն-ազգանվան հրապարակումը» ծավալուն հատվածով:

*Անունս է Դավիթ և ազգանունս՝ Գուրամիշվիլի,
Այս «Դավիթիանին» ես հորինեցի ու մարդկանց տվի,
Կյանքի աղբյուրին ես կենաց ծառը խողովակ արի,
Ասի՛ խաչված եք՝ թող ձեր արցունքը առատ վարարի:*

Թեյմուրազի, Արչիլի և Վախթանգի նման Գուրամիշվիլին նույն-պես ջատագովում է ուսումը, դաստիարակությունն ու լուսավորությունը: Հատկանշական է «Ուսումը՝ սովորողներին» բանաստեղծությունը՝ ուղղված պատանիներին ու երիտասարդներին: Խոսելով գիտելիքների անհրաժեշտության մասին՝ հեղինակն զգուշացնում է, որ կրթությունը հեշտ չի տրվում: Ուսման ընթացքը դժվար է, երբեմն՝ դառն ու ծանր, բայց արդյունքը բերկրալի է, բարը՝ քաղցր, ինչպես զավակի ծնունդը երկունքից հետո, կամ այգեկուրը, որ հաջորդում է երկարատև ու տքնաջան աշխատանքին:

*Լսիր դու ինձ, ուսում փնտրող, ես խորհուրդ եմ ուզում տալ քեզ,
Թե քաղցրություն ես երազում, պիտի լեղին նախ ճաշակես,
Լավ է զղջալ հենց սկզբից, վերջում զղջալն օգուտ չունի,
Ցավից հետո հրճվանք ու խինդ հոգիդ հանգիստ միշտ կընդունի:*

Կյանքի երկար ճանապարհ անցած և հսկայական փորձ ձեռք բերած բանաստեղծը սերունդներին հուշում է, որ ամեն ոք դեռ պատանեկան հասակից պետք է իմանա՝ ով է ինքը, որտեղից է գալիս, որտեղ է և ուր է գնում: Իսկ իրեն և շրջապատը ճանաչելու համար կրթված պետք է լինել: Ամենամեծ գանձը մարդու համար գիտելիքներն են, որովհետև անգետը տանջվում է ամբողջ կյանքի ընթացքում, զուցե ինչ-որ բան է ձեռք բերում, զուցե հարստություն է կուտակում, բայց այդ ամենը կարող է վատնել, կորցնել, կարող են նրանից խլել, մինչդեռ գիտելիքները ոչ ոք չի գողանա. գիտելիքները մարդու սեփականությունն ու անբաժան ուղեկիցն են ցմահ: Դա գանձ է, ուժ է, զենք է ու զրահ: Բայց հա՞րկ է, որ մարդ տարիներ շարունակ տառապի ուսման համար: Ի՞նչ է տալիս, կիրառելի՞ է: Հարուցելով նման հարցեր՝ բանաստեղծը գրում է.

**Որոնեցի ու չգտա ես ուսումից բարձր մի բան,
Գիտունն ունի այս աշխարհում մեծ իրավունքը գոյություն,
Ուր էլ գնա կրթվածը՝ միշտ գանձեր ունի նա իր հոգում,
Նա ինձ նման մարդկանց առաջ հացի համար ծունկ չի չոքում:**

Ուսման անհրաժեշտությունն ավելի կարևորելու նպատակով բանաստեղծը կրթությունն չունեցող երիտասարդին համեմատում է անզեն զինվորի, անվարժ շան, ճանկերից զուրկ վագրի հետ: Միաժամանակ իր միտքը լրացնում է բազմապիսի օրինակներով, թե անկիրթ մարդկանցից ով ինչպես է հոգում իր ապրուստը: Այսպես՝ արհեստավորը դա անում է ծանր աշխատանքի գնով, վաճառականը՝ երկրից երկիր փառաբերելով, հոգևորականը՝ աղոթելով, երկրագործը՝ դառնաղի քրտինք հեղելով, զինվորականը՝ արյուն ոթելով, մուրացկանը՝ դմենդում ընկնելով: Կրթություն պետք է ստանալ ժամանակին՝ պատանեկան կամ գոնե երիտասարդական տարիներին, բայց ոչ ավելի ուշ:

**Մանուկ հոգին ուսման ծովում միշտ խաղաղվում է ու փափկում,
Ինչպես երկաթը դարբնվող բորբոք ու թեժ այն կրակում,
Մանկուց պիտի միշտ սովորել, ուշ է ժամը ծերունական,
Ուսման սկիզբն է միշտ լեղի, բայց ավարտը քաղցր է այնքան:
Թարգմ.՝ Վահագն Դավթյան**

Իսկ եթե պատանին չի ընկալում կամ չի ուզում ընկալել ուսման կարևորությունը, ապա պետք է դիմել ֆիզիկական մեթոդի, և ծնողը չպիտի վշտանա ճիպտի հարվածների համար, քանզի նման վերքը առանց բալասանի է ապաքինվում: Բանաստեղծը պարտադիր է համարում նաև տասը պատվիրանի յուրացումն ու կիառումը:

Դավիթ Գուրամիշվիլու երգերը բաժանվում են երկու խմբի՝ աշխարհիկ և կրոնախրատական: Աշխարհիկ ոտանավորներում զգալի տեղ են գրավում վշտի, սիրո, կարոտի, սիրած էակի արտաքին հմայքի և նրանից բաժանվելու մոտիվները: Մի շարք բանաստեղծություններում հեղինակն արտահայտում է կյանքի ու մահվան վերաբերյալ իր խոհերը, նշում յուրաքանչյուր քրիստոնյայի սուրբ պարտականությունը Աստծու և հայրենիքի առաջ, խորթ ու անցանկալի երևույթների ի հայտ գալու պատճառները: Կրոնական թեմաներին անդրադառնալիս Գուրամիշվիլին հարստացնում է կերպարների պատկերասրահը, ներմուծում խորհրդանշական հասկացություններ:

Ապրելով Մոսկվայում և Միրզորոդում՝ հայրենասեր գործիչն աշխատանքներ է կատարում վրաց-ռուսական և վրաց-ուկրաինական կա-

պերի զարգացման ոլորտում: Ահա ինչու հիմքեր կային ասելու, թե վրացի բանաստեղծը Ռուսաստանի զինվոր է, Ուկրաինայի հողագործ: Նա ուսումնասիրում է նաև այդ ժողովուրդների բանահյուսությունն ու գրականությունը, ավանդույթներն ու ավանդությունները, որոնց ազդեցությամբ գրում է «Հովիվ Քացվիա» պոեմը:

Սյուժեն. ամռան սքանչելի վաղորդայն է: Գյուղի պարման-պարմանուհիներից շատերն իրենց հոտն ու նախիրը արոտավայր են տանում՝ արածեցնելու: Հանկարծ սրնգի սրտահույզ նվագ է լսվում: Հովվուհիներից մեկը, դյուքված մեղեդիով, բարձրանում է սրնգահարի մոտ: Նրանց հոգիներն ավելոծվում են, և աղջիկը նախահարձակ է լինում՝ հագուրդ տալու կրքին: Գայթակղությունը մեծ է, աղջկա հմայքը՝ անդիմադրելի, բայց վերջին պահին տղան զգաստանում է՝ անսալով բանականության ձայնին: «Ամոթ բան է կենակցելը,- ասում է նա,- մեղք, քանզի նման քայլ կարելի է անել միայն օրինական ամուսնությունից հետո»: Շուտով դերերը փոխվում են, և երբ տղան գրկում է աղջկան, վերջինս սառնասրտորեն վանում է իրենից. «Ո՛հ, ո՛հ: Առանց եկեղեցում պսակադրվելու չի կարելի...: Ես կհղիանամ: Ի՞նչ կասեն մարդիկ. դա սև բիծ կլինի թե՛ մեզ համար, թե՛ մեր ծնողների ու հարազատների...»:

Փոքր-ինչ խաղաղվելով՝ նրանք հեռանում են անտառի խորքը: Նորից գլուխ է բարձրացնում կիրքը, և երբ ցանկանում են ի կատար ածել «մեղսալի գործը», ինչ-որ թռչնականչ նրանց ադամորդու ձայն է թվում, որից և զգաստանում են: Համոզվելով խաբկանքի մեջ՝ վերստին նետվում են տարփանքի հորձանուտը, բայց «փուշ է խրվում հովվուհու փափուկ տեղը»: Իսկ երբ զույգը փորձում է հաղթահարել նաև այդ արգելքը, նրանց գլխավերևում հայտնվում է անտառապահը: Տեսնելով կասկածելի դիրքում՝ նա սպառնում է մատնել, եթե իրեն «չնվիրեն մեկ գառ և մեկ տիկ գինի»: Պահանջն անհապաղ կատարվում է: Անտառապահը խնջույք է կազմակերպում. հրավիրում է նաև նրանց ծնողներին ու ծխի քահանային: Կերուխումի պահին հասկացնում է, որ վատ չէր լինի, եթե տղայի ու աղջկա կանաչ-կարմիրը կապեին: Այդպես էլ արվում է: Դրանից հետո հեղինակն այլևս չի միջամտում նրանց գործողություններին: Եվ հասկանալի է, որ իր հերոսներին դարձնում է քրիստոնեական բարոյականության ջերմեռանդ պաշտպաններ: Նրանց հարաբերությունները արդեն պայմանավորված են փոխադարձ սիրով ու վստահությամբ, իսկ միություն-ամուսնությունն էլ գեղեցիկ է, ամուր և անքակտելի: Բարոյագետ բանաստեղծի համար ընդունելի է միայն եկեղեցու և ծնողների կողմից վավերացված ամուսնությունը:

Դրանով չի վերջանում երկի գաղափարական բովանդակությունը.

հեղինակը զարգացնում է այն միտքը, որ չպիտի հալվել սիրուց, չպիտի ենթարկվել սրտի հույզին ու նետվել տարփանքի հորձանուտ: Չի կարելի վստահել աչքերին և ընտրել գեղեցիկ կին: Գեղեցիկ կինը տառապանքի, չարիքի աղբյուր է ամուսնու համար, քանզի «կողակցի ճակատն անխտիր զարդարում է նույնքան գեղեցիկ եղջյուրներով»: Հմայիչ էակ ընտրողը նաև ամուր շղթա պիտի ունենա՝ նրան տանը կապելու համար: Պիտի ընտրել ոչ թե գեղեցիկ, այլ պարզապես խելամիտ լծակից, որ նստի տանը, զբաղվի տնտեսությամբ և դաստիարակի երեխաներին:

Այսպիսին է սիրո, ամուսնության և ընտանիքի մասին Դավիթ Գուրամիշվիլու հավատամքը:

Գուրամիշվիլին բարենորոգիչ բանաստեղծ է: Նա թարմացրեց վրաց տաղաչափական համակարգը, կիրառեց բանաստեղծական նոր ձևեր, գրեց ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի մասին նրան հասկանալի լեզվով, հակադրվեց վրաց չափածոյի մեջ վաղուց հաստատված պարսկական ոճին, լայնացրեց ազգային քնարերգության շրջանակները: Վրացի բանաստեղծներից նա առաջինն էր, որ թոթափեց Շոթա Ռուսթավելու կախարդանքը, շաիրի վանկաչափը և ընտրեց այլ ուղի: Այդ մասին ահա թե ինչ է գրում Ակակի Ծերեթելին. «Բազում դարերի ընթացքում վրացի բանաստեղծներն այնպես կուրորեն էին հմայվել Ռուսթավելիով, այնպես էին ստրկացել նրան, որ մինչև անգամ չէին պատկերացնում, թե տասնվեցվանկանի շաիրիից բացի կարելի է նաև այլ բանաստեղծություն գրել: Նրանք գնում էին Ռուսթավելու հարթած ճանապարհով, նրա հետքերով, բայց այնքան անկարող, որ նրանց ընթացքը, Ռուսթավելու ընթացքի համեմատ, պարզապես քարշ գալ էր նշանակում»:

Ըստ Ծերեթելու, Գուրամիշվիլին ևս, Ռուսթավելուն համարելով իմաստության ծով, անհամեմատելի ու անհասանելի, երկար ժամանակ հետևել է նրան, բայց ի վերջո «հասկացել է, որ ինքն էլ պոչից է գնում», ուստի որոշ ժամանակ անց «համարձակվել է դուրս գալ ստրկական վիճակից ու տվել է ինքնուրույն արտադրանք»:

Իրենց համերկրացու պոեզիան բարձր են գնահատել Իլիա ճավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Գեորգի Ծերեթելին, Վաժա Փշավելան, իսկ հայ գրողներից նրա մասին սրտաբուխ խոսք են ասել Ստեփան Զորյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը և ուրիշներ:

1980 թ. աշնանը մեծ շուքով նշվեց Գուրամիշվիլու ծննդյան 275-ամյակը: Այդ առթիվ Երևանում հրավիրվեց հանդիսավոր նիստ, և լույս տեսավ բանաստեղծությունների ընտրանին՝ Վահագն Դավթյանի թարգմանությամբ:



Միջնադարի վրաց աշխարհիկ քնարերգության մեջ առանձնակի փայլ ունեն Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը: Ինչպես հայտնի է, հայերենից բացի բանաստեղծը գրել է նաև վրացերեն ու թուրքերեն և այնպիսի վարպետությամբ, որ նրա չափածոն կազմում է այդ գրականությունների անբաժանելի մասը: Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը ոչ միայն շղարշված են վրաց հոգևոր մշակույթի նրբերանգներով, այլև աղերսվում են ժողովրդի բանահյուսությանն ու գեղարվեստական մտածողությանը:

Սայաթ-Նովան՝ Արուֆին (Հարություն) Սայադյանը, ըստ իր ծածկագիր երգերի, ծնվել է 1722 թ.

Թիֆլիսում: Հայրը՝ մահտեսի Կարապետը, հանապազօրյա հացը հոգալու նպատակով Սիրիայի Հալեպ քաղաքից գալիս է Վրաստանի մայրաքաղաք, բնակություն հաստատում հայահոծ Հավլաբար թաղամասում և ամուսնանում է հայուհի Սառայի հետ: Ինքը՝ բանաստեղծն այդ մասին թուրքերեն խաղերից մեկում գրում է.

*Հայրենիքս Թիֆլիսն է՝ Վրաստանի սահմանում,
Մայրս հավլաբարցի է, հայրս՝ հալեպցի:*

Հարությունը ճորտի գավակ էր: Նա խոստովանում է, թե «Սայաթ-Նովային Գուրգեն խանի¹ ճորտ են ասում, ճշմարիտ է»: Ժողովրդի ծոցից ելած գուսանը ոչ միայն չէր թաքցնում իր ծագումը, այլև հպարտանում էր դրա համար: Ավելին, երբ պալատականներից ոմանք ցանկացել են ծագման համար նրան նսեմացնել, արժանապատվորեն պատասխանել է.

¹ Գուրգեն խանը (Գեորգի XII) Քարթլի-Կախեթի վերջին (1798-1800) տիրակալն էր:

*Ես հավատարիմ եմ (իմ ծագմանը),
Անհավատարիմ լինել չեմ ուզում,
Ես ռամիկ եմ, թավադ դառնալ չեմ ուզում:
Տողացի թարգմ.*

Թե որտեղ և ինչքան է սովորել պատանի Հարությունը, դժվար է ասել, բայց ինքնակրթությամբ հասել է այնպիսի հաջողությունների, որ իրեն իրավունք է վերապահել գրելու.

*Թող ոչ ոք չասի՝ էս պատանին ով է,
Այբ, բեն գիտեմ, խոսքով առաջ եմ.
Սայաթ-Նովա եմ կանչում, Արութինն եմ,
Խոսք կասեմ՝ երկինքը որոտալ կսկսի:
Տողացի թարգմ.*

Տասներկուամյա Հարությունն աշակերտում է մի ջուլիակի և այնպես հմտանում, որ «մե մեքենա է հնարում, որով կտավը երկայն փողոցի մեջ հինելու տեղ. հինում ու գործում է էլել իր սենյակումն»¹:

Այդուհանդերձ նրա կոչումը բանաստեղծելու աստվածատուր ոլորտն էր, երգ-երաժշտության աշխարհը: Նա շրջագայում է քաղաքից քաղաք, գավառից գավառ, երկրից երկիր, ընդհուպ մինչև «Հաբաշ-Հինդուստան»: Հռչակը տարածվում է ամենուր. նրա երգի ու քամանչայի քաղցրալուր հնչյունները հմայում են ոչ միայն խալիսի սրտերն ու հոգիները, այլև թևածում ու թափանցում են վրաց արքայի ու ավատական հաստապատ պալատներից ներս: Արդեն մեծահամբավ երաժիշտ էր, երբ Հերակլ Երկրորդը հրավիրում է արքունիք, կարգում պալատական երգիչ բանաստեղծ.

*Վրաստանի արքայի երաժիշտն եմ,
Սայաթ-Նովա եմ կանչում, Արութինն եմ:*

Մի քանի տարի ծառայելուց հետո նա բամբասանքների զոհ է դառնում և հեռացվում արքունիքից: Այդ անարդար վճռի դեմ բողոքում է՝ գրելով «Դուն եմ գլխեն իմաստուն իս» բանաստեղծությունը.

¹ **Սայաթ-Նովայ**, Լուս գրքատ աշխատասիրութեով Գեորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, էջ 2-է:

*Դուն է՞ն գըլխեն իմաստուն իս, խիլքդ յիմարին բար մի՛ անի,
էրագունըն տեսածի հիդ միզի մե հեսար մի՛ անի,
Յիս խոմ է՞ն գլխեն էրած իմ, նուրմէկանց քարար մի՛ անի,
Թելուր գիդիմ բեզարիլ իս, ուրիշին սարար մի՛ անի:*

Շատ չանցած՝ նա վերստին հրավիրվում է պալատ, սակայն 1750-ական թթ. վերջերին Յերակլը, հավատալով «յադի խոսկերուն», բայց չանսալով իր երգչի խորհրդին, թե՛

*Սայաթ-Նովուն պահե, տընետ դուս չըլի,
Նրա պես դուլ դուն կիմքումըտ չի՛ս ճարի,
ապա պահանջին՝
Արթար դատե, չէ՛ վուր թաքավուր իս դուն,*

Վրաստանի «տերն ու զորավուրը» երգչին հեռացնում է պալատից, այս անգամ՝ ընդմիշտ (վրաց պատմաբաններից ոմանք գրում են, թե Սայաթ-Նովան ակամա հայտնվել է 1765 թ. խռովարարների շարքերում, այդ պատճառով էլ վտարվել է արքունիքից):

1768-ին՝ կնոջ վախճանվելուց հետո, չորս զավակի հայր Սայաթ-Նովան ձեռնադրվում է քահանա և Տեր-Ստեփանոս անունով, աշխատում Չաղպատի և Թիֆլիսի վանքերում, զբաղվում գրչությամբ:

Ավանդությունն ասում է, որ զոհվել է 1795 թ. սեպտեմբերի 13-ին, երբ պարսից շահ Աղա Մահմադ խանի հրոսակները գրավում են Թիֆլիսը ու սրի քաշում հազարավոր քրիստոնյաների: Ըստ վրացական աղբյուրների՝ Սայաթ-Նովան վախճանվել է բնական մահով, 1801 թ.:

Պալատական փառահեղ կյանքը ո՛չ շլացնում, ո՛չ էլ շփացնում է նրան, չի խաթարվում նրա մարդկային նկարագիրը, ընդհակառակը, հենց այդ միջավայրում է համոզվում, որ

*Մարդ կա կիմքը գի՛նու թասումն է տեսնում,
էնենցն էլ կա՝ քեփերում ու մեջլիսներում:*

Ու քանի որ աշուղի «լիզուն բլբուլ է», ինքն էլ «ազատ խոսիլ է ուզում», ոչ միայն խնդություն է պատճառում ունկնդիրներին, այլև նշավակում է արքունիքի բարքերը, պալատականներին, զեղծարար հոգևոր պետերին, քաղքենիներին: Դա պատճառ է դառնում, որ «հանկարծախոս հանճարին» բամբասեն ու չարախոսեն և, ի վերջո, հասնեն պալատից հեռացնելու իրենց նպատակին: Նա գնում է շրջապատի հանդես գերազանցության և արժանապատվության խոր զգացումով.

*Ամեն մարթ չի կանա խղճի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է.
Բունիաթըս ավագ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է:*

Պալատից հեռացվելը ցավ չէր Սայաթ-Նովայի համար, քանզի նա ամբողջովին պիտի նվիրվեր մուսային, պիտի վերադառնար ժողովրդի գիրկը, դառնար «խիղճ ու դեվեր մարդկանց» հույզերն ու հույսերը, խոհերն ու իղծերն արտահայտողը, խորհրդատուն և դաստիարակը: Միևնույն ժամանակ «հուքմի հեքիմ» թագավորի վերաբերմունքը դառնացնում է սիրահարի՝ առանց այդ էլ զգայուն սիրտը, որովհետև այլևս զրկվում էր սիրած էակին թեկուզ հեռվից տեսնելու, նրա հետ հանդիպումներ ունենալու հնարավորությունից: Այդուհանդերձ նրա հոգում սկիզբ են առնում նորանոր խոհեր՝ վերածվելով սիրային անկրկնելի երգերի:

Իսկապես, վրացերեն խաղերում ևս բացառիկ է հատկապես սիրո քնարը, որ արդեն երկուսուկես դար դյուրում է ընթերցողին: Դրանցում սերն անմիջական է՝ իր տարբեր դրսևորումներով.

Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի մեջ զգալի տեղ են գրավում նաև խրատական-ուսուցողական («Աստղալուսով ծովն ինչպե՛ս կցամաքի», «Մարդ կա անգոր...», «Ո՛վ հարևանի վրա աչք է տնկում», «Չավատա՛ ինձ» և այլն), բողոքի, ընդվզումի, երգիծական ոտանավորներ, որոնց մեջ պախարակում է այն հոռի երևույթները, որոնց ականատեսն էր ամեն քայլափոխի:

Սայաթ-Նովան հիմք է դնում վրացալեզու գուսանական երգարվեստին: Նա գրում է խոսակցական լեզվով, խաղերը համեմուն դարձվածքներով ու պատկերավոր արտահայտություններով: Ոչ միայն օգտվում է վրաց բանահյուսությունից, այլև հարստացնում է այն: Վրաց գրականագետների վկայությամբ՝ «կան բազմաթիվ բանահյուսական գրառումներ, որ գալիս են Սայաթ-Նովայի ստեղծագործություններից»¹: Նրա թևավոր խոսքերից շատերը լայն տարածում ունեն վրաց իրականության մեջ: Ահա դրանցից մի քանիսը. «Աստղալուսով ծովըն ինչպե՛ս կու ցամաքի», «Մաղով Քըռի ջուրն կու չա՛փվի», «Խոսք կոսիմ, ամբերը կու որոտան», «Քո՛ւռ, դուն կոսիս պխտուրվիլ իս Արագով», «Գիր գըրեցի, վուր խնայիս, Սե գամ շուռ գաս ու ինձ նայիս», «Խոսկիս տերն իմ, հունարըս էլ գրով ա», «Կարկաժըն վո՛ւնց կուլի Շիրագի շուշա» և այլն:

¹ Վրաց գրականության պատմություն, Թբիլիսի, 1966, հ. II, էջ 647 (վրաց.):

Սայաթ-Նովան վրաց պոեզիա բերեց հասարակական ցածր խավերի տրամադրությունը: «Դա հենց այն յուրահատուկ նորն էր, որ նա (Սայաթ-Նովան՝ Յ. Բ.) հաստատեց Անդրկովկասի ժողովուրդների գրականության մեջ՝ ընդհանրապես, վրաց գրականության մեջ՝ մասնավորապես»¹: Նաև ինքնատիպ ոճ, աշուղական չափածոյի մի քանի տեսակ, իսկ մուխամմազը գոյատևեց մինչև XX դարը: Մուխամմազներ են գրել Բեսիկին, Ալ. Ճավճավաձեն, Գր. Օրբելիանին, Ալ. Ծերեթելին, Ի. Գրիշաշվիլին, Գ. Լեոնիձեն:

Այս արժանիքների շնորհիվ է, որ բանաստեղծի խաղերը սիրվում ու տարածվում են խավերի մեջ. «Սայաթ-Նովան վրացական պոեզիան արքունիքից ու իշխանական պալատներից հանեց ու մոտեցրեց ժողովրդին, ընկալելի ու հասկանալի դարձրեց նրան»²:

XVIII դարավերջի և XIX դարի առաջին կեսի վրացական չափածոյում ակներև են Սայաթ-Նովայի խաղերի տրամադրությունը, խոհն ու պատկերը: Բեսիկին, Ալ. Ճավճավաձեն և Գր. Օրբելիանին նրա օրինակով նշում էին, թե ինչ «հանգի» պետք է երգել, մեջբերում էին ոչ միայն առանձին տողեր, այլև ամբողջական քառատողեր (իհարկե, վրացերեն խաղերից):

Գր. Օրբելիանին «Դմիտրի Օնիկովի դարդերը» ոտանավորում մեջբերում է՝ «Է՛րնեկ օրերից մե օր հիշիս, ինձ հյուր գաս, ճամփիդ փիանդազ դառնամ, վուր սազա քիզ»: Նույն հեղինակի «Մշակ Բոքուլաձեն»-ի մեջ քնարական հերոսն ասում է. «Այգուց լսում եմ ձայնը քամանչու, Սայաթ-Նովու երգն է հնչում»: Յոթանասունն անց ծերունին բարեկամուհուն՝ Եկատերինա Ճավճավաձեին (1816-1882) հղած նամակներից մեկում գրում է. «Հիշում եմ Ձեր օրհորդական փայլուն ժամանակները... Որտեղ էլ հանդիպում էինք գեղուհիներիցդ որևէ մեկին, արտասանում էինք Սայաթ-Նովայի «Հազար հիդ «քիզ մատաղ» ասի, բայիս քա՞նի գըլխի տեր իմ» տողերը»:

Նիկոլոզ Բարաթաշվիլին 1837 թ. փետրվարին քեռուն՝ Գր. Օրբելիանին գրած նամակում, իր հոգեվիճակը պատկերելու համար վկայում է «Իմ խիղճ գըլուխ, քիզիդ էս ի՞նչ պատահից» խաղի տողերը.

*Դե էլ յիս ո՞ւմ միդ դնիմ, ինչի՞ց էլավ.
Էս ամենըն հենց իմ էս խիլքից էլավ:*

¹ Саят-Нова, Лирика, Москва, 1963, вступительная статья И. Гришашвили.

² Վրաց գրականության պատմություն, Թբիլիսի, 1966, հ. II, էջ 648 (վրաց.):

Սայաթ-Նովան գրական կերպար է վրաց դասական գրող Վասիլ Բարնովի «Իսանիի արշալույսը» պատմավեպում: Հեղինակը նշում է, որ երկի վերնագիրը վերցրել է Սայաթ-Նովայի համանուն տաղից, որ նվիրել է մի չնաշխարհիկ էակի՝ հավլաբարցի թիմանոյին: «Իսանիի արշալույսը» շատ սիրված և տարածված երգ է եղել, բայց, հավանաբար, դա էլ չի պահպանվել, ինչպես նրա շատ ու շատ խաղերը»¹:

Պոետ ակադեմիկոս Իոսեբ Գրիշաշվիլին նշում է, որ հարսանիքների ժամանակ, երբ հարսին բերում էին փեսայի մոտ, նրա ոտքերի տակ ծաղիկ էին սփռում և ուղեկցում Սայաթ-Նովայի երգով.

*«Արիվ-լուսին էրեսըտ է հայելի.
Մատաղ իմ քիզ, ուրիշը թող պետք չըլի»:*

Սայաթ-Նովան իր տեղն ունի վրաց գրականության պատմության մեջ: Նրա մասին գրվել են մենագրություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, բազմիցս հրատարակվել են վրացերեն խաղերը, լույս են տեսել հայերեն ու թուրքերեն քերթվածքները, ձայնագրվել են երգերը: 1914 թվականից Թբիլիսիում ամեն տարի մայիսի վերջին կիրակի նշվում է նրա եռալեզու երգարվեստին նվիրված ավանդական Վարդատոնը, ստեղծագործությունն ուսումնասիրվում է բուհերում, գրականության պատմության հատորներում հատկացված են մենագրական գլուխներ:

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաց սայաթնովագիտությունը բառիս գիտական իմաստով սկիզբ է առնում 1918 թվականից, երբ Ի. Գրիշաշվիլին, այդ ժամանակ արդեն անվանի բանաստեղծ, Հովի. Թումանյանի, Գ. Բաշինջադյանի և Ն. Մառի խորհրդով ու աջակցությամբ լույս ընծայեց Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը՝ առաջաբանով, ծանոթագրություններով ու բառարանով՝ նպատակ ունենալով վրացալեզու ընթերցողին ծանոթացնել հին Թիֆլիսի մոռացության տրված գուսանին՝

Ի. Գրիշաշվիլին երախտագիտության արժանի այնպիսի աշխատանք կատարեց վրաց իրականության մեջ, ինչպես Գևորգ Ախվերդյանը հայոց համար 1852-ին: Նա է վրացերեն խաղերի առաջին մեկնա-

¹ «Մոամբե», 1901, թիվ 9, էջ 10 (վրաց.):

² Տե՛ս Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 662:

բանն ու գնահատողը, վրաց սայաթնովագիտության հիմնադիրը: Բանաստեղծը վատ չգիտեր հայերեն, հատկապես թիֆլիսի հայ բարբառը, ծանոթ էր Սայաթ-Նովայի գրական ժառանգությանը, ուստի փորձում է վրաց ընթերցողին ըմբռնելի դարձնել նրա էությունն ու բովանդակությունը: Ընդգծում է, որ «հայ աշուղը երգել է սրտի համար, հոգու համար, սիրո համար և որպես պոետ, որպես երգիչ առ այսօր հավասարը չունի Վրաստանում»:

Անդրադառնալով հայերեն և վրացերեն խաղերի արժանիքներին՝ նշում է, որ հայերեն խաղերը կատարյալից կատարյալ են, գրեթե անթերի: Առհասարակ բարձր գնահատելով երգչի ծառայությունները Անդրկովկասի ժողովուրդների գրական-մշակութային կյանքում՝ Ի. Գրիշաշվիլին, այնուամենայնիվ, առարկելի բնորոշումներ է տալիս Սայաթ-Նովայի ստեղծագործությանը՝ այն հարմարեցնելով աշուղական պոեզիայի կադապարներին: Նկատի ունենալով ժամանակը՝ թերևս հասկանալի է նման մոտեցումը. սայաթնովագիտությունը նոր էր սահմանավորվում, իսկ հետազոտողին ավելի շատ հետաքրքրում էր վրացերեն խաղերի լույսընծայումը:

«Գուցե թե Սայաթ-Նովան՝ որպես բանաստեղծ, վերամբարձ չէ, շարունակում է Գրիշաշվիլին, գուցե թե նրա մուխամազները սենյակում փակված մժեղի նման բզզան ականջունդ, բայց իբրև գուսան, իբրև երգիչ, ցայսօր նա հավասարը չունի համայն Վրաստանում, և, հավատացե՛ք ինձ, տպավորությունը բոլորովին այլ կլիներ, եթե քամանջան սազ աներ ու հանպատրաստից երգեր իր խաղերը»¹:

Ի. Գրիշաշվիլուն կարելի է առարկել, երբ բանաստեղծի սիրային քնարերգությունը համարում է դարաչոխելիական^{*}: Հենց այս սխալ դիտարկումը վրաց գրեթե բոլոր գրականագետների համար դարձավ կայուն չափանիշ: Անգամ այնպիսի հեղինակավոր գիտնական, որպիսին ակարդ. Կ. Կեկելիձեն է, Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը վերլուծելիս կրկնում է Գրիշաշվիլու տեսակետը, թե բանաստեղծն ավելի լավ է հասկանում բանաստեղծի հոգին, ուստի խոսեցնենք Սայաթ-Նովայի հրատարակիչ Ի. Գրիշաշվիլուն: Եվ բերում է վերջինիս հատկապես բացասական բնութագրումները՝ իր հերթին ավելացնելով, թե Սայաթ-Նովայի բանաստեղծություններն ինքնին մեծ արժեք չունեն. մոտիվներն ու

¹ **Սայաթ-Նովա**, Ի. Գրիշաշվիլու առաջաբանով և ծանոթագրություններով, Թբիլիսի, 1918, էջ 47 (վրաց.):

^{*} Ղարաչողելի կամ ղարաչոխելի – սև չուխավոր, մանրավաճառ, փերեզակ կամ արհեստավոր հին թիֆլիսում, աչքի են ընկել ծանրաբարոյությամբ, լրջմտությամբ, դարդիմանությամբ (ծմբ.՝ Յ. Բ.):

մտքերը միապաղաղ են, պատկերներն ու համեմատությունները՝ թույլ և աղոտ, ռիթմը՝ աղքատ¹: Կեկելիձեն նույնը կրկնում է նաև իր մի բուհական ձեռնարկում²: Անվանի գիտնականի գնահատականը թերևս անաչառ լինելը, եթե ոմն Ստեփանոս Մկրտեչու (Դերձակ) մի քանի խաղ չվերագրվեր Սայաթ-Նովային:

Բանաստեղծ, գրականագետ և հասարակական գործիչ Տիցիան Տաբիձեն (1895-1937) դեռևս 1930 թ. Սայաթ-Նովայի մասին գրած մի հոդվածում քննադատում է և՛ Ի. Գրիշաշվիլուն, և՛ Կ. Կեկելիձեն՝ աչառու վերաբերմունքի համար: Վկայելով Բոյուսովին՝ Տաբիձեն գրում է, որ, լինելով համաշխարհային գրականության հրաշալի գիտակ, բանաստեղծական մեծ կուլտուրայի տեր, Վ. Բոյուսովը Սայաթ-Նովային հենց այնպես հանճար չէր համարի, պոեզիայի համաշխարհային մեծերի շարքում չէր դնի: «Ավելին,- շարունակում է Տաբիձեն,- Բոյուսովը յուրաքանչյուր անհատի կուլտուրականության չափանիշը չէր բխեցնի այն իրողությունից, թե տվյալ անձը որքանով է յուրացրել հայ տաղերգուի խաղերը»:

Տաբիձեն նշում է նաև, որ Սայաթ-Նովայի գնահատության հարցում թե՛ Գրիշաշվիլուն, թե՛ Կեկելիձեն կարելի է առարկել հենց վրացերեն խաղերից ելնելով, մանավանդ, եթե չմոռանանք, թե նա ինչքան մեծ ազդեցություն է թողել հետագա շրջանի վրաց պոետների վրա, և թե ինչպես են նրան մեծարել անզուգական Բեսիկին ու վրացական ռոմանտիզմի սյուներից մեկը՝ Գր. Օրբելիանին³: Յետագայում նման թյուրիմացությունները կանխելու և բանաստեղծի եռալեզու լիակատար ժողովածուն անխաթար հրատարակելու նպատակով նա կոչ է անում ստեղծել Սայաթ-Նովայի գրական ժառանգությունն ուսումնասիրող հանձնախումբ՝ կազմված հայ, վրացի և թուրք հեղինակավոր մասնագետներից:

Տիցիան Տաբիձեի այս ազնիվ կոչը մնում է «ծայն բարբառոյ յանապատի», քանզի ոչ միայն չի ստեղծվում նման հանձնախումբ, այլև երկար ժամանակ չի փոխվում վրաց բանասերների կանխակալ վերաբերմունքը: Մանավանդ, որ չկար Տաբիձեն. նրան գնդակահարել էին դժնի 37-ին:

Այսպես, «Վրաց գրականության պատմության» ակադեմիական

¹ Վրաց գրականության պատմություն, Թբիլիսի, 1954, հ. 1, էջ 34 (վրաց.):

² Конспективный курс истории древнегрузинской литературы, Թբիլիսի, 1939, էջ 104.

³ Տե՛ս **S. Տաբիձե**, Երկերի ժողովածու երկու հատորով, Թբիլիսի, 1966, հ. 2, էջ 241 (վրաց.):

հրատարակության անդրանիկ հատորի առաջաբանում խոսելով XVIII դարի ազգային գրականության մեջ թեմատիկայի ընդլայնման մասին՝ ակադ. Կ. Կեկելիձեն գրում է. «Երևան են գալիս առևտրա- արհեստավորական միջավայրից ելած պոետներ, ինչպես, օրինակ, Սայաթ-Նովան, Բիստիկան, Այգեպան Դավիթը, Պաճուան, Բլաիձեն, Կոտաշվիլին և ուրիշներ, որոնք դարաչողեկական-աշուղական պոեզիայի տեսքով գրականություն են բերում իրենց միջավայրին բնորոշ մոտիվներ»: Մինչև անգամ մասնագետների ամենամեղ շրջանակներին անհայտ-անծանոթ այս անունների շարքում Սայաթ-Նովայի անվան հիշատակումն արդարացի չէ: Իսկ ահա անդրադառնալով «շաիրի» և «չախրուխաուլի» բանաստեղծական չափերը հաղթահարելու և ժողովրդական պոեզիայից օգտվելու իրողությանը՝ Կ. Կեկելիձեն ընդգծում է, թե այդ հարցում նշանակալից քայլ կատարեց հատկապես Դ. Գուրամիշվիլին, որին հետևեցին Բեսիկին և Սայաթ-Նովան:

Դ. Գուրամիշվիլին, այո՛, նորարար բանաստեղծ էր. նա թարմություն մտցրեց վրաց տաղաչափական համակարգի մեջ, կիրառեց նոր ձևեր, լայնացրեց վրաց քնարերգության շրջանակները: Հիշենք, սակայն, որ նա գրեթե ամբողջ կյանքն անցկացրել է Ուկրաինայի Միրգորոդ քաղաքում, տասնամյակներ շարունակ եղել է զինվորական ծառայության մեջ, ստեղծագործել XVIII դ. 70-80-ական թվականներին, իսկ «Դավիթիանի» ժողովածուն կազմել է 1787 թ.: Բեսիկին ևս գրական ասպարեզ է իջել XVIII դարի 70-ական թթ. վերջերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Սայաթ-Նովան չէր ստեղծագործում, բայց նրա երգերը երգում էին ամենքն ու ամենուր:

Նույն հատորի Սայաթ-Նովային նվիրված գլխում կարդում ենք, որ հայ բանաստեղծը աշուղական պոեզիայի պիոներներից է, դրա լավագույն ներկայացուցիչը Վրաստանում, որ սիրո և ուրախության գուսան է, իր հավասարը չունեցող երաժիշտ և երգիչ, ժողովրդական տրուբադուր, որ նա, միայն նա հաղթահարեց վրաց հին ներբողական պոեզիայի խրթին ոճը և ստեղծեց աշուղական ոճի ինքնատիպ ներբողներ, դուրս եկավ եկեղեցական-կղերական մտածողության շրջանակներից, արարեց պարզ ու իմաստալից աֆորիզմներ, համարձակ և յուրօրինակ համեմատություններ, ուժեղացրեց քաղաքացիական ու սոցիալական մոտիվները և այլն: Այդուհանդերձ նշվում է նաև, թե Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը թերի են տեխնիկապես, տողերն անհարթ են, հանգերը՝ բռնի, ռիթմը՝ խառնիխուռն, պատկերավորման միջոցները՝ մաշված ու տաղտկալի, և իբր ոտանավորները խճողված են «քաղաքային» ժարգոնով: «Մի խոսքով, Սայաթ-Նովայի խաղերն աչքի չեն ընկնում ո՛չ

լեզվական նրբությամբ, ո՛չ հղկվածությամբ, ո՛չ երաժշտականությամբ»¹:

Այդպե՞ս է արդյոք: Հեռուն չգնանք և վկայենք վրացի մասնագետի: Արձակագիր, գրականագետ և հասարակական գործիչ Գեորգի Նատրոշվիլին Սայաթ-Նովայի ստեղծագործությանը նվիրված «Խոսք կասեմ՝ երկինքը որոտալ կսկսի» աշխատության մեջ գրում է. «Սայաթ-Նովան Նիկո Փիրոսմանիի նման սիրում է աշխարհը, տեսնում նրա կենդանի գույները, զգում նրա ապշեցուցիչ բույրը: Այո՛, նա նման է Փիրոսմանիին, նման է աշխարհատեսությամբ: Նրա խաղերում Թիֆլիսի լուսնկա գիշերվա մեղմությունն ու դալկությունն զգում ենք ճիշտ այնպես, ինչպես դա զգում ենք Փիրոսմանիի կտավներում: Նա ինքնատիպ տաղանդ է...»: Այնուհետև՝ «Իսկապես անասելի հարուստ է Սայաթ-Նովայի վրացերենը. նրա բառը նուրբ է ու ճկուն. այստեղ կան սփոփող հանդարտություն, զարնան որոտ և խորունկ ցավ արտահայտող խոսքեր: Նա կարողացել է գտնել խոսքի այն կախարդանքն ու թալիսմանը, առանց որոնց չկա ու չի կարող լինել բարձրարվեստ պոեզիա: Այդպիսին է Սայաթ-Նովայի վրացերենը»²: Հեղինակն իր խոսքն հավաստում է բազմաթիվ օրինակներով:

Սայաթ-Նովայի վերաբերյալ վրաց գրականագետների դիրքորոշումն զգալիորեն փոխվեց, երբ համաշխարհային հանրությունը 1963 թ. մշեց նրա ծննդյան 250-ամյակը: Մենք նկատի չունենք մամուլի ու գրական հանդեսների վրաց հեղինակների հողվածներն ու հետազոտությունները: Խոսքը վերստին պաշտոնական, գիտական կարծիքի մասին է:

1966 թ. Թբիլիսիում լույս տեսավ «Վրաց գրականության պատմության» II հատորը, որտեղ առաջին անգամ փորձ է արվում ըստ արժանվույն գնահատել ժողովրդական բանաստեղծի տեղն ու դերը, վրաց գրականությանը մատուցած ծառայությունները: Քննության առնելով Սայաթ-Նովայի կյանքն ու գործունեությունը՝ հեղինակը՝ պրոֆ. Լ. Մենաբդեն երգչի պոեզիան կամայականորեն գնահատողներին ի պատասխան գրում է. «Նրանք մոռանում են, որ Սայաթ-Նովան իրեն հավասարը չունեցող քնարերգու գուսան էր, պոետ-իմպրովիզատոր, որ նա կատարողական իր արվեստով կախարդում էր բոլորին: Սայաթ-Նովայի պոեզիան այսօր էլ ապշեցնում է հեղինակի հարուստ ֆանտազիայով, անմիջականությամբ ու անկեղծությամբ, պարզությամբ ու զգացմուն-

¹ Վրաց գրականության պատմություն, Թբիլիսի, 1954, հ. I, էջ 477-478 (վրաց.):

² Գ. Նատրոշվիլի, «Խոսք կասեմ՝ երկինքը որոտալ կսկսի», Թբիլիսի, 1963, էջ 33, (վրաց.):

քայնությամբ և հատկապես բանաստեղծական ծայնի դիապագոնով»¹:

Գիտնականը Սայաթ-Նովային համարում է խոշորագույն սիրերգակ, աշուղական արվեստի նորարար ու անհաս գագաթ նաև վրաց իրականության մեջ, ապա մանրամասն քննության է առնում և վեր հանում հանճարեղ երգչի քնարերգության նորանոր շերտեր ու խորքեր: Բանիմացորեն անդրադառնում է նաև հայերեն ու թուրքերեն խաղերին, ժողովուրդների հոգևոր կյանքում նրա մեծ ներդրումին: Սայաթ-Նովայի վրացերեն խաղերին տված իր գնահատականը վերանայեց ակադ. Ալ. Բարամիձեն: 1958 թ. Թբիլիսիում լույս տեսած «Վրաց գրականության պատմություն» ռուսերեն բուհական դասագրքում նա նորովի է անդրադառնում մեծ երգչի վրացերեն խաղերին, խոսում նրա նորարարության մասին: Իսկ «Վրաց գրականության պատմությունը», որ հրատարակվել էր 1954-ին, 1969-ին վերահրատարակելով առանձին՝ իբրև բարձրագույն ուսումնական հաստատությունների դասագիրք, քննարկում է Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը և ընդգծում նրա համամարդկային բովանդակությունն ու դեմոկրատական ոգին, գրում է, որ Սայաթ-Նովայի պոեզիան չի կաղապարվում առանձին վերցրած որևէ ազգի մշակույթի շրջանակներում. նա մեզ ներկայանում է իբրև գեղարվեստական խոսքի մեծ վարպետ, իբրև հրաշալի աշուղ ու բանաստեղծ, իբրև աշուղական արվեստի գագաթ վրաց իրականության մեջ²:

Վերահրատարակելով Սայաթ-Նովայի մասին իր աշխատությունը՝ Ի. Գրիշաշվիլին նույնպես զգալիորեն բարձրացրել է մեծ բանաստեղծի վրացերեն խաղերի նախկին գնահատականը³:

1969 թ. լույս է տեսնում «Վրաց գրականության պատմության» III հատորը՝ նվիրված XIX դարի առաջին կեսի գրական, հասարարական-մշակութային կյանքին: Խոսելով Ալ. Ճավճավաձեի քնարերգության մասին և ջանալով ժխտել Սայաթ-Նովայի ազդեցությունը՝ հեղինակը նրա պոեզիան համարում է դարաչոփելիական. «Անհիմն է, երբ Ալ. Ճավճավաձեի սիրային քնարերգությունը կապում են դարաչոփելիական ոտանավորների հետ: Ճավճավաձեի սիրերգությանը խորթ է դեկադենտական զգացողությունը. այն մարդկային է, նրան հատուկ են բարոյական անադարտությունն ու արիստոկրատիզմը»: Այնուհետև՝ «Եթե դարաչոփելիների պոեզիան (ներառյալ Սայաթ-Նովան) իր մեջ պարունա-

¹ Վրաց գրականության պատմություն, Թբիլիսի, 1966, հ. II, էջ 647 (վրաց.):

² Տե՛ս Կ. Կեկելիձե, Ա. Բարամիձե, Վրաց գրականության պատմություն, Թբիլիսի, 1969, էջ 440 (վրաց.):

³ Ի. Գրիշաշվիլի, Երկերի ժողովածու, հինգ հատորով, հ. III, Թբիլիսի, 1963 էջ 5-123 (վրաց.):

կում է նաև թեթևսովիկությունն ու անպարկեշտությունն, ապա Ալ. Ճավճավաձեի սիրային երգերը աչքի են ընկնում սալոնային նրբերանգներով»:

Աշուղական պոեզիայի պատկերները, բառագանձը, «ծայնը» համարելով շուկայական (կրկնում է Վախթանգ Օրբելիանիի խոսքերը՝ Յ. Բ.)՝ նա գրում է, թե Թիֆլիսի հռչակավոր սազանդարների «հանգը» շատ չէր տարբերվում Օրթաճալայի կամ Յավլաբարի դարդիման քեֆ-չիների գռեհիկ «հանգից», որ երբեմն ուղղակի հակադրվում էր ճշմարիտ գրականության արժանիքներին, հաճախ էլ չէր զգացվում բարոյական մաքրությունն ու հոգու անկեղծ թրթիռ: Նրա համոզմամբ «Սայաթ-Նովան դարաչողելու նման է դիմում սիրած էակին»¹: Եվ իր միտքը հիմնավորում է հետևյալ տողերով.

*Գինին խըմինք, լավ արաղըն էլ մերն է.
Սազանդար ու մեջլիս, սաղին էլ մերն է.
Եկ բաղմընչուն քըշինք, բաղըն էլ մերն է.
Քեփն անուշ է, ժամն անուշ, նուրարն անուշ:*

Նշենք, որ ճավճավաձեն կնոջ սերը, գեղեցկությունն ու հմայքը հանգեցնում է վայելքին: Նրա պոեզիայում գերակշռում են «լոթիանա» երգերը, նա բոլորին խորհուրդ է տալիս ճաշակել, վայելել, առիթը երբեք բաց չթողնել: «Երբ դեմքդ տեսնեն» ոտանավորում, օրինակ, ժանոթ կնոջը գայթակղում է, թեթև ժամանցի մղում, որովհետև «այս դառն ու դաժան իրականությունից վերանալու միակ միջոցը դա է»: Մի շարք այլ խաղերում նա արտահայտում է այն միտքը, թե վայելքը ոչ միայն իմաստություն է, այլև վարպետություն, որ գալիս է փորձից ու համարձակությունից: Յիշենք նաև, որ Սայաթ-Նովայի սիրո առարկան մեկն է, իսկ ճավճավաձեինը՝ մի քանիսը: Վրացի բանաստեղծի համար սերը ուղղակի և անմիջական վայելքի աղբյուր է. «Վարդին մի սիրեք հեռվից, մի շրջանցեք, մոտեցեք նրան մարմնով, որ ճաշակեք սիրո քաղցրությունը»: Կամ՝ «Քանի ժամանակ ունես, վայելիր, քեզ են ասում, հաճելի է, վայելիր»:

Կարելի է նման մտքեր պարունակող բազմաթիվ ոտանավորներ վկայել: Ալ. ճավճավաձեի սիրային քնարերգությունը ապրած զգացումի արտահայտությունն է. նա պարզապես դատողություններ է անում և «երգում ընդհանրապես սեր, ընդհանրապես գեղեցկություն»:

Ինչ վերաբերում է Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի լեզվական

¹ Վրաց գրականության պատմություն, Թբիլիսի, 1969, հ. III, էջ 63-64 (վրաց.):

ու տաղաչափական արվեստին, ասեմք, որ նրա երգիծական-խրատական ոտանավորները թերևս զիջում են քնարական-սիրային և ներբողական բանաստեղծություններին, իսկ դա բացատրվում է նրանով, որ երգիչը դրանք հորինել է հանպատրաստից՝ խնջույքների, մեջլիսների, նվագ-մրցույթների ժամանակ: Վրացերեն խաղերում ավելի շատ են մնան ոտանավորները:

Չնայած որոշ գրականագետների հակասական գնահատականներին՝ վրացերեն խաղերի գեղարվեստական արժանիքներն ու վրաց բանաստեղծների՝ նրանից կրած ազդեցությունը ժխտելու միտումներին, վրաց գրականագիտության մեջ Սայաթ-Նովան գնահատվում է իբրև նորարար բանաստեղծ և իբրև վրաց աշուղական երգարվեստի չգերազանցված վարպետ:



ԲԵՍԻԿԻ

Վրաց հին գրականությունը եզրափակում է բանաստեղծ, քաղաքական գործիչ և դիվանագետ Բեսիկին (Բեսարիոն Գաբաշվիլի):

Ծնվել է 1750 թ., Թիֆլիսում, մեծահարուստ ավատատեր Ջաքարիա Գաբաշվիլու ընտանիքում: Նրան դաստիարակել և հիմնավոր կրթություն է տվել հայրը՝ արքունի վարդապետ Ջաքարիա Գաբաշվիլին:

Անտոն Առաջին կաթողիկոսի և Չերակլ Երկրորդի դեմ կրոնական-դավանաբանական հակամարտության մեջ պարտվելով՝ Ջաքարիա Գաբաշվիլին 1764 թ. շնորհագրվում է և վտարվում Քարթլիից: Նա մեկնում է Իմերեթի թագավոր Սոլոմոն Առաջինի մոտ: Տարիներ անց՝ 1777 թ., որդին նույնպես Քարթլիից վտարվում է Իմերեթ: Հայրենի եզերքից, բարեկամներից ու ընկերներից ստիպողաբար հեռանալու դառնությունը երիտասարդ բանաստեղծն արտահայտել է «Արցունքի նետեր» ոտանավորում.

*Օ՛, արցունքներ, որ նետի արագությամբ եք հոսում,
Ջովացրե՛ք ինձ, զգացե՛ք՝ ի՞նչ հրդեհ է իմ ներսում.
Հայածական իմ հողից, օտար, ինչպես երազում
Ապրում եմ ես, ու հոգիս արևից էլ է մրսում:
Տառապանքը իմ հոգու, ավա՛ղ, խոսքով չի ասվի:*

Սոլոմոն Առաջինը նրան մասնակից է դարձնում երկրամասի կառավարմանը. նախ նշանակում է արքունի ավագ ատենապետ, ապա դիվանագիտական հանձնարարությունով գործուղում Պարսկաստան: 1784 թ. վախճանվում է Սոլոմոն Առաջինը, և գահի համար պայքարում Բեսիկին աջակցում է Դավթին, որը, սակայն, երկիրը կառավարելու անհրաժեշտ պատրաստվածություն չուներ: Այս հանգամանքը նպաստում է երիտասարդ բանաստեղծի հեղինակության աճին. լինելով խելացի, ճարտար ու վայելչագեղ՝ նա սիրային կապերի մեջ էր Դավթի գեղանի կնոջ հետ: 1787 թ. դիվանագետի առաքելությամբ մեկնում է Յասսի (Ռումինիա), որտեղ և վախճանվում է 1791 թ. հունվարի 24-ին:

Բեսիկին հեղինակ է քնարական երգերի, ներբողների, երգիծական ոտանավորների ու պոեմների, բայց նա զգայական սիրո երգիչ է: Հեղինակը մեծ տեղ է տալիս կնոջ մարմնական գեղեցկությանը.

*Ո՛վ նոճեհասակ, կախարդի՛չ ես դու, բույր ես թմրաբեր,
Քո խոպոպները փխրուն են ասես, անմերձենալի.
Շանթ ունքերի տակ՝ շանթի պես զարկող, հմայող աչքեր,
Արնագույն շուրթեր, որ շունչ կտրեցնող հրայրքով են լի:
Դո՛ւ հեռու լուսնյակ, իջի՛ր, մոտեցի՛ր ու ինձ միտդ բեր:*

Իսկ ահա Դավիթ արքայի չնաշխարհիկ կնոջը՝ Աննային ծոնած երգերը հուշուն են, որ իրար հանդեպ տածած նրանց զգացմունքները եղել են փոխադարձ, բայց հարափոփոխ: Սիրուհին իր հոմանուն հաճախ մեղադրում է անհավատարմության մեջ՝ նկատելով, որ նա չի բավարարվում իր նման չքնաղ վարդից բուրմունք առնելով, և հոտ է քաշում նաև այլ ծաղիկներից: «Ամոթխած վարդի» (սիրուհու) զայրույթին արժանացած ու նրա կողմից վտարված երգիչը մտամոլոր քայլում է «Վշտի այգուն» և դիմում տարբեր ծաղիկների՝ իմանալու հոմանուհու վրդովմունքի պատճառը: Ահա թե ի՛նչ պատասխան է տալիս նարգիզը.

*Ո՛վ օտարական, վարդը քնքշալից
Նրա համար է նեղացած քեզնից,
Որ նա սիրում էր սիրով մի անբիժ,
Դավատում էր քեզ, հավատում խորքից:
Տարակուսանքդ զարմացնում է ինձ,
Երբ մեղանչել ես, պիտի պատժվես:*

Լսելով նման խոսքեր՝ բանաստեղծը «կորցնում է ժպիտը» և «մահ փնտրում մեղապարտի պես»: Սիրած կնոջը մոտ թե նրանից հեռու գտնվելու հանգամանքը խոր կնիք է թողնում Բեսիկիի երգերի վրա: Նրա տխրությունը «բռնադատված տխրություն» է, հեծեծանքը՝ ավելի խոսքեր են, քան զգացում: Իհարկե, նա ունի նաև ապրումների արգասիք տաղեր: Որոշակի է հեղինակի հիասթափությունը ոչ միայն սիրուհու վարմունքից, այլև առհասարակ կյանքից ու աշխարհից: Սիրո թեմայով գրած նրա գրեթե բոլոր բանաստեղծությունները (դրանք հիմնականում անձնական բնույթ կրող մուխամազներ են) վերջանում են բաժանման, կարոտի ու մահվան գաղափարով.

*Քեզ հիշելուց է, որ լուսնի նման հալվում եմ, պակասում.
Քեզ հիշելով է, որ մոռանում եմ աշխարհն ամենայն,
Որ ճոխ աշխարհում ապրելու տեղակ մեռնե՛լ եմ ուզում,
Մարդիկ, ողբացե՛ք հեզ սիրահարիս, դրեք գերեզման,
Եվ ափսո՛ս ասեք, որ կյանքս անցավ տանջանքով ու զուր:*

Թարգմ.՝ Սիլվա Կապուտիկյան

Բեսիկին ուժերը փորձել է նաև երգիծանքի ժանրում: Այդ գործերում նա դատապարտում է հասարակության մեջ հարատևող հոռի երևույթները: Այսպես՝ «Հարսը և սկեսուրը» պոեմում անդրադառնում է կնոջ ստրկական վիճակին, խստագույնս պախարակում տղամարդկանց բռնակալական արարքները, չարական սկեսուրներին և լեզվանի ու ամբարիշտ հարսներին: Հեղինակը պատմում է, որ այդ «զարմանալի դեպքը» տեղի է ունեցել հեռավոր Սամարղանդում, և ինքը եղել է դրա վկան:

Վաղ առավոտյան տնից դուրս գալով՝ տեսնում է, որ մի տարեց կին և երիտասարդ մի աղջիկ (հարս և սկեսուր) անիծում են մեկմեկու: Չկարողանալով լռեցնել սկեսուրին՝ հարսը հարձակվում է և անխնա քոթակում: Հայտնվում է պառավի որդին, կնոջը քարշ տալիս տուն, գամում սյունին և վայրագորեն զանահարում: Կարծելով՝ մեռցրել է, վազում է քահանայի հետևից: Այդ միջոցին, օգտվելով պահից, հարսը խեղդամահ է անում սկեսրոջը, կախում առաստաղից և աճապարում հոր տուն: Տղան քահանայի հետ վերադառնում է և տեսնելով կատարվածը՝ հոգևորականին պատվիրում է իջեցնել ննջեցյալին, պատանքել ու սպասել, իսկ ինքը շտապում է վրեժխնդիր լինելու: Սակայն մայր ու աղջիկ կարողանում են մեղմել նրա զայրույթը: Որոշ ժամանակ անց՝ ամուսինները հաշտ ու խնդուն վերադառնում են տուն, ապրում «սիրով ու խաղաղ»:

Բոլոր հերոսները բացասական են. հեղինակը չի խնայում ո՛չ ավագ, ո՛չ կրտսեր սերնդի ներկայացուցիչներին, թեև հաղթանակ տոնում են վերջիններս: Բեսիկին առավել պախարակում է հոգևոր դասին՝ հանձին տգետ ու շահամոլ քահանայի, որ անթաքույց հրճվանք է ապրում այն մտքից, թե շուտով ահագին վարձ է ստանալու իր ծառայության համար:

Դեպքերը հեռավոր երկիր տեղափոխելուց զատ հեղինակը հոգևորականին էլ այլազգի է ներկայացրել: Այս ամենը, անշուշտ, հնարանք է, քանզի երկուն նկարագրված է XVIII դարի Վրաստանին բնորոշ կենցաղն ու վարքուբարքը: Հեղինակն ընդհանրացնում և դատապարտում է սերունդների վեճը, այս պարագայում՝ հարսի և սկեսուրի հավերժող հակամարտությունը, որ պատճառ է դառնում երիտասարդ ընտանիքների քայքայման, հաճախ ստեղծում դրամատիկ, երբեմն էլ ողբերգական վիճակ:

«Հարսը և սկեսուրը» պոեմի առավելությունն այն է, որ հեղինակը մասամբ հաղթահարել է պարսկա-արաբական պոեզիայի հավերժող չափերը, խուսափել է արտաքին պաճուճանքներից և մտցրել խոսակ-

ցական տարրեր՝ երկը դարձնելով դյուրըմթեռնելի և դյուրըմբռնելի:

Երգիծական մի քանի ոտանավորներում Բեսիկին առաջնորդվում է անհատական մոտիվներով. քննադատում է իր հակառակորդներին ու ընդդիմախոսներին: Դրա լավագույն արտահայտությունը «Մզեճաբուկ Օրբելիանիին» գրվածքն է:

Վերջինս եղել է արքունի պաշտոնյա, գրել է ոտանավորներ, բայց իբրև մարդ եղել է մեծամիտ, բանասարկու, ստորաքարշ, ունեցել է սարսռազուրկ կազմվածք: Լինելով զարգացած անձ՝ քննադատել է Բեսիկին: Վերջինս, սակայն, չի հանդուրժել «ապաշնորհ շվի փչողին» և սպանիչ ծաղրի է ենթարկել նրան. «նեխած լեշ, աչքով խենեշ, սրտով պիղծ, ուռած մեջքով գաճաճ, արտաքուստ զագրելի, ներքուստ գարշելի, անտաշ քոթուկ»: Նա զարմանում է, թե նման արարածին ինչպես են հանդուրժում հարազատները:

Ի դեպ, Օրբելիանիին, նրա հարսանիքի օրը, հրապարակայնորեն երգիծել է նաև Սայաթ-Նովան՝ անարդարություն համարելով տարեց, սապատավոր մարդու ամուսնությունը հմայիչ իշխանադաստեր հետ: Ահա այդ ոտանավորը.

*Արագվն անցնինք կարմունջեն,
Ուղտի մեջքին կա խուրջին.
Նայեք էս մինձ դահլիճին.
Չո՞նի հո՛, հո՞նի հո՛...
Էլ չի՞մ ասի ավել բան,
Թեկուզ փետով ջարթըս տան,
Ծակելու մարքրիտ-մարջան.
Չո՞նի հո՛, հո՞նի հո՛...*

Թարգմ.՝ Չեմրիկ Բախչինյան

Բեսիկիի գրական ժառանգության մեջ ուշագրավ է նաև «Ասպինձայի համար» պոեմը, որտեղ արտացոլված է Ասպինձայի մոտ 1770 թ. տեղի ունեցած ճակատամարտը: Բավականին ծավալուն գրվածքը ծոնված է վրացական զորքերի հրամանատարներից մեկին՝ Դավիթ Օրբելիանիին, թեև հայտնի է, որ ճակատամարտը ղեկավարել է Չերակլ Երկրորդը և տարել փայլուն հաղթանակ, բայց հեղինակը մեծարում է իր ընտրյալին.

*Սի՛րտ, ինձ ո՛ւժ տուր, որ գովերգեմ
մեզ հաղթանակ պարզևողին...*

*Օ՛, դո՛ւ, որ մերթ մարդ ես մի պարզ,
մերթ թռչուն ես ու մերթ հերոս,
Որպես բազե համկարծահաս
դու խրվեցի՜ր նրանց կողին,
խորտակեցիր շարքերն ամեն՝
արյան ծովեր հեղեղելով:*

Բեսիկին զգալի ազդեցություն է թողել իր ժամանակի և XIX դարի առաջին կեսի վրաց բանաստեղծների վրա, ունեցել է հետևորդներ: Նա ազգային տաղաչափական համակարգը թարմացնելու փորձ է արել՝ ստեղծելով նոր տեսակ, որ կոչվում է բ ե ս ի կ ու ը ի. դա տասնչորս-վանկանի տող է:

* * *

Ամփոփելով վրաց հին գրականության մասին ասվածը՝ նշենք, որ XVI-XVIII դդ. բանաստեղծները, լայնացնելով գրականության թեմատիկան, անդրադառնում են նաև կենսական հարցերի, շոշափում են սոցիալական մոտիվներ, փորձ են անում գրականության խրթին, արհեստական լեզուն մոտեցնել խոսակցականին, բազմազան են դարձնում ժանրերն ու տեսակները:



ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ

1800-1830-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

XIX դարի արշալույսին վրաց ժողովրդի կյանքում տեղի է ունենում նշանակալից իրադարձություն. Ալեքսանդր Առաջինի մանիֆեստի (1801 թ. սեպտեմբերի 12) համաձայն Արևելյան Վրաստանը միավորվում է Ռուսաստանին՝ դառնալով նրա մարզերից մեկը:

Ռուսաստանի հովանու տակ մտնելու գաղափարն սկիզբ է առնում ավելի վաղ ժամանակներից, բայց կենաց խնդիր է դառնում XVIII դարի վերջին քառորդին: Այդ տասնամյակներում երկրի կացությունն ավելի է բարդանում. ներֆեոդալական երկպառակություններին զուգարվում են թուրքիայի, Պարսկաստանի հաճախակի հարձակումները, լեռնական ցեղերի ասպատակություններն ու գերեվարությունները: Ժողովրդի առաջ ծառանում է բախտորոշ հարց. ապավինել թուրքիայի՞ն, Պարսկաստանի՞ն, թե՞ մտնել Ռուսաստանի հովանու տակ: Եվ Յերակլ Երկրորդը բանակցություններ է սկսում ցարական կառավարության հետ. 1783 թ. հուլիսի 24-ին Յուսիսային Կովկասի Գեորգիևսկ քաղաքում երկու երկրների միջև կնքվում է «Բարեկամության պայմանագիր»: Ըստ այդ դաշնագրի Արևելյան Վրաստանը միավորվում է Ռուսաստանին՝ պահպանելով անկախությունն ու գահը ժառանգաբար փոխանցելու իրավունքը: Դիմելով այդ քայլին՝ Յերակլը նպատակ ուներ հանձնի հզոր դաշնակցի ժողովրդին ազատել մասնատման, տեղահանության ու ոչնչացման վտանգից: Իր հերթին ռուսաց կայսրը, Անդրկովկասի հովանավորի դերն ստանձնելով, ընդարձակում է տերության սահմանները, հնարավորություն է ստանում արդյունավետ պայքարել Պարսկաստանի ու թուրքիայի դեմ:

Վրաց արքայի վճռական քայլը զայրացնում է թե՛ շահին և թե՛ սուլթանին, որոնք սպառնալից վերջնագրեր են հղում Յերակլին՝ պահանջելով կապերը խզել հյուսիսային հարևանից և կատարել ենթակայի իր պարտականությունները: Բազմափորձ ու հեռատես Յերակլը չի զիջում: Աղա-Մահմադ խանը 1795 թ. սեպտեմբերին հարձակվում է Վրաստանի վրա, ավերում Թիֆլիսը և գերեվարում տասնյակ հազարավոր

քրիստոնյա բնակիչների: Շահի վայրագությունից հետո Ռուսաստանի հովանու տակ մտնելը պահանջում է շուտափույթ և անպայման դրական լուծում: Եվ ահա հերթական բանակցություններից հետո հրապարակվում է վերոհիշյալ հրովարտակը:

Այդ վճիռը դժկամորեն են ընդունում վրաց գահաժառանգներն ու իշխանական դասը: Վրաց ազնվականությունն զգում է, որ նորագույն պայմաններում ընդմիշտ կորցնում է քաղաքական արտոնությունը: Այն վերականգնելու նպատակով դեռևս 1802 և 1804 թթ. փորձում են ապստամբել, բայց ապարդյուն: Նման մի փորձ էլ արվում է 1832 թ.: Խմբի կազմում էին Ալեքսանդր Օրբելիանին, Սոլոմոն Դոդաշվիլին, Էլիզբար Էրիսթավին, Ալեքսանդր Ճավճավաձեն, Գեորգի Էրիսթավին, Վախթանգ Օրբելիանին, Սոլոմոն Ռազմաձեն և ուրիշներ: Նրանց նպատակն էր վերականգնել թագավորական իշխանությունը և գահ բարձրացնել Ալեքսանդրին՝ Յերակլի որդուն: Դավադրությունը բացահայտվում է, և տասնհինգ ակտիվ մասնակիցներ աքսորվում են կայսրության գանազան վայրեր:

Ժամանակի հետ, սակայն, թե՛ ժողովուրդը, թե՛ բոլոր խավերը համակերպվում են և ընդունում Ռուսաստանին միավորվելու անհրաժեշտությունը: Համոզվեցին, որ այդ քայլը մեծ նշանակություն ունեցավ երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար: Ավելին՝ ժողովուրդը փրկվեց ներֆեոդալական կռիվներից, զավթիչների ասպատակություններից, գերեվարումներից ու ստրկացման սպառնալիքից:

Վրաստանի և Ռուսաստանի միջև կայուն հարաբերություններ ստեղծվելուց հետո վրաց մտավորականները ծանոթանում են ռուսական ու եվրոպական գիտությանը, զրականությանն ու արվեստին, ձեռնամուխ են լինում ազգային ստեղծմանը: XIX դ. առաջին կեսին հիմնադրվում են պարբերականներ, ուսումնական հաստատություններ, գործում են մի շարք սալոններ, կազմակերպվում են ընտանեկան երեկույթներ ու ներկայացումներ, նոր ուղի է դուրս գալիս գեղարվեստական զրականությունը:

1802 թ. Թիֆլիսում հիմնադրվում է երկամյա կրթօջախ, 1804-ին, 1817-ին, 1827-ին՝ ազնվականական ուսումնարաններ, ապա՝ հոգևոր սեմինարիա, որը 1830-ին ընդարձակվում և վերածվում է գիմնազիայի: Հետագա տարիներին բացվում են տղաների և օրիորդաց պանսիոններ, ռազմական հաստատություններ, որոնց շրջանավարտներից շատերը բարձրագույն կրթություն էին ստանում Ռուսաստանում:

Վրաց մշակույթի գործիչները տպագրական գործի զարգացման համար հոգացել են դեռևս XVIII դարի սկզբից: 1709 թ. Թիֆլիսում հիմնադրվում է տպարան, որտեղ 1712 թ. լույս է տեսնում Ռուսթավելու «Ընծենավորը»: Լրատվական առաջին միջոցը՝ «Սաքարթվելոս գագեթի» («Վրաստանի թերթ») երևան է գալիս 1819 թ. մարտի 8-ին: Շաբաթաթերթը հրատարակում էր Կովկասի զինվորական առանձին կորպուսի գլխավոր շտաբը: Նրանում զետեղվում էին պաշտոնական հաղորդագրություններ ու որոշումներ, «Գերագույն հրամաններ», «Լուրեր օտար երկրներից», թարգմանաբար՝ գեղարվեստական երկեր, այլ նյութեր: Դադարել է 1822 թ.:

1828 թ. հուլիսի 4-ին հիմնադրվում է «Թիֆլիսի տեղեկագիրը», որտեղ տպագրվում են պատերազմական գործողություններին վերաբերող ակնարկներ, տեղեկություններ, հաղորդագրություններ, հրամանագրեր և այլն: Դա պատճենն էր “Тифлисские ведомости” շաբաթաթերթի, որի վրացերեն տարբերակը խմբագրում էր Սոլունոն Դոդաշվիլին (1805-1832): Այս հայրենասեր գործչի ջանքերով լույս է տեսնում «Թիֆլիսի տեղեկագրի գրական հավելված» ազգային առաջին պարբերականը: Պարունակում էր 24 էջ և ուներ հետևյալ բաժինները՝ արձակ, չափածո, քննադատություն, պատմություն: Լուսաբանվում էին Վրաստանի պատմության, մշակույթի, կրթության կնճռոտ հարցերը, տեղ էր հատկացնում թարգմանական այնպիսի երկերի, որոնք կարող էին բարերար ազդեցություն ունենալ ազգային գրականության վրա:

1832 թ. «Թիֆլիսի տեղեկագիրը» և գրական հավելվածը փակվում են, և մոտ քսան տարի վրաց լեզվով որևէ թերթ կամ ամսագիր չի հրատարակվում: Մամուլ չլինելու պատճառով երիտասարդները, մշակույթի ու գրականության երկրպագուները արվեստի նկատմամբ իրենց պահանջը բավարարում էին ընտանեկան հավաքույթներում ու սալոններում: Մեծ համբավ ունեին գեներալ Թեոդոր Ախվերդյովի (Չախվերդյան), Ալեքսանդր ճավճավաձեի, Ռոման Բագրատիոնիի, Մանանա Օրբելիանիի սալոնները:

Եթե ոչ ամենաառաջինը, ապա առնվազն առաջիններից էին Թեոդոր և Պրասկովյա Չախվերդյանները, ովքեր արդեն XIX դարի 10-ական թթ. Թիֆլիսում ստեղծում են եվրոպական տիպի գրական սալոն: Թեոդոր Եսայի Չախվերդյանը (1773-1820) ռուսական բանակի գեներալ էր, Վրաստանի կառավարիչ (1808-1814), ապա և վրացական առանձին կորպուսի հրետանու պետ (1816-ից): Բնակվելով հայահոծ Սուլուակ թաղամասում՝ երիտասարդ զորականն իր տունը դարձնում է գրողների,

նկարիչների, երաժիշտների, գինվորականների, դիվանագետների հավաքատեղի: Կազմակերպվում են ընթերցումներ, թատերական խաղեր, տոնախմբություններ և, իհարկե, դիմակահանդես-պարահանդեսներ: Թիֆլիսաբնակ գրողներից ու արվեստագետներից բացի երեկույթներին հաճախում են նաև Ռուսաստանից և եվրոպական երկրներից ժամանած կամ «Տաք Սիրիո» աքսորված մտավորականներ:

Գեներալի մահից հետո սալոնի գործունեությունը շարունակում է կինը՝ Պրասկովյա Նիկոլայի Զախվերոյանը (օրիորդական ազգանունը՝ Արսենևա)՝ «պատվարժան, հիանալու չափ խելացի, բարձրակիր» մի անձնավորություն, որ չափազանց մեծ սեր ունենալով գրականության, «գիտելիքների ու արվեստների հանդեպ, աչքի էր ընկնում նաև սիրալիր հյուրընկալությամբ»:

Թիֆլիսում գտնվելու միջոցին սալոնի մշտական հյուրն է եղել Ալեքսանդր Գրիբոյեդովը: Անվանի դրամատուրգն ու դիվանագետը այդ սալոնում է ծանոթանում իր ապագա կնոջ՝ Նինո Ճավճավաձեի հետ: Զախվերոյանների փառահեղ ապարանքը 1810-1820-ական թթ. եղել է «Թիֆլիսի ամբողջ բարձրակիր հասարակության կենտրոնավայրը»¹:

Զանրահայտ էր վրացական ռոմանտիզմի նախակարապետ Ալ. Ճավճավաձեի սալոնը, որ 1820-1830-ական թվականներին դարձել էր Անդրկովկասի մտավորականության մշակութային կենտրոնատեղին: Նրա հաճախակի հյուրերն էին Ալ. Գրիբոյեդովն ու Կյուլեսլեբեկերը, Պոլոնսկին ու Վլադիմիր Սոլոգուբը, Լերմոնտովն ու Գրիգորի Գագարինը, Գեորգի Էրիսթավին ու Գրիգոլ Օրբելիանին, Վախթանգ Օրբելիանին ու Նիկոլոզ Բարաթաշվիլին: Վերջինս իր «Քարթլի բախտը» պոեմը առաջին անգամ կարդացել է հենց այդ սալոնում ու արժանացել ունկնդիրների հիացմունքին: Նշանակալից է Ճավճավաձեների ծառայությունը ժամանակի վրաց մտավորականներին առաջադիմական գաղափարներով տոգորելու գործում: Նրանց հարկը այն խաչմերուկն էր, որտեղ միահյուսվում էին վրացական, ռուսական, արևելյան ու եվրոպական մշակույթները հանձինս այնտեղ հավաքվող գրողների, երաժիշտների, նկարիչների ու ճանապարհորդների: Զանդիպումները նպաստում էին երիտասարդների հայացքների ձևավորմանը, ստեղծագործական ունակությունների բացահայտմանն ու գեղարվեստական ճաշակի ձևավորմանը: Զավաքներին տոն տվողը, անշուշտ, Ճավճավաձեի ընտանիքն էր. հայրը՝ բանաստեղծ Գեներալը, վրաց հասարակության մեջ հարգանք վայելող մի անձնավորություն՝ կենսախինդ, հյու-

¹ **И. Л. Андроников**, *Лермонтов в Тбилиси в 1837 году*, Թբիլիսի, 1958, էջ 56-58:

րասեր ու արվեստի ջերմեռանդ երկրպագու, դուստրերը՝ Նինոն և Եկատերինան, բարձրաշխարհիկ կրթությամբ, ասմունքողներ ու երգ-պարի ամնրցելի կատարողներ: Շնորհաշատ քույրերի գեղեցկությամբ ոգեշնչված՝ շատ բանաստեղծներ ստեղծում են սիրային քնարերգության հիանալի նմուշներ:

Նման հարաբերությունները եթե մի կողմից նպաստում են վրաց գրականության, հասարակական մտքի և մշակույթի տարբեր ոլորտների զարթոնքին, ապա մյուս կողմից՝ ժանոթությունը Կովկասի ժողովուրդների կյանքին ու զարմանահրաշ բնությանը, ստեղծագործական ներշնչանքի ու մտահղացումների աղբյուր է դառնում այլազգի գրողների ու արվեստագետների համար: Սա զգացել է Վ. Բելինսկին, որը Լերմոնտովի երկերի վերլուծության առիթով գրել է. «Տարօրինակ բան. Կովկասին կարծես վիճարկված է լինել մեր տաղանդների օրրանը, նրանց մուսայի ոգեշնչողն ու սնուցողը, նրանց բանաստեղծական հայրենիքը»¹:

Ա. Պուշկինին և Մ. Լերմոնտովին համարելով Կովկասի որդեգիրներ՝ Չովի. Թումանյանը մշում է. «Հազար հազարավոր մեծ մարդիկ են եկել անցել Կովկասից, բայց նրանք բոլորը Կովկասի համար եղել են անցվորներ, ախոյաններ, բարեկամներ կամ հյուրեր, իսկ որդեգիր՝ նա շատ քիչ է ունեցել:

Եղ երջանիկ քչերից են եղել երկու ռուս մեծ բանաստեղծները՝ Պուշկին և Լերմոնտով... Երբ նրանք, իրենց ժամանակի ռուսական կյանքի ու իրենց հիասթափության անապատից քշված, հալածված, դիմում էին դեպի հարավ՝ նրանց խոցված ու զազազած սրտերին հեռվից, ամպերի միջից առողջ ու պայծառ ժպտացին Կովկասի ծյունափառ գազաթները՝ հոյակապ - ցնորքների նման, նրանք էլ իրենց հոգու ամբողջ ուժով ու աշխույժով փաթաթվեցին Կովկասին, որդեգրվեցին Կովկասին ու ախպերացան մեզ՝ կովկասցիներին»²:

Նույն միտքն է արտահայտում Իլյա Էրենբուրգը. «Ռուսական պոեզիան դժվար է պատկերացնել առանց Կովկասի. այնտեղ նա կայունացրել է հոգին, այնտեղ էր նրա թռիչքի հրապարակը»³:

XIX դարի առաջին կեսին Վրաստանում կարճ կամ երկար ժամանակով եղել են Ա. Գրիբոյեդովը, Ա. Պուշկինը, Մ. Լերմոնտովը, Ա. Շիշովը, Յա. Պոլոնսկին, Վ. Նարեժնին, Ա. Բեստուժև-Մարլինսկին, Ն. Ռաևսկին, Վ. Կյուխելբեկերը, Ա. Օդոևսկին:

¹ В. Г. Беллинский, Полное собрание сочинений, т. 1, Углицы, 1948, էջ 692:

² Չովի. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 149-152:

³ "Литературная Грузия", Թբիլիսի, 1961, թիվ 1, էջ 66:

Նարեժնին, ծառայելով նահանգապետի գրասենյակում, ականատեսն էր այն խարդավանքների ու անմարդկային արարքների, որ ցարական չինովնիկներն ու տեղացի ազնավուրները ցուցաբերում էին հատկապես գյուղացիության նկատմամբ: Այդ պարագան փաստացի նյութ էր տալիս գրողին՝ իր երկերում խստագույնս քննադատելու գրասենյակային ծառայողներին, ավատատերերին ու թավաղներին:

1820-ական թվականներին պաշտոնի բերումով հաճախ է թիֆլիս այցելում Ա. Գրիբոյեդովը, որը հետագայում, ինչպես ասվեց վերևում, ամուսնանում է բանաստեղծ Ալեքսանդր ճավճավաձեի ավագ դստեր՝ Նինոյի հետ: Ա. Գրիբոյեդովի հետ ճավճավաձեների սալոն է այցելում նաև Կյուխելբեկերը, որի պոեզիայում զգալի տեղ է գրավում կովկասյան թեմատիկան:

Թիֆլիսի ռուս մտավորականներն ու գործիչները, ինչպես նաև հայ և վրաց հասարակությունը, 1829 թ. ջերմորեն են դիմավորում Պուշկինին, որն իր գրառումներում առանձնակի գոհունակությամբ է խոսում այդ քաղաքում անցկացրած օրերի մասին:

1837 թ. Վրաստան են գալիս Ա. Օդոևսկին և Մ. Լերմոնտովը: Հանրահայտ են կովկասյան թեմաներով նրանց երկերը:

* * *

Վրաց նոր գրականության սկիզբը նշանավորվում է ռոմանտիզմի երևան գալով, որն իշխում է 30-40-ական թթ. և գոյատևում մինչև 70-80-ական թվականները:

Վրացական ռոմանտիզմը, ինչպես յուրաքանչյուր ազգային ռոմանտիզմ, ունի իր առանձնահատկությունները:

Եվրոպական և ռուս գրականության մեջ ռոմանտիզմն սկիզբ է առել 1789-1794 թթ. ֆրանսիական բուրժուական հեղափոխության հաղթանակից հետո: Այլ կերպ՝ եվրոպական ռոմանտիզմը հետևանք էր ֆեոդալական և բուրժուական հասարակարգերի գոտեմարտի:

Պատկերն այլ էր վրաց իրականության մեջ: XIX դարի առաջին տասնամյակում բուրժուական հարաբերությունները Վրաստանում այնպիսի ուժ չէին ներկայացնում, որ բախվեին ավատական կարգերին. քաղաքական կյանքը դեռևս միագիծ էր: Յուրօրինակ էր կացությունը նաև գրականության մեջ: Եթե եվրոպական ռոմանտիզմն իր առաջադրած գաղափարներն ու գեղարվեստական դրույթներն ամրապնդելու համար պայքարում էր կլասիցիզմի որոշ սկզբունքների դեմ՝ հենվելով սենտիմենտալիզմի լավագույն ավանդների վրա, վրացական ռոման-

տիզմը հարկադրված չէր պայքարելու կամ ապավինելու որևէ ուղղության, քանզի այդ հոսանքները վրաց գրականության մեջ բավականին թույլ էին և աննշան: Ավելին՝ վրացական ռոմանտիզմն սկզբնավորող Ալ. Ճավճավաձեն, հաղորդակցվելով եվրոպական ու ռուսական ռոմանտիզմին, ունենալով տեսական պատրաստվածություն, այդուհանդերձ, ինչպես վկայում է Իլիա Ճավճավաձեն, «վրացական նորագույն բանաստեղծությունը չկարողացավ ազատել հին ձևերի ավանդներից»¹:

Դա չհաջողվեց նաև մյուս բանաստեղծներին (Գր. Օրբելիանի, Վ. Օրբելիանի, Ալ. Օրբելիանի, Մ. Թումանով, Գ. Ռչեուլիշվիլի):

Այսպես՝ Վախթանգ Օրբելիանին (1812-1890), «Երկու շենք» բանաստեղծության մեջ պատկերում է հետևյալը. ամեն առավոտ երկու շենք է տեսնում. մեկը նորակառույց է՝ նորահարսի պես պճմված, բոլորեքյան անուշաբույր ծաղիկներ: Այդ շենքում աղմուկ է, շարժում, ուրախություն, կյանքն է փթթում ու ծփում, բայց նա աղջկա մման թույլ է ու տկար: Մյուսը գեղեցիկ պալատ է՝ երկնամուխ աշտարակներով, անառիկ ամրոցներով ու եկեղեցիով: Ու թեև դիտողի աչքերը չեն շոյում սրա ավերակները, բայց ծանր քարի պես ընկնում են սրտին, արցունք հեղում աչքերից: Ականատեսը երանությամբ է հիշում նախնյաց փառքն ու հզորությունը: Նկարագրելով մեկի՝ ավելի քան շքեղ, մյուսի ավելի քան սրտաճմլիկ պատկերը՝ բանաստեղծը եզրակացնում է.

*Առաջինին հար մնալու մեծ ուժն ո՞վ է տվել.
Վաթսուն տարվա անձրև-կարկուտ՝ նա կդառնա ավեր:
Իսկ երկրորդը՝ այն ծերունին, յոթը հարյուր տարեկան,
Չի վախենում ժամանակից, մորիկից, որ դեռ կգան:
Թեև ցնցված է թշամուց, վիրավորված կյանքում,
Գերոսների ձեռով շինված՝ հերոսաբար կանգուն,
Ու երբևէ եթե քանդվեն պատերն անգամ նրա,
Միշտ կմնա փլատակը այս աշխարհի վրա...*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

Ֆեոդալական ազնվականության միջավայրից ելած այս բանաստեղծները հաշվի չէին առնում հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունները. ներկայից հիասթափված՝ ժխտում էին ապագան, երազում ու փառաբանում անցյալը: Այս ամենով հանդերձ՝ ազգային ոգու, ազգային հոգեբանության դրսևորման տեսակետից վրացա-

¹ Ի. Ճավճավաձե, Երկեր, հ. 2, Թբիլիսի, 1941, էջ 82 (վրաց.):

կան ռոմանտիզմը ինչ-որ չափով նրանց գրչի տակ դարձավ հետաքրքիր:

Ժանրային առումով Վրաստանում զարգացավ քնարերգությունը: Թեև Գր. Օրբելիանին և Գ. Ռչեուլիշվիլին ուժերը փորձեցին նաև արձակի ժանրում, բայց նրանց գործերը վրացական ռոմանտիզմի պատմության մեջ մնացին իբրև գրական փաստեր:





Ալ. Ճավճավաձեի բանաստեղծությունները, ժամանակակիցների վկայությամբ, տարածվել են ժողովրդի մեջ, վերածվել երգերի: Նրա մահվան առիթով գրված հոդվածներից մեկում կարդում ենք. «Այն երգերը, որ շատ թե քիչ հայտնի են յուրաքանչյուր վրացու, դրանց համարյա երկու երրորդը և այն էլ լավագույնները՝ իրենց վեհացնող զգացումներով ու խոհերով, պատկանում են Ալ. Ճավճավաձեի գրչին»¹:

Ալ. Ճավճավաձեն ծնվել է 1786 թ. Պետերբուրգում (կնքամայրն էր Եկատերինա II կայսրուհին): Նրա դաստիարակությամբ զբաղվել է մորեղբայրը՝ դրամատուրգ և ճանապարհորդ Գեորգի

Ավալիշվիլին: Ապագա բանաստեղծը ապրել է Պետերբուրգի և Թիֆլիսի բարձրաշխարհիկ միջավայրում: Իննամյա հասակում նրան հանձնում են տեղի լավագույն պանսիոններից մեկը, որտեղ սովորում է չորս տարի: 1799 թ. Ճավճավաձեների ընտանիքը հատուկ հանձնարարությամբ վերադառնում է Թիֆլիս (Ալեքսանդրի հայրը՝ Գարսևան Ճավճավաձեն, 1784-1801 թթ. Վրաստանի դեսպանն էր ռուսաց արքունիքում):

1804 թ. 18-ամյա պատանին միանում է ցարական կառավարության դեմ Սթիուլեթում բռնկված ապստամբությանը, որ գլխավորում էր թագաժառանգ Փարնավազ Բատոնիշվիլին: Ապստամբությունը ճնշվում է, և Ալեքսանդրը «անմիտ» քայլի համար երեք տարով աքսորվում է Տամբով: Բայց շուտով ներման է արժանանում և ընդունվում Պետերբուրգի պաժերի կորպուս, որն ավարտում է փոխպորուչիկի կոչումով: Ուսման տարիներին կայունանում են նրա գեղագիտական հայացքները: Սովորում է եվրոպական և արևելյան մի քանի լեզու (գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն, թուրքերեն), ծանոթանում է համաշխարհային

¹ "Кавказ", 1846, N 45.

գրականության լավագույն էջերին, կատարում չափածո թարգմանություններ, գրում բանաստեղծություններ:

1811 թ. Ալ. Ճավճավաձեն նշանակվում է Թիֆլիսի նահանգապետ գեներալ Պաուլիչի համհարզ, իսկ հաջորդ տարին ինքն է մասնակցում Կախեթում բռնկված հակակառավարական ապստամբության ճնշմանը: 1812 թ. մեկնում է գործող բանակ: 1814 թ. վերադառնում է Թիֆլիս: Երեք տարի անց, ստանալով գնդապետի կոչում, ծառայության է նշանակվում Դրագունյան գնդում, որ տեղաբաշխված էր իր կալվածքին մոտ՝ Ծինանդալում: 1827 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գեներալ-մայոր ճավճավաձեն մասնակցում է ռուս-պարսկական պատերազմին. գրավում է Թավրիզը: 1828 թ. փետրվարին նշանակվում է նորաստեղծ Հայկական մարզի մարզային վարչության պետ (1828 թ. փետրվար - 1829 թ. մայիս): Նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մասնակցում է ռուս-թուրքական պատերազմին: Ռուսական բանակի առանձին զորամասի գլուխ կանգնած և հայ կամավորական ու աշխարհագորային ջոկատների աջակցությամբ գրավում է Բայազետը:

Ժամանակի աղբյուրները հավաստում են Ալ. Ճավճավաձեի հայամետ գործունեության մասին: Այսպես, տեղեկանալով, որ Էրզրումի սերասկյարը (կայազորի պետ) հրամայել է քաղաքի հայ բնակչությանը քշել Անատոլիայի խորքերը՝ զրկելու ռուսական զորքերին աջակցելու հնարավորությունից, ճավճավաձեն օգնության է հասնում և հայերին փրկում տեղահանությունից ու սպանդից: Կատարել է նաև դիվանագիտական հանձնարարություններ. հայ գործիչների և իր փեսայի՝ Ա. Գրիբոյեդովի հետ կազմակերպել է հայերի գաղթը Հայաստան, Ղարաբաղ և Վրաստան: Ուշադրության արժանի է նաև 1828 թ. ամռան վերջերին գեներալի ցուցաբերած հոգատարությունը: Երբ ժամտախտ է տարածվում տեղի բնակչության ու զորքի մեջ, նա, «լավ ճանաչելով տեղացի բնակչաց բնավորությունը, աշխատեց ներգործել նախ և առաջ ժողովրդի բարոյական և հոգեկան ուժին վրա և դորանով ավելի լավ հասավ յուր նպատակին, քան թե քարանտինական խիստ հսկողությամբ»¹:

Նա գյուղացիներին խորհուրդներով օգնում է գյուղատնտեսական որոշ կուլտուրաների մշակման գործում:

Ժողովրդի վիճակը, քաղաքների ու գյուղերի սրտաճմլիկ տեսարանները, արյան մեջ թաթախված հայկական բնաշխարհը խոր տպավորություն են թողնում բանաստեղծի վրա: Ծանր խոհերի տեղիք է տալիս հատկապես Սևանա լիճը, որի հմայքն անջինջ մնաց նրա հո-

¹ Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Թիֆլիս, 1894, մաս Ա, էջ 409:

գում, և տարիներ անց գրեց «Գոգչա» հանրահայտ բանաստեղծությունը:

1833 թ. հունվարի վերջին Ալ. Ճավճավաձեն ձերբակալվում է գաղտնի կազմակերպությանը մասնակցելու մեղադրանքով: Թեև ինքը և խմբակիցները ժխտում էին, բայց փաստերն ավելի խոսում էին, և բանաստեղծը 1834 թ. հունվարին չորս տարով քստորվում է Տամբով: Ամիսներ անց Նիկոլայ Առաջինը ներում է շնորհում և նշանակում Անդրկովկասի կառավարչության խորհրդի անդամ:

1841 թ. ճավճավաձենին շնորհվում է գեներալ-լեյտենանտի կոչում, որից հետո նշանակվում է Անդրկովկասի փոստային բաժանմունքի պետ: Բանաստեղծի կյանքի թելը կտրվում է 1846 թ. նոյեմբերի 6-ին:

* * *

Չափածո երկերում Ալեքսանդր ճավճավաձեն շոշափում է կյանքի ունայնության, ազգային անկախության կորստի, սիրո, սոցիալական անհավասարության հարցեր:

Մարդկային անուրախ կյանքի ճավճավաձեական գնահատական է «Մարդու տարբեր տարիքները» բանաստեղծությունը: Նկատի առնելով կյանքի փուլերը՝ մանկություն, պատանեկություն, երիտասարդական տարիներ և ծերություն՝ հեղինակը խոսում է նրա ապրումների, զգացումների, ձգտումների ու պահանջների մասին և եզրակացնում, որ մարդը ոչ մի տարիքում երջանիկ չէ. գոյության յուրաքանչյուր շրջանում նա ունենում է պահանջ, իղձ, որոնց իրականացումը կապված է տանջանքների ու անհաղթահարելի արգելքների հետ: Ի՞նչ երջանկության մասին է խոսքը, եթե ծնվում է լաց ու կականով, հասունանում անընդհատ հառաչելով, մեռնում արցունքն աչքերին ու ոչնչի չհասած: Երեխան լացով է ծնվում. ասես նախազգում է, որ իրեն սպասում է տխուր, դժվարին ու տառապալից կյանք: Փոքր-ինչ մեծանալուն պես նրան վարժեցնում են գրել-կարդալու մեջ, որ կյանքը ճանաչի: Բայց գիտելիքներ յուրացնելով հանդերձ՝ բեռը չի թեթևանում, ընդհակառակը, հաջորդ փուլում նրա հոգսերն ավելի բազմաբնույթ են դառնում: Այդ տարիքում աչքը սրտին է փոխարինում, սիրտը՝ զգացմունքին: Մարդն իրեն տեսնում է սիրո գերության մեջ. սիրած էակը հմայում է, դարձնում իր կալանավորը. նորանոր վերքեր են բացվում՝ պատճառ դառնալով անքուն գիշերների ու ծանրագույն ապրումների:

*Բազմաճյուղ է ցավն ավելի, երբ հասակ ենք առնում կրկին,
Աչքը սրտի տեղն է բռնում, սիրտը՝ հույզի, սիրտ վերքի:
Մի սիրելի դենք է գալիս և կամքի տեղ սիրտը դնում,
Դարձնում է քեզ կայանավոր, այս ու վախի, վշտի մատնում:*

Հասուն տարիքում էլ ուրախություն չունի. չի գոհանում ձեռք բերածով. ձգտում է փառքի, համբավի, բայց իդծերը մնում են անկատար, և նա դառնում է նախանձ, չար ու քինախնդիր:

Առավել ծանր է ծերության շրջանը: Դառնություններով, հոգսերով ու կսկիծներով անցկացրած տարիները նրան ճկուն են, աղեղում. ամեն ինչ դառնում է ատելի ու անտանելի, զգացմունքները բթանում են, դառնում է ամբարիշտ ու փնթփնթան, ի հայտ են գալիս մահաբեր ախտեր, որ և վերջ են տալիս տառապանքներին՝ մոռացության գիրկն ուղարկելով ամեն ինչ.

*Երբ տարիքի ծանր բեռից կռանում ենք և աղեղվում,
Ձանձրալի ենք դառնում արդեն, և բոլորն են մեզնից նեղվում:
Փոխվում է մեր բնությունը զգացմունքի նվազումով,
Ու լսում ենք. «Ախր՛վ ծնված, հապա՛ մեռիր վայնասունով»:*

Կյանքի ունայնության գաղափարն արտահայտելու համար Ալ. Ճավճավաձեն հակադրում է ներկան ու անցյալը. սին ու գոս համարելով ներկան, մահվան դատապարտելով ապագան՝ նա իդեալականացնում է անցյալը: Մարդը խեղճ է, անզոր, տարաբախտ, մահապարտ, կյանքը՝ դատարկ ու անիմաստ: «Վա՛յ աշխարհին» բանաստեղծությունը նույնպես գրել է երիտասարդական տարիներին: Հակադրվելով իրականությանը՝ Ճավճավաձեն փորձում է ցրել համատարած մշուշը և մեծատունների, իշխանավորների ու բռնակալների հոգում աղքատների ու ճնշվածների նկատմամբ խղճմտանք հարուցել: Վա՛յ աշխարհին, քանզի այն լի է զեղծարարներով, զրպարտիչներով ու չարամիտներով. ազնիվը, բարեգործը հալածվում է, ստահակը, նենգը՝ վարձատրվում.

*Նենգ հոգիները այնտեղ վատին են միշտ դրվատում
Եվ նախանձով տոգորված՝ բարեգործին զրպարտում,
Նրանք, ովքեր արժաթով իրենց տներն են պատում,
Գիտենք՝ ինչպես, եղբայրներ՛ր,
Աղքատներին ճնշելով, թալանելով, գռվելով:*

Նա դատապարտում է անարդարությունը, կամայականությունը, անգթությունը, մարդու շահագործումը, նաև ազգային ճնշման ու ժողովուրդներին ստրկացնելու ամեն արտահայտություն:

Թագավորները հարձակվում են այլ երկրների վրա, ավերում, կողոպտում, հարստանում պարտվածների հաշվին, ոտնահարում ժողովրդի պատիվն ու սրբությունները, ոչնչացնում ու մոխիր դարձնում նրա ստեղծած արժեքները.

*Միանում եմ միմյանց թագավոր ու արքա ժանտ,
Մարդկանց գերի եմ դարձնում այդ գազանները դաժան,
Բռնակալներն եմ միայն հարստանում հարածամ
Եվ աճում եմ ու ծաղկում`
Աղքատներին ճնշելով, թալանելով, զոհելով:*

Բանաստեղծը համոզված է, որ բռնակալն էլ երկար չի տոնում իր հաղթանակը, երկար չի վայելում կողոպուտը, քանզի երևան է գալիս մի ուրիշ թագավոր և նրա գլխին բերում այն չարիքն ու դառնությունները, ինչ ինքը պատճառել է ուրիշներին:

Ալ. Ճավճավաձեն պախարակում է բոլոր նրանց, ովքեր պատրաստ են ուրանալ, դավել, մինչև իսկ սպանել մերձավորներին ու բարեկամներին, միայն թե շահ ձեռք բերեն: Բայց նման երևույթները վերջ կունենան, կամայակությանն ու շահագործմանը կհաջորդեն արդարությունն ու հավասարությունը.

*Դուք, որ տմանկ աղքատին դառնացնում եք ու տանջում,
Լկտիարար նրանից ստրկանալ պահանջում
Եվ հավասար-հաշտ կյանքից լպիրշորեն բարբաջում,
Ո՛չ, չի՛ լինի երբեք`
Աղքատներին ճնշելով, թալանելով, զոհելով:*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

Հրապարակախոսական քնարերգության մեծ ու համարվող այս բանաստեղծությանը ճավճավաձեն ազգային պոեզիա բերեց քաղաքական մոտիվ: Այդպիսիք են նաև «Լսեցեք, ունկնդիրներ» և «Դարձյալ հավերժ իմ ցանկության մասին» ոտանավորները:

Ցարական կառավարությունը դրժում է իր խոստումները, անտեսում «Բարեկամության պայմանագրի» դրույթները: Պաշտոնյաները բռնանում են ժողովրդի կյանքին ու կայքին, ոտնահարում իրավունք-

ներն ու արժանապատվությունը: Այդ ամենին ականատես գործիչները, որ Ռուսաստանի հետ միավորվելու ջատագովներից էին, փոխում են իրենց վերաբերմունքը: Սրանով է բացատրվում զայրույթը, որ բանաստեղծն արտահայտել է «Լսեցե՛ք, ունկնդիրներ» քերթվածքում: Յեղիմակին չի կաշկանդում մինչև իսկ այն փաստը, որ ինքն էլ ազնվական դասից է, նույն կառավարության բարձրաստիճան պաշտոնյա: «Ողջ ազգին արթնացնող» (պրոֆ. Միխեիլ Զանդուկելի) այդ բանաստեղծության մեջ հեղինակը հանդես է գալիս աշխատավորական զանգվածներին շահագործողներից պաշտպանողի դերում:

Ալ. Ճավճավաձեի ստեղծագործությունների մեջ կարևոր տեղ են գրավում հայրենասիրական երգերը: «Ովքեր ցանկանում են» եղերերգում նա հայրենիքը պատկերում է գերության մեջ տառապող սիրած էակի կերպարով: Խոր վշտով համակված քնարական հերոսը հանրությանը հաղորդակից է դարձնում իր ապրումներին: Նա տանջվում է, որ ավեր է տեսնում նրան՝ «ուն մվիրել է իր սիրտն ու հոգին», ուստի պարտքի գիտակցումով արտահայտում է ցարիզմի նկատմամբ իր վերաբերմունքը.

*Շատ ժամապահներ, իբր մեզ պաշտպանելու համար
Գալիս են և բռնանում մեր կամքին.
Վաղը ուրիշները կզան նրանց փոխարինելու,
Օձը, սակայն, կմնա օձ:*

Տողացի թարգմ.

Վրաստանի երբեմնի հզորությունը, նրա «սև ու դառնաղետ» ճակատագիրը՝ ազգային փառքի ու անկախության կորուստն է սգում նաև «Կալանավորից առ կալանավորը» բանաստեղծության մեջ: Գրողի սիրտը կսկծում է, ճմլվում, բայց այդ վիճակից դուրս գալու ուղիներ չի նշմարում, թեև երբեմն ամկայծում են հույսի շողեր. գուցե վրաց ժողովրդի համար բացվե՞ն երանելի օրեր: Եթե անցավոր են փառքը, հզորությունն ու գեղեցկությունը, ապա սև ու խավարչտին օրերն էլ պետք է վերջ ունենան: Ցավալին այն է, որ ինքը չի տեսնելու այդ երջանիկ օրերը.

*Ես այն եմ ողբում դառնորեն՝ վայ թե չհասնեն, չէ,
սիրտ շոյող ժամին, որ գուցե թե լինի:*

Ալ. Ճավճավաձեի՝ հաջողություն վայելող քերթվածքներից է «Օ՛հ, ժամանակներ, ժամանակներ»-ը.

*Օ՛հ, ժամանակներ, որ անուշ եկան
Ու երազի պես զնացին, հանգան,
Իսկ ես նույնն եմ միշտ.
Ես չեմ հետևում ժամանակներին՝
Նույնն եմ միշտ ու միշտ:*

Այն ներարկված է հայրենիքի նկատմամբ խորունկ սիրով: Վրաստանի հեղինակուհի կացությունից հուսահատ է հեղինակը, ուստի հայացքն հառում է երանելի ժամանակներին, որ ընդգծի ներկա կյանքի սնանկությունը: Այդուհանդերձ նրա հույսը ապագան է.

*Չար բախտից այսպես՝ մատնըված դատի՝
Չույսին եմ դիմում, որ ինձ ազատի.
Նույնն եմ միշտ ու միշտ:*

Բանաստեղծը հավատարմորեն ծառայում է հայրենիքին.

*Մեկ անգամ մեկին ես նվիրվեցի,
Չլու-հպատակ նրան տրվեցի.
Նույն եմ միշտ ու միշտ:*

Չայրենիքի հանդեպ սերն այնքան խորունկ ու անկեղծ է, որ ոչինչ չի կարող մոռացնել՝ ո՛չ աքսորը, ո՛չ բանտը, ո՛չ մահը: Որտեղ էլ լինի, միշտ հայրենի երկրի հետ է՝ անբաժան ու անդալաճան.

*Կալանավորին դատեցե՞ք. ի՞նչ վիշտ,
Որտեղ էլ լինեմ՝ նրա հետ եմ միշտ.
Նույն եմ միշտ ու միշտ:
Ես չեմ հետևում ժամանակներին.
Նույն եմ միշտ ու միշտ:*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

«Օ՛հ, ժամանակներ, ժամանակներ»-ը մեծ ազդեցություն է թողել XIX դարի վրաց հայրենասիրական քնարերգության վրա:

Ալ. ճավճավաձեի լավագույն քերթվածքներից է նաև «Գոգչա»-ն՝ գրված 1841 թ.:

*Գոգչան մի լիճ է՝ լայն ու ընդարձակ, աղմուկով ծովի,
Երբ ալիքներն են ճերմակ փրփուրով ափերին ցրվում:*

**Երբեմն ջինջ է բյուրեղի նման. երկինքը ծավի
Ու սեզ լեռների կանաչն է այնտեղ պարզ արտացոլվում:**

Երբեմնի հզոր ու փառավոր քաղաքը վերածվել է անապատի: Ծանր ու սրտակեղեք պատկերները ծնունդ են հոգեցունց մտքեր. ինչ եղել է, չկա, ինչ կա, այլևս չի լինի. ամեն ինչ անցավոր է, ժամանակավրեպ, անկայուն ու հավերժից դուրս, ամեն ինչ պատված է անթափանց խավարով: Օազիսներով ու ծաղկառատ պարտեզներով քաղաքից մնացել են մամռակալած ավերակներ.

***Սակայն ափերը սևով են պատվում փլատակների՝
Չայոց երբեմնի պես-պես շենքերի սգո փշրանքով,
Որտեղ ծաղկում էր կյանքը փառավոր մեծ քաղաքների,
Իսկ այսօր՝ միայն բվեր ու ավեր երկրների ներքո:***

Քնության հրաշագեղ անկյունը նրան հուշում է «գոհ ու բախտավոր», «հպարտ ու անպարտ» անցյալը: Անողոք ժամանակը երկրի երեսից վերացրել է փառահեղ քաղաքի պալատներն ու տաճարները, արհեստանոցներն ու այգեստանները, վաճառատներն ու մարզական հրապարակները: Ժամանակի դաժան ձեռքը չի խնայել անգամ գերերկրային գեղեցկությունները.

***Եվ քանի՜ լուսին՝ նայելով նրանց բարձունքից իր ջինջ,
Իր քիչ առաջվա հպարտությունն է ամպերում թաղել,
Բայց ի՞նչ... գերանդին գոռ ժամանակի չի թողել ոչինչ,
Եվ գերերկրային գեղեցկությունն էլ, դա՛ էլ է քաղել...***

Թարգմ.՝ Պարույր Սևակ

* * *

Նիկոլայ Առաջինի պատվերով և հատուկ նրա համար գրած «Չամառոտ ակնարկ Վրաստանի պատմության և նրա կացությունը 1801-1831 թթ.» աշխատության մեջ ճավճավաձեն զարգացնում է իր երկերում արտահայտած գաղափարները: Քննության առնելով երկրի առաջընթացը՝ նշում է, որ ճիշտ էին Յերակլ և Գեորգի XII արքաները, ովքեր ամեն ջանք գործադրեցին Ռուսաստանի հետ միավորվելու համար: Այդ քայլով երկիրն ազատվեց թշնամիների հարձակումներից ու ավերումներից, ժողովուրդը՝ ներֆեոդալական երկպառակություններից:

«Գեորգի թագավորը համոզվեց, որ անկախությունն անհնար է պաշտպանել առանց արտաքին ուժի աջակցության,- գրում է ճավճավաձեն:- Նպատակ ունենալով պահպանել իր ժողովրդի կյանքն ու հավատը՝ Գեորգիի համար դժվար չէր որոշել, թե հարևան պետություններից որ մեկին պետք էր վստահել ժողովրդի ապագան: Նա ընտրեց Ռուսաստանը՝ ծանոթ լինելով վրացիների՝ դեպի այդ երկիրն ունեցած վաղեմի ձգտումին: Եվ չսխալվեց ընտրության մեջ: Նրա որոշումը համաժողովրդական տոնախմբությամբ ընդունվեց»¹:

Վրաց ժողովուրդը,- գրում է հեղինակը,- բազմիցս դիմակայել է օտար զավթիչներին, կյանքի գնով պաշտպանել իր հողն ու ջուրը, տունն ու դուռը, իր մայրենին ու հավատը. երբեք չի ընկճվել, գլուխ չի խոնարհել թշնամու առաջ. զենքը ձեռքին վարել է, ցանել ու հնձել, կառուցել ամրոցներ ու պալատներ, քաղաքներ ու շենքեր, որոնք, սակայն, քարուքանդ են եղել, անհետացել երկրի երեսից:

«Ակնարկներ»-ում, ինչպես նաև 1832 թ. դեպքերից հետո գրած բանաստեղծություններում հավասար ուժով են հնչում դժգոհության ու իրադրության հետ համակերպվելու ակորդները: Դա ակնհայտ է «Կովկաս»-ում, որ ասես «Ակնարկներ»-ի չափածո ամփոփումը լինի:

Հանձին Կովկասի հարուստ ու բազմերանգ բնապատկերի՝ ճավճավաձեն այլաբանորեն խոսում է դարերի խորքից եկող, բայց այժմ կործանվող ժողովրդի հերոսական անցյալի մասին: Կովկասիոնի երանգավառ լանջին գամված է մարդկանց կրակ պարզևող Պրոմեթեոսը.

***Հենց այստեղ է լեռն այն սեզ, որ Ջևահգ նզովված,
Սիրտը տված ցիներին՝ Պրոմեթեոսն է գամված:***

Պատժված Պրոմեթեոսի ողբերգական ճակատագրի մեջ հեղինակը տեսնում է նաև Կովկասի բախտը: Ազգային վշտի զգացումով են ներարկված բանաստեղծության հետևյալ տողերը.

***Եվ զորքերը հյուսիսի ժայռերի գիրկն են թափվում,
Անհունից ու բարձունքից նրանք չեն խուսափում:
Ու քար տաշող պողպատներ՝ հիմա գտած հազար տեր,
Կայծ ու կրակ հարուցող արհեստական բյուր շանթեր
Հատում, պայթում, շանթում են, Կովկասը նվաճող
Արծազանքով է մատնում իր վերքերը արմատոր:***

¹ Ալ. ճավճավաձեն, Երկեր, Թբիլիսի, 1986, էջ 210 (վրաց.):

Հեղինակը գնահատում է նաև իր երկրի նոր իրավիճակը: Նա լավ գիտե Ռուսաստանի հետ բարեկամանալու նշանակությունը. համոզված է, որ ռուս առաջադեմ հասարկության օգնությամբ միայն Վրաստանը փրկվեց թուրք-պարսկական հարատևող խավարից: Այս միտքը նա հաստատում է «Կովկասի» վերջին տողերում.

*Բացվեց ճամփան. իրերցու սրտում ծագեց հույս մի մեծ,
Որ այստեղից կմտնի լուսավորումն իրենց մեջ:*

Հիացմունք է պատճառում «լեռների վրա լեռներ կրող» աժդահա Կովկասի հարուստ ու բազմերանգ համայնապատկերը: «Ոմանց ծնող», «ոմանց կործանող» ամենագոր Աստծու նման է նա: Երբ արփին ժպտում է, ոսկեհուռ ադամանդի նման շողում են ձյունի շեղջերը, սառույցի տաշեղներն ու գահավեժ ջրերը.

*Իսկ օրն այնքան է զվարթ, երբ եղանակն է խաղաղ.
Արևը ջերմ է նայում ձյան շեղջերին լուռ ու պաղ,
Սառույց՝ տաշված բյուր տեսակ, ջրեր՝ շաղված ցողերով,
Ադամանդի, ոսկու պես երանգվում են շողերով:
Ամեն ծիծաղը լույսի իր ցուանքով հեռավոր
Գեղեցկությանն այս վսեմ փայլ է տալիս փառավոր:*

Հրաշագեղ տեսարանին հմայք են տալիս նաև անտառապատ սարերն ու ձորերը, թավշյա հովիտներն ու ծաղկառատ դաշտերը, սուրացող եղնիկներն ու արագոտն քարայծերը: Երևում է վայրի ցուլը, հայացքը հառում սուրսայր սառցալեզուներին և չկարողանալով վեր մագլցել՝ «բառաչելով է պախարակում իր անգորությունը».

*Այստեղ, մթին անտառից բարձրանում է եղջերուն,
Հիանում է՝ ինչ է թե որսկանից շատ է հեռու,
Թեքած ճյուղերն իր գլխին՝ նայում է ամպի վազք-լողին,
Իր ոտքի տակ գոռացող և կայծակներ ծնողին:*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

«Կովկասը» բնությունն ընկալելու և բանաստեղծորեն վերարտադրելու հետաքրքիր նմուշ է վրաց քերթության մեջ: Բնության գեղեցիկ պատկերներ կան նաև «Բացվում է դուռը գարնան», «Եկա այս դաշտը զարդարելու» և, ինչպես արդեն նշվեց, «Գոգչա» բանաստեղծություններում:

Ալ. Ճավճավաձեի քնարերգության մեջ զգալի տեղ է գրավում սիրո թեման, ինչը ներկայացվում է ամենահմայիչ կողմերով: Այն պարզ է, երկնատուր շնորհ: Սիրային քնարերգության պասկը «Ո՛վ սեր, քո ուժին» բանաստեղծությունն է, որ «կնոջ հանդեպ պատվի զգացումի և սիրո բարոյական բարձր կոդեքս է՝ մշակված վրաց ժողովրդի պատմական կյանքում»¹:

Սերն ամենագոր զգացմունք է, քանզի կարող է ճակատագրական լինել մարդու կյանքում: Այն արքային ստրուկ կդարձնի, իմաստունին՝ խելագար, ուժեղին՝ թույլ, հարուստին՝ թշվառ:

*Ո՛վ, ո՞վ կա, որ քո ուժին չստրկանա, որ քո առաջ
Տուրքի մնան չմատուցի սրտի գահը, իբրև հառաչ:
Այդ քո՛ ուժով ծառայի դեմ արքան իրեն ճորտ է սարքում,
Իմաստունը՝ գիժ ման գալիս, և սոխակը՝ վարդին երգում:*

Սիրո ուժին հպատակվում են բոլորը՝ տեր ու ծառա, իշխան ու թագավոր, կրոնավոր ու աշխարհական, զինվոր ու զորավար. սերը միապետ է, քանզի ուր էլ շնորհ անի, նրա համար պատրաստ են գահ ու թագ, հոգով ու սրտով նվիրված մարդիկ.

*Բոլոր նրանք, որ ապրում են, սե՛ր, զգում են ուժդ կտրուկ
Ու հավատում՝ կուսակրոն թե աշխարհիկ, մաև ստրուկ:
Թագավոր ես դու ինքնակալ և գահ ունես՝ ուր էլ լինես,
Դու հպատակ սրտեր ունես, այդ զգում են ամենքն ու ես:*

Իսկական սերը իրարամերժ բևեռներ ունի մաև. հիվանդին կարող է առողջացնել, առողջին՝ հիվանդացնել: Քանի որ մշված երկու հատկությունների միասնության մեջ է նրա կենսունակությունն ու հմայքը, ոչ ոք հակված չէ թոթափելու այդ լուծը.

*Երանի չէ՞ր մեկն ուզեմար դեմ շարտել լուծդ ազդու,-
Թե վնաս ես դու պատճառում, խնդությունն էլ չե՞ս տալիս դու:
Իրոք, բավ է հանգստանալ. թող մա մնա միշտ անպակաս,
Այն է վատը, որ նրա մեջ դո՛ւ, մթությունն, մաև դո՛ւ կաս:*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

¹ Վրաց գրականության պատմություն, հ. 3, Թբիլիսի, 1969, էջ 59 (վրաց.):

Այդ զգացմունքը իրեն է ենթարկում մինչև իսկ բանականությամբ: Այն կարող է նաև մահվան պատճառ դառնալ, ուստի ողբերգությունը կանխելու նպատակով ասես թե երևան է զալիս բանականությունը, թեև իսկական սիրողն անտեսում է բանականության թելադրանքն ու հետևում սրտի կանչին: Սերը յուրահատուկ բարոմետր է, չափանիշ. կատարյալ չի կարող լինել թեկուզև հմայիչ այն կինը, որ հեռու է սիրո զգացումից, որովհետև «բանականությունն ու գեղեցկությունը» հենց նրանով են պայմանավորվում:

Չեղինակը որքան հեռանում է սիրած էակից, այնքան ահագնանում են կարոտը, նրան գրկելու, կրծքին սեղմելու, բրուլե տախտակը տեսնելու փափագը: Միայն նա կարող է մարել հոգու հրդեհը, մեղմել տանջող ցավը.

*Արցունքն իմ բոցավառ սրտի
Չի կարող չորացնել ոչ ոք,
Այդ կրակը ոչ ոք չի կարող մարել,
Եթե ոչ դու, ո՛վ հրդեհածից:*

Տողացի թարգմ.

Բանաստեղծությունների զգալի մասը ճավճավածեն գրել է երաժշտական «հանգով», նշել, թե ինչ «հանգի» պետք է երգել (զափ, մուխամմազ, մուստազադի, թեջնիս): Նրա համար էլ սիրո առարկան լուսինն է, արեգակը, վարդը, մանուշակը, աչքերը թանաքի լիճ են, հոնքերը՝ աղեղ, թարթիչները՝ նետեր, ատամները՝ մարգարիտ:

Ճավճավածեի երգերում առկա է մարմնական գովքը. փառաբանում է գինին, ժամանցն ու վայելքը:

Վրաց գրականության պատմաբաններից ոմանք Ալեքսանդր ճավճավածեին համարել են «վրացի Անակրեոն» (Ալ. Խախանով), «անակրեոնական պոեզիայի շարունակողը Վրաստանում» (Իոսեփ Գրիշաշվիլի): Թեև կան առարկողներ, բայց բնորոշումները ճիշտ են և տեղին:

Ճավճավածեն գրական ասպարեզ մտավ, երբ վրաց հանրության մեջ իշխում էր Բեսիկիի սիրային քնարերգությունը, բայց երբ նա լույս աշխարհի հանեց իր բանաստեղծությունները, նախորդի երգերը զիջեցին դիրքերը, թեև «սիրո թեմային նվիրված քառասուն ոտանավորներից քսանում ճավճավածեն կրկնում է Բեսիկիին»¹:

¹ Նույն տեղը, էջ 66:

Ալ. Ճավճավաձեի գրական ժառանգության մեջ հանդիպում են նաև երգիծական ոտանավորներ՝ ուղղված խնջույքներում ու մեջլիսներում ժամանակ ու կարողություն վատնող մարդկանց: Պախարակվում են հատկապես ավատատերերը, հարուստները, այն իշխանավորները, ովքեր չափի զգացողություն չունեն և չգիտեն՝ ինչ հետևանքներ կարող են ունենալ արբշիռ գինարբուքները («Հանուն զվարճության»):


Ճավճավաձեն նաև բեղուն թարգմանիչ է: Նա վրաց ընթերցողին է ներկայացրել Պուշկինի, Օդոնսկու, Լաֆոնտենի, Վոլտերի, Ռասինի, Կոռնելի, Յյուգոյի, ինչպես նաև պարսկական միջնադարյան քնարերգության լավագույն նմուշները:

Ալ. Ճավճավաձեի պոեզիայում «դեռևս վառ է վրաց քնարերգության հուրն ու զսաված զգացմունքայնությունը: Ասիական «ծաղիկները», որ առատորեն ծաղկում էին Վրաստանի «Վշտի այգում», նրա պոեզիայում էլ անթառան են, միայն նրա վարդ-հիրիկներին ավելացել է եվրոպական ռոմանտիզմի երկնագույն ծաղիկը», և այս երկու ուղղության բույրերը հյուսվել են նրա պոեզիայում, ինչպես ռոմանտիզմի նոր տարբերակ կամ նոր տեսակ¹:



¹ Տե՛ս Վ. Կոտետիշվիլի, Ընտիր հոդվածներ, Թբիլիսի, 1967, էջ 464 (վրաց):

ԳՐԻԳՈՆ ՕՐԲԵԼԻԱՆԻ



Գրիգոլ Օրբելիանին ծնվել է 1804 թ., Թիֆլիսում, խոշոր ֆեոդալներից մեկի՝ արքունի պաշտոնյա Դմիտրի Օրբելիանիի ընտանիքում: Մայրը՝ Խորեշան Անդրոնիկաշվիլին, Յերակլ Երկրորդի թոռն էր:

Գրիգոլը գրել-կարդալ սովորել է տանը, ապա՝ Թիֆլիսի ազնվականական ուսումնարանում, այնուհետև՝ տեղի հրետանային դպրոցում, որն ավարտելուց հետո մասնակցում է ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներին: Աչքի է ընկնում Ախալքալաքի և Ախալցխայի համար մղված մարտերում (սեպտեմբեր, 1828):

Ազնավուրների գաղտնի կազմակերպության անդամ լինելով՝ Գր. Օրբելիանին Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենի կարգադրությամբ 1833 թ. Նովոռոդում ձերբակալվում է: Երեք ամիս նրան պահում են Ղազարի զորանոցներում, որից հետո ուղարկում են Կովկասի սահմանամերձ գործող բանակ և մի քանի տարով զրկում Վրաստան մտնելու իրավունքից: Այդ որոշումը ծանր ապրումների տեղիք է տալիս, որ Օրբելիանին արտահայտել է «Քրոջս՝ էփենիային» ներբողում:

1837 թ. վերադառնում է հայրենիք և ծառայում Գորիի վրաց գրեմադերների գնդում: 1842 թ. գումարտակի հրամանատար է Ալեքսանդրապոլի ռուսական զորակայանում:

1843-ին նշանակվում է Ավարիայի կառավարիչ: Տասնհինգ տարի ծառայում է այնտեղ, վերջին շրջանում՝ որպես Դաղստանում տեղակայված ռուսական զորքերի գլխավոր հրամանատար: Այդ պաշտոնում անձամբ ղեկավարում է Շամիլի դեմ արշավանքները: Սալավաթի ճակատամարտում նրան հաջողվում է ընկճել ըմբոստ լեռնականի ջուկատներին, իսկ 1857 թ. հոկտեմբերի 5-ին՝ գրավել նրա ռազմաստրատեգիական վերջին հենակետը՝ Բուրթունայի ամրոցը, որի համար արժանանում է զեներալ-ադյուտանտի կոչման:

1858 թ. ցարական բանակի վաստակաշատ զեներալը, բազմաթիվ շքանշանների ասպետն ու բարձրաստիճան պաշտոնյան զորացրվում է, վերադառնում հայրենիք և ստանձնում Կովկասի փոխարքայի գրասենյակին առընթեր խորհրդի նախագահի պաշտոնը:

1833-1866 թթ. Օրբելիանին քիչ է ստեղծագործում, քանզի տարվում է կարիերայով. գլխապտույտ արագությամբ բարձրանում է զինվորական ու վարչական աստիճաններով (1859-1865 թթ. երկու անգամ փոխարինել է Կովկասի փոխարքային), արժանանում մի քանի շքանշանի ու հետևագորային զեներալի կոչման:

1866 թ. Օրբելիանին թողնում է քաղաքացիական ծառայությունը և զբաղվում գրական-հասարակական աշխատանքով:

1871 թ. Կովկասի փոխարքայությունը նշում է Օրբելիանիի գործունեության 50-ամյակը: Վրաց մտավորականությունն ու մամուլը ցարական բանակի զեներալի հոբելյանին չեն արձագանքում: Պահպանողական «հայրերի» պարագլուխ Օրբելիանին այդ ժամանակ պայքարում էր «որդիների» դեմ: Հոբելյանի կազմակերպողները, թեկուզև անցողակի, չեն նշում, որ զեներալ-ադյուտանտ Գրիգոլ Օրբելիանին հեղինակավոր բանաստեղծներից է նաև:

Օրբելիանիի հանդեպ երկակի վերաբերմունքը առավել ցայտուն դրսևորվում է նրա մահից հետո: Կառավարության հրահանգով տեղական իշխանությունները թաղումը կատարում են շուքով: Կովկասաբնակ բոլոր զեներալները հավաքվում են նրա դագաղի շուրջը: Հուղարկավորությանը մասնակցում են մշակութային-լուսավորական հիմնարկների ներկայացուցիչներ ևս: Ելույթ են ունենում Ի. Ճավճավաձեն, Ա. Ծերթելին, այլ գրողներ: Եվ եթե պաշտոնյաները ողբում են «կովկասյան պատերազմների պատմության էջերը փառավորած քաջ զեներալին ու հրաշալի ղեկավարին», ապա մտավորականները սգում են վրաց տաղանդավոր բանաստեղծի մահը: Առաջինները «մոռանում» են բանաստեղծ Օրբելիանիի վաստակը, վերջիններս՝ բարձրաստիճան պաշտոնյայի ծառայությունները:

Նույն վերաբերմունքն են ցուցաբերում նաև ժամանակի ռուսական և վրացական թերթերը, որ հեղեղված էին մահախոսականներով: Ահա բնորոշ մի հատված լրագրերից մեկի առաջնորդողից: Թերթը նշում է, որ իրենք սգում են փառապանծ բանաստեղծի կորուստը, այն բանաստեղծի, որ հզոր ծայնով արթնացնում և ոգևորում էր քնած ու հուսաբեկ վրացիներին: Իսկ եթե նա թեկուզև հարյուր աստիճան վեր

բարձրանար որպես պաշտոնյա, իրենք ոչ մի բառով չէին արձագանքի¹: Այո՛, բարդ ու հակասական է եղել Գր. Օրբելիանի կյանքը, քանզի խզում կար նրա գրական և ծառայողական գործունեության միջև:

XIX դարի 60-70-ական թթ. Օրբելիանին ստեղծագործական վերելք է ապրում, մասնակցում է «հայրերի ու որդիների» թեժ բանավեճին, գրում է «Որդոց ի պատասխան», «Մշակ Բոքուլաձե», «Թամար թագուհու դիմանկարը Բեթանիայի եկեղեցում», «Ծերացա» քերթվածքները, կատարելության է հասցնում «Կենաց խոսք կամ մարտին հաջորդած գիշերային խնջույք Երևանի մատույցներում» պոեմը:

Կյանքի վերջին տարիներին բանաստեղծը թեև մնում է իր համոզմունքին, բայց գնահատելով «որդիներին»՝ գործակցում է նրանց հետ: Այդ հանգամանքը թույլ է տալիս «որդիների» պարագլուխ Ի. Ճավճավաձեին ասելու, որ Օրբելիանին միակն էր հին սերնդի մեջ, որ «կամուրջ» զցեց «հայրերի» ու «որդիների» միջև:

Գրիգոր Օրբելիանին վախճանվել է 1884 թ. մարտին:

Նրա դագաղի առջևից տարվող ծաղկեպսակների վրա կարելի էր կարդալ այսպիսի մակագրություններ՝ «Բանաստեղծության արքային», «Գեղարվեստական խոսքի տիրակալին»:

1832 թ. դավադրության ձախողումից հետո Գր. Օրբելիանի աշխարհայացքում տեղի է ունենում զգալի փոփոխություն, որ արտահայտվում է նաև իր երկերում: Ելնելով այս հանգամանքից՝ բանաստեղծի ստեղծագործական կյանքը կարելի է բաժանել երկու շրջանի. մինչև 1832 թ. և դրանից հետո՝ մինչև մահը:

Գրական գործունեության առաջին շրջանում Գր. Օրբելիանին ներկայանում է որպես հայրենիքի անկախության ջերմ պաշտպան: Այդ են վկայում «Խոստովանություն», «Յարալ» ոտանավորները և «Իմ ճամփորդությունը Թիֆլիսից Պետերբուրգ» նոթերը:

«Խոստովանությունը» դեկաբրիստ Կոնդրատի Ռիլենի (1795-1826) «Նախվայկո» պոեմի (1825) մի հատվածի փոխադրությունն է, որ կատարել է 1831 թվականին: Վրաց գրողը բերել է այն մասը, որտեղ նկարագրված են հայրենիքի ազատության համար մարտնչած և իր դատավճռին սպասող հերոսի մտորումներն ու ապրումները: Այդ հատվածի ընտրությունը պատահական չէր. դա խոսում է երիտասարդ բանաստեղծի հավատամքի մասին: Տեղայնացնելով դեպքերը և դրանց տալով ազգային բնույթ՝ Գր. Օրբելիանին փառաբանում է այն նախնիներին, ովքեր պայքարել են թշնամիների դեմ և նահատակվել՝

¹ Տե՛ս «Դրոներա», 1889, թիվ 65 (վրաց.):

մահը գերադասելով գերության լծից:

Բանաստեղծը հասկանում է, որ լոկ ցանկությամբ հնարավոր չէ հայրենիքի անկախությունը վերականգնել. առանց զոհերի, առանց արյունի ոչ մի երկիր ազատություն ձեռք չի բերել: Այդ ամենը նա գիտե, ուստի, որպես հայրենասեր մարտիկ, պատրաստ է ամձը զոհաբերելու:

Օրբելիանիի վաղ շրջանի լավագույն երկերից է «Յարալի»-ն, որով «վրացիների մեջ սկիզբ է առնում հայրենիքի հանդեպ սրտաբուխ երգասացությունը»,¹ գրում է Ալ. Խախանովը¹: Պատահական չէ, որ 1833 թվականի հարցաքննության ժամանակ նրա դեմ օգտագործում էին ոչ թե դավադրությանը մասնակցելու իրողությունը, այլ քաղաքական լիցք ունեցող «Խոստովանություն» և «Յարալի» երգերը, հատկապես վերջինը, որ ձեռագիր վիճակում տարածվել էր Թիֆլիսում: «Յարալին» Օրբելիանին գրել է 1832 թ. Նովգորոդում և ձոնել իր ընկերոջը՝ Յարալ Շանշիաշվիլուն: Բանաստեղծը տանջվում է հայրենիքի կարոտից, երազում այն օրը, երբ ինքն ու Յարալը կլինեն Վրաստանում, կթափառեն հայրենի երկրում, քեֆ կանեն, «գինարբուքից տաքացած ճակատները դեմ կանեն Կոջորից փչող հովին ու կզովանան»:

Բայց ահա տխուր ու տրտում, կարոտով ու պապակ սրտով նա դեգերում է ռուսաստաններում. կախեթական փառաբանված գինու փոխարեն կվաս է խմում, հարավային արևի կենարար շողերի փոխարեն հյուսիսի ցրտաշունչ քամին է սողոսկում մարմնի մեջ: Եվ հուսաբեկ բանաստեղծը խոստովանում է դառնորեն.

*Բայց իզուր են, Յարալ, սիրելիս,
Իմ բաղձանքն ու տենչանքն իմ,
Փակված խավարում հյուսիսի,
Էլ որտե՞ղ տեսնեմ երկինքը հայրենի...*

Տողացի թարգմ.

Այնուհետև հեղինակը ընթերցողի առաջ բացում է պատմության փառավոր էջերը, հպարտությամբ է խոսում այն ժամանակների մասին, երբ անբեղ-անմորուս պատանիները ելնում էին բռնակալների դեմ և կյանքի գնով պաշտպանում հայրենիքի անկախությունը: Նա գլուխ է խոնարհում այն քաջորդիների հիշատակի առաջ, ովքեր «իրենց կյանքը զոհաբերել են երկրի փրկության համար, ովքեր փառք ու պատիվ են բերել և՛ իրենց, և՛ հայրենիքին»:

¹ **Ал. Хаханов**, История грузинской словесности, XIX век, Упдվա, 1913, էջ 27:
124

Օրբելիանին տալիս է նաև գինարբուքների, խրախճանքների, ժամանցների ու վրացական ճոխ սեղանի նկարագիրը, բայց ոչ ինքնանպատակ. դա պատրվակ է անցած-գնացած ժամանակներին երանի տալու և հակադրելու տխուր ներկային: Իդեալականացնելով անցյալը՝ Օրբելիանին հիշեցնում է նախնիների սխրանքները, արտաքին թշնամիների դեմ նրանց վարած հերոսամարտերը՝ նպատակ ունենալով նույն ոգով վարակել ժամանակակիցներին: Նա երազում է այն հերոսի մասին, որ լույս աշխարհի պիտի գա և «ոչնչացնի վիշապին»:

Դատավարության ժամանակ ցարական արդարադատության ներկայացուցիչները շատ լավ հասկանում էին, որ վիշապը ցարիզմն է:

Գր. Օրբելիանիի հայրենասիրական հայացքները ամփոփված են «Իմ ճանփորդությունը Թիֆլիսից Պետերբուրգ» ուղեգրության մեջ: «Ճանփորդության» մի մասում նկարագրում է Վրաստանի պատմական վայրերը, ժողովուրդների կենցաղը, բարքերը, իր խոհերն է արտահայտում դրանց վերաբերյալ: Այս կամ այն հարցի շուրջ ծավալված բանավեճի, ընկերների, ծանոթների և ուղեկիցների հետ համդիպումների ժամանակ երևան են գալիս նրա քաղաքական հայացքները: Հետաքրքիր է զրույցը գեներալ Ափխազի հետ. երկու հայրենասեր դատողություններ են անում Վրաստանի վերաբերյալ: Անցյալի մասին համակարծիք են, մինչդեռ ապագային նայում են տարբեր դիրքերից:

Գեներալը Վրաստանի երջանկությունը տեսնում է Ռուսիայի հետ ունեցած սերտ կապի մեջ: Հայրենիքի պատմությանը քաջատեղյակ գորականը մինչև անգամ ծունկի է գալիս և աղերսում Աստծուն, որ ռուսները հանկարծ երես չթեքեն, չհեռանան Վրաստանից և անլուր տառապանքներ կրած ժողովրդին ու երկիրը չթողնեն թշնամիների շրջապատում: Նրա հանոզմամբ Վրաստանի բախտը կապված է Ռուսաստանի հետ, մինչդեռ Օրբելիանին նշում է, որ Վրաստանը պետք է անկախանա, և գեներալին է հանձնում մի ծրագիր, որով պետք է առաջնորդվի պետականությունը վերականգնած երկիրը:

Նույն թեմային է նվիրված «Կենաց խոսք կամ մարտից հետո գիշերային խնջույք Երևանի մատույցներում» մեծակտավ երկը, որ նշանակալից տեղ է գրավում Գր. Օրբելիանիի գրական ժառանգության մեջ: Բացառված չէ, որ պոեմը սկսել է 1827 կամ 1828 թվականին (բազմիցս վերանշակել և լույս է ընծայել 1871-ին) Երևանի բերդի գրավումից առաջ կամ գրավման անմիջական տպավորությամբ, մանավանդ որ նա՝ որպես վրաց գրեմադերական գնդի հրետանավոր, մասնակցել է Օշականի մոտ պարսկական զորքերի ջախջախմանը, Կարսի և Արդահանի համար մղված մարտերին, Երևանի գրավմանը:

«Կենաց խոսքը» պայմանականորեն համարում են պոեմ, թեև այդ ժանրին հատուկ սյուժե չունի. այն ծավալուն շարք է նախնիների, հայրենիքի, բարեկամության, սիրո և բնության մասին: Գործողության վայրը պատերազմի թատերաբեմն է. օրվա ահեղ ճակատամարտից հոգնած զորքը երեկոյան հանգստանում է, որ առավոտյան վերսկսի հարձակումը: Գլխավոր գործող անձը սեղանապետ - թամադան է. բաժակ բարձրացնելով՝ նա կենացներ է առաջարկում, իսկ զորքը ի նշան համաձայնության կրկնում է նրա վերջին խոսքերը: Թամադան՝ հեղինակի խոսափողը, հիշատակում է այն անձանց, ովքեր զորացրել են երկիրը: Դրանք են՝ Փարնավազ թագավորը (IV-III դդ. մ.թ.ա.), որ ըստ նրա ստեղծել է վրացական գիրը, Միրիանը (IV դ. մ.թ.), որ քրիստոնեություն տարածեց Վրաստանում, և «անհետ կորավ Իբերիայի հավատը խավար», «պատերազմի աստված Վախթանգ Գորգասալը (V դ. II կես), Դավիթ Շինարարը, որ վերականգնեց ու ընդարձակեց Իբերիայի սահմանները և կառուցեց քաղաքներ ու ամրոցներ, «գեղեցկության աստված» Թամարը, նաև Քեթևան թագուհին, որ նահատակվեց հանուն հավատի, դրանք հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած իշխաններն են, Յերակլ Երկրորդը, «որի հետ գերեզման իջավ նաև Վրաստանի փառքն ու հզորությունը»:

Օրբելիանին նույնպիսի պատկառանքով հիշատակում է նաև Նիկոլայ Առաջին կայսրին, հանուն որի «վրացիները պատրաստ են իրենց կյանքը զոհաբերել», տաճարներում «խնկարկել ու աղոթել»: Իսկ ինչո՞ւ է այդպես ջերմեռանդ օրհնում ու փառաբանում ռուսաց կայսրին: Որովհետև իր երազած թամարյան դարաշրջանի վերադարձը կարող է իրականացնել միայն Նիկոլայ Առաջինը, ահա թե ինչու՝

*Չին Իվերիան, քո Իվերիան
Քեզ է հառել իր հայացքն ու սիրտը,
Ինչպես գարնան նորաբաց ծաղիկ,
Որ արեզակից ջերմություն է աղերսում:
Տողացի թարգմ.*

Պոեմի երկրորդ մասը առաջինի շարունակությունն է, ուր նույնպես առաջին պլան է մղված հայրենիքի գովքը: Բանաստեղծը դժվարանում է պատկերացնել այնպիսի մարդ, որ չպաշտի այն վայրը, որտեղ իր աչքերն է բացել, որտեղ երանելի մանկությունն է անցկացրել, որտեղ հոգին բռնկվել է առաջին սիրո բարկ կրակով:

Չաջորդում է ժողովրդի կենացը, որ բազում արհավիրքներ է տե-

սել, բայց մնացել է հպարտ, կենսասեր, քաջ ու անկոտրում կամքի տեր:
Իսկ ո՞րն է մարդու կոչումը. լինել ազնիվ, անկեղծ, նվիրված, հավատարիմ, բարեսիրտ, ընկածին օգնող, ճնշվածին՝ պաշտպան, չարիքի ու չարիք ծնող երևույթների դեմ պայքարող.

*Եթե բարի գործեր չանենք,
Եթե ընկածին չօգնենք,
Չմխիթարենք, չոգևորենք,
Եթե չարը չխափանենք,
Արդարությունը չպաշտպանենք,
Եթե ուրիշի հառաչանքը չլսենք
Ու չդարմանենք ցավն ուրիշի,
Սարդ կոչվելու իրավունք ունեն՞նք:*

Տողացի թարգմ.

Ճակատամարտի պատրաստվող զորքը միաձայն խմուն է մակ սիրո կենացը, քանզի սերը ուժ ու կորով է, երջանկություն. «սիրո շողը վեհացնում է մեզ և լուսավորում մեր հոգին. գեղեցկանում ենք և նմանվում Աստծուն»: Ցավոք, սիրո վախճանի հետ մեռնում է մակ երջանկությունը, բայց քանի որ այն հավերժող զգացմունք է, մարմնի հետ չի մեռնում, այլ ամենուր հետևելով մարդուն՝ շարունակում է իր գոյությունը՝ մխիթարելով, ոգևորելով ու անմահացնելով մակ շիրիմում:

«Կենաց խոսքը» ավարտվում է բնաշխարհի չափազանց գեղեցիկ նկարագրությամբ: Ահա այդ համայնապատկերի վրձնահարվածը՝ տողացի թարգմանությամբ.

*Չյունաթագ գագաթները լեռների
Երկնքի դռներն են բախում,
Իսկ գետերը կարկաչահոս
Ալիք-ալիք դիզվում,
Չոսում են կիրճերն ի վար:
Չովիտները զմրուխտաթույր
Նազանքով են կանաչում:
Եվ աղբյուրները՝ պարզ ու զուլալ
Կարկաչում են զոնգածայն,
Նրանց կաթիլներով ցողվում
Ու լվացվում են ծաղիկները:
Չոգիդ ջերմանում է նրանց տեսքից,
Աչքերդ կրկին տեսնել են ուզում:*

Հուզիչ է հատկապես ցայգալույսի նկարագիրը. լուսարձակ արեգակը դանդաղ բարձրանում է հորիզոնից, ճառագայթների խրճով վանում խավարի թանձր քողը և կամաց-կամաց տեսանելի դարձնում Երևանն իր համայնապատկերով.

*Օ՛, ի՞նչ հմայիչ է զարթոնքը քնած բնության,
Լռե՛ք, ունկն դրեք. չե՞ք լսում. սոխակն է երգում:
Երևաց Հերակլի թափան՝, ահա լեռը տապանի,
Ահա Ջանգուն հորդառատ և պատկերը Երևանի:*

Տողացի թարգմ.

Հաջորդում է վաղ առավոտյան սկսվող պատերազմի թոհուրոհի, թովիչ բնության նկարագիրը ու մարտիկ բանաստեղծի մտորումները կյանքի ու մահվան մասին: Հեղինակը հրաշագեղ պատկերը միահյուսում է մարդկային զգացումներին, մեկը պայմանավորում մյուսով. հմայիչ բնության ներդաշնակությունն ու գեղեցկությունը հակադրում է անհատի տխուր խոհերին և ցավով նշում, որ կյանք ավետող արևածագին մարդիկ պատրաստվում են կռվի ու արյունահեղության. «Այս զովաշունչ այգաբացին մարդն ինչո՞ւ է տենչում իր նմանի արյունին»: Այսպես բազմանշանակ շարունակում է թամադան և առաջարկում մարտադաշտ նետվելուց առաջ հոտնկայս խմել գալիք հաղթանակի կենացը:

Գր. Օրբելիանին երկը գրել է Վ. Ժուկովսկու (1783-1852) «Երգիչը ռուս ռազմիկների ոստանում» օդա-էլեգիայի ազդեցությամբ (այս մասին վկայում է նաև հեղինակը ստեղծագործության երկրորդ տարբերակում): «Կենաց խոսքը» ռուս բանաստեղծի պոեմի հետ ընդհանուր եզրեր ունի թեմատիկայի առումով, կոմպոզիցիոն կառուցվածքով, բնության, սիրո և մարդկային արժանիքների մասին մտորումներով: Ժուկովսկու երկն էլ դժվար է ինքնուրույն համարել, որովհետև նրա վրա առկա է անգլիացի Թոմաս Գրեյի (1716-1771) «Երգիչը» ներբողի ազդեցությունը: Ի տարբերություն Գրեյի և Ժուկովսկու՝ Օրբելիանին ընդարձակել է իր պոեմի ժամանակի ու տարածության շրջանակները:

Կյանքի վերջին տարիներին Օրբելիանին գրում է «Թամար թագուհու դիմանկարը Բեթանիայի եկեղեցում» բանաստեղծությունը:

Հեղինակն եկեղեցում է՝ արցունքն աչքերում, պաղատալից հա-

* Հերակլի թափա - Հերակլյան բլուրներ, գտնվում են Երևանի բերդից ոչ հեռու՝ Ջանգվի (Հրազդան) աջ ափին: Կրաց արքան Երևանյան արշավանքներից մեկի ժամանակ զորքը այստեղից է առաջնորդել պարսիկների դեմ ճակատամարտի և պարտության մատնել նրանց: Այդ հաղթանակի առթիվ բարձունքը կոչվել է նրա անունով՝ Հերակլյան բլուրներ: Տե՛ս նաև Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), Երևան, 1959, էջ 237, 317: (Ծնթ.՝ Հ. Բ.):

յացքը թագուհու դիմանկարին: Որմնանկարը նրան հիշեցնում է այն դա-
րաշրջանը, երբ Վրաստանը գտնվում էր հզորության ու հոգևոր կյանքի
զարգացման բարձրագույն աստիճանին: Խոհերով տարված՝ նա մինչև
անգամ զգաստանալ չի ցանկանում, որ չվերջանան քաղցր անուրջ-
ները, չընկնի դառն ու հոգեմաշ իրականության գիրկը: Թամարյան դա-
րը բանաստեղծի համար անցած-գնացած երազ է, մայր մտած արե-
զակ: Ահա ինչու նա ծնկաչոք աղերսում է թագուհու ստվերին, որ նա
վերականգնի երկրի երբեմնի փառքը: Երազում ու պաղատում է, բայց
ժխտողական ոգուն հավատարիմ՝ կասկածում է ապագա հաջողու-
թյուններին. Վրաստանն այնպես է քայքայվել, որ նույնիսկ Թամարը չի
ճանաչում իր ստեղծած ծաղկուն երկիրը: Ընդհանրացնելով խոհերը՝
Օրբելիանին ամեն ինչին նայում է հռեռտեսորեն. աշխարհը խարդախ է,
բարին՝ անցողիկ. անկեղծ ու անկաշառ ոչինչ չկա.

*Յե՛յ, խարդախ,
Դավաճան աշխարհ,
Ո՛ր է քո մեջ բարին անկաշառ,
Փառքը մեր
Երկինք հասած,
Մի՞թե այս ունենք սոսկ, ինչ տեսնում ենք՝
Անանց ճամփա,
Խուլ ու խավար,
Անկենդան անտառում քանդված տաճար...*

Տողացի թարգմ.

Պրոֆ. Միխ. Զանդուկելին եզրակացնում է, որ ուժեղ է Օրբելիա-
նիի հայրենասիրությունը, բայց միակողմանի է, նեղիմաստ, որ նրա հա-
մար «վրաց բարձրագույն խավն ու Վրաստանը հոմանիշներ են, իսկ
Զուրաբանց օջախի անկումը Վրաստանի անկում էր նշանակում»¹:

XIX դարի 20-30-ական թվականներից մինչև մահը Օրբելիանին
երկրի կյանքում չտեսավ կամ չցանկացավ տեսնել ո՛չ շարժում, ո՛չ առաջ-
ընթաց: Դա վավերացրեց մահվանից անմիջապես առաջ գրած մի բեյթով.

*Ծերացա, քախտիս չհասա,
հայրենիքս է ահա ընկած,
Անհուսությունն սպանում է ինձ,
գերեզման եմ իջնում դառնացած:*

Տողացի թարգմ.

¹ Տես Մ. Զանդուկելի, Երկեր, Թբիլիսի, 1972, էջ 237 (վրաց.):

Գրիգոր Օրբելիանին իր սրտմաշուկ ապրումները փորձել է մոռացության տալ կնոջ մարմնի վայելքի ու գինարբուքի մեջ: Ուրիշներին նույնպես խորհուրդ է տալիս առանց վայրկյան կորցնելու օգտվել աշխարհի այդ լավագույն բարիքից.

*Թե նենգավոր այս աշխարհում
դու բախտավոր լինել կուզես,
Ով այցելու իմ շիրիմի, սեր ու գինով
հարթիր ինձ պես.
Սեր ու գինու միջում խեղդիր
ամեն մի վիշտ, ամեն մի ցավ,
Որ անցնի կյանքդ քեֆով,
ինչպես որ իմ կյանքը անցավ:*

Թարգմ.՝ Գևորգ Ասատուր

Ձևախմաստային մեծամասնություն կա այս և քաղաքային ցածր խավի՝ սև չուխավորներ փերեզակների (ղարաչոխելիների) կենսակերպը, հոգեբանությունը, խոսակցության տոնն ու ոճը պատկերող երգերի ու մուխամազների միջև: Դրանցից հառնում են դերձակ Բեժանի, թառխտ Ալավերդու, երգիչ Սոխակի, ձկնորս Լոպիանիի և ուրիշների ինքնատիպ կերպարները: Մեկ լուրջ, մեկ հեզանքով խոսում է նրանց ուրախության ու տրտմության, սիրո, ժամանցների, երազանքների ու հոգսերի մասին: Երգերի հիմնական մոտիվը զգայական սերն է, կերուխումը, «ղարդիման» տղերանց թեթևամիտ ու թեթևաբարո առօրյան: Բայց նրա բոլոր հերոսները չէ, որ թեթևամիտ են ու թեթևաբարո: Նա ստեղծել է զարաչոխելիների բազմաթիվ կերպարներ, որոնց սերը թեև պարզունակ է, բայց անմիջական է, անկեղծ: «Մուխամազի» հերոսն աղջկան խնդրում է գինիով չիլուրասիրել, որովհետև ինքն արբած է նրա սիրով, իսկ եթե գինի խմի, լեզուն կդավաճանի և կմատնի այն, ինչ այդքան ժամանակ բանտել ու թաքցրել է սրտի խորքում:

Շարքի լավագույնը «Թեկուզ քնած լինեն» մուխամազն է՝ գրված մենախոսության ձևով: Ղարաչոխելին այդտեղ ներկայացված է որպես սիրուհուն հավատարիմ ծառա: Նա սիրում է մեկին, նրա համար տանջվում, քուն թե արթուն նրա մասին մտածում, միշտ և ամենուր նրա անունն արտաբերում.

*Ստրուկի պես հավատարիմ, քոնն եմ ես,
Սպանես էլ բան չեմ ասի, քոնն եմ ես:*

*Ո՛ր էլ գնաս, ես էլ իսկույն այնտեղ եմ,
Չտեսնես էլ, լա՛վ իմացիր, այնտեղ եմ:
Թե քնած եմ՝ հոգուս մեջ ես դու նստած,
Աչքըս բացեմ՝ թարթիչներիս ես նստած:*

Լուսինանին «տասը ճամփա ունի, տասն էլ սիրուհու մոտ են տանում»: Այդուհանդերձ նա չի հետաքրքրվում՝ ով է, ինչ է անում, ուրախ է, թե տխուր, մեռած է, թե ողջ: Եվ անպատասխան սիրուց տառապող ձկնորսը տեսնում է, որ նա իրեն Օրթաճալայի բաղերում տեսնի, հարազատ միջավայրում, մասնավոր, երբ գինու թասը ձեռքին է, կամ երբ մուշտեկովի է մասնակցում. թերևս միայն այդ ժամանակ հասկանա՝ ինչ արժանիքներ ունի, և վերջապես ասի՝ թանկագի՛նս...

*Օրթաճալի այգուն տեսար, ո՞վ եմ ես,
Դարդիմանդի քեֆուն տեսար, ո՞վ եմ ես,
Գինու լեցուն թասով տեսար, ո՞վ եմ ես,
Բռնցքամարտ տալիս տեսար, ո՞վ եմ ես,
Եթե սիրես՝ «Դու իմ թա՛նկն ես» կլսեմ,
Թե քնած եմ՝ հոգուս մեջ ես դու նստած,
Աչքըս բացեմ՝ թարթիչներիս ես նստած:*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

Ղարաչոխելիների առօրյան զվարճանք-գինարբուքն է. միայն այդ ժամանակ նրանք հնարավորություն ունեն լրիվ բացահայտելու իրենց մտավոր ու ֆիզիկական կարողությունները՝ ասել, խոսել, բանավիճել, միմյանց կարեկցել, օգնել, տուրուդմբոց սարքել, կռվելու հնարանքներ գործադրել՝ հաճախ ի ցույց սիրած կանանց ու աղջիկների:

Օրբելիանին բազմիցս մասնակցել է այդ մարդկանց իսկապես ինքնատիպ և հետաքրքիր զվարճություններին, ունկնդրել նրանց խոսքն ու գրույցը, ականատես եղել նրանց սիրային արկածներին ու «մուշտեկովներին»: Նկարագրելով նրանց գունագեղ ու յուրօրինակ կյանքի տեսարանները՝ հեղինակն ավելի հաջողության է հասել դիմանկարներն ու միջավայրը արտացոլելու մեջ, թեև զգալիորեն գեղեցկացրել է որոշ կերպարներ:

Բանաստեղծությունների այս շարքը Ի. Ճավճավաձեն համարել է «իրական և ճշմարիտ», ռեալիզմի նախնական արտահայտություն վրաց գրականության մեջ:

Գր. Օրբելիանիի սիրային երգերն աչքի են ընկնում բարձր ար-

վեստով, անմիջականությամբ ու անկեղծությամբ: Դրանք նվիրված են Սոֆյա Օրբելիանիին, Նինո և Եկատերինե ճավճավաձեներին:

Սոֆյայի հետ բանաստեղծը նշանված է եղել օրորոցից, բայց ճակատագիրը նրանց մետել է տարբեր ասիեր, և աղջիկը, չսպասելով վերադարձին, 1835 թ. ամուսնացել է: Նույն թվականին Ռիզայից ուղարկած նամակներից մեկում Օրբելիանին գրում է. «Ա՛խ, իմ Սոֆիկոն որտե՞ղ է, երանի իմանամ՝ հիշո՞ւմ է ինձ, թե՞ մոռացել է, և այլևս չկամ նրա համար: Բախտի՛ս նայեք. ես արևմուտքում եմ, նա՝ արևելքում, էլ ե՞րբ կամ ինչպե՞ս սիրենք իրար»:

Ալեքսանդր ճավճավաձեի կրտսեր դստերը՝ Եկատերինեին ձուցած երգում ջերմեռանդ երկրպագուն այսպես է նկարագրում սիրած էակի նրբագեղությունը.

*Ծիմանդալի վարդ,
Սուրբ աղավնյակ,
Ձուլալ աղբյուր լեռան,
Ժպտում ես
Ինչպես արշալույս,
Եվ ջերմացնում սիրտը տեսնողիդ...*

Տողացի թարգմ.

1879 թ. նույն կնոջը հղած նամակներից մեկում 75-ամյա պոետը երանությամբ է հիշում այդ կանանց միջավայրում անցկացրած օրերը. «Վերհիշում եմ Ձեր և այլոց աղջկական փայլուն ժամանակները, գեղեցկուհիներիդ՝ հոյակապ դաստիարակությամբ, խելացի, իստակ սրտով: Իրոք, շատ լավ ժամանակներ էին, ուրախ, անհոգ: Որտեղ էլ հանդիպում էինք գեղուհիներիցդ որևէ մեկը ներկա էր լինում, և հանուն նրա արտասանում էինք Սայաթ-Նովայի խաղերից մեկի «Հազար հիդ «քիզ մատաղ» ասի, բա յիս քանի՞ գլխի տեր իմ» տողերը: Հաճախ եմ հիշում Ձեր՝ ավելի քան գեղեցիկ այդ ժամանակները՝ որպես մխիթարանք իմ այս ծերացած սրտի, և ասես պատանի եմ դառնում: ... Դուք ինձ մարդ դարձրիք, բանաստեղծ և այժմ էլ Դուք եք իմ միակ սփոփանքը»:

Գր. Օրբելիանիի սիրային քնարերգության պսակը, անշուշտ, «Հրաժեշտի երեկո» բանաստեղծությունն է: Ենթադրվում է, որ այն նվիրված է Նինո ճավճավաձեին (1812-1857)՝ Եկատերինեի ավագ քրոջը, որին Օրբելիանին սեր է խոստովանել և մերժվելուց հետո մինչև կյանքի վերջը մնացել ամուրի: Հոգոց ու թառանչներ են լսվում

պաշտելի էակին նվիրված նրա բոլոր երգերից:

Նինոն չարձագանքեց ոչ միայն Օրբելիանիին, այլև իր ձեռքը խնդրող տասնյակ այլ ազնվագարն երիտասարդների: Նրա ամբողջ կյանքը նույնպես անդավաճան, անձնագոհ ու հավերժական սիրո սքանչելի օրինակ է, իսկ վաղամեռիկ ամուսնու՝ Ալեքսանդր Գրիբոյեդովի շիրմաքարին փորագրած քառատողը՝ սրտահույզ ու խորախորհուրդ բանաստեղծությունն.

*Ум и дела твои бессмертны
В памяти русской,
Но зачем пережила тебя,
Любовь моя.*

«Հրաժեշտի երեկո» բանաստեղծության մեջ հեղինակը նկարագրում է, թե ինչպես է սլանում կառքը՝ տանելով այն բարին, լուսավորն ու երազայինը, որ իր կյանքի իմաստն էր, որ ձեռք էր բերել անասելի դժվարությամբ, որ թևեր էր տալիս, ոգեշնչում, ներարկում ուժ ու կորով:

Նա գնում է՝ բանաստեղծին թողնելով տխուր ու հուսաբեկ: Նրա ցավատանջ սիրտը հառաչում է, կսկծում ու տնքում. ոչ ոք խնդություն չի բերի նրան, սպեղանի չի դնի վերքին, փաղաքուշ ձայնով չի մեղմացնի հոգու հեծեծանքը.

*Սակայն աշխարհում քեզնից զատ ո՞վ ունեմ,
որ ինձ ամոքի,
Թե դու էլ ինձնից հեռացար, հանձնեցիր
վշտին անհոգի,
Գնացիր, ինձնից խլեցիր ամեն բան,
նույնիսկ տառապանք,
Եվ հիմա ո՞վ կրացի կորած բախտիս
դուռը փակ:*

Գր. Օրբելիանին սրտի թրթիռը, հույզերը, ապրումները, խորունկ սերը վարպետորեն միահյուսում է բնության կենդանի նկարագրին, տրտմաշուք տրամադրությունը պատկերում մայրամուտի՝ թախիծ պարունակող ֆոնի վրա. դեպի հորիզոն սահող արեգակը ի նշան հրաժեշտի իր թույլ շողերով պարուրում և փաղաքշում է Կովկասի երկնամուխ լեռների ձյունածածկ գագաթները այնպես, ինչպես աղջնակն է փաթաթվում հոր վզով ու քնքուշ մատներով շոյում նրա արծաթագոծ գլուխը:

Սարերի լանջերին պառկած սևուճուճ ամպերը սպառնում են աշխարհը հեղեղել ջրով: Այնուհետև երևում են գարնանաբույր կանաչով զուգված անտառները, իսկ դրանցից ներքև՝ խոր կիրճերում, թերեքի աղաման-դափայլ ջրերը հուզված գահավիժում են անդունդ:

*Չսկա լեռները խոյացած ու մխված երկնում կապուտակ՝
Բազմել են լռին, դևի պես, սպիտակ սառցե թագի տակ:
Նրանց ժայռեղեն կողերին մթին ամպերն են բռռ դառնում
Եվ խեղճ ու կրակ աշխարհին ջրհեղեղով են սպառնում:*

Եղերերգը վերջանում է բնության մինորային տրտուճնջով, որ ասես արծազանքն է սիրածին ընդմիշտ հրաժեշտ տվող բանաստեղծի հոգեբուխ հառաչի ու տառապանքի, իսկ «տառապանքը սնուցանողն է սիրո»:

*Նստած եմ վշտոտ, և ո՞վ է տրտուճն իմ լսում,
Շուրջս խլացավ... Պահակն է, որ մեկ-մեկ ծայնում է դրսում,
Երևում է լուկ, որ լռին լեռները միտվել են երկինք,
Կազբեկի վրա մի աստղը փայլում է կրկին ու կրկին:*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

Գր. Օրբելիանին արծարծում է տարբեր մոտիվներ ու թեմաներ, խոսում ճնշվածների ոգնելու, արդարությունը պաշտպանելու, չարիքի առաջն առնելու, մարդու կատարած գործը, ոչ թե ծագումն ու ունեցվածքը գնահատության չափանիշ ընդունելու մասին: Այս ամենը, սակայն, խրատների ու քարոզների շրջանակներում:

Նրա գրական ժառանգության մեջ առանձնանում է «Մշակ Բոքուլածե» բանաստեղծությունը, որտեղ մշակը մենախոսությամբ ներկայացնում է իր անձը, բնութագրում իր հոգեկան, ֆիզիկական ու նյութական ծանր կացությունը:

Ահա նա՝ բացկուրծք, քրտնաթոր, փոշու մեջ կորած, «ժանգոտ վզով», բախտից հալածյալ, ծննդյան օրից աղքատության ճիրաններում, ժամանակից շուտ ճերմակած բեղ-մորուքով, անհույս ու անապավեն: Եղբայրը դավաճանել է, մերձավորը՝ կեղեքել, կինը՝ անիծել, ընկերը՝ հուդայի համբույր տվել, աշխարհից ու մարդկանցից վտարվել, այնպես որ մոռացել է, թե ով է եղել: Տքմաջան աշխատում է, դառը քրտինքով մի կտոր հաց վաստակում և այդպես մթնեցնում իր օրերը, մինչդեռ ուրիշները անհոգ ու երջանիկ վայելում են: Այժմ էլ այգուց լսվում են

քանանչայի ծայնը, Սայաթ-Նովայի հուզաթաթավ երգերը, սրտանց ցանկանում է արծազանքել, ծայնակցել, բայց ամաչում է. ինքն ո՛ւր, նրանք ո՛ւր, և հառաչանքը խեղդում է կոկորդում, աչքերի արտասուքը սրբում թաքում:

*Մշակի մորմոքն, էհ, ո՞վ է լսում...
Ո՞վ եմ աշխարքում, ի՞նչ եմ ինձ ասում,
Թե չեմ էլ հիշում ոչ մի ուրախ օր,
Թե ջահել կյանքս անցավ ախ-վախով,
Ապագայում էլ չեմ տեսնում թե հույս
Եվ ուրախության մի կրակ, մի լույս...*

Մշակը շարունակում է իր դառնադետ վիճակի նկարագրությունը. ո՛չ մխիթարություն, ո՛չ ուրախություն, ո՛չ լույսի շող. ծերացել, մահվան դուռն է հասել, ինչպես եկել, այնպես էլ կհեռանա այս աշխարհից՝ այդպես էլ չիմանալով՝ ում օրհնի կամ ում անիծի:

Մշակը զուրկ չէ «բարի զգացումներից»:

*Քանի որ ունեմ աղքատի հագուստ,
Կարծում ես՝ ոչինչ չե՞մ զգում ներքուստ...:*

Նրա միակ մխիթարությունը եկեղեցին է, Աստվածը, որի զորությամբ նրա «սրտից անհետանում է հուզումը չարության»: Նա խաղաղվում է, վերհիշում իր մանկությունը, մոր փաղաքուշ ծայնը, գուրգուրանքը, մտաբերում է հոգեպարար աղոթքներ, մոռանում հոգնածություն ու վիշտ. գիշերները հանգիստ քնում է, ասես հրեշտակներ են թևածում իր անշուք քողտիկում:

*Պիշում եմ ես իմ ջահելությունը,
Իմ անուշ մոր ծեմն ու ծերությունը,
Մոռացվածներին... Ո՞րն ասեմ, ո՞րը...
Էլ չեմ անիծում իմ ծնված օրը...
Աշխատանքս էլ է կարծես հեշտանում,
Գիշերն էլ քունըս շատ հեշտ է տանում...*

Մշակն զգում է կյանքի աններդաշնակությունը, տեսնում է, որ աշխատողը քաղցից մեռնում է, իսկ անբանները վայելում են ուրիշների ստեղծած բարիքը: Աշխարհն այս ուրիշների համար է. նրանցն են դաշտերի կանաչը, երկնքի կապույտը, գարունը՝ զովաշունչ սյուքով. նրանց

համար են շողշողում գեղեցիկ աչքերը. դալար, ծկուն մեջքերն էլ շորորալով նրանց մոտ են գնում: Մինչդեռ ինքը՝ իբրև մշակ, ծնվել է նրանց ծառայելու, նրանց հանգիստն ու անդորրը պահպանելու:

Սակայն այդ ամենը վերուստ է սահմանված ու տրված: Ահա թե ինչու ճիշտ չէ մշակի կողմից իր վիճակի նկարագրությունը ընդունել որպես սոցիալական ճնշման դեմ բողոք: Նա պատկերացում չունի ո՛չ դրությունը շտկելու, ո՛չ էլ նման չարիք ծնող հանգամանքների մասին: Չի համարձակվում երջանկության մասին երազել, պարզապես փորձ է անում հուշել, թե «որքան դժվար է մի կտոր հաց ծարելը», թե ինչպես է «աղքատությունը մաշում մարդու սիրտը», «խավարեցնում հոգու լույսն ու միտքը»: Մշակը համոզված է, որ իր լուծը միայն անդրաշխարհում է իջեցնելու և հավասարվելու «կյանքը խրախճանքների մեջ անցկացրած եղբորը»:

*Էհ, երգով դու գնա ծամկադ, ախպե՛ր,
Իսկ ես էլ մի կե՛րպ՝ մեջքիս ծանրոք բեռ.
Կհասնեմ է՛նտեղ, որտեղ դու հասար,
Որտեղ կլի՛նենք իրար հավասար...*

Թարգմ.՝ Պարույր Սևակ

«Մշակ Բոքուլաձեն» վրացական արձակ բանաստեղծության լավագույն նմուշներից է, որ աչքի է ընկնում նաև լեզվական արվեստով:

Գրիգոլ Օրբելիանիի ստեղծագործական դիմանկարը թերի չթողնելու համար անդրադառնանք նաև «Որդոց ի պատասխան» պամֆլետին:

XIX դարի 60-ական թվականների սկզբներին վրաց գրական-հասարակական կյանքի ասպարեզ իջան նոր սերնդի ներկայացուցիչներ Իլիա ճավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Սերգեյ Մեսխին, Գեորգի Ծերեթելին, Նիկո Նիկոլաձեն, Կիրիլե Լորթքիփանիձեն, Սերգեյ Մեսխին, Սամսոն Աբաշիձեն, Պետրե Նակաշիձեն և ուրիշներ: Նրանց հիմնական նպատակն էր Վրաստանում նորացնել հասարակական կյանքը: Սակայն երիտասարդ գործիչների հայացքներն ու ցանկությունները զգալիորեն տարբերվում էին ավագ սերնդի հայացքներից ու ցանկություններից: Այդ տարբերություն-հակասությունը շուտով արտահայտվում է նաև որոշ հարցերի շուրջ ծավալված բանավեճում, որ վրաց իրականության մեջ հայտնի է իբրև «հայրերի և որդիների» պայքար: Հակամարտությունը գնալով սուր բնույթ է կրում և հասարակական այլևայլ հիմնահարցեր ընդգրկելով՝ դուրս է գալիս գրականության ու լեզվի շրջանակներից, շարունակվում մինչև 60-ական թվականների կեսը, հետո ընդհատվում և վերսկսվում 1871-ից:

1871 թ. Ալեքսանդր Երկրորդ ցարը պետք է ժամաներ Թիֆլիս: Ազնվականությունը պատրաստվում էր դիմավորել և առիթից օգտվելով՝ առաջադրել կարևոր խնդիրներ: Ստեղծվում է հատուկ հանձնախումբ, որի անդամները, սակայն, բաժանվում են երկու խմբի. ոմանք (Գեորգի Ծերեթելի, Իլիա ճավճավաձե) անհրաժեշտ են համարում բարձրագույն ուսումնական հաստատության հարց հարուցել, մյուսները՝ կարևորում են կաղետական դպրոցի գոյությունը: Հիմնական պատճառն այն էր, որ ազնվականությունն աղքատ էր և կոժվարանար ուսման վարձ վճարել, մինչդեռ ռազմական հաստատություններում ուսումը ձրի էր. ծախսը հոգում էր պետությունը: Կար և երրորդ առաջարկ (Նիկո Նիկոլաձե և Նապոլեոն Ամատունի). արքայից տեղական ինքնակառավարման հաստատություն բացելու իրավունք խնդրել: Երկար բանավեճերից հետո ընդունվում է բուհի առաջարկը, բայց հանդիպման ժամանակ այնուամենայնիվ ցարից խնդրում են ռազմական ուսումնարան բացելու թույլտվություն (որը և հիմնադրվում է):

Այդ քայլից զայրացած՝ ճավճավաձեն գրում է խայթող էպիգրամներ («Հանելուկներ», «Դարձյալ հանելուկներ»), ծաղրի ենթարկում ցարական իշխանության կովկասյան պաշտոնյաներին: Ովքե՞ր էին նրանք՝ սենատոր, պետական խորհրդի անդամ Գեորգի Մուխրան-Բատոնի, Կովկասի փոխարքայության խորհրդի անդամ Դմիտրի Ջորջաձե, գեներալներ Լորիս Մելիքով, Գրիգոլ Օրբելիանի, Լևան Մելիքիշվիլի, Իոսիֆ Թարխնիշվիլի, բանաստեղծ, գրականագետ Միքայել Թումանով և այլք:

Ստեղծելով նշված մարդկանց դիմանկարները՝ ճավճավաձեն ամեն մեկին վերաբերող հատվածը վերջացնում է «բայց թքած ունեն ազգի ու երկրի վրա» խոսքերով: Թեև համակրանքով է արտահայտվում միայն Գրիգոլ Օրբելիանիի մասին, սակայն նշում է, որ անվճռականության ու երկչոտության պատճառով ոչ էլ նա է ազգի շահերին պաշտպան կանգնում.

*Սա ծերունի է՝ պնդակազմ,
Հաստամարմին, կարճահասակ,
Անբասիր ու կենսուրախ,
Քաղցրախոս ու սրամիտ:
Հներից միայն սա է մնացել
Ձգայուն ու անաղարտ
Բայց երերուն է ու երկչոտ,
Թեև սիրում է ազգը իր.
Բայց դե սա էլ թքած ունի
Իր ազգի ու երկրի վրա:*

Տողացի թարգմ.

Բանաստեղծությունը տարածվում է ձեռագիր և վրդովում ավագ սերնդի ներկայացուցիչներին: Հենց այդ տարի կայսրից անձամբ բարձրագույն պարզև ստացած գեներալ Օրբելիանին վիրավորվում է իրեն բնութագրող խոսքերից և գլխավորելով «հայրերի» բանակը՝ առաջին անգամ մասնակցում է պայքարին ու գրում «Որդոց ի պատասխան» պարզապես լուսանք պարունակող ոտանավորը. «Մոծակներ, ճանձեր, լիբերալներ, խելքից պակասներ, մոլորյալներ, ջրի տարածներ, կատվի ձագեր, որտեղի՞ց եք կռավում...»:

Հեղինակը ծաղրում է հատկապես Ի. Ճավճավաձեին՝ նրան համարելով «բուրթու պես կլոր, կեղծ բարեպաշտ, ճամփից շեղված անաստված»: Իսկ նոր սերնդի ներկայացուցիչներին մեղադրում է այն բանի համար, որ չեն գնահատում «հայրերի» վաստակը, մինչդեռ հենց այդ «հայրերն» են կյանքի գնով պաշտպանել հողն ու ջուրը, լեզուն ու հավատը: Օրբելիանին թերահավատորեն է մայում երիտասարդ սերնդին, որովհետև նրանք հուսախաբ են անում գրեթե ամեն քայլափոխի, չեն սովորում այն, ինչ «ձեռք է բերվել դարերի ընթացքում, և ինչ պատրաստի հրամցնում են պրոֆեսորները».

*...եղաք Ռուսիայում,
Ասես Աֆրիկայում էիք,
Վերադարձաք ոչինչ չսովորած.
Տհաս գնացիք
Տհաս եկաք,
Մարդ չդարձաք...*

Երիտասարդներին նա դատապարտում է մայրենի լեզվի մեջ արած ռեֆորմի համար: Այդ «կեղծ ժուռնալիստները, տգետները, սուտ Ռուսավելիները պղծեցին մեր գեղեցիկ ու հիասքանչ լեզուն»:

Գր. Օրբելիանին չգնահատեց երիտասարդ սերնդի հայրենամուտ գործունեությունը: Ի՞նչ են անում այդ ապերախտները, չէ՞ որ «թուր ճոճելով, հաղթանակների ճիչ-աղաղակով են փառք նվաճում»: Խորունկ հիասթափություն ապրելով՝ ցավով դիմում է հայրենիքին.

*Հե՛յ երանելի
Հերոսների երկիր,
Մի՞թե իրոք դու այնպես ես ընկել,
Որ քո բախտը
Ու քո հույսը*

*Տնօրինում են սուտ պոետները,
Կեղծ լիբերալները,
Պատրիոտները`
Մեսխին, Մեվելեն, Մելիք-աղաները...*

Տողացի թարգմ.

Այս բանաստեղծությունը վերարտադրում է XIX դարի 60-70-ական թթ. «հայրերի» և «որդիների» աշխարհընկալումն ու դիրքորոշումը:

Գրիգոլ Օրբելիանին ինքնատիպ բանաստեղծ էր: Նա կարևոր դեր խաղաց վրաց գրականության տվյալ փուլում. խորացրեց գրական նոր ուղղությունը` ռոմանտիզմը, բազմերանգ դարձրեց մի շարք մոտիվներ` ողբը, հոռետեսությունը, զգայական սերը, կյանքի անցողիկությունը, անցյալի գովքը և այլն: Ջարգացրեց եղերերգության ժանրը («Քրոջս` Էփեմիային»), ստեղծեց սպիտակ բանաստեղծության հիանալի նմուշ («Մշակ Բոքուլաձե»), նոր բովանդակություն հաղորդեց ծոնի և էպիտաֆիայի ժանրերին. այս ամենը ազգային գրականության շրջանակներում, իհարկե:





Վրացական ռոմանտիզմը ընդհանրացնում և բարձրակետին է հասցնում գրական այդ ուղղության խոշորագույն ներկայացուցիչ Նիկոլոզ Բարաթաչվիլին:

Շոթա Ռուսթավելուց հետո վրաց բանաստեղծական հանճարն իր մարմնավորումը գտավ Նիկոլոզ Բարաթաչվիլու երկերում: Ստեղծագործելով XIX դարի 30-40-ական թվականներին, որ հայրենի երկրի համար շատ բարդ, հակասական և նույնքան էլ հետաքրքիր ժամանակաշրջան էր, երիտասարդ բանաստեղծը, համակված ժողովրդի հոգսերով ու ճակատագրով, ազգային պոեզիան հասցրեց համաշխարհային մակարդակի՝ իր անունը հնչեցնելով Բայրոնի, Շել-

լիի, Միցկևիչի, Լամարտինի, Նովալիսի անունների շարքում:

Ն. Բարաթաչվիլին ծնվել է 1817 թ. դեկտեմբերի 27-ին, Թիֆլիսում (կնքահայրը եղել է իշխան Նիկողայոս Արղության-Երկայնաբազուկը): Յայրը՝ Մելիտոնը, միջին կարողության ավատ էր: Մայրը՝ Էփեմիան, Յերակլ Երկրորդի թոռնորդին էր, Գրիգուլ Օրբելիանիի քույրը:

Նիկոլոզ Բարաթաչվիլին 1827 թվականից սովորել է Թիֆլիսի ազնվականական ուսումնարանում (1830-ից՝ գիմնազիա), որ ռուսական էր թեև, բայց ուսուցանվում էին վրաց լեզու և գրականություն, պատմություն, աշխարհագրություն, ինչպես նաև գերմաներեն, ֆրանսերեն: Վրացագիտական առարկաների ուսուցիչը Սոլոմոն Դողաչվիլին էր, որը զգալի ազդեցություն է թողել ապագա բանաստեղծի քաղաքական և գեղագիտական հայացքների ձևավորման վրա: Այդ ազդեցությունն այնքան մեծ է եղել, որ «այլախոհ» պատանին մեղադրվել է նույնիսկ Դողաչվիլու «մտերիմը» լինելու մեջ և ենթարկվել կալանքի: Բանն այն է, որ 1833 թ. գիմնազիայում տարածվում են Նիկոլոզի էպիգրամները, որ շփոթություն է առաջ բերում հատկապես ուսիկանության շրջանակներում: Իսկ դա 1832 թ. հայտնի դեպքերից հետո էր, ուստի

Բարաթաշվիլիների բնակարանը ենթարկվում է խուզարկության: 16-ամյա աշակերտի գորոցներում «հակապետական» ոչինչ չհայտնաբերելով՝ ազատում են մի քանի օր տևած կալանքից (մտերիմ, համակիր պաշտոնյաները նախազգուշացրել էին սպասվող խուզարկության մասին, և նա թաքցրել էր «վտանգ ներկայացնող» որոշ ոտանավորներ): Այդ տարիներին Բարաթաշվիլին համախմբում է հասակակից ստեղծագործողների, կազմակերպում գրական երեկոներ, թարգմանում ու թարգմանել տալիս ռուսական ու եվրոպական պոեզիայի լավագույն նմուշներից: 1833-1834 թթ. իր դասընկեր Միքայել Թումանովի հետ կազմում է ձեռագիր անթոլոգիա, որտեղ զետեղվում են գիմնազիայի սաների ոտանավորները: Շուտով լույս են ընծայում ռուսերեն պարբերական ևս՝ «Գիմնազիայի ծաղիկը»:

Պատանի Բարաթաշվիլին պարզապես կլանում էր գրական ամեն մի նորույթ, ծանոթ էր Բայրոնի, Միցկևիչի, Պուշկինի, Լերմոնտովի երկերին, հանդիպում էր Թիֆլիս աքսորված դեկաբրիստներին, յուրացնում նրանց գաղափարները, բանաստեղծություններում արտացոլում էր բոլոր այն անցքերը, որ տեղի էին ունեցել և շարունակվում էին այդ տարիներին: Դրանք պատմական նոր պայմաններով թելադրված գաղափարներ էին, որ պայքարի էին կոչում հանուն անհատի ազատության:

1835-ին ավարտում է գիմնազիայի դասընթացները և չնայած իր արտասովոր տաղանդով գրավել էր հարազատների, բարեկամների, ընկերների և ուսուցիչների ուշադրությունը, բայց նյութական պայմանների, հոր հիվանդության, ապա և սնանկացման պատճառով ստիպված հրաժարվում է բարձրագույն կրթություն ստանալու երազանքից և ընտրում պետական ծառայությունը. 1835-1844 թթ. գրասենյակի կրտսեր աշխատող է՝ գրագիր, ապա բաժնի պետ (այն ժամանակ՝ սեղանավար): Հետաքրքրվելով քեռորդու ապագայով՝ Գր. Օրբելիանին եղբորը՝ Ջաքարին, հանձնարարում է գրադվել Տատոյի (մանուկ հասակում այսպես էին կանչում Նիկոլոզին) ուսման հարցով, այլապես «ցավալի, շատ ցավալի կլինի, եթե նրա տաղանդին զարգանալու հնարավորություն չտրվի»: Իսկ ինչքան քիչ բան էր պետք տաղանդաշատ պատանուն, որ նա ամբողջ ձայնով հնչեցներ իր քնարը: Խոսելով այդ մասին՝ Նիկոլոզը մորեղբորը՝ նույն Ջաքար Օրբելիանին, գրում է. «...Дай мне маленькое независимое состояние, я бы сейчас оставил и свет и людей с их ненасытностью и мирно и покойно провел бы патриархальную жизнь в лоне простой природы, столь вели-

чественной и прекрасной в нашем отечестве”¹:

1844 թ. նոյեմբերին Բարաթաշվիլին նշանակվում է Նախիջևանի գավառապետի օգնական: Հարազատներից, ընկերներից ու ծանոթներից կտրված՝ նա կարոտում, թախծում ու տառապում է: Մայկո Օրբելիանիին հղած նամակում այսպես է նկարագրում իր առօրյան. «Ծիշող որ ասեմ, մեր այստեղի կյանքը տանջանք է ու տհաճություն...»: Այնտեղ երկար չի մնում, 1845 թ. մարտին վերադառնում է Թիֆլիս և երեք ամիս անցկացնում մտերիմների միջավայրում:

Հարազատներից մեկի՝ Մամուկա Օրբելիանիի խորհրդով Բարաթաշվիլին մեկնում է մեկ այլ աշխատավայր՝ այս անգամ՝ Ելիզավետպոլ (Գանձակ), դարձյալ որպես գավառապետի օգնական: Այստեղ էլ նրա կյանքն ընթանում է ծանր ու անհրապույր պայմաններում: Օղջ նույնպես աննպաստ էր նրա թույլ օրգանիզմի համար: Հերթական անգամ ավազակներին հետապնդելիս մրսում է և անկողին ընկնում: Անօգնական ու խնամքից զուրկ՝ վախճանվում է 1845 թ. հոկտեմբերի 22-ին: Նրան թաղում են տեղի ռուսական եկեղեցու բակում: Ասես իրականանում է հենց իր՝ բանաստեղծի գուշակությունը. «Թող մեռնեմ այդպես անտեր ու անտուն, ճամփեքին անժայր»: Նրա մահից յոթ տարի հետո միայն տպագրվեց մի քանի բանաստեղծություն, և վրաց հանրությունն զգաց, թե որքան մեծ բանաստեղծ ու անհատականություն է կորցրել:

Հարուստ չէ վաղամեռիկ բանաստեղծի գրական ժառանգությունը, բայց նա գագաթն է մի ամբողջ հարյուրամյակի վրաց պոեզիայի և մեծություններից մեկը համաշխարհային քերթության:

Պատանեկան տարիներին տուրք տալով արևելյան պճնազարդ բանաստեղծությանը՝ հասուն տարիքում կարողացավ ազգային պոեզիային հաղորդել համամարդկային բովանդակություն:

Ն. Բարաթաշվիլու ստեղծագործություններում տեղ գտած վշտի և թախծի մոտիվը պայմանավորված է իրականության հանդեպ ունեցած դժգոհությամբ: Նա երազել է վառ անհատականության տեր և կապանքներ չհանդուրժող հերոսների մասին, երազել բարոյական բարձր հատկությամբ օժտված մարդկանց շրջապատ ունենալու մասին, այնինչ ապրել է չինովնիկների, քաղքենիների, գինարբուքների մեջ հոգի ու մարմին մաշող ազնավորների միջավայրում: Անձնական տենչերի խորտակումը (1832 թ. ընկնում է գիմնազիայի աստիճաններից, կոտրում ոտքը և ընդմիշտ մնում կաղ, մինչդեռ նրա երազանքը ռազմական բարձրագույն կրթություն ստանալն էր), անպատասխան սերը, հայրա-

¹ Նիկոլոզ Բարաթաշվիլի, Երկեր, Թբիլիսի, 1968, էջ 185 (նամակը գրված է ռուսերեն. նպատակահարմար գտանք մեջբերել բնագրով):

կան տան սնանկացումը նրան պատճառում են դառն ապրումներ ու չարագուշակ մտքեր. տեղի է ունենում կենսատենչ անհատի և ամուլ իրականության բախում.

*Քո թախիծն անծիր, մրմունջը լացիդ՝
Չոգեմաշ ու խոր ցավը հառաչիդ՝
Պատում են հոգիս տխուր հուշերով անցած օրերի...
Չե՛յ, չոնգո՛ւր, չոնգո՛ւր, վշտոտ բարեկամ,
Խի՛նդով հնչեիր գոնե մեկ անգամ,
Որ հոգիս այսպես այրող խոհերին չմնար գերի...*

Զգայուն բանաստեղծն իրեն խորթ է համարում, որք և օտար, նա ընկեր, բարեկամ, մտավոր կարողությունների տեր այնպիսի մեկը չունի, որին հնարավոր լինի հաղորդակից դարձնել հոգին կեղեքող մտքերին ու խոհերին, ուրախությանն ու վշտին: Ծանր է մարդու կացությունը, եթե որք է հոգով, միայնակ է և անընկեր: Մայկո Օրբելիանիին հղած նամակներից մեկում Բարաթաշվիլին գրում է. «Պատկերացրու, Մայկո, կսկիծը մի մարդու, որ ծնողներ ունի, քույրեր, բազմաթիվ հարազատներ, բայց ոչ մեկին ապավինել չի կարող. որք է այս լի ու լայնարձակ աշխարհում»: Նամակի շարունակության մեջ բանաստեղծը տալիս է հանրության որոշ մասի բնութագիրը. «Ում վսեմ զգացմունքի տեր էի կարծում, հոգի չունեցավ, ում տաղանդավոր էի կարծում, մինչև անգամ դատելու ունակ չեղավ, ում արցունքները համարում էի առիավատչյա տառապած ու գեղեցիկ հոգու, պարզվեց՝ կեղծիքի նշաններ են, ահավոր թույնի կաթիլներ»:

Չանդիպելով աղքատամիտ, շահի ու փառքի հետևից ընկած մարդկանց՝ նա խոր հիասթափություն է ապրում ու տալիս իսկապես հոգեկեղեք հարց. «Ո՞ւր հանգրվանի հոգիս, ո՞ւր դնեմ գլուխս»: Բանաստեղծն այն կարծիքին է, որ հարազատներ, բարեկամներ, մտերիմներ, նույնիսկ հայրենիք կորցրած մարդիկ կարող են ապրել ու համակերպվել ստեղծված կացության հետ, կարող են փոխարինող գտնել ու սփոփվել, բայց հոգով որբի վիճակը անմխիթար է, սիրտը՝ անամոք: Նա հավատակորույս է և հուսաբեկ.

*Ա՛խ, ծանր է խիստ, մենավոր է երբ հոգին,
Անմասն է նա կյանքի ժպտին, վայելքին,
Չիշում է միշտ, սգում կորած զույգն իր թանկ.
Թառանջն է խոր լուկ ամոքումն իր միակ...*

Հոգով որբացած բանաստեղծը հեռանում է հասարակությունից, որ անդորր գտնի բնության գրկում: Բայց այստեղ էլ ամեն ինչ շղարշված է դառնության քողով: Մենամալով Կուրի գեղատեսիլ ավիին՝ նա մտովի տեղափոխվում է անցյալ և հանգում հետևության, որ նախնիների կյանքն էլ դատարկ է եղել, նրանց կարոտն ու տենչանքները նույնպես մնացել են անկատար:

*Ձորավոր ու հաղթ արքաներն անգամ, որոնցից վսեմ
Չկա ուրիշ փառք, որ կյանքում այս սին մարդիկ երազեն՝
Հուզված, տագնապած լոկ այն են ասում՝ «Ա՛յս, ինչպե՞ս ամենք՝
Այն տերությունն էլ միացնենք մերին», ու առնում են զենք,
Կռվի են գնում այն հողի համար, որինն են իրենք...*

Ոչ միայն հասարակ մահկանացուներն են մնացել իրենց իղծերի իրականացման կես ճամփին, այլև հզոր արքաները:

*Ո՛չ, հանգիստ չունի աշխարհում թեկուզ արքան էլ բարի,
Նրա կյանքն էլ ողջ հոգս է անդադրում, մաքառում արի,
Խորհում է նա միշտ, թե ինչպես վարի նավն իր տերության,
Ինչպես պահպանի իր զավակներին անվիշտ, անվտանգ,
Որ հետնորդները ամուսին նրա չհղեն ամենք...*

Բայց իրականությունից հեռանալը փախուստ չի նշանակում, և սա Բարաթաշվիլու արժանիքներից է: Նա մենության չի ձգտել, չի կաղապարվել իր մեջ, ընդհակառակը, պախարակելով նմաններին՝ քաղաքացիական ակտիվության է կոչել այն անձանց, ովքեր, հասարակության շահերն անտեսելով, դարձել են կրավորական:

*Սակայն, քանի որ մարդիկ ենք կոչվում, որդիք մայր հողի,
Հետևենք պիտի օրենքին նրա, կամքին ծնողի,
Ինչի՞ է մման, որ մարդը առողջ՝ դիակ դառնա քար,
Աշխարհում ապրի և ոչինչ չանի աշխարհի համար...*

Թարգմ.՝ Հովհ. Կարայան

Անհատի և իրականության ողբերգական բախման պատկերը կա «Չար ոգի» բանաստեղծության մեջ. քնարական հերոսը հավատում է, թե անցողիկ աշխարհում կարելի է երջանկություն գտնել, հասնել նպատակին, թե կյանքը կարելի է վերածել դրախտի, խավարը՝ լուսի, կամայականությունը՝ արդարության:

*Ա՛յդ էիր արոյոք ջահել օրերիս դու բերում նվեր,
հրրև թե կյանքում ինձ կտաս ազատ ճախրանքի թևեր,
Տանջանքների մեջ վերջապես կտաս ցուանքը բախտի,
Եվ դժոխքն անգամ կփոխես կանաչ, պայծառ դրախտի:*

Բայց իրականությունը թևաթափ է անում. նրա իղծերը, բախվելով ամուր պատնեշի, փշրվում, հօդս են ցնդում: Նա կորցնում է հոգու անդորրը, անիծում այն օրն ու ժամը, երբ կուրորեն անսաց չար ոգու ձայնին, և իր հուսախաբ հոգու ողջ մաղձը թափում է նրա գլխին:

*Չեռացիր, գնա՛, ո՛վ դու չար ոգի, ո՛վ գայթակղիչ,
Էլ ի՞նչ եմ հիմա՝ մեռակ ու անհույս, լքված ամենքից,
Մտքով անհավատ, սրտով անվստահ ու հոգով չնչին,
Չազարժ վայ նրան, ում որ ավերիչ քո ձեռքը դիպչի...*

Չավատարիմ իր ոգուն՝ թևաթափ չի լինում, զենքերը վայր չի դնում, գոտեմարտում է ուխտադրուժ ճակատագրի դեմ՝ հանուն նվիրական իղծերի իրականացման, հանուն ապագայի, հանուն երջանկության:

*Ա՛յս, կուզեի լինել արև, շուրջս սփռել լույսեր անգին,
Երեկոյան հանգչել խաղաղ, որ ավելի վառվեմ ծագին:
Ես կուզեի լուսաստղ լինել, այգաբացի պայծառ գուշակ,
Որ իմ գալուն սպասեին հավքեր ամեն, վարդ -մանուշակ:*

Նա համոզված է, որ կամոքվեն հոգու ցավերը, կցրվի խավարը, կբացվի այգը:

* * *

Բարաթաշվիլու ստեղծագործության պսակը «Մերանին» է, որ «վրաց գրականության ոսկեդարանում փայլում է ինչպես փիլիսոփայական մտքի, գեղարվեստական ներշնչանքի, քերթողական արվեստի ոսկեծույլ հուշարձան»: Այո՛, լեզվի հարստությամբ, պայքարի ու ընդվզումի կոչով, փիլիսոփայական խոր մտքերի ընդգրկումով և այլ անժխտելի արժանիքներով այն երևույթ է, զագաթնակետ վրացական ռոմանտիզմի պատմության մեջ:

«Մերանին» գրելու առիթ համարվում է պատմական հետևյալ փաստը: 1842 թ. Դաղստանում լեռնականների դեմ կռիվների ժամանակ Իլյա Օրբելիանին, որ Բարաթաշվիլու մորեղբայրն էր, հասակա-

կիցը, դասընկերն ու մանկության ընկերը, գերեվարվում է: Լուրը ցնցում է բանաստեղծին, և իր հույզերն ու ապրումները նկարագրում է մորեղբայրներից ավագին՝ Գրիգոր Օրբելիանիին հղած նամակում (2. 05. 1845). «Չգիտեմ՝ այս ոտանավորները քեզ դուր կգան, թե չէ, բայց դրանք այստեղ կարդալու միջոցին շատ կեղծ ու անկեղծ արցունք հեղվեց, անշուշտ, նրա համար, որ այդ ամենն ասում է Իլյան գերության մեջ, և ոչ թե ես: Երբ իմացա Իլյայի գերի ընկնելու մասին, անկեղծ ասած, շատ վշտացա, այնպես որ երեք օր շնամտ էի հազար ու մի մտածումներից ու ցանկություններից, և եթե որևէ մեկն ինձ հարցներ, ես ինքս էլ չէի կարող պատասխան տալ, թե ինչ է ուզածս: Ի վերջո երրորդ օրը գրեցի այս տողերը, և նրանք ասես թե մասնակի թեթևություն բերեցին ինձ: Փորձում եմ ինչ-որ կերպ Իլիկոյին հասցնել. գիտեմ՝ հոգու խորքում ծիծաղելու է, բայց դե քիչ-միչ էլ կմխիթարվի սրանցով»:

«Մերանիի» փիլիսոփայական հավատամքը բացահայտելու բանալի կարող են ծառայել նաև դարձյալ Գր. Օրբելիանիին գրած նամակի հետևյալ տողերը. «Հնազանդվել եմ ճակատագրին, բայց երբեմն ցասումով պատրաստ եմ մարտնչելու նրա դեմ. կամ նա ինձ կհաղթի, կամ ես կհասնեմ իմ նպատակին»:

Ն. Բարաթաշվիլին նկարագրում է տառապած, բայց աննկուն հոգու պայքարն ընդդեմ ուխտադրուժ ճակատագրի, ընդդեմ իրականության, որ թունավորել է իր կյանքը և խոչընդոտել երազների իրականացմանը: «Մերանի» հեղինակի աշխարհընկալման վառ արտահայտությունն է: Նրանում ասես հանրագումարի է բերված այն ամենը, ինչ ապրել և զգացել է բանաստեղծը: Դա խորհրդանշական մի պոեմ է, որտեղ շեշտված է մի կողմից՝ անհատի գաղափարների և իրականության խոր հակասությունը, մյուս կողմից՝ անհատի նպատակասլաց պայքարն ընդդեմ դժխեմ ճակատագրի: Ազատության գաղափարի զինվորը այլևս չի կարող շնչել այն գաղջ մթնոլորտում, որտեղ հարգի են կեղծիքն ու եսապաշտությունը, որտեղ ոտնահարվում են մարդու զգացումները: Անկարող այդ ամենը հանդուրժել՝ հեղինակը հեռանում է դեպի երկինք, դեպի արեգակ.

*Ավա՛ղ, հայրենիք, հեռանում եմ, մտերիմներիս հրաժեշտ տալիս,
Թող էլ չտեսնեմ հեզ ծնողներիս, չլսեմ շշուկն անուշիկ յարիս,
Ուր գիշերն իջնի՝ այնտեղ լուսանա, այնտեղ էլ գտնեմ հայրենիք ու հող,
Եվ սրտիս անհուն գաղտնիքը պատմեմ միայն աստղերին ինձ
հետ սլացող...*

Հեռանալը խուսանավել չէ, ոչ էլ փախուստ: Ընդհակառակը, նա մարտահրավեր է նետում ճակատագրին ու ողբերգական վախճանի լրաբեր չար անգղին, որ հետապնդում է դեպի արև սլացող հեծյալին: Եվ քանի որ պայքարը դաժան բնույթ է կրելու, հեծյալը խնդրում է իր Մերանիին թեկուզ կյանքի գնով հաղթահարել ամեն արգելք ու սահման:

Ենդքի՛ր հողմը ժանտ, ջրերը պատռի՛ր, սավառնի՛ր գլխով

ժայռ ու ձորերի,

Թռի՛ր ու կարծիք անհամբեր վազքիս ճամփեքին ընկած շարանն օրերի,

Թռի՛ր, իմ թռչուն, չփորձես ծածկվել ո՛չ գոռ հեղեղից,

ո՛չ ցուրտ ու տապից,

Որքան հոգնած ու անուժ լինեմ՝ վազքդ չմեղմես, չխղճաս դու ինձ:

Ազատատենչ հերոսի ցասունն այնքան հզոր է, որ կարող է թողնել հայրենիքը, ընտանիքը, հարազատներին ու բարեկամներին, սիրած աղջկան, պատրաստ է մահ ընդունել օտար երկնքի տակ, թեկուզ չարժանանա մի բուռ հողի, սիրուհու արցունքին, միայն թե թոթափի ստրկության շղթաները:

Թող ես չթաղվեմ հայրենի հողում, շիրիմների մոտ իմ նախնիների,

Թող սրտիս սիրածը իմ գերեզմանին իր աչքի թասով արցունք չբերի,

Թող արձակ դաշտի ամայության մեջ շիրիմս փորի անգղը կռիմչով,

Ցուրտ ոսկորներիս հող ու քար ցանի քամին խելագար կանչով ու ծիչով:

Եվ չնայած այդ բաղձանքին՝ այդուհանդերձ դժվար չէ զգալ նրա հոգու կանչը, տառապանքը, կարոտը հայրենի եզերքի, հարազատների, բարեկամների, մտերիմների, ընկերների ու սիրած աղջկա հանդեպ: Բանաստեղծը համոզված է, որ սև ճակատագրի հետ գոտեմարտից ինքը հաղթանակով է դուրս գալու: Այդ հավատը նոր լիցք է տալիս, ոգևորում է չընկրկել, չդողալ, հետ չնայել: Պայքարի թոհուբոհում նա երանություն է զգում, քանզի մոռանում է իրեն տանջող մտքերն ու խոհերը, փարատում վիշտը:

Թող նետեմ ծովին հառաչը սրտիս՝ մասնիկը հոգուս,

Եվ չքնադագեղ մղումին քո սեզ՝ խենթ, փոթորկահույզ,

Թռի՛ր, իմ մժույզ, օ՛, չունի՛ սահման քո սլացքը սեզ,

Եվ հովին տալով ցրի՛ր խոհերիս փոթորիկը սև:

Հեղինակը միայն անձնական երջանկության համար չի մարտնչում. նա առաջնորդվում է մարդասիրական գաղափարներով՝ ոչնչացնել մարդկանց ազատությունը, մտքերն ու ձեռքերը կաշկանդող ուժերը: Բանաստեղծի երազանքն է անձամբ պարզել այդ ազատությունը, իսկ եթե չկարողանա, ապա ընկնել մարտադաշտում և սեփական օրինակով վարակել սերունդներին: Քնարական հերոսը վստահ է, որ իր պաքարը զուր չի անցնի, որ Մերանիի սլացքին կհետևեն շատ հեծյալներ.

*Ո՛չ, զուր չի անցնի, կհաղթի՛, գիտե՛մ, զոհվածիս հոգո այս աղմուկը խենթ,
եվ ամանց ուղիմ՝ քո վազքով հարթված՝ իմ արի մժույգ, կմնա՛ հավետ,
Նա եղբայրներիս ընթացքի հանդեպ կսփռի ծամփա առավել դյուրին,
Որ չկասեցնի էլ ոչի՛նչ, ոչի՛նչ՝ սև բախտին զարկած այն մժույգներին...*
Թարգմ.՝ Դովհ. Կարայան

Բարաթաշվիլին չի երկյուղում ո՛չ պարտությունից, ո՛չ մահից, քանզի վստահ է, որ ինքը թեկուզ կյանքի գնով ուղի է հարթում սերունդների համար: «Մերանին» արտացոլում է հեղինակի տարերքը՝ իր բոլոր դրսևորումներով, նվիրական իղձերը, կենսասիրությունն ու անկոտրում կամքը:

* * *

Ն. Բարաթաշվիլու քնարերգության մեջ մեծ տեղ են գրավում սիրային երգերը: Բանաստեղծը պատանեկան տարիներին ունեցել է ռոմանտիկական հրապուրանքներ և վերարտադրել սիրած աղջկա արտաքին բարեմասնությունները. սպիտակազգեստ, վարդ այտերով, խալը երեսին, վայելչատես մի էակ է նա: Սկզբնական շրջանի սիրո քնարը հնչում է իբրև քնքուշ հոգու լար, զուլալ, մաքուր ու եթերային.

*Երբ հովն է ցրում վարսերդ թել-թել
Ու քերձ համբույրով շնջում է սեր՝
Օ՛, բռնկվում են աչքերս խանդից,
Մի դաժան հրով այրվում է հոգիս...*

Հետագայում, երբ անարձագանք են մնում նրա զգացումը, քնքշանքն ու գորովանքը, դրանք ասես մարմին են առնում՝ դառնալով զգայություն, տենչանք ու տարփանք:

*Երբ երջանիկ եմ քեզ հետ լինելով,
Երբ մայիս ես վառ անուշ ժպիտով,
Դրախտ եմ տեսնում երբ աչքերիդ մեջ
Եվ այրվում նրանց կրակով անշեջ-
Ա՛խ, չե՛ս հավատա, ա՛խ, չե՛ս հավատա,
Ա՛խ, չե՛ս հավատա, սիրում եմ ինչպես...*

Ն. Բարաթաշվիլու սիրային երգերը նվիրված են Եկատերինա ճավճավաձեին: Բանաստեղծը հաճախ է այցելել այդ տուն, զրուցել Եկատերինայի հետ, ոգեշնչվել նրա գեղեցկությամբ, նրան համարել իր մուսան և ձեռագիր տետրը նվիրել որպես հիշատակ: Ահա «Իշխան ճավճավաձեի դուստր Եկատերինային» ներբողը.

*Քո երգով անուշ,
Ձայնով սրտահույզ
Խիսնդ տվիր սրտիս, ո՛վ եթերային,
Դայացքով բեկ-բեկ,
Սրտիս բացում վերջ
Եվ ամոքում ես ժպիտով կրկին:
Այնտեղ, ուր դու կաս,
Դմայք կա անհաս,
Երբ չկաս՝ վիշտն է բացում ասպարեզ,
Լեզուդ հոգեթով
Տոգորված խիսնդով
Բերում է անհուն բարու շունչը մեզ:*

Եկատերինան եղել է 1830-1840-ական թվականների Թիֆլիսի ամենահմայիչ կանանցից մեկը. «մաքուր գեղեցկության հանճար», հիանալի դաշնակահար, երգչուհի, պարուհի, նրա շուրջն են պտտվել ինչպես Վրաստանի բարձրաշխարհիկ երիտասարդները, այնպես էլ այլ երկրներից ժամանած մտավորականներ, որոնք ավելի հաճախ իջևանել են ճավճավաձեների հյուրընկալ հարկի տակ:

Եկատերինան բարձր է գնահատել երկրպագուին, գորովանքով վերաբերվել նրան, փայփայել ու խնամքով պահել է նվիրական տետրը, բայց չի փոխադարձել նրա սերը: Թերևս հուսախաբ սիրո ազդեցությամբ է պոետը գրել տխուր մրմունջներ պարունակող «Մի տաճար տեսա» տաղը:

Երկար դեգերումներից հետո բանաստեղծը գտնում է «մի տա-

ճար, լուռ անապատում մի ապաստարան», որտեղ վառվում է «հավերժ անմար մի սրբազան լամպար», հնչում է «Դավթի քնարը», դողանջում «մեղմ երկնային խմբի երգը սրտագեղ»: Կյանքի կրքերից խաբված բանաստեղծը ասես հոգու անդորր է գտնում.

*Այնտեղ, խնկի տեղ ես իմ սերն էի խնկարկում անբիժ,
Աղոթք դարձնում հառաչը՝ թռած իմ հոգուց, սրտից,
Այդ խինդով լցված, այդ սուրբ բերկրանքով լիացած այնպես,
Կարծում էի, ա՛խ, դրախտն երկնային այդ էր իսկապես...*

Բայց տրորված, չար մարդկանցից խոցված և հարափոփոխ բախտից հալածված պանդուխտը աշխարհում զուր է հանգիստ փնտրում: Գտած հանգիստն էլ ակնթարթ է տևում: Ոչ էլ այդպիսի սերն է անդորր բերում նրա փոթորկուն հոգուն: Անցողիկ կյանքն «ո՞ւմ է ուրախացրել երկար ժամանակ»: Բանաստեղծի սիրո «հուրն ու հետքը» շատ շուտ անհետանում են, նրա հոգուն նորից «խարիսխ են ձգում խավար ու վերք»: Հատկապես Եկատերինա Ճավճավաձեին նվիրված քերթվածքներում մեծ մասամբ արտաքինն է գովերգվում՝ այրող աչքեր, նուրբ շրթունքներ, դյութող այտեր, մեղմ ու հնայիչ ձայն, ականջօղեր, որ խաղում են իրենց ստվերի հետ.

*Թիթեռնիկն ինչպես
Օրորում է հեզ
Ճերմակ շուշանի թևերը լուսավետ՝
Այդպես, սիրահար
Ականջօղը վառ
Խաղում է քնքուշ իր ստվերի հետ:
Ա՛խ, երնե՛կ նրան,
Ով քո թրթռան
Ստվերին հպի հոգու շունչը տաք.
Քեզ օրորելով
Ջեփյուռը գերող
Կմարի սրտի կրակները բարկ...*

Բայց Բարաթաշվիլին միայն մարմնականի գովքը չի արել: «Նարգիսը և կակաչը», «Ինչո՞ւ ես նախատում» քերթվածքներում կա այն միտքը, թե «դեմքի գեղեցկությունը դեռևս հոգու գեղեցկությունն չէ», թե արտաքին հմայքից ծնված զգացումն անցողիկ է, անկայուն, դա մնան է ծաղկի, որ դալկանում է ժամանակի հորձանքում: Սերը շնորհվում է 150

երկնքից, նրա երկարակեցությունը ոչ թե գեղեցիկ մարմնի պաշտամունքի վկայություն է, այլ երկու անձանց հոգիների մտերմության: Այն հոգուն կուտակված զգացմունքների, հույզերի ու ելևէջումների արտահայտություն է.

Գեղեցիկը լույս է,

Նրանով շողշողում է ամեն զգացում, սիրտ ու հոգի,

Եվ մարդիկ, որ մասնիկն են աստվածության,

Ինչո՞ւ են կարծում, թե չեն կարող սիրել հավիտյան:

Տողացի թարգմ.

Բանաստեղծի երգած սերը վերացական գաղափար չէ, այլ իրական է, մարդկային: Այդ շենշող երգերը այսօր էլ իրենց պատվավոր տեղն ունեն վրաց սիրային քնարերգության գանձարանում:

* * *

Ն. Բարաթաշվիլին խորապես ուսումնասիրել է հայրենիքի անցյալն ու ներկան և այնքան պատրաստված է համարել իրեն, որ փափագել է գրել Վրաստանի պատմությունը: Երկրի հոգսերով ապրող բանաստեղծը «Քարթլիի բախտը», «Յերակլ արքայի գերեզմանը», «Սոխակն ու մծիրին» երգերում արծարծել է ազգային ազատագրության խնդիրը, որ առավել շեշտված զարգացրին Ի. Ճավճավաձեն, Ա. Ծերեթելին, Վաժա Փշավելան և ուրիշներ:

«Քարթլիի բախտը» պոեմը նվիրված է վրաց ժողովրդի պատմության նշանակալից դեպքերից մեկին՝ Ռուսաստանին Վրաստանի միավորվելուն: Աղա-Մահմադ խանը 1795 թ. մեծաքանակ զորքով հարձակվում է Վրաստանի վրա: Յերակլին չի հաջողվում կանոնավոր զորք կազմավորել: Անմիաբան ֆեոդալներն ու թավադները ջոկատներ ու զինամթերք չեն տրամադրում: Գտնվելով ծանր կացության մեջ՝ պարսկական սպառազինված հզոր բանակի դեմ արքան հանում է աշխարհագրայիններից ու կամավորներից կազմված յոթհազարանոց մի զորախումբ: Սեպտեմբերի 13-ին Յերակլը պարտվում է: Աղա-Մահմադ խանը հաշվեհարդար է տեսնում քաղաքի պաշտպանների և խաղաղ բնակչության հետ: Պատմական այս եղելությունն է Բարաթաշվիլու պոեմի հիմքում:

Երկն սկսվում է ներքողով. դիմելով կախեթցիներին՝ հեղինակն ասում է, որ ինքն անմահ հուշարձան է կանգնեցնում հերոսի՝ Պատարա Կախիի (Յերակլ արքայի փաղաքշական անունն է, նշանակում է փոք-

րիկ կախեթցի) հիշատակին: Ապա խնդրում է գինու թասով խմել քաջա-
զուն նախնիների հիշատակի կենացը, հիշել նաև բանաստեղծին.

*Երբ դուք, ձեր ձևով, հայրենի գինով վայել տաք սրտին,
Թասը վեր պարզած վերհիշեք անցած օրերն այն կրկին,
Ու հերթով նախնյաց ողորմաթասը պարպեք հոտնկայս,
Չիշեցեք նաև դարիք պոետին, որ պատմեց ձեզ այս:*

Առաջին դրվագում պատկերված է Չերակլի աղոթքը. նա ծնկա-
չոք, ձեռքերը վեր կարկառած՝ մարտից առաջ դիմում է «բարի հովվին»
և խնդրում, որ թշնամիներով շրջապատված Վրաստանին վերադարձնի
նախկին փառքը, թշնամուն թույլ չտա երկիրն ավերել: Ապա զորքը տե-
ղաբաշխում է Կրծանիսի հովտում և հանդես է գալիս ոգեշունչ ճառով՝
հիշեցնելով, որ կշեռքի նժարին է հայրենիքի «լինել-չլինելու» հարցը.
թեկուզ կյանքի գնով թշնամուն պետք է վտարել երկրից: Սեղմ, բայց բու-
վանդակալից պատկերում է ռազմավարի թոհուբոհը, զենքերի շառաչն
ու ձիերի խրխինջը, վիրավորների հառաչն ու արնաներկ Կուրը, դիա-
ծածկ դաշտն ու մառախլապատ օրը: Կողմերը կռվում են հավասար
ուժով:

*Կողմերին զատեց խավարն անթափանց,
Մնացին հաղթող իրերները քաջ:*

Բայց այդ հաղթանակը Չերակլին ուրախություն չի պատճառում.

*Սակայն, երբ զորքին արքան նայեց լուռ՝
Ժպիտի չփոխվե՛ց հայացքը տխուր:
Թանկ գնով էր նա հաղթանակն առել:*

Զգալով՝ անհնար է դիմակայել թշնամուն, բազմափորձ զորավա-
րը ջոկատները հետ է քաշում Նարիդալա անառիկ ամրոց, որտեղ դիր-
քեր են գրավում և սպասում այգաբացին.

*Լուսացավ: Ելավ արեգակն անմար,
Սակայն լուսատուն շողերի տեղ վառ՝
Թիֆլիսի վրա տարածեց խավար...*

Այս տողերը նորից լարում են, հուզում, նաև հուշում, որ կատար-
վելու է անսպասելի, ահավոր բան. բնության նկարագրությամբ էլ բա-
152

նաստեղծը նախապատրաստում է ընթերցողին:

Երեք օր անընդմեջ, բայց անարդյունք գրոհներից հետո Աղա-Մահմադ խանը որոշում է թողնել պաշարումը և հեռանալ, բայց վերջին պահին մատնիչների աջակցությամբ պարսիկները սողոսկում են ամրոց: Հերակլը նետվում է մարտի, սակայն թիկնապահները շրջապատումից դուրս են բերում և փախցնում Մթիուլեթ (իրականում վրացական գորամասը պարտվել էր առաջին բախման ժամանակ):

Պոեմի երկրորդ դրվագն սկսվում է Արագվիի հովտի նկարագրությամբ: Գալիս են Հերակլը և նախարար Սողոմոնը: Նրանց միջև սկիզբ է առնում լուրջ խոսակցություն: Վերլուծելով իրադրությունը՝ Հերակլը փաստում է, որ ինքը ծերացել է, այլևս նախկինը չէ, այժմ երկրին գորեղ պաշտպան է անհրաժեշտ: Նա ընդգծում է արտաքին աշխարհից եկող վտանգի, Աղա-Մահմադ խանի, թուրքերի, լեռնական ցեղերի ասպատակությունների, ներքին ուժերի մասնատվածության մասին: Այդ ամենից օգտվում են թշնամիները, ավերում, կողոպտում ու կոտորում բնակչությանը, կասեցնում երկրի առաջընթացը, ուստի, ժամրութեթև անելով, ինքն զգում է, որ այդ վիճակից դուրս գալու միակ ելքը Ռուսիայի հովանու տակ մտնելն է.

*Անունը ռուսաց հռչակվել է արդ,
Ունեն իմաստուն արքա բարեպաշտ,
Վաղուց նրանց հետ ունենք կուռ դաշինք,
Ու հավատ՝ անխախտ կապի երաշխիք.
Նրան եմ ուզում տալ դեկն իմ երկրի,
Որ նա Քարթլիին լավ օրեր թերի:*

Նախարարը հանկարծակիի է գալիս արքայի մտադրությունից և կտրականապես մերժում, մինչև իսկ խնդրում է, որ նա իր որոշման մասին չհայտնի ոչ մեկին: Հերակլը և Սողոմոն Լեոնիձեն տարբեր կերպ են մեկնաբանում երևույթը: Առաջինը մատնանշում է, որ գործը տանուլ է տրված, վրաց գործը պարտվել է, չկա մի ուժ, որ դիմակայի արյունռուշտ Աղա-Մահմադ խանին: Ինքն էլ տանջվում է անկախությունը կորցնելու մտքից, բայց այլ ելք չի տեսնում. պետք է միավորվել Ռուսաստանին, ի վերջո դա արվում է վրացու բարօրության համար.

*Ժամանակն է արդ, Սողոմոն իմ քաջ,
Որ խաղաղ ապրի երկիրը վրաց:*

Փաստարկումները չեն համոզում Սողոմոնին. նրա համար ողբերգություն է երկրի անկախության կորուստը: Նա փորձում է համոզել Յերակիին, որ այդ քայլն ստվեր կզցի նրա սրբացած անվան վրա, թող հաջորդներն իրականացնեն վճիռը, բայց ոչ երբեք ինքը՝ ժողովրդի կուռքը:

*Ոչ, տե՛ր թագավոր, մի՛ անիր այդպես,
Այս խոսքը քեզնից չհասնի՝ թող մեզ,
Յետո, ով երկիրն ուժ չանի վարել՝
Թող նա էլ խորհի, թե ինչպես վարվել,
Իսկ քանի դու կաս աշխարհում վրաց՝
Ցավն էլ խնդություն կթվա նրանց:*

Երկար մտորելուց հետո նախարարն ասես համակերպվում է արքայի մտքին և ծանր զգացումներով գնում տուն: Նրան դիմավորում է կինը, որին մվիրված հատվածը գրված է գույների ակնհայտ խտացումով: Իմանալով արքայի մտադրության մասին՝ նա վշտահար բացականջում է.

*Օրս խավարի, չտեսնեմ ես այդ,
Օտարության մեջ ի՞նչ վայելք ու բախտ,
Երբ չի հասկանա քո հոգին մի ոք,
Եվ միշտ կմնաս որբ ու անամոք:*

Յեղիմակն ուզում է ժամանակակից կանանց հոգում խորացնել հայրենասիրական զգացումը: Բացի դրանից, կերպար ստեղծելիս յուրաքանչյուր հեղինակ հետամտում է որոշակի նպատակ. ձգտում է ուժերի հավասարակշռությունը պահպանել կամ թեքել, որևէ հայեցակետ հաստատել կամ բացասել: Յավանաբար այդպես է վարվել նաև Բարաթաշվիլին՝ երևան հանելով կնոջ մտացածին կերպարը: Այս հանգամանքը որոշ գրականագետների երկընտրանքի առաջ է կանգնեցրել. ո՞ր հոսանքին է հարում բանաստեղծը, ո՞ւմ է տալիս նախապատվությունը՝ արքայի՞ն, թե՞ նախարարին: Շատերը պնդում են, թե պոեմի շրջանակներում հեղինակն սքողել է իր կարծիքը:

Պոեմում և նույն թեման շոշափող մի քանի երգերում («Յերակլ արքայի գերեզմանը», «Սոխակն ու մծիղի») Բարաթաշվիլին գուցե բացահայտ չի խրախուսում Ռուսաստանին միավորված լինելու փաստը, բայց նշում է, որ պատմական այդ քայլից հետո վրաց ժողովուրդը

մշակույթի ու լուսավորության բնագավառում հասել է ակնհայտ հաջողությունների: Այս հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակը համամիտ է Ռուսաստանին միավորվելու որոշմանը:

Կերպարներով, պատմական դեպքերի նկարագրություններով, առաջադրած խնդիրներով պոեմը երևույթ է XIX դարի առաջին կեսի վրաց գրականության պատմության մեջ:

* * *

«Իրիկնամուտը Մթածմինդայի վրա», «Խոհեր Քռի ասիին», «Չիմար» բանաստեղծություններում Ն. Բարաթաշվիլին փորձում է պարզել անհատի ու բնության փոխկապակցության բարդ խնդիրը: Բնության նկատմամբ սերը նա արտացոլել է թե՛ հատուկ այդ թեմայով գրված երգերում, թե՛ սիրային հուզառատ երգերում ու փիլիսոփայական խոհեր պարունակող քերթվածքներում և թե՛ պոեմում ու նամակներում: Դրանք բացահայտում են բանաստեղծի ըմբոստ էությունը կամ թախծալուր տրամադրությունը. իր հոգեվիճակը նա հաճախ համադրում կամ հակադրում է բնության օրինաչափություններին ու երևույթներին: Անադարտ ու թարմաշունչ բնությունը նրան տանում է ապրումների ու մտորումների աշխարհը:

*Չե՛յ Մթածմինդա, սրբազան դու լեռ, քո քարերը լերկ
Լանջին ամայի խոհեր են ծնում անհո՛ւն, անեզե՛րք...*

Բնության հետ մտերմացած բանաստեղծն զգում է մի ներքին ծայն, հավատում այդ ծայնի գոյությանը.

*Չավատում եմ, կա մի գաղտնի լեզու, որ գիտեն անգամ քարերն անշունչ,
Օ՛, լեզուն այդ ջիմջ ամեն մի լեզվից վսեմ է, չքմադ, խոր ու վեհաշունչ:*

Բնության ծայնին ունկնդիր բանաստեղծն ընտրում է կապույտ գույնը՝ մաքուր, անբիծ ու երազային.

*Ա՛խ, գույնին առաջին,
Կապույտին երկնածին՝
Ես՝ դեռ հեզ մի մանուկ,
Սուրբ սիրով կապվեցի:*

Բանաստեղծին հատկապես հուզում է գիշերը, երբ գույներն աղուտանում են, առարկաների ուրվագծերն՝ անէանում, և միայն լուսնի

դալուկ շողերն են ցուարծակում. ահա այդ պահերին ոգեշնչվում է, հոգու անդորր գտնում.

*Լեն իմ կենդանի, մերթ՝ աչքիդ ժպիտ, մերթ՝ աղի արցունք,
Այն ո՞վ կտեսնի քեզ, որ, ա՛խ, չմեղմի խռովքն իր ծածուկ,
Չկիսի քեզ հետ, չթեթևացնի սրտի բեռը ժամտ,
Ո՞վ դու, վշտածնծ, վշտահար հոգու ընկեր անբաժան:*

Նիկոլոզ Բարաթաշվիլին վրաց գեղարվեստական խոսքի խոշորագույն վարպետներից է, որ երեք տասնամյակը չբուլորեց, բայց դարձավ ժամանակակիցների ու սերունդների ուսուցիչը:

Նրա գրական ժառանգությունը 36 բանաստեղծություն է, մեկ պոեմ (շատ ստեղծագործություններ հավանաբար կորել են մահից հետո: Հարազատներին, բարեկամներին, մտերիմներին հղված իր գրեթե բոլոր մամակները, ինչպես նաև պաշտոնական գրությունները պահպանվել են, մինչդեռ իրեն ուղարկված մամակներից և ոչ մեկը չի գտնվել ո՛չ Քանծակի իր կացարանում, ո՛չ էլ գրասենյակի զգրոցներում), որոնք տպագրվել են 1852 թ., «Ցիսկարի» («Արշալույս») ամսագրում: Առանձին լույս են տեսել 1876-ին:

* * *

Նախ Նախիջևանի և ապա Ելիզավետպոլի գավառապետի օգնականի պաշտոնում աշխատելիս Բարաթաշվիլին բնականաբար շփվել է հայ ազգաբնակչության հետ: 1845 թ. օգոստոսի վերջին երեք օր եղել է Դիլիջանում, որտեղ հանգստանալիս են եղել իր ազգականները: Ինչպես ինքն է հետագայում գրել՝ «շատ ուրախ է անցկացրել» այդ օրերը, քանզի «Դիլիջանի կիրճը ընդարձակ ու անեզր դրախտային պարտեզ է, որ փառավորում է հոգիդ ու սիրտդ, և նրա սաղարթախիտ անտառների թանձր ստվերն առաջացնում է անուրջներ ու հեշտալի զգացումներ»¹: Իսկ բանաստեղծ, թատերագետ, հրապարակախոս Միքայել Թումանյանը* Բարաթաշվիլու դասընկերն էր, մտերիմներից մեկը, որի գծանկար-

¹ Նույն տեղը, էջ 216-217:

* Միքայել Թումանյանը (1817-1875) ստեղծագործել է ռուսերեն և վրացերեն: Նա Հերակլ Երկրորդի, ապա Վրաստանի վերջին թագավոր Գեորգի XII-ի պալատական քարտուղար ու խորհրդատու Բիրթվել Թումանով-Թումանիշվիլու (1764-1836) որդին էր: Միքայելի որդին՝ Գեորգի Թումանյանը (1854-1920)՝ նշանավոր բարերար և մշակութային գործիչ Սարիամ Թումանյանի ամուսինը, հրապարակախոս էր, հասարակական-մշակութային գործիչ, "НОВОЕ ОБОЗРЕНИЕ" թերթի խմբագիր: Միքայել և Գեորգի Թումանյանները թաղված են Թբիլիսիի հայ մշակութային գործիչների պանթեոնում (խոջիվանք):

ների հիման վրա վերականգնվել է վրաց պոետի դիմանկարը: Ենթադրվում է, որ Խաչատուր Աբովյանը Թիֆլիսի գավառական դպրոցի տեսուչ եղած Ժամանակ (1837-1843) պիտի որ հանդիպած լինի նույն տարիներին Կովկասի կառավարչության գրասենյակի սեղանավար Բարաթաշվիլուն, և նրանք կարող էին ծանոթ լինել իրար:

1893 թ. ապրիլի 25-ին Նիկոլոզ Բարաթաշվիլու աճյունը Գանձակից տեղափոխում են Թիֆլիս: Բանաստեղծի տաղանդը հարզոդների հոծ բազմություն է հավաքվում կայարանամերձ հրապարակում. ավելի քան հիսուն ծաղկեպսակներ զարդարում են դիակառքը: Վրաստանի տարբեր խավերի ու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ վաղամեռիկ քնարերգուին հարգանքի տուրք են մատուցում նաև հայ համայնքի անդամները: «Մուրճ» ամսագրի անունից հանդես է գալիս քսանչորսամյա Յովի. Թումանյանը: Նա կարդում է «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա» բանաստեղծությունը.

*Մխիթարություն, սգավոր Վրաստան,
Ինչո՞ւ է տխրել դեմքդ առնական.
Շարժված աճյունը հանգած պոետի
Շարժե՞ց վերստին ցավը քո սրտի,
Թե նորա մըթին գերեզմանը խոր
Որք հոգուդ համար շատ է ահավոր...
Կը թաղես, այո՛, դարձյալ քո երգչին,
Բայց նորա վառած զգացմունքներից
Չըկա գերեզման և ոչ էլ վախճան,
Նրանք կենդանի կմնան հավիտյան,
Եվ դու նրանցով պիտի մի այլ օր
Թաղես քո մաշող ցավերը բոլոր:
Եվ քեզ անցավոր շիրիմից շիրիմ,
Հեզ ժողովրդի երգիչ մտերիմ,
Քե՞զ, որ տանջել ես անհանգիստ սրտով,
Հավիտենական հանգիստ անվրդով:*

Ժամանակի մամուլը և արարողության մասնակիցները հավաստում են, որ հայ բանաստեղծի ընթերցումը խոր ազդեցություն է ունեցել ներկաների վրա: Շատերը, չիմանալով հայերեն, ընկալում էին տողերի հոգեցունց ելևէջները և արտասվում: Յովիաննես Թումանյանը հուշում էր նաև, որ Բարաթաշվիլու կորուստը «կորուստ է բոլորի համար, քանզի նրա հանճարի լույսից բաժին է հասնում համայն մարդկությանը»:

Այս խոսքերը լավագույնս վկայում են վրաց ժողովրդի, նրա հանճարեղ գավակներից մեկի և այդ երկրի նկատմամբ երիտասարդ թունանյանի ակնածանքի ու սիրո մասին:

Այդ ժամանակ Բարաթաշվիլու աճյունը թաղում են Դիդուբեի քաղաքային գերեզմանատանը, իսկ 1938 թ. հոկտեմբերի 15-ից նա իր վերջնական հանգրվանն է գտնում վրաց գրողների ու հասարակական գործիչների Մթածմինդայի պանթեոնում:

Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ 1968 թ. սեպտեմբերին նշվում է Բարաթաշվիլու ծննդյան 150-ամյակը: Այդ առթիվ Երևանում հրատարակվում է քերթողի «Հատընտիրը»՝ Գեղամ Սարյանի առաջաբանով, իսկ 1986 թ.՝ «Իմ աստղին» ամբողջական ժողովածուն, որտեղ ներառված է նաև «Քարթլիի բախտը» պոեմը: Թե՛ հատընտիրը և թե՛ ժողովածուի բոլոր բանաստեղծություններն ու պոեմը թարգմանել է թբիլիսահայ բանաստեղծ Յովհաննես Կարայանը (Կարապետյան):



1840-1850-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

1840-ական թթ. կեսերին փոփոխություններ են կատարվում Կովկասի ղեկավարման համակարգում: Ցարը կառավարչին փոխարինում է փոխարքայով՝ ընծեռելով գրեթե անսահմանափակ իրավունքներ:

1844 թ. Կովկասի փոխարքա է նշանակվում իշխան Միխայիլ Սեմյոնի Վորոնցովը (1782-1856), որն անմիջապես անց է կացնում վարչական ռեֆորմներ. վերացնում է ռազմական վարչակարգը և մտցնում կառավարման քաղաքացիական կարգեր: Փորձառու Վորոնցովն իսկույն ձեռնամուխ է լինում ճկուն և խաղաղ միջոցառումների: Երիտասարդական տարիներին ապրելով Անգլիայում, քաջատեղյակ այդ երկրի սահմանադրությանն ու կառավարման հիմունքներին՝ նա համոզվում է, որ հատկապես Կովկասում պետք է վարել մեղմ քաղաքականություն, որ ռազմավարական ձևը չի կարող դժգոհություններ չառաջացնել նույնիսկ ցարին նվիրված անձանց մեջ: Ուսումնասիրելով տեղի ազնվականության տրամադրությունը, վարք ու բարքը՝ վճռում է ապավինել այդ դասի աջակցությանը:

Տեղի այլախոհ տարրերին հնազանդեցնելու նպատակով Վորոնցովն իր անհեռատես նախորդների պես չի դիմում զենքի կամ դատաստանի: Նա պարզապես նպաստում է առևտրի զարգացմանը, մտերմական կապեր հաստատում տեղի ազնվականության հետ, շատերին ներգրավում քաղաքացիական ու զինվորական ծառայության մեջ, հուսալիներին պաշտոններ է տալիս և մերձեցնում կառավարման ղեկին, փորձում է հիմնադրել նաև Անդրկովկասի ազնվականության դաս, որը, սակայն, հաջողություն չի ունենում, Թիֆլիսում հիմնադրում է «Կավկազ» լրագիրը, հատուկ ֆոնդ, Կովկասյան թանգարան, Գյուղատնտեսական ընկերություն, թոշակավորում ու Ռուսաստանի բուհեր է գործուղում կովկասցի ուսումնաստենչ երիտասարդների: Մարզերի ղեկավարների առաջ խնդիր է դնում ընդլայնել դպրոցների ցանցը և ուսումնական հաստատություններում հիմնական առարկաները դասավանդվել ինչպես ռուսերեն, այնպես էլ տեղացիների լեզուներով. տեղացիները ռուսերենում կվարժվեն, ռուսները գիտելիքներ ձեռք բերեն առնվազն երկու լեզվից. «Միայն այս ձևով կունենանք սպաներ և պաշտոնյաներ: Նրանք օգտակարն ու հաճելին կհամատեղեն զինվորական և քաղաքա-

ցիական գերատեսչություններում: Սա ցարի ցանկությունն է և իմ խորին համոզմունքը»,- ասում է Վորոնցովը:

Շփումներ ունենալով զարգացման կապիտալիստական ուղին բռնած Ռուսաստանի հետ՝ Վրաստանի տնտեսական կյանքում նկատվում են որոշակի փոփոխություններ: Նահապետական տնտեսության անկմանը զուգահեռ երևան են գալիս բուրժուական հարաբերություններ, մասնավորապես լայն թափ է առնում առևտուրը: Վորոնցովն աջակցում էր առևտրական դասին. Կովկասում հիմնում է մաքսային տարիֆ, նպաստում դրամի շրջանառությանը, բացում առևտրական ուղիներ, խանութներ և այլն, որով հեշտացնում էր վաճառականների գործը: Շուտով նրանք Ռուսաստանից և արտասահմանյան երկրներից սկսում են ապրանք ներմուծել, որոնց նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հատկապես ազնվականները: Տարված գինարբուքներով՝ նրանք դիմում են վաճառականներին, հսկայական գումարներ են վերցնում, իսկ պարտքերի դիմաց վաճառում են իրենց շարժական ու անշարժ կայքը, հատկապես կալվածքները: Առևտրական խավը տեր է դառնում թավադների հողատարածքներին:

Տեսնելով, որ նոր ապրելակերպով շլացած ազնվականներն ընկել են տնտեսական ծանր կացության մեջ, Վորոնցովը նրանց վիճակը թեթևացնելու նպատակով հիմնադրում է հատուկ բանկ («Պրիկազ»): Թավադները կարող էին բանկից գումար վերցնել և նախատեսված ժամանակին վերադարձնել: Բայց թեթևաբարո կյանքի ու զեխության մեջ խրված՝ նրանք, գումար գումարի հետևից վերցնելով, վերադարձնելու մասին չէին մտածում, ուստի պարտքի դիմաց բռնագրավվում էր ունեցվածքը: «Պրիկազի» հիմնադրումը բարձր խավի մեծ մասի դրությունն ավելի վատացրեց: Չնայած Վորոնցովի գործադրած ջանքերին՝ պաշտպանել ազնվականների իրավական ու տնտեսական շահերը, կյանքը հսկայական քայլերով առաջ էր գնում, և զարգացող բուրժուական հասարակարգն արագացնում էր ֆեոդալական ազնվականության մայրամուտը:

Ստեղծված դրությունից դուրս գալու և իրենց տիրապետությունն ուժեղացնելու նպատակով թավադները սաստկացնում են ճնշումը, ավելացնում հարկերը, անխնա աշխատեցնում կալվածքներում, խլում վերջին բուռ ցորենը, վաճառում նրանց, որ ավելի է սրում ճորտի ու տիրոջ միջև հակասությունը: Հետևանքը լինում է այն, որ գավառներում ապստամբություններ են բռնկվում: Գյուղացիները սպանում են շահագործողներին, հրդեհում կալվածքները: Կառավարությունը դաժանաբար ճնշում է այդ ելույթներն ու ապստամբությունները:

XIX դարի 40-ական թթ. արտարվայրերից վերադարձել էին 1832 թվականի դավադրության ղեկավարներն ու մասնակիցները, որ հիմնականում գրականության և արվեստի ներկայացուցիչներ էին, հասարակական-քաղաքական գործիչներ: Թեև նրանք մեծ ուժ էին ներկայացնում և տոգորված էին հայրենի մշակույթն ու գրականությունը զարգացնելու տենչով, բայց գործունեություն ծավալելու պայմաններ չկային: Այդ ժամանակ Թիֆլիսում ո՛չ թերթ կար, ո՛չ ամսագիր, ո՛չ թատրոն, ո՛չ էլ մշակութային որևէ հաստատություն: Ամեն ինչ սկզբից պիտի սկսեին, և վրաց հոգևոր կյանքի առաջամարտիկները ձեռնամուխ եղան գրական-մշակութային կյանքի աշխուժացմանը: Հատկանշական է, որ այդ գործընթացը ևս սկսվեց փոխարքայի ակտիվ միջամտությամբ. նա ոչ միայն խրախուսում էր, այլև նյութապես օժանդակում: 1845 թ. Թիֆլիսում հիմնադրվում է ռուսական թատրոն, մեկ տարի անց՝ հանրային գրադարան:

Հասունանում էր սեփական թատրոն ունենալու խնդիրը: Անհրաժեշտ էին ներկայացումներ մայրենի լեզով: Վրաց գործիչները դիմում են փոխարքային: Նա, իր հերթին, թույլտվություն է խնդրում կայսրից: Պահանջները բավարարվում են: Վորոնցովը, ունկնդրելով Գեորգի Էրիսթավիի «Բաժանք» պիեսը, նրան էլ հանձնարարում է ստեղծել թատերական խումբ և բեմադրել հենց այդ կատակերգությունը: 1851 թ. հունվարի 14-ին Թիֆլիսի գիմնազիայի շենքում ներկայացվում է հիշյալ պիեսը:

Գեորգի Էրիսթավիին ստեղծում է թատերական մշտական խումբ, բեմադրում մի քանի կատակերգություն, բայց թատրոնի գործունեությունը երկար չի տևում: Վորոնցովի մեկնելուց հետո, որ վարձատրում էր ամբողջ խմբին, թատրոնը կանգնում է փակուղու առաջ: Իշխանությունը ոչ միայն նյութական օգնությունն է վերացնում, այլև ջանում է լուծարել այն: Քաջքշուկներից հոգնած ու հիասթափված՝ Էրիսթավիին 1854 թ. տեղափոխվում է Գորի: Թատրոնի ղեկն իր ձեռքն է վերցնում հայազգի դրամատուրգ Ջուրաբ Անտոնովը, սակայն վերջինիս ողբերգական մահից հետո (1854 թ. դեկտեմբեր) այն կազմալուծվում է:

Չնայած Էրիսթավիի հիմնադրած թատրոնը շատ կարճ կյանք ունեցավ, այնուամենայնիվ, նշանակալից էր նրա դերը վրաց թատերական արվեստի զարգացման գործում: Հիմք դրվեց վրաց ռեալիստական թատրոնին, որն ստեղծեց ուրույն ոճ և պիեսների՝ վրաց լեզվով խաղացանկ:

1852 թ. Էրիսթավիին հրատարակում է «Ցիսկարի» («Արշալույս»)

գրական-գեղարվեստական ամսագիրը, որի էջերում առաջին անգամ տպագրվում են Թեյմուրազ Առաջինի, Վախթանգ Վեցերորդի, Դ. Գուրամիշվիլու, Ալ. Ճավճավաձեի, Գր. Օրբելիանիի, Ն. Բարաթաշվիլու և ուրիշների բանաստեղծությունները: Ամսագիրը գոյատևեց երկու տարի, բայց նախադրյալներ ստեղծեց ազգային գրականության վերելքի համար:

Տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, նահապետականության քայքայումը, կապիտալի կուտակումը, ուսումնակրթական գործի բարելավումն արտացոլվեցին գրական սեռերի, ժանրերի ու ձևերի մեջ: Թեև նշված ժամանակաշրջանում գրական իշխող ուղղությունը ռոմանտիզմն էր, բայց դրան զուգահեռ, հատկապես 1840-ական թվականների վերջերից, երևան եկան քննադատական ռեալիզմի սկզբնավորումն ազդարարող այնպիսի երկեր, ինչպիսիք Գ. Էրիսթավիի, Ջ. Անտոնովի, Դ. Ճոնքաձեի և Լ. Արդազիանիի պիեսները, վիպակներն ու պատմվածքներն էին:

Այս գրողները հստակ արտացոլում էին փոփոխություններով ու տեղաշարժերով հարուստ ու հետաքրքիր կյանքը:



ԳԵՈՐԳԻ ԷՐԻՍԹԱՎԻ

Գեորգի Էրիսթավիին նշանակալից տեղ է գրավում XIX դարի 40-50-ական թվականների վրաց գրական-հասարակական կյանքում: Նա դրամատուրգ էր, բանաստեղծ, թարգմանիչ, դերասան, վրաց թատրոնի տնօրենն ու ռեժիսորը, ազգային ռեալիստական դրամատուրգիայի սկզբնավորողը, գրական առաջին ամսագրի հրատարակիչ-խմբագիրը:

Ծնվել է 1813 թ., Գորու նահանգի Օձիս գյուղում: 1823 թ. ավարտել է Թիֆլիսի բարեգործական ուսումնարանը և ծառայության մտել նահանգապետի գրասենյակում: Վրաց ազնվականության գաղտնի կազմակերպությանը հարելու պատճառով 1834 թ. ծառայության է ուղարկվում Վիլնոյի հետևազորային գունդ, որտեղ մնում է ութ տարի: Վերադառնալով Թիֆլիս՝ հիմնադրում է թատերական խումբ: Այնուհետև ձեռնամուխ է լինում մայրենի լեզվով գրական-գեղարվեստական հանդես հրատարակելու գործին, որի անդրամիկ համարը լույս է տես-

նուն 1852 թ. հունվարին, իսկ վերջինը՝ 1853 թ. դեկտեմբերին. ընդամենը 24 համար:

Վախճանվել է 1864 թ., Գորի քաղաքում:

Թեև Էրիսթավի բանաստեղծը զիջում է Էրիսթավի դրամատուրգին, այդուհանդերձ առաջինը լրացնում է երկրորդին և ամբողջական դարձնում գրողի ստեղծագործական դիմանկարը:

Բանաստեղծի չափածոյից նշանակալից է «Օսեթական պատմվածք» պոեմը, որի առանձին հատվածներ տպագրվել են դեռևս 1832 թ., Ս. Դոդաշվիլու «Գրական հավելված»-ում, իսկ ամբողջությամբ՝ «Ցիսկարի» ամսագրում՝ «Ձարե և Ղանիմաթ» վերնագրով: Քարթլիի բարբառով գրված այս երկի հիմքում ընկած է պատմական փաստ՝ Շահ-Աբասի դեմ վրաց ժողովրդի ազատագրական կռիվներից մի դրվագ:

Պոեմը բաղկացած է երկու մասից: Առաջինում նկարագրվում է, թե ինչպես հայրենասեր իշխաններ Բիծինա Չոլոդաշվիլին և Էլիզբար ու Շալվա Էրիսթավիները, միավորելով ռազմական ուժերը, երկրի սահմաններից վտարում են Շահ-Աբասի հրոսակներին: Շահը Վրաստանի թագավորից պահանջում է թավադներին ուղարկել պարսկական արքունիք: Հասկանալի է շահի նպատակը: Որպեսզի նա ավելի ծանր աղետներ չբերի վրաց ժողովրդի գլխին, իշխանները կամավոր մեկնում են անխուսափելի կործանման. «Մի՛ վշտացեք, մենք մեր արյունը չենք խնայի հայրենիքին, քանզի հայրենիքի համար նահատակվելն ուրախություն և պատիվ է մեզ համար», - հրաժեշտի պահին ասում են նրանք:

Շահ-Աբասը փորձում է նրանց դավանափոխ անել, բայց ո՛չ խոստումները, ո՛չ սպառնալիքները, ո՛չ էլ խոշտանգումները ծնկի չեն բերում թավադներին: Շահը մեկ-մեկ գլխատում է՝ ի տես և ի սարսափ հաջորդի, բայց քաջերից և ոչ մեկը չի ընկրկում:

Պոեմի երկրորդ մասում հեղինակը փառաբանում է նահատակ իշխաններին, հավաստիացնում, որ Վրաստանում էլի կան Չոլոդաշվիլիներ ու Էրիսթավիներ, որոնցից մեկն էլ Ռոինն է: Պարսկաստան մեկնողներին ուղեկցում էին այլ իշխաններ ևս, բայց սպասվող դատաստանից ահաբեկված՝ մի քանիսը վերադառնում են տուն: Մովրով Ռոինը թրատում է նրանց՝ մեղադրելով դավաճանության մեջ: Դրանցից մեկն իր հարազատ եղբայրն է, մյուսը՝ հարևան թեմի ներկայացուցիչ Չարաշվիլին: Վերջինիս սպանությունը պատճառ է դառնում երկու մեծ տոհմերի թշնամանքի: Երկկողմ վրիժառությունը տևում է տարիներ: Ի վերջո մովրովի գերդաստանից փրկվում է պատանի Ղանիմաթը, իսկ

Չարաշվիլիներից՝ գեղանի Ջարեն: Համախոհները Ղանիմաթին դրդում են վերացնել Չարաշվիլիների տան վերջին ներկայացուցչին: Վճիռն ի կատար ածելու մեկնած Ղանիմաթը սիրահարվում է Ջարեին: Սերը փոխադարձ է: Նրանց հանդիպումներից մեկի ժամանակ Ղանիմաթն սպանվում է (դարանակալ մարդասպանը ծերունի Չարաշվիլին է): Ջարեն խելագարվում է:

Ինչպես արդեն նշել ենք, ստեղծագործության թեման վերցված է պատմական անցյալից (նույն թեմային անդրադարձել են նաև Ակակի Ծերեթելին, Վաժա Փշավելան և Անտոն Փուրցելածեն), բայց պատմական թեման արդիականացված է, արտահայտում է ժամանակի ոգին: Երիսթավին ձգտել է վերարտադրել այն գաղափարներն ու խնդիրները, որոնք արժարժվել են 1832 թ. գաղտնի կազմակերպության ժողովներում: Պոենը ծաղկում է ֆեոդալներին ու թավադներին, որ կռվում են միմյանց դեմ, ջլատում երկրի ուժերը, դրանից էլ օգտվում են թշնամիները, ասպատակում, գերեվարում ու ոչնչացնում անպաշտպան ժողովրդին: Երիսթավին զարգացնում է մեկ այլ գաղափար ևս. միայն սերը և միաբանությունը երկիրը կփրկեն ավերից ու կործանումից:

Նշված տասնամյակներում հանրային կյանքն անսպառ նյութ էր կատակերգությունների համար: Երիսթավին նկարագրում է ավատական իրականությունը, նրա ճգնաժամը, կենցաղային հարաբերությունները և, որպես ազնվականության մարտնչող գաղափարախոս, կանգնում է հակաբուրժուական դիրքերում: Մեղմ հումորով է պատկերում իր պաշտելի դասին՝ քողարկելով բացասական շատ գծեր, բայց անողոք է առևտրավաշխառուական խավի նկարագրի մեջ: Գրողն անդրադարձել է նաև «հայրերի» ու «որդիների» հակամարտությանը:

Առաջին պիեսը՝ «Խելագարը» («Շելիլի»), Գ. Երիսթավին գրել է 1839 թվականին: Արտացոլել է քաղքենի կանանց վարքն ու բարքը, տգիտությունն ու այլասերվածությունը: Տասուն և Բեզլարը սիրում են մեկմեկու: Տասոյի մայրը՝ Աննա խանումը, և հարսները Բեզլարին համարում են արժանավոր փեսացու, և թվում է՝ դեմ չեն սիրող զույգերի ամուսնությանը: Բայց պարզվում է, որ նրանք տղային զնահատում են ոչ թե բարեկրթության ու բանաստեղծական շնորհքի համար, այլ որ Ռուսաստանում ուսում ստանալով՝ նա ձեռքը կվերցնի «արգա» (խնդրագիր, բողոքագիր) գրելու նախապատվությունը և ատյաններում գործեր շահելով՝ կհարստանա: Մինչդեռ Բեզլարը նման աշխատանքով զբաղվելու ցանկություն չունի: Աննա խանումը Տասոյի «բարին ցանկացող» կանանց խորհրդով աղջկան հեռացնում է Բեզլարից, որովհետև «նրա խելքը տեղը չէ. արգա գրելու փոխարեն ինչ-որ կանանց վրա երգեր է խզնզում»:

Տղային տեսնելու կարոտը Տասոյին զրկում է հանգստից, խռովում հոգին, և քաղքենի կանայք, որ անհաղորդ են խորունկ ու անկեղծ զգացումների, Տասոյին «խելագար» են համարում: Իսկ ինչպե՞ս են բուժում այդ կարգի «խելագարներին»: Կանայք վճռում են նրան ամուսնացնել «մեղալակիր չինովնիկի» հետ և առանց աղջկա կամքը հարցնելու նշանակում են հարսամիջի օրը: Լսելով այդ լուրը՝ Տասոն նետվում է գետը:

Քարոյական դեմքը կորցրած հատվածին հակադրված են առողջ դատողության տեր երիտասարդներ, որոնց արժանիքը, սակայն, նրանց պասիվությունն է: Նրանք չեն պայքարում իրենց երջանկությունը խեղդ երևույթների դեմ: Թույլ ու անվճռական Բեզլարի համեմատ որոշ ակտիվություն է ցուցաբերում Տասոն, որ ծառանում է անհատի իրավունքներն ու արժանապատվությունը ոտնահարող ուժերի դեմ: Բայց նա էլ իր բողոքն արտահայտում է ինքնասպանությամբ:

«Խելագարը» վերջանում է ողբերգությամբ. հերոսուհուն հասցնելով ինքնասպանության և պիեսը հանգուցալուծելով այդ կերպ՝ հեղինակը կատակերգությունը մոտեցրել է մելոդրամայի ժանրին:

«Վեճ»-ում («Դավա») էրիսթավին ավելի ցայտուն է նկարագրում անհապետականության անկումը: Վեճի առարկան թգաչափ հողակտոր է, բայց հիվանդագին ինքնասիրության տեր երկու դրկից ավատատերերից ոչ մեկը չի զիջում մյուսին: Նրանցից Ամիրինդոն լսել է, որ Պետերբուրգում սովորող իր տղան՝ Բեզլարը, բանաստեղծություններ է գրում, իսկ «դա պետք է, որ շատ օրերքներ իմանալ նշանակե», հետևաբար որդին կվերադառնա, դիմումներ ու բողոքներ կգրի ու հոր դատը կշահի: Սակայն Բեզլարը մերժում է հոր խնդրանքը և նրան թողնում «սուղի պերեվոդչիկ» Սարգիս Բուդդանիչ Կունուխտովի և «արզաներ» գրող Ռափիել Արզամանովի ճանկերում, որոնք տհաս ֆեոդալի դիմումի յուրաքանչյուր «տոչկա-զապետայի» համար մի-մի ոսկի են կորզում: Ամիրինդոն համոզված է, որ նրանք խաբեբաներ են, սրիկաներ, բայց չի դադարում դիմում-բողոքներ գրելուց ու կաշառք տալուց. նա ոչ միայն չի դժգոհում, այլև պատրաստ է վճարել ավելին, միայն թե գործն իր օգտին վճռվի, միայն թե թշնամին չուրախանա. «Յա՛, հա՛, իմ մերը չմեռնի. ես կկործանվեմ, համա իրեն էլ կկործանեմ... Օնոփրեն ինձ հաղթի՞: Բաս էնա մորուքս խուզեմ ու լաչակ կապեմ գլխիս, էլի»:

Այդպես է մտածում ու գործում նաև Օնոփրեն՝ Ամիրինդոյի հակառակորդը. նա թեև «ամբողջ կարողությունն սպառել է քաղաքի դատարաններում», այդուհանդերձ մուրացկան էլ դառնա, հողակտորին ինքը պիտի տեր դառնա:

Վեճը վերջանում է նրանով, որ Ամիրիմոյի որդին ամուսնանում է Օնոփրեի դստեր հետ, և ընտանիքների ավագները հաշտության ձեռք են մեկնում:

Նոր սերունդը ներկայացնում են Բեզլարը, Նինոն և Միխեիլը: Բեզլարը «Խելագարի» Բեզլարն է՝ փոքր-ինչ փոխված: Սրանք կրթությամբ ու հայացքներով բարձր են ծնողներից, տեսնում և զգում են նրանց տգիտությունն ու սահմանափակությունը, բարոյական անկումն ու տնտեսության քայքայումը, բայց և այնպես այնքան թուլակամ ու երազկոտ են, որ բացասական երևույթների դեմ պայքարելու փորձ իսկ չեն անում: Ավելին՝ ջանալով ծնողների վեճը հասցնել հաղթական ավարտի՝ Բեզլարն ու Միխեիլը շարունակում են նրանց գործելակերպը. առանձին-առանձին կաշառք են տանում միջնորդ դատավորին և ընդունարանում հանդիպելով՝ բարեկրթորեն հերթը զիջում են մեկը մյուսին: Սրանք վստահ չեն, թե կարող են որևէ բան փոխել, ինչ-որ դեր խաղալ կյանքում, մատների արանքով են նայում այն ամենին, ինչ կատարվում է իրենց շուրջը: Դրամատուրգն էլ հենց դա է այսպես ասում. բավական չէ գրագետ, բարեկիրթ լինել, անհրաժեշտ է այդ հատկություններն ի սպաս դնել ընդհանուր գործին, անհրաժեշտ է ուժեղ կամք, գործելու և պայքարելու ձիրք, եռանդ ու ակտիվություն, որոնցից, սակայն, զուրկ են գործող անձինք:

Բեզլարի և Միխեիլի կարծիքով, եթե իրենց ծնողները կրթված, լուսավորված լինեին, նրանց միջև նման հիմար վեճ չէր ծագի: Տեսնելով երևույթի մի կողմը՝ նրանք չեն կարողանում խորամուխ լինել բուն պատճառների մեջ: Իսկ դա խավարամտության և բնատնտեսության անկման հետևանք էր:

Նինոն նախորդ կատակերգության Տասուն է՝ համեմատաբար տանելի մթնոլորտ-միջավայրում: Բարձրագույն կրթություն ստացած այս աղջիկը դժվար է համակերպվում ստեղծված իրադրության հետ, քանզի սիրում է Բեզլարին և այդ սիրո մեջ հաշվենկատ չէ: Նինոն այն կարծիքին է, որ ամուսնությունը պետք է խարսխված լինի փոխադարձ սիրո վրա, բայց անմիջապես նամակ է գրում Բեզլարին և խնդրում, որ նա ոչ երգեր գրի, ոչ էլ այցելի, քանզի մայրը դեմ է իրենց հանդիպումներին: Թերևս Նինոյին նույնպես վիճակվեր «Խելագարի» հերոսուհու ճակատագիրը, եթե եղբայրը՝ Միխեիլը, աջակից չլիներ նրա ու Բեզլարի միությանը:

Այդուհանդերձ Գ. Երիսթավին ազնվականության երիտասարդ ներկայացուցիչներին վերագրում է որոշակի ծառայություն. իբր նոր հայացքներով տոգորված այս առաքյալները կարողանում են «լուսա-

վորել տգետ հայրերին» և նրանց միջից վերացնել վեճն ու թշնամանքը:

Կատակերգության հիմնական նպատակը ոչ միայն ֆեոդալական ազնվականության ավագ և կրտսեր սերնդի պասիվ ու միապաղաղ կյանքի նկարագրությունն է, այլև արդարադատության ծառայողների խարդավանքների ու շահատակությունների քննադատությունը: Վարպետությամբ են կերտված հատկապես չինովնիկների կերպարները: Օգտվելով ազնվականների՝ օրենքները չիմանալու հանգամանքից՝ պարզապես մաշկում են նրանց: Սարգիս Բուղդանիչի կարծիքով՝ «վրացի թավաղը չաղ, բրդոտ ոչխար ա, նրան լավ խուզել ա պետք»: Դժվար է որոշել, թե նրանցից ով է ավելի խարդախ՝ արզաներ գրող Ռափիել Արզանո՞վը, թարգմանիչ Սարգիս Կումուխտո՞վը, որ «հրաշալի տիրապետում է կաշառք պոկելու արհեստին», «զասեդատել» Ֆիլի՞պը, թե՞ «ստրապչի» Խարիտոն Վոյատկինը, որ Բեզլարի հարցին, թե դատարանի խմբագրությունում բանաստեղծներ կա՞ն, բանիմաց մարդու հպարտությամբ ասում է. «Մենք, ախպերս, ախմախ բաներով զբաղվելու ժամանակ չունենք»:

Մեկ այլ պատկերում, հերթական այցելուից խոշոր գումար գրպանելուց հետո, երանությամբ բացականչում է. «Դա՛ս, էստեղ ծառայելուց բոլորը հրաժարվում են, մինչդեռ իմ կարճ խելքով՝ ով աբռունդի անել գիտի, նրա ջեբը միշտ լիքը կլինի: Մեր դատարանում 1500 քաղաքացիական գործ կա, 150 քրեական: Ահա և ձեզ կապիտալիստ, իսկ մեր կուլեգաները կոկորդ են պատռում, թե ույեզդն ուրոժայնի չի: Է՛հ, ինչ արած, ամեն տեղ հո Ղարաբաղ ու Գյանջա չի՞: Էնտեղ, բատյուշկա, Կալիֆոռնիա է»:

Դժվար չէ պատկերացնել Նուխիի, Ղարաբաղի ու Գանձակի բնակիչների վիճակը բուղդանիչների ու վոյատկինների ձեռքում:

* * *

Գեորգի Էրիսթավիի ստեղծագործության գլուխգործոցը, անշուշտ, «Բաժանք»-ն է («Գաղրա», 1850) որտեղ տրված են ազնվականների գաղափարական բախումը, վաճառականների հետ հարաբերությունների ձևերն ու բնույթը փողի իշխանության պայմաններում:

Իվանե Դիդերուլիձեն Վարչավայից հայրենիք վերադառնալուց հետո նորովի է նայում այն իրականությանը, որի հարազատ զավակն է ինքը: Ահավոր զգվանք զգալով իր դարն ապրած միջավայրի հանդեպ՝ նա եղբայրներին խորհուրդ է տալիս բաժանվել: Ավագ եղբայրը՝ Անդուղափարը, սարսափում է այդ մտքից, դա համարում ողբերգություն, որ երբևէ կարող է պատահել մի ընտանիքում: Նա նույնիսկ պատկերացնել

չի կարող, թե ինչպես կարելի է բաժանել պապենական-հայրական ունեցվածքը՝ տունը, տեղը, կայքը: Նրա համար դա ամենամեծ ամոթն է. ավելի լավ է մեռնել, քան թե հայրական տունը լքված տեսնել կամ եղբայրներին՝ բաժանված: Չկարողանալով խորամուխ լինել կրտսեր եղբոր ծրագրերի մեջ՝ Անդուղափարը ապշահար բացականչում է. «Չեմ հասկանում՝ Ռուսաստանում ինչ են անում սրանց հետ. կախարդո՞ւմ են, թե՞ ինչ: Ջարմանալի բան ա, ախպե՛ր, Մոզդոկում ես էլ եմ եղել, բայց իսկի չեմ գժվել»: Մոզդոկում եղած, բայց «չգժված» թավաղը թուրը մերկացնում է եղբայրների դեմ, որ չհամարձակվեն յուրացնել իր մութաքան: Նա անզոր է ազդելու եղբոր վրա, անզոր է առաջն առնելու «վերահաս ողբերգության»՝ բաժանքի: Անզոր է, քանզի կյանքն ընթանում է բնականոն հունով և բավական արագ:

Բաժանման մասին այլ կարծիք ունի մյուս եղբայրը՝ Պավլեն: Նա չէր հետաքրքրվի այդ խնդրով, եթե կինը՝ Մակրինեն, չահաբեկեր. «Չթողնե՛ս՝ շատն իրենք վերցնեն, քիչը քեզ տան, չզիջե՛ս, թե չէ լաչակս գլխիդ կկապեմ, բա դու տղամարդ չե՞ս»: Կնոջ կամակատար Պավլեն, համարձակություն ստանալով, կառչում է մութաքայից և եղբոր դեմ թուր հանում: Քստմենլի տեսարանից զայրացած՝ Իվանեն, իր հերթին, դուրս է քաշում սուրը, մութաքան կիսում և շարտում Անդուղափարին ու Պավլեին:

Տիաս, կամազուրկ, ճարպակալած Պավլեն տիպիկ թավաղ է, որի համար թեկուզ աշխարհը քանդվի, մեկ է: Նա համոզված է, որ կյանքն ընթանալու է անփոփոխ հունով, իսկ ինքն էլ ապրելու է այնպես, ինչպես ապրել է ցարդ: Նրա միակ հոգսը, զբաղմունքն ու հետաքրքրությունը բազեներն են, որսորդությունը: Ընտանիքի տնտեսության հոգսը թողել է կնոջ տնօրինությանը, որը, Պավլեի խորին համոզմամբ՝ «եթե Թամար թագուհու ժամանակ ապրեր, անպայման վեզիրի պաշտոն կտային», որովհետև «ինչքան ուզում է խելացի տղամարդ հանդիպի նրան, մի թուլեում պամպուլի կդարձնի»: Գոհ ու երջանիկ կնոջ հերթական մտահղացումից՝ Պավլեն երանությամբ հարում է. «Ա՛յ, կնի՛կ: Ա՛յ, խե՛լք: Ախր ես միշտ էլ ասել ու կասեմ, որ իմ Մակրինեն եվայից էլ խելացի ա»: Իսկ մտահղացում-հնարամտությունն այն է, որ Մակրինեն ջանք ու եռանդ չի խնայում՝ դստերը ամուսնացնի «սուղի սեկրետար» Ռամազի հետ, որ փեսացուն շահագրգռություն ունենա և բաժանքի ժամանակ իրենց մեծ բաժին հանի:

Պավլեն հետաքրքիր ու ամենահաջողված կերպարն է: Լիարժեք ու աշխույժ է նաև Մակրինեն:

Իսկ ինչպե՞ս են ներկայացված նորսերնդականները:

Տեսանք, որ նախորդ պիեսներում երիտասարդ ազնվականները հակադրված են ավագներին: Նրանք կրթված են, տեսականորեն պատրաստված, բայց թուլական են, անգործնական, ուստի կան իրականության զոհն են դառնում, կան թևակոտոր հնազանդվում են կյանքի թելադրանքին:

«Բաժանքում» նոր սերդի ներկայացուցիչ Իվանե Դիդերուլիձեն ևս գործնական որևէ քայլ անելու ընդունակ չէ: Նա ոգևորված խոսում է տնտեսությունը եվրոպական ձևով վարելու մասին, համոզված է, որ անհրաժեշտ է դրամազուլիս ունենալ, որպեսզի ստիպված չլինի դիմել «կակոյ Գիբուդ Միկիրտում Գասպարիչի»: Գյուղատնտեսության վերաբերյալ նրա գիտելիքներն էլ հեղհեղուկ են: Ցանկանում է խաղողի այգին զբոսատեղի դարձնել, որն իրականացնելու համար որոշակի գումար է անհրաժեշտ, մինչդեռ փող վաստակելու ունակ չէ. «Ես ծառայելու, աշխատելու գլուխ չունեմ, ես ուզում եմ խազեխնություն անել»: Բայց «խազեխնություն անել» առավել ևս չի կարող, քանզի ժառանգած հարստությունը վաղուց քանդում է տվել:

Կյանքը նորովի սկսելու, տնտեսությունը եվրոպականացնելու, ճորտերին ազատելու, նրանց հետ եղբայրանալու մասին բարբառող և բազում այլ հովերով տարված Իվանեն շատ է խոսում նաև փոխադարձ սիրո և անշահախնդիր ամուսնության մասին, բայց առանց տեսնելու ամուսնանում է ապագա կնոջ՝ նույն «կակոյ Գիբուդ Միկիրտում Գասպարիչի» դստեր՝ Շուշանի հետ՝ դառնալով իր կողմից բազմիցս հեզմանքի արժանացած վաճառականի փեսան:

Ազնվականության լիբերալ գաղափարախոս Գ. Էրիսթավին թեև սրտի ցավով ցույց է տալիս, որ ասպարեզից աստիճանաբար վերացող ազնվականությանը փոխարինելու է գալիս բուրժուազիան, բայց ոչ մի կերպ չի ուզում հաշտվել կատարվող փաստի հետ: Եվ որպեսզի իր դասին «փրկի» վերահաս կործանումից, կյանքի է կոչում զեղազիտական իր իդեալը և ջանում «ապացուցել», թե ազնվականությունը բարձր է նորելուկ բուրժուազիայից: Այդ նպատակով նա ստեղծում է Արչիլի («ժլատը») կերպարը:

Վերջինս ֆեոդալական ազնվականության դասին պատկանող նոր երիտասարդ է, որն իրեն ապահովել է «հացով, գինիով, կովերով, ոչխարներով, հավերով», փող բոլորովին չի սիրում և, որ ամենից կարևոր է, գյուղը, գյուղական իդիլիան, հողի աշխատանքը գերադասում է քաղաքային առօրյայից: Երիտասարդ ազնվականի երջանկությունը կատարյալ կլինի, եթե ծնկի բերի Կարապետ Դաբաղովին և ամուսնանա նրա աղջկա՝ Խամփերիի հետ: Կարապետը «ծնկի է գալիս» և որ-

պես օժիտ փեսային է հանձնում նրա պապի ժանգոտ թուրը: Անսահման է երիտասարդի հրճվանքը. նա երագում է պապի փառապանծ սուրը «ձեռքին ճոճելով թոցնել պարսիկների ու լեզգիների գլուխը»: Յենց այդ պահին քանիցս հնչում է բուրժուայի ծաղրը կյանքից հետ մնացած ազնվական ասպետի և ազնվականության հասցեին. «Ասում էի, չէ՞, որ վրացուն փող պետք չի: Տեսա՞ք՝ ո՞նց էր հրճվում ժանգոտ երկաթի կտորի համար: Ոսկիներես իսկի չնայեց էլ»:

Գեորգի Էրիսթավիի վաճառականները XIX դարի 50-ական թվականների առևտրավաշխառուական խավի ներկայացուցիչներ են, որ ասպարեզ են իջել, ինչպես ասում են, դատարկ ձեռքերով, բայց ի տարբերություն ազնվականության անբան ու վատնող դասի, ի հայտ են բերել աշխատելու, տնտեսելու ջանք ու ջիղ: Քաղցած, ծարավ մնալով, մուրհակների, վեքսիլների ու տոկոսների միջոցով հսկայական կարողություն են կուտակում՝ համոզված, որ դրամն է խավարը լուսավորողը, անմատչելի բարձունքներ նվաճողն ու կյանքի լիիրավ տեր դարձնողը: «Էս աշխարհը միայն փող է ճանանչում. մնացածը դիփ սուտ ա», - վկայում է Միկիրտուն Գասպարիչը: Նա նույնիսկ չի թաքցնում կուտակողի ընտրած ուղիներն ու միջոցները.

*Կտու նա սվետա չեսնա բուդիտ,
Բուդիտ նասիտ իլեբա գուդիթ* :*

Սակայն նրանք ասիական վաճառականներ են. չեն գիտակցում դրամը շրջանառության մեջ դնելու օգտավետությունը:

Բայց կյանքի ընթացքն անհնար է կասեցնել կամ դանդաղեցնել: Վաճառականներն այլևս չեն կարողանում փողը պահել փակի տակ: Նահապետական կենցաղին փոխարինելու է գալիս ապրելակերպի եվրոպական ձևը, որով հափշտակվում են հատկապես վաճառականների կանայք ու զավակները. կահույք, կառքեր, պարահանդեսներ, նորածնություններ, օթյակներ թատրոններում և այլն: Վաճառականի տուն է մտնում բուրժուական ապրելակերպն իր լավ ու վատ կողմերով: Կամա թե ականա իրենք նույնպես տրվում են ընդհանուր հոսանքին: Բուրժուազիան մի աստիճան վեր է բարձրանում, փոխվում է նրա կյանքի բովանդակությունը, փոխվում են նաև մարդկային հարաբերությունները: Յենց այս հանգամանքները չի կարողացել արտացոլել դրամատուրգը:

Կատակերգության ավանդական սկզբունքներին հետևելով՝ Գեորգի Էրիսթավին ստեղծել է ծառաների ու աղախիներին կերպար-

* Գուդա – (վրաց.) մուրացկանի վզապարկ:

ներ, որոնք իրենց հնարամտությամբ ու խորամանկությամբ կարևոր դեր են խաղում:

Գրողն իբրև հայրերի ու որդիների, քույրերի ու եղբայրների հարաբերություն է ներկայացրել ֆեոդալների, ազնվականների և նրանց ճորտերի ու ծառաների հարաբերությունները: Այսպես, Իվանի ծառա Գաբրիելը («Բաժանք») և Նինոյի աղախինը՝ Ղարղաշվերդին, սիրում են միմյանց: Վերջինս խորհուրդ է տալիս Գաբրիելին տիրոջից ավելի եկամտաբեր աշխատանք խնդրել, որ ամուսնանալու հնարավորություն ունենան և կարողանան հոգալ իրենց ապրուստը: Առաջարկը պարզապես շճնեցնում է ծառային. ինչպե՞ս կարելի է մտքով նման բան անցկացնել, դա հո ավազակություն է, ապերախտություն, ուրացում ու դավաճանություն. «Вот женщина»,- բացականչում է Գաբրիելը,- էրնեկ էսչափ սիրում չլնեիր: Ես ի՞նչ խորհուրդ ես տալիս, ուրեմն ես ռազբոյնի՞կ եմ, որ դավաճանեմ տիրոջս: Չէ՛, նա իմ տերը չի միայն. հերս ա, մերս ա, մի խոսքով՝ սեփական զավակի պես պահել-մեծացրել ա, ինձ սիրում ա, ինձ մարդ ա դարձրել: Нет бариш, ես քեզ չեմ դավաճանի, я тебя не оставлю, к черту սերն էլ, ամուսնությունն էլ»: Նրանք ազնվաբար ծառայում են տերերին, նվիրված են, բարեհոգի, աչքաբաց: Առանց վերապահության կարելի է ասել, որ տերերի ու ծառաների կերպարները, աննշան տարբերությամբ, նման են միմյանց, որ ծառաներն ու աղախինները, տերերի պատճեններն են, կրկնում են նրանց մտքերն ու հայացքները, ամեն պարագայում հանդես են գալիս նրանց շահերի պաշտպանների դերում: Մինչդեռ վաճառականների աշակերտներն ու տնային ծառայողները տգետ են, ժլատ, ստախոս, երդմնազանց ու ճարպիկ խաբեբաներ: Սրանք էլ իրենց տերերի կրկնակներն են և գերազանց գիտեն փողի ու կաշառքի զորությունը:

Գ. Էրիսթավիի կատակերգությունները հիմնականում զերծ են ավելորդաբանություններից ու արհեստական զավեշտից: Պիեսների լեզուն, սակայն, բավականին խրթին է, խճողված բարբառային բառերով, ժարգոնով, հնաբանություններով: Ճիշտ է՝ հեղինակը բնութագրել է տարբեր խավերի հերոսների, բայց ծայրահեղությունների մեջ է ընկել:

Գեորգի Էրիսթավիի հաջողված պիեսները տարիներ շարունակ բեմադրվել են Վրաստանի սիրողական և արհեստավարժ թատրոններում: Բեմական երկարակեցության գաղտնիքն այն է, որ հեղինակը հատկապես վաճառականների ու ազնվականների կյանքը պատկերել է տիպական հանգամանքներում:



ՁՈՒՐԱԲ ԱՆՏՈՆՈՎ

Դրամատուրգ, ռեժիսոր և դերասան Ջուրաբ Անտոնովի մասին կցկտուր տեղեկություններից իմանում ենք, որ շատ ծանր ու կարճատև է եղել նրա կյանքը:

Ծնվել է Գորի քաղաքում, 1820 թ. փետրվարի 9-ին, առևտրական Նազար Անտոնյանի ընտանիքում: Տնային քահանայի մոտ տարրական գիտելիքներ ստանալուց հետո 7-ամյա Ջուրաբը մտնում է տեղի ուսումնարան: Արտասովոր ընդունակությունների տեր երեխան առաջին դասարանի ծրագիրը յուրացնում է հինգ-վեց ամսում և փոխադրվում է երկրորդ դասարան: Դարձյալ նույնքան ժամանակում, հիմնովին յուրացնելով երկրորդ տարվա ամբողջ ծրագիրը, փոխադրվում է երրորդ դասարան, բայց չի շարունակում, թեև ինքնակրթությամբ հասնում է զգալի հաջողությունների:

18-ամյա Անտոնովն աշխատանքի է անցնում այն ուսումնարանում, որտեղ սովորել էր տասը տարի առաջ, բայց շուտով թողնում է աշխատանքը և զբաղվում վաղաժամ վախճանված հոր գործերով: Այդ ընթացքում բախվում է հայտնի վաշխառու Ամիրովի հետ, որը խաբեությամբ ծայր աղքատության դուռն է հասցնում նրանց ընտանիքը: Սնանկացած Անտոնովը 1851 թ. մեկնում է Թիֆլիս և մտնում Երիսթավիի թատերախումբ: Դերասանական շնորհքի տեր նորեկին Երիսթավիին փորձում է Միկիրտուն Գասպարիչի դերում («Բաժանք»): Շատ չանցած՝ Անտոնովը գրում է մի պիես («Ես ուզում եմ կնեյնա դառնալ»), և ինքն էլ հանդես է գալիս գլխավոր դերում: Հաջողություններն անմախքնաբար էին: Ոգևորված Անտոնովը մեկը մյուսի հետևից բեմ է հանում մի շարք կատակերգություններ՝ «Արևի խավարումը Վրաստանում», «Քորոլլի», «Լիտերատորների ճամփորդությունը լաստանավով», «Հինգ կնոջ ամուսինը», «Մի՞թե հորեղբայրը ամուսնացավ», «Խնսուրների հարսանիքը» և այլն:

2. Անտոնովը կատարել է նաև բազմաթիվ փոխադրություններ ու թարգմանություններ:

1854 թ., երբ Գ. Երիսթավին ընդմիջտ հեռանում է Թիֆլիսից, Անտոնովն ստանձնում է թատրոնի ղեկը և ծավալում լայն գործունեություն. հարստացնում է խաղացանկը և ձգտում թատրոնը դուրս բերել

ճգնաժամից: Վաղաժամ մահվան պատճառով, սակայն, անկատար են մնում շատ ու շատ մտահղացումներ:

Շնորհալի թատերական գործիչը խորհրդավոր պայմաններում վախճանվում է 1854 թվականի դեկտեմբերի 13-ին:

* * *

Զուրաբ Անտոնովը պատկերել է XIX դարի 40-50-ական թվականների վրաց կյանքը, քաղաքաբնակ հասարակ ժողովրդի և գյուղացիների ծանր կացությունը, սովորույթները, կենցաղը, հասարակական խավերի միստոկացը, հետաքրքրությունները և այլն: Նրա պիեսներում հանդես են գալիս տարբեր մարդիկ՝ քաղաքագլուխ, իշխան, վաճառական, պետական պաշտոնյա, մտավորական, գյուղական ցեց, հովիվ, փաշա, ավազակ, վարժապետ, դահիճ, տնային ծառայող: Հանդիպում ենք ազնվականության հին սերնդի ներկայացուցիչների, որոնց համար նոր կյանքն անհասկանալի է, խորթ, անգամ վնասակար: Այդպիսիք են Իոթան Գուրջաձեն, Դավիթ Վախուշտաձեն, Գրիգոլ Քերուլաշվիլին («Հինգ կնոջ ամուսինը»), Գոգիա Գաուղրելիձեն («Լիտերատորների ճամփորդությունը լաստանավով»), Ինդո Շերմանիձեն և Ջալա Պանտրիշիձեն («Արևի խավարումը Վրաստանում»):

Այս «մեծապատիվ» պարոնները ցավով նշում են, թե շատ չի անցել այն օրից, երբ իրենք, հարուստ ու նշանավոր ազնվականներ, առաջնակարգ տեղ էին գրավում երկրի կյանքում, բայց հանկարծ տնտեսական դժվարությունների հանդիպեցին. ժամանակները փոխվեցին, «Որ մոդայի» մարդիկ ի հայտ եկան, նոր ապրելակերպ ու վարվելաձև հնարեցին: Կորցնելով ոտքի տակի հողը, օրեցօր աղքատանալով ու պարտքերի տակ թաղվելով՝ իրենց ուշադրությունը սևեռում են միայն ուտել-խմելու վրա: Եթե կարասները, ամբարներն ու մառանները լիքը լինեն, մնացած ամեն բան ինքնին յուր կզմա: Նրանք ոչ միայն չեն ըմբռնում սոցիալական տեղաշարժերի էությունը, այլև բողոքում են դանակ-պատառաքաղ օգտագործելու, որոշակի ժամերի սնվելու, հագուստը շուտ-շուտ փոխելու, երիտասարդների միստոկացի դեմ. «Ի՞նչ սատանայական բաներ են հնարել՝ դանակ, պատառաքաղ, նախաճաշ, ճաշ, ընթրիք, այն էլ որոշակի ժամերի: Հիմարություն է էդ ամենը. սովեցի, պիտի ուտեն»:

Քննադատելով հանդերձ՝ նա չի ուզում մոդայից հետ մնալ, թե չէ իրեն «դուռակ ստարիկ» կասեն:

Իշխան Ջալա Պանտրիշիձեի հանդամամբ՝ երիտասարդ ազնվականները շատ շուտով կհիվանդանան, անդամալույծ կդառնան և քսանհինգը չբուրած՝ կմեռնեն, որովհետև ամոթ, աղոթք ու պատարագ մոռացած՝ թղթախաղով են տարվում, կանանց հետևից քարշ գալիս,

աստվածային խմիչքի՝ գինու փոխարեն «փորները կեղտոտում են ինչ-որ գոլ ջրով» (նկատի ունի թեյը): Իսկ Դավիթ Սերաշիծեի թավադուքյունից սոսկ կոչումն է մնացել: Նա վեց հարյուր ռուբլի պարտք է վաճառական Շահդուլովին և որպեսզի կարողանա վերադարձնել գումարը, համաձայնում է ամուսնանալ մեկ այլ վաճառականի այրու՝ տարիքով իրենից բավականին մեծ Բարբարե Թուլուխչովի հետ: Նշանադրության պահին, սակայն, պարզվում է, որ վաճառականն իր ամբողջ հարստությունը կտակել է ոչ թե կնոջը, այլ եղբոր դստերը՝ Կեկելին:

Տիաս ու շահամուլ են մահ առևտրավաշխառուական խավի ներկայացուցիչները՝ Գեուրք Կարապետովը («Արևի խավարումը Վրաստանում»), Միմաս Պետրուզիչ Շահդուլովը, Կոկոլա Փինաչովը («Խևստրների հարսանիքը»), Գալուստ Մինայիչ Թանդուկը («Մի՞թե հորեղբայրն ամուսնացավ»), Բարբարե Թուլուխչովը («Ես ուզում եմ կնեյնա դառնալ») և ուրիշներ:

Գեուրք Կարապետովը Վրաստանում և նրա սահմաններից դուրս հայտնի վաճառական է, հսկայական հարստության տեր, բայց հեռու է նոր կյանքի պահանջներից: Չի սիրում նորն ու նորամուծությունները, չի սիրում ո՛չ բարձր խավի, ո՛չ իր դասի սերնդին: Ընտանիքում էլ քառս է. մայրը, կինը, դուստրերը տարբեր ըմբռնումների ու մակարդակի են, անընդհատ վիճում են, կռվում: Պարզ է, որ մեծան պայմաններում մա պարտվում է, որովհետև տնտեսապես հզոր լինելը գրավական չէ կյանքում ևս ուժեղ լինելու:

Կարևոր տեղ են գրավում կրթությունը, մշակութային օջախներ հաճախելը, նորը հասկանալու ունակությունը, հանգամանքներ, որոնց կարևորություն է տալիս Անտոնովը: Մարեխը, ծանոթ լինելով սնոտիապաշտ հոր ըմբռնումներին, արևի խավարման պահին փախչում է սիրած տղայի հետ, ձեռք է բերում մահ չնախատեսվածը. ժլատ վաճառականը, վախենալով կորցնել միակ ժառանգին (նրան համոզում են, թե արևի խավարման ժամանակ հրեշտակները առևանգում են գեղեցիկ աղջիկներին, թոցնում են երկինք ու հոշոտում), հարստությունը կտակում է դստերը: Եթե Գեուրք Կարապետովին տեսնում ենք իր ընտանեկան հարկի տակ, ապա Կոկոլա Փինաչովին հանդիպում ենք համեմատաբար լայն ասպարեզում՝ գյուղական միջավայրում, իր տարերքի մեջ. նրա համար հարստության ամսպառ աղբյուր են գյուղն ու չարքաշ գյուղացին:

Անտոնովը գրականություն բերեց աղքատ ու խավարի մեջ խարխափող մարդկանց կերպարներ, ցույց տվեց, թե մոլորվածները, վաճառականները, ազնվականները, տանուտերերը, յասավուլները, քահանա-

ներն ու գրքացները ինչպես են յուրացնում գյուղացու աշխատանքի պտուղները:

«Հինգ կնոջ ամուսինը» կատակերգությունում տրված է հետևյալ պատկերը. Բերուա Բասիլաշվիլին և Իորդանե Մամուլաշվիլին վիճահարույց մի խնդիր կարգավորելու նպատակով դիմում են մովրովին: Սա նախ ամեն մեկից առանձին-առանձին կաշառք է գրպանում, հետո երկուսին էլ հրավիրում է դատական նիստի ու մեծ չափով տուգանում, որ «խելքի գան»: Մի զրույցի ժամանակ Բերուան դառնացած ասում է. «Դիամբեգի ու յասավուլների ահից տանը նույնիսկ հավ պահել չենք կարողանում»:

Դրամատուրգը չի անտեսել նաև պետական ապարատի աշխատողներին, որոնց հետ որոշակի հույսեր էր կապում: Այսպես, Պարմեն Իասամանիձեն և Գրիգուր Դրեբակովը («Լիտերատորների ճամփորդությունը լաստանավով»)՝ բարձրագույն կրթությամբ ծառայողներ, շրջագայում են երկրում, գրի առնում բանահյուսական նյութեր, դասախոսությունների ու զրույցների միջոցով ժողովրդին հաղորդակից դարձնում հայրենի մշակույթին ու գրականությանը, բայց միշտ ընկնում են ծիծաղելի դրության մեջ. տեղի-անտեղի գործածելով օտար բառեր՝ անհասկանալի են դառնում ունկնդիրներին, որոնք կարծելով, թե նրանց լեզուները կապ են ընկնում, գրքաց են հրավիրում և աղոթել տալիս: Զավեշտական կացություն է ստեղծվում հատկապես Ախալքալաքի Ուփլիսցիխե գյուղում: Մովրովը, տանուտերը, գզիրը, իմանալով նրանց այցի մասին, տնից տուն են վազում, հավ, ձու, պանիր ու հաց հավաքում, որ «թանկագին հյուրերին պատվով դիմավորեն» (նրանք կարծում են՝ լիտերատորները բարձրաստիճան պաշտոնյաներ են): Եվ ահա նրանք գյուղում են, պետք է նկարեն գեղեցկությամբ հռչակված Տասային՝ մի այրի կնոջ: Երբ Տասյան գալիս է, մեր հերոսները կարկամում են, կակազում, շնչահատ ու կցկտուր մի կերպ հայտնում են իրենց նպատակը: Շփոթահար տղաներին լսելով՝ կինը ձեռքը թափ է տալիս ու փորձում հեռանալ: Երկար աղաչանք-պաղատանքներից և ծնրադրումից հետո (գյուղացիների հետ միասին) միայն Տասյան տեղի է տալիս: Բնորդուհու գնալուց հետո նկարը խլիխում են ու խելագարի պես պաչպչում: Ներկաները լիաթոք ծիծաղում են, ծաղրում երիտասարդներին՝ նրանց համարելով խելապակասներ:

Նրանք դրական որոշ քայլեր անում են, բայց իբրև գործող կերպարներ, լիարժեք չեն. ըստ թատերագրի՝ մմանները չէ, որ պիտի ազդեն հասարակության առաջընթացի վրա, դառնան նոր կյանքի շեփորահարներ:

Անտոնովը ազնվականությանն ու առևտրական դասին առավելություն չի տալիս, ավելին, նրանց մեջ դրական գրեթե ոչինչ չի տեսնում: Միայն հասարակ ժողովրդի ծոցից ելած մարդիկ կարող են անձնվիրաբար ծառայել հայրենիքին, պայքարել հասարակության բարեկեցության համար: Նման կերպարներ կան «Քորոլի» և «Խևսուրների հարսանիքը» դրամաներում:

«Քորոլի» հերոսական դրամայի գործողությունը տեղի է ունենում Էրզրումում: Սյուժեն հետևյալն է: Սուլթանը պահանջում է Էրզրումի փաշայի գեղանի դստեր՝ Գյուլնարի ձեռքը: Փաշան փառավորապես նշում է տիրակալի հետ բարեկամանալու հրաշալի առիթը: Սակայն Գյուլնարի սիրտը վաղուց պատկանում է սխրանքներով երկիրը թմրացնող Քորոլուն: Աղջիկը մերժում է սուլթանին. նա չի գայթակղվում ո՛չ հարեմի առաջին կինը դառնալու հրապույրով, ո՛չ ոսկու դեզերով: Չեն ազդում հորդորները, սպառնալիքները, իրեն և ծնողներին սպասվող պատիժները: Դստեր համառությունը կոտրելու և «խելքի բերելու» նպատակով հայրը կարգադրում է շղթայել, նետել զնդան, զրկել հացից ու ջրից, ապա թե ոչ անձամբ կկտրի նրա գլուխը:

Դրամայի կենտրոնական դեմքը Քորոլին է: Նա ընկերների ու համախոհների հետ հարձակվում է փաշայի ապարանքի վրա, հրդեհում այն և փախցնում սիրած էակին:

Նրա ատելությունը խաների ու փաշաների հանդեպ հասնում է գագաթնակետին, երբ շամփրում-հանում են հոր աչքերը: Վրիժառուն համախմբում է շատ ու շատ հալածյալների և ահ ու սարսափ սփռում բռնակալների շրջանում: Զուտ անձնական հաշիվ չի մաքրում: Նա թուլների, բռնության զոհերի պաշտպանն է, հովանավորն ու հենարանը: Ահա ինչու նրա համար աղոթում են մեծ ու փոքր, քրիստոնյա ու մահմեդական, իսկ հարկ եղած դեպքում օգնում են, թաքցնում հետքերը: Չետաքրքիր է նաև Դեմիրչօղլու կերպարը, որը մահապատժից առաջ հանդուգն խոսքեր է ասում, երբ իրեն մեղադրում են ավազակություն ու կողոպուտներ կազմակերպելու մեջ: Ի լուր հրապարակ քշված ամբոխի և իշխանավորների՝ նա հայտարարում է, որ իսկական ավազակներն ու թալանչիները փաշաներն են, խաները, բեգերը, բոլոր այն տգրուկները, ովքեր անարգել խնում են ժողովրդի արյունը, կեղեքում են նրան, հալածում, աքսորում կամ ոչնչացնում:

«Քորոլին» երկար ժամանակ և մեծ հաջողությամբ բեմադրվել է վրացական թատրոններում:

Ցածր խավի մարդիկ են պատկերված «Խևսուրների հարսանիքը» դրամայում: Հանդիսատեսի առջև բացվում է յուրօրինակ տեսարան՝

խևտուրական գյուղն իր ինքնատիպ համայնապատկերով: Հովիվներ Նինիկան և Բեսոն միմյանց հաղորդակից են դարձնում իրենց սրտի գաղտնիքներին: Նինիկան սիրում է համագյուղացի Քալթմազեին, բայց վերջինիս ծնողներն ընդդիմանում են: Նինիկայի ընկերներն աղջկան փախցնում են: Հետո միայն կողմերը համակերպվում են կատարվածին և ճոխ հարսանիք անում:

Գրողը վարպետորեն նկարագրել է խևտուրական գյուղի կյանքը: Շատ հետաքրքիր են հարսանիքի մանրամասները: Այս առումով դրաման ունի գեղագիտական և ճանաչողական արժեք:

Ջուրաբ Անտոնովը մարմնավորում է տարբեր մարդկանց, դրական ու բացասական, հոգսաշատ ու մռայլ առօրյայով, տվյալ խավին, միջավայրին ու զբաղմունքին բնորոշ գծերով, մտածողությամբ ու հոգեբանությամբ:

Այդպիսին է «Արևի խավարումը Վրաստանում» կատակերգությունը: Գլխավոր դեմքերին ու դեպքերին զուգահեռ պատկերում է հին Թիֆլիսն իր գունագեղ նիստուկացով. ահա նեղ ու երկար փողոցները չափչփող կինտոները, քեֆչիները, աճաբարարները, էպիլետավոր չինովնիկները, ժանդարմները, ցմփոր, հաստավիզ վաշխառուները, կոկետուհիները՝ պշրված ու զարդարուն, կառքերով զբոսնող կանայք: Կենդանի, վառ ու գունեղ մի պատկերասրահ՝ բնորոշ անցյալ դարակեսի բազմազգ ու բազմալեզու Թիֆլիսին:

Տիրապետելով դրամատիկական ժանրի յուրահատկություններին, գրական կուլտուրային ու վարպետությանը՝ Անտոնովն ստեղծել է հարուստ գործողություններով աչքի ընկնող երկեր: Պիեսների լեզուն հյութեղ դարձնելու նպատակով հեղինակը օգտագործում է առածներ, ասացվածքներ, դարձվածքներ, ոտանավորներ, խնջույքի երգեր: Վարպետորեն է ոճավորում գործող անձանց խոսքը, օրինակ, ազնվականների ավագ սերնդի լեզվում առկա են հնաբանություններ, այս կամ այն գավառի ներկայացուցիչները երբեմն խոսքը համենում են իրենց բարբառով, պետական թերուս ծառայողներն ու պաշտոնյաները հաճախ են գործածում օտար բառեր, իսկ վաճառականները՝ ռուսերեն, վրացերեն, հայերեն, այնքան, որ դժվար է կռահել՝ ինչ լեզվով են խոսում: Անկախ ազգային պատկանելությունից, մաքուր վրացերեն խոսում են դրական հերոսները: Հեղինակը կիրառել է համապատասխան անհատական ոճ:

Շարունակելով Գեորգի Էրիսթավիի գործն ու ավանդները՝ Ջուրաբ Անտոնովն ստեղծեց դրամատիկական բարձր գնահատելի երկեր:



ԴԱՆԻԵԼ ԾՈՆՔԱԶԵ

Վրաց գրականության մեջ Դանիել Ծոնքաձեն առաջինն է ստեղծում ընթոստ ճորտի կերպար և հանրությանն իրազեկում ավատատիրության իրական բնույթի մասին, սոցիալական չարիքը դատապարտող թեմայով օրինակ է ծառայում ժամանակակից ու հետագա գրողների համար:

Ծնվել է 1830 թ., Դուշեթի շրջանի Դվավիլի գյուղում: 1839-1845 թթ. սովորել է Կավկավիի հոգևոր սեմինարիայում, ապա՝ Թիֆլիսի նույնատիպ հաստատությունում, որն ավարտելուց հետո՝ 1851 թ., նշանակվել է Ստավրոպոլի սեմինարիայի օսերենի ուսուցիչ: 1855 թ. տեղափոխվել է Թիֆլիս:

Վախճանվել է 1860 թ., թոքախտից:

Դանիել Ծոնքաձեն վրաց գրականության պատմության մեջ հայտնի է «Սուրամի բերդը» վիպակով, որ հրատարակվել է «Ցիսկարի» ամսագրի 1859-1860 թթ. համարներում: Այդ ժամանակ Ռուսաստանում սկիզբ առած շարժումներից անհանգստացած՝ վրացի ավատատերերը կաշվից դուրս էին գալիս՝ ապացուցելու, թե իբր Վրաստանում միշտ պատրոնդմորբա (հայրատիրություն) է եղել, ոչ թե բատոնդմորբա (ճորտատիրություն), թե ճորտի ու տիրոջ միջև հակամարտություն, անգամ անհաշտություն չի եղել ու չկա, իբր նրանց հարաբերությունները «հոր ու որդու» հարաբերություններ են, իսկ եթե եղել են մասնակի շեղումներ, ապա որոշ ապաշնորհ «հայր ավատների» տգիտության պատճառով միայն:

Օգտագործելով Սուրամի բերդի մասին ժողովրդական լեգենդը և վիպակի իրադարձությունները տեղափոխելով դարերի խորքը՝ Ծոնքաձեն ջրի երես է հանում ճորտատիրության էությունը, ֆեոդալների ու ճորտերի իրական հարաբերությունները: Նա հավաստեց, որ ճորտի ու տիրոջ միջև չի եղել ու չէր կարող լինել «հոր ու որդու» առնչություն, հաշտություն կամ հնազանդություն:

«Սուրամի բերդը» վիպակում նկարագրված են Վրաստանի տարբեր գավառներում տեղի ունեցած դեպքեր, բայց ներքին կապ կա երկի կառուցվածքի ու կերպարների միջև:

Ամռան տապին զովանալու նպատակով երիտասարդները գնում

են քաղաքից դուրս, հավաքվում գետափին և նվագում են, արտասանում կամ պատմում որևէ հետաքրքիր դեպք. ով ինչ կարող է, ով ինչ գիտե: Նրանցից մեկը, մատնացույց անելով Մուխրանբատոնիի հիմնահատակ ավերված ապարանքը, պատմում է հետևյալը: Դուրմիշխանը իմերեթցի երիտասարդ թավադ Ծերեթելու ապօրինի զավակն է: Նրա դեռահաս մայրը՝ անօգնական ու արհամարհված, մխիթարվում է նրանով, որ ինքն է դաստիարակում ու մեծացնում զավակին: Բայց ավագ իշխանը, ցանկանալով որդու և աղախնի միջև կանխել հետագա հնարավոր որևէ կապ, փոքրիկին նվիրում է ֆեոդալ Մուխրանբատոնիին: Որդեկորույս մայրը մեռնում է վշտից:

Դուրմիշխանի համար սկսվում են տառապալից երկար ու ձիգ տարիներ: Նա գրեթե միշտ «քաղցած է, ցրտահար, ծեծված ու ծաղրված»: Հասունանալով՝ Դուրմիշխանը սիրահարվում է տիկնոջ աղախնին՝ Վարդոյին: Սերը փոխադարձ է, բայց ամուսնանալու մասին խոսք լինել չի կարող, քանի որ զրկված են գոյության նվազագույն պայմանները հոգալու հնարավորությունից: Երբ աղջիկը փորձում է համոզել, թե ընտանիք կկազմեն, երեխաներ կունենան, կծառայեն տիրոջն ու տիրուհուն և կապրեն, ինչպես շատերը, Դուրմիշխանը, աչքի առաջ ունենալով իր դառնադետ ճակատագիրը, պարզապես սառը ջուր է լցնում սիրած աղջկա գլխին. «Հա՛, ասենք՝ ամուսնացանք, երեխաներ ունեցանք, շատ լավ, իսկ հիմի պատկերացրու, որ մեկը հյուր է գալիս մեր պարոնին, և սա վերցնում ու մեր երեխային նվիրում է նրան, ի՞նչ կարող ենք անել»: Վարդոն սարսափում է՝ մտածելով, որ ապագա երեխային կվաճառեն կամ կնվիրեն մեկ ուրիշի, ինչպես վարվել են Դուրմիշխանի հետ: Դուրմիշխանը ազդարարում է նաև մի ճշմարտություն, որ երկի առանցքն է. «Քանի դեռ մենք տիրոջ ճորտերն ենք, երջանիկ լինել չենք կարող»: Թղթախաղային է ազատությունը, խաբուսիկ: Պետք է պայքարել ոչ միայն իրավական, այլև իրական ազատության համար:

Վարդոյի շնորհիվ նա ազատվում է ճորտությունից, բայց դրա մեջ էլ երջանկություն չի տեսնում, որովհետև «Քանի դեռ մենք չենք տնօրինում մեր կյանքը, քանի դեռ անկախ չենք ապրում, ազատության մասին խոսք լինել չի կարող»: Այդուհանդերձ խոստանում է փոքր-ինչ կարողություն ձեռք բերելուն պես վերադառնալ և ամուսնանալ սիրած էակի հետ: «Ժամանակը համբերություն է պահանջում, հետո մեր երջանկությունն ավելի հիմնավոր կլինի», - ասում է նա, բայց ազատության մեջ մոռանում է թե՛ Վարդոյին, թե՛ խոստումը: Ոսկու փայլը նրա հոգում խամրեցնում է Վարդոյի գեղեցկությունն ու հմայքը:

Դեռ երեկ իր ծնունդն անիծող ճորտը բոլորովին պատահաբար

հեքիաթային հարստություն է ժառանգում, դառնում հաստափոր բուրժուա. առևտրական կենտրոնների, նավերի քարավանի տեր է: Ընտանիքում էլ վատ չէ. ամուսնացել է, ունի արու զավակ: Մի խոսքով, կյանքի երկնականարը անամպ է: Նա հասել է նպատակին, հարստացել է, իր կարծիքով՝ նաև երջանկացել: Այլ կերպ է ընթանում վեպի մյուս հերոսի՝ Նոդարի կյանքը: Նա նույնպես տառապանքներ է կրում տերերի ձեռքին. տանջվում է թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, բայց մինչև վերջ պահպանում է մարդկային արժանապատվությունն ու բարոյական վեհ հատկանիշները:

Նոդարն էլ ճորտի զավակ է: Հայրը դժբախտ պատահարի զոհ է դառնում: Անօգնական ու մի կտոր հացի կարոտ՝ մայրն ու զավակները ստիպված տեղափոխվում են տիրոջ կալվածք, գիշեր-ցերեկ աշխատում, համակերպվում կացությանը: Բայց ավատը ցանկանում է քրոջն ու եղբորը վաճառել: Մայրը, տեսնելով՝ անկարող է այդ դժբախտության առաջն առնել, երեխաների հետ փախչում է Թիֆլիս: Հայկական դավանանք են ընդունում, անունները փոխում (մայրը՝ Գայանե, դուստրը՝ Շուշան, ուստրը՝ Կարապետ), հաճախում հայկական եկեղեցի և ապրում հանգիստ ու ապահով: Բայց դա երկար չի տևում: Մի օր մայրը զնում է վրացական եկեղեցի՝ իբրև թե ապաշխարելու: Այստեղ էլ ճանաչում են, կալանավորում և ընտանյոք վերադարձնում տիրոջը: Վայրագ ավատը նրան նախ գութանին է լծում, ապա պատիժը համարելով մեղմ (եզները դանդաղ են շարժվում)՝ լծում է կամին և քշում այնքան, որ կինը ավանդում է հոգին: Այնուհետև նա Նոդարին ուղարկում է Թիֆլիս, լլկում նրա սիրած աղջկան, որն ինքնասպանություն է գործում: Վերադառնալով Թիֆլիսից և իմանալով եղելությունը՝ Նոդարը կացնահարում է ֆեոդալին, նրա կնոջն ու երեխային, դավանափոխ լինում և մեկնում Ստամբուլ: Բազմաթիվ մարտերում մահի ձգտելով՝ ավելի փառքի է արժանանում, պարգևատրվում ու հարստանում: Այդուհանդերձ նա շատ է տառապում, որովհետև պահի ազդեցությամբ սպանել էր տղային ևս, որ քրիստոնյա Նոդարը դարձել էր թուրք Օսման աղա: Մեղքը քավելու համար նա հաճախ գալիս է հայրենի երկիր, բայց այդպես էլ չի ազատվում հոգեկեղեք բեռից: Անցնում են տարիներ. նա մեծահարուստ է, բայց դա նպատակ չէ, միջոց է: Նա բարեհոգի է, անշահախնդիր, կարեկից. առևտրական նավերը նվիրում է բուլղոբլին անժանոթ մի մարդու (դա մեզ ծանոթ Դուրմիշխանն էր, որ այդ ժամանակ դեռ մուրացիկ էր) և «նորից իր հավատին գալիս»: Օսման աղան սխալվում է շարաչար: Դուրմիշխանը նրան ոչ միայն չի ազատում գազազած մոլլաների դատաստանից (նա այդ կարող էր անել ձեռքի մի շարժումով), այլև դիմ հո-

դին հանձնելու նեղություն չի քաշում: Այն պահին, երբ բարերարի աճ-
յունը նետում էին ծովը, Դուրմիշխանը նույն վայրում անհամբեր սպա-
սում էր նրա նավերի քարավանին, որ արդեն իր սեփականությունն էր:

Վաղ հասակից կյանքի գրեթե նույն ուղին անցած երկու հերոսնե-
րի միջև եղած ակնհայտ տարբերությունն անշուշտ պետք է բացատրել
նրանց ծագումով: Նողար-Օսմանը ռամիկ ծնողների զավակ էր: Գեղջ-
կական կյանքը նրա համար իդեալական էր, ամեն հաճույքից վեր: Ահա
թե ինչու նույնիսկ հետագայում, երբ հարուստ ու անվանի վաճառական
էր, իր լավագույն հիշողությունները կապում էր գյուղացիների ու գյու-
ղական առօրյայի հետ: Փառքը, հարստությունը նրա հոգում չեն մեռց-
նում ազնվությունն ու մարդկայնությունը:

Իսկ Դուրմիշխանն ինչո՞ւ է այդչափ տմարդի: Թավադի ապօրինի
որդի՝ նրան զրկում են նաև մայրական հոգատարությունից: Նա անա-
սելի տառապում էր հատկապես Թիֆլիսում. աշխատում էր իշխանի
տանը՝ ոտնահարված արժանապատվությամբ: Հավելենք, որ նա վկա
էր ստոր գործարքների, խաբեության, կաշառակերության: Տեսնում էր,
թե ինչպես մուրացկանը կարճ ժամանակում առևտրով կարողանում է
հարստանալ: Եվ առքուվաճառքը նրա համար դառնում է մոլուցք. կեղ-
ծի՞ք, քծնա՞նք, կողոպո՞ւտ՝ բոլոր ձևերն ընդունելի են, քանզի մտահո-
գությունը եսասիրական նկրտումներն են, անձնական բարեկեցու-
թյունը:

Նախկին ճորտը երեխայի համար ազնվական կնքահայր է
փնտրում և ընդգծված հեզմանքով մերժում կնոջ առաջարկությունը.
«Գոգիա՞ն ով ա: Գոգիա-Մոգիա չգիտեն: Դու նրան ասա, որ իմ երեխին
կնքողը իշխան պիտի լինի, իշխա՛ն: Չէ ու՛ էդ անտաշ գեղացին»:
Դուրմիշխանը հաշվենկատ է, տանել չի կարող ազնվականներին, բայց
համոզված է, որ կնքահայրը լավ դաստիարակ կլինի տղայի համար,
թավադի կոչում կտա, ճորտեր կնվիրի: Այս առումով նա հիշեցնում է
Էրիսթավիի և Անտոնովի վաճառականներին, ովքեր ձգտում էին
ազնվականի տիտղոս ձեռք բերել:

Դուրմիշխանը հասել է նպատակին, մնում է՝ որդուն հռչակավոր
դարձնի: Եթե «բախտը ժպտա, ու Ջուրաբս դառնա կաթողիկոս, ես ոչ մի
թավադի բանի տեղ չեմ դնի»: Թվում է՝ իրականություն կդառնա իղձը,
բայց եթե նա մոռացել է սիրած աղջկան, ապա վերջինս, որ գրբացի
համբավ ունի և բնակվում է Թիֆլիսում, ուշիուշով հետևում է ապե-
րախտ փեսացուի կյանքի ընթացքին:

Ի վերջո գալիս է հատուցման ժամը: Լուր է տարածվում, որ թուր-
քերը շուտով հարձակվելու են Վրաստանի վրա: Առևտրական գործերը

կարգավորելու նպատակով վաճառականը մեկնում է Ստամբուլ: Երկրի տիրակալներն ամրապնդում են սահմանները, կառուցում բերդեր ու ամրոցներ: Միայն Սուրամի բերդը քանի կառուցում, այնքան հիմնահատակ փլվում է: Ի՞նչ անել: Ժողովուրդն արքային խորհուրդ է տալիս դիմել հավաքարցի նշանավոր գուշակ Վարդոյին: Թագավորի բանագնացներին Վարդոն հայտնում է, որ Աստված զոհ է պահանջում. Սուրամի բերդի հիմքում պետք է մի կենդանի երիտասարդ դնել և անպայման մեծահարուստ վաճառական Դուրմիշխան Մամալաձեի միևնուճարին, այլապես բերդը նորից ու նորից կփլվի, վրացիներն էլ չեն կարող հաղթել թուրքերի դեմ պատերազմում:

Դուրմիշխանն Ստամբուլից վերադառնում է շատ ավելի հարուստ: Նա կնոջը տեսնում է խելագար, որդուն՝ բերդի պատի մեջ: Դուրմիշխանը ճերմակում է, ծերանում և միայն վրեժխնդրության տենչն է հետ պահում ինքնասպանությունից: Մեկնում է Թիֆլիս, գտնում գուշակին: «Մի քանի ժամ անց,- գրում է հեղինակը,- ծառաները նրանց գտնում են մեռած: Մահճակալին պառկած՝ նրանք այնպես էին գրկախառնվել, կկարծեիր՝ սիրող զույգ են: Թերևս ոչ մեկը վերահաս մահից պաշտպանվելու փորձ չէր արել»:

Չերոսների կործանումից արդարացված չէ հատկապես Ջուրաբի մահը, թեև ճոնքածեն հավանաբար ցանկություն է ունեցել պատժել երդմնազանց հորը, դատապարտել մարդկանց սնահավատությունն ու սոգիտությունը:

Դ. ճոնքածեն ձգտում է ապացուցել, որ միայն գյուղացիներն են շիտակ, ազնիվ, հավատարիմ, մինչդեռ ճորտատերերը, թավադները, վաճառականները, եկեղեցականներն ու պաշտոնյաները կեղեքողներ են, շահամուլներ, ծրիակերներ ու բռնակալներ:

Նա պաշտպանել է ժողովրդի շահերը, սոցիալական կեղեքման ու անարդարության դեմ պայքարելու կոչ արել, նշել ճորտատիրական իրավակարգից ազատվելու յուրահատուկ ուղի:



ԼԱՎՐԵՆՏԻ ԱՐԴԱԶԻԱՆԻ

Լավրենտի Արդազիանին ծնվել է 1814 թ., Թիֆլիսի Քաշվեթի եկեղեցու ավագերեց Պետրոս Արդազիանիի ընտանիքում: 1823 թ. հաճախում է ծխական դպրոց, որից հետո՝ հոգևոր սեմինարիա: Աշխատել է գրագիր, ապա՝ մարզային դատարանի քարտուղար:

Վախճանվել է 1870 թ. հունվարին:

Լ. Արդազիանին ասպարեզ է իջել 1850-ական թթ. վերջերին՝ ոտանավորներով, սակայն գրականության պատմության մեջ հայտնի է «Սուլունոն Իսակիչ Մեջղանուաշվիլի» վեպով:

Գրողն արժարժում է հարցեր, որոնք հարուցել էին Գ. Էրիսթավին և Ջ. Անտոնովը, այն տարբերությամբ, որ եթե դրամատուրգների երկերում վաճառականներին հանդիպում ենք որոշակի հարստության տեր դարձած, ապա Արդազիանիի հերոսը ներկայանում է ծննդյան օրից: Գլխավոր հերոսը՝ Սուլունոն Իսակիչը, պատմում է իր կյանքը՝ մանկությունից մինչև քաղաքի առաջին մեծահարուստի կարգավիճակ ստանալը: Մենք նրան տեսնում ենք ամենուր՝ տանը, փողոցում, խանութում, թատրոնում, գյուղում ու քաղաքում, կեղտոտ նկուղներում ու հոյակերտ ապարանքում, հոգսաշատ պահերին ու երջանկությունից թև առած: Դա ոչ միայն Սուլունոն Իսակիչի կյանքի պատմությունն է, այլ պատմությունն է առևտրաբուրժուական խավի ծննդի և վերելքի:

Սուլունոնը, մեկ տարին չբոլորած, զրկվում է հորից: Ընտանիքի հոգսն ամբողջությամբ ծանրանում է մոր՝ տասնվեցամյա Գայանեի փխրուն ուսերին: Բախտի բերմամբ այդ դժվարին օրերին Գայանեն և նորածինը հայտնվում են թավադ Ռախնդիձեի (ազգանունը խոսում է՝ ասպետորդի) ընտանեկան հարկի տակ, որտեղ նրանց նկատմամբ ցուցաբերվում է անշահախնդիր և շատ ջերմ հոգածություն. պահում-պահպանում են ինչպես հարազատների: Բարեսիրտ, սիրագործ տանտիրուհին՝ իշխանուհի Դարեջանը, Գայանեին սովորեցնում է կարուձև, իսկ Սուլունոնին՝ գրել-կարդալ: Ռախնդիձեների տանը մայր ու որդի ապրում են տասնվեց տարի, մինչև իշխանուհու մահը: Չանցած երեք օր, անզոր՝ կրելու բարերար տիկնոջ կորստի կսկիծը, վախճանվում է նաև Գայանեն: «Այդ ժամանակ ես տասնութ տարեկան էի և, հարկ էր, որ գլխիս ճարը տեսնեի, դառնայի անկախ և ինքնուրույն», - պատմում է Սուլունոնը: Շուտով նա համոզվում է, որ Ռախնդիձեներից ստացած գիտելիքներով մի կտոր հացի տեր չի դառնա: Եվ մտնում է շուկա, գնում ու վերավաճառում է մանր-մունր իրեր, ապա հավեր ու գառներ: Եկանուտը հասցնում է քսանհինգ ռուբլու և զբաղվում մանրավաճառությամբ: Սուլունոնը շարունակում է չարչիությունն անել: Սուտ խոսելը, գողանալը,

գջլելը, երդումն ու երդմնագանցությունը նույնքան անհրաժեշտ են, որքան ջուր խմելն ու օդ շնչելը: Նա արդեն փորձով գիտե, որ «դրամը դրամ է բերում»: Խարդավանքների ու մատնությունների դիմելով՝ Սոլոմոնը սնանկացնում է շատ-շատերի, սեփականում նրանց գույքը, դիզում հսկայական հարստություն: Եվ հենց այստեղ էլ գրողը կանգնեցնում է նրան, ստիպում հետ նայել ու խորհել անցած ուղու և ապագայի մասին: Պետք է փոխել գործելակերպն ու ապրելակերպը. չէ՞ որ նա ազնվականի տանն է դաստիարակվել: Հերոսի մեջ խղճմտանք է արթնանում և մոլեռանդ երկրպագուի նման համբուրելով մահճակալի տակ թաքցրած ոսկով լի սնդուկը՝ առատ արցունք է հեղում՝ հիշելով, թե որքան ժլատ, անգութ, անտարբեր է կնոջ ու երեխաների հանդեպ: Կախարդական փայտիկի զորությամբ Սոլոմոնը վերափոխվում է, բայց չգիտե՝ ինչպես ուղղի սխալը: Հարցի պատասխանն ստանալու համար դիմում է կնքահորը՝ Օհանեսին: Նրանց երկխոսությունը լավագույնս հուշում է հեղինակի հավատամքը: Օհանեսը սանին թելադրում է «գործելու» նոր ծրագիր, որի իրականացմանն էլ ձեռնամուխ է լինում վեպի հերոսը: Նա գնում է կառքեր, քաղաքի ամենափառահեղ շենքը, վարձում է աղախիճներ, ծառաներ, թատրոնում պատվիրում է օթյակներ: Քաղաքի առաջին մեծահարուստի միակ հոգսը դատեր՝ Թամարի ամուսնությունն է, այդ նպատակով ջանում է շլացնել թավադ Ալեքսանդր Ռախմոդիճին: Բայց Արդազիանիի երիտասարդ թավադը որոշակի «առաջընթաց» է ապրել: Սոլոմոնը առաջին անգամ պարտվում է, քանի որ փորձում է բարեկամանալ ազնվականի հետ: Վերջինս թեև հաճախ այցելում է Իսակիչի տուն, մասնակցում պարահանդեսներին ու խնջույքներին, նրանց հրավերով թատրոն գնում, բայց չի գայթակղվում Սոլոմոնի ունեցվածքով: Ավատատիրության շահերի պաշտպանը կարողանում է Ալեքսանդր Ռախմոդիճին հեռու պահել վաճառականի ոսկու քսակների ու գեղանի դատեր հրապույրից, ամուսնացնել վրաց ազնվականուհու հետ և ուղարկել գյուղ: Ռախմոդիճեն շուտով հայտնում է, որ իրենց կյանքն իդեալական է: Բայց մինչև ե՞րբ, չէ՞ որ առևտրական կապիտալը մուտք էր գործել նաև գյուղ, և Ռախմոդիճեները դժվար թե դիմանային դրա ճնշմանը:

Հարստությունը հասցնելով մեկ միլիոնի՝ Սոլոմոնը թողնում է առևտուրը, որ նույնպես հիմնավորված չէ: Հարստության ու փառքի գագաթնակետին հասած վաշխառուն արդեն քանիերորդ անգամ զղջում է իր արարքների համար. տեսնելով դատեր ողբերգական վախճանը՝ ապաշխարում է, գերադասում է ապրել նկուղում, քան թե փառահեղ ապարանքում, լինել մուրացիկ, քան թե քաղաքի առաջին մեծահարուստը:

Անհիմն, պարզապես բռնի է նաև Թամարին անպատասխան սիրո պատճառով մահվան դուռը հասցնելը: Ի վերջո Աստուծու այդ զայրույթ-պատիժը հեղինակը վերագրում է Սոլունոնի ապօրինություններին, կեցությանն անհարիր քայլերին, ազնվականի հետ բարեկամանալ, նրա հետ հավասարվել ցանկանալու մտքին: Ահա թե ինչու նա իր հերոսին ստիպում է վերադառնալ պապենական քողտիկ, ծնրադրել ու թողտվություն աղերսել բարձրյալից:

Վեպը Մեջղանուաշվիլու անունով է, բայց առաջին պլանում ազնվական Ալեքսանդր Ռաինդիժեն է, որի միջոցով հեղինակն իր պաշտպանության տակ է առել այդ խավի շահերը: Ճորտատիրական կարգերը տրված են վերուստ և մեկընդմիջտ, միայն թե դա պահպանելու համար պետք է լինել շրջահայաց, պետք է զարգացնել տնտեսությունը, խուսափել աննպատակ վատնումներից, հատկապես աղմկահարույց խնջույքներից և ճորտերին վերաբերվել մարդասիրաբար, ինչպես Ռաինդիժեն: Հեղինակը գույներ չի խնայում Ռաինդիժեններին հավուր պատշաճի ներկայացնելու. նրանք ազնիվ են, բարեգութ, բարեկիրթ, եվրոպական նիստուկացով, նյութապես ապահով, զերծ պարտքերից ու այլանելի բարքերից: Պատահական չէ, որ Սոլունոնի մայրը՝ Գայանեն, նույնպես «կայուն բնավորություն ունի, հավատարիմ է, անբիծ ու պատվախնդիր», որովհետև դաստիարակվել է ազնվականի ընտանիքում: Գրողն իր հերոսին պարտադրում է անել հետևյալ խոստովանությունը. «Հա՛, երանի չէ՞ր սովից շունչս փչեի, միայն թե չկորցնեի բնավորությանս այն գծերը, որ ձեռք էի բերել Ռաինդիժենների տանը»: Հեղինակը ջանքեր է գործադրում ապացուցելու, որ առևտրով կարելի է հարստանալ, բայց ոչ երբեք երջանկանալ, որովհետև կարողություն կուտակում են բարոյական նորմերի ոտնահարումով:

Հավաստի՞ է արդյոք ազնվականի կերպարը: Նա կրթություն է ստացել Ռուսաստանում, ճանապարհորդել Եվրոպայում և հետո միայն վերադարձել Վրաստան: Ջարմանալի չէ, իհարկե, որ խոսում է գրագետ, հասարակական վայրերում կիրթ է, հագնում է ճաշակով, հասկանում է թատրոնից ու երաժշտությունից, տունը ավելի լավ է կահավորել, քան Սոլունոն Իսակիչը: Բոլոր հարցերում գերազանցում է վաճառականին, բայց չի զգացվում նրա՝ թեկուզև մեկ գործնական քայլը: Նշանակալիցն այն է լոկ, որ ամուսնանում է իր դասի ներկայացուցչի հետ և մեկնում գյուղ: Նշենք, որ ամուսինների երջանիկ ապրելակերպի մասին իմանում ենք նամակներից: Դրանց մեջ շոշափվում է նաև գյուղի և քաղաքի խնդիրը և, ինչպես սպասվում էր, առավելությունը տրված է գյուղին: Պարզ է, սակայն, որ գյուղական իդիլիան չէ նրանց ձգում, այլ անգործ

թափառելն ու այլոց քրտինքի պտուղը վայելելու քաղցրությունը, մի բան, որից զրկված կլինեին քաղաքում: Թե՛ նամակներից և թե՛ երկի ընդհանուր տրամադրությունից զգում ենք, որ ազնվական երիտասարդների «աշխատանքը» սահմանափակվում է ճորտերին, ծառաներին ու աղախիններին հրահանգներ տալով:

Թեև հեղինակը ջանում է իդեալականացնել ազնվականներին, այնուամենայնիվ բացահայտ է, որ նրանք ձրիակերներ են և վերջին ճիգերն են գործադրում իրենց գոյությունը պահպանելու, իսկ ճորտատիրությունը, որ վեհացվում և հավերժ է համարվում, ի հեճուկս գրողի ճիգ ու ջանքի, դիրքերը զիջում է բուրժուական կարգերին:

Կան և չինովնիկների իրապատում կերպարներ: Ուշադրության արժանի են «ուղտ պրիստավի», «ասեղուտող պերեվոդչիկի», «հավուճուտ դեսետնիկի» կերպարները:

Քննադատված է կրթական համակարգը: Սուլոմոնը չի թաքցնում, որ իր բթամիտ տղան դասարանից դասարան է փոխադրվում ոչ թե գիտելիքների, այլ կաշառքի շնորհիվ:

Ձգալի տեղ է հատկացված կրոնական հարցերին. մի կողմից խոսում է ապաշխարանքի, ծիսակատարությունների անհրաժեշտության մասին, մյուս կողմից, որ պակաս կարևոր չէ, Աստծու որոշ ծառաների սանձարձակությունների, խարդավանքների ու մեքենայությունների օրինակներ է վկայում: Ահա այստեղ է, որ մտածողը տանուլ է տալիս գրողին: Հեղինակը արդարացնում է սոցիալական անհավասարությունը, այն վերուստ է տրված, ուրեմն պետք է հաշտվել, հարմարվել, ընդունել առանց առարկելու: Աղետների պատճառը համարում է Աստծու դեմ մեղանշելու, նրա պատվիրաններն անտեսելու հետևանք:

Արդազիանին հեղինակ է նաև «Հնազանդը» («Մորչիլի») վեպի, որ նվիրված է ազնվականության կենցաղին ու փառաբանությանը, և որն զգալիորեն զիջում է խնդրո առարկա վեպին:



1860-1870-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

1852-1862 թթ. ապստամբություններ են տեղի ունենում Կախեթում, Գուրիայում, Իմերեթում, Սամեգրեղյում, այլ գավառներում: Այս իրողությունը և ավատական-նահապետական տնտեսության անկումը ցարական կառավարությանն ստիպում է գյուղացիական ռեֆորմն իրականություն դարձնել նաև Վրաստանում:

Ստեղծվում է հատուկ կոմիտե, որ տեղերում պետք է ուսումնասիրեր պայմանները և կազմեր համապատասխան նախագիծ: Հատկանշական է, որ հանձնախմբի բոլոր անդամներն ազնվականներ էին:

Կոմիտեն բաժանված էր երկու խմբի: Պահպանողականները, որ մեծամասնություն էին, պնդում էին ճորտատիրությունը պահպանելու անհրաժեշտությունը: Մյուս թևը, որ հիմնականում նորսերնդականներն էին ներկայացնում, պահանջում էր հողի տեր ճանաչել գյուղացուն: Երիտասարդ հռետորի ելույթն այնպես է գայրացնում ազնվականներին, որ նրանցից մեկը, սուրը մերկացնում ու հարձակվում է հռետորի վրա:

Ռեֆորմն անցկացվեց և, ինչպես ամենուր, կրեց ձևական բնույթ: Գյուղացին հող չստացավ կամ ստացավ այն չնչին մասը, որ մինչ այդ էլ, տիրոջ ողորմածությամբ, մշակում էր իր համար: Փոխվեց միայն անունը, մինչդեռ էությունը մնաց նույնը. գյուղացին դարձյալ կալվածատիրոջ ճորտն էր:

Ռեֆորմը քննադատեցին արդեն անուն հանած հրապարակախոսներ Ի. ճավճավաձեն, Ն. Նիկոլաձեն, Գ. Ծերեթելին և ուրիշներ: Նիկոլաձեն այն որակեց որպես զազրելի աչքակապություն. «Կառավարությունը բարելավեց ոչ թե գյուղացիների, այլ ազնավուրների վիճակը: Տպարանային թանաքը բոլորովին չկարմրեց, երբ օրը ցերեկով օրինականացվեց կեղեքումի, ավազակության, կեղծիքի ու հանցանքի սույն կանոնադրությունը... Ո՛ւր մնաց հապա ճորտատիրության վերացումը»¹:

Քանի որ ռեֆորմից հետո գյուղացիների դրությունը չբարելավվեց, այս գործիչները պահանջում էին վերանայել նախագծի կետերը, նոր ուղիներ փնտրել և գյուղացուն տալ «ոչ թե թղթային, այլ իրական

¹ Ն. Նիկոլաձե, Երկեր, հ. I, Թբիլիսի, 1962, էջ 268 (վրաց.):

ազատություն»։ Դրանով հանդերձ կարևորում էին երկրի տնտեսության զարգացումը. ուսուցանում էին՝ ինչպես օգտվել բնության բարիքներից, ինչպես զարգացնել գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, յուրացնել տնտեսավարման եվրոպական մեթոդները, մասնագետներ պատրաստել և այլն։ Դա համարվում էր բարեկեցության, առաջընթացի ու բարոյական նորմերի անհրաժեշտ նախապայման։ «Մեր կյանքում մոռացության մատնված տնտեսական կողմին պետք է առաջնահերթ տեղ հատկացնել մյուս պրոբլեմների շարքում։ Հենց տնտեսական կյանքի ասպարեզում մենք պետք է փնտրենք մեր վերելքն ապահովող ուժեր։

Ազգի զարգացման, նրա հաջողությունների, ներքին ու արտաքին անկախության ամրապնդման հիմքերի հիմքը նրա տնտեսական հզորությունն է, առանց որի ազգն առաջընթաց ոչ մի քայլ չի կարող անել, որքան էլ որ նրա հոգին համակված լինի մեծ մտքերով ու զգացումներով»։

Վրաց մտավորականների ասպարեզ գալը պայմանավորված էր երկրում ստեղծված քաղաքական իրադարձություններով, գրականության ու արվեստի առաջ ծառայած խնդիրներով։ Խորապես ըմբռնելով տեղի ունեցող խնդիրների իմաստը, ժամանակը համարելով պատեհ՝ նրանք համարձակ պայքարի ելան։ Պահպանողական ուժերի և ինքնակալության դեմ մարտնչում էին Իլիա Գավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Նիկո Նիկոլաձեն, Գեորգի Ծերեթելին, Անտոն Փուրցելաձեն, Իսկոբ Գոգեբաշվիլին, Կիրիլ Լորթքիփամիձեն, Սամսոն Աբաշիձեն, Պետրե Նակաշիձեն և ուրիշներ։

Վրաց հասարակական մտքի պատմության մեջ այս գործիչներին «թերգոալեուլիներ» են կոչում։ «Թերգոալեուլի» հասկացությունը XIX դարի երկրորդ կեսի վրաց իրականության մեջ գործածվում էր երկու նշանակությամբ. առաջին՝ «թերգոալեուլի» (բառացի՝ թերեք գետից ջուր խմած) անվանում էին այն երիտասարդներին, ովքեր XIX դարի 50-60-ական թթ. մեկնում էին Ռուսաստանի բուհեր՝ կրթություն ստանալու։ Նրանք, բնականաբար, հատում էին Վրաստանի սահմանը, անցնում թերեք գետը, ուստի հանրությունը կես-կատակ, կես-լուրջ նրանց «Թերեքից ջուր խմածներ» էր անվանում։ Երկրորդ, որ ավելի նշանակալից է, «թերգոալեուլի» ասում էին հատկապես այն գործիչներին, ովքեր երկրի բարեկեցության և ազգային անկախության համար դրոշ էին պարզել և ովքեր իրենց բարձրագույն կրթությունը նույնպես ստացել էին թերեքից այն կողմ ընկած երկրներում՝ լինելով դա Ռուսաստան, Ուկրաինա թե եվրոպական որևէ պետություն։

«Թերզդալեուլիները», առանց բացառության, ազնվականության երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ էին և իրենց իսկ խավի ավագ սերնդի դեմ անզիջում ու տևական պայքար էին մղում: Նրանք ունեին թերթեր ու ամսագրեր՝ «Սաքարթվելոս մոամբե», «Դրոեբա» և «Կրեբուլի», որոնցում հրապարակում էին իրենց գաղափարներն արտացոլող գեղարվեստական երկեր, հողվածներ ու շարժման էությունը պարզաբանող նյութեր: Պայքարի առիթ դարձավ 24-ամյա Իլիա ճավճավաձեի «Մի քանի խոսք թավադ Ռևազ Շավվայի էրիսթավիի կողմից Կոզլովի «Խենթի» թարգմանության մասին» հողվածը («Ցիսկարի», 1861, թիվ 4), որ «գրական նոր դպրոցի մանիֆեստ կարելի է համարել» (պրոֆ. Միխ. Ջանդուկելի):

1860-1870-ական թթ. առաջընթաց նկատվեց գրական-մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում: Նորսերնդականները, որ բարձրագույն կրթություն էին ստացել Ռուսաստանում և եվրոպական երկրներում, պայքարի ելան ընդդեմ ազգային ու սոցիալական շահագործման՝ զենք ունենալով գեղարվեստական գրականությունն ու մամուլը: Նրանց ուշադրությունը սևեռված էր հատկապես ազգային խնդրի վրա: Վրաստանը գաղութ էր՝ բաժանված երկու նահանգի՝ Թիֆլիսի և Քութայիսի, և երեք մարզի՝ Սուխումի, Բաթումի և Ջաքաթալայի: Երկրի կացությամբ մտահոգ գործիչների նշանաբանն էր՝ «մենք պիտի լինենք մեր գլխի տերը»: Նրանց քաղաքական իդեալը ինքնավարությունն էր կայսրության հովանու ներքո: Ինքնավարություն ձեռք բերելը համարում էին անհրաժեշտ, քանզի մի երկիր, որ երկար ժամանակ եղել է գաղութային վիճակում, տնտեսապես շատ աղքատ, լուսավորությամբ շատ թույլ, միանգամից չէր կարող անկախություն նվաճել:

Ի. ճավճավաձեն արժարժում է կյանքի ու գրականության, գրական լեզվի, ռոմանտիկական և ռեալիստական ուղղությունների և հարակից այլ պրոբլեմներ: Այդ ամենը գնահատելիս նա առաջնորդվում էր դարաշրջանի կենսական շահերով: Դրանց պատասխաններն այնքան անսպասելի, համարձակ ու նոր էին, որ պահպանողական ուժերն աղմուկ բարձրացրին ու սկսեցին սուր ճոճել ճավճավաձեի և նրա համախոհների դեմ: «Ցիսկարի» հանդեսում հաջորդաբար լույս տեսան բազմաթիվ հողվածներ՝ հեղինակությամբ Բ. Ջորջաձեի, Ս. Ալեքսի-Մեսխիշվիլու, Գ. Բարաթաշվիլու, Ռ. Էրիսթավիի: Նրանք, կտրված ժողովրդից, անտեղյակ լեզվի զարգացման օրինաչափություններին, ջանում էին գրականության մեջ արմատավորել սալոնային ժարգոնն ու սխոլաստիկ ոճը:

Հինսերնդականները, որ շնչում էին հին գրականության ավանդ-

ներով, չէին ուզում հասկանալ, որ նախնիների գրական ճաշակը և հոգևոր պահանջներն այլևս չեն բավարարում XIX դարի 60-ական թթ. եվրոպական կրթություն ստացած մտավորականների զգալի մասին: Վրաց հին գրականությունը գնահատելու հարցում ևս նրանք հակառակ դիրքերում էին: Ֆեոդալական ազնվականության այս «տնաբույս գրողները» (Տիցիան Տաբիձե) ժողովրդի համար լեզու ստեղծելու և նրա հետագա զարգացման ուղիները որոշելու իրավունքը համարում էին իրենց մենաշնորհը: Մինչդեռ առաջադեմ թևը պահանջում էր ժողովրդական կենդանի խոսվածքի հիման վրա ստեղծել ազգային, բուրդին հասկանալի գրական լեզու:

Սերունդների այս պայքարը նոր թափ առավ, երբ Ի. Ճավճավաձեն 1863 թ. սկսեց հրատարակել «Սաքարթվելոս մոամբե» («Վրաստանի լրաբեր») հանդեսը, բայց ավելի անզիջում բնույթ կրեց 70-ականների սկզբին: Ռեֆորմից հետո էլ «հայրերը» չիրաժարվեցին իրենց գաղափարներից և ջանալով պահպանել դիրքերը՝ կասեցնում էին երկրի բարօրությանը նպատակամղված երիտասարդ սերնդի ամեն միջոցառում: Ընդմիջված ոգորումը վերսկսում է Իլիա Ճավճավաձեն՝ գրելով «Հանելուկներ» և «Նորից հանելուկներ» ոտանավորները, որտեղ նա հեզնում է Թիֆլիսի ցարական չինովնիկներին ու ավագ սերնդի այն հեղինակություններին, ովքեր հանդուրժել են ծանր ռեժիմի գոյությունը, դավաճանել, կողոպտել ու հալածել ժողովրդին, իսկ եթե մի բան արել են, ապա՝ իրենց փառքի ու հարստության համար: Նրանք ապաշնորհ են, շողմքոր, երկերեսամի: Ճավճավաձեն անուններ ու պաշտոններ չի նշում, բայց «հայրերին» ու չինովնիկներին այնպես է նկարագրում, որ ընթերցողն առանց դժվարության ճանաչում է՝ ում մասին է խոսքը:

Նոր սերունդն առաջադրեց, և ինքն էլ վճռեց գրական ռեֆորմի հարցը: «Թերգդալեուկները» վրաց գրողի կարևորագույն խնդիրն էին համարում հետևել ոչ թե իր դարն ապրած սենտիմենտալ-ռոմանտիկական, այլ միայն ռեալիստական ուղղությանը: «Ինքներդ դատեք,- գրում է Ճավճավաձեն,- մեր գրականությանը կամ ժողովրդին պե՞տք է, որ ծանոթանան սենտիմենտալիստական շկոլայի գրականությանը: Գուցե կան մտածողներ, ովքեր կարծում են, թե մեր գրականությունն այլևս չի վերածնվի, եթե իր զարգացման ընթացքում չկրկնի վաղեմի ժամանակների կեղծիքն ու մոլորությունները: Եթե այսպես են կարծում, ուրեմն պատմությունը կորցնում է իր նշանակությունը: Պատմությունը ուժեղ է նրանով, որ մեզ ցույց է տալիս մեր նախնիների մոլորությունները՝ միաժամանակ խելք է սովորեցնում, թե ինչպես վարվենք»:

Նոր մտեցում ցուցաբերելով թարգմանության նկատմամբ՝ հիմք

դրվեց ռեալիստական թարգմանությանը՝ այն է՝ ինչ և ինչպես թարգմանելու տեսությանը:

Անդրադարձ եղավ նաև վրաց ուղղագրությունը վերափոխելու անհրաժեշտությանը: Հիշեցրին մամուլի պարտականությունն ու հասարակական կոչումը: Հայրենական գրականագիտությունը դրվեց գիտական հիմքերի վրա: Փորձ արվեց նորովի լուսաբանել կյանքի ու գրականության, անհատի ու հասարակության փոխհարաբերության խնդիրները: Նրանց ջանքերով քննադատական ռեալիզմը հաստատուն տեղ գրավեց վրաց գեղարվեստական գրականության մեջ:

Հարկ է նշել, որ առաջադրված խնդիրներին «թերգոյալեուլիներն» անդրադառնում էին՝ հիմք ունենալով Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Բելինսկու, Գերցենի գեղագիտական դրույթները:

«Թերգոյալեուլիներն» առաջին անգամ արժարժեցին նաև ռեալիստական գեղագիտության հարցերը: Նրանց գեղագիտության անկյունաքարը կյանքի և արվեստի փոխկապակցությունն էր: Ընդունելով, որ արվեստը կոչված է բացահայտելու իրականությունը, նրանք աշխատում էին պարզաբանել, թե ինչ հարաբերության մեջ պետք է գտնվեն արվեստը և կյանքը: Արվեստի և գրականության առարկան իրականությունը պետք է լինի, բայց արվեստագետը չպետք է բավարարվի երևույթներն արձանագրելով: Իսկական գրողը պարտավոր է կյանքը վերարտադրել լուսավոր ու ստվերոտ կողմերով, պետք է ակտիվ լինի հասարակական կյանքում, ազդի կյանքի ընթացքի վրա, նպաստի նրա զարգացմանը: Ռեալիզմը չի պահանջում մանրուքները վերարտադրել լուսանկարչական ճշգրտությամբ, այլ պահանջում է երևույթների և առարկաների մեջ տեսնել ու վեր հանել էականը, կարևորը, տիպականը: Վրաց գրողներն ուշադրություն էին դարձնում ժողովրդայնության խնդրին: Ժողովրդայնություն ասելով նրանք հասկանում էին կյանքի համակողմանի ուսումնասիրությունն ու արտացոլումը:

«Թերգոյալեուլիներն» ամեն ինչ արեցին երկիրը խավարից դուրս բերելու համար. այդ նպատակով բացեցին դպրոցներ, գրադարաններ, կազմակերպեցին թատերական խմբեր, հրատարակեցին թերթեր ու ամսագրեր: Վրաց իրականության զարգացումը դրվեց նոր հիմքերի վրա, ազգային-հասարակական միտքը վերաիմաստավորվեց. այս ամենը մեծապես նպաստեց հոգևոր կյանքի զարթոնքին ու վերածննդին:





Իլիա ճավճավաձեն ազգային-հասարակական կյանքի ասպարեզ իջավ XIX դարի 60-ական թվականների սկզբին. անուրանալի է նրա պատմական առաքելությունը. բավական է նշել, որ նա վրաց նոր գրականության ու գրական նոր լեզվի, գրական քննադատության ռեալիստական ուղղության և ռեալիստական թարգմանության տեսության հիմնադիրն է: Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ,

գրականագետ, թատերագետ, հրապարակախոս, սոցիոլոգ, պատմաբան, իրավաբան, տնտեսագետ, մաս թերթերի, ամսագրերի հրատարակիչ - խմբագիր, մշակութային-լուսավորական բազում հաստատությունների հիմնադիր - ղեկավար, «Վրացիների մեջ գրագիտություն տարածող ընկերության» և «Հողային բանկի վարչության» անփոփոխ նախագահ. ահա իր ժողովրդի առաջնորդի և ազգային-ազատագրական շարժման դրոշակակրի գործունեության ոլորտները:

Ծնվել է 1837 թ. հոկտեմբերի 27-ին, գեղատեսիլ Կախեթի Ղվարել գյուղում: Մանուկ Իլիայի վրա մեծ ազդեցություն է ունեցել մայրը՝ թիֆլիսահայ ազնվականի դուստր Մարիամ Բեբուրովը՝ ժամանակի կիրթ և խելացի կանանցից մեկը: «Մայրս հրաշալի տեղյակ էր ամբողջ վրաց գրականությանը,- գրում է ճավճավաձեն,- բերանացի գիտեր գրեթե բոլոր այն բանաստեղծությունները, պատմվածքներն ու ավանդավեպերը, որ ճարվում էին այդ ժամանակ ձեռագիր կամ տպագիր: ...Երեկոները մեզ՝ երեխաներիս, նստեցնում էր իր շուրջը, կարդում պատմվածքներ ու հեքիաթներ, հետո վերապատմում դրանց բովանդակությունը: Հաջորդ երեկո կրկին մեզ հավաքում էր և հարցնում, թե ով ավելի լավ կպատմի նախորդ օրվա լսածը: Ով լավ էր պատմում, արժանանում էր գովասանքի. նրա գովասանքը մեզ համար ամենաբարձր գնահատականն էր»: Մարիամը տասնչորս տարեկանում ամուսնանում է Գրիգոր ճավճավաձեի հետ, ունենում վեց երեխա: Իլիան երրորդն էր: Վախճան-

վել է երեսունը չբուլորած: Իլիայի հայրը գինվորական էր. ծառայել է Կախեթի դրագունյան գնդում: Տասնյոթամյա պատանի՝ 1828 թ. հունիսի 23-ին մասնակցում է Կարսի համար մղվող մարտերին, իսկ Գրիգորի ավագ եղբայրը՝ վրաց գրեմադերական գնդի պորուչիկ Սիմոն ճավճավաձեն, զոհվել է Երևանի բերդի գրավման ժամանակ:

Իլիան նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում: Ուսուցիչը սաներին հաղորդակից է դարձնում գրականությանը, պատմությանը, ավանդություններին, հեքիաթներին, երգերին, հոգևոր այլ արժեքների:

1848-1851 թթ. սովորել է Թիֆլիսի մասնավոր պանսիոններից մեկում, 1852-1856 թթ.՝ գիմնազիայում: Այդ տարիներին նա թղթին է հանձնում առաջին ոտանավորները, կատարում թարգմանություններ:

Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով 1857 թ. մեկնում է Պետերբուրգ և հաճախում տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասընթացներին: Կարդում է համալսարանը, ծեռք բերում խոր և կայուն գիտելիքներ: Ուսանող ընկերները վկայում են, որ Իլիան պարապում էր օրական 18-20 ժամ: Նա ուսումնասիրում է համաշխարհային գրականություն, փիլիսոփայություն, սոցիոլոգիա, գեղագիտություն, քաղաքատնտեսություն, իրավագիտություն: Ուշիուշով հետևում է իտալական ազգային-ազատագրական շարժման առաջնորդ Գարիբալդիի պայքարին: Այնպես է կլանվում, որ գրում է «Լսում եմ, լսում եմ» բանաստեղծությունը և որոշում մեկնել Իտալիա ու գինվորագրվել նրա բանակին:

Բայցևայնպես նրա աշխարհայացքի ձևավորման վրա բախտորոշ ազդեցություն են ունենում խոշորագույն մտածողներ Բեիլհսկու, Չերմիշևսկու, Դոբրոլյուբովի, Գերցենի երկերը: Այդ մասին գրում է. «Ինչ խոսք՝ ռուս գրականությունը շատ մեծ ծառայություն է մատուցել մեր առաջընթացի ճանապարհին և մեծ ազդեցություն թողել այն ամենի վրա, ինչը մեր հոգեկան ուժն ու կորովն է, մեր բանականությունը, մեր միտքը, մեր զգացմունքը: Այսօր մեր մեջ չկա մի գործիչ, գրականության բնագավառում աշխատող գեթ մեկը, որ կրած չլինի ռուս գրականության ազդեցությունը: Ռուսական գիտությունը մեր առջև բացեց լուսավորության դուռը՝ կանխորոշելով մեր մտքի շարժման ուղղությունը: Մեզնից յուրաքանչյուրին ռուս գրականությունն է աճեցրել»:

Չորրորդ կուրսի ուսանող ճավճավաձեն, կիսատ թողնելով ուսումը, 1861 թ. վերադառնում է հայրենիք և նվիրվում գրական-հասարակական և մշակութային գործունեության: 1863-ին հրատարակում է «Սաքարթվելոս մոամբե» («Վրաստանի լուրեր») ամսագիրը, որը փակ-

վելուց հետո արդարադատության բնագավառ է մտնում. աշխատում է նախ Քուբայիսում, ապա շուրջ տասը տարի՝ Դուշեթում: 1874-ին տեղափոխվում է Թիֆլիս: 1877 թ. հիմնադրում է «Իվերիա» թերթը. խմբագրում է մինչև 1902 թ.:

Չափազանց մեծ է այս թերթի դերը XIX դարի վրաց մշակույթի, գրականության ու հասարակական մտքի զարգացման գործում: Իբրև տնօրեն՝ ճավճավածեն հսկայական աշխատանք էր կատարում. խմբագրում էր բոլոր նյութերը, յուրաքանչյուր համարում տպագրում իր երկերը, հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք նվիրված էին գիտության, մշակույթի, իրավագիտության, հասարակական ու քաղաքական ամենատարբեր բնագավառներին:

1906 թ. ճավճավածեն ընտրվում է պետական խորհրդի անդամ և հարում պատգամավորների ծախ թևին:

Սպանվում է 1907 թ. օգոստոսի 30-ին սոցիալ-դեմոկրատական կուսակցության գաղտնի ժողովի որոշմամբ:

1987 թ. համաշխարհային հասարակայնությունը նշեց նրա ծննդյան 150-ամյակը, իսկ վրաց ուղղափառ եկեղեցու սինոդը որոշում ընդունեց Իլիա ճավճավածեին ընդունել սուրբ և տալ սուրբ Իլիա Սրբակյաց անունը, կազմել սրբին անհրաժեշտ աղոթքներ և նկարել սրբապատկերը: Հիշատակի օրը օգոստոսի 2-ին է:

Իլիա ճավճավածեին սրբերի շարքը դասելու կանոնական հիմք է ծառայել նրա առաքինությունը, նվիրվածությունը եկեղեցուն, հայրենիքին և մարտիրոսական վախճանը:

Ակնառու է ճավճավածեի աշխատանքը վրաց իրականության մեջ դեմոկրատական հայացքեր սերմանելու գործում: Ելույթներում ու հոդվածներում պահանջում էր վերացնել ճորտատիրական կարգերը, հողը հանձնել գյուղացուն: Հասարակական զարգացման և նրա ընդերքում առաջացած հակասությունների հարթման համար պայքարում էր խոսքով ու գրչով: Բայց 1880-ական թվականներից հարում է լիբերալիզմին, հանգում «դասակարգերի միավորումով ու համագործակցությամբ» ազգային վերածննդի գաղափարին: «Որպեսզի հեռու մնանք արյունահեղություններից ու եղբայրասպան կռիվներից,- ասում էր նա,- անհրաժեշտ է հասարակական խավերի միջև վերականգնել «կոտրված կամուրջը»:

Ժողովրդի հոգսով ապրող գործիչը հույժ կարևոր գործոն էր համարում նաև հոգևոր զարգացումը: Այդ էր պատճառը, որ անհաշտ պայքար էր մղում խորթ ու անհարիր երևույթների դեմ. մամուլի էջերում և հրապարակային ելույթներում պարզապես խարազանում էր ժողովրդի մեջ նկատվող թերությունները, իր խոսքերով՝ «վրացական արատներ-

րը», նախապես հիշեցնելով. «Թող ինձ չմեղադրեն, թե ես չեմ սիրում Վրաստանը, երբ մեր ամսագիրը ի լուր ամենքի ասում է այն, թե ինչն է վատ ու զգվելի վրացիների մեջ: Եթե կան հաշված թվով վրացիներ, որ սիրում են Վրաստանը, մենք նրանց շարքում վերջինը չենք: Սակայն չեմ թաքցնում, որ վրացու մեջ սիրում եմ միայն լավը, իսկ վատը ամեն տեղ զգվելի է: Վատ բան անողը՝ լինի վրացի թե անգլիացի, մեզ համար մեկ է. երկուսն էլ ջուրը գցելու բան են: Մեր մեջ շատ կան այդպիսիք, որ աշխատում են թաքցնել կյանքի բացասականը: Դա վրացիներին տգիտորեն սիրելու հետևանք է: Նրանք մոռանում են ժողովրդական մի հին առած. «Բարեկամիդ երեսին ասա, թշնամուդ՝ հետևից»:

Իլիա ճավճավաձեի ու նրա համախոհների ջանքերը տվեցին իրենց պտուղները. բարգավաճեցին գիտությունն ու դպրությունը, մշակույթն ու կրթությունը, արթնացան ու շարժման մեջ դրվեցին Վրաստանի առաջադիմական բոլոր ուժերը:

Սակայն Իլիա ճավճավաձեն նախ և առաջ գրող էր: Գրական ասպարեզ մտնող պատանի Իլիան հրապուրվում է Ալ. ճավճավաձեի, Գր. Օրբելիանիի, Ն. Բարաթաշվիլու և մյուսների հայրենասիրական պոեզիայով, հասարակական կյանքի արատները խարազանող Գ. Էրիսթավիի և Զ. Անտոնովի կատակերգություններով: Բայց ընտրում է սեփական ուղին. ստեղծագործաբար յուրացնելով նախորդների ավանդները՝ գրողն ազգային-ազատագրական հարցերը միաձուլում է սոցիալական հրատապ խնդիրներին և ստեղծում ինքնատիպ պատմվածքներ ու դրամաներ, պոեմներ ու վիպակներ: Դեռևս վաղ շրջանի երկերում որոշակի է նրա հավատամքը. պատանին խնդիր էր դրել երբեք չհեռանալ իրական կյանքից, ճշմարտացի արտացոլել այն և պայքարել ճնշման, անարդարության ու բռնության դեմ, սերմանել բարի մտքեր, հարստացնել ընթերցողի հոգևոր աշխարհը:

Չեղինակի հավատամքը շարադրված է «Պոետը» ոտանավորում (1860), իսկ «Ուղևորի գրառումները» նոթերում արտահայտված են այն խոհերն ու զգացումները, որ ծնվել են 24-ամյա Իլիայի մեջ, երբ նա քառամյա բացակայությունից հետո Ռուսաստանից վերադառնում էր հայրենիք: Ահա այդ տարիների նրա բնութագրությունը. «Չորս տարի ես մնացի Ռուսաստանում և իմ հայրենիքը չտեսա: Չորս տարի... Գիտե՞ս, ընթերցող, թե այդ չորս տարիները ի՞նչ տարիներ են: Նախ՝ մի ամբողջ հավերժություն է նրա համար, ով հեռու է եղել հայրենի եզերքից: Երկրորդ՝ այդ չորս տարիները կյանքի հիմք էին, կենսական աղբյուրի ակունք, մազե կամուրջ խավարի ու լույսի միջև՝ ճակատագրի կողմից զգված: Օ՛, դուք իմ երանելի չորս տարիներ, երանի՛ նրան, ում

ուտքի տակ չի կոտրվել ձեր գցած մազե կամուրջը, երանի՛ նրան, ով կարողացել է օգուտ քաղել ձեզնից»:

Մոտենալով երկրի սահմաններին՝ հուզվում է. «Ինչպե՞ս կհանդիպեմ հայրենիքիս, ինչպե՞ս նա կդիմավորի ինձ,- մտածում էի ես,- ի՞նչ նոր բան կասեմ իմ երկրին, և ի՞նչ կասի նա ինձ»:

Ճավճավածեն չի կասկածում, որ երկիրը գրկաբաց կընդունի, ինքն էլ գլուխը կխոնարհի նրա կրծքին ու հաղորդակից կդարձնի իր հոգսերին ու վշտին: Բայց ինքը կհասկանա՞ նրա ցավը, կկարողանա՞ մխիթարել, հույս ու հավատ ներշնչել, կկարողանա՞ դժգոհության կայծերն ի մի բերել ու դարձնել հրդեհ: Այդ դեպքում միայն կիմաստավորվեն ուսման չորս տարիները:

Երիտասարդ գրողը լավ գիտե, որ ստեղծված կացությունից տրտնջալով դուրս գալ չի լինի, որ համաժողովրդական շարժում է անհրաժեշտ, մասշտաբային պայքար: Ահա ինչու շարժման ու հզոր պայքարի գաղափարը համեմատելով փրփրադեզ, վարարուն թերեքի ու հանդարտաբարո ձյունածածկ Մղինվարի (Կազբեկ լեռան՝ 3. Բ.) հետ, գոչում է, ո՞ւմ են պետք վերջինիս փառահեղությունն ու գեղեցկությունը, չէ՞ որ մարդիկ չեն կարող բարձրանալ նրա գագաթը, ոչ էլ ինքը կարող է մոտենալ մարդկանց: Բանաստեղծին դուր է գալիս թերեքը, որովհետև հանձին խռովահույզ գետի՝ նա տեսնում է ըմբոստ և կապանքներ չհանդուրժող մարդու: Ոչ մեկը թող չհրապուրվի խաղաղ, թեկուզև այնքա՛ն գեղեցիկ, բայց ամեն ինչի հանդեպ սառնասիրտ Մղինվարով, գերապատվելի է փրփրաբաշ թերեքը:

Կազբեկի ու թերեքի օրինակով գրողը պախարակում է նրանց, ովքեր հեռու են ժողովրդի հոգս ու ցավից, թեև արտաքուստ վեհ են, հարուստ ու փառահեղ: Ճավճավածեն անշարժությունից շարժման է կոչում, որովհետև «շարժումը և միայն շարժումը երկրին կբերի փառք ու հզորություն»:

Բանաստեղծը նույն գաղափարներն է արտահայտում գիշերվա ու ցերեկվա հակադրումով. պարսավելով խավարչտին գիշերը, որի փեշերի տակ կատարվում են չարագործություններ, նա երազում է ցերեկվա մասին՝ իր առտնին հոգսերով, առօրյայով, տանջանք-տառապանքով, պայքարով:

Իլիա ճավճավածեի երկերում նշանակալից տեղ է գրավում հայրենասիրության թեման: Վրաստանի ճակատագիրը, ինչպես խոստովանում է հեղինակը, միշտ եղել է իր ուշադրության կենտրոնում: Դեռևս Ռուսաստան մեկնելուց առաջ գրեթե պատանի բանաստեղծը հետևյալ խոսքերով է դիմում հայրենի լեռներին.

*Չարագանտ լեռներ, ձեր զավակը ձեզ թողնում է ահա,
Քայց ոչ մի վայրկյան, ես ոչ մի վայրկյան ձեզ չեմ մոռանա:
Դուք իմ սրտի մեջ կըմնաք հավետ անմոռաց, անմեռ,
Վեհապանձ լեռներ, բնության ձեռքով պսակված լեռներ:*

Թարգմ.՝ Ն. Ջարյան

Ժողովրդի հոգս ու ցավով ապրող գրողը երազում է ծաղկած տեսնել իր հայրենիքը.

*Չովիտ ու լերինք
Ծաղկել եմ պես-պես,
Իսկ դո՛ւ, հայրենիք,
Երբ պիտի ծաղկես...*

Թարգմ.՝ Չովի. Թումանյան

Նույն միտքն է արտահայտում նաև «Էլեգիա» բանաստեղծության մեջ: Պատկերելով հայրենի բնության անկրկնելի համայնապատկերը, որի ամեն մի փոփոխություն նրա մեջ ծնում է նորանոր զգացումներ, խոհեր ու երազներ, ճավճավածեն արտահայտում է իր մեծագույն իղձը՝ հայրենի երկիրն արթնացած տեսնել դարավոր նիրհից.

*Լուսինն աղոտ լույս է փռում
Իմ աշխարհին մայրենի,
Կուլ է գնում կապույտ հեռվում
Ճերմակ շարքը լեռների:
Ձայն չի գալիս ոչ մի կողմից,
Վրաստանը՝ մութն ու լուռ.
Վրացին է հաղթված քնից
Տնքում տանջված ու տխուր:
Մենակ եմ ես: Քնած է նա,
Քնած շուրջս ու հեռու...
Ա՛խ, Աստված իմ, քնած, քնած,
Ե՛րբ է արդյոք զարթնելու...*

Թարգմ.՝ Չովի. Թումանյան

Իլիա ճավճավածեն զգում էր, որ անցյալի փառքը երգելով՝ երկրի վերքերը չեն բուժվի: Ահա թե ինչու հայացքը հառում է գալիքին.

*Էլ չարժե սգալ այն, ինչ որ թաղվել
Եվ ժամանակին զոհ է գնացել՝*

*Մոռանանք մենք էլ վիշտն անցյալի...
Այս նոր պայծառ աստղին հետևենք.
Մենք պիտ ապագան կերտենք պանծալի
Եվ ժողովրդին նոր կյանք պարզենք....*

Թարգմ.՝ Դովհ. Կարայան

Իսկ «Մայր և որդի» դրամատիկական պոեմում նկարագրում է ապագայի համաժողովրդական շարժումը և հայտնում, որ կեղեքվողին ու կապանքների մեջ տառապողին «միայն հրացանն ազատություն կբերի»:

Մոր հոգում երկընտրանք է. որդուն զոհաբերի՞ հայրենիքին, թե՞ հետ պահի պատերազմից և չվտանգի նրա կյանքը: Ներքին ոգորումից հետո նա վճռում է նվիրաբերել: Տղան, իր հերթին, դա համարում է պարտականություն, որովհետև ամբողջ Վրաստանն է ոտքի կանգնել. ծանր լուծը թոթափելու, շղթաները փշրելու և ազատություն ձեռք բերելու ժամանակն է, իսկ առանց զոհի ազատություն չի կարող լինել: Մայրը համոզված է, որ նա արժանի զինվոր կդառնա, իսկ եթե զոհվի, ապա մեծ վշտի հետ կապրի նաև հպարտության զգացում, քանզի որդին իր մահով հաղթանակ և ազատություն կբերի ժողովրդին:

Հայրենիքի ազատության համար մարտնչող գաղափարը ավելի ուժգին է հնչում «Վրացի մայրը» պոեմում: Այստեղ երկընտրանք չկա. մահամերձ մայրը որդուց բացի ոչ ոք չունի, որ իր մահից հետո գոնե աչքերը գոցի, գերեզման իջեցնի, մի բուռ հող շաղ տա վրան, բայց առանց տատանվելու ասում է.

*Ահա հայրենիք, այս պահի համար եմ
պահել մեծացրել որդուս,
Կյանք տուր նրան, որ կարողանա այն
նվիրաբերել քեզ:*

Տողացի թարգմ.

Մայրը մինչև անգամ ցավում է, որ ընդամենը մի զավակ ունի հայրենիքի պաշտպանների շարքում:

Երկի անցքերը վերցնելով վաղ անցյալից՝ ճավճավածեն դրանց տվել է «Պատկերներ ապագա կյանքից» խորագիրը՝ ցանկանալով հուշել վրացի ներկա և ապագա մայրերին, որ նրանք իրենց զավակներին ներարկեն սեր ու հավատարմություն հայրենիքի ու ժողովրդի հանդեպ:

Գրողը նկարագրել է ժամանակի իրավակարգը, իշխողների ու

ճորտերի հակամարտությունը: Այս կարգի երկերից են՝ «Տեսիլքը», «Մի քանի պատկեր կամ էպիզոդ ավազակի կյանքից», «Մուրացկանի պատմածը» և այլն: Դրանք վկայում են, որ նա խորապես ուսումնասիրել է կյանքի հակասություններն ու հեղաբեկումները: Անդրադարձել է նաև հանրության և անհատի փոխհարաբերությանը: Խորապես ընկալելով դարաշրջանի սոցիալական շարժման պատճառները՝ նա նշում է, որ հասարակության զարգացման շարժիչ ուժը, նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծողը ժողովուրդն է, ուստի հենց նրա կյանքը պետք է դառնա ստեղծագործողների ուսումնասիրության հիմնական օբյեկտը: Ընդունելով, որ պատմությունը ներկայացնում է հանուր կյանքի զարգացման ընթացքը, ճավճավաձեն հակադրվեց այն մտայնությանը, թե պատմությունը կերտել են արքաներն ու առանձին անհատներ: Ճշմարիտ պատմությունը ժողովրդի պատմությունն է: Երբ սկսում է գրել «Տեսիլք»-ը, ծառանում են դժվարություններ. վրաց պատմագրության մեջ ժողովրդի մասին ոչինչ չգտնելով՝ նույնիսկ մտածում է չշարունակել: Դրամատուրգ Դավիթ Էրիսթավիին գրում է. «Էս «Տեսիլքը» հոգիս հանեց: Պատմական մասի վրա են աշխատում, բայց ոչ մի քայլ առաջ չեն գնացել, չգիտեմ՝ ինչ անեն: Երբեմն մտածում են ձեռ քաշել: Մեր էս օրհնած պատմությունը միայն պատերազմների ու արքաների պատմություն է, ժողովուրդը ոչ մի տեղ չի երևում: Գործ անողը ժողովուրդն է, մինչդեռ մեր պատմության մեջ նրան տեղ չի հատկացված»¹:

Նույն առիթով մեկ այլ անգամ գրում է. «Քարթլիս ցխովրեբան» ժողովրդի պատմությունն չէ, թագավորների պատմությունն է, իսկ ժողովուրդը, որպես պատմական գործող անձ, մնացել է ստվերում. կարծես ժողովրդի պատմությունն իմանալու համար բավական է, որ մարդ թագավորների պատմությունն իմանա»²:

Ճիշտ ըմբռնելով ժողովրդի դերը պատմության մեջ՝ ճավճավաձեն հենց այդ դիրքերից էլ գնահատում է նրան: «Տեսիլք»-ում լավագույնս արտահայտված են գրողի խոհերը վրաց ժողովրդի մասին:

Պոեմն սկսվում է բնության տեսարանների նկարագրությամբ: Մեծ տեղ հատկացնելով բնությանը՝ ճավճավաձեն երբեք չի մոռանում մարդուն: Ահա Մդինվար (Կազբեկ) սարի գագաթին հպարտ կանգնած է մի ծերունի, որ մարմնավորում է վրաց աշխարհը: Ծերունու և բանաստեղծի միջև տեղի է ունենում երկխոսություն՝ երկրի անցյալի, ներկայի ու ապագայի մասին:

¹ Ի. ճավճավաձե, Երկեր, հ. 10, Թբիլիսի, 1961, էջ 34 (վրաց.):

² Ի. ճավճավաձե, Երկեր, հ. 4, Թբիլիսի, 1955, էջ 175 (վրաց.):

Ծերունին հիշեցնում է, որ անցյալում վրացիներն անձնուրաց ծառայում էին հայրենիքին, անհրաժեշտության դեպքում զոհաբերում կյանքը: Այժմ ո՛չ մեծի, ո՛չ փոքրի սիրտը չի ցավում նրա համար. մոռացել են, որ այս երկնքի տակ հայրենիքը տրված է որպես սրբություն սրբոց, և յուրաքանչյուր ոք պարտավոր է անմնացորդ ծառայել նրան: Ծերունին հերոս է փնտրում, բայց այդպիսին չկա. մարտադաշտն ամայի է: Վրաստանի երբեմնի փառքի ու հզորության վկաները՝ Թիֆլիսն ու Մցխեթը, խեղճ ու անզոր տեսք ունեն: Վրացիները սուկ իրենց անձի համար են մտածում. դարձել են նախանձ, չարական: Ծերունին անդրադառնում է նաև հասարակական երևույթներին ու ճորտատերերի անմարդկային արարքներին: Տերը գեփում-գջլում է ճորտի քրտինքի արդյունքը և անպատիժ վայելում, մինչդեռ ճորտը մտածում է. «Ո՛վ աշխատի, ո՛վ վայելի: Ո՞ւր է, Աստված, քո արդարությունը»:

Ավելի անտանելի է բարոյական ճնշումը: Ճորտի հետ վարվում են ինչպես ծախու առարկայի. խլում են զավակներին, նվիրում կամ վաճառում, բռնաբարում են կնոջն ու դստերը, և չկա մեկը, որ բռնի անօրենի ձեռքը: Այդ կացությունից դուրս գալու ուղին բանաստեղծը համարում է աշխատանքի ազատագրումը: Պետք է պայքարել ազատ աշխատանքի համար. կյանքը կընթանա իր հունով, և աշխարհը կժաղկի ու կզարգանա:

Ճավճավածեն կարծում է, որ ժողովրդի բարեկեցության հիմքն աշխատանքն է, և որպեսզի «աշխարհում ազատ աշխատանքի թագավորություն ստեղծվի», անհրաժեշտ է ամեն կերպ արագացնել ավատատիրության անկումը: Միայն դրանից հետո մշակի հառաչանքը կփոխարկվի ուրախ բացականչության, տառապանքը՝ հաճույքի: Նա կտքնի իր համար, կհոգա իր կարիքները: Աշխատանքի ազատության հարցն էլ ինքը պիտի վճռի իր ուժերով, որովհետև տիրոջ կրծքում սրտի փոխարեն քար է, և բնական է, որ իր կամքով նա չի զիջի: Յեղիմակը համոզված է, որ ազատ աշխատանքի պայմաններում «գայլն ու գառը կհաշտվեն»:

Ճորտերի ծանր կյանքի մասին է «Մի քանի պատկեր կամ էպիզոդ ավազակի կյանքից» (1860) երկը: Ազնիվ, աշխատասեր գեղջուկը պայմանների թելադրանքով լքում է ընտանիքը, փախչում անտառ: Կակոն, Ջաքրոն և մյուսները, ֆեոդալների ու թավադների անսանձ ապօրինությունների զոհերն են: Նրանք «անօթևան են, քաղցած ու մերկ: Չալածյալ գազանի նման թափառում են անտառում, քնում են ականջները շշուկի, զենքերը՝ ձեռքներին»: Ու թեև անասելի ծանր է ավազակի կյանքը, բայց «ամեն ինչ հեշտանում է նրանով, որ մենք ենք մեր գլխի տերը»:

Ձաքրոն փնտրում է ավազակ Կակոյին և պատմում գլխին եկած դժբախտության մասին: Նրա խոսքերից զգացվում է նաև, թե ժողովուրդը ինչքան է սիրում այն հերոսներին, ովքեր ըմբոստանում են մարդկային արժանիքները ոտնահարողների դեմ և զենքով պաշտպանում թե՛ իրենց, թե՛ իրենց նման հազարավորների բռնադատված իրավունքները: Ահա այդպիսի ըմբոստ է նաև Կակոն, որի մասին Ձաքրոն ասում է.

*-Քո մասին են ամենքը խոսում,
Ով լեզու ունի գովքդ է անում.
Չամբավը քո մեծ ու գործդ անմար
Չեքիաթ կդառնան մեր թոռանց համար:*

Թարգմ.՝ Չարություն Թումանյան

Սոցիալական չարիքին, անարդարությանն ու հողի աշխատավորի կացությանը ճավճավածեն անդրադարձել է «Մաճկալը» երկում ևս: Դա մաճկալի ու Լաբա եզի գրույց է. Լաբան թող չնախանձի, որ ինքն ի վիճակի չէ մարդու նման խոսելու, բարձրաձայն արտահայտելու իր խոհերն ու ապրումները: Մարդու հոգում խոհեր ու խոսքեր են ծնվում, ցանկանում է աղաղակել անիրավությունների մասին, բայց այդ ամենը դաժանորեն մեռցնում են նրա սրտում, զրկում խոսելու իրավունքից, ահա ինչու մարդու լուծը եզի լծից ավելի ծանր է.

*Դու չես հասկանա տանջանքն ասունի,
Երբ ազատ խոսքի իրավունք չունի...
Օ՛հ, այդ միջոցին իմ լուծը, եզ ջան,
Շատ ծանր է քոնից, շատ ծանր ու դաժան:*

Ճորտատիրությունը մերկացվում է «Մուրացկանի պատմածը» պատմվածքում:

Այն սկսվում է խորհրդանշական, բայց սրտաճմլիկ տեսարանի նկարագրությամբ. մի բարակ հալածում է եղնիկին: Սլանում է կենդանին. ոտքերը չեն դավաճանում, և կարողանում է ազատվել որսաշան հետապնդումից: Շան ժանիքներից փրկվելով՝ հանդիպում է որսորդին: Մահվան դատապարտվածը վախվորած ու թախծոտ հայացքը հառում է դահճին՝ հուսալով գուրջ շարժել, բայց դաժան է մարդը: Լսվում է որոտ, և գեղեցիկ կենդանին տապալվում է գնդակախորով:

Գրեթե նույն բախտն է բաժին ընկել պատմվածքի հերոսին՝ Գաբրիելին, ում հեղինակը հանդիպում է ողորմելի վիճակում: Նա գրողին

պատմում է իր խորտակված կյանքի մասին: Նրան դժբախտացրել է տիրոջ որդին՝ Դաթիկոն, որը «եթե մեկի վրա աչք դներ, նպատակին հասնելու համար ոչ մի բանի առաջ կանգ չէր առնի. ամենքին ու ամեն ինչ կամուրջ կդարձներ ու կանցներ առաթուր»: Կրքից կուրացած Դաթիկոն առանց խղճի խայթի Գաբրիելից խլում է նրա սիրած էակին՝ Թամրոյին, իսկ տղային ու աղջկա հորը աքսորել տալիս: Բարոյագուրկ, տափամուլ, քարսիրտ երիտասարդ է նա, կատարյալ պատուհաս շատ ու շատ ընտանիքների համար. լլկում է կանանց ու աղջիկներին՝ նախապես սպանելով նրանց հավանական պաշտպաններին, ոտնակոխ անում համագյուղացիների, բարեկամների, մտերիմների ու ընկերների արժանապատվությունը: Նա չի խնայում անգամ Գաբրիելին, որ մանկության ընկերն էր ու հավատարիմ ծառան:

Գաբրիելի նման տասնյակ երիտասարդներ դառնում են ավազակներ ու մարդասպաններ: Մեղավորը ճորտատիրությունն է: Ահա մահամերձ Գաբրիելի խոսքը. «Ես՝ հիմարս, ի՞նչ իմանայի, որ սերը բարձր ու ստորին խավերի միջև սին երազ է: Ի՞նչ իմանայի, որ տիրոջ ու ծառայի միջև անկարելի է սիրո կամուրջ զգել»:

Քննադատության սլաքն ուղղելով իրավակարգի դեմ՝ գրողն առանձնակի սիրով ու ջերմությամբ է նկարագրում Գաբրիելի ու Թամրոյի, Գաբրիելի ու Պեպիայի, Պեպիայի ու Թամրոյի անկեղծ ու անկաշառ հարաբերությունները:

Չետաքրքրությունն են ներկայացնում նաև այն հատվածները, որտեղ խոսվում է գրականության, կրթության, լուսավորության դերի մասին: Չատկանշական է, որ հերոսները հաղորդակցվում են ընտիր վրացերենով:

* * *

Եթե «Մուրացկանի պատմածը» պատմվածքում ճավճաված են քննադատում է տիրող կարգերը, բացահայտում իշխողների էությունը՝ ճորտերի հետ հարաբերության մեջ, ապա «Մա՞րդ է արդյոք» երգիծական երկում երևան է հանում նույն իշխող դասի կյանքը՝ «հետաքրքրությունների ծավալով ու առտնին հոգսերով»:

Լուարսաբ Թաթարիձեն ճարպակալած թավադ է, նրա գերագույն նպատակը ստամոքսի պահանջների բավարարումն է: Առավոտյան, կեսօրին թե երեկոյան՝ ամեն անգամ հագեցնալուց հետո, նա ու կինը՝ Դարեջանը, մտահոգվում են, թե հաջորդ անգամ ինչ են ուտելու: «Էս էլ ընթրիքը, Աստժու ողորությամբ կերանք, կշտացանք: Յիմի էլ մտածենք էգուցվա մասին: Ախր, էգուց էլ պիտի ուտենք, չէ՞: Յեր

օրհնած Աստվածը մենակ էր և գրել մարդու ճակատին: Հա՛, էգո՛ւց ինչ ենք ուտելու...»:

Սնահավատ ու տգետ՝ նրանք քամահրանքով են վերաբերվում նաև ուսմանն ու կրթությանը, «էս սատանայական դպրոցներն ինչ բաց են արել, վրացի մարդու խերը գնացել և: Երեխանց երեսին գույն չի մնացել, ախպեր: Է՛, ես որ չգիտեմ՝ գիրն ինչ բան և, մարդ չե՞մ, գլխիս գդակ չե՞մ ծածկում, մի՞սս և պակաս, թե՞ ռանգս տեղը չի: Ուսումը տղամարդո՞ւ բան և, էդ հո կնկա գործ և», - ինքնագոհ փիլիսոփայում է իշխանը:

Այս «իմաստուն այրը» հնի մոլեռանդ պաշտպան է. թշնամի է ամեն նորի ու առաջադեմի: Երբ իմանում է ճորտատիրության վերացման լուրը, ջանք չի խնայում համոզելու ճորտերին ու ծառաներին, թե իբր այն տրված է վերուստ՝ Աստծու կողմից, և հավերժ լինելու է, այնպես որ ո՛չ կվերացվի, ո՛չ էլ կփոխվի:

Թվում է՝ Դարեջանն ամուսնուց խելացի է, շարժունակ, բայց խելացի է այնքանով, որ շատախոս է, և շարժունակ է այնքան, որ չի ալարում տեղից վեր կենալ ու աղախինների վրա ձեռք բարձրացնել: Ինքն էլ չիմանալով՝ ինչու, նրանց ծեծում է, անիծում, պատժում ու պարծեցնում ամուսնու մոտ: Լուարսաբը խրախուսում և հավանություն է տալիս տան գործերը վարելու նրա «մեթոդին»: Հետևելով կնոջը՝ ինքն էլ, եթե չի ալարում ոտքի կանգնել, մտրակում է ծառաներին այն հաստատ համոզմամբ, որ դրանով օգուտ է բերում տնտեսությանը: Նա հարուստ է, բայց տգետ և ապրում է իր մայրամուտը. նրանք ծառանգ չեն ունենում, և սա հեղինակի դատավճիռն է:

Երկի սկզբում ճավճավածեն գրում է, որ «հասարակական մի ախտի» մասին է պատմում ինքը, այն ներկայացնում է հանրությանը, որ նա կարդա, մտորի և հանգի համապատասխան եզրակացության, քանզի «Լուարսաբն ու Դարեջանը քո արգանդից են ծնվել, քո ստինքներով են սնվել, քո գրկում մեծացել»: Գրողը ձաղկում է ճորտատերերի ծուլությունը, ապաշնորհությունը, ապրելակերպը, սին կյանքը, որ զեխությունից զատ այլ հետաքրքրություն չունեն:

* * *

Ճորտատիրության վերացումից հետո ճավճավածեն ուսումնասիրում է գյուղացիների ու ազնվականների, ճորտերի ու ճորտատերերի հարաբերությունները, ձգտում պարզել, թե մեկուկես տասնամյակ անց ի՞նչ փոփոխություններ են կատարվել մարդկանց հոգեբանության մեջ: Եվ ահա 1877 թ. լույս աշխարհ է գալիս «Օթարանց այրին» վիպակը, որ

աչքի է ընկնում կենսական երևույթների համակողմանի վերլուծումով:

Հերոսները՝ Արչիլը և Կեսոն (քույր ու եղբայր), և Օթարանց այրին ու Գեորգին (մայր ու որդի) տարբերվում են ոչ միայն սոցիալական դրությամբ, այլև հոգեբանությամբ ու մտածելակերպով:

Քարեհոգի կին է Օթարանց այրին: Նրա խոսքի ու գործի մեջ խզում չկա: Օրնիրուն աշխատում է արտում, այգում, դաշտում ու հանդում. վարում է, ցանում, հնձում ու կալսում. մթերքը վաճառում, վերածում դրամի: Առատորեն բաժին է հանում կարիքավորներին, տնանկներին, հիվանդներին, և այդ ամենը՝ առանց ցուցադրելու, առանց նախատելու:

Քսանչորս տարեկանում կորցնելով ամուսնուն՝ բարեխղճորեն կատարում է նրա պատգամը: Միայնակ ու անօգնական՝ կարողանում է բազմապատկել ունեցվածքը: Շատերն են խնդրում ձեռքը, բայց մերժում է, ամբողջովին նվիրվում տնտեսությանն ու որդու դաստիարակությանը: Գեորգին քսան-քսաներկու տարեկան է՝ ամրակազմ ու գեղեցիկ, հմուտ՝ աշխատանքներում: Մայրը հպարտանում է նրանով, սիրում է, բայց քաղցր խոսք անգամ չի ասում, չի փառաբանում:

Գեորգին մոր բնավորությունն ունի. շիտակ է, ազնիվ, ճշմարտասեր, կեղծիք ու անօրինականություն չհանդուրժող, թույլերի պաշտպան: Պատժում է բոլոր նրանց, ովքեր բարեխիղճ չեն, դաժան են, չար, նախանձ, և կարևոր չէ՝ ուն կամ ինչի նկատմամբ: Օրինակ՝ մի ծառայի ծեծում է այն բանի համար, որ նա քրտնած եզներին թողնում է կիզիչ արևի տակ՝ սայլին լծած, իսկ ինքը հանգիստ առնում ստվերում:

Գեորգին դառնում է ինքնամիտի, լռակյաց: Ջգայուն մայրը նկատում է որդու մեջ կատարված փոփոխությունը, բայց հարցուփորձ չի անում: Օրեր անց միայն տղան հայտնում է, որ ուզում է աշխատանքի անցնել թավադ Արչիլի մոտ: Վերջինս բարձրագույն կրթություն ստանալուց հետո քրոջ՝ Կեսոյի հետ վերադարձել էր գյուղ: Գեորգին վարձու աշխատանքի է գնում, որովհետև սիրում է Կեսոյին և ուզում է մոտ լինել աղջկան: Բայց այդ մասին նա խոսում է դժբախտ պատահարից հետո միայն (աշխատանքի պահին խոտի դեզից վայր է ընկնում, ողնաշարը կտրում, ինչն էլ մահվան պատճառ է դառնում): Մայրը չի առարկում, նաև չի զարմանում, թե ամեն ինչով ապահով տղան ինչո՞ւ է վարձու աշխատանքի գնում. «Թող ապրի, ինչպես ինքն է ուզում, արգելք չեմ դառնա», - մտածում է նա:

Քույր ու եղբայր հարգում են տղային, հետևում նրա հոգևոր կյանքին, զուգահեռ անցկացնում «գյուղական խմորից գյուղական վառարանում թրծված» Գեորգիի և նրան հասակակից ազնվականների միջև:

Կեսոն կիրթ աղջիկ է, բայց չի ուզում նկատել Գեորգիի սերը, որովհետև վերջինս գեղջուկ է: Նույնն է և Արչիլը. թեև սիրում է գյուղը, շփվում գյուղացիների հետ, խոստովանում, որ շատ բան է սովորում նրանցից, բայց միշտ վերևից է նայում: Երբ Գեորգին վախճանվում է, քույր ու եղբայր փառահեղ թաղում են կազմակերպում, նույնիսկ հոգեհացն իրենց տանն են տալիս, այդուհանդերձ ժողովրդի մեջ դժգոհության ձայներ են լսվում: Կեսոն վրդովված դիմում է եղբորը, թե ինչու իրենց բարությունը չի գնահատվում: Արչիլը պատասխանում է. «Նրանք մեր արած բարությանը չեն հավատում. կասկածում են՝ ի՞նչ նպատակով, ինչո՞ւ, ի՞նչ ենք հետապնդում մեր արած բարիքով: Մենք անհաղորդ ենք նրանց ուրախությանն ու վշտին... Մեր սրտերը չեն կարող մոտենալ, մտերմանալ, և զարմանալի չէ, որ մենք իրար չենք հասկանում»:

Այս խոսքերը բացահայտում են երկու խավերի միջև գոյություն ունեցող անդունդը: Հեղինակն ընդգծում է հատկապես գյուղացիության հզորությունն ու կենսունակությունը: Արչիլը, որ տվյալ պարագայում հեղինակի խոսափողն է, ահա թե ինչ է ասում այդ մասին. «Նրանց երակներում եռում է արյունը. նրանց երակներից է լսվում նաև կյանքի հևքը... Նրանց նման (այսինքն՝ Գեորգիի և Օթարանց այրու՝ Հ. Բ.) հաց միայն իրենց թոնիրներում է թխվում, իսկ մեր թոնիրներից մեզ նման կուտ գնացած հացեր են դուրս գալիս»:

Ճավճավաձեն տեսնում էր, որ ռեֆորմից հետո ազնվականության ու գյուղացիության միջև կամուրջը կոտրվել է: Փլվել է նաև այդ խավերին միացնող հոգեկան կամուրջը: Իսկ դա կարող է երկրի կործանման պատճառ դառնալ: Ահա թե ինչու Արչիլի բերանով նա կոչ է անում վերականգնել «կոտրված կամուրջները», դնել ամուր հիմքերի վրա, որ տարբեր դասերի, կոչման ու դիրքի մարդիկ հնարավորություն ունենան մերձենալու: Հեղինակը հակադրվում է լուսավորիչներին, որոնց կարծիքով լուսավորությունն է միակ ուժը, որ կվերացնի սոցիալական անարդարությունը, հավասարություն կստեղծի տիրոջ ու ծառայի, իշխանի ու ռամիկի, հարուստի ու աղքատի միջև: Եթե «կամրջի կառուցումը» իրականացվի հասարակական հարաբերությունների ամուր հիմքերի վրա, ապա կբացառվեն դասային տարբերություններն ու հակամարտությունները:

Գրողն անդրադարձել է նաև անհատի խնդրին և արձանագրել, որ միջավայրի ազդեցությամբ և սոցիալական անարդարության պատճառով բարի անձը կարող է հանցագործ դառնալ: Այդ մասին է «Կախաղանի վրա» (1879) պատմվածքը:

«Ճգնավորը» առանձնահատուկ տեղ է գրավում վրաց գրականության պատմության մեջ:

Պոեմն սկսվում է Կազբեկի լանջին արծվաբնի պես թառած մեմանոցի և գեղատեսիլ շրջակայքի նկարագրությամբ: Այնտեղ դարեր շարունակ կուսակրոններ են բնակվել: Ահա մի ճգնավոր`

*Ապավինելով հանդերձյալ կյանքին,
Նա հրաժեշտ էր տվել աշխարհքին,
Այն պիղծ աշխարհքին, ուր արդարն անգամ
Ջերծ չէ փորձանքից սատանայական,
Ուր գողի նման զգաստ ու արթուն
Չանցանքն է հավետ հետևում մարդուն:*

Ճգնավորը, փախչելով դառն իրականությունից, մտնում է մեմաստան, զօր ու գիշեր աղոթում` ձգտելով հոգու սրբագործման: Սովորական մի օր սարի գլխին ամպեր են կուտակվում, և սկսվում է փոթորիկ: Տեղատարափի պահին ձայներ են լսվում. սկզբում կարծում է` չար ոգիներն են աղմկում, բայց դուրս գալով անձավից` համոզվում է, որ մեկը փրկություն է խնդրում: Անժանոթին օգնում է բարձրանալ և առաջնորդում է խուց: Տեսնելով աղջիկ է` այլայլվում է. մի՞թե փորձություն է, մի՞թե ճակատագիրը չարք է ուղարկել` խաթարելու իր հանգիստը:

Երբ կրակ է վառում, խուցը լուսավորվում է, և նա տեսնում է, որ իր առջև նստածը չնաշխարհիկ էակ է:

*Նրա այտերի շիկնանքի շողից,
Նրա կուսական կրծքի մեղմ դողից,
Նրա աչքերից, ուր այգն էր վառվել,
Այդ ո՞վ կարող էր չխելագարվել:
Շուրթերին մայիր, տարփանքը ասես
Դրել էր այնտեղ իր համբույրը հեզ,
Գեղեցկությունը այդ կախարդական
Անուժ կդարձներ զազանին անգամ:*

Ճգնավորը ջանում է անտարբեր լինել հովվուհու նկատմամբ, բայց գեղուհու ներկայությունն արդեն իսկ արթնացրել էր նրա մարդկային էությունը, նոր աշխարհ բացել նրա առաջ, սին կյանքը լցրել վայելքի զգացումով: Կրքին հազուրդ տալու ցանկությունը խռովում է հոգին, մարմինը կենսաբույր օրիորդին է մղվում, սակայն նա պայքա-

րում է սրտի ելևէջումների դեմ, պայքարում երկու հակոտնյա զգացմունքների՝ սիրո և պարտականության դեմ: Պայքարն անողոք է, և թվում է՝ կհաղթի աշխարհիկը, բնականը, բայց նա մեկ անգամ ևս կարողանում է սանձել գեղեցկուհուն վայելելու գայթակղությունը.

*Ո՛չ, ո՛չ... նա երբեք չի դավաճանի,
Իր սուրբ հավատը նա չի սպանի,
Ինչին ձգտել է, կձգտի դարձյալ,
Կձգտի դեպի Աստվածը բարձրյալ,
Որ շալլորեն ստացավ վերից,
Չի զրկվի երբեք այն շնորհներից,
Եվ հոգին ամբիժ, սրբված աղոթքով
Չի փոխարինի մարմնական մեղքով:*

Տվայտանքներից ազատվելու ցանկությամբ՝ պատրանքի ցանցում խճճված ճգնավորը ծնկի է գալիս Տիրամոր նկարի առաջ և փրկության աղոթք մրմնջում, բայց նկարից նրան է հառված հովվուհու հրացայտ հայացքը: Ցանկանում է խաչ հանել դեմքին, ձեռքը չի հնազանդվում, ուզում է աղոթել, լեզուն կապ է ընկնում:

*Սուրբ պատկերին է նայում նա դարձյալ,
Սակայն այն կույսի դեմքն է անհժյալ...*

Պոենի առանցքային հարցերն ամփոփված են ճգնավորի և հովվուհու երկխոսությունում: Մարդը ասում է, բանական, նրա տեղը հանրության մեջ է, այնտեղ պետք է գործել ու ոգորել: Այսպես է մտածում հովվուհին: Կյանքում նա տեսնում է լույս ու խիճն, սեր ու վայելք, գեղեցկություն ու ջերմություն.

*Ես ինքս իմ մեջ միշտ խորհում էի՝
Դրանից հոգին ի՞նչ պիտի շահի,
Աստված չի՞ ուզում, որ իր ստեղծած
Աշխարհում ապրի ամեն արարած:
Ինչի՞ համար է նա հողն ստեղծել,
Կյանքով զարդարել, վայելքով լցրել,
Թե մենք աշխարհից պիտի հեռանանք,
Կյանքը անհիժենք, մեմակյաց դառնանք,
Թողնենք առհավետ խնդություն ու երգ,
Թողնենք երկրային ամեն մի վայելք:*

Սակայն ճգնավորը ապականվածությունն ու սրբապղծությունն է տեսել միշտ, դրա համար էլ անկենդան խուցը գերադասում է եռուն կյանքից, սև սքեմն ու քուրծը՝ աշխարհիկ հագուստից: Նման վիճակը, սակայն, հարատևել չի կարող. ակտիվ կյանքից խուսափողը կործանման է դատապարտված: Պոեմը վերջանում է ճգնավորի մահով և խուց-գերեզմանի ավերումով.

*Ուր որ երգել են սրբերը մի օր,
Աստծուն ծոնել գուլքեր փառավոր,
Վեր հղել անվերջ աղոթքներն իրենց
Ու պատարագ են մատուցել անեղծ,
Այնտեղ՝ ավերված պատերի միջում
Չհմա քամին է միայն մռնչում...*

Թարգմ.՝ Վահագն Դավթյան

Վարպետությամբ է պատկերված լեռնաշխարհի բնությունը, որի ռեալիստական նկարագիրն օրգանապես կապվում է երկի սյուժեին: Բնությունը տրված է մարդու հույզերի, զգացմունքների, ապրումների ու մտորումների, նրա ողջ էության հետ սերտ առնչության մեջ:

Ճավճավածեի գրական ժառանգության մեջ նկատելի են ման երգիծական երկերը («Ձայն գերեզմանից», «Ինչ արեցինք»), որոնցում խստորեն քննադատվում են հասարակական խոտելի երևույթներն ու ախտերը, իշխաններն ու իշխանավորները, այն մտավորականները, ովքեր անտեսում են ժողովրդին ու նրա ծովածավալ հոգսերը:

Իլիա ճավճավածեն դարձավ իր ժողովրդի երազանքների ու մաքառումների լավագույն երգիչը:

ՃԱՎՃԱՎԱԾԵՆ ԵՎ ՉԱՅ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի առիթով անդրադառնալով հայ և վրաց ժողովուրդների պատմական համագործակցությանը՝ Իլիա ճավճավածեն գրել է. «Մենք լավ գիտենք, որ վաղեմի Վրաստանն սկսեց թուլանալ այն դժբախտ օրից, երբ Չայաստանը՝ մեր երբեմնի պատվարը հարավից, անկում ապրեց: ...Չայաստանի անկախ գոյությունը գրավականն է Վրաստանի նույնպիսի գոյության»:

Իբրև «Իվերիա» թերթի հրատարակիչ և խմբագիր՝ ճավճավածեն թարգմանաբար տպագրել է հայ գրողների ստեղծագործություններից, հողվածներ, գրախոսություններ ու մահախոսականներ է նվիրել նրանց

կյանքին ու գործունեությանը: Կարելի է վկայել Րաֆֆու, Գ. Արծրունու և Գ. Սունդուկյանի գնահատականները: Ահա Րաֆֆու մահվան առթիվ գրած խոսքը. «Անցյալ օրը մեզ ապացուցեց, որ քեզ նման մարդը մահով չի մեռնում, ընդհակառակը, դու հաղթեցիր անհաղթ մահին, դու ինքդ մեռցիր մահը, որովհետև քո գործունեությունն անձեռակերտ հիշատակ թողեց ամեն մի ազնիվ հայի սրտում, և այդ սրտում քո անունը երկար կապրի, ինչպես մարգարիտը ծովում»:

Գրողը հանդես է եկել Թիֆլիսի հայ աշխատավորության իրավունքների պաշտպանի դերում ևս: Այսպես, 1887 թ. ապրիլին իր թերթի առաջնորդողով և այլ հողվածներով բողոքարկել է քաղաքային վարչության որոշումը, համաձայն որի Յավլաբարի հայերի հողերը վարձակալվում, տրվում էին վաճառականներին: Դրանով վարչությունը ծանր հարված էր հասցնում 56 հայ ծխի կենսական շահերին: Ճավճավաձեն բացահայտում է վարչության որոշման տմարդի բնույթը, մերկացնում կաշռված պաշտոնյաների ապօրինի գործողությունները:

Իլիա ճավճավաձեի գրչին են պատկանում 1895 թ. նոյեմբերի 19-ին և դեկտեմբերի 19-ին դարձյալ «Իվերիայում» տպագրված երկու հոդված ևս, որոնցում խստորեն պախարակում է բռնապետական Թուրքիայի հայակործան քաղաքականությունը և բողոքի ձայն բարձրացնում ի պաշտպանություն յաթաղանի զոհ ժողովրդի:

Նա բազմակողմանի դրսևորումներով լուսաբանել է նաև հայոց կյանքը, մտերմական կապերի մեջ է եղել վրացացած հայազգի մտավորականների հետ:

Իր հերթին, հայկական մամուլը և հասարակական միտքը, սկսած XIX դարի 90-ական թվականների սկզբից, ուշադիր հետևել և լուսաբանել է վրաց գրողի կյանքի ու գործունեության գրեթե բոլոր դրվագները, թարգմանել նրա գեղարվեստական ու հրապարակախոսական երկերը, անդրադարձել գրական, հասարակական, քաղաքական և կրթական-լուսավորական գործունեությանը:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Չայ-վրաց գրական կապերի երախտավոր Տիգրան Փիրումյանը (1850-1934) «Մուրճի» 1891 թ. ապրիլյան համարում «Ճավճավաձեի վեպի առիթով» անդրանիկ հողվածում գրում է. «Աչքի առաջ ունենալով այն անհաճո հանգամանքը, որ հայ գրականությունը վրաց համար և վրաց գրականությունը հայոց համար երկու անձանոթ աշխարհներ են, մտադրվեցի ծանոթացնել հայ ընթերցողին վրաց գրականության հետ՝ սկսելով «Մուրճի» սույն համարից տպել հարգելի իշխան Իլիա ճավճավաձեի

ճավաձեի ամենագլխավոր գործը»¹:

Նա համառոտ բնութագրում է ժամանակակից վրաց գրականությունն ու լրագրությունը, «ընթերցողի կողմից ճանաչում գտած որոշ երկեր», խոսում «վիրական քնարի փայլուն ադամանդների»՝ Ա. ճավաձեի, Գ. Օրբելիանիի, Ն. Բարաթաշվիլու, Ռ. Էրիսթավիի, Ա. Ծերեթելու, Ի. ճավճավաձեի մասին, «պատկառելի ու համակրելի քերթողներ, որոնց գողտրիկ ու դյուբիչ ոտանավորները կկարդացվեն դարուց ի դարս»:

Այնուհետև քննադատն անցնում է Իլիա ճավճավաձեի կենսագրությանը, գրական առաջին քայլերին ու գեղարվեստական այն երկերին, որոնք «երբեք չեն հնանա և հափշտակությամբ կկարդացվեն բոլոր խավերից հավասարապես»: Դա «Մա՞րդ է արդյոք» վիպակն է, «լուսանկարչական մի գորեղ պատկեր, որ ընթերցողին զարհուրեցնում է հին պորտաբույծ կավածատերի հոգեկան անկունը՝ յուր ահռելի մերկությամբ»: «Մուրացկանի պատմածն» է, որտեղ նա ներկայացնում է ճորտական դրությունից թշվառացած մի ճորտի»: «Օթարանց այրին» է, ուր հեղինակն ստեղծել է «վերին աստիճանի համակրելի անձնավորություններով լցված մի փոքրիկ, վարդագույն աշխարհ»:

«Մա՞րդ է արդյոք» վիպակի թարգմանության արձագանքը գտնում ենք նույն ամսագրի 1892 թ. համարներից մեկում: Խմբագրությունը տեղեկացնում է, որ ճավճավաձեի երկը հայ ընթերցողները կարդացել են հրճվանքով, այն «մեծ պատիվ է բերում թե՛ հեղինակի տաղանդին և թե՛ վրաց գրականությանն առհասարակ»²:

Հիշյալ թարգմանությունը լույս է տեսնում առանձին գրքով: «Մշակը» արձագանքում է «օգտակար երևույթին», թեև քննադատում է Փիրունյանին՝ վիպակի անբավարար թարգմանության համար: Դավիթ Տեր-Դավթյանը, ի մի բերելով «Մուրճում» և «Տարագում» տպագրված վրաց հեղինակների երկերը, իրավացիորեն նշում է, որ շատ քիչ են թարգմանված առաջնակարգ գրողներ Ի. ճավճավաձեն, Ա. Ծերեթելին, Ա. Ղազբեգին, Գ. Ծերեթելին, որոնց գործերը հայ ընթերցողի կողմից «սիրով կկարդացվեն»:

Դ. Տեր-Դավթյանը խորապես ընկալել է ճավճավաձեի վիպակի արժանիքները: Լուարսաբ Թաթարիձեի կերպարը համարելով հավաքական և համոզիչ՝ քննադատը գրում է, որ թաթարիձեների «մտավոր կրթությունը կատարյալ քառս է. պարարտացնում էին իրենց

¹ «Մուրճ», 1891, թիվ 4, էջ 435:

² Նույն տեղում, 1892, թիվ 3, էջ 506:

մարմինը, գլուխը թողնում դատարկ»¹:

«Տարազը» տպագրել է միայն «Էլեգիա»-ն², բայց բազմաթիվ են գրողի կյանքին, գործունեությանն ու երկերի վերլուծությանը նվիրված գրախոսությունները:

1892 թ. Վրաց հրատարակչական ընկերությունը լույս է ընծայում գրողի երկերի ժողովածուն՝ չորս հատորով: Այդ առթիվ Հարություն Միրիմանյանը հանդես է գալիս «Տարազում»՝ լուրջ մոտեցում ցուցաբերելով «Տեսարաններ ճորտերի ազատության առաջին տարիներից» և «Օթարանց այրին» երկերը քննարկելիս: Նա կարողանում է վեր հանել հեղինակի սարկազմը՝ ընդդեմ ֆեոդալների անմարդկային արարքների: Ըստ նրա՝ ճավճավածեն քողազերծել է այն ճորտատերերին, ովքեր «չեն ուզում հրաժարվել իրենց բռնակալական սովորույթներից», բացահայտել է այդ կարգերի բարբարոսական էությունը: Այնուհետև նշվում է, որ ճավճավածեն «բացարձակ կերպով կանգնում է գյուղացիների և ազնվականության հավասարության կողմը և հեզմուն այն անձանց, ովքեր պնդում են, թե գյուղացին՝ նախկին ճորտը, մարդ չէ»³:

Անցնելով երկրորդ երկին՝ Հ. Միրիմանյանը գրում է. «Հեղինակի գլխավոր նպատակն է եղել նկարագրել այն վիճը, որ գոյություն ունի տեսության և այն իրագործելու մեջ»: Հետաքրքիր է, որ քննադատը տեսականի ու գործնականի հակասություն է նկատում ոչ միայն Արչիլի աշխատանքի, այլև Գեորգիի՝ Կեսոյի հանդեպ տածած զգացմունքի մեջ. «Տեսականի ու գործնականի հակառակությունն երևում է երիտասարդ գյուղատնտեսի գործունեության և Գեորգիի սիրային պատմության մեջ: Այն, ինչ քարոզվում է, ցանկալի է հայտարարվում, չի իրականանում. մի դեպքում գյուղատնտեսական թեորիաների խիստ վերացականության, մյուս դեպքում՝ երկու այն ուժեղ նախապաշարունակների պատճառով, որ հասարակության անգամ ամենաազնիվ մասը ծծում է շրջակա մթնոլորտից»⁴:

Ընդհանուր գիծ գտնելով խնդրո առարկա ստեղծագործությունների միջև՝ հողվածագիրը նշում է, որ ճավճավածեն ամենուր պաշտպանում է գյուղացու մարդկային արժանիքները. մարդկայնությունն է բարձր դասում ամեն ինչից: Մարդը մարդ է ոչ միայն հարստությամբ, դիրքով, ծագմամբ կամ ստացած գիտելիքներով, այլև գործունեու-

¹ «Մշակ», 1898, 16 մայիսի:

² Ի. Ճավճավածեի «Գարունը» և «Էլեգիան» թարգմանել է Հովհաննես Թումանյանը («Արոր», 1907 թ., թիվ 7):

³ «Տարազ», 1893, թիվ 27, էջ 430:

⁴ Նույն տեղում, էջ 431:

թյամբ, բոլորին օգնելու պատրաստակամությամբ, ազնվությամբ: Նման բարեբեր մտքեր սերմանելու համար են «սիրում վրացի հեղինակի գրվածքները», և զարմանալի չէ, որ ճավճաված են ժողովրդի պաշտելի հեղինակներից է:

«Մուրճի» 1904 թ. համարներից մեկում քննարկվում է «խոշոր ու սիրելի բանաստեղծի» նորերս լույս տեսած հատորակը: Նշվում է, որ գրողը, տասը տարի առաջ հրատարակելով իր երկերը չորս հատորով, «այլևս գեղարվեստական ոչ մի գործ չի արտադրել... Իշխանը բոլորովին դադարել է գրելուց, չէ գործում նրա դյուքիչ քնարը, լռել է նույնպես հրապարակախոս գրիչը»: Ընտրանու լույսընծայումը «կարող է մատակարարել ժողովրդին անպայման օգտակար մտքեր ու զարթեցնել նրա մեջ համակրելի գաղափարներ: ...Ամբողջ գիրքը ծայրեիծայր ներշնչում է ընթերցողին ամենամարդասեր զգացումներ, պարսավում ատելությունը դեպի մարդիկ»:

Գրախոսը շարադրում է «Վրացու մորը», «Բազալեթի լիճը», «Էլեգիա», «Գարուն», «Մայր և որդի», «Չարք և պատասխան», «Ի՞նչ արեցինք» բանաստեղծությունների ու մի քանի քառյակների բովանդակությունը և շարունակում. «Ահա թե ի՞նչ սքանչելի բարոյական սնունդ էր տալիս իր ընթերցողներին իշխան ճավճավածեն, երբ գործում էր իբրև բանաստեղծ և երբ հասակով էլ ավելի թարմ էր»¹:

Պատմական հանգամանքների բերումով հայ գյուղացիության և բուրժուազիայի զգալի մասը կենտրոնացել էր Թիֆլիսում, Գորիում, Բաթումում: Ոչ միայն Վրաստանի, այլև Անդրկովկասի առևտրական և արդյունաբերական ձեռնարկությունների գերակշիռ մասը հայ կապիտալիստների ձեռքում էր: Նրանք էլ, բնականաբար, վճռորոշ դեր էին խաղում երկրամասի տնտեսական ու քաղաքական կյանքում և խոչընդոտում ոտքի կանգնելու փորձ անող վրաց բուրժուազիային: Այս հողի վրա ծագում է հակամարտություն, որ արձագանք է գտնում նաև մամուլում, կազմակերպություններում, հոսանքներում, և որը տևում է մինչև 1910-ական թթ. վերջը:

Նշված գաղափարական պայքարին ակտիվորեն միջամտում են Ի. ճավճավածեն, Ա. Ծերեթելին, Ի. Գոգեբաշվիլին, Ա. Բաքրաձեն և ուրիշներ, ովքեր հիշյալ հարցերը պարզաբանելիս անաչառ չեղան և ընկան ծայրահեղությունների մեջ: Հենց այս հանգամանքը նկատի ուներ Հովհ. Թումանյանը. «Այո՛, եղել են տխուր միջադեպեր, բայց դրանք կարողացել են միայն պաղեցնել, պղտորել, թունավորել ժամա-

¹ «Մուրճ», 1904, թիվ 8, էջ 65:

նակավորապես էր ժողովուրդների հարաբերությունները, էն էլ միշտ վերին խավերում, և շատ շատ թույնը հասցնել մինչև հրապարակախոսների ու գործիչների լեզուն, բայց էր թույնը հասցնել մինչև հայ և վրաց ժողովուրդների հոգու խորքը – չի հաջողվել երբեք»¹ :

Ճավճավաձեն «Իվերիա» լրագրում տպագրում էր Թովչիբաշև և Վելիչկո գրչակների՝ հայ իրականության դեմ բարբառանքները: Այդ մասին ահա թե ինչ է գրում հասարակական նշանավոր գործիչ Գեորգի Թումանյանը. «Վելիչկոյի հողվածները ջանասիրաբար տպագրվում էին ճավճավաձեի «Իվերիա» թերթում: Վելիչկոն անձամբ շահում էր նման համագործակցությունից, քանզի պրովոկատորից, բանասարկուից և բուլվարային սկանդալիստից տեղական հանրության որոշ մասին նա ներկայանում էր իբրև պատգամախոս: Վելիչկոն շատ չարիք գործեց Կովկասում. հայերի կատաղի հալածանքները, հայ-թաթարական կոտորածները և այլ փաստեր այն կուսակցության ագիտացիայի հետևանքն էին, որի մոլեգին արտահայտիչը մամուլում Վելիչկոն էր»²:

Ճավճավաձեն ինքն էլ հանդես էր գալիս ոչ այնքան անաչառ հողվածներով ու հետազոտություններով: Դրա վկայությունը «Հայ գիտնականները կամ քարերի աղաղակը» աշխատությունն է, որի համար նա քննադատվել է նաև վրացի գիտնականների կողմից:

Պատմաբան, գրականագետ Էքվթիմե Թաղաիշվիլին (1863-1953) հիշում է, որ ինքը հաճախ էր հանդիմանում ճավճավաձեին, որ նա անտեսում էր գիտությանն այնքան անհրաժեշտ կարգ ու կանոնները և հայ ժողովրդի պատմությունը շոշափող հողվածներում հենվում էր Բաքրաձեի սխալ և անհիմն մեղադրանք-հետևությունների վրա: Վերջինս հայ գիտնականներին վերագրում էր ստահող մտքեր, և ինքն էլ հանդես գալիս դրանց «մերկացումով»: Ճավճավաձեն այդպես է վարվում նաև «Քարերի աղաղակը» գրելիս: Թաղաիշվիլու գիտական և մարդկային խիղճը թույլ չի տալիս նախնական վիճակով տպագրել և հեղինակից վերանայելու իրավունք է խնդրում: Նա կարողում է ձեռագիրը և խորհուրդ տալիս ուղղել կամ լիովին հանել մի շարք մտքեր, որոնք վերագրված են հայ գիտնականներին, և որոնք չունեին ու չէին կարող ունենալ նրանք, քանի որ այդ ամենը Բաքրաձեի հնարանքներն են եղել: «Ուղղեց, բայց և այնպես ասաց. «Ես վրացիների համար եմ գրում, ոչ թե գիտնականների: Դե, Իլիան որ այդպես վարվեր,- շարունակում է

¹ Գովի. Թումանյան, Երկեր, հ. 7, Երևան, 1995, էջ 573:

² Գ. Մ. Կուլանով, Характеристики и воспоминания, Թիֆլիս, 1905, գիրք 2, էջ 38-39:

պատմաբանը, - ի՞նչ կարելի էր սպասել ուրիշներից»¹:

Նույն իրողության մասին գրում է նաև Գ. Թումանովը. «...Ես էլ չեմ ասում Ի. Ճավճավաձեի հրապարակախոսական գործունեության այն շրջանի մասին, երբ նա ընկավ Վելիչկոյի ազդեցության տակ և իր նեղմիտ հայրենասիրությունն ուզում էր զինել նաև գիտությամբ: Իմ կարծիքով, դա ճավճավաձեի հրապարակախոսական գործունեության չափազանց տխուր էջերից է, քանզի այն կարող էր ազգամիջյան բախումների պատճառ դառնալ երկու հարևան ժողովուրդների՝ վրացիների և հայերի միջև»²:

Թերևս այս փաստերից էր ելնում ակադ. Իվանե Ջավախիշվիլին, երբ գրում էր. «Հիմա էլ հեշտ չէ հասկանալ պատմությունը և ճշմարտացի պատկերացնել այն: Դա առավել ևս դժվար գործ էր անցյալ դարի այն շրջանում, երբ Իլիա ճավճավաձեն մեր մշակույթի անզուգական առաջնորդն ու ղեկավարն էր»:

Վրաստանի արխիվներում ևս պահպանվել են հայ հեղինակների՝ Իլիա ճավճավաձեին վերաբերող հոդվածներ, որոնց տպագրությունն ինչ-ինչ պատճառներով արգելվել է գրաքննության կողմից: Այդ նյութերից մեկում «հումանիզմի սիրահար հարգելի իշխանի մասին» կարդում ենք, որ նա ընթերցողի հոգուց հանում էր վատի ու չարի սաղմերը, քարոզում լավն ու բարին, ջերմացնում մարդկանց սրտերը, մեղմում կրքերը և «մեր եղբայրակից ժողովուրդների մեջ համամարդկային զգացմունքներ ու գաղափարներ սերմանում»³:

Իլիա ճավճավաձեի գրական-հասարակական գործունեությունը լուսաբանող բազմաթիվ թղթակցություններ են լույս տեսնում 1907 թ. սեպտեմբերից, երբ ահաբեկչության զոհ է դառնում բանաստեղծը:

«Եղեռնական ոճիրին» առաջինն արձագանքում է «Մշակը»: Հատկանշական են Ալեքսանդր Քալանթարի «Դա պարտություն է» («Մշակ», 1907, թիվ 103) և Համբարձում Առաքելյանի «ճավճավաձեի թաղումը» (նույն համարում) մահախոսականները:

Ա. Քալանթարը, դատապարտելով բանաստեղծի դեմ պայքարելու նման «ստոր և հանցավոր» եղանակը, խոսում է ճավճավաձե հրապարակախոսի արժանիքների, գաղափարական պայքարում ունեցած հաջողությունների ու վրիպումների մասին: Բանավեճն ու քննադատությունը համարելով «կռվելու ազնիվ ձև, հասարակական կյանքի ու

¹ Է. Թաղաիշվիլի, Ընտիր երկեր, Թբիլիսի, 1968, գիրք I, էջ 269 (վրաց.):

² Գ. Մ. Կուլազով, Характеристики и воспоминания, Թբիլիսի, 1913, գիրք 3, էջ 171:

³ Տե՛ս Վրաստանի Հանրապետության ՊՊԿ արխիվ, ֆ. 480, ց. 1, N 1974:

գրականության հոգի»՝ նա գրում է. «Նույն ճավճավածեի վերաբերությանը «Մշակ» լրագիրն առիթներ է ունեցել պայքար մղելու և նույնիսկ խիստ լեզու բանեցնելու: Մենք մեր բարոյական պարտականությունն ենք կատարել՝ քննադատելով այն, ինչ որ վիճելի էր, ինչ սխալ էր մեր կարծիքով»:

Վրաց իրականության մեջ նույնպես Իլիա ճավճավածեն և՛ համախոհներ է ունեցել, և՛ ընդդիմախոսներ, և՛ հաղթել է, և՛ պարտվել, բայց այդ ամենը կատարվել է թույլատրելի միջոցներով՝ ճառերով, բանավիճելով, ընտրապայքարով:

«Վրաց ազգն այսօր սգի մեջ է,- շարունակում է հոդվածագիրը,- խելագարության, թեթևամտության և մոլորության զոհ դարձավ այնպիսի խոշոր անձնավորություն, որպիսին է ազգային բանաստեղծը. ցնցվեց վրաց հասարակությունը, և նրա հուզմունքը դարձավ մի ահեղ բողոք»: Խոստովանելով, որ նման «գրանդիոզ և համաժողովրդական թաղում» Թիֆլիսը վաղուց չէր տեսել, թերթը գրում է. «Կարելի է ասել, որ ամբողջ Վրաստանը լացում և ողբում էր կիրակի օրը»:

Արարողությանը մասնակցել են վրացական, հայկական, ռուսական, հրեական հաստատությունների ներկայացուցիչներ՝ հարգանքի տուրք մատուցելով «վրաց ժողովրդի ամենամեծ բանաստեղծին», որի «քնարի լարերը դեռ երկար կթրթռացնեն Վրաստանի զավակների սրտերը»:

Հոդվածաշար է տպագրված «Հովիվ» հանդեսի 1907 թ. 34-37, 39, 42, 46 և 47 համարներում: Այն կրում է «Իշխան Իլիա Գրիգորևիչ ճավճավածե» վերնագիրը, ստորագրված է՝ Կ. Թեմ. (Կարապետ Թեյմուրազյան): Հեղինակը ճավճավածեի գրական գործունեությունը բաժանում է երեք շրջանի. առաջին շրջանին վերագրում է «Մա՞րդ է արդյոք», «Կակո», «Մուրացկանի պատմածը» երկերը, երկրորդ շրջանի ստեղծագործություններում («Մայր և որդի», «Դավիթ արքան») ճավճավածեն «փառաբանում է հայրենասիրությունը և հայրենիքի փրկության համար կատարված անձնազոհությունը», երրորդում «իշխանն իր գրիչը նվիրում է գեղարվեստին և տալիս «Մենակյացը» պոեմն ու «Բազալեթի լիճը» բանաստեղծությունը»:

1911-1912 թթ. ճավճավածեի «ճգնավորը» պոեմի շուրջ վրաց գրական քննադատության մեջ կրկին սկզբունքային բանավեճ է սկսվում, որ տևում է բավական երկար: «Հորիզոնը» վկայում է, որ վեճի առիթ է եղել «Մնաթոբիի» այն կարծիքը, թե իբր հեղինակը դեմ չի եղել ճգնավորությանը: Որպեսզի հայ ընթերցողին պարզ լինի գործի էությունը, նախ շարադրվում է սյուժեն և ապա գնահատվում ըստ էության:

Ճավճավաճեի պոեմը «վրաց գեղարվեստական գրականության ամենաընտիր գոհարներից է,- կարդում ենք թերթում,- այն շատ խոր տպավորություն է թողնում իր հոգեբանական վերլուծումով, ուժեղ լեզվով, գեղեցիկ, ներդաշնակ ռիթմով», այդ պատճառով էլ վեճը երկի գեղարվեստական արժանիքներին չի վերաբերում, քանզի այն «ամեն կասկածից վեր է, այլ թե ինչ վերաբերումնք է ցույց տալիս ինքը՝ հեղինակը, դեպի ճգնավորության, կուսակրոնության գաղափարը»¹:

Քննադատները դժվարացել են հետևել գեղագետի մտքի թռիչքին, խորամուխ լինել պոեմի փիլիսոփայական իմաստի մեջ, բացահայտել ու պարզաբանել տարբեր գաղափարներ ու մտքեր դավանող ճգնավորի ու հովվուհու կերպարների դրամատիզմը: Այդ պատճառով էլ հայ և վրաց որոշ գրականագետներ հանգել են թյուր եզրակացությունների:

1913 թ. մայիսի 5-ին վրաց ժողովուրդը իր երախտիքն է մատուցում Իլիա ճավճավաճեին՝ նրա գերեզմանին կանգնեցնելով Նիկոլաճեի «Սզացող Վրաստան» («Մծուխարե Սաքարթվելո») հուշարձանը: Բացման արարողությանը ելույթ է ունենում նաև Ալ. Քալանթարը: Նա գնահատում է ճավճավաճեի ծառայությունները. «Առանձին քաղաքացիներ մեռնում են, բայց չի մեռնում ազգը. չեն մեռնում և ազգի այն որդիները, ովքեր մարմնացնում են իրենց ազգի հանճարը, ազգի հոգեկան կրողը: Այդ հանճարն անմահ է: Նա, իբրև բարոյական խտացում ազգի ունակությունների և հոգևոր կյանքի, ապրում է դարեր՝ անցնելով սերնդից սերունդ»²:

Նույն թեմային է նվիրված «Յորիզոնի» ոչ այնքան ծավալուն մի հոդված (1913, թիվ 105): Նրանում նախ նշվում են «վրացական բանաստեղծության կորիֆեյի» մահարձանի բացմանը նախորդած միջոցառումները, ապա՝ մի քանի պոեմներ ու ներբողներ, որոնք «թովչանքով են լցնում մարդու սիրտը, ընթերցողի հոգին ներարկում հայրենասիրական զգացումով»:

Իլիա ճավճավաճեի կյանքի ու գործունեության մասին հնուտ հոդվածաշար է տպագրված «Գաղափարի» 1916 թ. 105-108 համարներում (հեղինակ՝ Յուսիկ Գնթունի): Կենսագրական հարուստ տեղեկություններ տալով՝ նա շեշտում է Ռուսաստանում կրթություն ստացած անդրկովկասցի երիտասարդ մտավորականների հայացքների ձևավորման վրա ռուս գրողների ու քննադատների ազդեցության մասին: Բայց սխալ է թույլ տալիս՝ հայտնելով, թե «վաթսունական թվականների գործիչները գտնվում էին նարողնիկական շարժման ազդեցության տակ

¹ «Յորիզոն», 1912, 10 հունվարի:

² «Մշակ», 1913, 7 մայիսի:

ճավճավաճեն ևս բացառություն չպետք է կազմեր այդ ընդհանուր հոսանքի մեջ»¹: Հոդվածագիրը թյուր պատկերացում է ունեցել վաթսու-նականների գործիչների ու նարոդնիկական շարժման մասին:

Հ. Գնթունին ճավճավաճեի բանաստեղծությունների համար «խոշոր պլյուս» է համարում, որ «դրանք կարողանում են թվել արծարծած համազգային ու հայրենասիրական գաղափարներով և ապրեցնել ընթերցողին»:

ճավճավաճեի մահից հետո էլ ընդհուպ մինչև XX դարի 80-ական թվականների վերջը հայկական գրական հանդեսներում տպագրվել են գրողի երկերը՝ բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածքներ ու վիպակներ. հրատարակվել են ընտիր երկերի ժողովածուները, ինչպես նաև գրողի կյանքն ու գործունեությունը լուսբանող բազմաթիվ հոդվածներ: Դրանցում լավագույնս արտացոլված է վրաց ժողովրդի գաղափարական առաջնորդի և ազգային մեծ գրողի քաղաքացիական ու մարդկային անբողջական նկարագիրը:



¹ «Գաղափար», 1916, 9 դեկտեմբերի:

ԱԿԱԿԻ ԾԵՐԵՔԵԼԻ



Վրաց գրականության դասական Ակակի Ծերեթելին վրացական պոեզիայի մեծագույն դեմքն է Շոթա Ռուսթավելուց հետո: Նրա քերթվածքների հզորության գործոններից կարևորագույնը ազգային բանահյուսությունն է, ազգային հենքը, որ ինչպես հանճարեղ լոռեցին մեր իրականության մեջ, բյուրեղացրեց ու վերադարձրեց ժողովրդին: Ծերեթելին առավել, քան իր նախորդներն ու հետնորդները, շնորհիվ իր տաղանդի ու հոգեկերտվածքի անմնացորդ ներդրման, ընդլայնեց ազգային քնարերգության շրջանակները:

Ակակի Ծերեթելին ծնվել է 1840 թ., Սաչխերի շրջանի Սխվիտոր գյուղում, հարուստ ազնվականի ընտանիքում: Սովորույթի համաձայն Կակոյին (այսպես էին կոչում մանուկ հասակում)

հանձնում են հարևան Սավանե գյուղի ճորտ դայակներից մեկին: Գեղջուկ ստնտուկի ընտանեկան հարկի տակ մեծանալով՝ ապագա բանաստեղծը լսում ու ընկալում է հասարակ մարդկանց լեզուն, ականատես լինում նրանց սովորույթներին ու կենսակերպին, ականա դառնում գյուղի աշխատանքի, տառապանքի ու հանապազօրյա հոգսերի վկան: Քայլել սկսելուց ի վեր նա օրերն անցկացնում է հանդում ու դաշտում, արտում ու բանջարանոցում: Հինգ-վեց տարեկան՝ նա արդեն գիտեր՝ ինչպես խնամել կենդանիներին, նախաճաշի կամ ընթրիքի սեղան գցել, հաց թխել. սովորել էր, թե երբ ու ինչպես են վարում, ցանում, հնծում ու կալսում: Լսելով ասքեր, առասպելներ, ավանդություններ, հեքիաթներ, տարաբնույթ երգեր, հանելուկներ ու խաղեր, հաղորդակից է դառնում դրանց իմաստությանն ու դաստիարակվում նույն ոգով: «Չեն կարող չխոստովանել,- գրում է Ծերեթելին,- որ եթե իմ մեջ լավ ու բարի բան է

մնացել, ապա դա շնորհիվ այն բանի, որ ես մեծացել եմ գեղջկական ընտանիքում, գյուղացիների երեխաների հետ»: Գյուղական կյանքը, սովորույթներն ու բնաշխարհը խոր տպավորություն են թողնում պատանու վրա. այդ ամենն ընդմիջտ մնում է հիշողության մեջ, որ ականավոր գրողը գերազանց արտացոլել է բանաստեղծություններում ու պոեմներում, դրամաներում, հեքիաթներում ու ակնարկներում: Ծնողները, երեխային վերցնելով իրենց մոտ, դեռ վաղ հասակից վրաց և ռուսաց լեզուներով գրել-կարդալ են սովորեցնում: Ակակին այնպես է հափշտակվում ընթերցանությամբ, որ հրաժարվում է մանկական խաղերից, զբոսանքներից ու զվարճություններից:

1850 թ. ընդունվում է Քութայիսի նահանգական գիմնազիան, որ նույնն էր, ինչ զորանոցը, քանզի «ուսուցման մեթոդը մտրակն էր, նպատակը՝ տեղացիներին ռուսացնելը»: 1859-ին մեկնում է Պետերբուրգ՝ զինվորական բարձրագույն կրթություն ստանալու, բայց շփվելով ռուս, համերկրացի և այլազգի առաջադեմ մտավորականների հետ, փոխում է որոշումը և ընդունվում արևելագիտության ֆակուլտետի հայ-վրացական բաժին՝ որպես ազատ ունկնդիր: Հատկանշական է, որ մագիստրական աստիճանի համար քննություն է հանձնում նաև հայոց լեզու, հայ գրականությունն առարկաներից, ստանում լավ և գերազանց գնահատականներ:

Ակակի Ծերեթելին մասնակցում է ուսանողական ելույթներին, մտերմանում «Սովրեմեննիկի» շուրջ համախմբված գրողների հետ, որոնց ազդեցությամբ էլ կազմավորվում են նրա գեղագիտական հայացքները, նպաստում է նաև վրացի ուսանողների գրական խմբակը, որտեղ կարդում է իր ոտանավորները և օգտակար խորհուրդներ ստանում ավագ ընկերներից՝ Ի. Ճավճավաձեից, Գ. Ծերեթելուց, Կ. Լորթքիփանիձեից, Ն. Նիկոլաձեից: Այդ տարիների գրածներից հատկանշական են «Խորհրդավոր նամակ», «Սալամուրի», «Ապելյացիայի գիտակը», «Բանվորական» բանաստեղծությունները:

Պատմական կարելի է համարել Ակակիի հանդիպումը (1860) Ուկրաինայի ազգային-ազատագրական շարժման առաջամարտիկ, բանաստեղծ Տարաս Շևչենկոյի հետ, որ նոր էր վերադարձել աքսորից: «Նրա խոսքերից ես առաջին անգամ հասկացա, թե ինչպես պետք է սիրել հայրենիքն ու սեփական ժողովրդին, և ինչքան մեծ կարող է լինել այդ սերը», – գրում է Ծերեթելին:

Ավարտելով համալսարանը՝ Ա. Ծերեթելին 1863 թ. վերադառնում է հայրենիք: Նույն տարում ամուսնանում և բնակության է մեկնում Մոսկվա: Շուտով հայրենիքի կարոտն ստիպում է բռնել հետդարձի ճամփան:

Չնայած Ծերեթելին մեծահարուստ ազնվականի զավակ էր, բայց ապրել է կարիքի մեջ: Նրան առաջարկում են եկամտաբեր պաշտոններ, բայց հրաժարվում է և երբեք պետական ծառայության չի մտնում. նախընտրում է պրոֆեսիոնալ գրողի ուղին: Գրական գործունեությանը զուգընթաց Ա. Ծերեթելին հասարակական լայն գործունեություն է ծավալում: Զգալի են նրա ծառայությունները ազգային թատրոնի զարգացման բնագավառում: Ի. Ճավճավաձեի հետ նա հիմնադրում է «Վրացական թատերական ընկերությունը», որ կոչված էր ի հայտ բերելու դրամատուրգների և ռեժիսորների, վերականգնելու ազգային թատերական արվեստի ավանդույթները: Եղել է թատրոնի ռեժիսոր, թատերական ընկերության ղեկավար:

Նա մեծապես նպաստել է վրաց գրական լեզվի նորմավորմանը, պարբերական մամուլի զարգացմանը: Ժամանակի վրացական գրեթե բոլոր թերթերն ու հանդեսները հիմնադրվել են նրա աջակցությամբ: Նրա աշխատակցությունը որևէ լրագրի կամ ամսագրի երաշխիք էր մեծ թվով բաժանորդների և աննախադեպ հաջողության: Թերթերի ու ամսագրերի այն համարները, որտեղ տպագրվում էին Ծերեթելու երկերը, ֆելիետոնները կամ հոդվածները, լույս էին տեսնում կրկնակի տպաքանակով: Շատ պերճախոս է հետևյալ փաստը. 1880 թ. հայտարարություն է տպագրվում, որ Ակակի Ծերեթելին թղթակցելու է «Իվերիա»-յին: «Մի քանի օրվա մեջ,- գրում է հայկական «Մշակը»,- հազար բաժանորդ գրվեց, իսկ երբ 1885 թ. Ակակին թողեց այդ թերթը, հազիվ երկու հարյուր բաժանորդ մնաց»¹: 1897-1900 թթ. Ա. Ծերեթելին հրատարակում է «Ակակիի ժողովածու»-ն («Ակակիս կրեբուլի»), որտեղ տպագրում է իր հոդվածները, երկերը, բանահյուսական նյութեր: Շրջագայելով Վրաստանում՝ գրառել է հարյուրավոր հեքիաթներ, լեգենդներ, առակներ, հանելուկներ, դրանց վերաբերյալ հրատարակել հոդվածներ ու հետազոտություններ: 1908 թ. դեկտեմբերին նշվում է Ա. Ծերեթելու գրական գործունեության 50-ամյակը, որը վերածվում է համաժողովրդական տոնահանդեսի:

Վախճանվել է 1915 թ. հունվարի 25-ին, Սխվիտոր գյուղում:

Ակակի Ծերեթելին քննադատական ռեալիզմի ներկայացուցիչ է, այն գրողներից, որ հավասար հաջողությամբ ստեղծագործել է գրեթե բոլոր ժանրերով ու տեսակներով և թողել հարուստ ժառանգություն: Դրանք աչքի են ընկնում պարզությամբ, խորությամբ, հույզով, դեմոկրատիզմով ու լավատեսությամբ:

¹ «Մշակ, 1908, 7 դեկտեմբերի:

Ակակի Ծերեթելին գրեթե անխամրելի փառքի է արժանանում 19-ամյա հասակում, երբ լույս է ընծայում «Խորհրդավոր նամակ» բանաստեղծությունը, որ իսկույն ևեթ վերածվում է երգի, տարածվում համայն Վրաստանում՝ դառնալով ժողովրդական:

Քննադատական հողվածներում, արձակ երկերում և հատկապես «Չոնգուր», «Բանաստեղծը», «Բանաստեղծի ծրագիրը», «Խորհուրդ», «Ծո՛վ, հուզվի՛ր, հուզվի՛ր» քերթվածքներում դրսևորվում է գրողի հավատամքը. մերժելով «մաքուր արվեստի» կամ «արվեստն արվեստի համար» մտայնությունը՝ նա գրում է, որ արվեստն ու գրականությունը պետք է գործուն դեր խաղան, վերարտադրեն կյանքը, բխեն հանրության շահերից: «Իլիա ճավճավաձեի քերթվածքները սոսկ արվեստի արտահայտություն չեն. եթե այդպես լիներ, իրենցից մեծ արժեք չէին ներկայացնի: Նրանցում մենք փնտրում ենք խելացի մտքեր, և լավ է, որ գտնում ենք»:

Գրողը համոզված է, որ պոեզիայի անանց կոչունը ճշմարտությանը ծառայելն է:

*Չոնգուրը ես էնդուր կուզեմ,
Որ ծառայի ճշմարիտին,
Որ տարածի մտքեր վսեմ,
Անկեղծություն բաշխե սրտին:
Որ ցամաքեն կեղեքվածի
Արցունքները նվազներով,
Որ ճնշողի սիրտը խոցի
Նետի մնան սլաքներով:*

Բանաստեղծի հավաստմամբ իրավակարգի թերություններն ու թերացումները բարձրաձայնողին, ժողովրդի շահերի ու արդարության համար պայքարողին, ճշմարտությունն ասողին սպասում է հալածանք, տառապանք, բանտ ու աքսոր: «Իսկական բանաստեղծը պիտի իմանա, որ իրեն սպասում է անեծք ու հայիոյանք, զայրույթ ու վրեժ»: Բայց ժողովրդի երգիչը չպիտի վախենա ո՛չ հալածանքներից, ո՛չ տանջանքներից, ո՛չ նվաստացումից, ո՛չ էլ զրկանքներից ու աքսորից, նա չպիտի շեղվի իր ուղուց, չպիտի կեղծի իր ձայնը.

*Էս իմ լեզուն թող չորանա,
Թե հաճոյանք երգս կանչի,
Էս իմ աչք թող քարանա,
Թե կեղծ ծայնով լարս հնչի,*

*Ինչքան էլ բախտն ինձ հալածի,
Մահ սպառնա ինձ ապագան,
Սիրտս երբեք կեղծելու չի...*

Թարգմ.՝ Գևորգ Ասատուր

Գրականության և արվեստի հարցը հուզել է բոլոր ժամանակների գեղագետներին: Ծերեթեւին նույնպես վստահ էր, որ դրանք շատ մեծ դեր ունեն հանրության հոգևոր զարգացման գործում: Նա այրվում էր այն ամենով, ինչը խանգարում էր երկրի առաջընթացը: Ահազանգում և զգոն էր պահում ժողովրդին. հաճախ էլ վերքերը բուժելու դեղամիջոց առաջարկում: Այդ էր պահանջում նաև արվեստակից ընկերներից: «Ժողովրդին գրականությունն անհրաժեշտ է այնպես, ինչպես պճնասերին՝ հայելին, որ նայի նրա մեջ և տեսնի իր դեմքի առավելություններն ու թերությունները»:

Գեղարվեստական գրականության արժանիքները տեսնում էր նրա մարտնչող էության մեջ: Գրականությունը չարիքի դեմ պայքարելու զենք էր նրա ձեռքին. «Էլի եմ ասել և նորից եմ ասում, որ առհասարակ (մաքուր) արվեստին հատուկ ուշադրություն չեմ դարձրել. գրականությունը ես համարել եմ սովորական զենք՝ չարիքի դեմ պայքարելու և բարուն ծառայեցնելու համար»: Իսկ գրականության հասարակական դերի մասին գրում է. «Գրականությունն իրենից ներկայացնում է մտավոր և բարոյական հայելի: Գրվածքում, ինչպես հայելիում, պետք է արտացոլվի գրողի ապրած ժամանակաշրջանը՝ իր հարթ ու խորհուրդով մակերևույթով, որ ապագայի համար պահպանվի նրա պատմական պատկերը: Ուրեմն գրողն իրավունք չունի անտեսել առօրյա իրադարձությունները, որքան էլ դրանք աննշան լինեն»¹:

Պահանջելով իրականությունն արտացոլել ճշմարտացի՝ նա միաժամանակ պայքարում էր «նմանեցնելու» և դրա պարզունակ ընկալման դեմ. «Ոմանց պնդմամբ՝ եթե ցանկանում ես նկարագրել գյուղական կյանքը, գրի առ ինչպես որ է, և կստացվի իսկական արվեստ: Այդպես որ լիներ, լուսանկարները կդիտվեին արվեստի գլուխգործոցներ, և շարքային լուսանկարիչը կհամարվեր ավելի մեծ, քան հանրահռչակ Ռաֆայելը: Բայց այդպես չէ: Լուսանկարիչը պարզապես պատճենում է, մինչդեռ գեղագետը վերցնում է էական կողմերը, զգացմունքների և տրամադրության այնպիսի պահ ընտրում, որ իր ստեղծագործության մեջ հոգի դնի: Նույնը պետք է ասել և գրականության վերա-

¹ Գ. Էրիսթավի, Երկեր, Թիֆլիս, 1884, Ա. Ծերեթեւու առաջաբանից:

բերյալ: Տաղանդավոր գրողը ոչ թե պիտի արձանագրի այն ամենը, ինչ լսել կամ տեսել է, այլ հարյուր հազարավոր բառերից ու արտահայտություններից ընտրի այն, որը լավագույնս կբնութագրի նկարագրվող առարկան»¹:

Ծերեթելին քննադատել է նաև ֆորմալիստական արվեստի, նատուրալիստական «փաստագրության» և, այսպես կոչված, «հրապարակախոսական քարոզչության» ջատագովներին:

Բոլոր այս հարցերը նա բխեցնում է գրողի կոչման ավանդական պատկերացումից: Բանաստեղծը պետք է լինի իր դարաշրջանի, իր ժողովրդի լավագույն իղծերի արտահայտիչը: Նա պետք է ունենա լայն մտահորիզոն, երևույթները վերլուծելու ունակություն, խորությամբ ուսումնասիրի կյանքը, որովհետև «գրողը ամբողջ ժողովրդի դաստիարակն է» ոչ միայն ներկայում, այլև ապագայում: Իսկական արվեստագետը պարտավոր է լսել իր ժողովրդին, նկատել և վեր հանել առաջավորը, օգտակարը, լավագույնը: Առաջին պլան պետք է մղվեն ազգային գծերը, քանզի ամեն մի գրող, ամեն մի գրականություն նախ և առաջ ազգային է: «Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր սեփական, միայն իրեն հատուկ դիմագիծը, և նրա գրականությունն էլ, ինչպես այդ ժողովրդի հայելին, պետք ունենա ազգային նկարագիր»: «Գրել ժողովրդի համար, նրան հասկանալի լեզվով անհնար է առանց բանահյուսության համակողմանի ուսումնասիրության, քանզի,- վկայում է Ծերեթելին,- նրա մեջ է ժողովրդական ամբողջ իմաստությունը. բանահյուսությունը ամենաճշմարտացույց հայելին է, ամենավստահելի պատմական աղբյուրներից մեկը»²:

Ակակի Ծերեթելին ռեալիզմի տեսանկյունից էր անդրադառնում նաև տիպականության և ժողովրդայնության հարցերին:

* * *

Ակակի Ծերեթելու բանաստեղծական ծայրը ի սկզբանե հնչեց որպես բողոք ընդդեմ սոցիալական ճնշման: «Աշխատանքի երգ»-ում նկարագրում է հողի վրա քրտինք թափող գյուղացուն, որ վարում է, ցանում, հնձում ու կալսում, բայց արդյունքը վայելում են ուրիշները: Ընտանիքի անդամները մերկ են, քաղցած, հիվանդ, բայց ով է ականջ դնում նրանց հեկեկոցին, ով է նայում նրանց արցունքներին: Անելանելի է մոր վիճակը. մանչուկը աղիողորմ լաց է լինում, ուտել է ուզում, մինչդեռ քաղցից սմբել են նրա ստինքները: Բողոքում է գեղջուկը, սրտի

¹ «Կրեբուլի», 1898, թիվ 9:

² «Կրեբուլի», 1897, թիվ 1:

ցավը պատմում, բայց ինչ, ավատ, թավադ, տանուտեր խլում ու յուրացնում են այն ամենը, ինչով մի կերպ կարող էր հոգալ ընտանիքի ապրուստը: Չարքաշ գյուղացու անուն - ազգանունը իշխանավորի ճիպտի ու մտրակի վրա է գրված:

*Արդյոք լսո՞ւմ է Աստված
Մեր հառաչանքը մահաշունչ,
Եթե, այո, մինչև ե՞րբ է մնալու
Անտարբեր, լուռ ու մունջ:*

Տողացի թարգմ.

Սոցիալական չարիքի դեմ մարտահրավեր է «Իմերեթական օրորոցային»-ը (1864): Երիտասարդ մայրը զավակին երգով ծանոթացնում է ծանր կացությանը և պարտավորեցնում, որ չմոռանա ծնողների կրած տառապանքները, նվաստացումները և մեծանալով՝ վրեժ առնի բոլոր ճնշողներից, ապացուցի, որ գեղջուկն անասուն չէ, որ մարդկային հատկանիշներով նա բարձր է շատ ու շատ հարուստներից ու պաշտոնյաներից: Նույն հարցերն են հեղինակի «Խորհրդավոր ուղերձ», «Սուլիկո» և այլ քերթվածքներում, որ նույնպես վերածվել են ժողովրդական երգերի:

Հասունանալով որպես բանաստեղծ՝ Ա. Ծերեթելին ավելի է ընդլայնում իր պոեզիայի ծիրը: Նա շոշափում է նաև ազգային-ազատագրական շարժման խնդիրը, ստեղծում երգերի շարք, որոնցում հայրենիքը քնած հիվանդի հետ է համեմատում, որ շուտով պիտի ապաքինվի և նախնյաց նման հզոր կորով ձեռք բերի («Հիվանդը»), սրբապատկերի հետ, որի առաջ մոմի պես այրվելով՝ մռայլ խավարն է ցրում բանաստեղծը («Սրբապատկերի առաջ»), Կովկասի սեզ լեռներին գամված Ամիրանի հետ, որի սիրտը ցին ու ազռավ կտցահարում են թեև, բայց ի վերջո նա խորտակելու է շղթաները և ազատություն է ձեռք բերելու («Ամիրան»):

Հայրենիքի նկատմամբ անսահման սիրո արտահայտություն է «Արևածագը»: Մթածմինդան սևեռուն նայում է ցուլցուն աստղերին: Հայրենի երկինքը շողեր է սփռել հերոսի շիրիմի վրա, իսկ Կուրը մեղմ օրոր է ասում ընդմիշտ մնջող ասպետին:

Ծերեթելին նման է զգայուն բարոմետրի. մտահոգ է վրացու համար, քանզի ներկան դժնի է, անմխիթար, ապագան՝ մշուշապատ, իսկ հանգստանալ անցյալներում նվաճած դափնիների վրա՝ հավասարազոր է կործանում: Բիրտ ու դաժան իրականությունը հիասթափեցնում

է երգչին, ծնուն տխուր խոհեր ու ապրումներ. «Ո՛չ սպանում է, ո՛չ թողնում ապրեն մարդավայել, ինչքա՛ն վաղաժամ ծերացա, ոտքերս ինձ գերեզման են տանում»:

Տխրությունն ու դառնությունը ավելի զգալի են «Վերելքով բարձրանում էի ես դանդաղ» եղերերգում, որտեղ հայրենիքը ներկայանում է որպես թշնամու կողմից գերեվարված ու ստրկացված էակ, որին ինքը սիրում է խելակորույս: Այլաբանությունը գեղեցիկ է, նրբին. հեղինակը, այդ հնարանքին դիմելով, ցանկանում է նկարագրել երկրի անուրախ կացությունը և այնպես ազդել հանրության վրա, որ նա տոգորվի գերությունից ու ստրկությունից ազատագրվելու տենչով: Բանաստեղծը ողբերգություն է ապրում, քանզի տեսնում է, որ ցարական կառավարությունը գայթակղել, կեղծ փաղաքշանքով գրավել է սիրածին՝ հայրենիքին, արբեցրել ու դարձրել ստրուկ: Ծերեթելին տառապում է հատկապես այն պատճառով, որ հայրենիքն անհաղորդ է մնացել հարազատ որդու նախազգուշացումներին.

*Գոչեցի. «Թակարդ ես ընկնում,
Մի՛ կարծիր, թե տալիս են վարդ ու մանուշակ,
Խղճա քեզ, իմացի՛ր,
Դա թույն է մահացու, ոչ թե օշարակ»:*

Տողացի թարգմ.

Պոետը գերադասում է մոռանալ ամեն ինչ ու ամենքին, ձեռքերը խաչել կրծքին և առմիշտ զոցել աչքերը: Վիշտը, տառապանքը, հաճախ նաև հուսահատությունը կապված են երկրի կացության հետ: Նրա թե՛ թախիծը, թե՛ հրճվանքը խորապես ազգային բնույթի են: Այնպես է ապրում այդ ամենը, որ անձնական կնիք կրող բանաստեղծություններն անգամ քաղաքացիական հնչեղություն են ձեռք բերում: Ընթերցողը դժվարանում է որոշել այն բաժանարար գիծը, որ նախատեսվում է հայրենասիրական և զուտ սիրային երգերի համար: Դժվար է ասել՝ լուսատուիկը («Տիցինաթելա») հեղինակի սիրած էա՞կն է, թե՞ բազմաչարչար հայրենիքը: Այն թարմ շիրիմը յարի՞ճն է, թե՞ ժողովրդի ազատաբաղձ ոգունը՝ սպանված ու թաղված («Սուլիկո»):

Հայրենիքի հանդեպ անհուն սերը բանաստեղծն արտահայտել է համեմատություններով, մակդիրներով ու գեղեցիկ պատկերներով: «Այսպես ու այս միջոցով հայրենասիրական պոեզիան Ծերեթելին մտցրեց ընտանեկան ոլորտ՝ հայրենիքը դարձնելով ամեն մի վրացու հոգածության առարկան»:

Ակակի Ծերեթելին անդրադարձել է նաև Վրաստանի անցյալին՝ նպատակ ունենալով կապ հաստատել պատմության ու իր ժամանակի միջև: Այդ կարգի պոեմներից այնպիսի տպավորություն են ստանում, ասես անցյալի հերոսները հարություն են առել XIX դարի երկրորդ կեսին և նույն հաջողությամբ մարտնչում են երկրի անկախության համար:

Հատկանշական է ևս մեկ հանգամանք. Ա. Ծերեթելին արտացոլում է երկրի համար ճակատագրական նշանակություն ունեցած անցքեր ու ժամանակներ, երբ կշեռքի մտարին է եղել նրա լինել-չլինելու խնդիրը: Այդ օրհասական պահերին պատմական թատերաբեմ է մտել որևէ տաղանդավոր անհատ և սեփական կյանքի գնով երկիրը փրկել անխուսափելի կործանումից, ինչ խոսք, հենվելով ժողովրդական զանգվածների հավաքական ուժի վրա: Այդպիսի հերոսներ են Բագրատ V-ը, Թոռնիկե Էրիսթավին, Նաթելան (համանուն պոեմների հերոսները) և նրանց համախոհները:

Պատմական թեմայով (վերցված է Վրաստանի՝ XIV դարի կյանքից) առաջին ստեղծագործությունը «Բագրատ Մեծ» պոեմն է (1875)՝ գրված XIX դարի 70-ական թվականներին ծավալված ազգային-ազատագրական շարժումների ազդեցությամբ:

Լենկ Թեմուրն իր հրոսակներով հարձակվում է Վրաստանի վրա, հրի ու սրի մատնում երկիրը: Գերեվարելով Բագրատ V-ին՝ պահանջում է հավատափոխ լինել. վերջինս առերես ուրանում է և մոռնողական զորքերի գլուխ անցած՝ շարժվում դեպի Վրաստան: Սակայն երկրի մատույցներում վրացական զորքերը մի կիրճում շրջապատում են թշնամուն, հենց Բագրատի հրամանատարությամբ գլխովին ջախջախում նրան, ապա պարտիզանական կռիվներ մղելով՝ ազատագրում երկիրը: Պոեմի գաղափարն արտահայտված է հետևյալ տողերում. «Կենդանի ստրուկ լինելուց լավ է մեռնել ազատության համար պայքարում»:

Բագրատ Մեծը խելացի դիվանագետ է: Նա համոզված է, որ մարդ չպիտի վախենա ժամանակավոր անհաջողություններից: Անձնական դժբախտությունը ոչինչ պիտի համարել՝ համեմատելով այն դժբախտության հետ, որի մեջ գտնվում է երկիրը: Նրան պետք չեն բարեկեցություն, փառք կամ գահ, քանի դեռ հորդանների կրնկի տակ հեծում է Վրաստանը, քանի դեռ մայրերի աչքերից արցունք է հոսում, քանի դեռ վրացի մանուկներին պառկեցնում են դաշտերում և ծիախաղեր կազմակերպում նրանց մարմինների վրա:

«Բագրատ Մեծը» հեղինակի առաջին ծավալուն երկն է, որից հետո ստեղծեց «Թոռնիկե Էրիսթավի», «Հեշտասեր Թամարը», «Նաթելա» և «Դաստիարակը» երկերը:

Գեղարվեստական առումով անհամեմատ բարձր է «Թոռնիկե Էրիսթավին» (1884). Նրանում նկարագրված են X դարի երկրորդ կեսի դեպքերը, երբ Վրաստանը նոր-նոր միավորվում և հզոր պետականության հիմքերն էր դնում: Թոռնիկե Էրիսթավին զորավար էր, հայտնի ոչ միայն Վրաստանում: Թողնելով աշխարհիկ ակտիվ գործունեությունը՝ ձեռնադրվում է քահանա և մտնում վանք:

976 թ. հույն զորավար Սկյարոսը ապստամբում է երկրի անչափահաս կայսեր՝ Վասիլ Երկրորդի դեմ: Տեսնելով՝ կործանումն անխուսափելի է, վերջինս Թոռնիկեին գործուղում է Վրաստան՝ Դավիթ Կյուրո-ղապատից օգնություն խնդրելու: Թոռնիկեն, առաջնորդելով վրացական քսանհազարանոց զորքը, ջախջախում է հակառակորդին և գահը վերադարձնում Վասիլին: Այս է երկի համառոտ սյուժեն. հեղինակն օգտվել է վրացական աղբյուրներից:

Պոեմն աչքի է ընկնում հայրենասիրական պաթոսով. փառաբանվում է վրացական զենքի ուժը, վրաց մարտիկների սխրանքը: Հաջողված հատվածներ են բնության ու ճակատամարտերի տեսարանները: Կենդանի, բնական ու գեղեցիկ է լեզուն:

1885 թ. Ակակի Ծերեթելին գրում է «Հեշտասեր Թամարը» դրամատիկական պոեմը, որի համար հիմք է ծառայել պատմական հետևյալ իրողությունը: Վրաց Թեյմուրազ արքան իր դուստր Դարեջանին ամուսնացնում է Իմերեթի տիրակալ Ալեքսանդրի հետ: Դարեջանը իր հետ արքունիք է տանում Վախթանգ V-ի եղբոր աղջկան՝ Թամարին: Մանկահասակ աղջկան նշանում են Ռաճայի մեծահարուստ իշխաններից մեկի հետ: Վերջինիս ավագ եղբայրը, որ Արևմտյան Վրաստանի հոգևոր պետն էր, հրապուրվում է հարսնացուի գեղեցկությամբ և հենց հարսանիքից առևանգում: Իմերեթի արքա Բագրատը ստանձնում է միջնորդի դերը՝ խոստանալով պատժել անբարո հոգևորականին, բայց խոստումը կատարում է Թամարին սեփականելով միայն: Մեզրելիայի տիրակալ Լևան Դադիանին, հարձակվելով Բագրատի վրա, կուրացնում է նրան, գերում Թամարին և դարձնում իր կինը: Շատ չանցած՝ Բագրատին հաջողվում է վերադարձնել նախկին կնոջը: Բագրատի մահից հետո գահին ու Թամարին տեր է դառնում Գեորգի Գուրիելին՝ Բագրատի դստեր ամուսինը:

Պոեմում ցուցադրված են պալատական կյանքի խարդավանքները, մատուցությունները, զեխությունը, հակամարտությունները, բախումները, հոգեբանական նրբին ու լարված պահերը, կենցաղը, ժողովրդական հանդեսները, հոգևորականների ու իշխանական դասի բարոյական անկումը: Լավ է կերպավորված գեղանի, բայց թեթևաբարո Թամարը, որ

ականա դառնում է երկպառակությունների ու եղբայրասպան կռիվների պատճառ: Նրան տիրանալու համար պայքարում են երկրի բոլոր հզորները՝ թագավոր, եկեղեցական, պաշտոնյա, իշխան ու ֆեոդալ: Բայց Թամարի զոհերը միայն նրանք չեն, կործանվում են նաև մաքուր ու ազնիվ մարդիկ, որոնց թվում՝ բանաստեղծ Գոչան:

Գոչան հայրենասեր է, խնկարկում է այն Թամարին, նրան, ով Վրաստանը հասցրեց փառքի ու հզորության: Երիտասարդը ոչ միայն մերժում է դառնալ այս մեկի՝ նույնպես Թամար, նույնպես թագուհի, սիրեկանը, այլև համախոհների հետ վճիռ է կայացնում վերացնել՝ իբրև պատուհասի: Երբ վճիռն ի կատար ածելու համար ծառաներից մեկը մտնում է տիկնոջ ննջասենյակը՝ շանթահարվելով գեղեցկությունից, դաշույնը ականա գցում է ձեռքից: Աղմուկից Թամարն արթնանում է, խոստովանեցնում շվար ու շփոթ տղային և... հրավիրում տարփանքի առագաստ: Այդուհանդերձ մահափորձից հետո Թամարը հետ է նայում անցած ուղուն, ծանրութեթև անում բոլոր անցուդարձերը և հոգեկան արթնության պահին դատարկում թույնով լի սրվակը:

Ինչպես բոլոր երկերում, այնպես էլ խնդրո առարկա պոեմում ցոփ ու շվայտ կյանք վարող վերնախավին հեղինակը հակադրել է բարոյական վեհ հատկանիշներ կրող մարդկանց: Դրանցից են բանաստեղծ Գոչան, թագուհու աղախինը՝ Ցիրան, որ մտահոգ է հայրենիքի առաջ ունեցած պարտքի զգացումով, պալատի ծաղրածուն, որ տանջվում է եղբայրասպան կռիվների պատճառով, բայց ստիպված իր մեջ խեղդում է հոգու ելևէջումները և զվարճացնում պալատականներին:

Ծերեթեւիւն մտահոգվել է Վրաստանի միավորման խնդրով ևս: Այս թեմային զրոզն անդրադարձել է հատկապես «Նաթելա» պոեմում (1897), որի հիմքում ընկած է իշխան Յոտնե Դադիանիի (XIII դարի երկրորդ կես) արկածները: Նաթելան հեղինակի երևակայության արդյունք է, կնոջ իդեալական կերպար՝ ազնիվ, բարեսիրտ և գեղեցիկ: Շատ շատերն են խնդրում նրա ձեռքը, բայց մերժելով բոլոր փեսացուներին՝ հետևյալ պայմանն է առաջադրում. «Ես գործել եմ մի հրաշալի սպիտակ չուխա, թող հագնի նա, ում սազ կգա, ով կհավանի: Բայց հագնողը թշնամուն պիտի ցույց տա իր բազկի ուժը»:

Հայրենասիրությունն ու հերոսությունը պիտի զարդարեն իր փեսացուին: Եվ ի հայտ է գալիս նման քաջորդի, որ, ինչպես հեքիաթի հերոս, կատարում է աղջկա պահանջը և արժանանում նրա սիրուն: Դա Յոտնե Դադիանին է... Հարսանիքի օրը տխուր է Նաթելան, քանզի բնօրրանը՝ Արևելյան Վրաստանը, հեծում է անօրեն թշնամու կրնկի տակ: Աղջիկը հատկապես վշտացած է այն պատճառով, որ մեզրելներն այդ

ճակատագրական պահին ձեռք չեն մեկնում իմերեթցի եղբայրներին: «Այստեղ ուրախություն է, խրախճանք, մինչդեռ այնտեղ ողբ է ու կական, հառաչանքն են լսում կարեվեր ընկածների: Հավաքի՛ր այս քաջակորով երիտասարդներին և առաջնորդի՛ր մարտադաշտ: Ես էլ կգամ ձեզ հետ. սիրով կյանքս կտամ հայրենիքիս», - հորդորում է փեսացուին: Ցոտնեն պատրաստ է օգնելու կնոջ հայրենակիցներին, բայց ապստամբությունն արդեն ճնշվել է, իսկ մասնակիցները շղթայակապ քշվել են Անի: Եվ մա, այլ ելք չգտնելով, մեկնում է Անի, իբրև ապստամբության աջակից հանձնվում մոնղոլներին և պահանջում, որ իրեն էլ պատժեն: Այդչափ համարձակ քայլից ապշահար՝ թշնամի զորապետը վրացիներին ներում է շնորհում:

Վրաստանի միավորման գաղափարը տրված է Ցոտնեի և Նաթելայի միջոցով. Նաթելան Իմերեթից է, Ցոտնեն՝ Մեգրելիայից, նրանց սիրով կամրջվում են երկու թագավորությունները:

Գրողը համոզված է, որ Վրաստանն ազատություն կարող է ձեռք բերել, եթե միավորվեն բոլոր մարզերը: «Մեր Վրաստանը չունգուր է,- մի առիթով գրել է բանաստեղծը,- նրա լարերն են Քարթլին, Կախեթը, Իմերեթը, Գուրիան, Սվանեթիան և այլն: Սրանցից ամեն մեկն իր ուրույն ձայնն ունի, բայց առանձին-առանձին արժեք չեն ունենա, քանի դեռ համախմբված չեն, մինչդեռ համախմբված շատ ավելի գեղեցիկ կհնչեն»:

Ծերեթելին նույն գաղափարն է արժարժում մաս «Պատարա Կախի» պոեմում և «Բաշի Աչուկ» վիպակում (1895): Ի տարբերություն Վաժա Փշավելայի, որ, անդրադառնալով նույն անցքին, օտար զավթիչների դեմ պայքարը ներկայացնում է որպես սոսկ համաժողովրդական, որին չի մասնակցել վերնախավի կամ կառավարող շրջանների ներկայացուցիչ, Ծերեթելին ապստամբությունը ներկայացնում է իբրև ֆեոդալների (Բիծինա Չոլոդաշվիլի, Շավլա և Էլիզբար Էրիսթավիներ) մենաշնորհ: Ինչ խոսք՝ Ծերեթելին այս իշխանների կերպարները ավելի քան գունազարդել է, ինչպես և խտացրել է դավաճանների կերպարները:

Գրողը հուշում է, որ ոչ վաղ անցյալում, երբ Վրաստանի որևէ մարզ գտնվում էր վտանգի մեջ, մյուս մարզերը օգնության ձեռք էին մեկնում:

Վիպակը երևույթ էր XIX դարի վրաց արձակում. հեղինակը կիրառել է գեղարվեստական բազմազան հնարանքներ: Այսպես՝ Բաշի Աչուկի, Բիծինայի, Շավլայի և Էլիզբարի կերպարները ռոմանտիկական են, Քարթլիի թագավոր Վախթանգ V-ի (Շահնավազ) կերպարը՝ ողբերգա-

կան, ֆանտաստիկական գույներով են երանգավորված Պիրիմզեի և Պիրմթվարեի կերպարները, իսկ դավանափոխ վրացի Աբդուշահիլի կերպարը՝ զավեշտական: Մի խոսքով, Ծերեթելին ստեղծել է ռոմանտիկական, ողբերգական, արկածային ու երգիծական հնարանքներով շաղախված երկ, որ ժամանակին քիչ դեր չի խաղացել ընթերցողին հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

* * *

Արժեքավոր է նաև Ա. Ծերեթելու «Իմ կյանքը» կենսագրական երկը, որի առաջին մասը տպագրվել է 1894-1899 թթ., երկրորդը՝ 1908-1909 թթ.: Հեղինակը նկարագրել է իր մանկությունն ու պատանեկությունը, ֆեոդալների ու գյուղացիների կենցաղը, սովորույթներն ու բարքերը, ժամանակի կրթության մեթոդներն ու սկզբունքները:

Երկը զրված է հյութեղ լեզվով, համեմված է ժողովրդական բառ ու բանով, հումորով, նաև սարկազմով ու խիստ քննադատությամբ: Ինչպես հեղինակն է վկայում՝ այն հիսուն տարվա վրաց կյանքն արտացոլող անխարդախ հայելի է:

* * *

Ա. Ծերեթելին հավասար ուժով երգում է Թիֆլիսն ու Քութայիսը, Գորին ու Սախխերին, Կախեթն ու Սվանեթիան, Գուրիան ու Աբխազիան:

*Ո՛վ դու չքնաղ Քութայիսի,
Վայր վարդերի ու մայիսի.
Ո՛վ սրտիդ մեջ փշեր ցցեց,
Որ քեզ մաշի ու վնասի:*

Խորտակվել են քաղաքի ամրակուռ ամրոցները, ամեն ինչ հիմնահատակ է, չկան նախկին վեհությունն ու հպարտությունը, բայց.

*Քութայիսի՛, սիրելի՛դ իմ,
Արյունակից իմ մտերիմ,
Համբերություն, համբերություն,
Վշտով չայրես սիրտդ քո հին:*

Թարգմ.՝ Ավ. Իսահակյան

Հեղինակը համբերություն է քարոզում՝ ջանալով ժամանակ շահել և միավորել վրաց ժողովրդին: Նա համոզված է, որ այդ ընթացքում կծնվեն նոր հերոսներ, մի նոր Ամիրան, Գորգասալ, Թամար, Սաակաձե, 230

Երեկվե, մի նոր Ավթանդիլ, Տարիել ու Փրիդոն, որոնք նոր պայմաններում նոր ձևով կայքարեն, վերջ կտան ժողովրդի թշվառությանը, իրականություն կդարձնեն նրա վաղեմի երազանքը.

*Կգա՛ օրը. հերոսն արի
Կփշրի իր դաժան շղթան,
Եվ տառապանքը դարերի
Պիտի փոխվի ուրախության:*

Տողացի թարգմ.

Ա. Ծերեթելու հավատն ավելի աներեր է դառնում XX դարասկզբի շարժումների ժամանակ: Նա ոգևորությամբ է արձագանքում 1905 թ. հեղափոխությանը, թարգմանում է «Ինտերնացիոնալը», գրում է մի քանի ռազմաշունչ երգեր («Ես ձեր ցավը տանեմ», «Անկցի», «Գարուն» և այլն):

«Ես ձեր ցավը տանեմ»-ում ժողովրդին հորդորում է չվախենալ, չերկնջել, բայց և չշտապել: Նրա հույսը երիտասարդներն են. նրանք պիտի ազատություն պարզեն ճնշված ու կեղեքված ազգերին:

«Անկցի»-ով նա ցարական իշխանությունը տապալելու բացահայտ կոչ է անում, իշխանություն, որի դաշտերն ու հովիտները ոռոգվում են աշխատավորական զանգվածների արյուն-քրտինքով: Բավ է այլևս, լցվել է համբերության բաժակը, ժողովուրդն արթնացել է նիրհից, հասկանում է ամեն ինչ և գոչում. «Կորչի՛ ինքնակալությունը, մենք կհոգանք մեր ճակատագիրը»:

Ապստամբության պարտությունը չհուսալքեց բանաստեղծին. «Ժողովրդի համախմբված ուժը տարերք է, իսկ տարերքը միշտ հաղթանակ է բերում՝ ավերելով ամեն պատմեշ ու պատվար, ուրեմն մեր որդիներին ու թոռներին պիտի մերշնչենք, որ նրանք, թեկուզ ուշացունով, կտոնեն հաղթանակ»:

Ակակի Ծերեթելին հեղափոխական շարժումներն ընդունում էր այնքանով, որ Վրաստանն, օգտվելով առիթից, անկախանար:

* * *

Ակակի Ծերեթելու գրական ժառանգության մեջ շատ են մակ ողորակտիկ երկերը, որոնցից գրողը բարձր է գնահատել հատկապես «Դաստիարակը»: Հեղինակը, առանց գույներ խնայելու, մկարագրում է Բաթուի և նրա կնոջ՝ Նազիբուլայի կյանքը:

Բաթուն արխազ գյուղացի է. ստեղծել է իր անկյունը, օջախը և

հալալ աշխատանքով հոգում է ընտանիքի ապրուստը: Նա լավ ձի ունի, լավ հրացան, լավ թուր: Երջանիկ է, և դա պարզևել է սիրած կինը՝ իր անբասիր վարքով ու գեղեցկությամբ: Միմյանց նվիրված են, անկեղծ ու անսահման հոգատար:

Բայց ահա մի գիշեր նրանց այցի է գալիս Բաթուի կաթնեղբայր Սափար բեգը. եկել է հարևան գյուղում տեսած գեղեցիկ մժույզը գողանալու: Բաթուն թեև պախարակում է նման մտադրության համար, բայց ինքն է ստանձնում այդ ոչ այնքան դյուրին խնդիրը լուծելու պարտականությունը՝ ասելով, որ կան կբերի նրա հավանած ձին, կան կմեռնի ի սեր եղբայրության: Աշխետը գողանում ու առավոտ ծեփն վերադառնում է: Նա տեսնում է, որ Սափար բեգը, յափնջու մեջ փաթաթված, մուշմուշ քնած է օջախի առաջ, մինչդեռ կինը, մորեմերկ, հեկեկում է, գլուխը զարկում պատին և ծվատում երեսը: Հասկանալով իրողությունը՝ մի պահ համրանում է, ապա հավաքում է ուժերը և հանգստացնում կնոջը. կատարվածը երազ է, իսկությունն այն սուրբ սերն է, որով ապրում են. ոչինչ ու ոչ ոք չի կարող խաթարել իրենց երջանկությունը:

Բարեպաշտ, համբերատար և առողջ բանականության տեր է Բաթուն: Նա հոգեկան խռովք է ունենում, բայց ոչ միայն վրեժխնդիր չի լինում, այլև քանի դեռ հյուրը իր տանն է, ակնարկ անգամ չի անում կատարվածի մասին, իսկ երբ հասնում են գյուղի ծայրը, հրաժեշտի պահին Սափար բեգին ասում է, որ նա պիտի ապրի և տառապի արյունապիղծ մարդու դրոշմը ճակատին: Միաժամանակ հանձնարարում է տեղ հասնելուն պես դաստիարակին հայտնել այն ամոթալի արարքի մասին, որ կատարել է կաթնեղբոր հանդեպ:

Սափար բեգը առնական, գեղեցիկ տղամարդ է, բայց ստոր է, եսամոլ: Նրա համար ոչինչ են բարեկամության, ընկերության, ամուսնական հավատարմության ու հյուրընկալության սուրբ կանոնները: Չարաշահելով Բաթուի վստահությունը՝ լլկում է Նազիբրոլային՝ ոտնահարելով այն գրված ու չգրված օրենքները, առանց որոնց դժվար է պատկերացնել լեռնականին:

Բաթուի և Սափար բեգի իրարամերժ էությունը ճիշտ հասկանալու համար նշենք, որ նրանք տարբեր խավերի ներկայացուցիչներ են: Սաքուր, ազնիվ, ընկերոջն ու ընտանիքին նվիրված անձինք գյուղացիներն են՝ հանձնես Բաթուի ու Նազիբրոլայի, իսկ ահա կրքերին գերի, բարոյական անկում կարող են ունենալ միայն ազնվականները: Սափար բեգը և նրա ընտրյալը՝ Ձիա խանունը, մարմնավորում են իրենց դասը: Ի

դեպ, հենց Ձիա խանունն է Սափար-բեգին գողության մղում՝ ապառնալով չամունանալ, եթե ձեռք չզցի կապույտ աշխետը: Այդուհանդերձ Ծերեթելին նրան վերագրել է դրական հատկանիշներ. կաթնեղբոր ամուսնական մահիճը պղծելուց հետո, երբ տեսնում է, թե հոգեկան ինչ տառապանք է պատճառել, խղճի խայթ է զգում և հրաժեշտի պահին, գլխահակ լսելով Բաթուի պարսավանքը, ասում է. «Ահա գեներս, վայր եմ դնում. ես քո գերին եմ և պատրաստ եմ իմ հոժար կամքով գլխատվելու: Սպանիր, ազատիր ինձ տանջանքից ու ամոթից»: «Չէ, դու արժանի չես իմ գնդակին մահաբեր, Մայրս է քեզ սնել, մեծացրել», - պատասխանում է Բաթուն: Ասել է թե՛ Բաթուն բարոյապես է սպանում նրան՝ նողկալի արարքի համար: Վերադառնալով գյուղ՝ Սափար բեգը իր մեղքի մասին հաղորդում է ուսուցչին՝ Հաջի Ուսուբին և, ինչպես Բաթուի առաջ, դարձյալ դատաստանի ակնկալիքով, հլու-հնազանդ կուրծքը դեմ է անում դաստիարակի ատրճանակի փողին:

Հաջի Ուսուբը մեծ հեղինակություն է՝ իր վարքով, իմաստնությամբ ու մանկավարժական գործունեությամբ: Ուրախության թե տխրության պահերին ժողովրդի հետ է: Ծերունին տասնյակ աշակերտներ է դաստիարակել, որոնք նույնպես բարի համբավի տեր են: Սափարն էլ նրա սաներից է: Անհատը միայն ուսումնառությամբ չէ, որ օրինավոր մարդ է դառնում. նա բնությունից նույնպես պետք է օժտված լինի: Ցավոք, այդպիսին չէ վերջինս, քանզի արատավորել է համայնքի պատիվն ու դաստիարակի անունը: Բայց և այնպես յուրաքանչյուր դաստիարակ պետք է պատասխան տա սանի վարք ու բարքի համար: Ահա ինչու, երբ մահվան ակնկալությամբ Սափար բեգը կուրծքը դեմ է անում ատրճանակի փողին, նա ասում է. «Դու չէ, որ պիտի մեռնես, մահվան ես եմ արժանի, քանզի չկարողացա քեզ մարդ դարձնել»: Այս պատասխանով և ինքնաքննադատություն-դատաստանով Հաջի Ուսուբը բարոյական սկզբունքով շատ ավելի բարձր դիրքերում է:

Ա. Ծերեթելին նշում է, թե ճիշտ է, անհատի բնավորությունը ձևավորվում է միջավայրի ազդեցությամբ, բայց լավ մանկավարժը կարող է սանի էությունից հանել չարի սաղմը, մաքրել ու կանգնեցնել ճիշտ ուղու վրա: Աշակերտի վատ վարքի համար նախ և առաջ դաստիարակը պետք է պատժվի:

«Դաստիարակը» պոեմի գործող անձանց համար սկզբունքայինը, էականը մեղքի քավությունն է, մեղքերին թողություն տալը: Սափար բեգը դա անում է ապաշխարանքով, Բաթուն՝ ներելով, Հաջի Ուսուբը՝

ինքնադատաստանով: «Մինչդեռ վրեժխնդրությամբ մեղքը չի քավվում: Ավելին՝ դրանով հանցանքի մի տեսակը փոխարինվում է մեկ այլ տեսակով»¹:

* * *

Ակակի Ծերեթելու ստեղծագործության մեջ մեծ թիվ են կազմում սիրային երգերը: Այս թեմային անդրադարձել է հատկապես ծերության շեմին: Կարելի է ասել, որ առաջին անգամ նրա քերթվածքներում են նկատվում անհատական ապրումների խորությունն ու հոգեբանական նրբերանգներ՝ իմաստավորված զգացումների, հույզերի ու ապրումների անմիջական դրսևորումներով:

Բանաստեղծը սիրերգությունը չի պատկերացնում առանց կրակի ու կրքի, առանց ոգեշնչումի: Եվ եթե վաղ շրջանի երգերը վկայում են սիրո հրդեհի մասին, ապա հասուն տարիքում ավելանում է նաև իմաստությունն ու փորձը: Ահա թե ինչու նա յոթանասունամյա հասակում իրավունք ուներ գրելու. «Ասես նոր եմ դառնում պատանի, ծերությունս երեկ անցավ՝ որպես երազ»: Նա հավաստիացնում է, որ գլխի ճերմակը բուրդովին չի ազդել սրտի վրա. «Չոգով ավելի թարմ եմ, երիտասարդ, քան երիտասարդական տարիներին»: Չնայած այս խոսքերին՝ կսկիծ էր ապրում՝ մարմնի ու հոգու վրա զգալով տարիների ավերիչ ազդեցությունը: Նման ապրումներ արտացոլող երգերում դառնորեն խոստովանում է, որ դժվար թե սերը կարողանա «վերացնել ճերմակն ու դեմքն ակոսող կնճիռները»: Վաղ շրջանի տաղերում քնարական հերոսը ալեհեր ծերունի է, իսկ ակեհերությունն իմաստության խորհրդանիշ է:

Ա. Ծերեթելին փորձում է համոզել, որ մարդու երջանկության հիմքը սերն է, ինքը կգերադասի ապրել մի ակնթարթ, բայց սիրո հուրը սրտում, քան թե հարյուր տարի՝ առանց սիրո ճախրանքի:

Քնարական հերոսը մշում է, որ երիտասարդական տարիներին էլ սիրել է, տրտմել ու հրճվել, բայց հասուն տարիքում ծնված զգացումն ամբողջովին փոխել է իր էությունը: Մինչև իսկ թվում է, թե ինքը ծեր է եղել այն ժամանակ և նոր-նոր ջահելանում է, զվարթանում: Եվ կյանքն ու աշխարհն են ավելի գեղեցիկ: Իր խորհրդավոր զորությամբ սերը ծերունուն երիտասարդացնում է, վարդին բույր, մանուշակին քնքշանք ներարկում, թափանցում է կենցաղի ոլորտը, հրավառում մարդու սիրտն ու հոգին: Կյանքի վերջին տարիներին գրած սիրային երգերը ողողված են լույսով ու կենսահաստատ տրամադրությամբ:

¹ Ակակի Բաքրաձե, Երկեր, հ. II, Թբիլիսի, 2004, էջ 616 (վրաց.):

Քաղաքական սատիրան Ակակի Ծերեթելին է վրացական պոեզիա բերել: Նա դատաւիետում է, թավադներին ու ազնվականներին, չինովնիկներին ու վաշխառու-վաճառականներին, ծախու լրագրողներին ու գրչակներին, «թունավոր նետով» խոցում կեղծ հայրենասերներին:

«Ապելյացիայի գիտակը» բանաստեղծության մեջ ձաղկում է բյուրոկրատ չինովնիկին, որն ազգային հագուստը փոխարինել է ֆրակով, պահում է երկար բակենբարդ և անհարկի օտար բառեր գործածում, սալոններում միայն օպերաներից է խոսում, իսկ թառը, քամանչան, ժողովրդական այլ նվագարաններ վայրենիների գործիք համարում: Նա տանել չի կարող իր ազգին, մինչդեռ ազգի կարծիքով նա «մեծ մարդ է»: Ահա ինչպիսի սարկազմով է հեղինակը նկարագրում նրա բնավորության ևս մեկ գիծը՝ կաշառամուլությունը.

*Խիստ զգվում է կաշառքից նա, և նույնիսկ հավ չի վերցնում,
Սակայն... բան է, թե պատահեց, որ ոչխարը պարարտ է,
Ի՞նչ անի նա, ընծա է դա, ընծան կաշառք չի կոչվում.
Ուրիշ մեկին դա չի ներվում, իսկ նա չէ՞ որ մեծ մարդ է:
Թարգմ. Ավ. Իսահակյան*

Ակակի Ծերեթելին խստորեն այպանել է բյուրոկրատական ռեժիմը: Նրա բնութագրմամբ՝ ճորտատիրական իրավակարգում գնահատվում է ոչ թե ունակությունը, իմացությունը, ազնվությունը, այլ կեղծիքն ու ստորաքարշությունը: Ժողովրդի հոգսով հետաքրքրվողին արտորում են, խելացի մարդկանց՝ ոչնչացնում: Ինչքա՞ն կարելի է համբերել. ե՞րբ պետք է վերանա այս ամենը: Նա անողոք է նաև այն պաշտոնյաների հանդեպ, ովքեր հոգում են միայն սեփական բարօրության մասին («Կեղծավորը»):

Դժվար է մատնանշել նշանակալից դեպք կամ իրադարձություն, որին մտահոգ գործիչը արծազանքած չլինի ֆելիետոններով, պամֆլետներով ու հոդվածներով: Այդ խարազանումներն էին պատճառը, որ ժողովուրդը հափշտակված կարդում էր նաև այդ կարգի ստեղծագործությունները:

Ակակի Ծերեթելու հայրենասիրական ու երգիծական մոտիվներով ոտանավորները, պահպանելով իրենց առանձնահատկությունները, սերտորեն կապված են պոեմների ու դրամատիկական երկերի հետ:

Վրաց գրականության դասական Ակակի Ծերեթելին հայ մեծ դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանին համարել է ժողովուրդների բարեկամության խորհրդանիշը և իր ավագ եղբայրը: Դա թերևս պայմանավորված էր նրանով, որ Սունդուկյանն էլ տարիներ առաջ սովորել էր նույն բուհի նույն բաժնում, որ մայրենիին հավասար գիտեր վրացերեն, գրվածքները համեմուն էր վրաց բանահյուսության բառ ու բանով, վրացական երգերով, թևավոր խոսքերով ու դարձվածքներով, վրաց պոետների հուզաթաթավ ոտանավորներով, ինքն էր թարգմանում իր պիեսները, ինքն էլ վրաց լեզվով բեմադրում վրաց թատրոններում, ինչով մեծապես աջակցում էր ոչ միայն երկրում թատերական արվեստի զարգացմանը, այլև հայ և վրաց հասարակայնության մերձեցմանը:

Ակակի Ծերեթելին բեմը համարում էր ազգային իդեալներ և ազատագրական շարժման գաղափարներ սերմանելու, ժամանակի հրատապ խնդիրներ արժարժելու և դրանց լուծման տարբերակներ առաջադրելու լավագույն միջոցներից մեկը. թատրոնին վերագրում էր շատ ավելի հանրաշահ ծառայություններ, քան հոգևոր ոլորտի այլ ճյուղի. «Ո՞ւմ հայտնի չէ, որ պատմական ամբողջ հատորներ ի գորու չեն այնպես ազդելու հանրության վրա, ինչպես դա կարող է անել օրինավոր հայրենասիրական դրամատիկ ներկայացումը»¹, - ասել է 1873 թ. Քութայիսում կազմակերպված հայ-վրացական թատերական համատեղ երեկոյին: Ներկա լինելով Յ. Կարինյանի «Շուշանիկ» ողբերգության բեմադրությանը՝ գրախոսել է այն, որտեղ հայերի և վրացիների համար կարևորել է համատեղ ներկայացումները: Այնքան է ոգևորվել այդ բեմադրությունով ու գաղափարով, որ ժամանակի պահանջ է համարել «հայ-վրացական մշտական թատերական խումբ ունենալը»²:

1876 թ. հունվարի 15-ին վրացական բեմում առաջին անգամ ներկայացվում է «Էլի մեկ զոհ» պիեսը. «Այս վերջին տարվա ընթացքում պ-ն Սունդուկյանը մոդա է դառնում մեր բեմի համար. առաջին անգամ Քութայիսը ծանոթացրեց մեզ այս տաղանդավոր դրամատուրգի հետ, առաջինը այնտեղ խաղացին նրա «Պեպո» կատակերգությունը, հետո նրա երկրորդ՝ «Էլի մեկ զոհ» դրաման երկու անգամ հենց այնտեղ էլ ներկայացրին և հիմա, ինչպես ասում են, այնտեղ էլ նախատեսում են բեմադրել հեղինակի դրամատիկական երրորդ երկը՝ «Խաթաբալան»: Ի դեպ, Միքայելի դերում հանդես է եկել Ակակի Ծերեթելին: Ինչպես գի-

¹ «Դրոտբա», 1873, N 39:

² «Դրոտբա», 1873, N 16:

տենք, Միքայելը կրթությունն ստացել էր Ռուսաստանում, վերադարձել էր հայրենի քաղաք, բախվել իր հայացքներին ու համոզմունքներին խորթ բարքերի ու երևույթների, հակադրվել, խզել կապերն ու հեռացել անհաճո միջավայրից:

Սուևդուկյանն անդրադարձել է XIX դարի 60-ական թթ. վրաց հասարակական կյանքում սկիզբ առած տեղաշարժերին, հատկապես «հայրերի» ու «որդիների» գաղափարական հակամարտությանը, ձգտել է գտնել այն ուժերը, որոնք պիտի պայքարեին ավատականության, կործանարար սովորույթների, վաշխառուների, հոռի երևույթների դեմ: Այդ առումով նա հույսերը կապում էր Եվրոպայի ու Ռուսաստանի բուհերում կրթություն ստացած գործունյա մտավորականների հետ, ովքեր քիչ չէին նաև վրաց իրականության մեջ: Ահա ինչու նրա պիեսները ավելի հաճախ բեմադրվում էին վրացական թատրոններում: Ահա ինչու Ծերեթելին, որ արդեն հանրահայտ բանաստեղծ էր, երկրորդ խոշոր «թերգոալեուլին», ընտրել է հատկապես Միքայելի կերպարը: Իհարկե, մենք հեռու ենք ականավոր գործչին Միքայելի հետ համեմատելու մտքից. պարզապես վերջինիս ազատաբաղձ ոգին ու համարձակ քայլերն այնքան սրտամոտ էին Ծերեթելուն, որ նա ստանձնել է հենց «Թերգի ջուր խմած» երիտասարդի դերը: Ծերեթելու խաղը համոզիչ չի եղել: Մամուլը դժգոհել է պիեսից և դերակատարումից. «Նման բովանդակությամբ պիեսներ, որտեղ պատկերված է «հայրերի» ու «որդիների» հակամարտությունը, մենք շատ ենք տեսել,- կարդում ենք «Դրոեբա» թերթում,- իսկ եթե մոր պիեսն ինչ-որ չափով չի բարձրանում մախկիններից, ավելի հրատապ հարցեր չի արժարժում, ուրեմն մեր մտքի ու զգացմունքի վրա ազդել չի կարող»: Թատերախոսի համար չափանիշ են եղել բեմադրությունը և գլխավոր դերի կերպավորումը: Ի վերջո, Ծերեթելին դերասան չէր, ուստի էականը նրա մասնակցությունն էր բեմադրությանը: Եվ ճիշտ է Իոսեբ Գրիշաշվիլին, որ հանդես է եկել ի պաշտպանություն Ծերեթելի դերասանի. «Բանն այն է,- գրում է նա,- որ պիեսը ներկայացվում էր բարեգործական նպատակով (ինչպես գրված է ազդերի վրա՝ «Ի նպաստ բարեգործության»), և Ակակին, ի պատիվ հեղինակի, ընդամաջել է կազմակերպիչների խնդրանքին ու ստանձնել դերի կատարումը»¹:

¹ «Դրոեբա», 1876, N 23: Հայոց և վրաց լեզուներով ներկայացումներ տալու հարցը վրաց մամուլում բազմիցս արժարժվել է նաև հետազայում, դրան անդրադարձել են շատ մտավորականներ: Այսպես՝ 1876 թ. «Դրոեբա»-ն գրել է. «Թեև բոլորն են զգում հայ-վրաց թատրոն ունենալու անհրաժեշտությունը, բայց ցավն այն է, որ դեռևս չի

Ակակի Ծերեթելին հայոց թատրոնին առնչվող ևս մեկ հոդված է հրատարակել: Իր իսկ խոստովանությամբ՝ հայերեն չիմանալու պատճառով գրեթե ոչինչ չի հասկացել, դիմել է հայ հանդիսատեսներին, բայց նրանք էլ չեն իմացել: «Չոգիս տանջվում էր այն բանից, որ ոչինչ չէի հասկանում, ուզեցի հարևաններիցս իմանալ, բայց նրանք էլ իմ օրում էին»: Հանդիսասրահի հայերի՝ մայրենի լեզուն չիմանալու տխուր փաստը Ծերեթելուն թե՛ զարմանք, թե՛ զայրույթ է պատճառել:

Վրաց իրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել «Խաթաբալա» պիեսը, որ վրաց թատրոնում առաջին անգամ բեմադրվել է 1877 թ.: Այդ ներկայացման առթիվ նշվում է, որ վրաց հանդիսատեսը հազվադեպ է ըմբռնվում նման բարձրարժեք և գրեթե անթերի պիես ու անթերի ներկայացում¹:

Նույն պիեսը 1881 թ. փետրվարի 15-ին կրկնվել է թատերական գործիչ Կոտե Ղիփիանիի բեմեֆիսին (Բրիլիանտովի դերը մարմնավորել է վրաց մեկ այլ խոշոր գրող, վիպասան Ալեքսանդր Ղազբեգին): Ծերեթելին «Դրոեբա» թերթում վկայել է, թե ինքը չի հիշում, որ վրաց թատերական խումբը երբևէ նման հաջողությամբ ներկայացրած լիներ որևէ պիես, ինչպես «Խաթաբալան»: Արժանին հատուցելով դրամատուրգի (որ նաև ներկայացման ռեժիսորն է եղել) տաղանդին՝ հաջողության գրավական համարել է ամեն առումով հազեցված պիեսը, Ծերեթելին զուգահեռ է անցկացրել Օստրովսկու և Սունդուկյանի միջև, վերջինիս համարել ռուս դրամատուրգին հավասար տաղանդ. «Երկուսն էլ հավասար են տաղանդով», բայց Սունդուկյանին խորհուրդ է տվել տաղանդը զուր չվատնել այդ խավից տիպեր ստեղծելու վրա, իբրև թե նրանք արժանի չեն գեղարվեստական մարմնավորման: Օստրովսկու կերպարներում տրված է համայն Ռուսաստանի կյանքը՝ բոլոր դրսևորումներով: «Իսկ ի՞նչ են ներկայացնում Սունդուկյանի կերպարները, ո՞ր ազգության են պատկանում նրանք,- հարցնում է Ծերեթելին և պատասխանում,- նրանք (վաճառականները՝ Յ. Բ.) ոչ մի ազգության չեն պատկանում, և սխալվում են այն անձինք, ովքեր հույսեր են կապում այդ մարդկանց հետ, քանզի շուտով վերջ կտրվի նրանց քաղաքացիությանը»²:

Առարկելի է Ակակի Ծերեթելու մեկնությունը. դրամատուրգը, որ երգիծել է վաճառական խավի և զարգացող բուրժուազիայի շատ ու

հայտնվել մեկը, որ հանձն առնի այդ գործը և իրականություն դարձնի բոլորիս իղձն ու ցանկությունը»:

¹ «Դրոեբա», 1879, N 192:

² «Դրոեբա», 1877, N 38:

շատ ներկայացուցիչների, մի՞թե կարող էր սպասելիքներ ունենալ զին-
զինովներից, բրիլիանտովներից ու փարսիղներից: Պարզապես գրա-
խոսը թյուր պատկերացում է ունեցել Վրաստանում իր դիրքերն
ամրապնդող ու հզորացող հայ բուրժուազիայի մասին, որի դեմ հանդես
էր գալիս հրապարակախոսական կրքոտ ելույթներով:

Հակասական կարծիքներ են արտահայտվել նաև «Պեպո»
կատակերգության վերաբերյալ: Բանավեճին մասնակցել է Ծերեթելին:
Քննելով պիեսը՝ այն համարել է «Որբ մարգարիտ»¹, Պեպոյի կերպարը՝
համոզիչ և հավաքական: Հատկապես ընդգծել է Պեպոյի՝ այդ «աշխա-
տավոր և պատվավոր կինտոյի» արդարամտությունն ու սկզբունքայ-
նությունը, ազնվությունն ու աշխատասիրությունը, նշել է, որ «ամենուր
պեպոյիզ կա, նրա հիմքը ամեն տեղ նույնն է»: Գործող գլխավոր անձը
պաշտում է իր արհեստը, հպարտ է իր ազնիվ աշխատանքով: «Երբ
ուռկանը նետում է գետը, երբ ոտաբոբիկ ու կուրծքը բաց կանգնում է
ջրի մեջ, և պաղ սյուքը շոյում է դեմքը, իսկ գլխավերևում աստղերը
ցուլցում, առկայծում են, նա երջանիկ է, մանավանդ, որ նրա ուրախու-
թյան հիմքում սուրբ աշխատանքն է. վերևում Աստվածն է նրա համար,
ներքևում՝ մարդկայնությունը»:

Համոզիչ պետք է համարել նաև Կակուլիի ծերեթելիական բնու-
թագիրը. «Այժմ անցնենք նրա (Պեպոյի՝ Հ. Բ.) ընկեր տղաներից Կա-
կուլիին: Ո՞վ է սա: Սա կինտո է, Պեպոյի համախոհը, խնջույքներում՝
սրամտող, դժբախտության մեջ՝ սրտապնդող ու մխիթարող»:

Ակակի Ծերեթելին մի հետաքրքիր միտք է արտահայտում՝ համե-
մատելով Պեպոյի և հասարակական գործիչների ճակատագրերը. «Իս-
կական հասարակական գործիչը նույն Պեպոն չէ՞ մեր կյանքի հորձա-
նուտն ընկած: Նրա համառ, արդար, հանրությանն զգաստացնող խոս-
քերը նույն ուռկանը չե՞ն, ուր և՛ ձկներ են ընկնում, և՛ գորտեր»:

Բարձր գնահատելով երկը՝ Ծերեթելին գրում է. «Որբ Մարգա-
րիտը» հարուստի մետաքսե շորին կարած լինի թե աղքատի ցնցոտիին,
երբեք չի կորցնի իր արժեքը²:

Ակակի Ծերեթելին Սունդուկյանի հավատարիմ բարեկամն էր.
բարեկամություն, որ պիտի բնորոշվեր իբրև «երկու ժողովրդին միաց-
նող կամուրջ» (Ի. Գրիշաշվիլի): Նրանք դավանել ու մարմնավորել են
ժողովուրդների համերաշխության գաղափարը՝ թև թևի զբոսնելով
Թիֆլիսի կենտրոնական փողոցներում: Այդ մասին ահա ինչ է գրում

¹ «Դրոբբա», 1881, N 37:

² «Որբ մարգարիտ», խոշոր, շատ մեծ մարգարիտ, հազվագյուտ և թանկարժեք
(ծնթ.՝ Հ. Բ.):

պոետ ակադ. Իոսեբ Գրիշաշվիլին. «Իր ժամանակին ո՞վ չի տեսել այս երկուսին՝ նախկին Գոլովինսկի պողոտայում թև թևի տված զբոսնելիս: Ո՞վ գիտե՞ քանի՞ քանի անգամ նրանք խոսել են ու երազել այս երկու ժողովուրդների ճշմարիտ եղբայրական բարեկամության մասին»: Այո՛, ուսանելի էր նրանց բարեկամությունը: Ցավալի է, որ մեր օրերում նման գործիչներ չեն հանդիպում հայ և վրաց իրականության մեջ, քանզի եթե այժմ էլ գտնվեին ազնվամիտ մարդիկ, դժվար չէր լինի գտնել բարի հարևանության համերաշխ ուղիներ¹:

Այսքանով չի ամփոփվում Սունդուկյան-Ծերեթելի թեման: Ականավոր բանաստեղծն իր ականավոր հայ բարեկամին ծոնել է երեք ոտանավոր, Սունդուկյանին նվիրված առաջին բանաստեղծությունը՝ «Բարեկամիս» (նվիրում են պ-ն Սունդուկյանցին), Ծերեթելին գրել է 1901 թ., ամենայն հավանականությամբ «Պեպո»-ի 30-ամյակի առթիվ, որ նշվել է նաև վրաց իրականության մեջ: Այն սկսվում է հետևյալ խոսքերով. «Բարիք կամենում են բոլորին, անկախ նրանց ազգությունից, ով իսկական մարդ է, ում սիրտը վառվում է ճշմարտության կրակով: Ինձ համար չկա ավելի մեծ ուրախություն, քան շփումը և բարեկամությունն ազգերի»:

1910 թ., Սունդուկյանի ծննդյան 85-ամյակի առթիվ, Ծերեթելին գրել է երկրորդ ներբողը, որ ներծծված է իր հայ մեծ բարեկամի հանդեպ պատկառանքով ու գորովանքով. «Խոնարհվում եմ կրտսեր եղբոր պես՝ մեծ եղբոր առաջ», - ասում է Ակակի Ծերեթելին: Այն ասես օրհներգ է՝ նվիրված հայ և վրաց ժողովուրդների բարեկամությանը.

*Ես մի վրացի, իսկ դու հայ ես մի,
Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի.
Երկուսս էլ զավակ նույն հողի, քրի,
Եվ նույն բնության և նույն լեռների:*

Թարգմ.՝ Գեղամ Սարյան

1912 թ. Ծերեթելին նույնպես սգացել է իր բարեկամի կորուստը և նվիրել երրորդ քերթվածքը («Գաբրիել Սունդուկյանցի թաղման օրը»): Խոր վիշտ ապրելով «աշխարհին ու մարդկանց լույսի շողեր սփռող» դրամատուրգի վախճանով՝ շեշտում է, որ հանգուցյալն ամենուր եղբայրություն, հավասարություն և մարդկայնություն է քարոզել, ուստի և արժանիորեն վաստակել է համաժողովրդական սեր ու պատկառանք:

¹ Տես Նիկողայոս Աղոնց, Երկեր հիմնգ հատորով, հ. Բ, Երևան, 2006, էջ 516:

*Սրտումն ունեի հրաշագեղ
Իղձեր, տենչեր հուսալի.
Մարդ էր փնտրում ամեն տեղ
Եղբայրական սիրով լի:*

Բանաստեղծության հետ թերթի նույն համարում նա հրապարակել է մի քանի նախադասություն պարունակող, բայց չափազանց ուշագրավ հուշ, որով ընթերցողին հաղորդակից է դարձնում դրամատուրգի բանաստեղծական խառնվածքին, բնության հանդեպ նրա ունեցած պաշտամունքին: Ահա այդ հուզիչ ու խոսուն տողերը.

«Մի անգամ՝ վաղ գարնանը՝ առավոտ ծեփին, գնացի «Սուշտաիդ»: Բնականաբար այդքան կանուխ ոչ ոք չկար, և ես, սովորությիս համաձայն, սկսեցի զբոսնել այգում: Հանկարծ ինչ-որ բան գրավեց ուշադրությունս. այգու հենց սրտում՝ ծաղկառատ մի դեղձենու տակ, հայացքս ընկավ ծնկաչոք, ձեռքերը երկինք կարկառած, ասես քանդակված մի մարդու: Գաբրիել Սունդուկյանցն էր: Ես վախ զգացի՝ մտածելով՝ ցնորվել է: Իսկույն հեռացա: Կես ժամ անց Սունդուկյանցը ոգևորված մոտեցավ ինձ և զոչեց. «Ակակի ջան, ի՞նչ ես նստել էստեղ, գնանք քեզ էնպիսի՛ բան ցույց տամ,- և ձեռքս բռնած տարավ այն դեղձենու մոտ,- սա չե՞ս տեսնում. ինչո՞ւ ծնկի չես գալիս և երկրպագում այս հրաշքն արարողին: Ես, է՛, ահագին ժամանակ է՝ ամեն առավոտ գալիս եմ էստեղ և աղոթում»¹:

Գրախոսություններում ու ներբողներում Ծերեթելին ուրվագծել է Սունդուկյան մարդու և քաղաքացու, Սունդուկյան գործչի և դրամատուրգի դիմանկարի հավատ ներշնչող ուրվագիծը:



¹ «Թեմի», 1912, N 64:



Հասարակական հարաբերությունների բարդացման պատճառով «թերգդալեուլիների» միջև տարակարծություն է ծագում, և նրանք բաժանվում են մի քանի խմբի: Թեև մտահոգությունը դարձյալ երկրի տնտեսության ու մշակույթի զարգացումն էր, բայց հարցը ջանում էին վճռել գրեթե իրարամերժ դիրքերից: Մինչ այդ «թերգդալեուլիները» մտնում էին «Առաջին դասի» («Պիրվելի դասի») մեջ, և քանի դեռ համախոհներ էին, ավատատիրության դեմ պայքարում էին ընդհանուր ճակատով: Հակասություններն ի հայտ են գալիս

գյուղացիական ռեֆորմից հետո, երբ քննարկում են տնտեսության զարգացման ուղիները: Այդ հողի վրա 1869 թ. կազմավորվում է «Երկրորդ դասը» («Սեորե դասի»), որին հարողները պնդում էին, որ Վրաստանը պետք է ընթանա կապիտալիստական ուղիով, այսինքն՝ պետք է կառուցել երկաթուղիներ, գործարաններ, ծավալել արդյունաբերություն և առևտուր: Սրա էությունը չեն ըմբռնում ընդդիմադիրները: Այդ իսկ պատճառով գրական-քաղաքական այս թևի բոլոր գործիչները կապերը խզում են սերնդակիցներից: Երկրորդդասայինները ճիշտ էին, որովհետև ինչպիսին էլ լինեք բուրժուական իրավակարգը, ավատատիրության համեմատ զարգացման բարձր աստիճան էր և ստեղծում էր տնտեսության ու մշակույթի առաջընթացի լայն հնարավորություններ: Երկրորդդասայինների առաջնորդը Գեորգի Ծերեթելին էր, որը ուսումը շարունակելու նպատակով 60-ականների վերջերին մեկնել է Եվրոպա: Եվրոպական երկրների պետական կառուցվածքի, արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, կրթության ու լուսավորության բնագավառներն ուսումնասիրելուց հետո եկել է այն համոզման, որ եթե

Վրաստանն ուզում է թոթափել հավերժող հետամնացությունն ու խավարը, անպայման պետք է բռնի զարգացման եվրոպական ուղին:

Գեորգի Ծերեթելին ծնվել է 1842 թ., Արևմտյան Վրաստանի Գորիաս գյուղում: Սովորում է Քութայիսի գիմնազիայում, որն ավարտելուց հետո՝ 1860-ին, ընդունվում է Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետը: 1861 թ. մասնակցում է ուսանողական ցույցերին, ձերբակալվում և նետվում Պետրոպավլովյան բանտը:

1863 թ. վերջին վերադառնում է Թիֆլիս և որպես վրաց լեզվի ու գրականության ուսուցիչ աշխատում տեղի պանսիոններից մեկում: Երկու տարի անց հրատարակում է «Ժամանակներ» («Դրոեբա») թերթը, 1868-ին՝ «Գյուղական թերթը» («Սասուիլո գազեթի»), 1871-ին՝ «Ժողովածու» («Կրեբուլի») հանդեսը: 1873 թ. Ծերեթելին մեկնում է Արևմտյան Եվրոպա, ուսումնասիրում է պատմություն և հնագիտություն: 1877 թ. վերադառնում է Թիֆլիս, լծվում հասարակական աշխատանքի և շարունակում գրական գործունեությունը: Մոսկվայում, Պետերբուրգում և Թիֆլիսում հրատարակում է հոդվածներ ազգագրության, բժշկության, գրականության, գյուղատնտեսության, թատրոնի, պատմության և այլ ոլորտների վերաբերյալ:

Անգնահատելի են Գեորգի Ծերեթելու ծառայություններն ազգային գրականության, արվեստի և գիտության մի շարք ճյուղերի զարգացման բնագավառում:

Վաստակաշատ գրողն ու հասարակական ակամավոր գործիչը վախճանվել է 1900 թ. հունվարի 12-ին, Թիֆլիսում:

* * *

Շրջագայելով Վրաստանում, հատկապես՝ Սվանեթիում՝ նա մոտիկից ծանոթանում է գյուղացիների վիճակին, քննում նրանց բարոյական ու սոցիալական ողբերգության պատճառները և այդ ամենը արտացոլում «ճանփորդի գրառումը կամ Կիկոլիկին, Չիկոլիկին և Կուդաբզիկան» անդրանիկ երկում: Այստեղ գրողը ցույց է տալիս, թե ինչպիսի անհամբերությամբ է գյուղացին սպասում ճորտատիրության վերացմանը: «Միայն թե փրկվեն ֆեոդալից, բացականչում է մեկը, աշխարհում ինձնից երջանիկ մարդ չի լինի»: Կերպավորված են նաև այն անհատները, ովքեր ուսում են ստանում Ռուսաստանում, տոգորվում առաջադիմական գաղափարներով և վերադառնալով հայրենիք՝ հոգու բոլոր թելերով կապվում են աշխատավորական զանգվածներին, ջանում են թեթևացնել նրանց հոգսերն ու ցավերը, սերմանում են սոցիալական ու ազգային կեղեքման դեմ պայքարի գաղափարներ: Սրանք

վրաց դեմոկրատական մտավորականության առաջին ժիժեռնակներն են ազգային գրականության մեջ:

Այս երկին հաջորդում են բազմաթիվ պատմվածքներ, վիպակներ ու վեպեր, որոնցում հեղինակը պատկերում է մինչ- և հետառֆորմյան գյուղացիության սոցիալ-տնտեսական կյանքը, ռեֆորմի խաբուսիկ բնույթը, ճորտատիրության քայքայման ընթացքը («Մեր կյանքի ծաղիկը», «Գորշ գայլը», «Յորաքույր Ասմաթը»): «Յորաքույր Ասմաթը» պատմվածքում (1883) հեղինակը պատկերում է Իմերեթի ազնավուրների շվայտությունը, սնանկացումն ու բարոյական անկումը: Նրանք թեև օրեցօր աղքատանում են, բայց չեն աշխատում. ապրում են սրա-մրա հաշվին՝ մեկը մյուսից գողանալով վերջին պարկ ալյուրը, վերջին սափոր գինին, վերջին խոճկորը, հավը:

Գործող գլխավոր անձը Ասմաթն է, կին, «որի աչքերը հիշեցնում են հեքիաթի օձի ադամանդե աչքերը, որոնց հայացքի տակ ամեն ինչ չորանում ու քարանում է»: Քրոջ ու եղբոր միջև տարիներ շարունակ վեճ ու քաշքշուկ է. հաճախ բանը հասնում է դատ ու դատաստանի: Նրանք չեն խնայում անգամ իրենց վաղամեռիկ եղբոր դստերը՝ Նաթելային: Թունավորում են երեխայի հոգին, ամեն մեկն աշխատում է որևէ կերպ ձեռք գցել նրան պատկանող թգաչափ հողակտորը: Ասմաթն անընդհատ հերյուրանքներ է տարածում եղբոր և նրա ընտանիքի հասցեին, դիմումներ հղում արդարադատության մարմիններին, որի պատճառով Ռոսափին ամիսներով կալանքի են վերցնում: Տեսնելով արդյունքի չի հասնում՝ կաշառում է իր հոգեորդի, կարիքի մեջ գտնվող ազնավոր Օթարին և հրդեհել տալիս հայրական տունը՝ հույսով, որ իրանցման ժամանակ կգողանա այն տուփը, որի մեջ հոր կտակն է, մոր զարդերը և երկու հարյուր ռուբլի: Բայց հուսախաբ է լինում. երբ մեծ ակնկալիքով տուփը բացում է և պարտամուրհակից ու երկու էժանագին մատանուց բացի ոչինչ չի գտնում:

Նման գոտեմարտերի ընթացքում վերջնականապես կործանվում են դարավոր ավանդույթները: Բուրժուական տնտեսաձևի մուտքով ծայրաստիճան սրվում են մանրակալվածք ազնավուրների հարաբերությունները և նրանց տանում դեպի լիակատար սնանկացում ու կործանում: Իսկ «Գուլքան» վեպում, որ Ծերեթելու լավագույն երկերից է, ճորտատեր Ռևազ Բակուրաձեի ընտանիքի պատմության ֆոնի վրա վարպետորեն պատկերում է կալվածատիրական կարգերի էությունը, նրա քայքայումն ու անկումը: Հատկանշական է, որ ճորտ Պետրիելա Կվեսաձեն ըմբոստանում է տիրոջ դեմ: Սկիզբ է առնում պայքար, որը զնալով ծավալվում է, խորանում:

Գրողն անդրադառնում է նաև կապիտալիստական կարգերի խնդրին և պաշտպանում բուրժուազիայի շահերը՝ հայտարարելով, թե վաճառականը երկրի աղն է: Այնքան խիստ են քննադատված ֆեոդալական իրավակարգը, ինքնակալությունը և բյուրոկրատական - չինովնիկական ապարատը, որ գրաքննությունն արգելում է տպագրությունը:

Չեղինակը միտված է քաղաքացիական անհնազանդության մղել ժողովրդին, նրա գիտակցությանը հասցնել հակասությունների պատճառները և հուշել, թե ինչ պետք է անել դրանք վերացնելու համար: Ահա ինչու նրա կերպարները մարտնչում են ընդդեմ անարդարության, բռնության, սոցիալական կեղեքման ու «գորշ գայլերի» որկրամոլության:

Վրաց գեղարվեստական արձակում ուրույն տեղ է գրավում «Առաջին քայլը» վեպը՝ բազմապլան կտավ, որտեղ վերարտադրված է սոցիալական շերտավորման ամբողջ գործընթացը: Վստահորեն կարելի է ասել, որ հիշյալ ստեղծագործությունն արտացոլում է XIX դարի երկրորդ կեսի վրաց համայն կյանքը՝ մատուցված գեղարվեստական խոսքի անկրկնելի հմայքով: Գործողություններն սկիզբ են առնում այն ժամանակ, երբ «Փոթիի նավահանգստում առաջին անգամ հնչում է շոգենավի սուլոցը»: Դրանով ազդարարվում էր առևտրական ու արդյունաբերական կապիտալի հաղթական մուտքը երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանք:

Բախվա Փուլավան այծերն արածեցնում է գյուղամերձ քարհանքի մոտակայքում և հեռվից դիտում բանվորներին ու նրանց աշխատանքը: Ինժեները, նկատելով աշխույժ տղային, տանում է Փոթի՝ տնային ծառայության: Ինժեների տանը Բախվան գրել-կարդալ է սովորում, նաև՝ թվաբանական գործողություններ, իսկ տարիներ անց մշանակվում է նավահանգստում աշխատող բանվորների հսկիչ: Կյանքն ու զբաղմունքը դրան կուտակելու հնարավորություն են ընձեռում. յուրաքանչյուր շաբաթվա վերջում նա ինժեներին գրավոր հաշիվ է ներկայացնում, թե այդ օրերին նավահանգստում քանի մարդ է աշխատել և ինչքան պետք է վճարել՝ ցուցակում ավելացնելով քսանից քառասուն մարդու անուն, որ չեն եղել: Աշխատավարձն էլ վճարում է իր հայեցողությամբ և բավականաչափ դրամ կորզում թե՛ ինժեներից, թե՛ բանվորներից: Դառնալով որոշակի դրամագլխի տեր՝ Բախվան թողնում է աշխատանքը, զբաղվում առևտրով՝ բացելով փոքր ու մեծ խանութներ: Ընդլայնելով գործունեության շրջանակները՝ առևտրական կենտրոններ է հիմնում Վրաստանի բոլոր մարզերում: Տարիներ անց տարբեր հունքերով ու սարքավորումներով բեռնավորված նրա նավերը խա-

րիսխ են զգում նաև արտասահմանյան նավահանգիստներում: Արդեն մեծահարուստ Բախվա Փուլավան գնում է թավադ Թավքփիլածեի աճուրդի հանված շարժական ու անշարժ կայքը:

XIX դարի երկրորդ կեսին դա սովորական երևույթ էր վրաց իրականության մեջ, որովհետև խրախճանքներին սովոր ազնավորները վատնում էին իրենց կարողությունը և պարտքերը մարելու համար աճուրդի հանում կալվածքները, որով փաստորեն ավատական կարգն իր տեղը զիջում էր բուրժուական հասարակարգին թե՛ քաղաքում, թե՛ գյուղում: Առևտրական կապիտալը շարունակում է իր անկասելի արշավը նաև դեպի գյուղ: Նորելուկ բուրժուայի և հին կյանքին ու կարգերին կառչած ազնավորների հարաբերությունները սրվում են՝ վերածվելով թշնամության: Վերջիններս չեն ուզում հաշվի նստել նոր կյանքի պահանջների հետ: Երիտասարդ մեծահարուստը ամուսնանում է հմայիչ օրիորդներից մեկի՝ էսմայի հետ: Ազնվական Երեմիա Ծարբան, որ վաղուց հետամտում էր աղջկան, փորձում է առևանգել, բայց հաղիպելով կատաղի դիմադրության՝ սպանում է նրան, փախչում Թիֆլիս, ապավինում ազգականուհի Վալիդային, որի միջնորդությամբ մտնում է զինվորական ծառայության:

Ո՞վ է Երեմիա Ծարբան: Հարցի պատասխանն ստանալու համար հետևենք նրա կյանքի ընթացքին: Երեմիան թավադորդի է: Ինճանյա երեխային ծնողները տալիս են Քութայիսի գիմնազիա, որտեղ նա սովորում է ջանասիրաբար: Այդ տարիներին, սակայն, ցարական կառավարության հրահանգով վրացական դպրոցներում արգելվում է ազգային լեզվի, գրականության ու պատմության դասավանդումը: Դրանց փոխարեն մտցվում են հունարեն և լատիներեն: Սովորողների առաջ ծառանում է դժվար հաղթահարելի արգելք. շատերը, չկարողանալով սերտել խրթին տեքստերը, ուսման հանդեպ դառնում են անտարբեր: Նրանք կան հեռանում են դպրոցից, կան հեռացվում վատ սովորելու պատճառով, և հայտնվում են փողոցում: Այդպիսի զոհերից է Երեմիա Ծարբան: Թողնելով գիմնազիան՝ զեխության ու շվայտության նկատմամբ հակում ունեցող պատանին աստիճանաբար խրվում է տիղմի մեջ և այլևս չի կարողանում դուրս գալ, ավելին՝ կատարյալ պատուհաս է դառնում բոլոր այն քաղաքների ու ավանների բնակիչների գլխին, ուր «շնորհ» է բերում: Նա վարում է ցոփ կյանք, գողանում է, կողոպտում, գայթակղում, բռնաբարում, տուրուղմբոց սարքում և մնում անպատիժ: Իսկ երբ զգում է, որ լցվել է բնակիչների համբերության բաժակը, կարող են դատաստան տեսնել չափն անցած պորտաբույծի հետ, մեկնում է այլ վայր: Այդպես նա հայտնվում է Փոթիում, մտնում բանդիտների դեմ

պայքարող հեծյալ ոստիկանության շարքերը և ավելի անարգել շարունակում իր ավազակաբարո կյանքը: Այստեղ էլ Ծարբան առաջնորդվում է իր մշակած կանոններով. մեկին կեղծ դրամ թողարկելու մեջ է մեղադրում, մյուսին՝ սպանության, երրորդին՝ դեռահաս լլկելու, մեկ ուրիշին՝ սարքովի կտակով հարստություն կորզելու: Նման մեքենայությունների համար նա լիուլի վարձատրվում է, քանզի մարդասպանները, կաշառակերները, գեղծարարները մնում են անպատիժ, մինչդեռ դատապարտվում են անմեղ մարդիկ: Ի վերջո նա ձերբակալվում է և դատապարտվում տաժանակրության: Թվում է, թե չարագործն ստանում է արժանի պատիժ, բայց բարձրաստիճան պաշտոնյաների հետ ունեցած սիրային կապերի շնորհիվ Վալիդան նրան ազատում է աքսորից ու պատասխանատվությունից:

Հետաքրքիր և հաջողված են չինովնիկներ Ծունկալայի, Սիվիլի, Բուքաուլի Ջգիրկոչիի, գնդապետ Լեբովի և Վալիդայի կերպարները:

Ծունկալան դատապաշտպան է: Նա վարպետորեն փաստաթղթեր է կեղծում և գործը վարում իր հայեցողությամբ: Նրա համար մեղավոր ու անմեղ չկա. քե՞զ են դիմել՝ պոկիր, կորզիր, քերթիր: Այդպես է վարվում նաև Սևիլը: Նա իրավաբան է. ուսանողական տարիներին աչքի է ընկնում ճառերով ու ճարտասանությամբ: Համալսարանն ավարտելուց հետո էլ շարունակում է գործածել պատվախնդիր, մարդասեր, ազգասիրություն, բարեգործ, հայրենիք և նման բառեր, մինչդեռ իրականում կողոպտիչ է, ավազակ ու բարոյազուրկ, նաև նման կարգի մարդկանց հովանավորը: Նրանցից հետ չի մնում ոստիկանապետ Ջգիրկոչին, որը պատահական զանցանքներն անգամ ուռճացնում է, շորթում հնարավորին չափ շատ՝ արդարության նժարը հակելով այն անձի կողմը, ով ավելի շատ կաշառք է տալիս:

Անասնական կյանք է վարում գնդապետ Լեբովը. նրա հոգուն խորթ են ազնվությունը, խղճմտանքը, սերը և դրական այլ հատկանիշներ: Բարձր դիրք զբաղեցնող մեծահարուստ Լեբովի միակ նպատակը կանայք են, որոնք «տղամարդկանց համար անուշ քաղցրավենիք են»: «Ես սիրում եմ այդ քաղցրավենիքը,- հայտարարում է գնդապետը,- և այնպես եմ հափշտակված, որ ամենահամառ երեխային անգամ չեմ զիջի լաց լինելու մեջ, միայն թե ձեռք գցեմ այդ մուրաբան»: Տարիքն առած Լեբովը ամուսնանում է իրենից գրեթե կրկնակի փոքր ազնվականուհի Վալիդայի հետ: Բայց հարսանիքի հաջորդ օրը սիրահետում է մի դերասանուհու: Գնդապետի համոզմամբ սերը մայիսյան վարդ է, իսկ «վարդը լավ է, քանի դեռ թարմ է, բուրավետ, և գույնն էլ տեղում է: Հենց որ թառամեց, նոր կոկոն պիտի փնտրես»:

Նորահարսը տեսնում է ամուսնու դավաճանությունը և որքան էլ ջանում է սիրալիր լինել, ապարդյուն. ծերուկը շարունակում է գայթակղել կանանց:

Վալիդան այդ կապակցությամբ զրույց է ունենում հոգեմոր հետ: Վերջինս հետևյալ դեղատոմսն է հրամցնում. «Ամուսնություն կոչվածն ու իսկական սերը իրարից շա՛տ հեռու հասկացություններ են: Կնոջ համար ամուսինը սոսկ անուն է: Եթե այր մարդը չի ուզում նկատել զուլալ սրտի նվիրվածությունը, վա՛յ իրեն. ինչ էլ պատահի, թող իրեն մեղավոր ճանաչի: Ի՛նչ ես կորցրել, ի՛նչ ես փնտրում, որդի: Իսկի արժի՞, որ սրտնեղում ես: Դու մեծահարուստ և մեծահամբավ Լեբովի կինն ես. հասարակությունը նրան գնահատում է. փոխարքայի դռները բաց են նրա առաջ: Դա է կարևորը, մնացածը մանրուք է: Դու քո մասին հոգ տար: Վայելի՛ր կյանքը, քանի դեռ զեղեցիկ ես և ջահել, միայն թե այնպես արա, որ արարքներդ ծածուկ մնան»:

Նման խոսքեր լսելուց հետո դեռատի կինը փոխում է նախկին կյանքի դանդաղ և զգուշավոր ընթացքը. առանց հաշիվ տալու աջ ու ախյակ ծանոթություններ է հաստատում, վայելում է ու զվարճանում: «Նրա համար բուրդովին մեկ էր, թե ով էր սիրեկանը՝ պատվախնդիր մարդ թե ավազակ, կաշառակեր թե տգետի տիպար, խեղճուկրակ գրպանահատ, թե օրինազանց, ծեր թե պատանի»: Մի բան էր էական. հոմանիները հլու-հնազանդ կատարեին իր կամքը, և շահ ունենար այդ կապից:

Եթե Երեմիա Ծարբային՝ հոգեվարքի մեջ գտնվող ավատական ազնվականության ներկայացուցչին, հակադրված է չքավոր խավից ելած, բայց առևտրի միջոցով հսկայական կարողության տեր դարձած Բախվա Փուլավան, ապա Վալիդային, որ նույնպես այլասերված ազնվականությունն է մարմնավորում, հակադրված է դեռևս իրավազուրկ, բայց տնտեսապես ու բարոյապես կայուն Էսման՝ նոր խավի ներկայացուցիչը: Այդ սկզբունքով հեղինակը պատկերում է քայքայվող կալվածատիրական կացութաձևի գոտեմարտ-պայքարն ընդդեմ աստիճանաբար հզորացող ու իր դիրքերն ամրապնդող կապիտալիստական հարաբերությունների: Ճիշտ է՝ վեպի գլխավոր հերոսներից կործանվում են թե՛ Երեմիա Ծարբան և թե՛ Բախվա Փուլավան, բայց առաջինի պարտությունը լիակատար է, քանզի երկրորդն ունի իր գործի շարունակողը:

Բախվա Փուլավայի կյանքի պատմությունը բուրժուական հարաբերությունների ծագման ու զարգացման պատմությունն է Վրաստանում: Եվ չնայած Գ. Ծերեթելին այդ կարգերի ջատագովն ու գաղափա-

րախոսն է, այդուհանդերձ, ի տարբերություն քննադատական ռեալիզմի մյուս ներկայացուցիչների, որոնք պարզապես մեղմ հումորով հանդիմանում են հիշյալ խավի օրինազանցությունը, սնափառությունը, գեխությունը և բացասական այլ հատկանիշներ, նա շատ խիստ է քննադատում բուրժուազիայի բարքերն ու շահատակությունները:

Գ. Ծերեթելու երկերում նույնպես բարոյական վսեմ սկզբունքների կրողը միշտ և ամենուր ժողովուրդն է՝ աշխատավոր զանգվածը, տքնաջան հողագործն ու քաղաքի արհեստավորը: Գրողը հավաստում է, որ ժողովուրդն է ազգի հույսն ու ապավենը, նրա կայուն հիմքն ու ապագան կերտողը:

Գեորգի Ծերեթելին իր ստեղծագործության ոգով, գեղարվեստական խոսքի լիցքով, նյութի ընդգրկման խորքով ու անթերի լեզվով ազգային գեղարվեստական միտքը բարձրացրեց նոր աստիճանի:

* * *

Կենդանության օրոք և մահից տասնամյակներ անց Գեորգի Ծերեթելին հայ իրականության մեջ արժանիորեն վայելում էր մեծ հեղինակություն: Նա այն գործիչներից էր, որի ծառայությունները հայ-վրացական հարաբերությունները բարելավելու գործում պատշաճ կերպով լուսաբանել ու զնահատել է հայ մամուլը: Գործունեության սկզբից մինչև վերջ ականավոր գրողն ու հրապարակախոսը նպաստել է հայ և վրաց ժողովուրդների բարիդրացիական կապերի բարելավմանը: «Կվալի» շաբաթաթերթի էջերում պարբերաբար զետեղում էր հայ ժողովրդի պատմությանը, տնտեսությանը, մշակույթին ու կացությանը վերաբերող հոդվածներ ու ակնարկներ, թարգմանաբար տպագրում հայ գրողների երկերից: Մեր երկու ժողովուրդների բարեկամության կոչով հանդես է գալիս 1892 թ. Գրիգոր Արծրունու թաղման ժամանակ. «Պարոն Ծերեթելին ասաց,- գրում է «Իվերիան»,- որ հանգուցյալը անկեղծ կողմնակիցն էր վրացիներիս և հայերի միության, քանի որ երկու ազգերն էլ առանձին-առանձին թույլ են, մինչդեռ միասին կարող են մեծ ուժ ներկայացնել: Այդ պատճառով այս դազաղի առաջ խոսք տանք միմյանց, որ այստեղ պառկած հարգանքի արժանի մարդու պատգամը չենք մոռանա»¹:

Շատ չանցած՝ արդեն «Մուրճն» է գրում նրա մահվան առթիվ. «Գեորգի Ծերեթելին գլխավոր ներկայացուցիչն էր վիրահայկական համերաշխության, որ նա քարոզում էր գրչով ու գործով»²:

¹ «Իվերիան», «Գրիգոր Արծրունու թաղումը», 1892, թիվ 227 (վրաց.):

² «Մուրճ», 1900, թիվ 1, էջ 129:

Ինչպես վկայում են թերթերն ու ժամանակակիցները, նրա անձնական-գաղափարական մտերմությունը հայ հասարակության հետ և Գրիգոր Արծրունու հուղարկավորության ժամանակ արտասանած ելույթը նշանակալից չափով մեղմացնում են «այդ երկու միատեղ ապրող ժողովուրդների միջև սրվող հարաբերությունները»¹ :

Գրողի կենդանության օրոք Դ. Տեր-Դավթյանի թարգմանությամբ առանձին գրքով լույս է տեսնում «Մարդ-Առյուծ» պոեմը: Տեր-Դավթյանը նշում է, որ թարգմանությունը ձեռնարկեց, քանզի «պոեմայի մեջ, որպես հայելիում, արտացոլված է Տաճկաստանի մեր ազգակիցների ներկա կյանքը՝ իր սարսափելի դրությամբ»²: Այդ թարգմանությունը գրախոսել է նաև Լեոն. նա հիշեցնում է երկի սյուժեն՝ ընդգծելով, որ բոլոր ժողովուրդների բանահյուսության մեջ այլաբանորեն փառաբանվում է ազատության գաղափարը: Բռնության դեմ մարտնչում է գերբնական ուժով օժտված որևէ հերոս՝ աջակից ունենալով թե՛ իր ամենի ուժը, թե՛ պայքարի որևէ միջոց՝ հրեղեն ձի, թուր կամ այլ զենք: Լեոն, սակայն, դժգոհում է երկի թարգմանությունից. ոչ միայն նրա համար, որ չափածոն ներկայացվել է արձակ, այլև «լեզուն էլ բավական անհարթ է, աղքատ՝ արտահայտիչ ձևերի կողմից, թեև կան պատկերներ, որոնց կարելի է հաջողված համարել»³:

Գեորգի Ծերեթելու մասին հոդվածներ են տպագրել «Մուրճը», «Արձագանքը», «Մշակը», «Տարազը», որոնց հեղինակներն են Լևոն Մանվելյանը, Դավիթ Տեր-Դավթյանը, Տիգրան Փիրումյանը և այլք:



¹ Գ. Մ. Туманов, Характеристики и воспоминания, Թիֆլիս, 1913, էջ 14:

² «Արձագանք», 1895, թիվ 137:

³ «Մշակ», 1895, թիվ 138: Նույնը՝ Լեոն, Եժ 10 հատորով, Երևան, 1989, հ. 9, էջ 30:

1880-ՎԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

XIX դարի 80-ական թվականներին Վրաստանում նոր թափ է ստանում ազգային-ազատագրական շարժումը: Ցարական կառավարությունը վարում էր ապազգայնացման գիծ. դպրոցներում, սեմինարիաներում, ուսումնարաններում ու քոլեջներում նվազագույնի են հասցվում վրաց լեզվի, գրականության ու պատմության դասաժամերը: Դա, ինչ խոսք, վրդովմունք է առաջ բերում ժողովրդի շրջանում: Հայրենասեր գործիչները բողոքի ձայն են հնչեցնում նման քաղաքականության դեմ և դատապարտում ինքնակալության այն գործակալներին (Կատկով, Չուդեցկի, Էկզարխ Պավլե), ովքեր արշավանքներ էին կազմակերպում ազգային մշակույթի դեմ: Իսկ 19-ամյա մի պատանի՝ Իոսեբ Լադիաշվիլին, դաշունահարում է Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի ռեկտոր Չուդեցկուն, փաստ, որ վկայում է սկիզբ առնող պայքարի նոր ձևի մասին:

Ալեքսանդր Երկրորդի սպանության պատճառով ավելի է ուժեղանում քաղաքական ռեակցիան: Ցարական կառավարությունը ջանում է փոքրաթիվ ազգերին զրկել ինքնուրույնությունից: Դրա դեմ պայքարելու նպատակով և հենց այդ հողի վրա հետաքրքիր երևույթ է տեղի ունենում. «թերգդալեուլիները», որ մինչ այդ հույսեր էին կապում հեղափոխական շարժման հետ, բոլոր խավերին ու դասերին կոչ են անում հաշտվել, համախմբվել և ազգը փրկել անխուսափելի ուժացումից: Փոքր ու մեծ ժողովուրդների տնտեսական և մշակութային առաջընթացը կապելով դասակարգային պայքարի հետ՝ նույնը բացառում էին Վրաստանի համար՝ պատրվակելով, թե Վրաստանում դասային տարբերություններն ու կեղեքումները կարելի է վերացնել առանց ապստամբությունների ու հեղափոխական ցնցումների: Հատկապես Իլիա ճավճավաձեն պնդում էր, որ Վրաստանը բացառություն է հենց նրանով, որ «այստեղ հասարակական ոչ մի խավ արտոնյալ վիճակում չի եղել, ուստի նրանք հիմք կամ պատճառ չեն ունեցել հակադրվելու, նրանց միջև դասակարգային պայքար չէր կարող լինել»: Դասակարգային պայքարը, - շարունակում է ճավճավաձեն, - XIX դարի մենաշնորհն է, բայց Վրաստանում դա էլ այնքան սուր չէ, որ չհաղթահարվի հենց թեկուզ մեկմեկու հանդեպ հարգանք ցուցաբերելով, միմյանց հասկա-

նալով¹: Ինչ խոսք, դա բարի ցանկություն էր, որ կոչված էր միավորելու ազգային ուժերը, ստեղծելու միացյալ ճակատ, բայց նրանց հավատամքը հեղինակ էր, ուտոպիական, քանզի համոզելով ու քարոզելով անհնար էր համախմբել, միավորել շերտավորված և հակադիր բևեռներում գտնվող ուժերը:

«Թերզդալեուլիների» դեմ հանդես եկան լիբերալ նարոդնիկները, որ գրական-հասարակական կյանքի ասպարեզ էին մտել 1870-ականների վերջերին՝ ռուսական համանուն շարժման ազդեցությամբ: Նրանք ցույց տվեցին առաջինների մոլորություններն ու ազգային-սոցիալական գաղափարների թույլ կողմերը: Նրանց տեսակետները համարելով մտացածին՝ գրում էին, որ Ի. Ճավճավաձեն ջանում է ապացուցել, թե իբր ճորտն ու ավատը եղբայրական հարաբերությունների մեջ են եղել և ծառայել են ընդհանուրի շահերին: Լիբերալ նարոդնիկները խորհուրդ էին տալիս ուսումնասիրել հենց թեկուզ գյուղացիության և քաղաքային արհեստավորների ոչ վաղ անցյալը, որպեսզի համոզվեն իրենց քարոզած գաղափարների թե՛ սնանկության և թե՛ վտանգավոր լինելու մեջ: Նարոդնիկական շարժման կողմնակիցները հակադրվում էին նաև այլ հարցերում: Եթե վերջիններս առաջնահերթ էին համարում ազգային ազատագրության և ազգային միաբանության խնդիրները, պայքարում էին այդ ուղղությամբ, ապա նարոդնիկ գրողները կարևորում էին նախ և առաջ տնտեսական հարցերը: Նրանք ժողովրդի չարքաշ կյանքի ու դժբախտությունների պատճառ էին համարում աղքատությունն ու անգիտությունը. «Տնտեսական կեղեքում և մտավոր հետամնացություն. ահա մեր իրականության ու հասարակության երկու զորեղ թշնամիները,- կարդում ենք «Իմեդի» («Հուլյս») ամսագրում:- Բայց դրանք ո՛չ թնդանոթով կարող են վերացնել, ո՛չ էլ գանահարումով. նրանց ո՛չ սվինով զինված մարտիկը կհաղթահարի, ո՛չ էլ մտրակավոր գորոդովոյը: Բարեկեցություն, կանոնավոր կրթություն, արդարադատություն. ահա այն ուժերը, որ կբռնեն մեր ներքին թշնամիների կոկորդներից և կխեղդեն նրանց»:

Նարոդնիկներն ասում էին, որ հարուստները պետք է օգնեն գյուղացիներին, և ստեղծեցին «աղքատասերների» կերպարներ, որոնք եղբայրանում են գեղջուկների հետ և վերականգնում նրանց քայքայված տնտեսությունը (Եկ. Գաբաշվիլի, «Հաղթած Նիկոն», Ն. Լոմոուրի, «Բոլոր կողմերից»):

¹ Ի. Ճավճավաձեն, ԵԼԺ, հ. 6, Թբիլիսի, 1956, էջ 56-57 (վրաց.):

1880-ական թվականներին համակողմանի զարգանում է վրաց գրականությունն ու արվեստը: Այդ տարիներին նորանոր երկեր են ստեղծում Ի. Ճավճավաձեն, Ա. Ծերեթելին, Գ. Ծերեթելին, հասարակական բեղուն գործունեությունն են շարունակում Ն. Նիկոլաձեն, Կ. Լորթքիփանիձեն, Ս. Մեսխին, Ի. Մաչաբելին, գրական ասպարեզ են մտնում Ալ. Ղազբեգին և Վաժա Փշավելան:

Վերելք է ապրում թատերական արվեստը. երևան են գալիս նոր ուժեր՝ հանձինս Ա. Ցագարելիի, Վ. Գունիայի, Կ. Մեսխիի, Վ. Աբաշիձեի: Ա. Ծերեթելին, Ալ. Ղազբեգին, Վաժա Փշավելան, Դավիթ Էրիսթավին, պիեսներ ու դրամաներ գրելուց բացի, թարգմանում և բեմադրում են եվրոպացի և ռուս դրամատուրգների լավագույն երկերը: Այդ բնագավառում պատմական է Գաբրիել Սունդուկյանի առաքելությունը. նա, դառնալով հայ ռեալիստական դրամատուրգիայի ու թատրոնի հիմնադիրը, անգնահատելի ծառայություն է մատուցում նաև դրկից ժողովրդի թատրոնի զարգացմանը: Ստեղծում է հասարակական ու հոգեբանական կշիռ ունեցող երկեր, վեր է հանում սոցիալական-քաղաքական երևույթների ծագման պատճառները, հարստացնում խաղացանկը: Նրա պիեսները աննախընթաց հաջողությամբ բեմադրվում էին վրաց բեմերում, նվաճում ժողովրդականություն: Իսկ ամեն ներկայացման առթիվ քննադատները հանդես են գալիս մամուլում, առավելապես՝ դրվատանքի խոսքերով: Նրանցից մեկը՝ վրաց թատերական արվեստի անվանի գործիչ Կոտե Դիփիանին, գրում է, որ Սունդուկյանն աշխուժացրեց վրաց հասարակությանը, ուժգին թափ հաղորդեց վրաց գրականության առաջընթացին. նրա ազդեցությամբ երևան եկավ դրամատուրգների, թարգմանիչների ու փոխադրողների մի ամբողջ սերունդ. «Հանդես եկաք Դուք, և վրաց թատրոնի համար սկսվեցին նոր ժամանակներ, սկսվեց նոր կյանք: Արթնանալով լեթարգիական քնից՝ վրա հասավ վերածննդի շրջանը: Այդ վերածննդով թատրոնն ամբողջությամբ պարտական է Ձեզ, քանզի Դուք, Ձեր ստեղծագործություններով թատրոնին նոր կյանք պարգևեցիք և նրա մարած զարկերակին հնարավորություն ընձեռեցիք գործել նոր ուժով»¹:

Հայ դրամատուրգն իր պատվավոր տեղն ունի վրաց թատերական արվեստի պատմության մեջ:

¹ «Իվերիա», 1901, թիվ 92:

Գրաքննությունը խստացնելու պատճառով լրագրությունը չի փայլում հրապարակային ելույթների, գեղագիտական-գաղափարական սրությամբ: Բայց և այնպես հիմնադրվում են թերթեր ու ամսագրեր, որոնց խմբագիրները ջանում են բարձրացնել տպագրվող նյութերի մակարդակը:

Գրական քննադատությունը ևս չուներ նախորդ տասնամյակի մարտնչող ոգին, աչքի չէր ընկնում հրատապ հարցադրումներով ու ժանրային բազմազանությամբ: Այդ բանից անհանգստացած՝ Ի. Շավ-ճավաձեն հանդես եկավ «Պատճառն ինչ է, որ քննադատություն չունենք» (1887) հոդվածաշարով:

Գրողներն առանձնակի ուշադրություն էին դարձնում մանկական գրականությանը. մեծ են Ա. Ծերեթելու, Ն. Լոմոուրիի, Եկ. Գաբաշվիլու, Դ. Էրիսթավիի, հատկապես անվանի մանկավարժ Ի. Գոգեբաշվիլու (1840-1912) ծառայությունները: Լույս են տեսնում «Նորբաթի» («Ընծա») և «Ջեջիլի» («Ցողուն») մանկական ամսագրերը:

Ձգալի աշխատանք է տարվում ժողովրդական բանահյուսության նյութերը հայտնաբերելու, հրատարակելու և ուսումնասիրելու ուղղությամբ:

Նոր թափ է ստանում գեղարվեստական գրականության թարգմանությունը. Շեքսպիր, Բոկաչո, Շիլլեր, Մոլիեր, Դիկենս, Բայրոն, Բալզակ, Սանդ, Յյուզո, Պուշկին, Գոգոլ, Տուրգենև, Տոլստոյ. ահա այն գրողները, որոնց ստեղծագործությունները մայրենի լեզվով սկսում է կարդալ վրաց ընթերցողը: Թարգմանական արվեստի բնագավառում աչքի է ընկնում Իվանե Մաչաբելին (1854-1892), նրա՝ շեքսպիրյան երկերի թարգմանություններն առ այսօր մնում են անգերազանցելի:

Վրաց գործիչները շարունակում են բարեկամական կապերի ընդլայնումը հայ, ռուս, ուկրաինացի մտավորականների հետ: Վրաց մամուլում ուշագրավ նյութեր են տպագրվում հատկապես հայ ժողովրդի պատմության, տնտեսության, մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ, լուսաբանվում են հայ հասարակական մտքի տեղաշարժերը, հայ գրողների կյանքն ու գործունեությունը:

«Թերգղալեուլիներից» հետո գրական ասպարեզ են մտնում նարոդնիկ գրողները, որոնցից աչքի ընկան Ն. Լոմոուրին, Եկ. Գաբաշվիլին, Ս. Մգալոբլիշվիլին, Ա. Փուրցելաձեն: Նրանք վերարտադրում են հետռեֆորմյան գյուղի կյանքը, կարևորում կրթված մտավորականների դերը, ովքեր կոչված էին մեկնելու գյուղ և բնակչությանն ազատելու ցեցերի ու թավաղների խարդավանքներից, անցանկալի

տարրերից, լուսավորություն էին տարածելու, բայց ի տարբերություն ռուս նարոդնիկ գրողների՝ պահանջում էին չընդվզել, բռնությանը բռնությամբ չպատասխանել, այլ համբերել և խիղճ ու գութ առաջ բերել տերերի ու չինովնիկների հոգում:

Վրաց նարոդնիկ գրողները մնացին նատուրալիստական կենցաղագրության, հրապարակախոսության, լուսանկարչական պարզունակ պատճենման ու քարոզչականության շրջանակներում: Թերևս միայն Լոմոնոսովի և Գաբաշվիլու պատմվածքներն ունեն ուսուցողական նշանակություն:

ՆԻԿՈ ԼՈՍՈՈՒՐԻՆ ծնվել է 1852 թ., Միջին Քարթլիի Արթո գյուղում: Գրել-կարդալ սովորում է տեղի քահանայի մոտ: Այնուհետև հոգևոր միջնակարգ և բարձրագույն կրթություն է ստանում Գորիի ուսումնարանում, Թիֆլիսի սեմինարիայում և Կիևի ակադեմիայում:

1879 թ. վերադառնում է հայրենիք և ավելի քան երեսունհինգ տարի դասավանդում վրացական դպրոցներում՝ միաժամանակ ծավալելով գրական բեղուն գործունեություն: Վախճանվել է 1915 թ.:

Նիկո Լոմոնոսովն գրել սկսել է 1870-ականների վերջերից: Առաջին ոտանավորներում շոշափում է ազգային-ազատագրական թեմաներ, որոնք ձևի և բովանդակության տեսակետից անկատար էին:

Նրա գրական կարողությունները ի հայտ եկան արձակում: Գրել է մի շարք պատմվածքներ, պատկերել աշխատավորական զանգվածների, հատկապես գյուղացիության ծանր վիճակը, սոցիալական անհավասարությունն ու աղաղակող հակասությունները: Նա լավ գիտեր այդ կյանքը. զգում էր, որ ռեֆորմից հետո էլ գյուղացու կացությունը ոչնչով չփոխվեց, որ նա չարաչար խաբվեց ու մնաց ձեռնունայն:

Գրողը ցույց տվեց, որ գյուղացիների աղքատության պատճառը ոչ միայն կապիտալիզմի արագ զարգացումն է կամ իշխողների ճնշումը, այլև բնակչության հետամնացությունը: Ահա ինչու գյուղին նվիրված երկերում քննադատում է սնահավատությունը, նախապաշարմունքները, հնացած սովորույթներն ու դոգմաները, գրքացների ու հոգևորականների անբարո արարքները, որոնց բախվում են խավարի մեջ խարխափող մարդիկ և դժբախտանում («Քաջանա», «Զրահարսը»): Նա ջանում է համոզել, որ ջրահարսներ, սատանաներ, չար ոգիներ չկան, որ այդ ամենը խավարամիտ մարդկանց հնարածն է:

Իբրև համոզված նարոդնիկ՝ Ն. Լոմոնոսովն լուսավորություն է քարոզում, այլապես, ասում է նա, գյուղացին կուլ է գնում թավադների, չինովնիկների, վաշխառուների ու կուլակների որկրամոլությամբ: Նա երիտասարդությամբ կոչ է անում կրթություն ստանալուց հետո մեկնել

գյուղ, դպրոցներ բացել, հոգ տանել «աղքատության ու խավարի մեջ տառապող եղբայրների մասին»:

Տեղական իշխանությունն ու սեմինարիայի (որտեղ ուսուցչություն էր անում Լոմոուրին) վարչակազմը ուշիուշով հետևում էին հեղինակություն վայելող գրողի ու մանկավարժի գործունեությանը և ամեն ինչ անում, որ նա հեռանա բնագավառից: Քինոտ ու նենգամիտ մարդիկ դառնացնում էին, սահմանափակում գործունեության շրջանակները և խանգարում մտաիղացումների իրականացմանը: Բայց նա մարտնչում և շարունակում էր հանրօգուտ գործունեությունը:

Ն. Լոմոուրին թեև ճշմարտացիորեն արտացոլել է գյուղական կյանքի դժվարությունները, աշխատավորության տնտեսական և իրավական ծանր վիճակը, բայց չի պատկերել այնպիսի հերոսներ, որոնք կհամարձակվեին պայքարել իրենց իրավունքների ու արժանիքների համար:

ԵԿԱՏԵՐԻՆԵ ԳԱԲՍՇՎԻԼԻՆ ծնվել է 1851 թ. հունիսի 16-ին, Գորիում: Սովորում է Թիֆլիսի գերմանական դպրոցում: 1863-ին ընդունվում է ֆրանսուհի Ֆաբրիի՝ այդ տարիներին լավ համբավ վայելող պանսիոն, որտեղ դասավանդում էին որակավորում ունեցող մանկավարժներ: 1868-ին Գաբաշվիլին վերադառնում է ծննդավայր և զբաղվում ուսուցչությամբ: Առանց վարձատրվելու կրթում է չքավոր ընտանիքների երեխաներին: Մարդկանց օգտակար լինելու ցանկությամբ տոգորված հարում է նարոդնիկական հոսանքին: Շրջագայում է գավառներում, գյուղացիներին բացատրում ուսման կարևորությունը: Նպատակին հասնելու համար գրում է մաև հոդվածներ («Գյուղացու կարծիքը դպրոցի մասին», «Երջանկություն»):

1873 թ. Գաբաշվիլիների ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս: Արդեն անուն վաստակած երիտասարդ գրողը ծանոթանում է մեծերի՝ Ի. Ճավճավաձեի, Ա. Ծերեթելու, Գ. Ծերեթելու, Յա. Գոգեբաշվիլու, Պ. Ունիկաշվիլու և այլ գրողների, մանկավարժների ու հասարակական գործիչների հետ, մասնակցում գրական խմբակների ու տարբեր ընկերությունների աշխատանքներին, մամուլում պարբերաբար տպագրում է հոդվածներ, ակնարկներ ու պատմվածքներ:

1895 թ. Գաբաշվիլին սեփական տունը դարձնում է արիեստանոց և չքավոր կանանց կարուծև սովորեցնելով հանդերձ՝ դասավանդում հանրակրթական առարկաներ: Յուրօրինակ այդ դպրոցը գոյատևեց քսանհինգ տարի: Նա արձագանքում է մաև 1905 թ. հեղափոխական շարժումներին. կանանց կոչ է անում մասնակցել ինքնակալության դեմ պայքարին: Գաբաշվիլին վախճանվել է 1938 թվականին:

Գաբաշվիլին մերկացրել է գյուղական ցեցերին, վաշխառուներին, չարչիներին, ցարական աստիճանավորներին («Պատկեր», «Սիրավեպ Դիդիսկիում»), իր ծայրն է հմչեցրել սնոտիապաշտության, քարացած կենցաղի, մարդու ազատությունը կաշկանդող երևույթների դեմ. պախարակել է ծնողների բռնությունը զավակների նկատմամբ, բռնություն, որ հաճախ մղել է հանցագործությունների («Օրենա և Քուչե»), կործանել մատաղ սրտերի երջանկությունը:

Ստեղծելով գյուղափրկիչ մտավորականների և «զղջացած ազնվականների» կերպարներ՝ գրողը պարտավորեցնում է գործունյա երիտասարդներին մեկնել գյուղ և գյուղացուն արթնացնել տևական նիրհից, գիր ու դպրություն, բժշկություն, հողագործություն ուսուցանել, գոնե մասամբ թեթևացնել չարքաշ աշխատավորի ծանր լուծը («Թամարի մխիթարությունը», «Գյուղի ուսուցիչը», Հաղթանակած Նիկոն»):

Հանդես գալով կնոջ իրավունքների պաշտպանի դերում («Սիրավեպ Դիդիսկիում», «Կոնա»)՝ Գաբաշվիլին արծարծում է կանանց ազատագրման հարցը: Նրա համոզմամբ՝ տղամարդը, հեգեմոնիան վերցնելով իր ձեռքը, կնոջը փաստորեն դարձրել է իր քնահաճույքները բավարարող առարկա, զրկել հասարակական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունից և բանտարկել տան պատերի մեջ: Մեծ տեղ հատկացնելով նոր ընտանիքի, նոր ապրելաձևի հարցերին՝ հեղինակը, սակայն, չի կարողանում ստեղծել իր նպատակների իրականացման ու իրավունքների համար պայքարող կին հերոսներ: Նա պարզապես ուզում է ասել, թե տղամարդու գործադրած բռնության ու կոպտության դեմ կինն ստիպված դիմում է խորամանկության ու խարդավանքների. նրա բարոյական անկման համար էլ մեղավոր է տղամարդը:

Գաբաշվիլին ևս ժողովրդի աղքատությունն ու հետամնացությունը համարում էր վերնախավի և առանձին անհատների ապաշնորհության հետևանք, իբր ամեն ինչ այլ ընթացք կստանա, եթե ազնվականները զղջան, գիտակցեն իրենց պարտքն ու պարտականությունը հանրության առաջ:

Տալով գյուղական իրականության ռեալ պատկերը («Դաթիկոյի մենախոսությունը», «Մագդանայի կապուտակը», «Թինայի լեկուրին», «Ղվինիան սատկեց»)՝ Գաբաշվիլին չկարողացավ ստեղծել լիարյուն կերպարներ, պատմվածքներին տալ գաղափարական անհրաժեշտ բովանդակություն: Դրանք զգալի թերություն ունեն մաև խոսքարվեստի տեսակետից: Այդուհանդերձ կենսական նշանակություն ունեցող մի շարք հարցերի անդրադառնալու շնորհիվ նրա հաջողված երկերը ունեն ճանաչողական արժեք:

* * *

XIX դարի 80-ական թվականներին վրաց գրական կյանքի ամենափառավոր էջերը գրեցին Ալեքսանդր Ղազբեգին և Վաժա Փշավելան: Ալ. Ղազբեգին ազգային դասական վիպասանության անզուգական ներկայացուցիչն է, իսկ Վաժա Փշավելան՝ վրաց էպիկական պոեզիայի չգերազանցված վարպետը:





Ալեքսանդր Ղազբեգին յուրովի շարունակեց վրաց դասական գրական ավանդները՝ ստեղծելով բարձրարժեք երկեր:

Ծնվել է 1848 թ., Ստեփանծմինդա գյուղում, գեներալ Միխեիլ Ղազբեգիի ընտանեկան հարկի տակ: Տանը գրել-կարդալ սովորելուց հետո՝ 1859 թ., հաճախում է Թիֆլիսի մասնավոր պանսիոններից մեկը: 1861 թ. պատանին տպագրում է առաջին ոտանավորը: 1863-1865 թթ. ուսումը շարունակում է գիմնազիայում:

1866 թ. վախճանվում է Ղազբեգիի հայրը: Արդեն սնանկացած ընտանիքի ամբողջ

հոգսն ընկնում է 18-ամյա Ալեքսանդրի ուսերին: Ուսման ծարավը նրան տանում է Մոսկվայի Պետրովո-Ռազունովսկու գյուղատնտեսական ակադեմիա: Սովորում է երեք տարի: Այդ ընթացքում ուսումնասիրում է ռուս և եվրոպական գրականություն, կատարում է թարգմանություններ: 1870 թ. վերադառնալով հայրենիք՝ բարձրագույն կրթություն ստացած, արվեստի ու գրականության ջերմ երկրպագու, գրող Ղազբեգին ընտրում է հովվի աշխատանքը՝ արժանանալով հարազատների, բարեկամների ու ընկերների անարգանքին: Իր իսկ խոսքերով՝ «համարյա ամբողջ Քարթլիի ազնվականությունը վիրավորվել էր իմ վարմունքից և խստորեն դատապարտում էր ինձ»: Բայց նա ուներ նպատակ ու ծրագիր. մոտիկից շփվել ժողովրդի հետ, ծանոթանալ նրա առօրյային, սովորույթներին ու հոգսերին, ուսումնասիրել բանահյուսությունը: Իզուր չէ, որ ստնտու կնոջը գրած նամակում շեշտում է, որ իր մեջ եղած լավով նրան է պարտական. «Սիրելի՛դ իմ, Նինո, քո խոսքերից ոչ մեկը չի կորել, բոլորն անթեղված են իմ հոգում... Այժմ՝ այսքան ժամանակ անցնելուց հետո, երբ արդեն կարող եմ ի մի բերել իմ գործունեության արդյունքները, հպարտությամբ կասեմ, որ եթե քո սանիկի հոգում մնա-

ցել է որևէ խելացի և արժեքավոր բան, ապա միայն քո դաստիարակության շնորհիվ, որի համար իր երախտագիտությունն է հայտնում քո Ակակիա Մոջխութարիձեն»^{*}:

Լեռներում անցկացրած կյանքը նկարագրել է «Յովվի հուշեր»-ում:

1879-ին Ալ. Ղազբեգին մեկնում է Թիֆլիս: Նրա կյանքում սկիզբ է առնում նոր շրջան: Նետվում է թատերական հորձանուտ, հանդես է գալիս իբրև ասանունքող, դերասան, ռեժիսոր, գրում է պիեսներ, դրամաներ, կատարում թարգմանություններ:

Չնայած բեմադրվում էին դրամատիկական երկերը, թերթերում, հանդեսներում լույս էին տեսնում հոդվածներն ու մեկը մյուսից սքանչելի գեղարվեստական երկերը, այդուհանդերձ գրողն ապրում էր ծայրաստիճան սուղ պայմաններում: Իշխանական տոհմից սերած զավակը կարող էր ապահով կյանք վարել, բայց կանոնի ընտրեց նահատակի ուղին և որպես ծանր խաչ կրեց գրողի աստվածատուր կոչումը: Ընդամենը չորս-հինգ տարի տևեց Ալ. Ղազբեգիի գրական գործունեությունը: Աղքատությունը, հալածանքները, բարոյական ճնշումը, գերլարվածությունն ու հոգեկան ծանր ապրումները տաղանդավոր գրողին հասցնում են խելագարության: 1885 թ. երևան են գալիս հոգեկան խանգարման առաջին նշանները: 1890-ին միայնակ ու անօգնական վիպասանին տեղափոխում են հոգեբուժարան, որտեղ և վախճանվում է 1893 թ. դեկտեմբերի 10-ին:

Ալեքսանդր Ղազբեգիի ստեղծագործական կյանքը բաժանվում է երկու շրջանի՝ 1870-1880 թթ., երբ նա գրում է պիեսների զգալի մասը, և 1880-1885 թթ., երբ ազգային գրական անդաստանը հարստացնում է «Էլզուջա», «Դաստիարակը», «Յայրասպանը», «Խևիսբերի Գոչա», «Էլիսո» և այլ երկերով:

Ընդարձակ է գրողի ստեղծագործությունների ոլորտը. գրեթե բոլոր երկերում նա ձգտում է ցույց տալ XIX դարի 80-ականների Վրաստանի հասարակական կյանքը, սոցիալական ու ազգային կեղեքման դեմ մղված պայքարը: Այդ նպատակով կերտում է անհաշտ հերոսների կերպարներ, որոնք արտահայտում են ժողովրդի հոգսերը, խոհերն ու իղձերը: Վիպասանն սկզբից ևեթ հանդես է բերում երկու իրարամերժ խավեր. մի կողմից՝ ժողովուրդը և նրա շահերի պաշտպան հերոսները, մյուս կողմից՝ նորագույն պայմաններում օրեցօր ուժեղացող հարստահարիչներն ու նրանց արարքները քողարկող պետական չինովնիկները:

^{*} Ալ. Ղազբեգի, Երկեր, հ. 5, Թբիլիսի, 1950, էջ 209 (վրաց.): Չարաճճի բնավորության պատճառով փոքրիկ Ալեքսանդրին մտերմորեն կոչել են մոջխութարիձեն՝ կռվարար: 260

Հաճախ ժողովրդի և նրա ծոցից ելած հերոսների պայքարն անմիջակա-
նորեն ուղղվում է ինքնակալության և բյուրոկրատական ապարատի
աշխատողների դեմ: Այստեղ սոցիալական ու ազգային-ազատագրա-
կան խնդիրները միաձուլվում են: Բայց դեպքերի զարգացմանը զուգըն-
թաց երևան են գալիս այլ մոտիվներ ևս, ինչպես՝ սիրո, ասպետության,
բարեկամության, և կազմում կուռ ամբողջականություն:

Ղազբեգիի դրական հերոսները ներկայանում են իբրև արդարու-
թյան ու հավասարության, բարեկամության ու սիրո համար մարտնչող
ասպետներ: Գրողն զգալի տեղ է հատկացրել խնջի ու մթիուլեթցի երի-
տասարդ մարդկանց ճակատագրերին, նրանց հոգեվիճակների ու
զգացմունքների բազմակողմանի բացահայտմանը: Հարկ է նշել, որ եթե
նրանք կամա թե ակամա խախտում են համայնքի օրենքները (սպանու-
թյուն, աղջկա կամ կնոջ առևանգում, արյան վրեժ և այլն), ապա գործը
քննում է թեմի ժողովը և կայացնում անբեկանելի վճիռ: Կարգազանցը
անմռունչ ենթարկվում է այդ վճռին՝ մնալով գրված ու չգրված օրենք-
ների շրջանակներում:

«Էլզուջա» վիպակը 1881 թ. տպագրվել է «Դրոտեբա» թերթում,
1884-ին՝ առանձին գրքով, բայց գրաքննությունը բռնագրավել և այրել
է ամբողջ տպաքանակը: Այն սկսվում է առաջաբանով, որ չի առնչվում
երկի սյուժետային գծին, բայց արտահայտում է ճորտատիրական ռե-
ֆորմի նկատմամբ հեղինակի կարծիքը:

1864 թ., երբ երկրում տարածվում է ճորտատիրությունը վերաց-
նելու հրահանգը, գյուղացիները հույս են փայփայում, որ վերջապես
կբարելավվի իրենց վիճակը, հող և ազատություն ձեռք կբերեն, կթե-
թևանան ծանր հարկերից, մինչդեռ ֆեոդալները սրտի դողով սպասում
են, թե ինչով է վերջանալու հարյուրամյակներ տևած կարգերի փոփո-
խությունը: Շատ չանցած՝ պարզվեց, - գրում է Ղազբեգին, - որ առաջին-
ների ուրախությունը վաղաժամ էր, իսկ ավատատերերի անհանգստու-
թյունը՝ անտեղի, քանզի իրադրությունը ոչնչով չփոխվեց, եթե ինչ-որ
տեղաշարժ եղավ, ապա հօգուտ ճորտատերերի: Բայց եթե առաջաբա-
նի իրադարձությունները տեղի են ունեցել XIX դարի 60-ականների
կեսերին, ապա վեպի գործողությունների ժամանակը դարասկիզբն է,
հիմքը՝ 1804 թ. Մթիուլեթի ապստամբությունը: Միմյանց դեմ պայ-
քարում են ժողովրդի ներկայացուցիչ Էլզուջան և ցարական կառա-
վարության ներքին մարմինների ժառանգ Գագի Չոփիկաշվիլին: Գա-
գին անկախ Վրաստանի կողմնակից է եղել, բայց երբ Վրաստանը մտել
է Ռուսաստանի հովանավորության տակ, նա փոխել է իր «քաղաքական
հավատամքը», դարձել է ցարական ոստիկանության սպա և անխնա

տանջել ու կեղեքել է մարդկանց:

Գագի Չոփիկաշվիլու՝ Մթիուլեթի կառավարչի տանը պահվում են գերված կանայք, որոնց մեջ՝ մի չնաշխարհիկ չերքեզուհի: Վերջինս և նրանց հսկողը՝ երիտասարդ մոխևցի էլզուջան, սիրահարվում են. սերը փոխադարձ է, բայց անհաղթահարելի է պատնեշը, որ կա նրանց միջև. նրանք ամուսնանալ չեն կարող: Էլզուջան և Մզաղոն որոշում են փախուստի դիմել՝ քաջ գիտակցելով, որ դրանով մահացու վիրավորանք են հասցնում Չոփիկաշվիլուն, իսկ բռնվելու դեպքում իրենց սպասում է խստագույն պատիժ: Այնուամենայնիվ նրանք դիմում են այդ քայլին:

Լեռնականների սովորույթի համաձայն՝ էլզուջայի արարքը թեմը պիտի քննարկի և վճիռ կայացնի: Էլզուջան համաձայնում է, բայց քինախնդիր, բիրտ ու եսամուլ է գավառապետը: Երբ հաշտարարի առաքելություն ստանձնած Մաթիան նրան հուշում է չգրված, բայց ուսանելի մի կանոն, ըստ որի պատվարժան թշնամիների միջև միջնորդը մամուսը պիտի լինի, Գագին մերժում է՝ հայտարարելով, թե անձամբ է հեղելու հակառակորդի արյունը: Բախումն անխուսափելի է: Առաջին իսկ ընդհարման ժամանակ կողմերը զոհեր են տալիս, սպանվում է նաև Գագի Չոփիկաշվիլին: Նոր կառավարիչ է նշանակվում Սիմոն Չոփիկաշվիլին, որը հիմնավոր պատճառներով իր ազգականի վրեժը պիտի առներ, լավագույն դեպքում՝ պաշտոնից ու պարտականությունից ելնելով, զինյալ ջոկատի գլուխ անցած, ոչնչացներ կամ օրենքի ձեռքը հանձնելու հանդուգն երիտասարդին: Բայց նա ոչ միայն դա չի անում, այլև ամեն կերպ օգնում է նրան, որ պատժիչ ջոկատների ձեռքը չընկնի: Այսպես՝ երբ կարգադրվում է հայտարարություն փակցնել առ այն, որ էլզուջային սպանողը կպարզևատրվի քսանհինգ արծաթով, կենդանի բռնողը՝ քառասուն, Չոփիկաշվիլին հայտարարությունը փակցնում է վիրավոր էլզուջային ապահով տեղ թաքցնելուց հետո միայն:

Գավառապետը երբեք չի չարաշահում իր պաշտոնը, իսկ դա ավելի է մեծացնում նրա հեղինակությունը: Իր խելացի խորհուրդներով հաճախ է կանխում միջցեղային ընդհարումները: Երբ ճնշվում է կառավարության դեմ բռնկված հերթական ընդվզումը և դարձյալ բախումներ են սպասվում, նա ժողովրդի մեջ է, ժողովրդի հետ. «Ժողովուրդ,- սկսեց նա,- ես կարծում եմ, որ ձեր մեջ չի գտնվի մեկը, որ ասի, թե Սիմոնը վախենում է մահից, Սիմոնն իրեն ավելի է սիրում, քան երկիրն ու ժողովրդին: Երդվում եմ ամենասուրբ, ամենաթանկ անուններով, որ այսօր եթե իմ ընտանիքի անդամների զոհաբերումով հնարավոր լինի փրկել հայրենիքը, չեմ խնայի, ես իմ ձեռքով մատաղ կանեմ նրանց, բայց դա օգուտ չի բերի հայրենիքին, ոչ էլ մենք կարող ենք օգնել, քանի դեռ

միավորված չենք, համախմբված չենք գործում: Իսկ այսպես, հատված-հատված ըմբոստանալով ու նահատակվելով, դժվար թե արդյունքի հասնենք»:

Հուզիչ է և այն տեսարանը, երբ համազյուղացիները ներկայանում են մահամերձ կառավարչին և խնդրում, որ էլզուջային ու Սզաղոյին թույլ տա հայրենի գյուղ վերադառնալ: Նա ոչ միայն համաձայնում է, այլև որդեգրում և իր որջ ունեցվածքը կտակում է նրանց: Իսկ երբ ծանր վիրավոր՝ գործերը հանձնում է իրեն փոխարինողին, խնդրում է ամեն ինչ բարդել իր վրա, ինքն ուրախությամբ կստորագրի, միայն թե ապստամբներին ու ժողովրդին չնեղեն, չգրգռեն, արյուն չհեղեն:

Սիմոն Չոփիկաշվիլին Ալ. Ղազբեգիի կերտած միակ դրական պաշտոնյան է, որ, անշուշտ, նաև հեղինակի գաղափարակիրն է:

Վեպի գլխավոր հերոսը 22-ամյա էլզուջան է՝ հաղթամարմին, գեղեցիկ, արիասիրտ, առաքինություններով օժտված, որ հետևողական պայքար է մղում իր իրավունքների ու անարդար երևույթների դեմ: Ինչպես ընդունված է ասել, նա հասունանում է ընթերցողի աչքի առաջ: Էլզուջան համակրելի է դառնում առաջին իսկ քայլով. փաստորեն նա Սզաղոյին փրկում է անպատվությունից, երբ վերջինիս բերում են Գագի Չոփիկաշվիլու տուն: Թերևս այդ հոգատար վերաբերմունքն էլ երախտիք ու գորովանք է ծնում աղջկա հոգում, որ շուտով վերածվում է անշեջ սիրո:

Հաճախ էլզուջան ստիպված է լինում ընտրություն կատարել անձնականի ու ընդհանուրի միջև. նա առանց բացառության վճռում է հոգուտ ընդհանուրի: Այսպես՝ նա պետք է որոշի՝ պատերա՞զմ գնա, թե՞ սիրած աղջկա մոտ, որին վաղուց չի տեսել և մաշվում է կարոտից: Էլզուջան կարևորում է առաջինը՝ մեծ անպատվություն համարելով, երբ նման դեպքերում տղամարդը հանգիստ ու ապահով անկյուն է փնտրում: Նա պատրաստ է կյանքը զոհաբերել հանուն բարեկամի, ընկերոջ, երկրի ու ժողովրդի: Հերոսական է և մահը. ռուս զինվորները շրջապատել են նրա տունը, որտեղ նաև հավատարիմ ընկերն է՝ Մաթիան: Վերջինս, պաշտպանելով էլզուջայի ընտանիքի պատիվը, ընկնում է անհավասար մարտում: Ստերիմներն ու հարևանները էլզուջային խորհուրդ են տալիս թաքնվել, որովհետև նրան անխուսափելի մահ է սպասում, բայց նա մերժում է. չէ՞ որ ինքը եղբայրության ուխտ է արել Մաթիայի հետ, ուստի, թեկուզ սեփական կյանքի գնով, պարտավոր է նրա վրեժն առնել: Եվ նետվում է մարտի: Մի քանի զինվորի հրացանագարկ անելուց հետո էլզուջան զոհվում է:

Մզադոն այն զոհերից է, որոնց անպատվում ու նվաստացմում են երկրի նոր տերերը՝ մովրովները, յասավուլները, կառավարիչները, տանուտերերը: Աղջիկը ջանում է պահպանել իր անմեղությունն ու արժանապատվությունը, ջանում գուր ու խղճմտանք առաջացնել իրեն տանջող պաշտոնյաների հոգում, բայց կյանքը, որ դժոխային իրականությունից շատ չի տարբերվում, դժբախտացնում է նրան: Սիրած տղայի հետ անցկացրած երանելի մի քանի օրերին հաջորդում է տանջանքների անվերջ շղթան, մինչդեռ նրա խիղճն ու ցանկություններն այնքան ներդաշնակ էին, բնավորությունն ու ձգտումներն այնքան համեստ ու մարդկային, որ թվում է, թե ծնվել էր երջանիկ ապրելու համար:

Մզադոն Ալ. Ղազբեգիի ստեղծած կանացի հմայիչ կերպարներից է: Էլզուջայի և Մզադոյի սերը ողբերգական վախճան է ունենում այն պարզ պատճառով, որ նրանք բախվում են սև ու մութ ուժերին, որոնք խաթարում են նաև ժողովրդի կյանքը: Այս առումով երիտասարդ զույգի ողբերգությունը սերտորեն կապվում է պատմական տեղաշարժերի և ազգային ճակատագրի հետ:

* * *

Ալեքսանդր Ղազբեգիի «Խևիսերի Գոչա»-ն ազգային պատմավեպի գլուխգործոցներից է: Նրանում պատկերված է Արևելյան Վրաստանի հասարակական կյանքը պատմական որոշակի ժամանակահատվածում: Գործող անձերից մեկը՝ Նուզգար Էրիսթավին ապրել է XVI դարի երկրորդ կեսին: Վրաց պատմիչները վկայում են, որ Նուզգար Էրիսթավին Խևին գրավելու և բնակիչներին հպատակեցնելու նպատակով բազմիցս ասպատակություններ է կատարել, նրա մի մասը միացրել իր տիրույթներին, բայց ստրկացնել մոխսեցիներին չի հաջողվել:

Վեպն սկսվում է հարսանյաց հանդեսի նկարագրությամբ. հեծյալների մի խումբ աղմուկ-աղաղակով մոտենում է Ղանոբա գյուղին: Ե՛վ հյուրերը, և՛ հյուրընկալները երիտասարդներ են՝ «մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից առնական»: Գուգուա Փիչիտաուրիի հարսանիքն է: Խաչեղբայրը Գոչայի տղան է՝ Օնիսեն: Որպես խաչեղբոր՝ նրան ուղեկցում են հարսի սենյակ: Երբ նա բռնում է աղջկա ձեռքը, մարմնի մեջ անմեկնելի սարսուռ է զգում, այլայլվում է: Մի պահ նա կարողանում է զսպել հոգու խռովքը և շարունակել իր պարտականությունը՝ ասելով. «Դու՛ քույր, ես՛ եղբայր», բայց երբ կրկին ասի մեջ է առնում նույն փաղաքուշ ձեռքը՝ հուզմունքից չի կարողանում ավարտել ասելիքը. «Խոսքն ընդհատվեց, դողաց ամբողջ մարմնով և երերաց հարբածի պես»: Դրությունն ավելի տագնապալից է դառնում, երբ եկեղեցու

ճանապարհին Ձիծիայի հետ նստում է նույն կառքը (Ալ. Ղազբեգին ծանոթագրում է, որ մինչ պսակի օրհնությունը փեսային իրավունք չէր վերապահվում մոտենալ հարսնացուին, այդ ընթացքում նրան ուղեկցում էր միայն խաչեղբայրը): Առանձնության մեջ աղջկա սիրաբաղձ հայացքն էլ քաջալերանք էր պարունակում և հարսանքավորներից հուսալիորեն քողարկված՝ գրկախառնվում են, տարփալից համբուրվում: Բոպեներ անց, սակայն, մակարներից մեկի մտրակի շաչունից սթափվում զգաստանում են:

Սկիզբ է առնում Օնիսեի և Ձիծիայի՝ Գուգուայի հարսնացուի սիրո դրաման: Օնիսեն զգում է իր վիճակի անհուսալիությունը: Նրա գլխում խառնաշփոթ է. փորձում է բանականության դիրքերից գնահատել իր արարքը: Դեմ հանդիման ելնում են սիրո և պարտականության հակամարտ ուժերը, բայց գոտեմարտում ոչ մեկը չի զիջում: Հարսանքավորները վերադառնում են գյուղ: Ամբոխը սպասում է եկեղեցու բակում: «Որպես իր ժողովրդին կառավարող հայր», այնտեղ է նաև Խևիսբերի Գոչան: Նա առաջինն է օրհնում թագավորին ու թագուհուն: Խորախորհուրդ են նրա խոսքերը. «Ձավակներս, Աստված միացնում է ձեր ճակատագրերը, բայց ոչ մի ադամորդի թող չբաժանի ձեզ միմյանցից»: Այնուհետև շրջվում է խաչեղբոր կողմը և իսկույն նկատում, որ խռովահույզ է որդին: Օնիսեն դա պատճառաբանում է գլխացավով և հայացքը խոնարհում: Գոչան խորհուրդ է տալիս գնալ տուն և հանգստանալ:

Ամբողջ գիշերը մտատանջության մեջ անցկացրած պատանին վերադառնում է հարսանքատուն. նրան դիմավորում են ուրախ բացականչություններով: Նա երգում է, պարում, կատակներ անում, բայց հոգին կեղեքվում է այն մտքից, որ Ձիծիան շուտով պատկանելու է Գուգուային:

Հարսանիքն ավարտվում է: Կյանքը մտնում է սովորական հունի մեջ: Ձիծիային բոլորը սիրում են, գուրգուրում, բայց «ինչ-որ բան կեղեքում է նրա հոգին, վշտացնում»: Դժվար չէ կռահել, որ այդ «ինչ-որ բանը» Օնիսեի սերն է, որ գնալով խոր արմատներ է զգում աղջկա սրտում:

Նման ապրումների մեջ է և Օնիսեն: Նա հեռանում է գյուղից՝ հույսով, որ ժամանակն ու տարածությունը կբուժեն վերքը: Նրա մտքից դուրս չեն գալիս հոր հատու և բազմանշանակ խոսքերը, մյուս կողմից՝ ներքին ձայնը հուշում է բարոյական պարտքի մասին, թեև սերն ամենագոր է, և աներեր մարտնչում է բանականության դեմ՝ ջանալով ապացուցել իր առավելությունը. «Ծանր և դառն էր պատանու կյանքը, գրում է հեղինակը, բայց նրա խոհերը վերջանում էին միևնույն

որոշումով: Այդ որոշումն այն էր, որ պետք է մոռանա Ձիծիային»: Օնիսեն երդվում է չվերադառնալ գյուղ, որպեսզի չհանդիպի Ձիծիային, կատարի հորը տված խոստումը և, վերջապես, չխաթարի այդ զույգի ընտանեկան անդորրը: Թվում է՝ երիտասարդին կհաջողվի սանձել հոգու փոթորիկը, բայց կյանքն առաջադրում է իր օրենքները, իր պահանջները, և գործն այնպիսի ընթացք է ստանում, որ տեղի է ունենում ողբերգություն: Կործանվում են և՛ Օնիսեն, և՛ Ձիծիան, և՛ Գուգուան, և՛ Խևիսբերի Գոչան:

Իմանալով Նուգզար երիսթավիի՝ Խևիի վրա հարձակվելու լուրը՝ Օնիսեն վերադառնում և զինվորագրվում է ազատագրական պայքարին: Նրա միտքն աշխատում էր մեկ ուղղությամբ, մարտնչել թշնամու դեմ և փառավորել տոհմի անունը: Մոտենում է վճռական պահը: Խևիսբերին բոլոր ջոկատներին ու խմբերին առաջադրանքներ է տալիս, օրհնում է ու հաջողություն մաղթում: Օնիսեին մի քանի երիտասարդի հետ ուղարկում է սահման՝ հսկելու և տեղեկություններ հաղորդելու հակառակորդի մասին: Որպես անաչառ նահապետ՝ Գոչան որդուն տալիս է դժվար խնդիր, իսկ որպես հայր՝ մտնում է եկեղեցի, ծունկի գալիս և աղոթում, որ զավակը չթերանա մարտադաշտում:

Ծանր և պատասխանատու պարտականություն ստանձնած Օնիսեն պահակակետում պետք է գործի չափազանց զգույշ: Կեսգիշերին մոտ ոտնաձայներ են լսվում: Գամփորդներ են՝ Գուգուան և Ձիծիան: Սարից են վերադառնում: Վիճաբանում են: Կինը խոստովանում է, որ իր սիրտն անմնացորդ նվիրել է Օնիսեին: Ամուսնու սպառնալիքներին պատասխանում է հանգիստ և արժանապատվորեն. «Ի՞նչ ունեն կորցնելու, կսպանես՝ հոգիս կխաղաղվի»: Գուգուան երդվում է սրախողխող անել Օնիսեին և վրդովված հեռանում է կնոջից՝ ի կատար ածելու վճիռը:

Օնիսեն բառ առ բառ լսում է այդ ամենը և տեսնելով, որ Ձիծիան քայլամուկոր մոտենում է անդունդի եզրին, հասնում գրկում է՝ փրկելով անխուսափելի կործանումից: Սիրահար զույգը նորից միասին է: Նորից բոցկլտում է սիրո հրդեհը. մոռանալով պարտք ու պարտականություն, հանձնվում են կրքի հեռուն տանող հորձանքին: Գիրկընդխառն և վերացած աշխարհից՝ չեն նկատում հակառակորդի առաջխաղացումը. «Նրանք դեռ ինքնամոռացության մեջ էին, երբ հանկարծակի որոտացին հրացանները, և սիրահարներն ասես քարացան իրենց տեղում»:

Ուշքի գալով՝ Օնիսեն հիշում է հոր հանձնարարությունը՝ աչալուրջ հսկել և զինակիցներին նախազգուշացնել հակառակորդի տեղաշարժի մասին, և խոսքերը՝ սրբապատկերի առաջ աղոթելիս: Սարսափելի է սխալի հետևանքը: Ինքը պատճառ է դարձել ջոկատայիններից

շատերի զոհվելուն: Նա լավ գիտե համայնքի օրենքները. դավաճանից երես են թեքում բոլորը՝ հարազատները, բարեկամները, ընկերները, մտերիմներն ու ծանոթները: Մահը երիցս երանելի է անփառունակ կյանքից, և Օնիսեն նետվում է մարտի ամենաթեժ տեղը. կռվում է անօրինակ քաջությամբ՝ ապշեցնելով թշնամուն և ոգևորելով ընկերներին: Մահ է սփռում, որ մահ ընդունի, ջանալով մեղմել մեղքը, բայց թվում է՝ դարձել է անխոցելի:

Ճակատամարտն ավարտվում է թշնամու պարտությամբ: Գոչան կարգադրում է հողին հանձնել զոհվածներին և ներկայանալ համայնքի ժողովին, որտեղ պիտի քննարկվեր դավաճանների հարցը: Իբրև առաջնորդ՝ նա բազում ժողովներ է անցկացրել. մարդկանց ներել կամ դատապարտել է, փառաբանել կամ պախարակել:

Օնիսեն իսկական հերոս է. դրամում համոզված են բոլորը, հատկապես նրանք, ովքեր նրան տեսել են կռվի դաշտում, մինչդեռ ինքը ողբերգություն է ապրում, թեև ոչ ոք տեղյակ չէ՝ իրականում ինչ է կատարվել գիշերը: Խղճի խայթ զգալով՝ նա խոստովանում է մեղքը. «Ինչո՞ւ թաքցնեմ: Ընկերներիս կործանման պատճառը ես դարձա, նրանք իմ մեղքով զոհվեցին: Ես կորցրի զոհությունս. թշնամին իմ դիրքերից է անցել»:

Համայնքը չի դատապարտում, մինչև իսկ նախատիմքի խոսք չի ասում, մանավանդ, որ իր հերոսությամբ լիովին քավել է մեղքը, բայց հայրը դա համարում է դավաճանություն և մահվան վճիռ կայացնում: Ժողովականները փորձում են մեղմել նրա զայրույթը, փորձում են համոզել, որ փոխի դաժան վճիռը, բայց Գոչան անդրդվելի է: Մերկացնելով սուրը՝ նա գոչում է. «Սա պիտի մեռնի: Ոչ մի ներում: Եվ եթե դուք չեք համարձակվում, ինձ նայեք...»: Եվ սուրը մխրձում է միակ որդու՝ «արևաշխարհ Օնիսեի կուրծքը»: Դա կատարվում է այնքան արագ, որ ներկաները չեն հասցնում կանխել դժբախտությունը:

Գոչան խելագարվում է, փախչում անտառ, թափառում սարերում ու ձորերում և ծառերին ու թռչուններին պատմում Օնիսեի մասին, իբր որդին «մեկնել է հեռավոր ճամփորդության և ուր որ է պիտի վերադառնա»:

Երկի սյուժեն կարելի է բաժանել երկու մասի՝ հասարակական և անհատական: Հասարակական հարցերին հեղինակը պատասխանում է հստակ և որոշակի. երբ օրակարգում հայրենիքի անկախության խնդիրն է, մահ կամ ազատություն, այլընտրանք չինել չի կարող:

Թերևս ավելի բարդ հանգույցներ է պարունակում անհատական կամ ներքին գիծը, որովհետև հեղինակը «ծովացող դժբախտություն» և աններելի հանցանք է համարում Օնիսեի «ապօրինի» սերը:

Ինչ վերաբերում է Գոչային, ապա նա մարդկային թուլության դեմ ոգորող իմաստուն այր է: Նա դիմակայում է ոչ միայն արտաքին ուժերի, այլև մարդու հոգում արթնացող «մութ» կրքերի դեմ: Նա պահանջում է կարգավորել ու ճիշտ ընթացք տալ սեփական սրտի ելևէջումներին. ոչ մի զիջում այն զգացմունքին, որը կարող է թեկուզ մազաչափ շեղել թեմի բարոյական սկզբունքից: Ահա ինչու նա պատժում է օրինազանցներին, ավելի դաժան, սակայն, հարազատ որդուն, որ նաև գրողի հավատամքն է ու վճիռը:

Նկարագրվող ժամանակաշրջանն առավել ցայտուն դարձնելու նպատակով հեղինակը հմտորեն գործածել է խոսակցական տարրեր, թևավոր խոսքեր, դարձվածքներ ու արտահայտություններ: Գրողի լեզուն վճիտ է, մշակված, հարուստ, ոճը՝ սեղմ ու կուռ: Ահա ճակատամարտի հեղինակային ողջ պատկերը. «Փոշու ամպ բարձրացավ. ամեն ինչ քողարկվեց. արևի շողերն ասես կուլ գնացին խավարին: Աղմուկը դադարեց: Անդորրը խախտվում էր ատամների կրճտոցներից, հառաչանքներից ու զենքերի շառաչից: Ձեփյուռից ցիրուցան փոշու մեջ երբեմն երևում էր Գոչայի դրոշը, որ հպարտ փողփողում էր և մարտիկներին շունչ ու ոգի ներարկում»:

Ահա և պատերազմի ավարտն ազդարարող սեղմ, բայց պատկերավոր խոսքը. «Քամին ցրեց մարտադաշտի փոշին. երևաց ըստն ամառը կյանքով լեցուն մարտիկների դիակներից գոյացած աշտարակը»:

«Խնկիսերի Գոչան» աչքի է ընկնում թե՛ գեղարվեստական ու գաղափարական արժանիքներով, թե՛ լեզվական բարձր կուլտուրայով:

* * *

Ալ. Ղազբեգիի գրական ժառանգության մեջ նշանակալից են «Արսեն» և «Քեթևան թագուհու չարչարանքները» դրամաները:

«Արսեն» դրամայում նկարագրված է XIX դարի վրաց ժողովրդական վրիժառու Արսեն Օձելաշվիլու կյանքը, որ սոցիալական խտրականության հետևանքով փախել է լեռները, դարձել «ավազակ» և պայքարում է ամօրեն ճորտատերերի դեմ, օգնում խեղճերին ու տնանկներին, «հարուստների ունեցվածքը վերցնում ու տալիս է ընչազուրկներին»:

«Քեթևան թագուհու չարչարանքները» հայրենասիրական թեմայով գրված առաջին դրաման է վրաց գրականության մեջ:

1605 թ. Շահ Աբասը պարսից զորքի հետ Վրաստան է ուղարկում հավատուրաց Կոնստանդին Բատոնիշվիլուն, որ դավադրաբար սպանում է հորը՝ Կախեթի արքա Ալեքսանդր Բատոնիշվիլուն, եղբորը՝ Դմիտրիին, և իրեն Քարթլիի տիրակալ հռչակելով՝ ավագ եղբոր այրուն՝ Քեթևանին, դարձնում է իր կինը: Ժողովուրդը, սակայն, չի հանդուրժում.

ապստամբում և մահապատժի է ենթարկում ազգադավ թագավորին: Այս փաստի հիման վրա գրողն ստեղծել է հետաքրքիր սյուժե՝ առաջին պլան մղելով Քեթևանի կերպարը:

Քեթևանը վրաց ժողովրդի բարոյական և հայրենասիրական հատկանիշները կրողն է: Նա ոչ թե փառք ու անմահություն տենչացող թագուհի է, այլ իր երկրի, ժողովրդի ու հավատի համար մարտնչող կին:

Դրաման գաղափարական կապ ունի հեղինակի մյուս երկերի հետ: Այս ստեղծագործության կերպարները ևս՝ Քեթևան թագուհին, Քայխուրո Օմանիշվիլին, Շերմազան Չոլողաշվիլին, Գորջասպ Արաբուլին, որ նահատակվում են հայրենիքի համար մղվող սրբազան կռվում, հիշեցնում են Էլզուջային, Խևիսբերի Գոչային, Էլիսոյին, Էլբերդին համանուն երկերից:

Ալ. Ղազբեգին դրական հերոսներին դնում է այնպիսի պայմանների մեջ, որ ընդգծվեն նրանց հավատարմությունը, քաջությունը, սերն ու տառապանքը, բարոյական վեհությունն ու անկոտրում կամքը: Նրանց գործողությունները պայմանավորված են ոչ թե անձնական շահերով ու հետաքրքրություններով, այլ երկրին, ժողովրդին, թեմին, բարեկամներին օգտակար լինելու մղումներով: Գրողի բոլոր դրական կերպարները կործանվում են իրականության դեմ պայքարում: Դա, սակայն, չարի հաղթանակ չի նշանակում. աներեր է հեղինակի հավատն իր հերոսների գործելակերպի ու գաղափարների հանդեպ, քանզի դրանց հիմքում մտահոգությունն է ժողովրդի ճակատագրի նկատմամբ. «Կգա, անպայման կգա մի ժամանակ, երբ մառախուղը կցրվի, արևը կժպտա, հիվանդը կբուժվի, եղբայրը կճանաչի եղբորը, հայրը՝ որդուն, զավակը՝ մորը, իսկ միաբանված Վրաստանը հաշտ ու համերաշխ կկերտի իր փառահեղ կյանքը»: Ալ. Ղազբեգիի ստեղծագործությունն աչքի է ընկնում իրականության ռեալիստական ընկալումով, քաղաքացիական պաթոսով: Նա համարձակորեն այսպես է հասարակության հակասությունները, բողոքի ու ցասման ձայն բարձրացնում ընդդեմ չարիքի ու անարդարության: Այդուհանդերձ նրա գեղարվեստական երկերում առկա են հակասություններ: Այսպես, թեև ճորտատիրությանը վերադառնալու կոչ չի անում, բայց անթաքույց ոգևորությամբ խոսելով Վրաստանի պատմական անցյալի մասին՝ գունազարդում է տոհմական հասարակությունը, հատկապես համայնքի դերն ու նշանակությունը ժողովրդի միասնության և հայրենիքի պաշտպանության հարցում:

Մեծ է Ալեքսանդր Ղազբեգիի ավանդը վրաց գեղարվեստական գրականության, դրամատուրգիայի և թատերական արվեստի զարգացման գործում:

Հայ հասարակությունը Ալ. Ղազբեգիի նկատմամբ ցուցաբերել է հետաքրքրություն և ջերմ վերաբերմունք: Նրա լավագույն վեպերի, վիպակների ու պատմվածքների զգալի մասը հայերեն է թարգմանվել դեռևս 1892-1894 թթ.: «Մուրճ», «Տարագ» ամսագրերում և առանձին գրքերով լույս են տեսել «Էլիսոն», «Էլբերդը», «Բերդիան», «Էլզուջան», «Նիոն», «Խնկիսբերի Գոջան», «Փատին», «Ղաչաղ Արսենը» և այլն: Բոլոր թարգմանությունները ժամանակին գրախոսվել են Թիֆլիսի հայ մամուլում: Դրանցից բացի, բազմաթիվ հոդվածներ են գրվել գրողի կյանքի, գրական և թատերական գործունեության մասին:

1893 թ. Ալ. Ղազբեգիի մահվան կապակցությամբ «Մուրճը» տպագրում է խմբագրական ծավալուն հոդված (թիվ 12), որտեղ շեշտվում է վիպասանի՝ վիրահայության մեջ ժողովրդականություն վայելելու հանգամանքը: «Չլիներ նրա հոգեկան խանգարումը,- կարդում ենք հոդվածում,- նա մի այլ մխիթարություն էլ զգացած կլիներ. կտեսներ, որ ինքը նպաստել է հայերի ու վրացիների փոխադարձ ծանոթության գործին»:

Իրոք, ականավոր արձակագիրը, դրամատուրգը և ռեժիսորը, հանդես գալով իբրև դերասան, մասնակցել է Սուևոուկյանի պիեսներից մեկի վրացերեն բեմադրությանը, իր լուսման նեղրել մեր ժողովուրդների թատերական կապերի մերձեցման գործում:

1948 թ. հոկտեմբերին նշվել է գրողի ծննդյան 100-ամյակը: «Գրական թերթում» ուշագրավ հոդված է տպագրել Դ. Դեմիրճյանը, իսկ «Հայպետհրատը» լույս է ընծայել վիպակների ու պատմվածքների մի սովոր ժողովածու:



ՎԱԺԱ ՓՇԱՎԵԼԱ

Վաժա Փշավելան նոր ու հետաքրքիր երևույթ էր վրաց գրականության մեջ: Դժվար էր պատկերացնել, որ հանրությունն այնպես ջերմորեն կընդուներ ու կխնկարկեր մի բանաստեղծի, որ գրական ասպարեզ էր իջնում այն ժամանակ, երբ համայն ազգի սրտի ու մտքի վրա իշխում էին Ի. Ճավճավաձեի և Ա. Շերեթելու նման մեծություններ, երբ համայն Վրաստանի պաշտամունքը Շ. Ռուսթավելին էր, երբ գրեթե ամեն վրացի անգիր գիտեր Դ. Գուրամիշվիլու, Ալ. Ճավճավաձեի, Ն. Բարաթաշվիլու կենսահույզ երգերը:

Վաժա Փշավելայի դեմոկրատիզմը, լեռնցիների կյանքի կենդանի նկարագրությունը, համազգային մոտիվների ու թեմաների արժարժումը. անհատի ճակատագրի նկատմամբ մտահոգությունն արձագանք գտան ժողովրդի սրտում` լայն ճանաչում բերելով հեղինակին, որի արժանիքները անցյալի ու ժամանակակից կյանքի արտացոլման, փիլիսոփայական ընդհանրացումների, բանաստեղծական կերպարների սքանչելի պատկերասրահ ստեղծելու, գեղագիտական ինքնատիպ սկզբունքների մեջ են:

Վաժա Փշավելան խորացրեց տիպականացման հնարանքները, բազմալար դարձրեց հայրենասիրական քնարը, ազգային պոեզիան հարստացրեց նոր մոտիվներով: Նա շատ բան արեց հայրենի պոեզիայի շրջանակներն ընդլայնելու և գեղարվեստական մակարդակը բարձրացնելու համար, ցույց տվեց, թե որքան անսպառ են վրաց լեզվի հնարավորությունները:

Վաժա Փշավելան (Լուկա Պավլեի Ռազիկաշվիլի) ծնվել է Վրաստանի լեռնային անկյուններից մեկի` Փշավի Չարգալ գյուղում, 1861 թ. հուլիսի 14-ին, քահանայի ընտանիքում:

Փոքրիկ Վաժային գրել-կարդալ սովորեցրել է հայրը, որը ամբողջ-



ջովին նվիրվում է զավակների դաստիարակությանն ու կրթությանը: Իր երեխաներին՝ ուստրեր թե դուստրեր, մեծացրել է սպարտացու ոգով՝ որսորդություն, նետածություն, ընթշամարտ, կռիվամարտ, վար ու ցանք և այլն: Միաժամանակ սեր է արթնացրել բնության, մայրենի գրականության, Հին ու Նոր Կտակարանների նկատմամբ: Վաժայի եղբայրներից Նիկոն (Բաչանա) և Թեդոն նույնպես հայտնի գրողներ էին:

Մինչև ութ տարեկան դառնալը Վաժան մնացել է գյուղում, հետո սովորել է Թելավիի հոգևոր, իսկ 1877-1882 թթ. Թիֆլիսի և Գորիի ուսուցչական սեմինարիաներում: Նրան դասավանդել են վրաց նարոդնիկական շարժման ներկայացուցիչներ Միխեիլ Ղիփիանին, Սովորոմ Մզալբլիշվիլին և Նիկո Լոմոնոսին: Այդ ընթացքում նա ինքնամոռաց կարդում է ռուս և համաշխարհային գրականություն, ուսումնասիրում փիլիսոփայություն և հասարակական գիտություններ: 1883 թ. Վաժա Փշավելան մեկնում է Պետերբուրգ և ազատ ունկնդրի կարգավիճակով հաճախում տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասընթացներին: Բայց նյութական պայմանների պատճառով ուսումն ընդհատում է, վերադառնում ծննդավայր և զբաղվում մասնավոր դասերով: Միաժամանակ ակտիվորեն մասնակցում է երկրի ներքին կյանքին. շուտով այնպիսի հեղինակություն է ձեռք բերում, որ հալածանքի է ենթարկվում տանուտերերի ու զգիրների կողմից. նրանց իսկ մատնությամբ կառավարությունը հսկողություն է սահմանում և հետամուտ լինում «քաղաքականապես անվստահելի» բանաստեղծին:

Գրողը մտահոգվում էր աշխատավորական զանգվածների ներկայով ու ապագայով: Հաճախ շրջագայում էր ավաններում ու զավառներում, ուսումնասիրում ժողովրդի կյանքը: Ինքն էլ ապրում էր գյուղացու կյանքով. երկրագործ էր, անասնաբույծ ու ատաղձագործ, սերմնացան ու հնձվոր, սայլ ու բուխարի էր սարքում, լաստ հյուսում: «Է՛հ, եղբայր, ի՞նչ անեն, չգիտեն,- հաճախ էր տրտմջում տաղանդավոր բանաստեղծը,- թե որ հողը չքանդեն ու հաց չքանեն, բոլորս սովից կկոտորվենք. իմ գրածներով նավթի ու աղի փող հագիվ են վաստակում: Իմ ամբողջ կյանքը պարադոքս է. երբ վարում են, ստեղծագործելու մասին են մտածում, երբ ստեղծագործում են, գործնական աշխատանքների մասին են մտածում. մերթ մեկն է ինձ խանգարում, մերթ մյուսը»: Ահա այսպես ապրում ու աշխատում էր մի մարդ, որ հեղինակել էր «Գոգթուր և Ափշինա», «Բախտրիոնի», «Ալուդա Քեթելաուրի», «Հյուրը և տանտերը» պոեմները, բազմաթիվ սքանչելի բանաստեղծություններ ու պատմվածքներ: Դեռ ուժերի ծաղկման շրջանում հոգեմաշ ու տառապալից աշխատանքներից հյուժվում է, հիվանդանում և անկողին ընկ-

նում. «Ես այլևս չեմ կարող ապրել գյուղում. ուզում եմ քաղաք տեղափոխվել. ֆիզիկական աշխատանքից մեջքս կոտրվում է, համ էլ արդեն ծերանում եմ: Մի օր աշխատում եմ, երկու շաբաթ պառկում, որ լավանամ...: Բացի այդ, երեխաներս անուս են մնում: Բավական է, ինչքան շան կյանքով ապրեցի: Եթե հանրությունը փոքր-ինչ գնահատում է ինձ, պետք է տիրություն անի...»: Մանկական «Նակադուլի» («Առվակ») ամսագրի խմբագրին հղած այս տողերը Վաժա Փշավելյան գրել է 1909 թ.: Նկարագրելով իր նյութական ու բարոյական ծանր կացությունը՝ նա բազմիցս դիմում է գրչակից ընկերներին պայմաններ ստեղծել քաղաք տեղափոխվելու, աշխատանք գտնելու, որ փոքր-ինչ ապահովեր ընտանիքի գոյությունը և ժամանակը տրամադրեր ստեղծագործելուն: Գրողի հորդորները մնում են անարձագանք: 1915 թ. փետրվարին Վաժա Փշավելյան գամվում է անկողնուն, մայիսի 23-ին Թիֆլիսում կայանում է հոբեյրամական երեկո, որի ժամանակ ժողովրդի անունից նրան են հանձնում մի դափնեպսակ՝ «Վրացական պոեզիայի արծվին» մակագրությամբ: Դա գրողի վերջին հանդիպումն էր ընթերցողների հետ: Յունիսի 27-ին հիշում է հայրենի եզերքը, խնդրում՝ կանաչ խոտ ու ճյուղեր փռեն ներքնակի տակ, լեռնաղբյուրի պաղ ջուր տան, իսկ երեկոյան ընդմիջտ փակում է աչքերը:

Վաժա Փշավելյան թաղված է Մթածմինդայի՝ վրաց գրողների և հասարակական գործիչների պանթեոնում:

* * *

Վաժա Փշավելյան գրական ասպարեզ իջավ սեմինարիայում ուսանելու ժամանակ. սկսեց ազգագրական ակնարկներով, ապա արձակ և չափածո թարգմանություններով, իսկ 1886 թ. հրատարակեց բանաստեղծությունների առաջին գիրքը:

Գրական գործունեության երեսունհինգ տարիներին գրել է շուրջ չորս հարյուր բանաստեղծություն, մոտ քառասուն պոեմ, բազմաթիվ պատմվածքներ, պիեսներ, քննադատական հոդվածներ և այլն: Առանձնապես բեղուն էին 1885-1900-ական թվականները, երբ հաջորդաբար լույս տեսան նրա նշանակալից երկերը:

Անաղմուկ, կարելի է ասել, աննկատ էր բանաստեղծի մուտքը հայրենի գրականություն: Պատճառը անհատականության պակասն էր, քանզի հիմնականում պատճենում էր այլոց: Բարեբախտաբար դա երկար չտևեց: Ստվերում չմնալու համար ընտրում է այլ ճանապարհ, որը շատ շուտով պիտի կոչվեր իր իսկ անունով: Բանաստեղծը դիմում է ազգային բանահյուսությանը, որի պարզ պատումների հիման վրա ստեղ-

ծում է գեղարվեստական կոթողներ: Այնպես է մերվում ժողովրդական բանավոր խոսքին, որ քննադատներն այդ երկերը համարում են փշավիսևսուրական լեզենդների պարզունակ կրկնություն: Այդ կարծիքը ժխտելու համար Վաժա Փշավելան վկայում է Լև Տոլստոյի և Ա. Ս. Պուշկինի օրինակը, որ նույնպես ժողովրդից են սովորել, միս ու արյուն տվել նրա հոգևոր գանձին, և դրանում է նրանց մեծությունը, ուստի խելահաս մարդիկ դա ոչ թե թերություն են համարում, այլ մեծագույն արժանիք: «Ձեր խոնարի ծառա Վաժա Փշավելայի վրա նույնպես, պետք է խոստովանեն, մեծ ազդեցություն են թողել ժողովրդական ավանդությունները: Իմ պոեմների զգալի մասը գրել են ժողովրդից լսած երկուերեք բառի հիման վրա»: Ջարգացնելով միտքը՝ բանաստեղծը գրում է. «Յուրաքանչյուր պոետ պետք է իմանա, որ ժողովրդական բանահյուսությունը որքան էլ հարուստ բովանդակություն ունենա, որքան էլ իմաստալից ու բարձրարվեստ լինի, եթե չվերակառուցի, չթրծի սեփական հոգու բովում, նյութից նոր բան չստեղծի, չի հանգրվանի ժողովրդի հոգում և ոչ էլ արվեստի գործ կհամարվի»: Համաշխարհային գրական արժեքներից շեշտում է «Ֆաուստը», որ շատ հեղինակներ են մշակել, բայց «միայն Գյոթեն է կարողացել իսկական «Ֆաուստ» արարել. մյուսները ի վիճակի չեղան յուրովի վերստեղծել ժողովրդից ավանդված նյութը»: Նույնը կարելի է ասել Շեքսպիրի «Համլետի», «Լիր արքայի», «Ռոմեո և Ջուլիետի», Ռուսթավելու «Ընձենավորի» մասին: «Ես՝ Ձեր խոնարի ծառաս, արժանի չեմ հիշատակվելու այս հսկաների հարևանությամբ, բայց մի հանգամանք ինձ թույլ է տալիս դիմել այդ քայլին. դա արարելու, ստեղծագործելու նմանությունն է: Այո՛, կատուն վագր չէ, բայց ուրիշ կենդանիների համեմատությամբ վագրին ավելի շատ նա է նման»: Այդուհանդերձ հանճարի երկում որքան էլ օբյեկտիվորեն արտացոլվի իրական կյանքը,՝ եզրակացնում է Վաժա Փշավելան,՝ այն կրում է հեղինակի սուբյեկտիվ հայեցողության կնիքը: «Ֆաուստի մասին լեզենդը հռչակեց կամ ստեղծեց Գյոթեին, թե՞ Գյոթեն ստեղծեց ու անմահացրեց լեզենդը: Ի՞նչ իրավունք ունենք չհամաձայնելու այս մտքին: Կարևորը հեղինակն է, ոչ թե լեզենդը»:

Վաժա Փշավելան պահանջում է համակողմանի արտացոլել մարդկանց կեցությունը, գրականությանը տալ ժողովրդական բովանդակություն, հասնել հոգեբանական ու հուզական արտահայտչականության: Հանդես է գալիս նաև գաղափարամտության (տենդենցի) քննադատությամբ, որովհետև «պոեզիայի համար բոլորովին էլ ամոթ չէ ծառայել ժողովրդի շահերին և նրա համար ստեղծել կերպարներ՝ իրական

թե իդեալական»¹: Վաժա Փշավելայի համոզմամբ՝ առողջ հայրենասիրությունը բացառում է ատելությունը այլ ազգերի նկատմամբ. «Վրացիների պատմական անցյալը, վրացու էությունը հուսադրում է, որ ազգային ուղղությունը միշտ կլինի առողջ և երբեք չի վերածվի ազգամոլության ու ֆանատիզմի»²: «Ընծենավորը» չէր կարող գրել ապազգային, հայրենասիրական զուլալ զգացումներից զուրկ պոետը, որովհետև նման փառապանծ երկերի հեղինակները՝ աշխարհի հանճարները, նախ և առաջ մեծ հայրենասերներ են եղել:

Նա խոսել է նաև լեզվի մասին. «Գրողը նախ և առաջ սեփական «լեզու» պետք է ունենա, քանզի լեզուն գրողի դեմքն է, դիմագիծը, ֆիզիոնոմիան, հոգին: Լեզվի մեջ է գրողի անհատականությունը: Երբ քանքար ունեցող գրողից մեկ-երկու ստեղծագործություն ենք կարդում, հետագայում, եթե առանց ստորագրության էլ հանդիպում ենք, ճանաչում ենք՝ ում գրչին է պատկանում»³:

Վաժա Փշավելան այս ամենը գրել է սեփական փորձից ելնելով: Նրա գործերը դժվար է շփոթել որևէ այլ գրողի ստեղծագործության հետ, այնքան ուրույն են լեզուն, ոճը, պատկերների առատությունը:

* * *

Վաժա Փշավելայի գրական ժառանգության մեջ մեծ տեղ ունի սիրո թեման: Այս հարցում էլ բանաստեղծը հավատարիմ է ժողովրդական բանահյուսությանը: Հատկապես փշավելների պոեզիայում կինը և՛ փառաբանվում է, և՛ պախարակվում: Նկատի ունենալով այդ իրողությունը՝ Վաժա Փշավելան գրում է. «Թեև փշավցին կնոջը համարում է չարք ու չարքածին, բայց և այնպես կին արարածի ազդեցությունը մեծ է. նրա ստրուկն է, երկրպագուն է իբրև սրբի, գովերգուն նրա այտերն ու ատամները, աչքերն ու թարթիչները, փարթամ ստինքներն ու եղեգմյա իրանը, խիտ ու երկար ծամերը և այլն»: Բանաստեղծը նկատում է, որ նույն այդ պոեզիայում ծայրահեղ իդեալիզմը միացած է ծայրահեղ ռեալիզմին, քանզի երգասացը սիրած էակին, մի կողմից, համենատում է «անմահական աղբյուրի», աստղերի, արեգակի ու լուսնի հետ, մյուս կողմից, չի համբերում և վիրավորում է մարդու գեղագիտական զգացմունքը: Փշավելների սիրային պոեզիան, ըստ գրողի, ավելի տարփանքի ու վայելքի մասին է, այնպիսի զգացմունքի, որ կողմերի ամուսնությանը չի վերջանում, որովհետև նրա «հիմքում ընկած է (կոպիտ) զգայակա-

¹ Վաժա Փշավելա, Երկեր, հ. 9, Թբիլիսի, 1964, էջ 362 (վրաց.):

² Նույն տեղում, էջ 402:

³ Նույն տեղում, էջ 294:

նությունը»¹: Ահա ինչու նման տաղերում չկան ապրում, սպասում, նվիրվածություն, հոգեբանական նրբին պատկերներ: Փշավցի տղամարդը նույնպես հանդես է գալիս լեռնականին բնորոշ սիրով. նրան պատում է կիրքը, որ գնալով դառնում է վտանգավոր, ահարկու: «Յովվի սպառնալիքը» բանաստեղծության մեջ հովիվն անհամբեր սպասում է հովվուհուն, որպեսզի հագուրդ տա մարմնատոջոր կրքին: Նա չի թաքցնում իր մտադրությունը, ավելին՝ պահանջում է՝ առավոտ ծեփին, հենց որ ծնողներն արթնացնեն ու ասեն՝ արև աղջիկ, վեր կաց ոչխարները քշիր արածեցնելու, թող չառարկի, իսկույն վեր կենա ու գա. «Ես քեզ կսպասեմ իբրև լուսան, բլրակի հետևում, կմետվեմ քեզ վրա, իսկույն կոճակներդ կպոկոտեմ, կմեկնվենք մենք մարմնով, և դու կթափոտաս իմ գրկում»: Լեռնցու զգացումը հասնում է գագաթնակետին, երբ ցանկանում է առևանգել համակրելի կնոջը: Ինքը նրան կհետևի, կհսկի ամենուր՝ տան, ջրի, հանդի ճամփաներին, ու հենց որ հայտնվի՝ կբռնի սևզիշեր ծամերից, սուրը դեմ կանի կրծքին, կառնի նժույգի գավակին, հետո թեկուզ հարծակվի գորքը օսմանի, Ջալուլանց ցուլը նրան ոչ ոքի չի զիջի:

Բանաստեղծը սիրային երգերում էլ հավատարիմ է ժողովրդական արտահայտչամիջոցներին ու պատկերներին, թեև վայելքի տեսարաններ նկարագրելիս դուրս չի գալիս պատշաճության սահմաններից: Նույն թեմային նվիրված ավելի ուշ շրջանի պոեմներում զգացվում է մահ դրամատիկ ապրում, աստիճանաբար մարում է կրքի ուժը, ամեն ինչ խաղաղվում է, դառնում վերհուշ. «Բավականին երկար ես ապրեցի, տեսա և՛ վիշտ, և՛ տառապանք... տեսա սիրուհու աչքեր լճացած, սիրտ՝ խոցված նետից սիրո»:

* * *

Գյուղում Վաժա Փշավելան սեփական ուսերին է զգում կյանքի ամբողջ ծանրությունն ու դառնությունը, տանուտերերի, զգիրների ու յասավուլների խարդավանքները, անիրավությունները: Պատկերում է աշխատավորի օրեցօր վատացող պայմանները: «Պապի ընտանիքի ողբը» բանաստեղծության մեջ նկարագրում է մի դրվագ. ընտանիքը զրկվում է կովից՝ օջախի միակ ապավենից: Մեծ ու փոքր հավաքվել են կենդանու դիակի շուրջ և ողբում են անամոք կորուստը: Սրտակեղեք է հատկապես երեխաների մոր խոսքը. ծնկներին խփում և բացականջում է. «Ա՛խ, զավակներս, մեռավ ձեր մայրը, ձեր իսկական ստնտուն»:

¹ Նույն տեղում, էջ 175:

Գյուղացուն հաճախ չարիք է պատճառում նաև բնությունը. կամ երաշտն է փչացնում բերքը, կամ հեղեղումներն ու կարկուտը, և որպեսզի երեխաները սովամահ չլինեն, նա բազմապատկում է իր ծանր աշխատանքը, երբեմն փորձում գտնել դժբախտության պատճառները. «Նստեմ, ազատություն տամ արցունքներիս, կնոջ նման վայ տամ գլխիս. ո՞վ մեզ գցեց մեղքի մեջ, ո՞վ մեզ քշեց լեռները լերկ»: Միայն ընտանիքի ապրուստը հոգալու համար չէ, որ տքնում է գյուղացին. նա հազար ու մի հարկ պետք է վճարի պետությանը, գյուղական ցեցերին: Նա տեսնում է սոցիալական անարդարությունն ու անհավասարությունը, բայց ի՞նչ կարող է անել:

Վաժան բյուրոկրատ ծառայողների, չարչի վաճառականների կրնկի տակ հեծող մարդկանց կյանքը ավելի ամբողջական ներկայացնում է պատմվածքներում: «Դարեջանը» պատմվածքի հերոսը՝ ոմն Զարություն, քսանհինգ տարի Փշավում առևտուր է անում: Նա այնպես է յուրացրել տեղացիների միստ ու կացը, սովորույթները, լեզուն, որ կարողանում է նրանց նման երդվել, անթերի հաղորդակցվել: Նողկալի է վաճառականի արտաքինը, շարժումները, առևտուր անելու մաներան: Նրան բոլորն են ճանաչում, և ինքն է ճանաչում բոլորին, բայց ոչ ոք չի սիրում. կարելի՞ է սիրել մի մարդու, որը «ոտքից գլուխ կեղծիքից, ստորությունից ու խաբեությունից է հյուսված և որը իր մտքում լեռը լեռան է զարկում, երկիրը՝ երկնքին, աշխարհն էլ համրիչի հատիկների նման խաղացնում է ձեռքում»:

Ամբան, անհավատ ու կեղծավոր տիպեր են նաև տանուտերերը, եկեղեցու սպասավորները, արդարադատության ներկայացուցիչները: Վերջիններս հարցերը վճռում են այն անձի օգտին, ով սակարկածից ավելին է վճարում: Նրանց գրասենյակներն ավելի շուտ գինետներ են հիշեցնում:

Գրողը դրական վերաբերմունք ունի միայն գյուղի ուսուցիչների նկատմամբ. նրանք կարող են գյուղացուն դուրս բերել միրհից ու խավարից, լուսավորել նրա ուղին, ազատասիրական զգացումներ սերմանել: Մի շարք պատմվածքներում (տպագրվել են «Յեքիաթներ» խորագրով) ծաղկում է մարդկային արատները՝ ծրիակերությունը, նենգությունը, տգիտությունը, սնահավատությունը և այլն («Ուժասպառ էշը», «Փորը»):

Վաժա Փշավելան ներկան հակադրում է անցյալին, հերոսների երկիրը՝ թշվառների հայրենիքին, մերկացրած սուրը՝ վաճառականի արշինին: Ժամանակակիցների մեջ չգտնելով ընդվզող ոգի՝ վերստին դիմում է փշավների բանահյուսությանը, «որովհետև փշավների՝ հին ժամանակների ոտանավորները հերոսական բնույթ ունեն: Հին ժամանակներ... դրանք հերոսության ու սխրանքների ժամանակներ էին: Ել ինչի՞ մասին պիտի երգեր ժողովուրդը, եթե ոչ հերոսության»: Այդ երգերի մոտիվներով ստեղծած պոեմները, լեգենդները, բալլադներն ու բանաստեղծությունները լավագույնս արտահայտում են հեղինակի մտորումները հայրենիքի ներկայի ու ապագայի վերաբերյալ: 1880-ական թթ., երբ արգելվում էր խոսել ազգային հարցերի մասին, բանաստեղծը կոչ էր անում պատերից իջեցնել դաշույնները, հեսանել ու գործի դնել («Ձայն գերեզմանից»):

Սրի՛ր, եղբայր, քո պողպատյա

Սուրմ ոսոխի դեմ մահաբեր.

Կհարձակվի նա մեզ վրա

Ու կավերի երկիրը մեր:

Սուրբո՞ր այնպես հեսանիր դու,

Որ մազն անգամ կտրի իսկույն,

Որ հարվածի համառ, հատու,

Ներկվելով վառ արնագույն:

Եղի՛ր անվախ և մի՛ դողա

Եղբայր, ինչո՞ւ ես վարանում.

Լավ է մեռնել, քան թե սողալ,

Ստրուկ ապրել այս աշխարհում:

Թարգմ.՝ Մ. Խերանյան

Հայրենասիրական մոտիվն առավել ուժգին հնչում է «Բախտրիոնի» (1892) պոեմում, որը, ինչպես հեղինակն է վկայում, գրվել է մի շնչում:

Բախտրիոնին Արևելյան Վրաստանի հնագույն ամրոցներից է, գտնվում է Ալազան գետի ձախ ափին: 1656 թ. Շահ-Աբասը գրավում է հիշյալ ամրոցը: 1659 թ. Բիծինա Չոլողաշվիլին, Շալվա և Էլիզբար Էրիսթավիները, ապստամբների գլուխ կանգնած, հրոսակներին վռնդում են երկրի սահմաններից:

Պոեմն սկսվում է դրամատիկական լարված պատկերով. տոնա-

հանդեսի օր է, բայց ոչ ոք չի երևում: Լռություն է՝ խորհրդավոր, չարագուշակ: Սրբավայրում մի կին կա միայն, որ մոմեր վառել, աղոթք է մրմնջում առ Աստված: Նրան է մոտենում աղքատիկ հագուստով մի անցորդ: Կվիրիան է: Պառավի և Կվիրիայի երկխոսությունից իմանում ենք, թե ինչ վիճակում է երկիրը: Պառավը՝ Սանաթան, հայտնում է, որ փշավցի այրերից շատերը, այդ թվում և իր յոթ զավակները, մահատակվել են սրբազան կռվում: Կվիրիան, իր հերթին, պատմում է, որ պայքարի են ելել փշավները, խևուրները, թուշերը: Նա խոսում է մահ իր դառը ճակատագրի մասին. պարսիկների կողմից Կախեթը ամայացվելուց հետո ինքը ցուպը ձեռքին դեգերել է երկրեերկիր, ի վերջո վերադարձել է հայրենիք և զինվորագրվել ազատագրական կռիվներին: Հիմա մա փշավների մոտ է եկել առաքելությամբ. ընդհանուր գործի հաղթանակն ապահովելու համար խնդրելու ռազմական օգնություն: Ստանալով հայրենասեր կնոջ օրհնանքը՝ շարունակում է ճանապարհը: Դաշտավայրում տեսնում է խարույկ, որի շուրջ բոլորած մարտիկները մարտից առաջ ուշիուշով լսում են իրենց զորապետի՝ Լուխունիի հրահանգները:

Վաղ առավոտյան նրանց այցի է գալիս մի աղջիկ՝ Լելան, և հայտնում իր բաղձանքը՝ կռվել տղամարդկանց հետ միասին. ինքը չի կարող ձեռքերը ծալել ու նստել տանը, երբ նժարին է հայրենիքի լինել-չլինելու հարցը: Ձինվորները պահանջում են, որ մա վերադառնա տուն և խնամի իր վիրավոր հորը, աղջիկը պատասխանում է.

*Երբ ավերում են Վրաստանը մեր,
Ինչպե՞ս կարող եմ տանը հանգիստ նստել.
Ի՞նչ եք զարմանում, փշավ-խևուրներ,
Որովհետև ես աղջիկ եմ ծնվել:
Ես եղբայրներիս արյամբ եմ երդվում,
Եվ անուններով բոլոր սրբերի՝
Օգնական լինել ձեզ թե՛ մարտերում՝
Հաղթելու համար այդ թաթարներին:*

Չնայած նրա համառությանը՝ այնուամենայնիվ ստիպում են տուն գնալ: Ճանապարհին նրան է միանում Կվիրիան. նրանք ուխտ են անում լծվել ընդհանուր գործին և ծրագրում են հանդուգն քայլ: Իբր Կվիրիան Լելային նվեր է տանում Սելիմ խանին, պահակները ներս կթողնեն, իրենք կմտնեն ամրոց, կգիշերեն պարսպի տակ, իսկ առավոտյան վրացական զորքի առաջ կբացեն դարպասները: Նրանք այդպես էլ անում են, բայց կյանքի գնով:

**Մեր հերոսներն են սրանք մեծանուն՝
Կվիրիան, Լելան քաջարար զոհված:
Մեկը մեկից քաջ էր ավելի,
Եվ սրանք էին, ինչպես ասեմ ես,
Բացեցին մեր դեմ դռները բերդի:**

Հաղթահանդեսից հետո մարտիկները վերադառնում են խաղաղ աշխատանքի: Նրանք սկսում են պատմել, թե ով ինչպես է պահել իրեն մարտադաշտում. եղել են անձնագրի կռվողներ, եղել են և վախկոտներ ու դավաճաններ: Բայց նրանց ավելի հուզում է իրենց հրամանատարի՝ Լուխումիի ճակատագիրը. ո՞ր մահաց մա, ո՞ղջ է, թե՞ մահատակվեց, գուցե գնացել է Ձեզվայի հայրենակիցներին մխիթարելու՞:

**Շատ է տանջում մեզ կորուստը նրա,
Երբ որ չգիտենք, թե ինչ եղավ մա.
Կորուստը մեր մեծ, կորուստն ահավոր
Հանգիստ չի տալիս մեզ գիշեր ու գոր:**

Մինչդեռ վիրավոր Լուխումին, մնալով լեռան լանջին, մաքառում է մահվան դեմ: Նրա հարևանությամբ՝ մամռապատ անձավում, ապրում էր մի վիշապ, որը կուլ էր տալիս թե՛ կենդանիներին, թե՛ մարդկանց: Եվ ահա մի անգամ, երբ արևկող անելիս հառաչանք է լսում, մոտենում և լիզում է մահամերձ Լուխումիի վերքը: Լուխումին ապաքինվում է, և մարդն ու օձը համերաշխ ապրում են միասին: Վաժան իր հերոսին կտրում է պատմական որոշակի միջավայրից և տեղափոխում բնության գիրկը, որպեսզի մա չկորցնի իմաստությունը և բուժվելով՝ կարողանա ծառայել հանրությանը: Հեղինակը առասպելականացրել է ծերունու կերպարը՝ նրան դարձնելով իմաստուն և անմահ. կենսական, կազդուրիչ ուժերը Լուխումիին պետք են նորանոր սխրանքների համար:

Վաժան հայրենիքի հանդեպ սիրո իդեալը մարմնավորել է Լուխումիի կերպարում: Սա խորհրդանշում է աշխատավոր վրացուն, որը մի ձեռքում սուր ունի, մյուսում՝ մաճ: Մշակում է հողը, հոգում ընտանիքի ապրուստը, խորհում ժողովրդի մասին, բայց թշնամին հանգիստ չի տալիս, ասպատակում է, գերեվարում, կոտորում: Եվ Լուխումին սուրը ձեռքն է առնում ու պաշտպանում երկրի ու օջախի պատիվը:

Հայրենասիրության ու անձնագրիության օրինակ են ցույց տալիս մյուսները ևս: Ահա Ձեզվա Գափրիմդաուրիի նշանաբանը.

*Ովքեր մեզ չեն խղճում,
Մենք ինչո՞ւ պիտի նրանց խղճանք,
Թշնամու համար մահը
Ինքը՝ Տերն է ստեղծել:*

Տողացի թարգմ.

Գափրինդաուրին հասուն կյանքի ողջ շրջանը նվիրել է հայրենիքի պաշտպանության ու անկախության համար պայքարին. ղեկավարելով վրացական զորքերը՝ մի շարք հաղթանակներ է տոնել թշնամիների դեմ մղած մարտերում, բայց զորավարական տաղանդը դրսևորվում է հատկապես Բախտրիոնի գրավման ժամանակ:

Քաջ են Կվիրիան, Խոշարեուլին, Սումելջին և ուրիշներ, ովքեր ապահովում են յուրայինների հաղթանակը: Տղամարդկանց հավասար մարտնչում են նաև կանայք: Անմոռանալի են Սանաթայի և Լելայի կերպարները: Սանաթան, որի յոթ որդիներն ու ամուսինը զոհվել են, դարձյալ մտածում է ժողովրդի մասին. շրջագայում է Փշավում և քարոզում, որ զինվորագրվեն բախտորոշ կռվի համար:

Հրաշալի է Լելայի կերպարը. եղբայրները նահատակվել են այդ կռվում, հայրը՝ ծանր վիրավոր, գամված է մահճին, մայրը գերության մեջ է: Այդքանից հետո նա Կվիրիայի հետ ծպտված մտնում է ամրոց և վրացական զորքերի առաջ բացում նրա դռները՝ գիտակցելով, որ մահն անխուսափելի է:

Ժողովուրդը փառաբանում է նման հերոսներին, երգեր հյուսում, օրհնում նրանց ծնունդը, իսկ դավաճաններին անարգանքի սյունին գամում: Այդպես է վարվում Ծիծուլայի նկատմամբ, որը, արհամարհված ու ստորացված, վերջ է տալիս իր կյանքին: Նրան անիծում է և մայրը, նույնիսկ արժանի չի համարում հողին հանձնել որդու դին. դավաճանը տեղ չպիտի ունենա ո՛չ երկրի վրա, ո՛չ հողի տակ, ո՛չ էլ երկնքում:

Ապրում, հարատևում են Վրաստանն ու վրաց ժողովուրդը՝ առողջ կամ հիվանդ, ուրախ կամ տխուր, բայց ավելի շատ սպասելով այն հերոսին, որ ազատություն ու երջանկություն պիտի բերի բազմաչարչար երկրին: Այդպիսին է Լուխումին, որի միջոցով իր իդեալներն ու բաղձանքներն է արտահայտել հեղինակը:

Վաժա Փշավելան ապստամբությունը ներկայացնում է իբրև համաժողովրդական հզոր շարժում: Նա տեղ չի տվել իշխանական դասին ու ազնվականությանը, անգամ ապստամբության՝ վերը նշված ղեկավարներին, որ խոշոր ֆեոդալներ էին: Նա համոզված է, որ հասարակ ժողովուրդն է երկրի ազատագրմամբ շահագրգռված, քանզի երկիրն

ինքը ժողովուրդն է: Խոր և աներեր է հեղինակի հավատը ժողովրդի անկասելի տարերքի, միասնության ու կամքի հանդեպ:

Պոեմն աչքի է ընկնում նաև գեղարվեստական արժանիքներով. սյուժետային հիմնական գծին զուգահեռ կան քնարական այլ շեղումներ, բնության պատկերներ, ռազմական տեսարանների հիանալի նկարագրություններ:

* * *

Հայրենասիրական բովանդակություն ունի նաև «Գոգոթուր և Ափշինա» (1897) պոեմը: Փշավցի Գոգոթուրը և խևսուր Ափշինան հսկայական ուժի տեր են: Բայց եթե Ափշինան իր ուժը գործադրում է անձնական շահի համար (գողանում է, կողոպտում, նսեմացնում), ապա Գոգոթուրը բավարարված է զգում, երբ ժողովրդի համար օգտակար գործ է անում:

Պոեմը գրված է հակադրության սկզբունքով. առաջին երկու գլուխները նվիրված են Գոգոթուրի արտաքինի և դյուցազնական ուժի նկարագրությանը: Օրինակ՝ նա կարող է վիթխարի ծառը արմատախիլ անել, դնել ուսին և տուն հասցնել՝ ծխամորձն առանց բերանից հանելու: Երբ փանդիռը ձեռքին երգում է, առաստաղն է վերուվար անում, երբ հնչյունների ներքո ոտքերն է շարժում, գետինն է ցնցվում:

Հարազատ մնալով պատումի ժողովրդական մտածողությանը՝ հեղինակը չի հեռանում պոեմի ռեալիստական ոգուց. նա պարզապես բացահայտում է Գոգոթուրի հատկանշական գծերը: Գոգոթուրի կյանքի նշանաբանն է՝ պատերազմում ոչնչացնել թշնամիներին, խաղաղ պայմաններում զբաղվել հալալ աշխատանքով: Վրաստանում նա հայտնի է որպես մմանը չունեցող զինվոր: Գոգոթուրի սխրանքներին ականատես է եղել ինքը՝ թագավորը, նույնիսկ առաջարկել է մնալ պալատում և ստանձնել որևէ պաշտոն: Բայց քաջ լեռնցին համեստորեն հրաժարվել է արքայի առաջարկից՝ պատճառաբանելով, որ ինքը կատարում է հայրենիքի զինվորի իր պարտականությունները և արժանի չէ մման պատվի ու պաշտոնի:

Չմայած հեքիաթային ուժին՝ նա չափազանց համեստ է, բարեսիրտ, նրբանկատ և անկաշառ: Չի հանդուրժում գողերին, ավազակներին, խաբեբաներին, պարծենկոտներին: Գոգոթուրի հատկանիշները բացահայտվում են կնոջ հետ ընդհարման ժամանակ: Երբ վերջինս պահանջում է, որ ամուսինն իր ուժը գործադրի հարստություն կուտակելու համար, ինչպես դա անում է Ափշինան, որի ծիու թամբն արծաթապատ է, թագավորի չափ էլ հարստություն ունի, Գոգոթուրը դրան հակադրում

է մարդասիրական գաղափարներ և այլ արժանիքներ: Նրա համոզմամբ՝ մարդ այն ժամանակ է երանություն զգում, երբ սուրը ճոճում է թշնամու գլխից վեր: Մի՞թե իսկական քաջը կկողոպտի յուրայինների կամ ձեռք կբարձրացնի նրանց վրա: Գոգոթուրը չի կարողանում կնոջը համոզել, ուստի անհաճո վեճին վերջ տալու համար հեռանում է տնից:

Նույն օրը նա հանդիպում է Ափշինային: Վերջինս թեև լսել է Գոգոթուրի մասին, բայց չի տեսել և չի ճանաչում, թե ում հետ գործ ունի և պահանջում է հանձնել ձին ու զենքերը. «Ե՛յ փշավցի,- գոչեց նա,- տուր նժույգդ ու թուրդ, քանզի դու չգիտես դրանք օգտագործելու տեղն ու ձևը»: Գոգոթուրը սկզբում բանի տեղ չի դնում նրան և խորհուրդ է տալիս խաղաղությամբ շարունակել ճամփան: Բայց Ափշինան հարձակվում է նրա վրա: Գոգոթուրն առանց դժվարության զինաթափ է անում, կապում է նժույգի մեջքին և ուղղվում դեպի Խևսուրեթ: Կյանքում առաջին անգամ ճաշակելով պարտության դառնությունը՝ ամոթահար Ափշինան խնդրում է արձակել ստորացուցիչ կապանքները և վերադարձնել զենքն ու նժույգը կամ էլ սպանել, քանզի մահը գերադասելի է անզեն տուն վերադառնալուց: Զգալով, որ Ափշինան անկեղծորեն զղջում է, Գոգոթուրը արձակում է նրան, զենքերը վերադարձնում, և նրանք եղբայրության ուխտ են անում: Գոգոթուրը պախարակում է Ափշինային վարած կյանքի համար: Միաժամանակ պարտավորեցնում է ավազակությամբ չզբաղվել: Նրա կարծիքով՝ հայրենիքի շահը պետք է վեր դասել անձնականից և բնության պարզևած ուժը գործադրել նրա բարօրության համար: Նմանը միայն իրավունք ունի «գոտիում թուր, գլխին գլխարկ կրելու»: Առհասարակ քաջ տղամարդը պետք է համեստ լինի և հարկադրաբար միայն գործադրի իր ուժը: Ահա պոեմի հիմնական գաղափարը, որի կրողը Գոգոթուրն է:

Հայրենասիրական զգացումով են ներթափանցված նաև «Ծերունու պատմածը», «Իվանե Կոտորաշվիլու պատմությունը», «Գիզլա», «Ձաղլիկա Խիմիկաուրի» պոեմները, տասնյակ պատմվածքներ ու բանաստեղծություններ:

* * *

Մի շարք երկերում («Ալուդա Քեթելաուրի», «Հյուրը և տանտերը», «Օձակերը») Վաժա Փշավելան անդրադարձել է համայնք և անհատ հարաբերությանը: Հիմնականում անհատը ենթարկվում է համայնքին, իսկ ահա Ալուդա Քեթելաուրին գործում է ըստ իր խղճի ու հավատամքի: Սա թեմի պաշտպանն է ու կուռքը. թշնամիներից միշտ պարտության է մատնել: Ահա մեկ անգամ էլ ստիպված կռիվ է մղում քիստ ձիագողերի

դեմ, մեկին հրացանազարկ է անում, իսկ մյուսը՝ սպանվածի եղբայրը, որ նույնպես արիասիրտ երիտասարդ է, երկար դիմադրում է, բայց ի վերջո ընկնում է, վերջին շնչում գովաբանում հակառակորդի խիզախությունը, մեծամարտելու ազնիվ եղանակը, և սուրը տալիս է նրան. «Ես պարտվեցի, սուրս քեզ հալալ, վերցրո՛ւ, չընկնի ձեռքն անարժան մեկի»։ Այդ դեպքից հետո Ալուդան փոխվում է. արթնանում է մինչ այդ իրեն պատած միրհից։ Նա վեհանձն է և չի կարող տմարդի վարվել թեև գող (իսկ լեռնականի համար ձի գողանալն էլ քաջության նշան է), բայց կռվելու պահին ասպետության բոլոր կանոնները պահպանած թշնամու հետ։ Ամտեսելով նախապաշարմունքն ու հնամենի սովորույթը՝ Ալուդան չի հատում քիստի աջը : Նրա հոգին արծագանքում է մարդասիրության, հավասարին ըստ արժանվույն գնահատելու ծայնին, և գյուղ է վերադառնում առանց հաղթության ապացույցի։ Նման արարքը ապշեցնում է համագյուղացիներին, նրան նախատում են, հիշեցնում, որ թշնամին պարտված չէ, քանի դեռ հատված չէ աջը, և արհամարհում են, երես են թեքում ու հեռանում։ Հաջորդ օրը ավագանին նորից է պահանջում գնալ և հատել թշնամու աջը, բայց Ալուդան անդրդվելի է։ Նրա մտերիմներից մեկը՝ Մինդիան, մարդկանց ցասումը մեղմելու համար բերում է սպանված քիստի աջը։ Ալուդան դժգոհում է, մի՞թե ինքը չէր կարող կտրել, մի՞թե քիչ աչ է հատել, բայց այս մեկը քաջ էր, մեծամարտուն՝ ազնիվ, ուրեմն չի կարելի անարգել նման քաջազունին, իր սիրտը ցավում է, ինքը չի կարող տանել այդ անպատվությունը։ Թող անիծվի նման սովորույթը։ Էլի կսպանի թշնամիներին, բայց այլևս չի կտրի նրանց ձեռքերը. համայնքը թող իմանա դա մեկընդմիշտ։

Թեմի և Ալուդայի հակամարտությունն ավելի է սրվում, երբ վերջինս քրիստոնեական եկեղեցում մատաղ է անում ի պատիվ սպանված քիստի (քիստերը մահմեդական են)։ Համայնքապետը հրամայում է օտարել նրա հոտն ու նախիրը, հիմնահատակ ավերել ու հրդեհել տունը, իսկ իրեն ընտանիքի բոլոր անդամների հետ վտարել գյուղից։ Ալուդան չի բողոքում վճռի դեմ։ Ոչ թե պատիժն է համարում արդարացի, այլ զգում է, որ անզոր է դարերի ընթացքում կաղապարված ու ժողովրդի կողմից սրբացված օրենքների դեմ։ Ահա ինչու երբ կինը և մայրը փորձում են ընդդիմանալ թեմի որոշման դեմ,

* Վրաց լեռնականների մեջ (փշավներ, խևսուրներ, թուշեր) դարեր շարունակ գոյություն է ունեցել պարտված թշնամու աջը կտրելու սովորույթ, որ պահպանվել էր մինչև Վաթա Փշավելայի ժամանակները։ Դա վրիժառության և հաղթանակի նշան համարվելուց բացի, նաև սնոտիապաշտական իմաստ է պարունակել. պետք է կտրել թշնամու աջը, որ նա այլևս չկարողանա զենք գործածել։

նա զայրացած սաստում է. «է՛յ, կնանի՛ք, լեզուներիդ գոռ մի՛ տվեք, եկեք իմ հետևից, խաչին մի՛ զայրացրեք, թեմին մի՛ նեղացրեք, վատ բան չասեք ոչ մեկին»:

Օրենքի ուժ ունեցող սովորույթից շեղվելու պատճառով պայքարն ավարտվում է Ալուդա Քեթելաուրիի պարտությամբ:

* * *

Վաժա Փշավելայի ամենամշանակալից երկերից մեկը՝ «Հյուրը և տանտերը» (1893), «Ալուդա Քեթելաուրիի» հակառակ երեսն է: Իր հողվածներից մեկում նա նշում է աղբյուրը, որտեղից օգտվել է պոեմը գրելիս. «Խևսուր Ջվիհադաուրին պատահաբար գերի է ընկնում քիստերի ձեռքը: Սրանք նորերս թաղել են մի երիտասարդի, որին սպանել էին խևսուրները: Սովորույթի համաձայն՝ պետք է արյուն հեղել. դա հանգուցյալի պահանջն է, անպայման պետք է բավարարել: Նրանք խևսուրին տանում են քիստի շիրիմի մոտ: Երբ կիսով չափ կտրում են նրա վիզը և ասում, որ այն աշխարհում նա պետք է լինի հլու-հնազանդ ստրուկ, զոհը, քանի դեռ ի վիճակի է, կրկնում է. «Շունը ստրուկ լինի ձեր մեռելին»: Եթե նա վախենար, երերար ու նման համարձակ պատասխան չտար,- շարունակում է Վաժա Փշավելան,- կդառնար քիստի ծառան, բայց քանի որ մինչև վերջին շունչը գլուխ չխոնարհեց ո՛չ դահիճների, ո՛չ մահվան սարսափի առաջ, մնաց ազատ, իսկ հանգուցյալը՝ անարգված ու չբավարարված»: Մնացածը հեղինակի երևակայության արդյունքն է:

Պոեմում հասարակության և անհատի հակամարտությունն ավելի սուր բնույթ է կրում: Գործողությունը տեղի է ունենում քիստերի աուլում:

Քիստ Ջողուլան, որ սար ու ձոր ընկած փնտրում է եղբորն սպանողին, հանդիպում է խևսուր Ջվիհադաուրիին, մտերմանում է, հրավիրում տուն: Ծանոթանալիս վերջինս չի հայտնում իր ով լինելը: Բայց թեմին ահ ու սարսափ ներշնչող խևսուրին Ջողուլայի տանը ճանաչում է մի ծերունի, որն էլ համագյուղացիներին գուժում է, թե ով է հյուրընկալվում իրենց աուլում: Կեսգիշերին տղամարդիկ հարձակվում են և կապկպում նրան (Ջվիհադաուրին տանտիրուհուն խնդրել էր ձեղնահարկում՝ բաց երկնքի տակ իրեն անկողին զցել): Ջողուլան նախ բացատրում, ապա խնդրում է հանգիստ թողնել իր հյուրին. նրանք խախտում են հյուրընկալության օրենքները. «Ի՞նչ եք անում, ո՞ւմ հյուրին եք կապոտել, ուզում եք լա՞փ թափել իմ գլխին»: Այդ ժամանակ նա իմանում է, որ հյուրը հանրահայտ խևսուր Ջվիհադաուրին է, որը շատ ու շատ քիստերի

է ոչնչացրել, նաև իր հարազատ եղբորը: Դրանով հանդերձ՝ նորից է պնդում, որ խախտվում են պապենական սուրբ օրենքները, որ ինքը մինչև վերջ կկատարի տանտիրոջ պարտականությունները, եթե նույնիսկ ծով արյուն թափվի: Հավատարիմ կանոններին՝ նա ասում է. «Երբ կհեռանա իմ տնից, կվարվեք ինչպես կուզեք»: Այսինքն՝ Ջողոլան հյուրին կպաշտպանի, քանի դեռ նա իր հարկի տակ է, իր իրավասության ներքո: Փաստորեն, նա չի հակադրվում թեմին, քանզի թեմականներին պարզապես հիշեցնում է այն, ինչը հայտնի է բոլորին: Վեճը բորբոքվում է. համազյուղացիները Ջողոլային համարում են ջահել (այսինքն՝ տգետ), անփորձ, որ չի ըմբռնում՝ ինչպիսի ռիսկերիմ թշնամու է հյուրընկալել: Իսկ նրանցից մեկը այնքան է զայրանում, որ Ջողոլային անվանում է շուն: Ավելի ծանր վիրավորանք լեռնցու համար դժվար է պատկերացնել, ուստի Ջողոլան խողխողում է նրան, ապա փորձում ազատել հյուրին, բայց մեռակ է տասնյակ արնածարավ տղամարդկանց դեմ: Նրան իսկույն կապկպում են, մարագում փակում, իսկ Ջվիհադուրիին տանում են գերեզմանոց, տապալում մի հողաթմբի վրա: Ջոհաբերությունն սկսվում է մոլլայի նամագով. նա դիմում է դեռևս թարմ մի շիրիմի. «Մի՛ տանջվիր, Դարլա՛, շատ մի՛ տխրիր, ահա եղբայրներդ կանգնած են գերեզմանիդ մուտքի մոտ, մատաղացու են բերել, ուրախացի՛ր, վրեժդ ի կատար է ածվում» :

Ջվիհադուրիի սպանության բոթը հասնում է յուրայիններին: Տղամարդիկ հարձակվում են քիստերի գյուղի վրա, ավերում այն, սպանում նաև իրենց դեմ մեռնական մարտնչող Ջողոլային և վերցնելով հերոսի դին՝ վերադառնում են:

Թեմը Աղազային՝ Ջողոլայի այրուն, արգելում է ընդհանուր գերեզմանոցում հողին հանձնել ամուսնու դին: Նա համարվում է դավաճան, չնայած միայնակ էր դուրս եկել խևսուրների դեմ: Հալածյալ ու արհամարիված՝ Աղազան ժայռից նետվում է փրփրաբաշ գետը:

«Հյուրը և տանտերը» հիմն է ազնվության, սխրանքի և պատվախնդրության:

Հզոր կամքի տեր է Ջվիհադուրին: Նրան բերել են գերեզմանոց, որ զոհեն: Բայց նա վճռել է արժանապատվորեն մեռնել. ինչպիսի տանջանքի էլ ենթարկեն, վիզ չճռել, որ մահից հետո էլ ազատ մնա: Եվ նա

* Արյան վրեժ, սպանության դեմ սպանություն. սա բոլոր լեռնական ցեղերի դարավոր սովորույթն է,- բացատրում է Վաժա Փշավելան,- բայց սպանություն սպանվածի շիրիմի վրա՝ միայն մահմեդականներն են անում: Ընդ որում՝ եթե զոհը մորթվելու պահին չի երկնչում, չի ցնցվում, նշանակում է այդ «մատաղն» ընդունելի չէ, պետք է մեկ ուրիշին մորթել:

ոչ միայն աչք չի թարթում, այլև դաշույնը կոկորդում բացականչում է. «Շունը թող լինի ձեր մեռելի մատաղացուն»: Այսինքն՝ քիստերն իրենց հանգուցյալների համար շուն պիտի մատաղ անեն, դրան են արժանի: Լսելով նման խոսքեր՝ դահիճները կատաղում են և ավելի դաժանորեն չարչարում, բայց կտրել խևուրի համառությունը չի հաջողվում նրանց: Ձվիադառուրին մահից հետո էլ հաղթող է: Ե՛վ սարսռազդու, և՛ ազդեցիկ է այդ տեսարանը. «Արյունը հոսում է, կյանքը՝ մարում, Ձվիադառուրին է մահանում, թշնամուն չհաջողվեց սպանել նրան, քանզի սիրտը նրա սիրտ մնաց»: Հերոսի գերմարդկային ջանքն ապշեցնում և խորհել է տալիս քիստերին. նրանք հուսահատ են, որովհետև խևուրը մեռնում է ազատ. նա չի կարող մատաղ համարվել.

Քիստերը վշտացան, գայրացան.

Չիրականացավ իղձը նրանց,

Չկարողացան իրենց մեռելներին

Արժանի ճաշ մատուցել, քանզի

Սպանվողն սպանեց սիրտը նրանց:

Տողացի թարգմ.

Բնությունը ևս գնահատում ու ողբում է քաջի կորուստը, որ Վաժա Փշավելայի գրականության կարևորագույն դրսևորումներից է: Քամին հառաչում է, հողմը՝ վայում, գետերը վշտում են, լեռները՝ թառանչում, երբ տարածվում է այս կամ այն քաջորդու նահատակության լուրը:

Ջողուլան ևս համակրելի է: Հանդիպելով Ձվիադառուրիին և տեսնելով, որ նա ձեռնունայն դեգերում է անտառում, իր ունեցածը երկու մասի է բաժանում: Նա աչքի է ընկնում նաև հայրենասիրությամբ. թեև իր թեմից պատժվել էր թշնամի խևուրին հյուրընկալելու համար, բայց խևուրների դեմ միայնակ է դուրս գալիս և մինչև վերջին շունչը կռվում հանուն թեմի պատվի:

Հետաքրքիր է Ջողուլայի կնոջ՝ Աղազայի կերպարը: Նա իր սեռի միակ ներկայացուցիչն է Վաժա Փշավելայի պոեմներում, որ ընդդիմանում է սովորույթին, խախտում անսասան թվացող աղաթը: Սլացիկ, եղեգի պես ճկուն ու նրբագեղ է Աղազան. սև զգեստն ավելի է ընդգծում նրա հմայքը. ասես երկնքից իջած աստղ է՝ կենսուրախ, զգայուն, բարեսիրտ, կարեկից: Երբ հյուրը տան շեմին, ի նշան վստահության և հարգանքի, նրան է մեկնում զենքերը, Աղազայի հոգին տակնուվրա է լինում. ծնվում է ինչ-որ անմեկնելի զգացմունք, և սկսում է հիացումի խոսքեր մրմնջալ: Այդ գովասանքը տանտիրուհու սովորական խոսքեր

չեն, այլ առնական տղամարդով հրապուրված կնոջ խոստովանանք: «Երանի՛ նրան, ում կպարուրեն սրա բազուկները հուժկու, Երանի՛ նրան, ում բախտը կժպտա և կփարվի սրա կրծքին»: Ջգացումն ավելի է խորանում, երբ ականատես է լինում նրա տանջանքներին: Ու թեև համոզված է, որ համազուղացիները խստորեն պատժելու են Ջվիհադարիին, երազում է նրա փրկության մասին, ողջ գիշեր ծնկաչոք հեծեծում է անշունչ մարմնի առաջ, երեք զույգ մազ պոկում, փաթաթում գլխաշորի տուտի մեջ, իսկ հաջորդ ամբողջ օրը հնարամտորեն դին պաշտպանում է ագռավներից ու ցիներից: Աղազան վերադառնում է տուն և խոստովանում ամուսնուն. «Գուցե թե մեղք գործեցի քո և Աստու առաջ, բայց դիակի վրա լաց եղա, ի՞նչ անեն»: Ջողուլան տալիս է իրեն վայել պատասխան. «Լա՞ց եղար. արժանի էր նա, թեև դատավոր չեն ես: Գեղեցիկ է, երբ կինը ողբում է մահը քաջորդու»:

Ի դեպ, պոեմը գրելիս Վաժա Փշավելային ավելի շատ մտատանջել է ամուսինների երկխոսությունը: Գրողը խոստովանում է, որ ավելի քան երկու ամիս մտորել է դրա շուրջ, հատկապես Ջողուլայի պատասխանի վրա. հյուրի հանդեպ նրա հետաքրքրասիրությունը չի տեղավորվում տանտիրուհու իրավունքի ու պարտականության շրջանակներում, մանավանդ եթե նկատի ունենանք, որ թեմի չափանիշներով Աղազայի «հանցանքը» գերազանցում է ամուսնու «հանցանքին». եթե Ջողուլան իր հյուրին պաշտպանում է՝ չիմանալով նրա ով լինելը, ապա Աղազան, այդ ամենն իմանալով հանդերձ, համակրում և կարեկցում է նրան: Դա հյուրընկալի պարտականություն է, անսպասելի սե՞ր, թե՞ կիրք՝ առնաբաղձ: Ահա կերպարի խորհուրդը, որ մնում է անմեկնելի:

Այսպիսով, եթե քրիստոնյա Ալուդան, գնահատելով այլահավատ թշնամու արժանիքները, հրաժարվում է հատել նրա աջը և պատժվում է դրա համար, ապա քիստ Ջողուլան հյուրընկալության սկզբունքներն է հակադրում արյան վրեժի «անիծյալ» կանոններին, անտեսում համայնքի պահանջները և պատճառ դառնում իր և ընտանիքի կործանման:

* * *

Վաժա Փշավելան «Օձակերը» պոեմի (1901) թեման նույնպես վերցրել է բանահյուսությունից: Իր մամակներից մեկում գրողը պատմում է, թե ինչ չափով է օգտվել ժողովրդական զրույցից, և ինչ է հավելել ինքը. «Ասքը, որ լսել և որի համաձայն գրել եմ իմ պոեմը, հետևյալն է. իսկուր Մինդիան գերվում է քաջքերի կողմից և երկար ժամանակ մնում բանտարկված: Տանջալից կյանքից հուսահատ՝ որոշում է ինքնասպան լինել, և օձի միս է ուտում: Սակայն Մինդիան ոչ թե մեռնում է,

ինչպես սպասվում էր, այլ դառնում է իմաստուն, հրաշագործ բժիշկ*։ Պատունն այսքանով վերջանում է։ Ուրեմն՝ Մինդիայի անուսնությունը, զրույցը կնոջ հետ, որսորդությունից հրաժարվելը, կենդանիների ու թռչունների լեզուն հասկանալը, զորավարական ունակությունը և այլ հատկանիշներ իմ հավելումներն են։ Ասքում ոչ մի խոսք չկա նաև Մինդիայի հոգեկան ապրումների մասին»¹։

Չեղինակը պոեմը համարել է ֆաուստյան տիպի։ Բովանդակությունը հետևյալն է. խնսուրները զվարճանում են։ Միայն Մինդիան, անհաղորդ ուրախ հանդեսին, տխուր-տրտում մատել է մի կողմում։ Նրա հետ խոսում են բոլոր կենդանիները, բոլոր ծառերը, ծաղիկները, բույսերը և հայտնում իրենց ցավը ու խնդրում, որ թույլ չտա մարդկանց՝ սպանեն, կացնահարեն, արմատախիլ անեն կամ պոկոտեն, քանզի իրենք էլ կենդանի արարածներ են։ Եվ ամեն անգամ, երբ Մինդիան փոխանցում է նրանց խնդրանքը, մարդիկ նրան համարում են ցնորված, խաբեբա. իրենք էլ նրա նման բանական արարած են, ինչո՞ւ չեն հասկանում կենդանիների, ծառերի, բույսերի ու ծաղիկների լեզուն, կամ ինչո՞ւ պիտի նրանց խղճան, երբ Աստված ինքը չի խղճացել։ Եթե որս չանեն, ծառ չկտրեն, սովից ու ցրտից կկոտորվեն։ Եվ չանսալով Մինդիային՝ և՛ որս են անում, և՛ ծառ հատում, և՛ ոչխար ու հավ մորթում։

Ամուսնանալուց հետո ծայր են ամուսնու ընտանեկան վեճերը. կինը պահանջում է ապրել այնպես, ինչպես մյուսներն են ապրում։ Նա տղամարդ է, պետք է հոգ տանի ընտանիքի մասին։ «Ինչո՞ւ ուրիշները որս անելն ու ծառ կտրելը մեղք չեն համարում», - հարցնում է զայրացած կինը։ Այն, ինչ հասկանալի է Մինդիային, անհասկանալի է շրջապատին, և անսպասելի չէ, որ նրա ընտանիքի անդամները նույնպես գտնվում են այդ մակարդակի վրա։ Բայց այդ նույն հասարակությունը երբեմն դիմում է նրա օգնությանը։ Թշնամիների՝ թուրքերի, պարսիկների, լեզգիների ու քիստերի հարձակումների ժամանակ դիմում են նրան, որովհետև նրա առաջնորդությամբ միշտ հասնում են հաղթանակի։ Նրան համարում են իրենց փրկիչը, պաշտում են ու մեծարում։ Մինդիան ի վերջո տեղի է տալիս կնոջ հորդորներին, ձեռք է բարձրացնում

* Օձը՝ իբրև իմաստության խորհրդանիշ, տարածված է շատ ժողովուրդների բանահյուսության մեջ։ Այսպես՝ Չնդկաստանի որոշ գավառներում մարդիկ իմաստություն ձեռք բերելու նպատակով օձի միս են ուտում։ Սերբական ժողովրդական հեքիաթներից մեկում («Փազանների լեզուն») խոսվում է այն մասին, թե ինչպես մի հովիվ կրակից փրկում է օձի ձագին և, ի նշան երախտագիտության, վերջինիս ծնողները պոչով երեք անգամ հարվածում են հովվի բերանին ու նրան դարձնում իմաստուն։ Դրանից հետո հովիվը հասկանում է կենդանիների ու թռչունների լեզուն։

¹ Վաժա Փշավելա, Երկեր, հ. 9, Թբիլիսի, 1964, էջ 364 (վրաց.)։

բնության վրա և իսկույն զրկվում իմաստությունից:

Նա ողբերգություն է ապրում, տասն անգամ մատաղ անում, դիմում զանազան միջոցների, բայց՝ անօգուտ: Խոր վիշտ է ապրում, որ չի կարող օգտակար լինել ժողովրդին, չի կարող առաջնորդել, դեղ ու դարման դնել նրա վերքին: Ահա թշնամին նորից ասպատակում է երկիրը: Պետք է դիմադրել, պաշտպանվել: Մեծ ու փոքր ոտքի են ելել, «ուր նայում ես թուր ու թվանք է»: Մինդիան այդ օրն էլ մատաղ է անում, խոստանում է ունեցած բոլոր եզները, ոչխարներն ու կովերը զոհաբերել Աստծուն, միայն թե նա նորից լիցքավորի իրեն, վերադարձնի իմաստությունը: Բոլորը զարմացած են, թե ինչ մեղք է գործել, որ այդքան զոհեր է մատուցում, խորհուրդ են տալիս վերջ տալ անհեթեթությանը: Ոչ ոք չի զգում, որ նա այլևս չի կարող կռահել հակառակորդի մտադրությունը, հարձակման ուղղությունը, զորքերի մարտական դասավորությունը, և պահանջում են նորից առաջնորդել մարտադաշտ: Մինդիան ասում է, որ ինքն այլևս նախկինը չէ, կորցրել է կողմնորոշվելու, կանխագգալու շնորհքը, չի հասկանում ո՛չ բնությանը, ո՛չ կենդանիներին ու թռչուններին, ո՛չ էլ մարդկային կյանքի գաղտնիքները, բայց զորքը և ժողովուրդը պնդում են իրենցը: Մինդիան ճարահատ համաձայնում է: Երկօրյա արյունահեղ ճակատամարտում խնսուրները պարտվում են: Մինդիան վերջ է տալիս իր կյանքին:

Մինդիան ո՛չ կախարդ է, ո՛չ գուշակ: Նրա քայլերը կշռադատված են, թեև գործելակերպը ուրիշների համար անհասկանալի է, անընդունելի: Համայնքի և Մինդիայի հակադրությունը ծայրահեղության չի հասնում, ինչպես դա եղավ Ալուդայի և Ջողուլայի հետ, որովհետև նրան ընդունում են որպես խենթի: Բնության երևույթները կանխագուշակող, նրա լեզվին ու գաղտնիքներին քաջատեղյակ Մինդիան դառնում է մարդկանց խորհրդատուն, հմուտ զորավար, փորձառու բժիշկ և ծառայում է ժողովրդին: Բայց շրջապատն ստիպում է իր շահերից բխող գործեր կատարել: Տեղի է ունենում անխուսափելի. օտարվում է բնությունից, ամբողջովին լիցքաթափվում է, զրկվում իմաստությունից: Բնությունը Մինդիային պատժում է այնպես, ինչպես համայնքը պատժեց Ալուդային և Ջողուլային: Ասել է թե՛ բնության օրենքները նույնպես անխախտ են, և անտեսել դրանք, նշանակում է դատապարտվել կործանման, մանավանդ որ բնությունն ինքն է անհատին օժտել բազում շնորհներով, բարձրացրել միջավայրից: Ի տարբերություն նախորդ պոեմների՝ այստեղ միջավայրն է պատճառ դառնում բնության և Մինդիայի ներդաշնակության խախտման, ուստի վերջինս կործանվում է ոչ թե համայնքի օրենքներից շեղվելու, այլ այդ օրենքներին ենթարկվելու պատճառով:

Իր անսովոր բովանդակության շնորհիվ պոեմն արժանացել է արտակարգ ուշադրության թե՛ գրականագետների, թե՛ շարքային ու ոչ շարքային ընթերցողների կողմից: Վրաց գրական-քննադատական մտքի պատմության մեջ ոչ մի երկի մասին այնքան իրարամերժ կարծիքներ չեն հայտնվել, որքան «Օձակերը» պոեմի: Անհատի և հասարակության, մարդկային կյանքի և բնության երևույթների մասին հեղինակի փիլիսոփայական մտորումները առավել պարզորոշ արտահայտված են հատկապես այս պոեմում:

Վաժա Փշավելան բազմիցս նշել է, որ գրականության թեման պետք է բնութայունը լինի և մարդկային կյանքը: «Բնությունից և մարդկային կյանքից դուրս պոեզիա չկա, ով լավ է հասկանում կյանքի ու բնության օրենքները, թեկուզ պոեմներ, դրամաներ, վեպեր ու երգեր գրելիս չլինի, միևնույն է՝ պոետ է: Մարդկային կյանքում դժվար է մի այնպիսի երևույթ հիշատակել, որի նմանը չգտնվի բնության մեջ»¹: Վրացի ոչ մի բանաստեղծ այնպես չի գովերգել բնությունը, այնքան կապված չի եղել նրան, որքան Վաժա Փշավելան: Նա մերվել էր բնությանը, տարերքների մեջ տեսել առտնին խնդիրներ, բացել նրա գաղտնիքները, շնչավորել: Բնությունը համարում էր մարդկային հոգու գաղտնարան և հատկապես արձակում նրա երևույթները կապում էր հասարակական կյանքի խնդիրների հետ. կենդանական և բուսական աշխարհի փոխաբերական պատկերներով բացում էր նաև անցյալի ու ներկայի ցավոտ էջերը: «Եղնիկի ձագի պատմածը», «Մանուշակը», «Լացող ժայռը», «Բարձր լեռներ» և այլ պատմվածքներ իրենց պատմելաձևով, գունագեղ և կենդանի պատկերներով անսահման հետաքրքրություն են առաջացնում ընթերցողի մեջ: Թվում է, թե իր որոշ հերոսների նման, գրողը տիրապետում է բնության խորհրդավոր լեզվին, գաղտնիքներին ու զարգացման օրինաչափություններին: Նա համոզված է, որ լեռները մարդկանց նման հոգսաշատ են, բայց լռում են, մտածում են, բայց չեն արտահայտվում, հույսեր են փայփայում, իղծեր ունեն, բայց չեն կարողանում դրանք իրականացնել: Ինչո՞ւ են լռում, ինչո՞ւ չեն արտահայտվում, ինչո՞ւ չեն կարողանում իրականացնել իրենց նվիրական իղծերը, ահա հարցեր, որ այնքա՛ն հուզել են գրողին:

Վաժայի ստեղծագործությունը ժողովրդայնության բարձրագույն արտահայտությունն է ազգային գրականության մեջ:

¹ Նույնը, էջ 478:

ՎԱԺԱ ՓՇԱՎԵԼԱՆ ԴԱՅ ՄԱՍՈՒՆՈՒՄ
(1890-1910-ական թթ.)

Վաժա Փշավելայի ստեղծագործություններից հայ ընթերցողին մատուցվել է 1894 թ., երբ «Աղբյուր» մանկական ամսագրում (խմբագիր՝ Տիգրան Նազարյան), տպագրվում է «Եղջերուն» պատմվածքը (դա առաջին թարգմանությունն էր այլ լեզվով), իսկ 1909-ին՝ «Գեղարվեստ»-ում՝ «Լեռան աղբյուրը»: Զգալով, որ դա «փշրանք է բանաստեղծի ճոխ սեղանից», հայ մամուլը գրադատությամբ է մասսայականացրել երկերը:

Հայ իրականության մեջ գրողի մասին առաջին կարծիքը հայտնվել է «Մուրճ»-ի 1891 թ. ապրիլյան համարում: Հոդվածը հետաքրքրություն է ներկայացնում այնքանով, որ ընթերցողին ծանոթացնում է նաև Վաժա Փշավելայի պոեզիային. «Ներկա թոպեխս հասարակայնությունն ուշիուշով հետևում է երիտասարդ Ռազիկաշվիլու ոտանավորներին, որոնց սրտառուչ, ինքնուրույն ու խիստ ուժեղ արտահայտությունը մեծ ապագա է խոստանում այդ նորելուկին»¹:

Վաժա Փշավելայի արժանապատիվներն ու հարուցած հարցերը հետաքրքրել են վիրահայ մտավորականությանը: Վրաց գրականության վերաբերյալ հոդված է տպագրվել «Մուրճում»՝ Հար. Միրիմանյանի հեղինակությամբ, որտեղ խոսվում է նաև Վաժայի մասին: Շեշտվում է հատկապես մի հանգամանք, որ վրաց իրականության մեջ Վաժան և նրա կրտսեր եղբայրը՝ Բաջանան, որ նույնպես գրող էր, «դուրս բերին թուշերի, խևտուրների ու փշավների՝ մինչ այդ անհայտ մնացած կյանքը՝ իրենց իսկական գույներով, նոցա զգացմունքներով, գաղափարներով»²:

Ուշադրության արժանի է նույն ամսագրի «Վրաց կյանքից և գրականությունից. բանաստեղծ Վաժա Փշավելա, վիպագիր Շիո Արագվիսպիրելի» նյութը: Հեղինակը նշում է, թե ինչ ակունքից է թեմաներ ընտրում տաղանդավոր բանաստեղծը, հասարակ երկրագործ դարձած՝ ինչպես է աշխատում գյուղացիների հետ, ուսումնասիրում հայրենակիցների անցյալն ու ներկան, հաղորդակից դառնում նրանց հոգսերին ու ձգտումներին: «Կախեթի այդ լեռները լի են անթիվ ավանդություններով ժողովրդական նշանավոր հերոսների մասին, որոնց կտրիճության, անվեհերության գովքն ու պատմությունը երգվում-անցնում են բերնեբերան, ուժ ու աշխույժ ներշնչում սերունդներին: Եվ պ. Վաժա

¹ «Մուրճ», 1891, թիվ 4, էջ 435-436:

² «Մուրճ», 1897, թիվ 11-12, էջ 1591:

Փշավելան՝ այդ լեռների որդին, տոգորված այդ հերոսների աշխարհի մթնոլորտով, ընծայում է տարին մի քանի մեծ ու փոքր, չքնաղ, կախարհիչ պոեմա մայրենի գրականությանը, որոնք բոլորն էլ կարդացվում են անպայման հափշտակությամբ»¹:

Թեև հողվածի հեղինակը չի վերլուծում կանանց կերպարները, բայց տալիս է դրանց, ինչպես նաև երկերի արտահայտչամիջոցների գնահատականը: «Այդ պոեմներում,- գրում է քննադատը,- հանդես են գալիս համարյա միշտ նաև լեռնցի համակրելի կանայք՝ իրենց նույնպես անվեհեր հոգով և անձնուրաց, լեռնական վճիտ աղբյուրների նման մաքուր, իստակ սիրով, շքեղ բնության ուժգին թափով շեշտված նկարագրություններ, որսորդական կյանքի հրապուրիչ պատկերներ, ժողովրդական լեզվի ճոխ դարձվածքներ ու բառեր: Նրա բոլոր արտահայտչությունները կրում են իրենց վրա արտադրողի մեծ խնամքի ու վարպետության կնիքը»²:

Գրախոսը բանաստեղծի որոշ պոեմներում նշմարում է թերություններ ևս, հատկապես երկխոսությունների մեջ. «Չի կարելի միայն չցավել, որ նա մի քիչ սիրում է ձգձգել իր պոեմները, նրանց մեջ պատահող խոսակցությունները: Այդ պակասությունից բոլորովին զերծ է «Էթերա» պոեմը, որ զարմանալի կատարելությամբ ձևած ու կտրած ամբողջություն է ներկայացնում»³:

«Մուրճի» 1903 թ. թիվ 11-ում տպագրված է «Վրաց կյանքից և գրականությունից» խորագիրը կրող ծավալուն հոդված, որտեղ խոսվում է Իլիա ճավճավաձեի և Ակակի Ծերեթելու գրական-հասարակական գործունեության մասին, ապա քննարկվում են Շ. Արագվիսպիրելիի, Դ. Կղիաշվիլու և Վաժա Փշավելայի՝ մամուլում լույս ընծայած երկերը: Գրախոսն անդրադառնում է վերջինիս «Աշունը սարում» չափածո երկին և «Պապի աշխարհիկ խոհերը» պատմվածքին: Ուշադրություն է հրավիրվում հատկապես հերոսի՝ «լեռնցի ողջամիտ, բարեսիրտ, մարդասեր ծերունու» հայացքների վրա, որոնք «մանկավարժական իմաստով ուշագրավ խորհրդածություններ են բովանդակում»:

Վաժա Փշավելայի մասին ևս մեկ հողվածի հանդիպում ենք ամսագրի 1904 թ. թիվ 2-ում: Վրաց գրական աշխարհի նորություններին ծանոթացնելով՝ հանդեսը գրում է, որ վերջին երեք ամսվա ընթացքում վրաց պարբերականներում հրատարակվել են գրական երկեր, որոնցից հատկանշական են հայ ընթերցողին արդեն քաջածանոթ Վաժա Փշա-

¹ «Մուրճ», 1901, թիվ 7, էջ 204:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

վելայի «Նոր տարին Փշավում» պոեմը և «Ասպետի գանգատը» բանաստեղծությունը: Շարադրելով դրանց սյուժեները՝ գրախոսն ընդգծում է, որ «երկուսն էլ վերցված են լեռնականների կյանքից և կարդացվում են սիրով ու հաճույքով»¹:

Վաժա Փշավելային հայկական մամուլն անդրադառնում է երկարատև ընդմիջումից հետո միայն, թեև բանաստեղծի մասին տեղեկությունների հանդիպում ենք Ի. Ճավճավաձեի սպանությունը և Ա. Ծերեթելու գրական գործունեության 50-ամյա հոբելյանը (1908) լուսաբանող նյութերում:

1914 թ. «Հորիզոն»-ում հրապարակվում է Տ. Փիրումյանի ուշագրավ հոդվածը: Նա հետաքրքիր դեպքեր է նկարագրում վրաց լեռնականների կյանքից, հայ ընթերցողին ծանոթացնում Վաժա Փշավելայի և Ալեքսանդրե Ղազբեգիի կերպարների նախատիպերին, խնդիրների (վրաց լեռնականների մոտ, հնում՝ աշխարհիկ և կրոնական գործերի կառավարիչ, համայնքապետ) ու դեկանոզների (թեմապետ, ավագերեց) ընտրվելու կարգին, նրանց գործունեությանը: Լեռնականների բարոյական անադարտության, մաքուր կենցաղի ու անկոտրում ոգու մասին է գրում քննադատը և հուշում, որ նրանց առօրյան պատկերող բազմաթիվ սրտառուչ պատմվածքներ ու վիպակներ է գրել Ալ. Ղազբեգին: «Ալ. Ղազբեգիից հետո, - կարդում ենք հոդվածում, - մինչև այսօր վրաց լեռնականների կյանքից ընտիր պոեմներ ու բանաստեղծություններ է գրել տաղանդավոր Վաժա Փշավելան, որն իր ստեղծագործությունների նյութը բացառապես վերցնում է փշավների ու խնտուրների միտ ու կացից»²: Հիշյալ հոդվածը ազգագրական հետաքրքիր ուսումնասիրություն է: Մանավանդ ուշադրության արժանի է հեղինակի այն միտքը, թե հայերիս Վաժա Փշավելան էլ Հովհաննես Թումանյանն է, թե Փշավելան և Թումանյանը լեռնականների անզուգական երգիչներն են:

Հետագայում ևս հայ և վրաց գրականագետներից շատերը հաճախ են կրկնել տվյալ միտքը, թեև ոչ մեկը քննության չի ենթարկել «լեռնականների անզուգական երգիչներին» միացնող կամ մմանեցնող թեմաներն ու մոտիվները: Ոմանք էլ դրանով սահմանազատում կամ պարփակում էին ազգային երկու հանճարների արժարժած թեմաների համամարդկային շրջանակները:

Բայց դառնանք հարուցված խնդրին. կա՞ մմանություն նրանց միջև: Անշուշտ կա: Եվ այդ մմանությունն արտահայտվում է այնքանով, որքանով երկուսն էլ «զավակն են նույն հողի, ջրի և նույն բնության, և

¹ «Մուրճ», 1904, թիվ 2, էջ 161:

² «Հորիզոն», 1914, թիվ 73:

նույն լեռների» (Ա. Ծերեթելի), ոգու թարգմանն են իրենց ժողովրդի իղծերի, խոհերի, սովորությունների, ավանդույթների, բարքերի, առօրյայի ու բնության: Նրանք նման են, քանզի ապրեցին ու արարեցին միևնույն դարաշրջանում, միևնույն սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմաններում: Նման են իրենց գործունեությամբ, արժարժած խնդիրներով, ոգով, դեմոկրատիզմով, ապագայի հանդեպ հավատով. նույնիսկ ապրած տարիներով հավասար ու նման են իրար:

1902 թ. նոյեմբերին Աբասթունանից Յուրի Վեսելովսկուն հղած նամակում Հովհ. Թումանյանը գրում է, թե պոեմներն ստեղծելիս որ հեղինակներից է ազդվել: Վկայելով Պուշկինին և Լերմոնտովին՝ հատկապես վերջինիս, որ «մի շարք պոեմներով ու ոտանավորներով այնքան տաղանդավոր երգում է Կովկասի սարերը, ժողովրդի սովորույթներն ու լեգենդները», ավանդությունների հիման վրա գրած չափածո երկերը՝ Թումանյանը նշում է. «Ես էլ՝ իբրև կովկասցի ու լեռնցի, սիրել եմ այդ երգերն ու պոեմները: Եվ թեպետ լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտը ես ունեցել եմ իմ հոգում, բայց նրանք դրդել են ինձ ու տվել պոեմայի այն ձևը, որով գրել եմ ես («Լոռեցի Սաքոն», «Միհրի», «Մարո», «Անուշ», «Մերժած օրենք», «Ալեք» և այլն), որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմ չի եղել»¹:

Նույնն է խոստովանում և Վաժա Փշավելան՝ ի պատասխան իր այն քննադատների, ովքեր նրա պոեմները համարում էին փշավխեսուրական լեգենդների պարզունակ կրկնություն: Ժխտելու համար այդ կարծիքը՝ Վաժա Փշավելան վկայում է Լև Տոլստոյի օրինակը, ըստ որի աշխարհի հանդեպ ունեցած նրա հայացքների վրա ազդեցություն են թողել հողի մշակները: Վրաց բանաստեղծը հիշատակում է նաև Ա. Ս. Պուշկինին, որ նույնպես սովորել է ժողովրդից: «Նա (Պուշկինը՝ Հ. Բ.) միս ու արյուն տվեց ժողովրդի հոգևոր գանձին,- գրում է Վաժա Փշավելան,- սրանում է նրա մեծությունը, և խելահաս մարդիկ դա ոչ թե թերություն են համարում, այլ մեծ արժանիք: Ձեր խոնարհ ծառա Վաժա Փշավելայի վրա նույնպես, պետք է խոստովանեն, մեծ ազդեցություն է թողել ժողովրդական ավանդությունը: *Իմ պոեմների զգալի մասը գրել եմ ժողովրդից լսած երկու-երեք բառերի հիման վրա*»² (ընդգծ՝ Հ. Բ.):

Սինչ Վաժա Փշավելան վրաց գրականության մեջ նույնպես այդ բնույթի ու բովանդակության պոեմներ չկային: Նա առաջինն էր, որ վարպետորեն երգեց վրաց «բնությունը, ժողովրդի սովորույթներն ու

¹ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1997, հ. 9, էջ 380-384:

² Վաժա Փշավելա, pro domo sua, հ. 9, էջ180:

ավանդությունները»: Վաժա Փշավելան և Հովհ. Թումանյանը բացեցին հանրությանն անհայտ չափազանց հետաքրքիր մի աշխարհ՝ ժողովրդի հոգևոր գանձարանը, որ կոչվում է բանավոր խոսք՝ բանահյուսություն:

Հովհ. Թումանյանը և Վաժա Փշավելան բանահյուսությունն ընդունեցին իբրև ժողովրդի կյանքն արտացոլող հայելի և թեմաներ ու սյուժեներ պեղելով՝ հերոսների կերպարներում մարմնավորեցին իրենց հավատամքը, հույզերն ու իդեալները: Նրանք պատկերել են մի կողմից՝ սնահավատությունը, ավանդապահությունը, բարոյական անկումը և անաղարտությունը, ասպետական ոգին, նվիրվածությունը, առանձին անհատների ըմբոստացումը պապենական հնացած ադաթների ու բնության անասան թվացող օրենքների դեմ՝ մյուս կողմից: Մի խոսքով, նրանցից ամեն մեկը հաստատել կամ բացասել է հարիրն ու անհարիրը, բարին ու չարը, գեղեցիկն ու տգեղը, հարազատն ու խորթը, բաղձալին ու անցանկալին: Եվ պատկերել են այնպիսի ուժով ու ցավով, որ քննադատներից շատերը երկար ժամանակ չեն կողմնորոշվել՝ ընդունում են նահապետական գյուղն իր հակասականությամբ, թե՞ արտացոլում են ինչպես որ է՝ վերապահելով սեփական կարծիքը¹:

Վաժա Փշավելան և Հովհ. Թումանյանը ազգային գրականություն բերեցին ուրույն աշխարհ, ուրույն լեզվամտածողություն: Նրանք որքան նման, նույնքան էլ տարբեր են, և փոխազդեցության մասին, որ երբեմն ակնարկում են, խոսք լինել չի կարող: Իսկ զուգադիպությունները հասկանալի են, քանզի «միևնույն մտածողությունն ու զգացողությունը ձևակերպվում են միևնույն բառերով կամ պատկերներով» (Պարույր Սևակ):

Հովհ. Թումանյանը, իմանալով Վաժա Փշավելայի հիվանդության լուրը, գնում է տեսության: Գրչակից ընկերոջ այցելությունն ուրախացնում է անկողնուն գանված բանաստեղծին: «Հովհաննեսը ներողություն խնդրեց, որ վրացերեն չգիտե, և զրույցն սկսեցին ռուսերեն: Միմյանց մասին հարցուփորձ անելուց հետո խոսք գնաց պատերազմի ու նրա հետևանքների մասին, ի՞նչ կբերի պատերազմը փոքր ազգերին՝ երջանկությո՞ւն, թե՞ դժբախտություն: Այնուհետև Հովհ. Թումանյանը, բնականաբար, խոսք բացեց հայ-վրացական այն ժամանակվա հարաբերությունների մասին: Պոետների զրույցը չափազանց սրտառու էր»²:

Հայկական լրագրերը ցավով են հայտնում Վաժա Փշավելայի հիվանդության և վաղաժամ մահվան մասին: 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին լրագրերը տպագրում են տեղեկություններ բուժման ըն-

¹ Տե՛ս **եղ. Ջրբաշյան**, Թումանյանի պոեմները, Երևան, 1964, էջ 72:

² Հուշեր Վաժա Փշավելայի մասին, Թբիլիսի, «Մերամի», 1986, էջ 335 (վրաց.):

թացքի վերաբերյալ, ապա և դամբանականներ:

Վաժա Փշավելային նվիրված հոդվածները ավելի պատմողական, նկարագրական բնույթ ունեն: Գրախոսները, հատկապես սկզբնական շրջանում, թեև լիարժեք չեն վերլուծել նրա ստեղծագործությունները, այդուհանդերձ այդ գնահատականները անաչառ են և անմիջական: Հետաքրքիր է, որ հայ քննադատները արվեստագետին բնութագրելու հարցում զգալիորեն տարբերվում էին վրացի գործընկերներից, որ երգչի մի շարք կտավների ակունքները փնտրում էին այլոց գործերի մեջ կամ համարում էին փշավ-խևսուրական լեգենդների կրկնություն: Մինչդեռ հայ գրականագետները նշում էին, որ Վաժա Փշավելան, ժողովրդական պոեզիայի հարուստ գանձարանից պեղելով կերպարներ ու մոտիվներ, դրանց տվել է նոր լիցք, նոր երանգ, նոր հնչեղություն:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք հավաստել, որ վրաց ընթերցողից հետո հայ հասարակությունն է ավելի շատ հետաքրքրվել մեծ բանաստեղծի կյանքով, նրա ստեղծած գրականությամբ, պատշաճ կերպով գնահատել է ու զբաղվել դրանց ժողովրդականացմամբ:



1890-1900-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Վրաստանում գոյություն ունեւոր հիմնականում երեք հասարակական-քաղաքական ուղղություն. հեղափոխական-դեմոկրատական, նարոդնիկական և սոցիալ-դեմոկրատական:

Նույն ժամանակաշրջանի դեպքերն ու իրադարձությունները կանխորոշում են գիտամշակութային կյանքի ու գրականության ուղղությունը:

1900-ական թվականներին վրաց լուսավորությունը, մամուլը, նկարչությունը, քանդակագործությունը, գրականությունը նկատելի առաջընթաց են ունենում: Այսպես՝ ուսուցիչների համառուսաստանյան առաջին համագումարում որոշվում է վրացական դպրոցներում դասերը վարել ազգային լեզվով, դպրոցների տնօրեններ և մանկավարժական կադրեր ընտրելիս հաշվի առնել վրաց լեզվին, արվեստին ու գրականությանը, ժողովրդի մշակույթին ու կենցաղին, սովորույթներին ու ավանդույթներին քաջատեղյակությունը: Ընդլայնվում է կրթական օջախների ցանցը, բացվում են մեկուկես տասնյակ գիմնազիաներ: Չնայած դրանց աճին՝ երեխաների զգալի մասը զրկված էր կանոնավոր ուսում ստանալու հնարավորությունից: Դրությունը մխիթարական չէր հատկապես գյուղական վայրերում. չկային դասագրքեր, գրեմական պիտույքներ: Մանկավարժները, զրկված նյութական ու բարոյական աջակցությունից, աշխատում էին զոհողություններով, ուստի շատերը հեռանում էին դպրոցներից:

Բուհ չլինելու պատճառով դյուրին չէր բարձրագույն կրթությամբ մասնագետներ պատրաստելու խնդիրը: Վրացի գիտնականները հիմնականում գործում էին Ռուսաստանում:

Զարթոնք են ապրում վրացական թատրոնը, երաժշտությունը: Երաժշտության բնագավառում աչքի ընկան կոմպոզիտորներ Մելիտոն Բալանչիվաձեն, Դմիտրի Արաղիշվիլին, Վանո Սարաջիշվիլին, իսկ Զաքարիա Փալիաշվիլին դարաշրջան բացեց ազգային երաժշտության արվեստի պատմության մեջ՝ դառնալով վրաց դասական երաժշտության հիմնադիրն ու խոշորագույն ներկայացուցիչը:

Գեղանկարչության մեջ տաղանդավոր ներկայացուցիչներից էին Գիգո Գաբաշվիլին, Մոսե Թոփձեն, Նիկո Փիրոսմանին:

Իսկոյր Նիկոլաձեն՝ վրաց քանդակագործության հիմնադիրը, ստեղծում է մի շարք կոթողներ, որոնք ցուցադրվում են աշխարհի շատ ու շատ թանգարաններում:

Հիշյալ տասնամյակում գրական ասպարեզ իջած արձակագիրներ էգնատե Նինոշվիլին, Վասիլ Բարնովը, Դավիթ Կլդիաշվիլին, ճուլա Լոմթաթիձեն, Շիո Արագվիսպիրելին ոչ միայն նոր որակ են հաղորդում ազգային գրականությանը, այլև առաջին գիծ են մղում անհատի ճակատագրի խնդիրը, նախանշում երկիրը փրկելու էականորեն նոր ուղի: Էգնատե Նինոշվիլին Վրաստանի ապագայի համար նախապայման էր համարում մարքսիստական գաղափարախոսության յուրացումն ու կիրառումը: «Ապստամբություն Գուրիայում» վեպում նա ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ, առանձին-առանձին ապստամբելով կամ ահաբեկության դիմելով, Վրաստանն արդյունքի չի հասնի. անհրաժեշտ է միանալ ռուս պրոլետարիատին և պայքարել ձեռք ձեռքի տված: Բանվոր դասակարգն ամենուր է կեղեքվում, ուրեմն անհրաժեշտ է պայքարի դրոշ պարզել թե՛ Ռուսիայում, թե՛ Եվրոպայում, որպեսզի, համընդհանուր ալեկոծությունից օգտվելով, Վրաստանը ձեռք բերի երանելի ազատություն, հասնի նպատակին: Մարքսիստական գաղափարախոսությունից առնված այս դրույթները արմատապես հակասում էին Իլիա ճավճավաձեի և նրա համախոհների քարոզներին: «Վրացիներն ընդհանուր ի՞նչ ունեն ռուսական պրոլետարիատի հետ,- հիմնավորում էին հակառակ թևի գործիչները,- Ռուսաստանը գաղութատեր երկիր է, մինչդեռ ինքը որևէ մեկի գաղութը չէ: Մեր գործը նրա լծից ազատվելը պիտի լինի»:

Վրաց մտավորականության մեջ սկիզբ առած գաղափարական այս պայքարը որակական նոր հատկանիշներով արտահայտություն գտավ զեղարվեստական երկերում. դա երևաց թե՛ ժամրային համակարգում և թե՛ կերպարների արտացոլման մեջ:

ԷԳՆԱՏԵ ՆԻՆՈՇՎԻԼԻ

Էգնատե Նինոշվիլին պատկերել է գյուղում տեղի ունեցող շերտավորումը, գյուղական ցեցերի ու չքավոր զանգվածների հարաբերությունները, վերջիններիս աշխատանքի ու պայքարի թեման, ստեղծել է քայքայվող ազնվականության ընդհանրական կերպարներ:

Ծնվել է 1859 թ. դեկտեմբերի 17-ին, Գուրիայի Ղելա գյուղում: 1876-ին ընդունվում է Օգուրգեթի հոգևոր ուսումնարանը, բայց

մեղադրվում է աշակերտական ցույցին մասնակցելու մեջ և վտարվում: Ինքնակրթությամբ այնքան գիտելիքներ է ձեռք բերում, որ 1879-ին էքստենզն քննություն է հանձնում, ուսուցչի վկայական ստանում և աշխատանքի անցնում հայրենի գյուղում: Շատ չանցած՝ հեռացվում է հիվանդ լինելու պատճառով: Նա որոշում է ապրուստի միջոց հայթայթել ֆիզիկական աշխատանքով, և իբրև բեռնակիր նրան տեսնում ենք Փոթիում, Բաթումում, Օզուրգեթում: 1884-ին մեկնում է Թիֆլիս, աշխատում գրաշար, ապա բանվոր: 1892-ին Միխա Յխակայայի հետ հիմնադրում է «Մեսամե դասի» («Երրորդ դաս») սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը:

Վախճանվել է 1894 թ. մայիսի 12-ին:

Էգնատե Նինոշվիլու առաջին երկը տպագրվել է 1887 թ. «Իվերիա» թերթում, այնուհետև լույս են տեսել «Ապստամբություն Գուրիայում» վեպը (1888-1889), «Գոգիա Ուիշվիլի» (1889), «Պալիաստոմի լիճը» (1891), «Սիմոնա» (1891), «Քրիստինե» (1892), «Պարապուտ» (1892), «Կարգադրություն» (1893), «Մեր երկրի ասպետը» (1893), «Գրագիր Մոսեն» (1893) և այլ նովելներ ու պատմվածքներ:

Էգնատե Նինոշվիլու ստեղծագործության հիմնական թեման արդեն շերտավորված գյուղի կյանքն է: Մի կողմից փոքրաթիվ, բայց անսահմանափակ իրավունքների տեր դոլիժեներ, ավսենիժեներ, ուքնածեներ, եկեղեցու սպասավորներ, մյուս կողմից՝ բյուրհազար չարքաշ ծալածեներ, մունջածեներ, ուիշվիլիներ, որ և՛ իրավազուրկ են, և՛ ընչազուրկ. տանջվում են գյուղական ցեղերի, չինովնիկների, հոգևորականների, վաճառականների ու կուլակների ճիրաններում: Այդ է պատճառը, որ XIX դարի վերջին տասնամյակներում լայն ծավալ է ստանում ավազակությունը, այն երևույթը, երբ համբերությունն սպառած գյուղացին սպանում է իրեն տանջողին ու փախչում անտառ:

Գյուղացիների ծանր կացությունն արտացոլված է «Գոգիա Ուիշվիլի» պատմվածքում: Ըմբոստներին պատժելու (եկզեկուցիա) եկած զորքին կերակրելու համար ամեն ընտանիք պետք է մեկ ռուբլի հարկ տա: Լուրն ամուսնուն հաղորդում է Մարինեն: Գոգիան անակնկալի է գալիս. սա ի՞նչ երկնային պատիժ է. այնքան ծանր հարկերից դեռ աչք չբացած՝ դարձյա՞լ հարկ, որտեղի՞ց, ինչպե՞ս: Բայց միայն Գոգիա Ուիշվիլու ընտանիքը չէ նման անելանելի վիճակում: Մարինեն հավաստում է. «Միայն մենք չենք այս վիճակում. գյուղում հարյուրից մեկը չես գտնի, որ գոնե մեզանից փոքր-ինչ լավ դրության մեջ լինի»: Ուիշվիլին ծայրաստիճան աղքատ է, ունեցած թզաչափ հողակտորն էլ բաժանել է որդիների միջև: Աշխատում է զօր ու գիշեր, քրտինք հեղում, բայց քանի

որ աշխատանքի պտուղը ինքը չի վայելում, գնալով նրա ուսերին ավելի ու ավելի է ծանրանում կյանքի բեռը: Ուտնահարվում է նաև նրա արժանապատվությունը: Նոր տարվա նախօրեին ուստիկանության ներկայացուցիչները խուժում են նրա տուն, ունեցվածքն օտարում, իրեն ու կնոջը քարշ տալիս գրասենյակ և անգթորեն մտրակահարում: Ահա Գոգիայի ցասման կանչը, որ, ինչ խոսք, մնում է անարձագանք: «Մեր երկրում արդարություն չկա. մտրակեցին, նվաստացրին, աքացի տվին... Արդարադատության դուռը գնացի, ավելի վատ վարվեցին: Ո՞ւր ես, Աստված: Ո՞ւր եք, խաչ ու հավատ»:

Չախորդություններն ու դժբախտություններն այսքանով չեն վերջանում: Հիվանդությունից մեռնում է զավակներից մեկը, մյուսը թեև մահից փրկվում է, բայց ընդմիշտ կորցնում է խոսելու ունակությունը: Ուիշվիլին բողոքն արտահայտում է ինքնասպանությամբ:

Աղքատության ճիրաններում թարտացող Կացիա Մունջածեն ևս դժգոհ է իր բախտից ու աշխարհից («Հրաման»): «...Ի՞նչ ասես, որ չեն բերում խեղճ գյուղացու գլխին,- բարձրածայն խորհում է Կացիան,- տանուտերին փող տուր, գրագրին փող տուր, վարժապետին փող տուր, սրան փող տուր, նրան փող տուր, ճամփա են շինում, դու պիտի գնաս, պահնորդություն է, դու պիտի գնաս... Բոլորին պիտի ենթարկվես, բոլորին պիտի ծառայես և անվերապահորեն՝ լուռումունջ: Չէ՛, գյուղացու կյանքը կյանք չէ, դժոխք է»: Նրա դուստրը՝ տասներկուամյա Մարինեն, բոլորովին մերկ է. արբունք ապրող աղջնակը չգիտե, թե իր փոքրիկ ավերով մարմնի որ մասը ծածկի: Հյուր կամ ծանոթ տեսնելիս իսկույն թաքնվում է:

Գոգիայի ու Կացիայի վիճակում է նաև Իվանեն («Պալիաստոմի լիճը»): «Տանուտերին, քահանային, գրագրին, կառավարությանը, բարեկամին, թշնամուն, բոլորին, բոլորին պատասխան տալ է պետք: Սիրտ չի մնացել գյուղացու հոգում», - իր հերթին ասում է պատմվածքի հերոսը: Կացիան և Գոգիան գիտեն՝ ովքեր են կեղեքիչները, բայց նրանց մեջ ընդվզման նշույլ չկա, մինչդեռ Իվանեն փոքր-ինչ վեր է կանգնած: Նա գյուղացու թշնամիներ համարում է տարածայնություններն ու դավաճանությունը, ահա ինչու համախոհներին կոչ է անում միաբանվել, համախմբվել: Եթե գյուղացիները միասնաբար հանդես գան, նրանց նեղացնելը հեշտ չի լինի:

Ի տարբերություն այս հերոսների, որ շատ պասիվ են, իր արժանիքներն ու իրավունքներն է փորձում պաշտպանել Սիմոնան՝ համանուն պատմվածքի հերոսը: Նա համոզված է, որ չարիքի առաջն առնելու համար պիտի առաջնորդվել «Ակն ընդ ական...» սկզբունքով: Հենց

այդ նպատակով նա ընտրում է ավազակության ուղին: Ըստ հեղինակի՝ ճիշտը դա է, որովհետև «եթե մեկը գլխից ձեռ է քաշում, կարող է շատ վտանգավոր դառնալ»:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղում նշանավորվում է երկակի բնույթով. մի կողմից՝ ժողովրդի զգալի մասն ընկնում է ծայրաստիճան աղքատության մեջ, մյուս կողմից՝ հենց նրա միջավայրից է ոտքի ելնում նյութապես ապահովված մի խավ՝ կուլակությունը: Նիհնշվիլին ժամանակին նկատել է այդ երևույթը: «Սիմոնա» երկի հերոսներից Դավիթ Դրոիձեն ընչազուրկ գյուղացի է, բայց «ճիշտ» ըմբռնելով ժամանակի ոգին (դրոիձեն նշանակում է՝ ժամանակի զավակ)՝ մեքենայությունների դիմելով, կարողանում է հարստություն կուտակել և դառնալ նոր խավի տիպիկ ներկայացուցիչը: Նա ոչ միայն ժամանակի ծնունդ է, այլև այդ նույն ժամանակի տերն ու տնօրենը: Ոչ վաղ անցյալում չարքաշ, օրվա հացի կարոտ ճորտը շահագործում ու կեղեքում է համագյուղացիներին շատ ավելի անգթորեն, քան պետական պաշտոնյան կամ ազնավուրը: Դավիթ Դրոիձեի կերպարը լիովին բացահայտվում է Սիմոնա Չալաձեի հետ բախման ժամանակ: Դրոիձեն յուրացրել է իշխողի մտայնությունը. եթե փողի տեր ես, ամենազոր ես. բոլորը պետք է քեզ ենթարկվեն, քո առաջ խոնարհվեն, կատարեն քո կամքն ու ցանկությունը: Բայց ահա նրան ընդդիմանալու փորձ է անում Սիմոնա Չալաձեն՝ աղքատ, աշխատասեր, վեհանձն ու արդարամիտ մի երիտասարդ (այս կերպարը ևս խոսում է. ձալաձե, նշանակում է՝ ուժորդի, ուժի զավակ): Թեև այդ ընդդիմությունը սոսկ խոսք է, գործի չի վերածվում, այդուհանդերձ Դրոիձեն վճռում է անպայման ազատվել հանդուգն հակառակորդից, մանավանդ որ օրենքն էլ է իր ձեռքում, գրիչն ու թանաքն էլ: Եվ, իսկապես, շատ չանցած՝ Սիմոնային ձերբակալում են: Դրոիձեները նաև խեղում են մարդկանց ճակատագրերը՝ նրանց մեղադրելով չարած հանցանքների մեջ. բռնաբարում են կանանց ու աղջիկներին՝ պատճառ դառնալով նրանց ինքնասպանության:

Դրոիձեի հղիացած տղան՝ սպա Տիտիկոն, «սիրահարվում» է Սիմոնայի երիտասարդ, գեղեցիկ կնոջը՝ Դարիկոյին, և «սիրո» տեսարաններ սարքում, Դարիկոն, սակայն, չի գայթակղվում: Համոզվելով իր անգորության մեջ՝ Տիտիկոն «ախպեր տղերանց» աջակցությամբ առևանգում է անպաշտպան կնոջը և լլկում: Պարկեշտ, ազնիվ ու դյուրազգաց Դարիկոն, չհանդուրժելով անպատվությունը, մետվում է փրփրաբաշ գետը:

Գրողը ցույց է տալիս, որ ձալաձեներն այլևս պասիվ չեն, ձեռքները ծալած ու երկյուղած չեն նայում դրոիձեների անմարդկային արարքներին:


Նոր ժամանակներն ու նոր պայմանները ծայրաստիճան լարում են սոցիալական ուժերի հարաբերակցությունը, և գյուղացին ըմբոստանում է կեղեքողի դեմ: Եվ եթե առաջներում անարդար դատապարտված կամ անարգված մարդիկ այլ ելք չգտնելով, իրենց բողոքն արտահայտում էին ինքնասպանությամբ, ապա այժմ՝ նույն կացության մեջ, նրանք ընտրում են վրեժխնդրության ուղին: Այս վերջիններից է Սիմոնա Ջալաձեն, որ անձամբ է դատաստան տեսնում իր թշնամու հետ. նա սպանում է Դրոիձեի տղաներին, հրդեհում նրանց տունն ու կալվածքը և փախչում անտառ:

«Ապստամբություն Գուրիայում» վիպակը ծրագրային է: Հիմքում 1841 թ. գյուղացիական ապստամբությունն է: Շրջանցելով պատմական փաստերը՝ հեղինակն ուշադրությունը սևեռել է շարժման պատճառահետևանքային կապի վրա. թերևս այս երկի մեջ է նրա քաղաքական հայացքների ամբողջությունը:

Պետք է խոստովանել նաև, որ երկերը հեռու են կատարելությունից, հղկման կարիք ունեն լեզվական առումով: Կերպարները, անկախ դասային պատկանելությունից, կրթությունից ու միջավայրից, խոսում են միակերպ, անհատական, սոցիալական կամ դասային ոճավորման հնարքներն ասես անհայտ են հեղինակին: Այդուհանդերձ «Էզնատե Նինոշվիլու արձակը XIX դարավերջի վրաց քննադատական ռեալիզմի արժանահավատ և հետաքրքիր էջերից է, վրաց բազմադարյա արձակի զորեղ վտակներից մեկը» (պրոֆ. Ռևազ Միշվելաձե):



ՎԱՍԻԼ ԲԱՐՆՈՎ



Վասիլ Չաքարի Բարնովը ծնվել է 1857 թ. մայիսի 7-ին, Շուա (Միջին) Քարթլիի Կոդա գյուղում: Սովորել է Թիֆլիսի հոգևոր ուսումնարանում, ապա նույնատիպ սեմինարիայում, որի դասընթացն ավարտել է 1877-ին: 1878-1882 թթ. ուսանել է Մոսկվայի հոգևոր ակադեմիայի պատմության բաժնում և ստացել մագիստրոսի կոչում: Հայրենիք վերադառնալուց հետո զբաղվել է ուսուցչությամբ: Սկսած XIX դարի 90-ական թվականներից վրաց մամուլում և առանձին գրքերով լույս են տեսել նրա պատմվածքները, որոնց հաջորդել են վիպակներն ու վեպերը: Վերջիններից որոշակի արժեք են «Իսամիի արշալույսը» (1901), «Անհետացող լուսապսակները»

(1913), «Նահատակված սերը» (1913), «Արմազի կործանումը» (1925), պատմվածքներից՝ «Մանրադրամը», «Վայ քեզ կորցնողին»-ը, «Օձի հաղթանակը»:

Բարնովը վախճանվել է 1934 թ. նոյեմբերի 4-ին: Թաղված է Մթածնինդայի՝ վրաց գրողների և հասարակական գործիչների պանթեոնում:

* * *

Վասիլ Բարնովը պատմական նյութին անդրադարձել է ազգային հայեցակետից, փորձ է արել շարադրել չարի և բարու մշտական պայքարի, այդ պայքարում մարդու՝ «բարու ասպետի» դերի մասին իր ըմբռնումները: Հերոսները մաքառում են հանուն իրենց երջանկության և իղծերի իրականացման: Թեև նրանք ներկայացված են մաև բացասական գծերով, այդուհանդերձ ակնհայտորեն թանձրացված են դրական հատկանիշները. հենց այդ կերպ է հեղինակը հասել գեղարվեստական ընդհանրացման: Համակողմանի են պատկերված ֆեոդալական անջա-

տողականությունը, վանական կյանքը, իշխանավորների փառատենչությունը, հասարակ խավի շահագործումը, այլ երևույթներ՝ կենցաղ, հոգեբանություն, դավաճանություն, բարոյական խնդիրներ ու քաղաքական կացություն:

Վրաց ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից մեկի՝ 1795 թ. սեպտեմբերին Աղա Սահմադ խանի՝ Թիֆլիսը գրավելու, ավերելու մասին վրաց իրականության մեջ գեղարվեստական երկեր՝ վեպեր, վիպակներ, պատմվածքներ, պոեմներ, դրամաներ, գրվել են և էլի կգրվեն: Այդ թեմային է նվիրված նաև «Իսամիի արշալույսը» :

Ժողովուրդն զբաղված է առօրյա գործերով, բայց հոգիները խռովված են, առկա է ներքին լարվածություն՝ պայմանավորված վերահաս աղետի նախազգացումով: Սև ամպեր են կուտակվում քաղաքի ու բնակիչների գլխին, բայց որտեղի՞ց, ինչո՞ւ, չգիտեն կամ եթե լսել են, ապա կցկտուր տեղեկություններ: Գրողն ստեղծել է համապատասխան մթնոլորտ: Պատկերել է XVIII դարի վերջին տասնամյակի Թիֆլիսի կացությունը, Յերակլ II-ի նախապատրաստությունը՝ պարսիկներին դիմագրավելու համար: Այս ընդհանուր ֆոնի վրա ամբողջ կենցածքով երևում են կենտրոնախույս ուժերը՝ ավատները, թավաղները, վաճառականները, իշխանավորները, արհեստավորները:

Գլխավոր հերոսը Սաամ Գոստաշաբաշվիլին է, հանձին որի գրողը կերտել է անձնուրաց հայրենասերի կերպար: Սաամի առաջին իսկ հիշատակումը կապված է ազգօգուտ գործունեության հետ: Նա գալիս է Թիֆլիս զենք ձեռք բերելու և մարտիկներ հավաքագրելու նպատակով: Ճանապարհին այցելում է տարբեր վայրեր, հետազոտում տեղանքը, մտապահում այն հավանական ուղիները, որտեղով կարող է անցնել թշնամին և որտեղ հնարավոր կլինի ծուղակի մեջ առնել նրան, տալ կործանիչ հարված: Ինչպես նշվեց, նա երկրում շրջագայում է հատուկ առաքելությանը, ահա այդ ժամանակ էլ հանդիպում է հայտնի գուշակ Ալթունանց Մարեխին: Երբ Սաամը մոտենում է, Մարեխը թեև ճանաչում է եկվորին, բայց ո՛չ բարևին է պատասխանում, ո՛չ էլ ոտքի է կանգնում (սովորույթ, որ պարտադիր կիրառվում է վրաց ժողովրդի մեջ):

-Ի՞նչ է պատահել, Մարեխ, Սաամին չե՞ս ճանաչում:

-Չեմ ճանաչում, բա՛տո՞նո, դու Սաամը չես: Սաամը թշնամու առջևից չէր փախչի, արյունահեղության պահին չէր թաքնվի:

* Բարոնվը նշում է, որ երկը կրում է Սայաթ-Նովայի այն խաղի վերնագիրը, որը նա նվիրել է չնաշխարհիկ մի էակի՝ հավլաբարցի Թինանոյին: «Իսամիի արշալույսը» շատ սիրված ու տարածված երգ է եղել,- գրում է հեղինակը,- բայց դա էլ չի պահպանվել, ինչպես նրա շատ այլ խաղեր»:

-Իսկ ինչո՞ւ ես սևեր հագել, անհավատները քո հարազատներից որևէ մեկին հո չե՞մ սպանել:

-Սպանել են: Վրաստանին են սպանել: Ես դա եմ սգում: Դու երևի չես լսել էդ մասին, որ մորուքդ խուզել ու զուգվել ես, ասես շքահանդեսի ես պատրաստվել:

Սաամը Չերակլ Երկրորդի հավատարիմ ֆեոդալներից է: Երբ արքայի հանձնարարությամբ գալիս է Թիֆլիս, զինագործ Իոթան Բուրջելիի տանը ծանոթանում է նրա դստեր՝ Թինանոյի հետ, որին Սայաթ-Նովան երգեր է ծոնել և անվանել «Իսանիի արշալույս»: Սաամը և Թինանոն սիրահարվում են, և մեծահարուստ ֆեոդալը նշանվում է իր նախկին ճորտի դստեր հետ:

Դեպքերը զարգանում են այնպես, որ Սաամի հավաքագրած ջուկատները արքայի որդիների և կենտրոնախույս ուժերի դավաճանության պատճառով հնարավորություն չեն ունենում մասնակցելու քաղաքի պաշտպանության գոյամարտին: Չերակլը պարտվում է, և Թիֆլիսն ընկնում է թշնամու ձեռքը: Թինանոյին տանում են Աղա Մահմադ խանի զորապետ Սելիմ խանի մոտ: Նա նույնպես հափշտակվում է աղջկա գեղեցկությամբ և որոշում է դարձնել հարեմի առաջին տիկինը: Սաամը փոքրաթիվ ջուկատով հսկում է Պարսկաստան վերադարձող զորամասին, հարմար պահ է որսում, կայծակնային արագությամբ հարձակվում է ու փախցնում սիրած աղջկան: Երբ շահն իմանում է կատարվածի մասին, նայում է զորապետին և զայրացած բացականչում. «Այս անհաջողությունը հավասար է տանուլ տված պատերազմի»:

Չեղինակը կարողացել է անձնական և հասարակական շահերը ներդաշնակել, ստեղծել սիրո և հայրենասիրության վառ օրինակներով հագեցած հետաքրքիր ստեղծագործություն: Բարնովը համոզում է, որ արքայի պարտության պատճառը ֆեոդալների մասնատվածությունն է, երկպառակությունները, նախանձը, որ բույն է դրել արքունիքում, հատկապես արքայի փառատենչ որդիների հոգում:

Գրողը պատկերել է հին Թիֆլիսի զունագեղությունը, արտաքին ու ներքին փայլը: Համոզիչ է արհեստավորական խավի նիստ ու կացը, միմյանց սատար կանգնելու պատրաստականությունը: Բարնովն այս ամենը ցույց է տվել զինագործ Բուրջելիի ընտանիքի և այդ ընտանիքի շուրջ համախմբված տասնյակ մարդկանց օրինակով: Սարաֆ Միղուան առևտրավաճառական դասի հավատարիմ զավակն է՝ ստոր, գծուծ, քինախնդիր: Նրա համար ոսկուց բացի այլ կուռք չկա, որովհետև ոսկով «նույնիսկ դրախտի դռները կարելի է բացել»: Տեսնելով Թինանոյին՝ Միղուան, առանց հաշվի առնելու հասարակական կարծիքը, վճռում է

ամուսնանալ տասնհինգամյա աղջնակի հետ: «Ի՞նչ իմանայի, որ փոքրիկ Թինանոն այսպես կհասունանար ու կփոթեր: Սայաթ-Նովան վատ ճաշակ չի ունեցել, որ հմայվել ու երգեր է ձոնել նրան: Իսկապես, որ արշալույս է, նորածագ լուսատու,- ասաց Միղուան և այնպիսի միտք հղացավ, որից անգամ ինքը սարսափեց»: Միղուան միջնորդ է ուղարկում զինագործի տուն՝ վստահ, որ հոր ու դստեր աչքերը կշլանան իր ոսկիների փայլից. «Շա՛տ ջահել է իմ Թինանոն, մինչդեռ իմ մազերը վաղուց են ճերմակել: Բայց ոչի՞նչ... ոսկիներիս փայլից մազերս էլ ազոավի թևի պես սևին կտան»: Թերևս առաջին անգամ Միղուայի խոփը դեմ է առնում քարին: Չարամիտ վաշխառուն և կավատ կինը որոշում են վրեժխնդիր լինել և Սելիմ խանին հայտնում են, թե զինագործի հարկի տակ գաղտնի հավաքներ են տեղի ունենում, թե իբր շահի դեմ թակարդ են լարում, և կապավորը Թինանոն է: Պարսիկ զորապետը իսկույն բանտարկում է ընտանիքի անդամներին, բայց կախարդված աղջկա գեղեցկությունից՝ ազատում է բոլորին՝ իր մոտ պահելով միայն նրան, որ իր հարեմի զարդը դարձնի, իսկ եթե բախտը բերի և շահ դառնա՝ նաև երկրի թագուհի: Բայց զորավարի ո՛չ խոստումները, ո՛չ էլ ահասարսուռ սպառնալիքները չեն կոտրում աղջկա կամքը: Ավելին՝ նա ըմբոստանում է, խուսափում գզվանքներից և երդվում ինքնասպան լինել, եթե խանը բռնանալու փորձ անի:

«Թինանոն Սելիմի հետ մնաց մեռակ: Այր մարդը զարմացած նայում էր նրան. նման գեղեցկություն նա չէր տեսել: Գեղանի դեմքի շուրջ թափված խոպոպիկները կախարդել էին Սելիմին: Իր կամքին հակառակ՝ նա փորձեց շոյել աղջկա մազերը: Թինանոն ոստնեց ու կապավ պատին:

-Ո՛վ դիցուհի, մի՞թե քեզ չես խղճում:

Աղջիկն ահից դողում էր, բայց ծպտուն չէր հանում: Սելիմ խանը խղճաց քնքուշ էակին, զսպեց իրեն և հետ քաշվեց:

-Դու հավանաբար չգիտես, թե քեզ ինչ պատիժ է սպասում արքային դավաճանելու համար,- ասաց խանը ավելի մեղմ ձայնով:

Այդ խոսքերը վրդովեցին աղջկան. նա ցնցվեց, ապա համարձակ նայեց Սելիմին ու բացականչեց.

-Արքային ես չեմ դավաճանել, այլապես ինձ պետք էր կտոր-կտոր անել:

-Փառապանձ շահն է ձեր արքան, մինչդեռ դուք նրա դեմ դավադրություն էիք կազմակերպում:

-Ոչ մի դավադրություն չի եղել, իսկ հայրենիքն ինձ մանանների կարիքը չի զգում: Վրաստանը դեռ հավատարիմ զավակներ շատ ունի:

-Այդպիսիներից մեկն էլ Սաամ Գոստաշաբաշվիլին է, որ նույնիսկ սիրած աղջկան չի կարողանում զերությունից ազատել:

-Ստում ես, անհավատ... Սաամի միակ սիրելին, որ զերության մեջ է, իր հայրենիքն է: Ես աղերսում ու աղոթում եմ Աստծուն, որ հաջողություն պարզևի նրան թշնամիների դեմ պայքարում:

-Շա՛տ ես սիրում քո հայրենիքը: Ես քեզ կազատեմ, քո բոլոր ցանկությունները կկատարեմ: Լսո՞ւմ ես, բոլոր ցանկություններդ,- տարփալից փսփսաց աղջկա ականջին և գրկեց նրան:

-Ես ինձ կսպանե՞մ,- ճչաց աղջիկը ու տապալվեց հատակին:

Թիմանոյի հուսահատ ճիչը պատշաճության սահմաններից դուրս եկած Սելիմ խանին ստիպեց կանգ առնել:»

Թիմանոն հայրենասեր, բարձր բարոյականության տեր, քաջ ու վճռական վրացուհի է, իսկ Սելիմ խանը ավարի ու ավերի սովոր բռնակալ, թեև աղջկա հանդեպ ցուցաբերում է բարյացակամություն ու մեղմություն, որ պայմանավորված էր զեղեցկուհուն անպայման սեփականելու տենչով:

* * *

Վասիլ Բարնովի գրեթե բոլոր պատմական երկերում հանդես են գալիս նշանավոր անհատներ, որոնց քայլերը թելադրված են հայրենիքի նկատմամբ պարտքի զգացումով: Նրանց վարքն ու բարքը, սխրանքը, նվիրվածությունը բխում են անապական սիրուց: Եթե տվյալ անհատից սերը խլեն, ապա նա կդառնա անգոր, կամազուրկ, նույնիսկ պատուհաս երկրի ու ժողովրդի գլխին: Այս գաղափարները գրողը զարգացնում է «Անհետացող լուսապսակներ» երկում:

Դեռահաս Թիմաթիմին մի գուշակ երազում հայտնում է, որ նա թագուհի է դառնալու, իսկ պատմիչը փաստում է, որ Թիմաթիմը մի քանի տարի թագուհի լինելուց հետո հրաժարվում է զահից և մտնում մենաստան: Ահա այս կցկտուր տեղեկությունների հիման վրա գրողն ստեղծել է երկի ֆաբուլան՝ պատկերելով հերոսուհու կյանքը արբունքից մինչև թագուհի, ապա ճգնավոր դառնալը:

Անցքը տեղի է ունենում XVI դարում: Վրաստանը մասնատված է. ամեն մի ավատ իրեն թագավոր է հռչակել և ձգտում է հարևանների կալվածքներին էլ տեր դառնալ: Միմյանց դեմ կռվում են Կախեթի ու Քարթլիի, Իմերեթի ու Սամցխեի, Գուրիայի ու Սամեգրելոյի տերերը:

Ելնելով սյուժեի զարգացման անհրաժեշտությունից՝ հեղինակը հաճախ շեղվում է պատմական ճշմարտությունից: Հալածանքների, կեղեքումի, երկպառակությունների ու ասպատակությունների մասին խո-

սելիս անգամ առաջնորդվում է ոչ թե փաստերով, այլ պատմության հանդեպ ունեցած իր հայացքներով: Ինչպես մյուս վեպերում, այստեղ ևս կրկնում է այն դրույթը, թե մարդկանց ճակատագիրը, նրանց կյանքը, հետևաբար և հասարակության պատմությունը տնօրինում է սիրո անխորտակ ուժը: Չկա մեկ այլ ուժ, որ կարելի լինի բաղդատել սիրո ուժի հետ, չկա ավելի թանկարժեք գանձ, ավելի մեծ զարդ, քան սերը, քանզի զգացումներից ամենավեհը դա է: Հարստությունը, պաշտոնը, դիրքը, փառքը անցողիկ են. հավերժական է սերը: Ով ըմբոստանում է այդ սուրբ զգացումների դեմ, ով հանդգնում է անտեսել, պատժվում է չարաչար, դատապարտվում կործանման:

Վեպում այս հավատամքը կրողներն են Թինաթինն ու Նոշրևանը, Լեյլ Ղիզին ու Լևանը, ներկայացուցիչներն ամենաբարձր խավերի և փոքր ու մեծ թագավորությունների:

Կենտրոնական դեմքը Գուրիայի արքայադուստր Թինաթինն է: Նա սիրում է իշխան Նոշրևանին, բայց ամուսնանում է Կախեթի տիրակալ Լևան Դադիանիի հետ: Այդ միությանը հատկապես շահագրգռված է աղջկա հայրը, որովհետև հանձնում Դադիանիի ձեռք է բերում հզոր դաշնակից և կարող է նրա աջակցությամբ իրականացնել իր մտահղացումները: Այս նկատառումով թերևս թվա, թե Թինաթինի ամուսնությունը հարկադրական է: Երբ առաջարկում են Դադիանիի թեկնածությունը, նա երկմտում է: Նրա առաջ երկու բարդ խնդիր է. ամսալ սրտի՞, թե՞ բանականության ծայրին: Ելևէջումներ են աղջկա ներաշխարհում: Նկարագրելով տիկնոջ արտաքինը, հմայքն ու թովչանքը՝ գրողն աստիճանաբար ի ցույց է դնում նաև նրա հեղհեղուկ բնավորությունը՝ փառամոլություն, մեծարվելու անհագուրդ տենչ, որ վերջնականապես հաղթում է սիրո զգացումին. Նոշրևանը երիտասարդ է, քաջ, ազնիվ, վեհանձն ու նվիրյալ, բայց համեստ է կարողությամբ և չի կարող փառատենչ աղջկա համար ապահովել այն, ինչին նա լիովին հասուկ լինի՝ դառնալով Կախեթի արքայի կինը՝ թագուհի: Ահա այսպես ծանրութեթև անելուց հետո Թինաթինն ընդառաջում է հաշվենկատ հոր ցանկությանը և ամուսնանում Դադիանիի հետ: Ի դեպ՝ սա նույնպես իր ընտրությունը կատարում է շահադիտական նկատառումով, քանզի Թինաթինի նկատմամբ անտարբեր է, մինչդեռ վաղուց սիրահարված է հպատակ ֆեոդալներից մեկի աղջկան՝ Լեյլ Ղիզիին: Մամիա Գուրիելիի և Լևան Դադիանիի քաղաքական նկատառումները համընկնում են. դեպքերի բարեհաջող զարգացմամբ աղջիկը կհռչակվի Վրաստանի թագուհի, իսկ փեսան՝ թագավոր:

Դադիանին հայրենիքի շահերով ապրող գործիչ է: Բայց ինչպես

արդեն նշել ենք՝ ով ոտնահարում է սիրո զգացումը, ոչ միայն չի հասնում նպատակին, այլև չարաչար պատժվում է:

Թինաթինը իր խավի անդավաճան ներկայացուցիչն է, որ մանկուց դաստիարակվել է ամենուր առաջինը լինելու, շրջապատում փայլելու, իշխելու ոգով:

Իսկությունն իմանալով՝ Նոշրևանը գրեթե ողբերգություն է ապրում: Նա համոզված է, որ թեկուզ վերջին պահին Թինաթինը կփոխվի վճիռը. այնքան վստահ է, որ փոքրաթիվ ջոկատով հետևում է հանդեսին, հասնում Կախեթ: Արքայական շքախմբում, բացի Թինաթինից, ոչ ոք չի գուշակում, թե ով է ժամանակ առ ժամանակ հայտնվում հարսանեկան թափորի ճանապարհին: Բայց սպասվող փառքից շլացած՝ Թինաթինը խղճի խայթ իսկ չի զգում, թեև մի քանի անգամ հանդիպում է սիրահարի աղերսանքով լի հայացքին:

Վրաստանի տիրակալներից մեկի հետ ամուսնությունը Թինաթինի բանականության հաղթանակն է զգացմունքի հանդեպ, քանզի դրանից հետո նրան տեսնում ենք իր իսկական էությանը՝ եսամուլ, դժգոհ, հավակնոտ, չար և ամբարիշտ: Չի խղճում անգամ պարտված հակառակորդին, չի փորձում կանխել եղբայրասպան կռիվները, չի հարգում ամուսնուն, երեխաներին է զրկում մայրական գորովանքից, այդ ամենը այն պարզ պատճառով, որ չի իրականացել իղձը: Փառքն ու պերճանքը երջանկություն չեն բերում: Դրանում նա համոզվում է, երբ այլևս անհնար է որևէ բան ուղղել. աստիճանաբար խամրում է այն լուսապսակը, դեպի որը մղվում էր:

Աշխարհիկ կյանքի նկատմամբ կորցնելով հետաքրքրությունը՝ չարաչար խաբված կինը որոշում է մտնել վանք, բայց կրկին գլուխ է բարձրացնում եսասիրությունը. թագավորը և կախեթցիները ծնկաչոք պետք է խնդրեն չդիմել նման քայլի: Ի դերև է լինում նաև այդ հույսը:

Սիրո զգացումը հասարակ մարդկանց մեջ ավելի բնական է, անարատ և ուժեղ, քանզի նրանք հարստության, փառքի ու շքեղության ակնկալիք չունեն: Չենց այդպիսին է Սամիա Գուրիելիի ծառայի ու աղախնի՝ Կոծիայի և Մարիկայի սերը: Եթե սառն ու պայմանական է իշխանավորների ամուսնությունը, ապա կայուն, ջերմ ու խորունկ է ցածր խավի ներկայացուցիչների սերն ու ամուսնությունը:

Մարդկային կյանքի մեծագույն սխալը Բարնովը համարում է սիրո դավաճանությունը: Թինաթինն ամուսնացավ ոչ թե սրտի, այլ սառը բանականության թելադրանքով: Չետևա՞նքը: Կյանքը դարձավ անտանելի, քանզի վանքում էլ անդորր չգտավ: Ծանր ապրումները նրան իջեցնում են շիրիմ: Մահից առաջ այցի է գալիս Նոշրևանը, որ

ավելի շուտ էր ճգնավոր դարձել: Թինաթինը խոստովանում է, որ խորտակեց թե՛ իր և թե՛ սիրեցյալի կյանքը: Ձուր է երջանկություն փնտրել այնտեղ, ուր չի բոցկլտում սիրո հուրը: Սերը աստվածատուր է: Չար զգացմունքը (փառքի տենչը) ժամանակավորապես միայն կարող է հաջողություն ապահովել:

Չեղինակն անցյալի նկատմամբ շեշտված ռոմանտիկական մոտեցում է ցուցաբերել՝ իդեալականացնելով Նոշրևանին և Լևան Դադիանին: Վտանգելով սեփական կյանքը՝ Նոշրևանը կարողանում է մայրաքաղաքը փրկել ավերումից: Նա պայքարում է Վրաստանի միասնության համար: Գրողը պաշտպանության տակ է վերցրել նաև Լևան Դադիանին: «Լևանը, ինչպես ամեն մի խելամիտ վրացի, հավատում էր, որ Վրաստանի արքան պետք է մեկը լինի, իսկ Վրաստանը՝ համախմբված ու միասնական»: Մեկ այլ հատվածում Լևան Դադիանին վստահեցնում էր, որ թուրքերի ու պարսիկների լծից կարելի է ազատագրվել Ռուսաստանի նման հզոր դաշնակցի աջակցությամբ: «Այդ մեծ գործն իրականացնելու համար մեզ նեցուկ կարող է լինել միայն Ռուսիան: Նպատակ ունեն թիկունքս հենել նրան ու կատարել վերջին քայլը», - խոստովանում է կնոջը:

Վեպում պատկերված է ժողովրդի պայքարը թուրք-պարսկական զավթիչների դեմ:

* * *

Վասիլ Բարնովն ստեղծագործել սկսել է, երբ արդեն հասուն այր էր և կայուն հավատամքի տեր, ահա թե ինչու գրեթե երկվություն չենք տեսնում նրա գրական-գեղագիտական հայացքում: Սկզբից ի վեր նա հետևողականորեն պաշտպանել է այն կարծիքը, թե մարդու աշխարհաճանաչողությունը հիմք է նրա հետագա գործունեության: Աշխարհընկալման հարցում գրողի ուշադրության կենտրոնում է երեք կարևորագույն խնդիր՝ գեղեցիկը, սերը և Աստված:

Գեղեցիկն Աստծու պատկերի արտացոլումն է, որ մեզ երևութանում է «նյութական հագուստով» և մղվում դեպի վեր, հասնում զարգացման բարձրագույն աստիճանին՝ Աստծուն:

Գեղեցիկի այսօրինակ ընկալումը սերտորեն կապված է սիրո բարնովյան ընկալմանը: Այս երկու հասկացությունները նրա համար միևնույն սկզբի դրսևորումներն են: «Սերը գեղեցիկն է, իսկ Աստվածը՝ սերը»: Քանի որ սերն Աստված է, ուրեմն՝ անկարելի է նրա կործանումը. հնարավոր է կործանել սերը կրող անհատին, որպես «նյութական գոյ», բայց հոգին կմնա անմեռ, ուր և պահպանվում է սերը:

Բարնովն ավելի շուտ աստվածաբան է. նրա համար Աստված բարու և լուսավորի գաղափարն է, գեղեցիկի զարգացման բարձրագույն աստիճանը: Եթե Աստված, այսինքն՝ լուսավորն ու բարին, անորոշելի են ժամանակի մեջ, ապա խավարի ծնունդը և՛ որոշակի ժամանակ ունի, և՛ պատճառ, «այնքանով, որ խավարը և չարիքը ժամանակի ծնունդ են և ունեն պատճառ, ուրեմն կունենան և վախճան»¹: Իսկ մինչ այդ աշխարհը հիշյալ երկու ներհակ ուժերի մարտադաշտ է լինելու:

Բարնովի երկերում բարին հանդես է գալիս ի դեմս գեղեցիկի և սիրո, մինչդեռ չարը բազմադեմ է, բազմաբնույթ: Դրանք սոցիալ-տնտեսական և բնական աղետներն են, մարդկանց այպանելի արարքները:

Բարու և չարի ընդհանրացման հիման վրա աշխարհի գոյությունը բաժանվում է ժամանակային երեք հատվածի. առաջին՝ երբ կար միայն բարին, երկրորդ՝ երբ ի հայտ եկավ չարը, և պայքար սկսվեց այս երկու ուժերի միջև, երրորդ՝ երբ չարը կպարտվի բարու դեմ զոտենմարտում, և աշխարհը կապրի բարու թագավորության մեջ:

Այդ պայքարը մղվում է մարդու մասնակցությամբ և ներգործությամբ, գրողը հենց դրա համար է բարու հաղթանակի մեջ մեծ տեղ հատկացնում անհատին, որ երբեք չպիտի խնայի իր ուժը. բարու հաղթանակին նպաստում են նաև այլ ուժեր, ամենակարևորը, սակայն, մարդու դերն է, որովհետև այն «գիտակցված է և գիտության լույսով ճառագաված»²:

Այսօրինակ մտորումներով արձակագիրը փորձում է ժխտել իր հերոսների մասին տարածված այն կարծիքը, թե նրանք գործում են կուրորեն, իբրև ճակատագրի ստրուկներ: Սա, թերևս, հեռու չէ ճշմարտությունից. հեղինակի խոսափող կերպարներն ընտրյալներ են, հզոր կամքի ու ֆիզիկական անգերազանցելի ուժի տեր, և, առանց բացառության, գործում են միայնակ:

* * *

Գրողի դերի և կոչման մասին խոսելիս Բարնովը շեշտում է հետևյալը. ստեղծագործելու տաղանդից բացի, գրողը կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ պետք է ունենա գիտելիքների հսկայական պաշար, քանզի վճռորոշ է պատկերվող երևույթի խոր իմացությունը. չպետք է զոռ տալ ստեղծագործական երևակայությանը և կորցնել չափի զգացումը. անպայման պետք է պահպանել ժամանակի և տեղի

¹ Վ. Բարնով, Երկեր, հ. X, Թբիլիսի, 1964, էջ 180 (վրաց.):

² Նույն տեղում, էջ 181:

կոլորիտը. նկարագրվող իրադարձությունները մտացածին չպետք է լինեն, այլ անձամբ ուսումնասիրված (եթե պատմական անցք է) կամ տեսած, զգացած, վերապրած (եթե ժամանակակից դեպքերի է անդրադառնում). գրականության մեջ մերժելի է սուբյեկտիվիզի գործոնը:

Գրողի ժողովրդայնության, արժանիքների ու նշանակության մասին դրույթները Բարնովը զարգացնում է Հովհաննես Թումանյանի միջոցով:

Նա առաջին անգամ էր բանաստեղծի տանը, թեև նրան գիտեր հեռվից հեռու և, իհարկե, ծանոթ էր նրա մի քանի երկերի:

Տպավորությունն այնքան խորն է եղել, որ «ոտքը տան շենից ներս դնելուն պես» ակամա դարձել է «համակ ուշադրություն», հետևել «քանքարավոր գրողի կիրթ ու անբռնազբոս շարժումներին», զննել «նրբագագ և չափազանց խոհուն այդ մարդուն», ունկնդիր եղել «նրա զգացմունքների հորձանքին ու թևավոր մտքերի» տարափին:

Բարնովը լուսաբանում է Թումանյանի գործունեությունն ու գեղագիտական հայացքները: Վկայակոչելով մեծ լռեցու անձն ու գործը՝ նա նշում է, որ իսկական գրողը նախ և առաջ հասարակական գործիչ է: Ժողովուրդը ճիշտ ժամանակին ծնում է նման խոշոր անհատ, որ ծառայի իրեն, միայն թե այդ ծառայությունը պետք է լինի անշահախնդիր և անբասիր: Գրողը ժողովրդի հավատարմատարն է այնքանով, որքանով համապատասխանում են նրանց ձգտումներն ու նպատակները: Դրան հասնելու համար Թումանյան արվեստագետը ուսումնասիրել և յուրացրել է անչափ հարուստ այն գանձարանը, որ ժողովուրդն ամբարել է իր ընդերքում:

Սակայն Թումանյանի մեծությունը չի տեղավորվում ազգային շրջանակներում, որովհետև նա «բոլոր ազգերի, համայն մարդկության ավետաբերն ու լուսավորիչն է», իսկ որպես հայ պոեզիայի ջահակիր՝ շատ ավելի լայնահուն է դարձրել ազգային քնարերգության դժվարանցանելի ուղին, ուստի «հետնորդները հեշտությամբ ու հաջողությամբ կանցնեն նրա լուսավորած ճանապարհով»:

Այդ նշանավոր երեկոյի ընթացքում Թումանյանը արվեստի ու գրականության վերաբերյալ արտահայտել է չափազանց խորիմաստ մտքեր, որոնցից մի քանիսը գրողը ներկայացնում է ընթերցողին:

«Արվեստի քրմերը զգում, ճաշակում են գեղեցիկը, բարին, ճշմարիտը և վերարտադրում՝ նույնը ներարկելով անհատին, հանրությանը, համայն մարդկությանը»:

«Պոեզիան հավերժ պաշտելի Աստված է, մարդկությանը միավորող ու ջերմացնող ամենակարևոր գործոններից մեկը»:

«Պոեզիան պետք է դառնա ապագայի ընդհանուր կրոնը, սերունդների անփոխարինելի հավատն ու հավատամքը»:

«Իսկական արվեստագետը պարտավոր է ուսումնասիրել և յուրացնել այն անսպառ զանձը, որ կուտակել է ժողովուրդը»¹:

Այս և մի շարք այլ ասույթներ վերարտադրելուց հետո Բարնովը հավաստում է, որ Թումանյանը միշտ հավատարիմ է եղել այդ սկզբունքներին ու գաղափարներին, և բացարձակապես հակասություն չկա նրա տեսական դրույթների ու գեղարվեստական երկերի միջև: Ավելին՝ սիրո, գեղեցիկի, բարու և ճշմարիտի արարումով ու քարոզով, «խավարի դեմ լույսն առատ դարձնելու պայքարով» Թումանյանը՝ «ստեղծագործողների մեջ ամենակատարյալը», կապող օղակ է տարբեր խավերի միջև:

Այսքանով չի սպառվում ո՛չ Հովհաննես Թումանյանի, ո՛չ էլ առհասարակ գրողի գրական հայացքների պարզաբանումը, բայց նշենք, որ արժարժաված դրույթների հիման վրա ստեղծելով տարբեր ծավալի երկեր՝ հիմնականում պատմավեպեր, միշտ չէ, որ հավատարիմ է եղել դավանած սկզբունքներին: Տեսական դրույթների մի մասը նա զարգացրել է 1920-ական թվականների երկրորդ կեսին՝ խորհրդային գաղափարախոսության ազդեցությամբ. այդ տարիների վեպերում ու վիպակներում հերոսներն այլևս մասսաներից կտրված չեն. առաջնորդում են նրանց կամ գնում նրանց հետևից, ուստի և դրանք զիջում են նախորդ շրջանի գործերին: Բայց և այնպես վրաց պատմավիպասանություն բերեց նորություններ, հասավ հեղինակային լեզվի անհատականացման, ստեղծեց հոգեբանական վեպեր, ուղի հարթեց պատմական թեմաներ մշակող հետագա գրողների համար:



¹ Լույս տեղում, էջ 419:

ԴԱՎԻԹ ԿԼԴԻԱՇՎԻԼԻ



Դավիթ Սամսոնի Կլդիաշվիլին ծնվել է 1862 թ. սեպտեմբերի 11-ին, Քութայիսի նահանգի Սիմոնեթի գյուղում, սնանկացած ազնվականի ընտանիքում: Ութամյա տղային ծնողները հանձնում են մի ռուս ընտանիքի՝ լեզու սովորելու:

1872 թ. գարնանը ութսուն երեխաների հետ Դավթին ուղարկում են Կիևի ռազմական գիմնազիա, որից հետո նա կրթությունը շարունակում է Մոսկվայի նույնատիպ հաստատությունում: 1882-ին գործուղվում է Բաթում՝ զինվորական ծառայության: Այստեղ նա աչքի է ընկնում հասարակական աշխատանքով. բա-

ցում է կիրակնօրյա դասընթացներ, իսկ երեխաների համար՝ անվարձ դպրոց. հիմնադրում է նաև փոխօգնության ընկերություն և, այսպես կոչված, հասարակական հավաքավայր: Թիֆլիսից հրավիրելով գրողների և արվեստագետների՝ աշխուժացնում է տեղի մշակութային կյանքը:

1905 թ. հեղափոխական շարժումների ժամանակ Կլդիաշվիլուն կարգադրվում է ցրել բանվորական ցույցը, բայց նա ոչինչ չի ձեռնարկում, որի համար հեռացվում է զինվորական ծառայությունից: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գորակոչվում է գործող բանակ: Թուրքահպատակ վրացիներին ցույց տված օգնության համար նրան սպառնում է ռազմական տրիբունալ, բայց վրա է հասնում Փետրվարյան հեղափոխությունը, և նա փրկվում է մահապատժից:

Զորացրվելով՝ գրողը մշտական բնակություն է հաստատում իր ծննդավայրում և զբաղվում տնտեսությամբ: 1930 թ. գրական գործունեության 40-ամյակի առթիվ նրան շնորհվում է Վրաստանի Ժողովրդական գրողի կոչում:

Վախճանվել է 1930 թ. ապրիլի 24-ին, Սիմոնեթի գյուղում: Թաղված է Մթածմինդայի՝ գրողների և հասարակական գործիչների պանթեոնում:

Դավիթ Կլդիաշվիլու անդրամիկ երկերը՝ «Անեծք», «Ձոհը», տպագրվել են 1894 թ. «Մոամբե» («Լրաբեր») ամսագրում: Հաջորդել են բազմաթիվ պատմվածքներ ու վիպակներ, որոնցից կարելի է առանձնացնել «Սուլուման Մորբելաձե» (1894), «Սամանիշվիլու խորթ մայրը» (1897), «Քամուշաձեի հոգսը» (1900), «Միքելա» (1904) և այլն:

Մեծ են գրողի ծառայությունները նաև ազգային դրամատուրգիայի բնագավառում: «Իրինայի երջանկությունը» (1897), «Դարիսպանի հոգսը» (1903), «Դժբախտություն» (1913) պիեսները բեմադրվել և բեմադրվում են վրացական թատրոններում:

Դավիթ Կլդիաշվիլին նորարար գրող էր. նա վրաց գրականություն բերեց մինչ այդ գրեթե անհայտ մի աշխարհ՝ Իմերեթը, այդ բնաշխարհին իր գունագեղությամբ, նրա մարդկանց միստ ու կացով, սովորույթներով, երազանքներով ու պայքարով: Հատկապես վարպետորեն է պատկերել մայրամուտ ապրող ազնվականության կյանքի արատավոր կողմերը, կենցաղը, բարոյական անկումն ու եսակենտրոն հոգեբանությունը:

Նկատի ունենալով այս փաստը՝ վրաց պատմաբանները նրան համարում են Իմերեթի մատենագիր. գեղարվեստական արժեքից բացի նրա երկերն ունեն նաև պատմագիտական նշանակություն:

Հատկանշական է, որ Դ. Կլդիաշվիլու հերոսները միշտ պայքարի մեջ են: Եթե ժամանակի գրողներից շատերը փաստերն ու երևույթները մշակում էին իրենց հայեցողությամբ, ապա Կլդիաշվիլին հրատապ երևույթներին տալիս էր գեղարվեստական հնչեղություն: Նա ջանում էր հնարավորինս մոտ գտնվել կյանքի զարկերակին: «Նրա համար փողոցը պարզապես փողոց չէր, բակը՝ սոսկ բակ, տունը՝ լոկ տուն, այլ, որ փողոցով անցնում էր մարդը, բակով անցնում էր մարդը, տանն ապրում էր մարդը»՝ իր խոհերով, անուրջներով, առօրյայով, վաղվա մտահոգությամբ: Գրողը պարզունակ հնարանքների չի դիմում, խուսափում է գույների խտացումից կամ դրանց ռոմանտիկական ընկալումից, այն պարզ պատճառով, որ կյանքը բոլորովին էլ ռոմանտիկա չէ. նա հերոսներին թողնում է այդ խիստ բարդ, հաճախ էլ դաժան կյանքին դեմ հանդիման:

«Սուլուման Մորբելաձե» պատմվածքում նկարագրում է ազնվական դասի կյանքը կապիտալիստական հարաբերությունների զարգացման փուլում: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ այդ խավը մնացել էր զրնգուն կոչումով միայն: Հանձին Սուլուման Մորբելաձեի հեղինակը ստեղծել է մի այնպիսի տիպ, որը մարմնավորում է իր դասի կյանքը՝

ապրելու, գործելու, մտածելու կերպը՝ բարոյահոգեբանական համակողմանի դրսևորումներով: Վերջինս և, վրաց ազնվականությունն առհասարակ, նորագույն պայմաններում կորցնում է հարստությունը, գոյատևելու տարրական միջոցները և կանգնում կործանման փաստի առաջ: Բայց մակաբույծ կյանքին սովոր և իր դասի ավանդների մոլի պաշտպան՝ նա չի բարեհաճում որևէ աշխատանք կատարել: Փորձում է ամենահեշտ ճանապարհով ձեռք բերել օրվա ապրուստը և ընտրում է կավատության՝ իբրև թե թեթև, բայց անպատվաբեր արհեստը: Մի քնձռոտ ջորու նստած՝ գյուղից գյուղ, տնից տուն է անցնում, հարսնացու և փեսացու փնտրում, գործը գլուխ բերելու համար հազար ու մի հնարք գործադրում և կորզած գրոշներով կերակրում ընտանիքի անդամներին, «ընտանիք, որի ամբարում նույնիսկ մուկը սովից կսատկի»:

Հուսահատ, ծանր խոհերով տարված՝ Սոլոմանը անիծում է իր ծնունդը, իր արհեստը, կյանքն ու աշխարհը: Այսպես է ավարտվում պատմվածքը, որտեղ, ինչպես նշվեց, հիմնավորված է ֆեոդալական ազնվականության անխուսափելի կործանման օրինաչափությունը:

Նույն թեմային է նվիրված «Քամուշաձեի հոգսը» պատմվածքը, որի գլխավոր հերոսը՝ ազնվական Օտիա Քամուշաձեն, ի տարբերություն և ի զարմանս իր դասի, գյուղացիների նման օրնիբուն տքնում է, բայց դարձյալ թշվառության մեջ է: Օտիայի մայրը ապրում է անցյալի «քաղցր» հուշերով: Երբ քաղաքաբնակ Սոման սրանց տուն հարս է գալիս և տեսնում է, թե ինչ ողորմելի վիճակում են, սկեսուրը փորձում է նրան հանգստացնել և իրենց հարստության, անցած-գնացած օրերի ու գալիքի մասին խոսում է անթաքույց սնապարծությանը, հաճախակի գործածում եղել է, ունեինք, կար. կունենանք, կլինի խոսքերը: Ձգալով, որ խեղճությունն ու աղքատությունը նրանց մշտական գոյավիճակն է, Սոման չի ուզում համակերպվել դրությանը և հարց է տալիս. «Ինչի՞ կամ ո՞ւմ վրա եք հույս դրել: Ահա ամառ է, մինչդեռ տանը մի բուռ ալյուր չկա, քաղցը չոքել է բկներիս, մեր կնքահայրն է փոքրիշատե օգնում, բայց մինչև ե՞րբ. չէ՞ որ նրանք էլ ծայրը ծայրին հազիվ են հասցնում»: Երկար խոսակցությունից հետո Սոման հիշեցնում է սպասվող ողբերգական վախճանի մասին և առաջարկում է գործնական քայլ. «Օտիա՛, մեր այստեղ մնալը մահ է: Անխուսափելի մահ է, մահ, Օտիա՛: Մենք պիտի գնանք, պիտի հեռանանք այստեղից. անպայման, իսկույն ևեթ պիտի գնանք»:

Օտիայի համար դժվար է հեռանալ հայրական օջախից ու հարազատ եզերքից, բայց համոզվում է, որ, չնայած իր ջանքերին,

թշվառության ուրվականը կրնակալոխ հետապնդում է և ուր որ է կառնի իր ճիրանների մեջ. ուրեմն միակ ելքը տեղափոխվելն է:

Գրողն ուզում է ցույց տալ, թե ինչ ճակատագիր է սպասում ազնվականին: Գյուղում չկարողանալով վաստակել օրվա ապրուստը՝ նա մեկնում է քաղաք: Որպեսզի արդարացնի իր հերոսի քայլը՝ Կլիաշվիլին նկարագրում է այն վիճակը, որի մեջ հայտնվել է ոչ միայն Օտիա Քանուշաձեն, այլև Իմերեթի ամբողջ ազնվականությունը: Դժվար է ասել, թե ապրելու համար հեղինակը նախապատվությունը տալիս է քաղաքին. նման միտում չի զգացվում, մանավանդ եթե նկատի ունենանք, որ ստեղծել է գյուղից քաղաք մեկնած ազնվականների մի քանի բացասական տիպեր ևս: Դրանցից մեկը Պորփիրե Բիաշվիլին է, որ դարձել է խաբեբա, կողոպտիչ, ստահող լուրեր տարածող: Նրան չի զիջում Սոնայի եղբայրը՝ Բեգլար Ճինճարաձեն:

Օրհասի մեջ գտնվող գյուղից գերադասելի՞ է նոր զարգացող քաղաքը: Դժվար է ասել, որովհետև իր հերոսին քաղաքաբնակ դարձնելուց հետո հեղինակը չի հետևում նրա կյանքի ընթացքին:

Պատմվածքում պատկերված է նաև գյուղի բևեռացումը: Կուլակ Սամադաձեն, օրինակ, հակադրված է Քանուշաձեին: Վերջինս կուլակի տղայի կնքահայրն է: Սամադաձեն ռամիկ է, բայց գերազանցություն է զգում քանուշաձեների հանդեպ և հաճախ է բարձրաձայնում այդ մասին: «Գյուղացի եմ, համա քեզ նման աշնանային պարոնորդիներից շատ ավելի բարձր եմ»: («Աշնանային պարոնորդի» արտահայտությունը նշանակում է՝ մայրամուտ ապրող, քայքայվող ազնվականություն):

Շարքի պատմվածքներից մի քանիսում Դ. Կլիաշվիլին սպանիչ սարկազմով ցույց է տալիս, թե ինչպես սնանկացած ազնվականները շներ են վարժեցնում, որ նրանք հավ, ձու, հացի կամ մսի կտոր թռցնեն և դրանցով ու այդ կերպ պահեն իրենց տերերի գոյությունը:

Գրողը պատկերում է ազնավուրների կյանքի արատավոր կողմերը, նրանց հոգու խաթարումները, ստեղծել է կերպարների հարուստ և խայտաբղետ պատկերասրահ: Նրանցից ոմանք ժամանակն անց են կացնում գինարբուքների ու տուրուդմբոցների մեջ, ոմանք չեն խորշում աշխատանքից, ոմանք անընդունակ են որևէ գործ անելու, կան և «աշխատասերներ» ու «պայքարունակներ»: Սրանց միացնում է հոգեբանական մի ընդհանուր գիծ, որ վրաց գրականության մեջ բնորոշվել է որպես «ազնաուրուլի կուդաբզիկոբա» («ազնվականական սնապարծություն»):

Մայրամուտ ապրող խավի կյանքն արտացոլելուց բացի՝ Դավիթ

Կլրիաշվիլին անդրադարձել է նաև գյուղացիության վիճակին՝ ի հայտ բերելով այն երևույթները, որ պատճառ են խավարի ու տգիտության: Այսպես՝ Միքելան (համանուն պատմվածքի հերոսը) կարճ ժամանակում իր բազմամդամ ընտանիքից հողին է հանձնում երեք հոգու: Ողջ են մնում երկու թռն ու հարսը: Ծերունին այդ պատուհասը վերագրում է Աստծու կամքին և դրանով մխիթարվում է ու մխիթարում: Շատ չանցած՝ մեռնում է նաև ավագ թռը: Միքելայի հույսն ու ապավենը կրտսերն է: Դարձյալ փորձություն, և խավարամիտ ծերունին կրկին վերագրում է ամենագոր Աստծու կամեցողությանը: Նա այնքան տգետ է, որ դժբախտությունների առաջն առնելու համար ոչինչ չի ձեռնարկում:

Նշված երկերից առանձնանում է «Մաքուր սիրտը», որտեղ գրողը առաքինության դասեր է տալիս բարոյական անկում ունեցած կանանց: «Ամեն մի կին, եթե նա տոգորված է իսկական ինքնասիրությամբ, եթե նրա հոգում խոր արմատներ են գցել պատվախնդրությունն ու խիղճը, չի դառնա կրքերի ստրուկը»:

Ամուսնացած և երեխաների տեր երիտասարդ Բաբոյին առևանգում է ընտանիքի բարեկամներից մեկը: Աղջկա ընկերուհիներից Գիզոն, իմանալով այդ մասին, պախարակում է նրա «ամոթալի արարքը» և «բացում մոլորված կնոջ աչքերը»: Նա դա անում է՝ գրքերից օրինակներ բերելով և «ապացուցելով», որ դա սեր չէ, կիրք է: «Այդ զգացմունքը սեր ես համարում, մինչդեռ դրա իսկական անունը կիրք է»: Գիզոյի քարոզչությունը ապարդյուն չի անցնում. նրա դաստիարակության շնորհիվ Բաբոյի մեջ հաղթում է «վրացի կինը»: Մայրական պարտականությունը հակադրվում է սիրուն. կնոջ կոչումը զավակներին ու ամուսնուն նվիրված լինելու մեջ է, հայտածում է գրողը:

Դավիթ Կլրիաշվիլու նովելներն ու պատմվածքները և «աշուն ապրող ազնվականների» հարուստ ու հետաքրքիր պատկերասրահը կմնան ազգային գրականության գանձարանում:

* * *

Ժառանգելով, շարունակելով ու զարգացնելով վրաց բազմադարյա հոգևոր-մշակութային ավանդույթները՝ վրացի գրողները XX դարում ստեղծեցին նորագույն շրջանի վրաց գրականությունը, որը, ինչպես հայ իրականության մեջ, առնչվում է 1910-ական թթ. և հատկապես 1918 թ. մայիսին երկրի պետականության վերականգնման գործընթացին և խորհրդային ու հետխորհրդային շրջանին: Նորագույն գրականության ականավոր ներկայացուցիչները, որ անցան զրկանքների, քա-

ղաքական հալածանքների ու արքայների (եղան նաև գնդակահարություններ) դժվարին ճանապարհ, բայց գոյատևեցին, խիզախեցին ու նվաճեցին գեղարվեստական խոսքի բարձունքներ, ստեղծեցին ոչ միայն ազգային, այլև համազգային–համաշխարհային արժեքներ: Այդ արժեքներին կանդրադառնանք հետագայում:



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Չեղինակի կողմից.....	5
Ներածություն.....	7
Չին և միջնադարյան գրականություն	
Բանահյուսություն.....	11
Վրաց գրականությունը V-X դարերում.....	16
XI-XIII դարեր.....	23
Շոթա Ռուսթավելի	35
<i>Վրաց համճարը հայ իրականության մեջ</i>	55
XVI-XVIII դարեր.....	61
Թեյնուրազ Առաքին	63
Արչիլ Երկրորդ	66
Սուլխան–Սաբա Օրբելիանի	69
Վախթանգ Վեցերորդ	72
Դավիթ Գուրամիշվիլի.....	75
Սայաթ-Նովա	82
<i>Սայաթնովագիտությունը Վրաստանում</i>	87
Բեսիկի	95
Վրաց գրականությունը XIX դարում	
1800-1830-ական թվականներ.....	100
Ալեքսանդր Ճավճավաձե	108
Գրիգոլ Օրբելիանի.....	121
Նիկոլոզ Բարաթաշվիլի	141
1840-1850-ական թվականներ.....	159
Գեորգի Էրիսթավի.....	162
Ջուրաբ Անտոնով.....	172
Դանիել ճոնքաձե.....	178
Լավրենտի Արդազիանի.....	183
1860 -1870-ական թվականներ.....	187
Իլիա Ճավճավաձե.....	192
<i>Ճավճավաձեն և հայ իրականությունը</i>	208

Ակակի Ծերեթելի	218
<i>Ակակի Ծերեթելին և Գաբրիել Սունդուկյանը</i>	236
Գեորգի Ծերեթելի	242
1880-ական թվականներ	251
Ալեքսանդր Ղազրեզի	259
Վաժա Փշավելա	271
<i>Վաժա Փշավելան հայ մամուլում (1890-1910-ական թթ.)</i>	292
1890-1900-ական թվականներ	298
Էզնատե Նինոշվիլի	299
Վասիլ Բարնով	304
Ղավիթ Կլդիաշվիլի	315

ԲԱՅՐԱՄՅԱՆ ՀՐԱԶԻԿ ՍՄԲԱՏԻ

**ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
V-XIX դդ.**

Ձեռնարկ բարձրագույն ուսումնական հաստատությունների
հումանիտար ֆակուլտետների
ուսանողների համար

ՅՐԱԲՈՑ ՆՄՁՅԱԾՈՒՆ ԵՄ ԵՆԻՆՈՒՄՆԵՐ

**ՄԱՐԿԱԿԱՆ ԼՈՒԹՄԱՏՄԱՆ
V-XIX ՆՏ.**

Սանկտ-Պետերբուրգի Մաքսիմ Գորկիի անվան
Ֆիլոսոֆիայի ֆակուլտետի
Ստրուկտուրային մեթոդների
կենտրոնի

Հրատ. խմբագիր՝	Հակոբ Բ. Պետրոսյան
Տեխնիկական խմբագիր՝	Վարդիթեր Զ. Բոյան
Սրբագրիչներ՝	Ելենա Ղ. Բայրամյան Վահանգիտ Վ. Դերձյան
Համակարգչային շարվածքը՝	Ինդիգո
Համակարգչային ձևավորումը՝	Աննա Խ. Աղուզյան

Ստորագրված է տպագրության՝ 01.10.2007 թ.:

Չափսը՝ 60x84 1/16:

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:

Հրատ. 17.6 մամուլ, տպագր. 20.25 = պայմ. 18.8 մամուլի:

Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 74:

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի պետական համալսարանի տպագրատուն, Երևան, Աբովյան 52